ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԶԱՐԴ ԱԿՆԱՐԿՆԵՐ



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԶԱՐԴ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Ծ.Պ. ԱՂԱՅԱՆ



Սույն աշխատությունը սովետահայ պատմաբան հանգուցյալ ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանի վերջին գործն է: Ինչպես կտեսնի ընթերցողը, հանրամատչելի այս գիրքը շարադրելիս հեղինակը նպատակ չի ունեցել տալու մեր ժողովրդի պատմական ողջ անցյալի սիստեմատիկ շարադրանքը: Աշխատության հեղինակը հիմնական շեշտը դրել է կարևորագույն անցքերի վրա և, ելնելով իր նախասիրություններից, աշխատել է հատկապես ուրվագծել հայ ժողովրդի ազատագրական ոգորումների ուղին: Այդ է պատճառը, որ պատմական դարաշրջանների ու նրանց փուլերի շարադրանքում տեքստային համամասնությունը չի պահպանվել: Շատ տեղերում, մանավանդ մշակույթի և տնտեսական ձեռքբերումների բնագավառում, տեքստը լրացնում են խոսուն նկարազարդումները:

Հեղինակն աշխատությունը հրատարակության է հանձնել իր մահվանից մեկ տարի առաջ՝ 1981 թ.: Գրված լինելով լճացման տարիներին, գրքի շարադրանքը որոշ տեղերում կրում է այդ շրջանի կնիքը, որից, բնականաբար, հեղինակը չէր կարող խուսափել: Եվ այդուհանդերձ, Ծ. Պ. Աղայանի հանրամատչելի այս գիրքը լավագույնս նպաստում է հայ ժողովրդի պատմական անցյալը մասսայականացնելու հայրենանվեր գործին:

ԵՐԵՎԱՆ
«ՀԱՅԱՍՏԱՆ»
1989



Ծ.Պ. ԱՂԱՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԶԱՐԴ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԳՄԴ 63.3(2Հ)
Ա 443

Գրախոս՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Մ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Աշխատությունը հրատարակության է պատրաստել
Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու
Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Աղայան Ծ. Պ.

Ա 443 Հայ ժողովրդի պատմության նկարազարդ ակնարկներ/Խմբ. Ա. Ի. Շահնազարյան.— Եր.: Հայաստան 1989.— 319 էջ. նկ.:

Աշխատության մեջ հեղինակը լուսաբանում է հայ ժողովրդի ամբողջական պատմության հիմնական դրվագները: Հատուկ ուշադրություն է դարձված հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին, տրված է Ռուսաստանի ազատարար դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու առաջադիմական նշանակությունը, Ռուսաստանի պրոլետարիատի հեղափոխական պայքարին հայ աշխատավոր կանգվածների մասնակցությունը: Հանգամանորեն լուսաբանված է ազգային, սոցիալական և տնտեսական այն աննախընթաց վերելքը, որ ապրեց հայ ժողովուրդը սովետական իշխանության տարիներին: Աշխատության մեջ արժանի տեղ է տրված ժողովուրդների բարեկամությանը:

Շարադրանքի պարզ ու հստակ լեզուն, հարուստ նկարազարդումները գիրքը մատչելի են դարձնում ընթերցող լայն շրջանների համար:

Ա $\frac{0505040000}{701(01)-89}$ 68—85 ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 5—540—00716—6

© «Հայաստան» հրատարակչություն, 1989

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

«Վաղուց ասված է, թե անցյալի պատմությունը մի լուսավոր լապտեր է, որ ամեն ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփան անմոլոր գնալու համար»:

Հովհ. Թումանյան

Հայ ժողովրդի պատմությունը նրա հերոսական գործերի, ստեղծած արժեքների և մտքի ծավալման նկարագիրն է, նրա հավաքական հիշողությունը: Որքան հարուստ ու բազմազան է նրա դերը պատմության մեջ, այնքան հարուստ ու բեղմնավոր է այդ պատմությունը, որ մեզ է հասել նյութական և մշակութային արժեքների ձևով: Այդ արժեքներն այն հիմնաքարն են, որոնց վրա խարսխում է պատմագիտությունը: Պատմական զարգացման բարդ պրոցեսն ընկալելու համար, ինչպես Վ. Ի. Լենինն է նշել, «ամենակարևորն է՝ չմոռանալ հիմնական պատմական կապը, յուրաքանչյուր հարցին նայել այն տեսակետից, թե տվյալ որոշակի երևույթը պատմության մեջ ինչպես է ծագել, իր զարգացման ընթացքում ինչպիսի գլխավոր էտապներ է անցել այդ երևույթը, և դրա զարգացման տեսակետից նայել, թե տվյալ բանն ինչ է դարձել այժմ»:

Այսպիսով, պատմությունը պատմական պրոցեսի իմացության օրինաչափությունն է, նրա տրամաբանությունը: Այդ տրամաբանությունը կարելի է բացահայտել ամեն մի երկրի, ամեն մի քաղաքակրթության օրինակով: Ժողովուրդների պատմությունը, որ իր ակունքներով գալիս է հեռվից, հնարավոր է դարձնում ավելի շրջահայաց դատելու մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների և նրա ապագայի մասին: Կարևորը ժամանակի և պատմականության ոգու ճիշտ ըմբռնումն ու նրա յուրահատուկ արտացոլումն է: Պատմականությունը հանդես է գալիս որպես ժամանակի հումանիստական և էսթետիկական ամբողջական աշխարհըմբռնում, որով ամփոփվում է ոչ միայն անցյալը, այլ նաև ներկան, կանխագծվում է զարգացման հեռանկարը: Միայն ճիշտ պատմական մոտեցումը կարող է բացահայտել երևույթների զարգացման ընթացքն ու օրինաչափությունները, զարգացում, որի մեջ ամեն ինչ օղակվում է որպես պատմության համընթաց շղթա: Պատմական երևույթները կապակցված են պատճառաբանված ընթացքով ու հետևանքներով: Ահա թե ինչու պատմականության հետ կապված ժամանակի ոգին լինելու աշխարհըմբռնումը և ապագայի կանխատեսումը մեր օրերում առավել կարևոր իմաստ են ստանում: Ամեն մի ժամանակի մարդ պետք է հարցնի, թե ով է ինքը, որտեղից է սկիզբ առնում իր ակունքը, ինչ ուղի է անցել, ուր է հասել և ուր է գնում: Ժողովրդի հիշողությունն ու նրա հոգևոր հարստությունն արտահայտող մտածողների հիշողությունը միահյուսվում և հանդես է գալիս բյուրեղացած ձևով:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՍՍՀՄ ժողովուրդների պատմությունը, ժողովուրդներ, որոնք քաղաքակրթության տարբեր մակարդակների վրա գտնվելով հանդերձ՝ միավորվեցին և աշխարհում առաջինն ապահովեցին սոցիալիստական հեղափոխության հաղթանակը, բոլոր ժողովուրդների համար ճանապարհ ուղենշեցին ընթանալու դեպի կոմունիզմ:

Հայ ժողովրդի պատմությունն իր առանձնահատուկ և հերոսական դրվագներով, մարդկային քաղաքակրթությանը թողած հարուստ ժառանգությամբ ուրույն տեղ է գրավում համաշխարհային պատմության մեջ: Նրա հայրենասերների վաղեմու-

թյունն այժմ հնչում է որպես անմահության հզոր ղողանջ, որպես դեպի գալիքները խոյացող ճեպընթաց: Հայ մշակույթի խոշորագույն գիտակ Վալերի Բրյուսովը գրել է, թե Հայաստանի պատմությունը «նույնքան ուշադրության է արժանի, որքան ամենաերևելի ժողովուրդների պատմությունը, որոնք իրենց ինքնուրույն ավանդն են մուծել մարդկության մշակույթի մեջ՝ չբացառելով ո՛չ եգիպտացիներին, ո՛չ էլ ժամանակակից Եվրոպայի ժողովուրդներին»:

* * *

Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ տարբեր բնույթի շատ ու շատ գրքեր են գրվել՝ առանձին ուսումնասիրություններ, դասագրքեր, ընդհանրացնող բազմահատոր պատմություն և այլն: Ներկա աշխատության նպատակը չէ ներկայացնելու հայ ժողովրդի պատմության սիստեմատիկ շարադրանքը: Հաշվի առնելով ժամանակագրական լայն ընդգրկումը, աշխատել ենք հանրամատչելի և խիստ ընդհանուր ձևով ուրվագծել մեր ժողովրդի պատմության առավել կարևոր դեպքերն ու զարգացման փուլերը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Գրքի առատ նկարազարդումը լրացնում է նյութը և այն դարձնում տպավորիչ, պարզություն է հաղորդում տեքստի շարադրմանը: Հատուկ ուշադրություն ենք դարձրել հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի հարատևող ոգուն: Ընդգծվում է Ռուսաստանի ազատարար դերը հայ ժողովրդի ճակատագրում, ռուսական պրոլետարիատի հեղափոխական պայքարին հայ աշխատավոր մասսաների ունեցած մասնակցությունը: Բացահայտվում է այն փաստը, թե տնտեսապես քայքայված Հայաստանը պատմական կարճ ժամանակահատվածում, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում ինչպիսի մեծ վերելք ապրեց և վերածնվեց:

Ծանոթանալով մասսայական ընթերցողին ուղղված այս գրքին, ընթերցողը կհամոզվի, որ Հայաստանն իր դարավոր պատմության ընթացքում անցել է այն ուղին, ինչ որ քաղաքակիրթ շատ ուրիշ ժողովուրդներ, և որ նրա պատմությունն անքակտելիորեն կապված է եղել համայն մարդկության պատմության հետ, համաշխարհային պատմական պրոցեսի անբաժանելի մասն է, մեծ հոսանքի մի վտակը:

Գիրքը բովանդակում է հետևյալ բաժինները. նախնադարյան և ստրկատիրական հասարակարգեր, ֆեոդալիզմ, կապիտալիզմ, սոցիալիզմ:

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԵՐ

«Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով ու կորությամբ տկար և շատ անգամ օտար թագավորների կողմից նվաճված, սակայն մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան կատարված, արժանի գրով հիշատակելու»:

(Մովսես Խորենացի)

Հայոց լեռնաշխարհում մարդիկ երևացել են վաղնջական ժամանակներից: Այդ շրջանի պատմությունը դեռևս մնում է մութ ծալքերի տակ, և նրա մասին մենք սոսկ աղոտ պատկերացում ունենք՝ ստացած նյութական կուլտուրայի մնացորդներից: Հնագիտական պեղումների շնորհիվ էջ առ էջ կարդում ենք հայ ժողովրդի պատմությունը, մխրճվում նրա խորխորատների մեջ, լսում վաղուց լռած ձայներ, տեսնում հանգած բնակավայրեր, պատմական հուշարձաններ: Դրանք «պատմության դասերն» են, մարդկության դարավոր փորձի դրսևորումներից մեկը: Դրանք գեղեցկության իդեալներ են՝ մարմնավորված մետաղի ու քարի նրբերանգ գույներում:

Հայաստանը բաց երկնքի տակ փռված թանգարան է, ուր տեսանելի է մարդու անցած ճանապարհը՝ քարայր բնակավայր-կայանից մինչև մեր օրերի պալատ-կառույցները: Պատմության և կուլտուրայի հուշարձանների թիվը ՀՍՍՀ-ում հասնում է շուրջ 40 հազարի: Դա ցուցանիշ է այն բանի, որ Հայաստանը մարդկային քաղաքակրթության հնագույն բնօրրաններից է, որի տարածքում հստակ տեսանելի է ժամանակների հերթափոխը. հնագույն հուշարձաններից մինչև մեզ բաժանող ժամանակը հասնում է հազարավոր տարիների:

Նյութական մշակույթի կոթողներից մենք աստիճանաբար իմանում ենք, թե ինչպես է ապրել ու գործել նախնադարյան մարդը, ինչպես է նա սովորել օգտագործել փայտն ու քարը՝ պտուղներ հավաքելու և որս անելու համար, ինչպե՞ս է նա հազարամյակների ընթացքում քարից, բրոնզից ու երկաթից աշխատանքի գործիքներ կերտել, հայտնագործել կրակը, կենդանիներին տնայնացրել, մշակել հողը, կատարելագործել իր լեզուն ու մտածողությունը:

Հայաստանը ՍՍՀՄ-ի ամենահնագույն պետականություն ունեցող երկրամասերից է. նրա պատմությունը թողել է մեկը մյուսին հաջորդող կուլտուրաների վառ հետքեր: Դրանք մեզ են հասել ժայռապատկերների, գերեզմանների, ամրոցների ավերակների, մետաղյա իրերի, կարդաքանդակների, քարերի վրա արված փորագրությունների, կամ էլ քարացած ձեռագրերի տեսքով:

Հայկական բնաշխարհը լեռնոտ երկիր է՝ կազմըված մի շարք լեռնաշղթաներից: Նրա ամենաբարձր գագաթը հավերժ ձյունապատ Արարատը (կամ Մասիսն) է (5156 մ): Նրանից է սկիզբ առնում Հայկական պարը և ձգվում դեպի Բյուրակնյան լեռները: Արևմուտքում Բարձր Հայքի լեռներն են, հյուսիս արևելքում՝ Փոքր Կովկասը, իսկ հարավում՝ Տավրոսի լեռնաշղթան: Վանա լճի հյուսիսից վեր է խոյանում Սիփանը (4434 մ), իսկ ավելի հյուսիս՝ Ծաղկունյացը՝ Թոնդրակ գագաթով (3548 մ): Հայոց դիցաբանության թագուհին է Արագածը (4096 մ):

Հայկական լեռնաշխարհին առանձնակի գեղեցկություն են տալիս բազմաթիվ լճերն ու լճակները:





Դրանցից քաղցրահամ ջրով Սևանը աշխարհի ամենաբարձրադիր լճերից է: Վանա լճի ջուրն աղի է, իսկ Ուրմիան (Կապուտանը) ավելի մեծ է և այնքան աղի, որ նրանում ձկներ չեն աճում: Կան նաև բազմաթիվ քաղցրահամ լճակներ:

Հայաստանի բնակլիմայական պայմանները խիստ տարբեր են. այստեղ ձմեռը ցուրտ է, ամառը՝ շոգ: Լեռնամեջ ընկած սարահարթերն ու արգավանդ հովիտները (Արարատյան, Շիրակի, Ալաշկերտի, Տարոնի (Մշո), Խարբերդի, Երզնկայի) նպաստել են ժողովրդի տնտեսական և մշակութային կյանքի զարգացմանը: Հատկապես Արարատյան դաշտն իր Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին և այլ քաղաքներով աչքի ընկնող դեր է խաղացել պատմական Հայաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում:

Հայաստանում հայտնաբերվել են նախնադարյան մարդու բնակավայր-կայաններ, բնակելի քարայրներ, քարե գործիքներ, որսի կենդանիների ոսկորներ, բույսերի մնացորդներ, որոնց հասակն անցնում է 800 հազար տարուց:

Հայերի մարդաբանական տիպը՝ արմենոիդը, ներկայացնողները հայկական լեռնաշխարհի հնագույն բնիկներն են: Այդ է ապացուցում Սևանա լճի առափնյա հատվածում ջրի տակ անցած դամբարանների նյութերի ոսկրաբանական ուսումնասիրությունը: Դամբարաններում հայտնաբերվել են երկանիվ և քառանիվ փայտե սայլեր, կավե սափորներ ու ափսեներ, ոսկե վարդաքանդակներով մանյակ, ձեռքի օձագլուխ ապարանջան, ոսկե կոճակներ, գորտի ոսկե կաղապար: Դամբարաններից մեկում գտնվել է 12 կմախք, որոնցից մեկը սայլի առջևում է (հավանաբար ցեղապետն է), իսկ մյուսները՝ հետևի մասում: Լճաշենի դամբարանաշարքում ցեղապետի հետ թաղվել են նաև անասուններ:

Սևանի ավազանի արմենոիդ տիպը շատ ավելի հին է, «քան մի քանի եվրասիական ցեղեր՝ թրակիացիներ, հելլեններ, իրանցիներ և այլն, որոնք համենայն դեպս ասիմիլյացիոն ազդեցություն չեն գործել արմենների վրա»: Մարդաբան Լուշանը դեռևս 1911 թ. առաջինը բնորոշեց հայերի և բազմաթիվ այլ ցեղերի փոխազդեցություններն ու գտավ հայկերպ-արմենոիդ տիպը, «որը օժտված է խեթերին բնորոշ մի քանի հատկանիշներով»: Պրոֆ. Վ. Բունակը 1927 թ. գիտականորեն հիմնավորեց հայերի շատ հին, իր բնորոշմամբ՝ «պոնտո-զագրոսյան» լինելը:

Կարևոր նյութ են տալիս նաև Հրազդանի կիրճի նախապատմական շրջանի ժայռապատկերները, որոնցում արտացոլվել է Հայաստանի նախնադարյան բնակիչների տարեգրությունը: Ժայռերի վրա նկարազարդված և փորագրված այծագրերը ցույց են տալիս մարդու աշխարհընկալումը, տիեզերքի ըմբռնումը, հավատալիքներն ու կենցաղը: Հավանաբար, Հրազդանի կիրճն իր բնակլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ «հանդիսացել է հոմինիդի ծագման, զարգացման, բնակության և նրա ստեղծած մշակույթի բնօրրաններից մեկը»:

Հին քարե դարում մարդիկ ապրուստի համար վերցնում էին այն, ինչ պատրաստի կար բնության մեջ: Այդ ժամանակ էլ ուժեղանում են արյունակցական կապերը, ձևավորվում է տոհմական համայնքը: Նոր քարե դարի (նեոլիթյան) շրջանը հայկական լեռնաշխարհում ընդգրկում է մ. թ. ա. 10—6-րդ հազարամյակները, որի ընթացքում մարդկանց կյանքում տեղի ունեցան զգալի փոփոխություններ. ընտանեցվեցին կենդանիներ, մարդիկ սովորեցին մշակել հողը և բերք ստանալ: Տեղի ունեցավ անցումը հավաքչական տնտեսությունից արտադրական տնտեսության: Ծայր առան երկրագործությունն ու անասնապահությունը, նստակյաց կյանքը կենցաղ դարձավ: Երկրագործական և անասնապահական բնակավայրեր են հայտնաբերվել Արարատյան դաշտում, Գուգարքում, Շիրակում և այլ վայրերում:

Սկզբում ձևավորվում է մայրական տոհմական համայնքը, իսկ հետո, երկրագործության ու անասնապահության լայն ծավալմանը զուգընթաց, գնալով իշխող է դառնում հայրական տոհմական համայնքը, հայրիշխանությունը:

Մետաղի՝ պղնձի օգտագործման (էնեոլիթյան) շրջանն ընդգրկում է մ. թ. ա. 5—4-րդ, իսկ բրոնզե դարը՝ 3—1-ին հազարամյակները:

Հայերի նախնիները հնագույն ժամանակներից օգտվել են երկրի ընդերքում եղած բնական հարստություններից (պղինձ, երկաթ, թանկարժեք մետաղներ, աղ և այլն): Մեծամորի թանգարանում պահվող հնագիտական նյութերն ապացուցում են, որ Հայաստանը հնագույն ժամանակներից ի վեր եղել է մետաղամշակման կենտրոններից մեկն աշխարհում:

Հայաստանն այդ ժամանակ արդեն բավականաչափ խիտ բնակչություն ուներ: Դրա ապացույցն են ընդարձակ բնակավայրերը, կիկլոպյան ամրոցները, մեծ չափերի հասնող դամբարանադաշտերը, պաշտամունքային շենքերը, գործիքներն ու զենքերը,

Ժայռապատկերներ
Մարդակերպ քարե կուռքեր
Լճաշեն. ցուլի գլուխ
Լճաշեն. բրոնզե իրեր

Լճաշեն. թռչունի արձանիկ պատվանդանի վրա

կավե անոթներն ու արվեստի առարկաները, կարդերը, ինչպես նաև ցորենի ու գարու ածխացած հատիկները: Ժայռերի վրա հայտնաբերվել են որսի տեսարաններ, կենդանիների և գայլանների պատկերներ, որոնք ցույց են տալիս նախնադարյան մարդու կբաղմունքը, կենցաղը, մշակույթը, նրա կյանքի վարգացման ամբողջ ընթացքը:

Դեռ նախապետականության ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները հայկական ցեղերն էին: Տևական պատմական ժամանակաշրջանում նրանք անցան երկրագործության, որը, անշուշտ, առաջադիմական էր՝ որսով և ձկնորսությամբ զբաղվող հարևան ցեղերի ու ցեղախմբերի զբաղմունքների համեմատությամբ: Հասնելով արտադրական ավելի բարձր ձևերի, հայերը սերտ կապերի և փոխհարաբերությունների մեջ մտան հարևանների հետ:

Նախնադարյան մարդիկ, բնության տարերքից վախենալով, ստեղծում են կուռքեր, կատարում ծեսեր: Առաջանում է քրմերի խավը: Տոհմացեղային ավագանին, ռազմիկներն ու քրմերն արդեն հանդես են գալիս որպես վերնախավ, որն աստիճանաբար սկսում է սեփականել ընդհանուրին պատկանող ունեցվածքը:

Սևանում, Կիրովականում, Լենինականում և Արթիկում պեղված ցեղապետերի դամբարաններում հայտնաբերվել են կառքեր, վենքեր, կավե անոթներ, թանկարժեք իրեր, վարդեր, մինչդեռ աղքատիկ գերեզմաններում որևէ իր չի գտնվել:

Պատերազմի ժամանակ վերցրած գերիներին տոհմացեղային ավագանին դարձնում էր իր ստրուկները: Անընդհատ տեղի ունեցող պատերազմներն առաջացնում էին ցեղերի տեղաշարժ, որի հետեվանքով նախնադարյան համայնքը քայքայվում էր և կորցնում իր միատարր ազգակցական-արյունակցական բնույթը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԵՐՆ ՈՒ ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդեն մ. թ. ա. II հազարամյակում Հայկական լեռնաշխարհում ձևավորվել էին մի շարք ցեղային միություններ: Բարձր Հայքում հատկապես աչքի էին ընկնում հայասա և նրա դաշնակից ազզի ցեղախմբերը: Կումմախան (Անի-Կամախը) Հայասայի մայրաքաղաքն էր: Տավրոսից հարավ կազմավորվել էր Արմե-Շուպրիան, Վանա լճի ավազանում ապրում էին նաիրյան ցեղախմբերը, իսկ Հայաստանի այլ մասերում՝ մի շարք այլ ցեղեր ու ցեղախմբեր: Այդ ցեղախմբերը հաճախ էին ենթարկվում հարևանների հարձակումներին: Նրանց հատկապես մեծ վտանգ էր սպառնում Փոքր Ասիայում դեռ մ. թ. ա. II հազարամյակի սկզբում կազմավորված Խեթական թագավորությունը, որը ջանք չէր խնայում Հայասան իրեն ենթարկելու համար: Խեթական թագավոր Թուդխալիա III-ի (շուրջ 1400—1380 մ. թ. ա.) դեպի Հայասա կատարած արշավանքների մասին նրա թոռը գրել է. «Թուդխալիա III-ը՝ իմ պապը, Հայասա երկրի հետիոտն վինվորներին և կառամարտիկներին հաղթեց»:

Մեկ ուրիշ արձանագրություն հաղորդում է, որ Ազզի երկրի մարդիկ խեթերից 1000 ստրուկ էին գերևարել, սակայն խեթերի նոր արշավանքից խուսափելու համար գերիներին հետ էին վերադարձրել: Այս և այլ փաստերը ցույց են տալիս, որ Հայասան բավականին ուժեղ էր և կարողանում էր հետ մղել

Լճաշեն. մարտակառքի մոդել

խեթական հզոր պետության հաճախակի հարձակումները: Հայասան ազատ շունչ քաշեց, երբ մ.թ.ա. XII դարում խեթական պետությունը քայքայվեց:

Հայասա-Ազզի և Արմե-Շուպրիա ցեղային միությունների հանդես գալը կարևոր քայլ էր հայ ժողովրդի կազմավորման և նրա պետականության ստեղծման ճանապարհին: Ասորեստանի ներխուժումներին հակահարված տալու համար նաիրյան ցեղերը սկսեցին է՛լ ավելի համախմբվել և դիմակայել զավթիչներին:

Բրիտանական թանգարանում պահվող մի արձանագրություն, որ վերաբերում է ասորեստանյան թագավոր Թիգլաթպալասարի (մ.թ.ա. 1115—1077) ժամանակին, հետևյալն է նշում նրա արշավանքների ու բռնագրավումների մասին. «Դայաենու (երկրի) թագավորը, ընդամենը Նաիրի երկրի 23 թագավորներ, իրենց երկրներում իրենց մարտակառքերն ու իրենց զորքերը միավորեցին, կռիվ ու ճակատամարտ տալ ցանկացան... Նաիրիի երկրների 50 թագավորներին և նրանց օգնության եկածներին իմ տեգերով հետապնդեցի մինչև Վերին ծովը»:

Ասորական թագավոր Աշշուրնազիրապալ II-ի (մ.թ.ա. 883—859) մի արձանագրության մեջ նշված է. «Ներքին Ուրումում երկրի և Նաիրիի երկրների թագավորների տուրքը՝ մարտակառքեր, ձիեր, ջորիներ, արծաթ, ոսկի, բրոնզե անոթներ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, գինի, ես ստացա, պարհակ սահմանեցի Նաիրիի երկրների վրա»: Ասորական թագավոր Սալմանասար III-ի (մ.թ.ա. 858—824) արձանագրությունը հաղորդում է. «Արծիդուից մեկնեցի, Խուբուշքիա (Նաիրիի մայրաքաղաքը) քաղաքին մոտեցա: Խուբուշքիա քաղաքը հարյուր շրջակա քաղաքների հետ կրակով այրեցի: Կամին՝ Խուբուշքիա քաղաքի թագավորը, իմ ահեղ վենքերի փայլից սարսափեց և ապաստանեց իր ամուր լեռներում... Խուբուշքիայից մեկնեցի (և) դեպի Նաիրի երկրի ծովը (Վանա) գնացի...»

Պատմահայր Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ հայկական տոհմագրության ծառը սկսում է Թորգոմից, որից սերում է Հայկը, ապա Արամանյակը, Արամայիսը, Ամասիան, Գեղամը, Հարմանը, Արմանը և ավարտում է Արա Գեղեցիկով: Խորենացին մինչև Երվանդունիների հայկական պետությունը մեջ է բերում հայոց թագավորների ևս մի ամբողջ շարք (Պարույր, Հրաչյա, Փառնավազ, Պաճույճ, Կոռնակ, Փավոս, մյուս Հայկակ, Երվանդ Սակավակյաց, Տիգրան), որոնք թագադրվել են Մարաց թագավորների կողմից: Անկասկած, պատմահայրը հենվել է որևէ աղբյուրի վրա, և դա մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Խորենացին Մար Աբասի պատմությունից մեջ բերելով Հայկի և Բելի կռիվը, նշում է. «Եվ երկու կողմերի հսկաները միմյանց հասնելով՝ երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին գրոհելով և իրար վրա ահ ու սարսափ գցեցին իրենց հարձակումների ձևերով...» Այս անսպասելի, սարսափելի դիպվածը տեսնելով, Տիտանյան արքան վարհուրեց և, ետ-ետ քաշվելով, սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև ամբողջ զորքը հասնի, որպեսզի նորից ճակատ կազմի: Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, մինչև վերջը քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը, շեշտակի անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում և գոռոզացած Տիտանյանը այս կերպով կործանվում, ընկնում է գետնին ու շունչը

Լճաշեն. ուլունքների շարք

փչում»: Նա նաև նշում է, որ ճակատամարտի տեղում Հայկը շինում է «դաստակերտ և անունը դնում է Հայք: Այս պատճառով գավառն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր»: Ս. Երեմյանն այն տեղադրում է Վանի հարավում (տե՛ս «Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 51): Այն բլուրը, որտեղ Բելն ընկնում է, Հայկն անվանում է Գերեզմանք, իսկ դիակը թաղել է տալիս «մի բարձրավանդակ տեղում, ի տես իր կանանց և որդիների: Իսկ մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք»: Այնուհետև պատմահայրը, հենվելով Մար Աբասի տվյալների վրա, նշում է, թե ինչպես են առաջացել Հայկից սերվող սերունդները, որոնց անվան հետ են կապված Հայաստանի տարբեր շրջանների անվանակոչումները: «Այս Հայկը՝ Թորգոմի որդին, Թիրասի որդին, Գեղամի որդին, Հաբեթի որդին, հայաստանցիների նախնին է. և այս են նրա ցեղերն ու սերունդները և նրանց բնակության երկիրը»: Իսկ Արամի մասին նշվում է, որ նա բազում քաջագործություններ է կատարել, ընդարձակել Հայաստանի սահմանները, «որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր երկիրը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ»: Մի ուրիշ տեղ Խորենացին Արամին բնութագրում է այսպես. «Նա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը (Մար Աբասը:—Ծ. Ա.), լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները՝ օտարները տիրում են արյունակից հարազատների վրա»:

Աստվածաշունչը, ինչպես նաև օտար եկեղեցական մատենագիրներն ու պատմագիրները նույնպես հայերին սերված են համարում Թորգոմի տոհմից և դրա համար էլ Հայաստանը համարում են «Տունն Թորգոմեան»: Հայկական ժողովրդական ավանդությունը ևս Հայկին համարում է Թորգոմի որդի:

Այսպիսով, թե՛ պատմական աղբյուրները և թե՛ առասպելներն ի վերջո նույնն են պնդում հայերի ծագման մասին, միաժամանակ վկայելով նրանց ազատատենչ ոգու մասին: Այդ է ցույց տալիս նաև Արա Գեղեցիկի ու Շամիրամի հետ կապված առասպելը: Խորենացին նշում է, որ երբ Արան մերժում է Ասորեստանի թագուհի Շամիրամի ամուսնության առաջարկը, վերջինս արշավում է, «գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվել է Այրարատ»: Արան ճակատամարտում կոտորվում է: Շամիրամը հրամայում է նրա դիակը դնել իր ապարանքի վերնատանը: Երբ հայոց կորքերը պատրաստվում են վրեժ առնել, Շամիրամը, նրանց հանգըստացնելու նպատակով, հայտարարում է. «Ես իմ աստվածներին հրամայեցի նրա վերքերը լիզել, և նա կկենդանանա»: Բայց շուտով, երբ դիակը ըսկըսում է նեխել, Շամիրամը հրամայում է այն «գցել մի մեծ վիհի մեջ ու ծածկել»: Իր սիրեկաններից մեկին ծածուկ վարդարելով՝ նրա մասին այսպիսի լուր է տարածում. «Աստվածները Արային լիզելով ու կենդանացնելով, մեր փափագն ու ցանկությունը կատարեցին... Նաև մի ինչ-որ արձան է կանգնեցնում աստվածների անունով... ցույց տալով, իբր թե աստվածների այս կորությունը կենդանացրեց Արային: Եվ նրա մասին այսպիսի լուրեր տարածելով մեր հայոց երկրում և բոլորին համոզելով՝ խռովությունը խաղաղեցնում է»:

Առասպելական պատումները, անկասկած, իրենց հիմքում թեկուզև չափազանցված, պատմական իրողություն են արտացոլում և հավաստում, որ Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները (Հայասա, Արմե-Շուպրիա, Նաիրի, Ուրարտու) ի վիճակի էին չափվելու հարևան հզոր պետությունների հետ: Դա ապացույց է այն բանի, որ հայկական պետական կարգը սկզբնավորվել է դեռ մ.թ.ա. II հազարամյակում:

Մ.թ.ա. VI դարի հույն պատմագիր Քսենոֆոն Աթենացին իր աշխատություններում, հատկապես «Կյուրոպեդիայում», հայ-մարական, հայ-պարսկական փոխհարաբերությունների և Հայաստանի ներքին կյանքի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում: Նրա վկայությամբ Մեդիայի թագավորը, թվարկելով իր զինված ուժերը, նշում է. «Արմենների կողմից ևս..., որ մեզ սահմանակից են, կգան 4.000 հեծելավոր և 20.000 հետևակ»: Դա հայոց թագավոր Երվանդ Սակավակյացի ժամանակ էր, երբ Հայաստանը որոշ կախվածություն ուներ Մեդիայից և պարտավոր էր հարկ վճարել ու պատերազմի ժամանակ զորք տրամադրել: Հետո հայերն ապստամբում են և հրաժարվում հարկ վճարել: Մեդացիները նորից արմեններին իրենց են ենթարկում: Հայոց թագավորը խոստովանում է, որ իրենք ունեն 8 հազար հեծյալ և 40 հազար հետևակ զորք: Այսպիսով, եթե արմենները կարող էին մոտ 50 հազար հետևակ և հեծյալ զորք դուրս բերել, ուրեմն նրանք բավականին հզոր պետական միավորում ունեին: Այդ է ապացուցում նաև հույն պատմագիր Դիոդորոս Սիկիլիացին, որն իր «Պատմական գրադարան» գրքում հավաստի տեղեկություններ է տալիս ամբողջ Արևելքի պատմության մեջ «Արմենիայի» և նրա խաղացած կարևոր դերի մասին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ինչպես ցույց են տալիս աղբյուրները, ուրարտացիները դարեր շարունակ հայկական ցեղախմբերի հետ ապրում էին կողք-կողքի:

Ուրարտուն մ.թ.ա. IX դարի կեսերից սկսած այնքան է հզորանում, որ սկսում է հակահարված տալ Ասորեստանի ռազմական էքսպանսիային և որոշ ժամանակից հետո դառնում է Առաջավոր Ասիայի հզորագույն ռազմաքաղաքական ուժը: Ուրարտական թագավորներն իրենց համարում էին նաև «Նաիրիի արքա»:

Ուրարտուի առաջին թագավոր Արմենը (Արամը) կատաղի պայքար է մղում Ասորեստանի դեմ, իսկ Մենուա (մ.թ.ա. 810—786), Արգիշտի I (մ.թ.ա. 786—764) և Սարդուր II (մ.թ.ա. (764—735) թագավորների օրոք Ուրարտուն արդեն իր մեջ էր ամփոփում Հայկական լեռնաշխարհն ամբողջովին: Արգիշտին մ.թ.ա. 782 թ. հիմնադրեց Էրեբունին (Երևան), մ.թ.ա. 776 թ.՝ Արգիշտիխինիլին (Արմավիր) և մի շարք այլ ամրոցներ ու քաղաքներ:

Մեծամոր. առաջին սրբարանը





Էրեբունի ամրոցը

Ասորեստանի Սարգոն II թագավորը մ.թ.ա. 714 թ. արշավեց Ուրարտուի վրա և ուժեղ հարված հասցրեց նրան, որից հետո այն գնալով թուլացավ և մ.թ.ա. VI դարի սկզբին կործանման հասավ:

Ուրարտացիների տիրապետության ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի տնտեսական և մշակութային կյանքում զգալի առաջընթաց կատարվեց: Մետաղագործության զարգացումը և երկաթե գործիքների արտադրությունը մեծ չափով նպաստեցին երկրագործության առաջընթացին: Կառուցվեցին մի շարք ջրանցքներ ու ջրամբարներ, որոնք կարևոր նշանակություն ունեցան դաշտավարության ու այգեգործության զարգացման համար: Թեյշեբաինի (Կարմիր-բլուր) պեղումներով ի հայտ եկան ցորենի և գարու շտեմարաններ, գինու մառաններ, գարեջրի արհեստանոց, ձիթհան և այլն: Տուշպայի (Վան), Թոփրախ Կալեի, Էրեբունիի, Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի և այլ ամրոցների ու քաղաքների պեղումներն ի հայտ բերեցին բազմաթիվ հրաշակերտ պալատներ ու տաճարներ՝ կարդարված բարձրարվեստ որմնանկարներով:

Ուրարտական կամ Վանի թագավորության շրջանին փոխարինեց Երվանդունիների թագավորությունը, որը պայքար ծավալեց ազատագրվելու Մարաստանի և Պարսկաստանի գերիշխանությունից: Ուրարտացիները, լինելով փոքրաթիվ և դրսեկ, միաձուլվում են հայ ժողովրդին և հանդես գալիս որպես նրա բաղկացուցիչ տարրերից մեկը: Եվ դա հասկանալի է. ուրարտական պետության մեջ հիմնական էթնիկական տարրը հայկական ցեղերն էին:

Պարսկաստանի տիրակալ Դարեհ I-ի (մ.թ.ա. 522—486) Բեհիսթունյան (պարսկերեն, էլամերեն, աքքադերեն) արձանագրություններում արտացոլված են կարևոր փաստեր, որոնք ցույց են տալիս հայ ժողովրդի հերոսական պայքարն անկախության համար: Դարեհ I-ը իր հպատակ երկրների թվում նշում է նաև Արմինան (Արմենիան): Հետաքրքիր է այն փաստը, որ բաբելական (աքքադական) բնագրում, ի տարբերություն «Արմենիայի», նշվում է «Ուրաշտու» (Ուրարտու), էլամականում՝ «Հարմինույա»: Սա նշանակում է, որ Ուրարտուն և Արմենիան նույնացվում էին:

Արմենիայի մասին շատ ուշագրավ տեղեկություններ ենք գտնում Հերոդոտոսի «Պատմություն» աշխատությունում:

Քսենոֆոն Աթենացին ևս, որը մասնակցել է դեպի Պարսկաստան Կյուրոս Կրտսերի արշավանքին (մ.թ.ա. 401 թ.), կարևոր տեղեկություններ է տալիս Հայաստանի մասին: Արշավանքն անհաջողությամբ է վերջանում, Կյուրոսը Կունաքսայի ճակատամարտում սպանվում է, իսկ վորքը Հայաստանի վրայով նահանջում է դեպի Սև ծով: Քսենոֆոն Աթենացին նահանջի ճանապարհին իր տեսածը նկարագրում է «Անաբասիս» աշխատության մեջ: Նա նշում է երկրի հարստությունը:

Դիոդորոս Սիկիլիացին (հիրավի փոխանցելով ուրիշից) նույն ձևով նկարագրելով 10 հազար հույների արշավանքն ու նահանջը, ուշագրավ փաստեր է բերում Հայաստանում բարիքների առատության և ժողովրդի ռազմական հզորության, նրա ազատասեր ոգու մասին:



Ուրարտերեն արձանագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՍԿԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԽԱՐԻԲԴԱՅԻ ՄԵՋ

Մ.թ.ա. 331 թ. Աքեմենյան պետությունն Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումների հետևանքով խորտակվեց: Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո (մ.թ.ա. 323 թ.) նրա կայսրությունը բաժանբաժան եղավ: Նրա զորավարներից Սելևկիոսը մ.թ.ա. III դարի սկզբին Առաջավոր Ասիայում ստեղծեց մի պետություն, որն իրեն ենթարկեց նաև Մեծ Հայքը և Հայաստանի այլ շրջաններ: Երբ մ.թ.ա. 190 թ. սելևկյան բանակը Մագնեսիայի ճակատամարտում հռոմեացիների կողմից ջախջախվեց, հայ մեծատոհմիկներ Արտաշեսն ու Զարեհը հաջորդ տարում ապստամբեցին և սելևկյան տիրապետությունից իրենց ազատ հայտարարեցին: Զարեհը վերականգնեց Ծոփքի թագավորությունը, իսկ Արտաշեսը՝ Մեծ Հայքի: Հատկապես նշանակալից էր Արտաշեսյան դինաստիան, որը 190 տարի մեծ դեր կատարեց հայ ժողովրդի պետականության զարգացման մեջ: Կարևոր նշանակություն ունեցան Արտաշես I-ի (մ.թ.ա. 189—160) բարենորոգումները: Նա իրագործեց ագրարային ռեֆորմ, նպատակ ունենալով սահմանազատել համայնական և մասնատիրական հողերը: Այդ նպատակով նա հրամայեց հողերի արանքում դնել սահմանաքարեր, որոնցից մի քանիսը հասել են մեզ: Նա կարգավորեց նաև վարչական բաժանումն ու կառավարումը, զարկ տվեց երկրագործությանը, արհեստներին ու առևտրին, Արարատյան դաշտի Խորվիրապ կոչվող վայրում հիմնադրեց Արտաշատ մայրաքաղաքը: Խոսելով Արտաշատի հիմնադրման մասին, որն ուսումնասիրողներն անվանում էին հայկական Կարթագեն, Պլուտարքոսը նշում է, որ կարթագենցի Հաննիբալը գնաց «Արտաշես արմենի արքունիքը, որին բազում պիտանի խորհուրդներ ու հրահանգներ

տվեց: Բացի այդ, նկատելով չօգտագործված ու լքված, սակայն բացառիկ հարմարագույն և ակնահաճո մի վայր, նա այդ տեղում ուրվագծելով քաղաքի հատակագիծը, կանչեց Արտաշեսին և ցույց տալով նրան այդ վայրը՝ համոզեց քաղաք կառուցել այստեղ...» Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը, և այն հռչակվեց Հայաստանի քաղաքամայր: Դիոդորոս Սիկիլիացին ևս նշում է, որ «Հայաստանի թագավոր Արտաքսիասը ապստամբելով Անտիոքոսից (Սելևկյան թագավոր Անտիոքոս III՝ մ.թ.ա. 223—187), իր անունով քաղաք հիմնեց և ժողովեց հկոր արանց»:

Արտաշատը, որ կառուցվեց մ. թ. ա. II դարի 70-ական թվականներին, դարձավ տնտեսական և մշակութային խոշոր կենտրոն, միջազգային տարանցիկ առևտրի հանգուցակետ: Հնագիտական պեղումները հաստատում են, որ քաղաքը զբաղեցրել է հսկայական մի տարածություն, որի կենտրոնը մոնումենտալ շենքերով կառուցապատվել է 9 բարձունքի վրա: Այստեղ հայտնաբերվել են պենքեր, աշխատանքի գործիքներ, կավե և ապակե իրեր, դրամների նմուշներ և «Արտաշատյան Աֆրոդիտեի» արձանիկը, որը ուշ հելլենիզմի արվեստի լավագույն նմուշներից է: Ակադեմիկոս Բ. Առաքելյանի բնորոշմամբ ոչ մի քաղաք հայ ժողովրդի պատմության մեջ այնպիսի նշանակալից հետք չի թողել, ինչպես Արտաշատը:

Արտաշես I-ի գահակալության տարիներին վերաբերող արամեերեն 9 արձանագրություն է հայտնաբերվել, որոնցում արտացոլված է հողային բարենորոգումների խնդիրը: Դրանցից մեկում ասված է. «Արտաշես, արքա Երվանդականի, Զարեհի որդու, Բարու, թագակրի... 10-րդ տարում, Արտաշեսը, Զարեհի որդին, բաժանեց հողը գյուղերի միջև»: Այս մասին ուշագրավ տեղեկություն է տալիս նաև Մովսես Խորենացին: Նա գրում է. «Բոլոր առաքինություններից և ճշմարիտ գործերից հետո Արտաշեսը հրամայում է գյուղերի և ագարակների սահմանները որոշել... հրամայեց տաշել քառակուսի ձևով քարեր, մեջները պնակի նման փոսացնել և թաղել հողի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել քառակուսի կոթողներ...» «Բայց ասում են,— շարունակում է պատմահայրը,— թե Արտաշեսի ժամանակ մեր Հայաստանում անմշակ հող չմնաց, ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան շենացել էր երկիրը»:

Արտաշեսյան Հայաստանն իր հզորության գագաթնակետին հասավ Արտաշես I-ի թոռան՝ Տիգրան

Տեսարան Կարմիր բլուրից



Գառնիի հեթանոսական տաճարը



Արտաշատի հին բնակատեղին

II-ի, գահակալության ժամանակ (մ.թ.ա. 95—55 թթ.)։ Նա նախ գրավեց Ծոփքը, ուր իշխում էր Զարեհի հետնորդներից Արտաշեսը, ապա պարթևներից խլեց նրանց տիրապետության տակ գտնվող հայկական հողերը և էլի մի շարք տարածքներ։ Մ.թ.ա. 83 թ. Տիգրան II-ը գրավեց նաև սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը, որ շուրջ 500 հազար բնակիչ ուներ։ Նա հասավ Միջերկրական ծովի ափերը, տիրեց Փյունիկիային և դաշտային Կիլիկիային։ Հուստինիանոսը նշում է. «Չի կարելի լռությամբ անցնել այնպիսի մեծ թագավորության կողքից, ինչպիսին է Հայաստանը, քանի որ նրա սահմանները, Պարթևստանից հետո, իրենց ընդարձակությամբ գերազանցում են բոլոր մյուս թագավորությունների սահմանները, ընդ որում՝ Հայաստանը Կապադովկիայից մինչև Կասպից ծով տասնմեկ հազար քայլ տարածություն ունի, իսկ լայնքով նրա երկարությունն է յոթ հարյուր հազար քայլ»։

Իսկ Ապպիանոսը գրում է, որ Տիգրան II-ը, հզորացնելով իր տերությունը, «հռչակվեց արքայից արքա... տիրեց Եփրատից այն կողմ գտնվող Սիրիային, մինչև Եգիպտոս բնակվող սիրիական ցեղերի (երկիրը)։ Միաժամանակ նվաճեց Կիլիկիան...»։

Տիգրան II-ի գահակալության տարիներին Հայաստանում բուռն կարգացում ապրեցին մետաղագործությունը, կավագործությունն ու ապակեգործությունը։ Երկիրն առևտրական լայն կապեր ուներ բազմաթիվ երկրների հետ։ Տիգրան II-ի պատկերով դրամ էր կտրվում։

Երկրի հողային հարստությունները պատկանում էին թագավորին, խոշոր կալվածատեր ավագանուն, զինվորական և քրմական վերնախավին, որոնք օգտագործում էին ստրուկների աշխատանքը։ Ճնշվող և շահագործվող դասը կազմված էր համայնական ազատ գյուղացիներից, արհեստավորներից և ստրուկներից։ Արտադրող հիմնական ուժը գյուղացիներն ու արհեստավորներն էին, որոնք նաև պարտադիր աշխատանք էին կատարում քաղաքների, ճանապարհների և այլ կարգի կառույցների վրա։ Թագավորն էր պետության միանձնյա տիրակալը։ Քրմապետն անսահմանափակ իշխանություն ուներ կրոնական հաստատությունների վրա։ Նա նաև թագավորի գլխավոր խորհրդատուն էր։ Երկրի խոշոր վարչական միավորները գլխավորում էին բդեշխները, որոնք պարտավոր էին սահմանները պաշտպանել օտար ներխուժումներից։ Քաղաքներում տեղական վարչությունից բացի կար նաև թագավորի կողմից նշանակված, մեծ իրավունքներով օժտված կառավարիչ։

Երկիրը պաշտպանող ուժը բանակն էր, որն, ի տարբերություն մյուս պետությունների, վարձկան չէր, այլ կորակոչվում էր հայ բնակչությունից։

Մ.թ.ա. 80-ական թվականներին Տիգրան II-ը հիմնեց նոր մայրաքաղաք՝ Տիգրանակերտը, որը գտնվում էր Հայկական Տավրոսի մատույցներում։ Տիգրանակերտը շրջապատված էր բարձր բերդապարիսպներով և աչքի էր զարնում հոյակապ պալատներով ու շենքերով։ Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ Ապպիանոս Ալեքսանդրիացին այն դասել է ժամանակի հռաշակերտ քաղաքների շարքը։ Տիգրանակերտն ու Արտաշատը կապված էին հատուկ մայրուղով, որը կոչվում էր «Թագավորական ճանապարհ»։

Մ.թ.ա. I դարի կեսերին Տիգրանի պետությունը շոշափելի ազդեցություն ձեռք բերեց Փոքր Ասիայում և Հռոմի կողմից դիտվեց իբրև մրցակից։ Երբ մ.թ.ա. 69 թ. հռոմեական լեգեոնները Լուկուլլոսի գլխավորությամբ հանկարծակի ներխուժեցին Հայաստան, Տիգրան II-ին օգնության եկան դաշնակիցների՝ ատրպատականցիների (մեդացիների), աղվանների և իբերների զոկատները։ Նկարագրելով անդրկովկասյան ժողովուրդների պայքարն ընդդեմ հռոմեական կորքերի, Պլուտարքոսը նշում է, որ Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտի պաշտպաններին օգնության եկան «բազմաթիվ աղվաններ և նրանց հարևան իբերներ»։ Լուկուլլոսը կարողացավ իր կողմը գրավել Տիգրան II-ի իշխանությունից դժգոհ տարրերին ու առանձին իշխանավորների։ Վերջիններս, դավաճանելով իրենց արքայից արքային, անցան թշնամու կողմը, դրանով իսկ նպաստելով հռոմեացիների կողմից Տիգրանակերտի նվաճմանը։ Դիոն Կասսիոսը նշում է, որ Լուկուլլոսը «Տիգրանակերտը գրավեց այնտեղ բնակեցված օտարների ապստամբության հետևանքով։ Քանզի նրանց մեծ մասը կիլիկիացիներ էին, որոնք մի ժամանակ տեղահանվել էին իրենց երկրից, և



Արտաշատ. կնոջ մարմարե արձանիկ

այժմ գիշերով հռոմեացիներին ներս թողեցին։ Այնուհետև, մնացած ամեն ինչը հափշտակվեց։ Բացի կիլիկիացիների ունեցվածքից...» Ստրաբոնի վկայությամբ, Լուկուլլոսը ավերեց քաղաքը, որը դեռ կիսավարտ էր։ Թշնամու կորքերը փորձեցին կավթել նաև Արտաշատը, սակայն աշխարհազորայիններն և կորքերը կարողացան ամուր պաշտպանություն կազմակերպել, քաղաքը վերածել անառիկ ամրոցի և մաս առ մաս ջախջախել հռոմեական լեգեոններին։ Տիգրան II-ը, վերակազմելով բանակը, Միհրդատ Պոնտացու և իր փեսայի՝ ատրպատականյան թագավոր Միհրդատի օգնությամբ մ. թ. ա. 68 թ. աշնանը Արածանի գետի ափին Լուկուլլոսի կորքերին մեծ ջարդ տվեց և դուրս քշեց երկրից։ Հռո-

Արտաշատ. դիմաքանդակներ

Հելլենիստական դարաշրջանի կավե արձանիկ

մեական կավթիչները չհաշտվեցին այդպիսի խայտառակ պարտության հետ: Նրանք Հայաստան նետեցին նոր զորամասեր, պաշտոնից հանեցին Լուկուլլոսին՝ նրան փոխարինելով Պոմպեոսով, և մ.թ.ա. 66 թ. նորից ձեռնամուխ եղան իրենց կավթողական ծրագրերի իրագործմանը: Տիգրան II-ը, ստեղծված պայմաններից ելնելով, հաշտություն առաջարկեց: Մ.թ.ա. 66 թ. շատ ծանր հաշտության պայմանագիր կնքվեց: Հայաստանը տարեկան 600 տաղանդ (12,5 մլն ռուբլի ոսկով) ռազմատուգանք պիտի վճարեր, հրաժարվեր իր նվաճած երկրներից և պահանջված դեպքում զորքով օգներ հռոմեացիներին:

Տիգրան II-ից հետո գահ բարձրացավ նրա որդին՝ Արտավազդ II-ը (մ.թ.ա. 55—34), որի օրոք հայ մշակույթը զգալի վերելք ապրեց: Սա կրթված պետական գործիչ էր: Արտաշատի թատրոնի բեմում ներկայացվում էին հայկական ու հունական դրամաներ: Պլուտարքոսը գրում է, որ «Արտավազդը հորինում էր նույնիսկ ողբերգություններ և գրում ճառեր ու պատմական երկասիրություններ, որոնցից մի քանիսը մինչև այժմ պահպանվել են»:

Հռոմեական Կրասոս զորավարը, որը հայտնի էր դարձել Սպարտակի ապստամբությունը ճնշելով, արշավանք սկսելով պարթևների դեմ, համաձայն մ.թ.ա. 66 թ. պայմանագրի՝ հայերից օգնություն պահանջեց: Սակայն Արտավազդը ոչ միայն մերժեց, այլև միանալով պարթևներին, մ.թ.ա. 53 թ. Միջագետքի Խառան քաղաքի մոտ հռոմեական զորքերին պարտության մատնեց: Կռվում Կրասոսն ընկավ:

Սակայն հռոմեացիները չեն հաշտվում նման վիճակի հետ և մ.թ.ա. 36 թ. զորավար Անտոնիոսի գլխավորությամբ կրկին արշավում են պարթևների դեմ, Արտավազդ II-ին ստիպելով դաշնակցել իրենց հետ: Վերջինս ստիպված համաձայնում է օգնել հռոմեացիներին: Ստրաբոնը գրում է, որ «Արտավազդը բացի մյուս ձիավորներից, վեցհազարանոց զրահապատ հեծելազոր կարգի դնելով՝ ցուցադրեց Անտոնիոսին, երբ նրա հետ արշավեց Մեդիա»:

Սակայն հռոմեական զորքերը պարտություն կրելով՝ նահանջեցին: Անտոնիոսը պարտության մեղքը Արտավազդի վրա բարդելով, մ.թ.ա. 34 թ. առանց պատերազմ հայտարարելու ներխուժում է Հայաստան: Նրան հաջողվում է խաբեությամբ ձերբակալել հայոց արքային, նրա կնոջն ու երկու որդիներին: Դիոն Կասիոսը գրում է, որ Անտոնիոսը վերադարձավ Եգիպտոս, «իր հետ տանելով թե այլ առատ ավար և թե արմենին՝ իր կնոջ ու որդիների հետ... և բացի այդ ամենից, որ շնորհեց Կլեոպատրային, նրան բերեց ընտանյոք հանդերձ նաև արմենին, որը ոսկե կապանքների մեջ էր»: Ստիպում էին, որ հայոց թագավորը գլուխ խոնարհի Կլեոպատրային, բայց նա և ընտանիքը հպարտ պահեցին իրենց և «վեհամիտ մարդկանց համբավ շահեցին, բայց և նույն այդ պատճառով ենթարկվեցին չարչարանքների»:

Անահիտ դիցուհու քանդակապատկերը

Հռոմեացիները Օկտավիանոսի գլխավորությամբ մ.թ.ա. 20 թ. նորից արշավեցին Հայաստան, Արտաշես II-ին դավադրաբար սպանեցին և Հայաստանի գահը հանձնեցին իրենց դրածոներին, իսկ արդեն մ.թ. 1 թվականին վերացրին Արտաշեսյան հարստությունը: Այդուհանդերձ նրանք չկարողացան Հայաստանը դարձնել իրենց պրովինցիան:

Հայ-հռոմեական հակամարտությունների խորացմանը զուգընթաց հայ-պարթևական հարաբերությունները գնալով բարելավվում էին, և նրանք համատեղ էին հանդես գալիս ընդհանուր թշնամու՝ Հռոմի դեմ: Այդ պայմաններում պարթևական թագավոր Վաղարշը 52 թ. իր եղբորը՝ Տրդատին, հայոց թագավոր է կարգում և հայ-պարթևական միացյալ ուժերով Հայաստանն ազատագրում հռոմեական տիրակալությունից: 59 թ. հռոմեական զորքերը Կորբուլոն զորավարի գլխավորությամբ նորից արշավեցին Հայաստան և գրավեցին Արտաշատն ու Տիգրանակերտը, հրի ու սրի մատնեցին քաղաքներն ու գյուղերը: Մայրաքաղաք Արտաշատը, գրում է Տակիտոսը, «հրդեհվեց, քարուքանդ արվեց և հավասարվեց հողին, որովհետև պարիսպների լայնածավալության պատճառով առանց ուժեղ պահակազորի չէր կարելի պահել այն...»: Սակայն հայ ժողովուրդը ծնկի չեկավ և պարթևների օգնությամբ շարունակեց պայքարը: 62 թ. Հռանդեայում հռոմեական զորքը շրջապատվում է և ամոթալիորեն անցնում «լծի» տակով, որ կազմված էր նիզակներից: Հռոմի Ներոն կայսրը չէր կարողանում հաշտվել նման ստորացման հետ, սակայն ստիպված էր 63 թ. նոր պայմանագիր կնքել և իր զորքերը դուրս բերել Հայաստանից, իսկ Տրդատը մեծ շքախմբով ժամանում է Հռոմ ու Ներոնից ստանում հայոց թագը: 66 թ. նա վերադառնում է Հայաստան, որով և Հայաստանում հաստատվում է Արշակունիների հարստությունը (66—428): Տրդատի ինքնակալ իշխանությունը շարունակվեց մինչև 88 թ.: Երկիրն ավատ շունչ քաշեց, վերաշինվեց Արտաշատ մայրաքաղաքը:

Հետագայում, II դարում ևս, հռոմեացիները քանիցս փորձեցին նվաճել Հայաստանը: 163 թ. նրանք նորից ներխուժեցին Հայաստան և հայկական գահը հանձնեցին իրենց դրածո Սոյեմեոսին, իսկ մայրաքաղաք Վաղարշապատում հռոմեական կայազոր հաստատեցին: Սակայն հայ ժողովուրդը շարունակում էր անկախության համար պայքարը, որի շնորհիվ արդեն II դարի վերջերին հայկական թագավորությունը զգալի չափով ամրապնդվեց:

III դարի հռոմեական պատմիչ Տրեբելլիոս Պոլիոնը նշում է, որ 256—260 թթ. պարսկա-հռոմեական պատերազմի ժամանակ պարսիկները հայերի մասնակցությամբ հաղթեցին և գերի վերցրին Հռոմի Վալերիանոս կայսերը (253—260), որը գերության մեջ էլ մահացավ:

Պարսկա-հռոմեական պատերազմների ժամանակ Հայաստանը, եթե անգամ չէր մասնակցում, միևնույն է մեծապես տուժում էր: Հենց այդ ժամանակ էր, որ, ինչպես նշում է Մովսես Խորենացին, Սասանյան տիրակալ Արտաշիրը (262—272), գրավելով «մեր երկիրը, հարկատու է դարձնում և ամեն բանում իր անունը հաստատում»:

Պարսիկ տիրակալը ահավոր հալածանքներ է սկսում հայ նախարարական տների և Խոսրով թագավորի նկատմամբ: Մովսես Խորենացին հաղորդում է, որ երբ Արտաշիրին հայտնի է դառնում, թե Խոսրով թագավորի որդիներից մեկին Արտավազդ Մանդակունին փախցրել է Բյուզանդիա, հրամայում է ոչնչացնել Մանդակունիների նախարարական տոհմը: Այդ մանուկն ապագա Տրդատ III թագավորն էր:

ՖԵՈԴԱԼԻԶՄ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

IV դարում Հայաստանի ներքին կյանքում տեղի են ունենում կարևոր իրադարձություններ: Զարգանում են ֆեոդալական հարաբերությունները, աճում է խոշոր հողատիրությունը, իսկ ստրկական աշխատանքն իրեն սպառում և տեղի է տալիս: Սկսվում է ֆեոդալիզմի տիրապետության դարաշրջանը:

Ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչներն իրենց ձեռքն էին գցել համայնական հողերը և գյուղացիներին կախյալ վիճակի մեջ դրել: Տիրող դասակարգի բռնագրաված և ժառանգական սեփականություն դարձրած հողերը կոչվում էին «հայրենիք»: Արքունի պաշտոնյաները, զինվորական ու վարչական գործիչները ևս հատուկ ծառայությունների համար հող էին ստանում և այն դարձնում իրենց ժառանգական սեփականությունը: Այդ ձևով առաջացած խոշոր հողատերերը հաճախ դառնում էին տվյալ շրջանի վարչական ղեկավարներ և անգամ հատուկ զորաջոկատներ պահում: Թագավորն ինքը ամենախոշոր ֆեոդալն էր: Զինվորական ծառայության մեջ գտնվողները ևս ստանում էին հողաբաժին: Երկիրը կառավարում էր թագավորը, որի վասալներն էին խոշոր ֆեոդալները՝ բդեշխները, նախարարները և այլն: Համայնքի անդամ գյուղացիները կախման մեջ էին աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներից, աշխատում էին նրանց կալվածքներում: Այդ ճանապարհով ֆեոդալական շահագործման ձևը աստիճանաբար դարձավ տիրապետող:

Հայաստանում ֆեոդալիզմի ձևավորումով հեթանոսական կրոնին փոխարինելու եկավ նոր կրոնը՝ քրիստոնեությունը, որն ավելի էր համապատասխանում երկրի վերնախավի դասակարգային շահերին: Հայոց Տրդատ III թագավորը (298—330) 301—303 թթ. մերժեց հեթանոսությունը և որպես պետական կրոն ընդունեց քրիստոնեությունը, որի առաջին քարոզիչն ու տարածողը Հայաստանում Գրիգոր Լուսավորիչն էր: Քրիստոնեության ընդունումն ուղեկցվեց նրա և հեթանոսության կողմնակիցների կատաղի պայքարով: Թագավորի հրամանով հեթանոսական տաճարների կալվածքներն ու հարստությունները բռնագրավվեցին և հանձնվեցին քրիստոնեական եկեղեցուն: Հեթանոսական տաճարները ոչնչացվեցին, և ահավոր հալածանք ու ջարդ կազմակերպվեց հեթանոսության դեմ: Տրդատ III թագավորն ինքը Գրիգոր Լուսավորչի հետ շրջում էր Հայաստանի շրջանները և անխնա ոչնչացնում հեթանոսական հուշարձանները:

Տրդատն այնուհետև հրաման է տալիս բացել հունարեն ու ասորերեն լեզուներով նոր դպրոցներ և «իր իշխանության նահանգներից, գավառներից ուսման համար մատաղ մանուկների բազմություն բերել և նրանց վրա հմուտ ուսուցիչներ կարգել...» Քրմերից ոմանց եպիսկոպոսության աստիճանի են արժանացնում, իսկ նրանց որդիներին դպրոցներում վերադաստիարակում են քրիստոնեական ոգով:

Ֆեոդալական Հայաստանի այդ շրջանի պետական կառուցվածքի կարևոր բաղադրամասերն էին գործակալությունները, որոնց միջոցով թագավորը կառավարում էր երկիրը: Դրանք էին.

Հազարապետություն — տնօրինում էր երկրի տնտեսական կյանքը (Ամատունիների ֆեոդալական տան ժառանգական պաշտոնն էր),

Սպարապետություն — իրականացնում էր երկրի պաշտպանության ղեկավարման գործը (Մամիկոնյանների տուն),

Մարդպետություն —«Հայր մարդպետը» հսկում էր թագավորի կալվածքները, գանձարանը, բերդերը, կանանոցը. թագավորի խորհրդատուն էր, արքայորդիների դաստիարակը:

Թագադիր ասպետություն — վերահսկում էր թագավորի թագադրության կանոններին (Բագրատունիների տուն),

Մաղխազություն — վարում էր թագավորի թիկնապահ զորքի հրամանատարությունը (Խորխոռունիների տուն):

Առավել կարևոր հարցերի լուծման համար թագավորը հրավիրում էր ժողովներ, որոնց մասնակցում էին նախարարներն ու բարձրաստիճան հոգևորականները:

III—IV դարերում Հայաստանի արտաքին դրությունը բավական ծանրացավ: 224 թ. պարթև Արշակունիների թագավորությունը փոխարինվեց Սասանյան բռնապետությամբ, որը, միավորելով ամբողջ Պարսկաստանը, փորձում էր նվաճել նաև Հայաստանը: Հռոմեական կայսրությունը, չնայած ներսում տիրող ճգնաժամին, մի կողմից հայերի հետ դաշինք էր որոնում Սասանյան Պարսկաստանի դեմ, մյուս կողմից՝ ինքն էլ էր ձգտում Հայաստանն իր իշխանության տակ գցել: Հայերի համար այժմ արդեն առավել վտանգավոր թշնամի էր համարվում Սասանյան տիրակալությունը, որի հաճախակի հարձակումները երկիրը ծանր կացության հասցրին:

297 թ. հռոմեական բանակին հաջողվեց հայկական ուժերի օգնությամբ ջախջախել պարսիկներին, որոնք ստիպված եղան հաշտություն խնդրել: Հռոմի և Պարսկաստանի միջև 298 թ. Մծբինում կնքվեց հաշտություն, որով Հայաստանը 40 տարվա խաղաղ կյանքի հնարավորություն ստացավ: Օգտվելով խաղաղությունից, Խոսրով Կոտակ թագավորը (331—338) կառուցեց Դվինը, մայրաքաղաքը Արտաշատից տեղափոխեց այնտեղ և հիմնեց նշանավոր Խոսրովի անտառը: Փավստոս Բուզանդը հաղորդում է, որ թագավորի հրամանով անտառ տնկեցին և ամբողջ դաշտը լցրին կաղնու տնկիներով, իսկ անտառի անունը դրին Խոսրովակերտ: Նույն տեղում հիմնվեցին արքունական ապարանքներ:

Արտաքին հարձակումներն ու ներքին շահագործումը բավականին ծանր վիճակի մեջ էին դնում աշխատավոր մասսաներին: Շատերը փախչում էին լեռներն ու անմարդաբնակ վայրերը: Այդ հողի վրա ծայր առան անապատականների, մծղնեականների և բորբորիտների հակաֆեոդալական գյուղացիական շարժումները, որոնք ուղղված էին ֆեոդալական շահագործման և եկեղեցու դեմ: Այդ շարժումները դաժանորեն ճնշվեցին:

Սրվել էին նաև կենտրոնական իշխանության և նախարարական տների հակասությունները, քանի որ խոշոր ֆեոդալները կենտրոնախույս ձգտումներ էին հանդես բերում: Արշակ II թագավորը (350—368), իր համար հենարան ստեղծելու նպատակով, Կոգովիտ գավառում հիմնադրում է Արշակավան քաղաքը և արտոնյալ պայմաններով այնտեղ հավաքում նախարարների տիրույթներից փախած տասնյակ հազարավոր մարդկանց: Սակայն թագավորի այդ քայլը վայրույթ առաջացրեց նախարարների և հոգևոր խավի մեջ, որոնք, ուժեր հավաքելով, հարձակվեցին քաղաքի վրա և ավերեցին այն: Փավստոս Բուզանդը հաղորդում է, որ երեք օրում քաղաքը հիմնահատակ ավերվեց, մոտ քսան հազար ընտանիք կոտորվեց, ոչ ոք կենդանի չմնաց: Իսկ Մովսես Խորենացին գրել է, որ հայոց նախարարները գրոհեցին «թագավորական դաստակերտ Արշակավանի վրա, սրով կոտորեցին տղամարդկանց և կանանց, բացի ծծկեր երեխաներից...»

Երկրի արտաքին դրությունը շարունակում էր լարված մնալ: Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրի ժամկետը դեռ չէր լրացել, երբ պարսից Շապուհ II արքան ուխտադրժորեն ներխուժեց Հայաստան: Հայ ժողովուրդը հերոսական պայքար էր մղում իր անկախության համար: Չկարողանալով բաց մարտերում ծնկի բերել հայկական զորքին, Շապուհը դիմում է խարդավանքի: Նա 367 թ., պայմանագիր կնքելու պատրվակով, պարսից մայրաքաղաք Տիզբոն է հրավիրում հայոց թագավոր Արշակ II-ին և սպարապետ Վասակ Մամիկոնյանին, որոնք անարգ դավադրության զոհ են դառնում. պարսից տիրակալը Վասակին սպանել է տալիս, իսկ Արշակը բանտում ինքնասպանություն է գործում: Այնուհետև պարսից զորքը շարունակում է ավերիչ արշավանքները: Գերեվարությունն ու ահավոր բռնությունները մեծ չափերի են հասնում: Գերի են տանում նաև հայոց Փառանձեմ թագուհուն, որն Արշակունյաց գավառի Արտագերս ամրոցում 13 ամիս հերոսական դիմադրություն էր ցույց տվել թշնամուն:

Ապա պարսիկներն ավերեցին Արտաշատ քաղաքը. «բոլոր շինվածքները հիմնահատակ կործանեցին, ոչ մի քար քարի վրա չթողեցին, քաղաքը բնակիչներից թափուր, անմարդ, ավերակ դարձրին... գրավեցին Վաղարշապատ քաղաքն էլ. քանդում, սրբում, հիմքից կործանում էին... Առան Երվանդաշատ մեծ քաղաքն էլ. այստեղից դուրս բերին քսան հազար տուն հայ և երեսուն հազար տուն հրեա, իսկ քաղաքը հիմնահատակ կործանեցին»: Հետո նրանք ավերեցին Զարեհավանը, Զարիշատը, Վանը և այլ քաղաքներ ու ավաններ: Փառանձեմ թագուհուն շահի հրամանով հրապարակորեն անասելի տանջանքների ենթարկելով՝ սպանեցին:

Սակայն հայ ժողովուրդը շարունակեց դիմադրությունը: Շուտով՝ 369 թ., գահ բարձրացավ Արշակ II-ի որդին՝ Պապը, և շարունակեց պայքարը: Նա կարողացավ Բյուզանդիայից օգնական զորք ստանալ, իր բանակը կարգի բերել և հայրենասիրական բոլոր ուժերը միավորելով՝ վճռական մարտի պատրաստվել: Շապուհ II-ը 371 թ. նոր արշավանք սկսեց՝ գրավելու Հայաստանն ու Վրաստանը: Հայկական և հռոմեական միացյալ զորաբանակը Նպատ լեռան մոտ՝ Ձիրավի դաշտում, ճակատամարտ տվեց պարսկական զորքերին և ջախջախեց ու հետ շպրտեց թշնամուն: Այդ ճակատամարտում Սպանդարատ Կամսարականն ու սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը՝ Վասակի որդին, մեծ սխրանքներ գործեցին:

Շատ չանցած՝ Շապուհի զորքերը նորից ներխուժեցին Հայաստան, բայց այս անգամ էլ պարտություն կրեցին: «Իսկ երբ հայոց բոլոր զորքերը հետ դարձան,— գրում է Փավստոսը,— թիվ չկար ախոյանների այն գլուխներին, որ հայոց Մուշեղ

քաջ զորավարը բերել էր Հայոց Պապ թագավորի առաջ»:

Պապ թագավորը կարևոր միջոցներ ձեռնարկեց երկրի պաշտպանությունն ամրապնդելու ուղղությամբ. նա մեծացրեց բանակը, հատկապես հեծելազորը, զսպեց կենտրոնախույս ուժերը:

Բյուզանդիան Հայաստանին պաշտպանում էր իր հիմնական ախոյան Պարսկաստանին ջախջախելու համար, սակայն նրան ձեռնտու չէր հայոց թագավորության ուժեղացումը: Այդ իսկ պատճառով այժմ Բյուզանդիան առիթներ էր փնտրում ինքնուրույն քաղաքականություն վարող Պապին շարքից հանելու համար. «սկսեցին անընդմեջ նորանոր նենգություններ հորինել,— գրում է Ամմիանոսը,— նպատակ ունենալով զրկել նրան կյանքից»: Մի անգամ նրան Տարոն են հրավիրում, բայց Պապը բյուզանդական բանակի հայ զինվորականներից մեկի միջոցով իմանալով կազմակերպված դավադրության մասին, փախչում է: Դրանից հետո դավադրությունը «գլուխ բերելու գործը գաղտնի գրությամբ հանձնարարվեց Տերենտիոսին, որն այն ժամանակ Հայաստանում հռոմեական զորքերի հրամանատար էր նշանակված»: Տերենտիոսը շատ խորամանկ և երկդիմի անձնավորություն էր: Նա մտերմանալով Պապի հետ, նրան հյուր է կանչում և հյուրասիրության ժամանակ սպանել տալիս:

Պապի սպանությունից հետո Բյուզանդիայի կայսրը Հայոց գահը հանձնեց Արշակունիների տոհմից սերված Վարազդատին: Օգտվելով թագավորի անկայունությունից, որոշ նախարարներ, Սահառունյաց տոհմի նահապետ Բատի խորհրդով, որոշեցին Մուշեղ սպարապետին շարքից հանել: Նրանք իրենց ստոր նպատակին հասան թագավորի մոտ կազմակերպված հյուրասիրության ժամանակ: Դրանից հետո Վարազդատը Բատին է նշանակում սպարապետ: Բայց շուտով Մանվել Մամիկոնյանը, պարսկական գերությունից իր եղբայր Կոմսի հետ Հայաստան վերադառնալով, կարողանում է իր ձեռքը վերցնել սպարապետի՝ իր տոհմի ժառանգական պաշտոնը:

Մանվել սպարապետը սկսեց ղեկավարել երկիրը և պաշտպանել նրա սահմանները: Նա հովանավորեց Պապ թագավորի տիկնոջը՝ Զարմանդուխտին, և նրա որդիներ Արշակին ու Վաղարշակին:

Մանվելը և Զարմանդուխտն ընդունեցին պարսկական կողմնորոշում և հատուկ պատվիրակություն ուղարկեցին պարսկական թագավորի մոտ, որը Հայաստանը Բյուզանդիայից պաշտպանելու միտումով ուղարկեց զորք և թագեր՝ Զարմանդուխտ տիկնոջ և նրա որդիների համար, ինչպես նաև՝ թագավորական դրոշակ: Թագավոր հռչակվեց Պապի Արշակ անունով որդին, որն ամուսնացավ Մանվելի աղջկա Վարդանդուխտի հետ, իսկ Վաղարշակը՝ Բագրատունի ասպետի դստեր հետ:

Մանվել Մամիկոնյանի մահվանից հետո Հայաստանը թուլացավ, ներքին գժտություններն ուժեղացան: Պարսկաստանի տիրակալը Արշակունի տոհմից Խոսրով անունով մեկին Հայաստանի թագավոր կարգեց և երկրի վրա իր թաթը դրեց, իսկ Արշակ թագավորն ապաստանեց Բյուզանդիայում: Նոր պատերազմ սկսվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Վերջապես, երկար բանակցություններից հետո, 387 թ., Հայաստանը բաժանվեց երկու մասի. բյուզանդական մասում թագավոր կարգվեց Արշակը, իսկ պարսկականում՝ Խոսրովը:

Բայց շուտով թե՛ պարսկական և թե՛ բյուզանդական տիրակալներն այդ խղճուկ թագավորություններն էլ վերացրին. հռոմեականում՝ 391 թ., իսկ պարսկականում՝ 428 թվականին:

Այսպիսով, ներքին երկպառակությունների ու արտաքին ուժերի ճնշման տակ հայկական պետականությունը վերացվեց:

Պարսկական բռնապետության իշխանությունը 200 տարի ծանր լծի նման ընկավ հայ ժողովրդի վզին: Հայաստանը ղեկավարում էին պարսիկ մարզպանները, որոնց աթոռանիստը Դվին քաղաքն էր:

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԼԾԻ ԴԵՄ V ԴԱՐՈՒՄ

Պարսիկները գրավված տարածքում նշանակեցին իրենց կառավարիչ-մարզպանին, քաղաքների միջնաբերդերում տեղակայեցին պարսկական կայազորներ, իսկ 441 թ. պայմանագրի համաձայն Պարսկաստանը Բյուզանդիային պարտավորեցրեց որևէ օգնություն ցույց չտալ հայերին: Երկրի տնտեսական ու քաղաքական ղեկավարությունը, ինչպես նաև հարկերի գանձումն անցան պարսիկ աստիճանավորների ձեռքը: Պարսիկները հայ ժողովրդին է՛լ ավելի կեղեքելու համար հատուկ աշխարհագիր անցկացրին, հաշվեմատյանի մեջ մտցնելով բոլոր հարստություններն ու եկամուտները. հարկերը կրկնապատկվեցին, հարկադրվեցին ամայի հողերը, անտառներն ու արոտավայրերը, նաև՝ հոգևորականները: Աշխարհագիրը Հայաստանում անց էր կացնում պարսից թագավորի գործակալ Դենշապուհը, որի նպատակն էր քայքայել հայ ժողովրդի միասնությունը և աղքատության հասցնել, որպեսզի, գրում է Եղիշեն, հայերը «չափազանց աղքատության պատճառով ակամա ընդունեն մոգական կրոնը»:

Պարսիկներն անարգել գործելու համար հայկական զորամասերը երկրից հանեցին և ուղարկեցին երկրի արևելյան սահմանները, Միջին Ասիա և այլ վայրեր:

Պարսիկները հայերին և անդրկովկասյան մյուս ժողովուրդներին դաժան միջոցներով ստիպում էին հավատափոխ լինել՝ ընդունել կրակապաշտություն: Այդ նպատակով էլ 450 թ. հայ, վրաց և աղվան իշխանավորներին հրավիրելով Պարսկաստանի մայրաքաղաք Տիզբոն, նրանց ստիպեցին հավատափոխ լինել: Հայ նախարարներից այդտեղ էին կանչվել Սյունյաց իշխան Վասակը, Արծրունյաց Ներշապուհը, Ռշտունյաց Արտակը, Խորխոռունյաց Գադիշոն, Մամիկոնյան Վարդանը, Մոկաց Արտակը, Ապահունյաց Մանեն, Ամատունյաց Վահանը, Վահևունյաց Գյուտը, Անձևացյաց Շմավոնը:

Յազկերտ II-ը (439—457), ինչպես Եղիշեն է գրում, իշխաններին դիմավորեց որպես մի չար դև և հայտարարեց. «Երդվում եմ մեծ աստված արեգակով... որ եթե վաղն առավոտյան, սքանչելու ծագելուն պես բոլորդ ինձ հետ միասին ծունր չդնեք նրա առաջ՝ նրան աստված դավանելով, ձեզ ամենևին զիջողություն չեմ անի, ամեն տեսակի նեղություն ու չարչարանք կթափեմ ձեզ վրա, մինչև որ ակամա կատարեք իմ կամքն ու հրամանը»: Տեսնելով, որ այլ ելք չկա, իշխանները առերես դավանափոխ եղան, որպեսզի հնարավորություն ունենան վերադառնալ հայրենիք և ապստամբել: Պարսից տիրակալը մեծ գոհունակությամբ ընդունեց իշխանների համաձայնությունը, նվերներ տվեց, ապա նրանց հայրենիք ճանապարհեց պարսկական զորքերի, մոգերի և յոթ հարյուրից ավելի ուսուցիչների հետ, որոնք պետք է հայերին հավատափոխ անեին: Սակայն երբ մոգերը պարսկական զորքով հասան Այրարատի Ծաղկոտն գավառի Անգղ գյուղաքաղաքը և այնտեղ բանակ դրին, հայերի անհամար մի բազմություն հավաքվեց: Եվ երբ մոգպետը մի կիրակի օր փորձեց տեղական եկեղեցին քանդել, տեղի Ղևոնդ երեցը բազմաթիվ ուխտակիցների հետ «մեծ աղմուկ ու տագնապ առաջացրեց զորքի և մոգերի միջև... դագանակները ձեռքները առած՝ մոգերի ու մոգպետի գլուխները ջարդեցին, բոլորին փախցրին...» Դա ազդանշան հանդիսացավ ժողովրդական ապստամբության համար: Ապստամբները, հայկական զորաջոկատներն ու աշխարհազորայինները միավորվեցին: Սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ հայկական զորքը Խաղխաղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեց պարսիկներին:

Այս ճակատամարտից հետո պարսից արքան նորից խորամանկ քայլի դիմեց: Նա Վասակ Սյունուն հայոց թագավոր կարգելու խոստումներ տվեց:



Էջմիածին. Մայր տաճարը

Վարդան Մամիկոնյանի հուշարձանը

Եվ այդ դավաճանը, գայթակղվելով, իր կողմը գրավեց նաև մի քանի ուրիշ դավաճան նախարարների: Սակայն փառաբանված կորավար Վարդան Մամիկոնյանը չվհատվեց: Եղիշեն գրում է, որ «երբ մեծ Վարդանը տեսավ իր աշխարհի երկպառակությունը, ամենևին չվախեցավ թերահավատությամբ»: Նա ավելի գոտեպնդվեց և, շտապ վերադառնալով Արտաշատ, ընդհանուր կորահավաք կատարեց: Հայ ժողովուրդը, կգալով հայրենիքի վրա կախված ահավոր վտանգը, ավելի միավորվեց և իր փառաբանված կորավար Վարդանի հրամանատարությամբ սրընթաց հարվածով սկսեց ջարդել թշնամու ուժերը:

451 թ. մայիսին պարսիկները նոր ուժեր կենտրոնացրին Մասիսի հարավակողմում գտնվող Տղմուտ գետի ափին՝ Ավարայրի դաշտում: Պատրաստվում էր երկու հակառակորդ բանակների կատաղի ընդհարումը: Վարդան կորավարը, հավաքելով կորքը, մարտից առաջ արտասանեց իր պատմական ճառը, որը դարձավ սերունդներին մշտապես ոգեշնչող մի կոչ. «Շատ պատերազմներ եմ մղել ես,— ասաց նա,— և դուք էլ ինձ հետ: Տեղ կար, որ քաջաբար հաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք հաղթեցին մեզ, բայց ավելի շատն այն է, որ հաղթող ենք դուրս եկել և ոչ թե հաղթված...

Արդ, աղաչում եմ ձեզ, ով իմ քաջ նիզակակիցներ, մանավանդ, որ ձեզանից շատերը քաջությամբ ինձանից ավելի վեր եք և հայրենական գահի պատվով՝ ավելի բարձր, բայց երբ ձեր հոժար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և կորագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին: Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից... ոչնչացնենք նրանց կորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, [մահը] ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

Մայիսի 26-ին երկու բանակներն էլ մեծ ուժով կարնվեցին իրար: Վարդանն իր կորքը 4 խմբի բաժանելով՝ առաջինը հանձնեց Արծրունյաց իշխանին, երկրորդը՝ Խորեն Խոռխոռունուն, երրորդը՝ Թաթուլ Վանանդեցուն, իսկ ինքը վերցրեց չորրորդ խումբը: Հուժկու բանակների «երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայթում էր ինչպես իրար խառնըված ամպերի միջից, և ձայների դղրդյունը շարժում էր լեռների քարանձավները... որովհետև թանձրամիտները հիմարանում էին և վախկոտները՝ վհատվում, քաջերը խիզախանում էին, և անվեհեր կտրիճներն աղաղակում»:

Վարդան Մամիկոնյանն աջ թևում պարսկական ուժերի հիմնական հարվածն իր վրա վերցնելով, թշնամուն հետ մղեց և մեծ ջարդ տվեց նրան: Պարսից կորավար Մուշկան Նյուսալավուրտը ստիպված էր Վարդան Մամիկոնյանի դեմ դուրս բերել ամենաընտիր՝ մատյան կորամասերն ու մարտական փղերը: Մինչև ուշ երեկո մարտերը շարունակվեցին, և թշնամին մեծ կորուստներ տվեց: «Այս մեծ տագնապի մեջ դեպի վեր նայեց քաջ Վարդանը,— գրում է Եղիշեն,— և տեսավ պարսից կորքի ընտիր-ընտիր քաջ կորականները Հայոց կորքի ձախ կողմն ընկճեցին. նա մեծ ուժով հարձակվեց այն տեղը և պարսից կորքի աջ թևը ջարդելով՝ քշեց գազանների [փղերի] կողմը և շուրջը պտտելով՝ կոտորեց մինչև նույն տեղը: Եվ այնպիսի տագնապ ու իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գնդի հաստատուն կազմակերպությունը քայքայվեց, ցրիվ եկավ, և նա դեռևս պարտություն չկրած՝ փախուստ տվեց»: Ահեղ մարտում հերոսի մահով ընկավ Վարդան Մամիկոնյանը: Հայկական բանակը, կորցնելով իր անվեհեր կորավարին, մի պահ խուճապի մատնվեց և այլևս չկարողանալով վերականգնել կարգը, ստիպված հետ քաշվեց մարտի դաշտից և ամրանալով հայոց լեռներում ու կիրճերում, շարունակեց պայքարը: 450—451 թթ. ազատագրական մարտերը հայ ժողովրդի հերոսական պայքարի ամենափայլուն էջերից են և դարերի խորքից գալով, իմաստության դասեր են տվել մեր ժողովրդին:

Ավարայրի ճակատամարտից հետո պարսիկները սկսեցին նոր ուժով շարունակել բռնություններն ու հալածանքները: Նախարարական ազդեցիկ տները թուլացնելու և երկպառակություն առաջացնելու նպատակով սեպուհներին հողերի ժառանգման իրավունք տրվեց, որով և նրանց հակադրեցին ավագ նախարարներին: Բացի այդ, պարսիկները սկսեցին ավագ նախարարներին ոչնչացնել և աքսորել պարսկական տիրակալության հեռավոր ծայրամասերը: Այս ամենը խիստ դժգոհություն առաջ բերեց և Հայաստանում V դարի 80-ական թվականներին Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ ուժեղ ընդվըզումներ սկսվեցին պարսից տիրապետության դեմ: Ապստամբել էին նաև վրացիները: Ապստամբած հայ նախարարների թվում էին իշխան Սահակ Բագրատունին, Սյունիքի իշխան Բաբկեն Սյունին, Վասակ Մամիկոնյանը, Արշավիր Կամսարականի երկու որդիները, Շիրակի իշխան Ներսեհը և նրա եղբայր Հրահատը, Գնունյաց Ատոմ իշխանը, նրա եղբայր Առուստամը և շատ ուրիշներ: Ուժերն արագորեն համախմբվեցին, և սկսվեց 481 թ. ժողովրդական ապստամբությունը՝ պարսկական լուծը արագ թոթափելու համար: Ապստամբները պարսիկներին առաջին լուրջ հարվածը հասցրին Ակոռի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ ջախջախեցին պարսկական 7-հազարանոց ջոկատը: 482 թ. պարսիկները նոր, ավելի հզոր կորք ուղարկեցին: Վահան Մամիկոնյանի 30-հազարանոց բանակը Արտազ գավառի Ներսեհապատ գյուղի մոտ նույն թվի գարնանը պարսիկների նկատմամբ մեծ հաղթանակ տարավ: Կռվի թեժ պահին «հայոց կորավար Վահան Մամիկոնյանը,— գրում է Ղազար Փարպեցին,— սրտապնդված խաչ հանեց երեսին և երկու Կամսարականների հետ միասին հարձակվեց մոտեցող թշնամիների վրա, որոնք չկարողացան բոլորովին դիմանալ, վասնզի Վահանն ու ընկերները սրընթաց հարձակումով իրենց դիմացի հակառակորդներին փախուստի մատնեցին... Նրանք [հայերը] փոքր լանջակողմում քաջ մարդկանց անթիվ բազմություն դիաթավալ արեցին գետնին և մեծ կոտորած սարքեցին...

Հայոց կորքը ռազմադաշտից վերադարձավ բարի անունով, մեծ փառքով, լավ ավարով և մեծ հաղթությամբ»:

Այդ մեծ հաղթանակից հետո հայոց կորքն օգնության գնաց Վրաստանում պարսկական կորքերի դեմ կռվող Վախթանգ Գորգասալին: Վրաց և հայկական կորքերը Կուր գետի ափին մեծ ճակատամարտ տվին և չնայած պարտությանը, զգալի կորուստներ պատճառեցին թշնամուն: Այդ կռվում հերոսի մահով ընկան Սահակ Բագրատունին և Վահան Մամիկոնյանի եղբայր Վասակը: Մեկ տարի շարունակ թշնամին երկրում ավերածություն էր կատարում, սակայն ապստամբները շարունակում էին պայքարը, հանկարծակի հարվածներով հյուծում թշնամուն: Պարսկական կորքի հրամանատար Հազարավուխտը բոլոր ջանքերը գործադրեց Վահան Մամիկոնյանին ճանկելու համար, բայց ապարդյուն: Հայոց սպարապետն «ամեն օր իր կորքով





Խոր Վիրապ
Լմբատավանք
Զվարթնոցի փլատակները (VII դ.)
Հռիփսիմեի տաճարը

հանգիստ չէր տալիս պարսիկների բանակին,— գրում է Ղազար Փարպեցին,— այլ ամեն գիշեր նետաձգությամբ խոցոտելով՝ կոտորում էր նրանց, իսկ երբեմն իրենք՝ պարսիկները, խառնված շնչահեղձ էին լինում»:

Պարսից նոր, Վաղարշ արքան 484 թ. սկսեց վարել հայերին սիրաշահելու քաղաքականություն և հաշտության առաջարկով հատուկ պատգամավորություն ուղարկեց Հայաստան՝ բարձրաստիճան գործիչ Նիխոր Վշնասպդատի գլխավորությամբ: Պարսից թագավորը նրան հրահանգեց, գրում է Ղազար Փարպեցին. «գնա Հայաստան, ինչ կերպ ուզում է լինի: Վահանի և նրա ընկերների ցանկությունները հաշվի առ ամենայն քաղցրությամբ, սիրով հնազանդեցրու նրանց և արյաց ծառայության բեր»:

Նիխորի պատվիրակությունը կանգ առավ Հայաստանի սահմանագլխի Հեր գավառի Նվարսակ գյուղում, որտեղ և տեղի ունեցան բանակցությունները: Կնքվեց Նվարսակի հաշտության պայմանա-

գիրը, որի համաձայն վերականգնվեցին հայ նախարարների ժառանգական իրավունքները, վերահաստատվեցին հայկական ավանդական կարգերը, անձեռնմխելի մնաց քրիստոնեական կրոնը: Պարսից աստիճանավորները չպետք է միջամտեին նախարարների գործերին, նախարարները ճանաչելու էին միայն պարսից արքայի անմիջական իշխանությունը: Տեղական վարչական և ռազմական իշխանությունը պատկանելու էր հայերին: 485 թ. սպարապետ Վահան Մամիկոնյանը մեծ շուքով ընդունվեց նաև պարսից արքայի կողմից և ճանաչվեց հայոց սպարապետ ու մարզպան:

Այսպիսով, 450—451 և 481—484 թթ. ազատագրական պայքարի շնորհիվ Հայաստանը պահպանեց իր ներքին ինքնուրույնությունը և ստացավ տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացման հնարավորություն: Հայաստանի մայրաքաղաք Դվինում, Վաղարշապատում և այլ վայրերում կարևոր շինարարական աշխատանքներ սկսվեցին: Զարգանում էին արհեստներն ու առևտուրը, գիրն ու գրականությունը:

Սակայն VI դարում Հայաստանի վիճակը կրկին վատացավ: Դրա պատճառը պարսից թագավոր Խոսրով Անուշիրվանի (531—578) ռազմավարչական ու հարկային ռեֆորմներն էին, որոնք հանգեցրին ազգային և քաղաքական ճնշման ու հարկային լծի ուժեղացման: 571 թ. հայ ժողովուրդը կրտսեր Վարդան Մամիկոնյանի (Կարմիր Վարդան) առաջնորդությամբ կրկին ապստամբություն բարձրացրեց պարսից կեղեքիչների դեմ: Այն լայն աջակցություն գտավ Վրաստանում:

Մոտ 20 հազար մարդուց բաղկացած մարտական ջոկատներ կազմած հայերը հերոսաբար դիմադրեցին թշնամուն: Հայերը «աղաղակելով հարձակվեցին նրանց վրա... և նրանց բոլորին մինչև վերջին մարդը կոտորեցին... սպանեցին նաև մարզպանին, վերցրին նրա գլուխն ու ուղարկեցին պատրիկ Հուստինիանոսին, որ այն ժամանակ բանակել էր սահմանի վրա՝ Թեոդոսուպոլիս քաղաքում»: Բայց շուտով Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև պատերազմ սկսվեց, որը տևեց 20 տարի: Պատերազմը հիմնականում տեղի էր ունենում Հայաստանի տարածքում, որի հետևանքով երկիրը հիմնովին քայքայվեց: 591 թ. պատերազմն ավարտվեց Բյուզանդիայի հաղթանակով: Պայմանագրի համաձայն Հայաստանի մեծ մասն անցավ Բյուզանդիայի իշխանության տակ: Սակայն հայերը շարունակում էին պայքարը և բյուզանդական ու պարսկական իշխանությունների լարված վիճակում պահում:

VII դարի սկզբներին Հայաստանը նորից Պարսկաստանի և Բյուզանդիայի տևական պատերազմների թատերաբեմ դարձավ: Շինականի վիճակը դարձավ անտանելի: Աշխատավորական զանգվածները ստեղծված վիճակից փրկվելու ելք էին որոնում: Հենց այդ շրջանում էլ ծագեց պավլիկյան շարժումը, որն աստիճանաբար վերածվեց կեղեքիչների դեմ գյուղացիական լայն զանգվածների համընդհանուր բողոքի:

Ավերիչ պատերազմները կործանարար ազդեցություն ունեցան նաև մշակույթի զարգացման վրա: Բայց անգամ այս պայմաններում ժողովուրդը ստեղծեց նյութական մշակույթի գլուխ-գործոցներ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հայ ժողովրդի վիճակն ավելի ծանր էր Բյուզանդիային ենթակա մասում: Տուրքերն ու տարբեր կարգի պարհակները կատարյալ քայքայման էին հասցրել հայ շինականին, նախարարները իրավազրկվել և քայքայվել էին:

Արևմտյան Հայաստանում գործի դրվեցին Բյուզանդիայի Հուստինիանոս կայսեր (527—565) հրովարտակների հիման վրա 529—536 թթ. կիրառված օրենքները: Արևմտյան Հայաստանի վարչական բաժանման վերաբերյալ կայսերական հրամանը հրապարակվել էր 536 թ. մարտի 18-ին: Դրա համաձայն Արևմտյան Հայաստանը բաժանվել էր I, II, III և IV Հայքերի: Առաջին Հայքի մայրաքաղաքն էր Ուստինիանուպոլիսը, երկրորդինը՝ Սեբաստիան, երրորդինը՝ Մելիտինեն և չորրորդինը՝ Մարտիրուպոլիսը: Ըստ որում, Երրորդ Հայքի կոմեսը (կառավարիչը) օժտված էր ոչ միայն քաղաքացիական, այլ նաև ռազմական իրավունքներով: Նրան էին ենթարկվում մյուս պրովինցիաների ռազմական ուժերը:

Բյուզանդական կայսրերի օրենքներն ու չորս Հայքերում գործող վարչակարգը ծանր կացության հասցրին հայ բնակչությանը՝ թե՛ շինականներին և թե՛ իշխանավորներին:

548 թ. հայերը ապստամբության դրոշ պարզեցին Բյուզանդիայի դեմ: Բյուզանդական զորքերը ջախջախվեցին և դուրս քշվեցին: Սակայն կայսեր հրամանով բյուզանդական բազմահազար զորքերը նոր արշավանք սկսեցին հայերի դեմ: Հրամանատար Բուզեսը ապստամբներին հայտնեց, որ խոստանում է հայերին հաշտեցնել կայսրի հետ և այդ կապակցությամբ առաջարկում էր, որ մեծամեծներից մարդիկ գան իր մոտ բանակցություններ վարելու:

Ապստամբներից Հովհաննես անունով մեկը, հույս դնելով, որ ծանոթ է Բուզեսին, իր փեսա Վասակի և մի քանի ուրիշների հետ գնում է բանակցություններ վարելու: Սակայն բյուզանդացիները ճանապարհին նրանց շրջապատում են: Հովհաննեսի ընկերները փախուստի են դիմում, իսկ ինքը Բուզեսի կողմից ուխտադրժորեն սպանվում է, «որից հետո հայերը հռոմեացիների հետ համաձայնության գալու բոլոր հույսերը կտրեցին. ի վիճակի չլինելով պատերազմում պարտության մատնել կայսրին, գործունյա Վասակի գլխավորությամբ նրանք գնացին պարսից արքայի մոտ»:

Սեբեոսը հաղորդում է, որ թե՛ պարսիկները և թե՛ բյուզանդական կայսրերը, Հայաստանը կռվախնձոր դարձրած՝ փոխադարձաբար ավերում էին: Եվ ահա Բյուզանդիայի Մավրիկիոս կայսրը (582—602) պարսից թագավորին հղած նամակում գրում է. «Մեր և ձեր միջև խոտոր և անհնազանդ մի ազգ կա, որ միշտ պղտորում է: Ահա, արի,—ասում է,— ես իմ մասի մարդկանց հավաքեմ և ուղարկեմ Թրակիա, դու էլ քո մասի մարդկանց հավաքիր և հրամայիր Արևելք տանել, եթե նրանք մեռնեն՝ մեր թշնամիները կմեռնեն, եթե նրանց սպանեն, ապա մեր թշնամիներին կսպանեն, և մենք խաղաղ կապրենք: Որովհետև, եթե դրանք իրենց երկրում մնան, մենք հանգիստ լինել չենք կարող»: Այնուհետև բյուզանդական կայսրը հրաման է տալիս, որ բոլորին էլ հավաքեն և Թրակիա ուղարկեն: Եվ համառությամբ պահանջում էր, որ հրամանը կատարվի: «Եվ այն կողմերից հայ իշխաններն սկսեցին փախչել և գալ պարսկական թագավորին ծառայության, մանավանդ նրանք, որոնց տիրույթները գտնվում էին պարսկական իշխանության տակ»: Պարսից թագավորն էլ հայ իշխաններին սիրով էր ընդունում և անգամ նվերներ էր տալիս՝ իր կատաղի հակառակորդի՝ Բյուզանդիայի դեմ օգտագործելու համար:

Հայ նախարարները Բյուզանդիայի ճնշումները չհանդուրժելով՝ որոշեցին ապստամբել, սակայն դա կայսրին հայտնի դարձավ, և նա հրամայեց ձերբակալել նրանց: Ձերբակալվածների թվում էր նաև Սմբատ Բագրատունին:

Պարսկա-բյուզանդական աքցաններում գտնվող հայ ժողովուրդը, սակայն, շարունակեց իր տևական պայքարը թե՛ մեկ և թե՛ մյուս տիրակալության դեմ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հայաստանը շնչահեղձ էր լինում պարսկա-բյուզանդական անընդհատ հակամարտությունների բովում, երբ VII դարի 30-ական թվականներին ասպարեզ ելավ մի նոր, հզոր պետություն՝ արաբական խալիֆաթը:

Հովհան Մամիկոնյանը, նկարագրելով արաբական առաջին հարձակումը Հայաստանի վրա (640 թ.), նշում է, որ արաբ զորավար Աբդռահիմը «խոշոր բազմությամբ, տասնութ հազար հոգուց բաղկացած հեծելազորով, եկավ Հայաստան և հարկ պահանջեց»: Հայ զորավար Տիրանը, դիմելով իր զորքին, ասաց. «Ո՛վ քրիստոնյա ժողովուրդ, լավ է ինձ մեռնել, քան Աստծու եկեղեցին հարկատու տեսնել արաբներին»: Արաբների դեմ «կռիվը տևեց մինչև երեկո: Տիրանը փախուստի մատնեց արաբներին... Աբդռահիմն անցավ Հարք, Բասեն, Ջաջախք, Վիրք և Վանանդ, հարկ վերցրեց և վերադարձավ Արաբիա»:

Սեբեոսը նշում է, որ «ավերածություն գործող արաբական զորքերը Ասորեստանի Ձորի ճանապարհով» ներս խուժեցին Տարոնի շրջան և հասան Այրարատ: Ոչ ոք չկարողացավ տեղեկություն հասցնել Դվին և երբ ուշացումով իմացան, «բերդի մեջ հավաքեցին շրջանի բոլոր մարդկանց, որոնք դուրս էին եկել խաղողահավաքի»: Արաբներն անցան Մեծամորի կամուրջը, ասպատակեցին երկիրը և մեծ ավարով ու բազում գերիներով «ճամբար դրին Խոսրովակերտ անտառի մոտ»: Հինգ օրից հետո՝ 640 թ. հոկտեմբերի 6-ին, նրանք հարձակվեցին Դվինի վրա, «կրակ վառեցին քաղաքի չորս կողմը, ծխով ու նետաձգությամբ կարողացան հեռացնել պարիսպների վրա եղած պահապաններին, աստիճաններ դրեցին, բարձրացան պարիսպը և ներս մտնելով քաղաք, բաց արեցին քաղաքի դարպասները»: Քաղաքը կողոպտեցին, ավերեցին ու «գերի տարան երեսունհինգ հազար հոգի»:

Հայ ժողովուրդը արաբներին ցույց էր տալիս կատաղի դիմադրություն, նրանց հնարավորություն չտալով ամրապնդվելու գրաված քաղաքներում ու շեներում: Արաբներն ստիպված էին նահանջել, բայց շուտով՝ 642—643 և 650 թթ., նրանք վերսկսեցին իրենց ասպատակությունները Հայաստանում: Նրանք հայ ժողովրդին բերեցին նորանոր տառապանքներ, բայց այս անգամ էլ չկարողացան ընկճել հայերի ազատասեր ոգին: Արաբական զորքը «սրի մատնեց ամենքին,— գրում է Սեբեոսը,— կողոպտեց, հավաքեց ավար և գերիներ: Այնուհետև նրանք եկան ու հավաքվեցին Երևանում: Գրոհեցին բերդի վրա, բայց չկարողացան վերցնել»: Հետո նրանք պաշարեցին Արծափ բերդը «և բազում վնասակար ոճիրներ գործեցին այնտեղ»: 650 թ. մարտի 28-ին նրանց հաջողվեց բերդը գրավել և ահավոր ջարդ կազմակերպել: «Շատերը գահավեժ լինելով մահացան... թիվ չկար գերիներին և վերցրած անասունների բազմությանը»: Այդ ծանր օրերին հայոց զորավար Թեոդորոս Ռշտունուն հաջողվում է ջախ-

Սիսիանի շրջան. Աղուդի գյուղ: Կոթող հուշարձան (VII դ.)

Աշտարակի շրջան. Օշականի վանքը

ջախել արաբական կորքերին և փրկել հավարավոր
հայ գերիների: Թեոդորոս Ռշտունին նաև մեծ
ավար խլեց թշնամուց, որից 100 ընտիր ձի նվեր
ուղարկեց Բյուզանդիայի կայսերը:

Թեոդորոս Ռշտունու հաջողություններին նպաս-
տեց և այն, որ նրան օգնում էին նաև վրաց իշխան-
ների կորքերը: Ղևոնդ պատմիչը և Մովսես
Կաղանկատվացին շատ հետաքրքիր փաստեր են
հիշատակում արաբական խալիֆաթի դեմ անդըր-
կովկասյան ժողովուրդների մղած համատեղ պայ-
քարի մասին: Արաբների դեմ մղված կարևոր մար-
տերից էր Արծափի ճակատամարտը: Այդ մասին
Ղևոնդը գրում է. «Թեոդորոս իշխանը, իր հետ
ունենալով 600 հոգի պինված մարտիկներ, ինչպես

խոյացող արծիվ, հարձակվեց թշնամու վրա, կոտո-
րեց թշնամիներից շուրջ երեք հազար հոգի, կապ-
վածներին արձակեց և թշնամու փոքրաթիվ մնա-
ցորդներին փախուստի մատնեց ու գերիներին
ապատեց»: Նման ահեղ մարտերի շնորհիվ 652 թ.
արաբների հետ պայմանագիր կնքվեց, որով չնա-
յած ճանաչվում էր արաբների գերիշխանությունը,
բայց նրանք Հայաստանում կորք չպիտի պահեին և
միայն կարող էին թեթև հարկեր գանձել: Բացի այդ,
արաբները պարտավորվում էին Հայաստանին օգ-
նել արտաքին հարձակումներից:

Սակայն խալիֆները չէին հանդուրժում, որ բռ-
լոր երկրները հաղթարշավով են գրավել, իսկ Հա-
յաստանում կատաղի դիմադրության հանդիպել: Եվ

ահա Օսման խալիֆի (644—656) հանձնարարությամբ կորավար Հաբիբ Իբն Մասլամայի կորքերը 654 թ. պաշարում են Դվին քաղաքը, որի բնակիչները, գրում է Բալաձորին, նետերի տարափ են թափում թշնամու գլխին: Ժողովրդի համառ դիմադրությունը արաբ կորավարին ստիպում է հաշտության պայմանագիր կնքել: Մասլաման պարտավորվում էր. «Ես երաշխավորում եմ ձեր անձն ու գույքը, ձեր եկեղեցիներն ու վանքերը և ձեր քաղաքի պարիսպը: Դուք գտնվում եք անվտանգության մեջ...»: Իսկ քաղաքացիները պարտավորվում էին հարկ վճարել:

Այսուհանդերձ, արաբների արշավանքները մեծ վտանգ էին ներկայացնում: Խալիֆը հայոց աշխարհին հաճախ էր սարսափեցնող հրամաններ ուղարկում: «Եթե դուք հարկ չտաք ինձ և իմ լծի տակ չմտնեք,— ահապանգում էր նա,— բոլորիդ սրի եմ քաշելու»: Այդ ժամանակ Ներսես կաթողիկոսն (641—661) ու նախարարները խորհրդակցելուց հետո, երկիրը ավերածությունից փրկելու համար, պարտավորվում են տարեկան 500 դահեկան հարկ վճարել և արաբների մոտ պատանդ ուղարկել Գրիգոր Մամիկոնյանին ու Սմբատ Բագրատունուն:

686 թ. արաբները նորից ներխուժեցին Հայաստան: Հայերին օգնության եկան վրացական կորքերը, և համատեղ ուժերով վռնդեցին կավթիչներին: Սակայն արաբները 698—700 թթ. նոր արշավանք սկսեցին դեպի Հայաստան և այն գրավելով, դարձրին խալիֆայությանը ենթակա վարչական միավոր, որտեղ նշանակվեց արաբ կառավարիչ՝ ամիրա: Արաբները ծանր հարկեր սահմանեցին, իսկ հայ նախարարներին զրկեցին ժառանգական իրավունքներից: Այդ հալածանքներին հայ ժողովուրդը պատասխանում էր անդադրում, մեկը մյուսին հետևող հերոսական մարտերով, մասսայական ապստամբություններով:

VII դարի վերջին խալիֆաթում ուժեղացավ երկպառակտչական պայքարը: Օգտվելով դրանից, Անդրկովկասի ժողովուրդներն ապստամբեցին օտար լծի դեմ և, ինչպես վկայում է Ղևոնդը, դադարեցին հարկ վճարել: Սմբատ Բագրատունին և մի շարք այլ իշխաններ որոշում են իրենց կորքով անցնել Բյուզանդիայի տարածքը և հայրենիքի փրկության ելք որոնել: Սակայն սահմանն անցնելիս արաբական կորքերը նրանց հետապնդում են: Արաքս գետի մոտ, Վարդանակերտ ավանում 703 թ. ձմռանը մեծ ճակատամարտ է տեղի ունենում: Հայկական 2-հազարանոց կորամասը ջախջախում է թշնամու մոտ 5-հազարանոց կորքին, որից փրկվում է ընդամենը 300 հոգի: Այդ հաղթանակի համար հայ իշխանները, գրում է Ղևոնդը, Բյուզանդիայի կայսերից նվերներ ստացան, իսկ Սմբատը պարգևատրըվեց կյուրապաղատի տիտղոսով:

Այդ նույն ժամանակ արաբները Ռշտունյաց Գուկանք կոչվող գյուղում հարձակվեցին հայկական փոքրաթիվ ջոկատի վրա և ուժեղ ջարդ կրելով, հետ շպրտվեցին: Ապստամբները պայքարի ելան նաև Վասպուրականում՝ իշխան Սմբատի գլխավորությամբ: Այստեղ ևս արաբական կորքերը պարտվեցին և հետ շպրտվեցին: Ապստամբությունն ընդգրկեց Այրարատը, Վասպուրականը, Շիրակն ու Վանանդը: Արաբները նոր պատժիչ ջոկատներ ուղարկեցին:

705 թ. խալիֆի հրամանով Նախիջևանի կառավարիչ Կասըմը հաշվառում կատարելու և իբր պինվորներին ռոճիկ նշանակելու պատրվակով իր մոտ հրավիրեց հայ նախարարներին: Երբ նրանք ներկայացան, նրանց մի մասին լցրին Նախիջևանի եկեղեցին, իսկ մյուս մասին՝ Խրամ ավանի եկեղեցին և ապա, ինչպես գրում է Ղևոնդը. «հրդեհի տալով այրեցին և տոչորեցին հայ նախարարներին»: Այդ օրը 800 հոգի եկեղեցիներում հրկիզվեցին: Այդ թվականը մեր պատմության մեջ հայտնի է որպես «կարմիր տարի», «կրակի տարի»:

Արաբական լուծը գնալով ծանրացավ հատկապես 725 թ. կատարված համընդհանուր մարդահամարից հետո, երբ ծխահարկի փոխարեն սահմանվեց գլխահարկ, որի մի մասը գանձվում էր դրամով: Հարկադրվում էին 15—60 տարեկան բոլոր տղամարդիկ: Աշխատավորությանն այնքան դաժանությամբ էին կեղեքում, որ բնակիչների մի մասը, չդիմանալով ճնշմանը, ստիպված էր թողնել հայրենիքն ու տարագրվել օտար երկրներ:

Այս ծանր վիճակից դուրս գալու միակ ելքը ապստագրական պայքարն էր: Այն կանխելու և վիճակը շտկելու համար Հեշմ խալիֆը Հայաստան ուղարկեց նաև Մրվանին: Վերջինս իմանալով հայոց ըմբոստ ոգին, Հայաստանում կգույշ քաղաքականություն է վարում և Բագրատունյաց Վասակի որդի Աշոտին նշանակում Հայաստանի պատրիկ: Լինելով խելացի և հեռատես գործիչ, Աշոտը մեծ նվերներով այցելեց խալիֆին, սիրաշահեց նրան և հասավ այն բանին, որ «խալիֆը մեծարեց նրան և կատարեց նրա խնդրանքը, կարգադրեց հաշվել և վճարել երեք տարվա [ռոճիկը]՝ տարեկան հարյուր հազար [դրամ]: Սրանից հետո հայկական հեծելազորը մշտապես ստանում էր այդ ռոճիկը...»

Սակայն նորից սկսվեցին բռնությունները, որոնք հանգեցրին ժողովրդական նոր ելույթների: Հարկ է հատկապես նշել 744—745 թթ. ապստամբությունը, որը գլխավորում էր Գրիգոր Մամիկոնյանը: Հայրենիքի ազատության համար կենաց ու

Առցախ. IX դարի կոթող Հաթերքում

մահու գոտեմարտում ապստամբները ոչնչացրին թշնամու մեծ քանակությամբ ընտիր կորքեր, որոնց ղեկավարում էին հայտնի կորապետեր:

774 թ. նոր ապստամբություն բարձրացավ արաբների դեմ: Ապստամբության կազմակերպիչն ու ղեկավարը փառաբանված Մամիկոնյան տոհմի կավակ Արտավազդն էր, որը Կումայրի գյուղում (այժմ Լենինական) ոչնչացրեց արաբ հարկահավաքներին: Ժողովուրդը վենքի դիմեց, աշխարհազորային խմբեր կազմեց, միացավ նախարարական կորամասին և ապա ջախջախեց արաբական բերդապահ կորամասը: Արաբական նոր կորքեր եկան ու սկսեցին ապստամբությունը ճնշել և հետապնդել Արտավազդին, որն իր ընտանիքի ու մի քանի նախարարների հետ անցավ Արևմտյան Վրաստան: Արտավազդը հետո անցավ Բյուզանդիա և նշանակվեց Անատոլիկոն թեմի ստրատեգ, իսկ 778 թ. բյուզանդական բանակի հայ կորավարներ Տաճատ Անձևացու, Վարազտիրոցի և Գրիգորիսի գործակցությամբ Գերմանիկ քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեց արաբական կորքերին:

Արաբներն ավելի սաստկացրին ժողովրդի կեղեքումն ու հարկահանությունը: Չկարողանալով այլևս համբերել, Մուշեղ Մամիկոնյանը, խորհրդակցելով իշխանների հետ, ժողովրդի գլուխն անցավ և ապստամբեց խալիֆայության դեմ: Նա դիրքեր գրավեց Արտագերս ամրոցում և սկսեց կորահավաք կատարել: Հետո իր կորաջոկատով անցավ Բագրևանդ գավառը, արաբ հարկահաններին սրի քաշեց և բոլոր օտար աստիճանավորներին երկրից դուրս քշեց: Այստեղ Մուշեղ Մամիկոնյանի բանակը օրեցօր աճեց: Կարին քաղաքից նրա վրա հարձակվեց արաբական երկուհազարանոց կորամասը, բայց, պարտություն կրելով, փախուստի դիմեց: Մուշեղի դեմ Դվինից նոր կորք ուղարկվեց, որը կանգ առավ Բագավան գյուղում և անմիջապես մարտի մեջ մտավ: Մուշեղն իր փոքրաքանակ ուժերով սրընթաց հարված հասցրեց թշնամու չորսհազարանոց բանակին ու հետապնդեց մինչև Արուճ ավանը և «ոչ մեկին կենդանի բաց չթողեց, այդ թվում և կորավարին (Ապունճիպին— Ծ. Ա.), ու մեծ հաղթությամբ հետ վերադարձավ՝ լիացած թշնամու

թողած բազում ավարով»: Այս հաղթանակն ամենուր մեծ ոգևորություն առաջացրեց և բոլորին լսելի դարձրեց Մուշեղ կորավարի խոսքերը. «Ահա մոտենում է մեր փրկության ժամը»: Շուտով Մուշեղի դրոշի տակ հավաքվեց հինգ հազար հոգի, որոնց մեջ կային «վգալի թվով ռամիկ գյուղացիներ»: Ապստամբներին միացան իշխան Սահակ Բագրատունին, սպարապետ Սմբատ Բագրատունին, Վասպուրականի իշխան Համազասպ Արծրունին և ուրիշներ: Այնուհետև ապստամբերն ազատագրելով բազմաթիվ շրջաններ, ընդհուպ մոտեցան Կարինում և Արճեշում գտնվող արաբական ռազմական հենակետերին: Կարծես թե հաղթանակը մոտ էր, սակայն խալիֆ Աբդուլան Ամր կորավարի հրամանատարությամբ երեսունհազարանոց կորք ուղարկեց: Հայկական կորքերը շարժվեցին դեպի Արճեշ: «Նրանց հաջողվեց բազմաթիվ գյուղացիների ընդգրկել կորամասերում և տանել իրենց հետ կռվի»: 775 թ. ապրիլի 15-ին Արճեշի մոտ կատաղի ճակատամարտ տեղի ունեցավ և հայերը, մոտ 1500 մարդու կորուստ տալով, նահանջեցին: Օգնության հասավ Կարինը շրջապատած հայկական կորամասը, որը թշնամուն փախուստի մատնեց: Բայց թշնամին շուտով օգնական ուժեր ստանալով, հակահարձակման անցավ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Բագրևանդ գավառի Արձնի գյուղի մոտ՝ 775 թ. ապրիլի 24-ին: Ղևոնդն այսպես է նկարագրում այդ ճակատամարտը. «Իսկ քաջահաղթ նահատակները թեև թվով մեծ չէին չարաշուք ոսոխների համեմատությամբ, բայց վախկոտություն ցույց չտվին դառն օրհասի պահին: Նրանք սեղմեցին իրենց շարքերը և իրար սիրտ տալով, ասում էին. «Քաջությամբ մեռնենք մեր երկրի և ժողովրդի համար, մեր աչքերը թող չտեսնեն ոտնատակ տրված մեր սրբությունները... Զոհվենք մեր ճշմարիտ հավատի համար, մեր մահը ժամանակավոր կլինի, իսկ կյանքը՝ հավիտենական»»:

Ժողովրդին ու հարազատ հայրենիքին նվիրված մահապարտները թեկուզ թվով քիչ էին՝ հինգ հազար՝ երեսուն հազարի դեմ, բայց հզոր էին հայրենասիրության ներշնչանքով: Եվ հայերն արբեցած նենգ թշնամու նկատմամբ ատելությամբ, «իրենց վրեժը լուծում էին սարսափելի արյունահեղությամբ»: Այդ ահեղ ճակատամարտում կոհվեցին և անմահության գիրկն անցան այնպիսի փառաբանված կորավարներ, ինչպիսիք էին Բագրատունյաց Սմբատ սպարապետը և Սահակը, Մամիկոնյան Մուշեղ կորավարն ու Սամուելը, Գնունյանց Վահանը և շատ ուրիշներ՝ թվով ավելի քան երեք հազար հոգի:

Արաբ նվաճողները հրի ու սրի միջոցով ամրացրին իրենց տիրակալությունը և հայոց աշխարհը հասցրին ծայր աստիճան աղքատության ու ավերածության: Սակայն նրանք չկարողացան ոչնչացնել հայ ժողովրդի ազատասեր ոգին:

Արցախ. Գտիչ վանքը (IX դ.)

Հայ ժողովուրդը, մաքառումների ուղի անցնելով, կոփում էր իր ոգին ու կամքը, դեպի հեռուները սլացող միտքը, երբեք հույսը չկտրելով, որ կգա ազատագրության օրը: Հարատև էր նրա պայքարը և անհանգիստ նրա բորբոքվող ոգին:

850 թ., երբ խալիֆաթն իր ոստիկանին ուղարկեց Հայաստան, ժողովուրդը ապստամբություն բարձրացրեց և նրան դուրս քշեց: Ապստամբությունը ճնշելու համար խալիֆը ոստիկանի գլխավորությամբ մեծաթիվ պատժիչ կորք ուղարկեց: Սակայն դրանից ժողովրդական հուզումներն ավելի մեծացան և 851 թ. վերածվեցին համընդհանուր պոռթկման՝ համահայկական ապստամբության, որը խարխլեց Հայաստանում արաբական բռնապետության հիմքերը:

Արծրունյաց տան պատմիչ Թովմա Արծրունին գրում է, որ արաբ նվաճողներն ամեն կերպ ցանկանում էին վերացնել հայոց ազդեցիկ իշխանական տոհմերին, որոնց շուրջն ավանդաբար համախմբվում էին հայ կանգվածները և ազատագրական

մարտի ելնում: Խալիֆը, խորհրդակցելով «բոլոր մեծամեծների հետ, հաստատ նպատակադրվեց Հայոց աշխարհի իշխաններին վրկել իրենց իշխանությունից,— գրում է Թովմա Արծրունին,— որպեսզի խլեն նրանց ժառանգությունը: [Կամեցան] ամենից առաջ ձեռք գցել Աշոտին՝ իր տոհմի հետ, և Բագրատին ու իր տոհմին: Որովհետև ասում էին՝ «եթե նրանց վերացնենք մեջտեղից, ոչ ոք չի կարող ընդդիմակայել մեզ»»:

Չնայած արաբական հալածանքներին, մի քանի իշխանական տներ, ինչպես, օրինակ, Բագրատունյաց, Սյունյաց, Արծրունյաց, դեռևս պահպանում էին իրենց հզորությունը: Սակայն արաբներին հաջողվեց վերջ տալ Մամիկոնյան և Կամսարական քաջազուն տներին, որոնք դարեր շարունակ բարձր էին պահել հայոց ռազմական փառքը: Նրանց տիրույթներն անցան Բագրատունիներին: Բագրատունիները VIII դարի վերջերից կարողացան երկրում ուժեղ դիրք գրավել և իրենց ձեռքը վերցնել հայոց սպարապետի պաշտոնը:

Արաբ ոստիկանի ազդեցությունը գնալով թուլանում էր, և արդեն 850 թ. նոր ոստիկանին հայերը թույլ չտվին Հայաստան մտնել. իրենք հարկերը հավաքեցին և ուղարկեցին խալիֆաթ: Հայերի այդ համարձակ քայլը դիտվեց որպես ապստամբություն և այն ճնշելու համար Յուսուֆ Աբուսեթ կորավարի գլխավորությամբ պատժիչ կորք ուղարկվեց Հայաստան: Յուսուֆի կորքերն ասպատակեցին Հայոց երկիրը: Յուսուֆը Ատրպատականի կողմից մտավ Վասպուրականի Աղբակ գավառը և բանակ դրեց Արծրունյաց Ադամակերտ ոստանում: Այստեղից պատանդներ վերցնելով, Յուսուֆը անցնում է Բզնունիք, մտնում Խլաթ և իր մոտ հրավիրելով Բագրատ իշխանին, նրան շղթայակապ ուղարկում է խալիֆին: Տարոն գավառի բնակիչներին նա գերևարում է՝ Ասորիքի և արաբական տերության բոլոր կողմերում վաճառելու համար: Գավառի բնակչության մի մասը միայն փրկվեց, ամրանալով Սասունի լեռնային հատվածներում:

Արաբական կորքերը ձմեռեցին Մուշում և ըսկսեցին ամեն կարգի չարչարանքների ենթարկել բնակչությանը: Նրանց իշխանին գերի տարան, երկիրն ավերեցին ու սրի մատնեցին: Ժողովուրդը մահու և կենաց պայքարի ելավ: Խութեցի հերոսներն իրենց առաջնորդ Հովնանի գլխավորությամբ պինվեցին և «մահ կամ ազատություն» գոչելով, իջան լեռներից ու սրընթաց հարվածով գրոհեցին քաղաքի վրա, պաշարեցին այն, կորքը մատնեցին սրի, արգելանոցից հանեցին Վասպուրականի ազատանդներին, արձակեցին գերիներին: Մարզպան Յուսուֆը սարսափահար բարձրացավ եկեղեցու գմբեթը և այնտեղ թաքնվեց: Սակայն նրան հետապնդողներից մեկը գտավ նրան, աշտեով հարվածեց «թիկունքի մեջտեղը և դուրս հանեց թևատակից՝ թոքերի միջով: Նա փչեց շունչը և թաղվեց էշի պես»:

Խութի հերոսամարտը համընդհանուր ապստամբության ազդանշան եղավ: Ապստամբներն ամենուր երկրից դուրս վռնդեցին արաբական կորքերին: Խալիֆն այդ խայտառակ պարտությունից կատաղած՝ կորավար Բուղայի գլխավորությամբ երեսունհազարանոց նոր կորք ուղարկեց Հայաստան, նրան խիստ պատվիրելով հաշվեհարդար տեսնել անհնազանդ հայ ժողովրդի հետ: Բուղան մտավ Խլաթ քաղաքը և ուղղություն վերցրեց դեպի Տուրուբերանի նահանգի Ապահունիք գավառը: Զորքի մի մասը հրաման ստացավ ասպատակել Վասպուրականը, ավերել երկիրը ու «սրի քաշել, մարդաթափ անել բազմամարդ գյուղերն ու ավանները, մնացածներին, կանանցով ու մանուկներով հանդերձ, վարել գերության»:

Արաբական կորքի մյուս մասը, Ժիրաք կորավարի գլխավորությամբ, շարժվեց դեպի Ռշտունիք, որտեղ ժողովուրդն ընկավ «արյունարբու և գիշակեր շների ձեռքը: Հայ բնակչությանը սրակոտոր արեցին և արյամբ լցրեցին երկիրը: Մի մասին գերեցին և տարան, հրդեհեցին շեները, ավաններն ու ագարակները դարձրեցին անմարդաբնակ»:

Բուղայի կորքը սկսեց հետապնդել Աշոտ իշխանին, որն իր ընտանիքով և կողմնակիցներով ամրացել էր Վանա լճի հյուսիս-արևելքում գտնվող Նկան ամրոցում: Բուղան գրավեց ամրոցը և Աշոտ իշխանին, նրա որդի Գրիգորին, Վահան Արծրունուն և նրա որդի Գագիկին, Վահանի եղբայր Մուշեղին, տիկին Հրանուշին և այլոց գերեց ու տարավ Սամառա՝ խալիֆի դատաստանին հանձնելու: Այնտեղ նրանց շղթայակապ բանտ նետեցին: Հետո Բուղան կարգադրեց բռնել Աշոտ իշխանի եղբորը՝ Գուրգենին, որը կորքի հետ ամրացել էր Կորճայք նահանգի Որսիրանք գավառի Թով գյուղի մոտ գտնվող Արյան լիճ կոչվող վայրում: Այստեղ էին հավաքվել նաև ուրիշ վայրերից շատ փախստականներ և «ապավինել քաջ կորավար Գուրգենին և նրա հետ եղած հայոց կորքին, իբրև մեծ ու ապահով ամրոց»: Արաբական կորքը բանակ էր դրել Տիգրիս գետի Զավ վտակի մոտ:

Դվինի պեղումներից հայտնաբերված ջնարակված անոթներ (IX—XII դդ.)

Կարս. Առաքելոց եկեղեցին (X դ.)

Արաբ կորավարը խաբեությամբ փորձեց Գուրգենին իր մոտ հրավիրել, խոստանալով եղբոր իշխանությունը տալ նրան, միաժամանակ արաբական կորքը գրոհի անցավ: Հայերը Գուրգենի գլխավորությամբ ընդունեցին մարտը, և սկսվեց մահու և կենաց ճակատամարտը: Հայկական կորքը սրընթաց հարվածով մխրճվեց թշնամու շարքերի մեջ: Մարտը բավական երկար տևեց, թշնամին մեծ կորուստներ կրեց. բացի բազում վիրավորներից կային երկու հազար սպանված: Մինչև կեսգիշեր հայկական կորքը հետապնդում էր թշնամուն: Եվ այսպես, Հայոց սակավ, բայց հուժկու կորքը հաղթեց մեծաքանակ թշնամուն:

Բուղան կայրույթից կատաղած 10-հազարանոց նոր կորք ուղարկեց հայերի դեմ, իսկ Գուրգեն կորավարին մի գրություն ուղարկեց, որը «լի էր սատանայական հնարների թույնով, իբրև կապարճ, որ լի է թունավոր նետերով...» Նա հնազանդելու դեպքում Գուրգենին խոստանում էր իշխանություն և ամեն կարգի փառք ու պատիվ: Ինչպես նախկինում հայ մեծատուններից ոմանք, այնպես էլ Գուրգենը «ելավ-գնաց փառքի և իշխանության ցանկության հետևից, որով և սխալվեց»: Գուրգենի «ոտքերը դրեցին երկաթե կապանքների մեջ», իսկ նրա աչքի առաջ իր հետ գնացած իշխան Գրիգոր Արծրունուն սրախողխող արին:

Դրանից հետո հայկական կորքը ցրվեց, և նախարարները քաշվեցին Վասպուրականի ամրոցներն ու բերդերը: Այսպիսով, Բուղան նենգությամբ հասավ իր նպատակին, և արաբական կորքերն անարգել ոտնատակ տվին և ավերեցին Հայաստանը: Հայաստանից բազում խմբերով գերիներ քշեցին արևելքի երկրների շուկաներում վաճառելու: Արաբական դաժան լծի տակ հայ ժողովուրդը ահավոր չարիքների ենթարկվեց, սակայն նա դառնության թույնի մեջ կոփվեց ու լիցքավորվեց նոր մարտերի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Արևելքում արաբական տիրակալության թուլացումը և Վասպուրականի, Սյունիքի և հատկապես Բագրատունյաց իշխանությունների հզորացումն օրակարգի հարց դարձրին հայոց պետականության վերականգնումը:

Խալիֆայության դեմ բարձրացող դժգոհությունն ու երկրի ներսում ուժեղացող ներքին երկպառակությունը խալիֆին ստիպեցին հետ կանչել Բուղային: Հայաստանի սպարապետ հռչակվեց Աշոտ Բագրատունին: Հայ իշխանների կողմից նա ճանաչվեց նաև «իշխանաց իշխան»: 862 թ. Աշոտին հանձնվեց նաև հարկահանության իրավունքը, որից հետո արաբ հարկահաններն այլևս Հայաստան մտնելու իրավունք չունեին: Կրճատվեց նաև հարկերի քանակը: Երկրում խաղաղ վիճակ ստեղծվեց, որը և նպաստեց նրա կարգացմանը: Ստեղծվեց ուժեղ բանակ, կորքի թիվը հասավ 40 հազարի, սպարապետ նշանակվեց Աշոտ Բագրատունու եղբայր Աբասը: Արաբների իշխանությունը ձևական բնույթ ստացավ, և արդեն 885 թ. արաբական խալիֆը ստիպված ճանաչեց Աշոտի (885—890) թագավորությունը և թագ ուղարկեց նրան: Բյուզան-



Անիի հյուսիսային պարսպի ավագ դուռը դրսից

դական կայսրը և թագ ուղարկեց Աշոտին: Այսպիսով, շուրջ 460 տարի առաջ կործանված հայկական պետականությունը երկար մաքառումներից հետո վերականգնվեց:

Աշոտ I-ը, միավորելով հայկական հողերի մեծ մասը, պարկ տվեց հայ պետականության հզորացմանը, իսկ նրա որդին՝ Սմբատ I-ը (890—914) ավելի ամրապնդեց Հայաստանի տնտեսական առաջընթացն ու քաղաքական հզորությունը: Ստեփանոս Տարոնացին նշում է, որ Սմբատ թագավորը «տիրեց իր ամբողջ հայրենիքին... Սրա և իր հոր իշխանության օրերին մեր հայոց աշխարհում շենություն էր ու խաղաղություն... Եվ այսպես ագարակներն ավան դարձան, իսկ ավանները՝ քաղաքներ՝ բազմամարդությամբ ու ճոխությամբ»:

Սմբատ I-ի աջակցությամբ Բագրատունյաց տոհմից Ատրներսեհ իշխանը կարգվեց Վրաստանի թագավոր: Սակայն արաբական ասպատակությունները շարունակվում էին: Հայաստանին հատկապես մեծ ավերածություններ պատճառեց Ատրպատականի Սաջյան ամիրայությունը: Յուսուֆ ամիրան կարողացավ օգտագործել հայ իշխանների ներքին գզվռտոցները, իր կողմը գրավեց Վասպուրականի Գագիկ Արծրունուն, 908 թ. նրան թագադրեց թագավոր ու միացյալ ուժերով արշավանք սկսեց Սմբատ I-ի դեմ: Յուսուֆին հաջողվեց 914 թ. պարտության մատնել հայկական վորքերին և Սմբատ I-ին մահապատժի ենթարկել:

Սմբատ I-ի ողբերգական վախճանից հետո Հայաստանի անկախության համար պայքարը գլխավորեց Աշոտ II-ը (914—929), որն իր քաջության համար ստացավ «Երկաթ» մականունը: Նոր ճակատամարտերում արաբները կրեցին մի քանի լուրջ պարտություն: Գևորգ Մարզպետունու գլխավորությամբ հայկական վորքերը Սևանի ափին տեղի ունեցած ճակատամարտում արաբների դեմ խոշոր հաղթանակ տարան: Թշնամին ամբողջովին ջախջախվեց և երկրից դուրս քշվեց, որից հետո Հայաստանը լիովին անկախացավ և այլևս չճանաչեց խալիֆի թեկուզ ձևական գերիշխանությունը: Խալիֆը ստիպված էր փիջումներ անել: 922 թ. նա Աշոտ II-ին թագ ուղարկեց: Աբասի օրոք (929—953) երկիրը խաղաղ զարգացման ժամանակաշրջան ապրեց, իսկ Աշոտ III-ը (953—977) ջանքեր գործադրեց ամբողջ Հայաստանը միավորելու համար: X դարում և XI դարի սկզբին Հայաստանը հասավ տնտեսական ու մշակութային նշանակալի ծաղկման: Հայաստանի մայրաքաղաք դարձավ Անին: Այդ, ինչպես նաև Աշոտ III-ի գահակալության առիթով կազմակերպված հանդիսություններին մասնակցելու համար 961 թ. Վրաստանից և այլ տեղերից հյուրեր ժամանեցին: Հանդիսավոր պայմաններում Անին հայտարարվեց մայրաքաղաք, իսկ Աշոտ III-ը՝ արքայից արքա: Սմբատ II (977—990) և Գագիկ I (990—1020) թագավորների օրոք և երկրի տնտեսական ու մշակութային կյանքի առաջընթացը շարունակվում էր:

Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին հատկապես ծաղկեց Գագիկ I-ի օրոք: Քաղաքը հռչակված էր ճարտարապետական բազում հուշարձաններով: Մեծ զարգացում էր ստացել արհեստագործությունը, Անին դարձել էր տարանցիկ առևտրի կարևորագույն կենտրոն: Համաշխարհային շուկայում մեծ պահանջարկ ունեին հայկական կերպասները, կարպետներն ու արվեստի տարբեր առարկաները:

Բագրատունիների թագավորության ամբողջականությունը, սակայն, երկար չպահպանվեց, այն տրոհվեց ոչ մեծ թագավորությունների. առաջացան Վասպուրականի, Կարսի, Տաշիր-Ձորագետի, Սյունիքի թագավորություններն ու Տարոնի, Արցախ-Խաչենի և մի շարք ուրիշ իշխանություններ: Նման վիճակը նպաստավոր պայմաններ ստեղծեց արտաքին նվաճողների համար: Եվ ահա Տարոնը, Տայքն ու Վասպուրականը գրավվեցին Բյուզանդական կայսրության կողմից:

Անիի թագավորությունը ևս խարխափում էր ներքին ֆեոդալական երկպառակությունների մեջ: 1020 թ., Գագիկ I-ի մահից հետո, Անիի թագավորությունը բաժանվեց երկու մասի: Բյուզանդիան նորից իր թաթը մեկնեց նրա վրա և Հովհաննես-Սմբատ թագավորին ստիպեց իր թագավորությունը կտակել կայսրությանը: Բյուզանդիան 1041 թ., Հովհաննես-Սմբատի և նրա եղբայր Աշոտի մահվանից հետո, կենքի ուժով ցանկացավ գրավել Անին: Բայց անեցիները ոտքի ելան և սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ հետ մղեցին թշնամուն: 1042 թ. թագավոր հռչակվեց Գագիկ II Բագրատունին: Շուտով, հաշտության բանակցությունների պատրվակով, բյուզանդական Կոնստանտին Մոնոմախ կայսրը իր մոտ է հրավիրում Գագիկ II-ին և ստիպում հրաժարվել իր թագավորությունից: 1045 թ. Անիի թագավորությունը և երկրի մեծ մասը գրավվեց Բյուզանդական կայսրության կողմից: Բագրատունյաց թագավորությունը կործանվեց, իսկ Սյունիքի, Կարսի, Լոռու մանր թագավորությունները մի կերպ պահպանեցին իրենց գոյությունը:

Բյուզանդական տիրապետության ընթացքում երկիրը կատարյալ ավերածության հասավ: Բացի այդ, Բյուզանդիան բոլոր միջոցներով վերջ տվեց Հայաստանի դիմադրական ուժերին: Զորքը ցիրուցան եղավ, իսկ նրա մի մասը փոխադրվեց կայսրության խորքերն ու արևմտյան շրջանները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Միջնադարում, ինչպես ամենուրեք, Հայաստանում ևս դասակարգային պայքարը շատ հաճախ հանդես է եկել կրոնական քողի տակ, տարբեր աղանդների ձևով, բայց նրա քաղաքական էությունը միշտ էլ եղել է սոցիալական պայքարը: Այդ պայքարն արտացոլվել է թե՛ պատմագրության և թե՛ բանահյուսության ու գրականության մեջ: Կորյունը բորբորիտների շարժման առթիվ գրում է, որ Մաշտոցը ձեռնարկել է «անպատշաճ ու ծուռ բարբարիանոս աղանդը քննել»: Նրա ասելով՝ այդ աղանդը «ուղղելու» հնար չգտնվեց, և սկսեցին «թշվառացնող գավազանը գործադրել խիստ ծանր պատուհասներով՝ բանտերով, տանջանքներով, գելարաններով: Իսկ երբ դրանով էլ փրկությունից կուրկ մնացին, [այն ժամանակ] ջարդ տվին, ապա խանձեցին, մրեցին ու պեսպես ձևերով խայտառակեցին և աշխարհից դուրս քշեցին»: Այն ամենը, ինչ որ հակառակ էր տիրող դասակարգերի շահերին և կրոնական դոգմաներին, հրի ու սրի էր մատնըվում:

Աղանդավորական-սոցիալական շարժման մի արտահայտությունն էլ մծղնեությունն էր, որի դեմ ժամանակին ճնշող դասակարգերն ու եկեղեցականները ուժեղ պայքար ծավալեցին: Շահապիվանի ժողովը (443 թ.) ընդունեց եկեղեցական կանոններ՝ ուղղված աղանդավորական քողի տակ հանդես եկող մծղնեական սոցիալական շարժման դեմ: VIII դարի սկզբներին Հովհան Օձնեցին հավաքել է այդ և այլ կանոններ ու կազմել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն: Հետագայում այն լրացվում է այլ կանոններով և դառնում սոցիալական շարժումները ճնշելու կարևոր վենք: Դա ֆեոդալական սեփականության և դասակարգային հարաբերությունների, ժառանգական և քաղաքացիական իրավունքների պաշտպանության օրենսգիրք էր, որտեղ արտացոլված էին թե՛ տեղական և թե օտար կանոնների կարևոր հավաքածուները: Կրոնական կանոններից շեղվելը և ֆեոդալական հիերարխիային հակառակվելը համարվում էին ամենախիստ հանցանքը, իսկ մծղնեությանը հարողներն անգամ ենթարկվում էին հրապարակային դատաստանի:

Աղանդավորական քողի տակ սոցիալական շարժումը սկսած VII դարից առավել ցայտուն դրսևորվում է պավլիկյանների մոտ, որոնց շարժումը լայն թափ է ստանում VIII դարի 20-ական թվականներին, երբ խալիֆայության անցկացրած աշխարհագրից հետո հարկերը ծանրացան, և աշխատավոր մասսաների վիճակն է՛լ ավելի վատթարացավ: Պավ-



Անի. Հովվի եկեղեցին



Լենինական. Մարմաշենի վանքը (XI դ.)

Գեղարդ

լիկյանների փիլիսոփայության համաձայն աշխարհը բաժանվում էր բարի ու չար ուժերի, ըստ որում՝ բարին գտնվում էր երկնքում, իսկ չարը՝ երկրի վրա, որը սատանայական իշխանությունն էր: Դա էլ հենց իշխող դասի, ճնշողների, եկեղեցու իշխանությունն էր, որի դեմ պետք էր պայքարել: Այդ շարժումն այնքան արագ տարածվեց, որ իշխող դասակարգը սարսափի մեջ ընկավ:

VIII դարի նշանավոր եկեղեցական գործիչ Հովհան Օձնեցին ծավալեց հակապավլիկյան լայն գործունեություն. նա գրեց «Ընդդեմ պուղիկեանց» աշխատությունը և 720 թ. Դվինում հատուկ ժողով հրավիրեց, որի որոշմամբ պավլիկյանները հռչակվեցին հերետիկոսներ և ուժեղ պայքար սկսվեց նրանց դեմ: Պավլիկյան շարժման ականավոր ղեկավարներից էին Սերգիոսը (Սարգիս), Կարբեասը, Խրիստոխիրը և ուրիշներ: Նրանք հիմնել էին հավասար հիմունքներով համայնքներ, չէին ենթարկվում իշխանություններին, պայքարում էին իրենց երազած ազատ ու հավասար հասարակարգի համար:

Պավլիկյան շարժման մասին կարևոր տեղեկություններ են պահպանվել բյուզանդական աղբյուրներում: VIII դարի հեղինակ Թեոփանես Խոստովանողը իր «Ժամանակագրություն» աշխատության մեջ նշում է, որ 756 թ. Կոստանդին կայսրը Թեոդոսուպոլսից (Կարին) և Մելիտինեից (Մալաթիա) «բերած ասորիներին ու հայերին Թրակիա վերաբնակեցրեց: Սրանցից [այնտեղ] պավլիկյանների աղանդը տարածվեց...»

VIII դարի երկրորդ կեսի հեղինակ Մակարիոսը իր «Վարք» երկասիրությունում նկարագրում է բյուզանդական տիրակալների թշնամական վերաբերմունքը պավլիկյանների նկատմամբ: Պավլիկյանների մասին կարևոր տեղեկություններ ենք գտնում նաև Պետրոս Սիկիլիացու երկերում: Նա Բուլղարիայի արքեպիսկոպոսին գրած ուղերձում բոլոր գույներով վարկաբեկում է պավլիկյան շարժումը: Ոմանք ուզում են հաստատել, գրում է նա, որ պավլիկյանների ու մանիքեացիների՝ III դարում Բյուզանդիայում ծագած շարժումները տարբեր են. սակայն «նրանք նույնն են և նախորդ աղանդավորների դոգմաների վրա բարդելով իրենց հորինած կեղծ դոգմաները, կորստյան միևնույն խորխորատը փորեցին»: Սիկիլիացին գրում է, որ պավլիկյանների շարժման կենտրոն Տևրիկում ինքը մանրամասն ծանոթացել է նրանց ուսմունքին: Նա դժգոհում է, որ պավլիկյանները չար և բարի աստվածների խնդիր են դնում, և որ իբր թե «այս աշխարհի արարիչն ու իշխողը մեկն է, իսկ ապագա աշխարհինը՝ մի ուրիշը»: Հեղինակը պավլիկյան-



ներին անվանում է ապերախտներ, քանի որ նրանք չէին ընդունում հոռոմների (բյուզանդացիների) գերիշխանությունը և առհասարակ երկրի վրա գոյություն ունեցող իշխանավորներին, իսկ մարգարեներին անվանում էին «մոլորեցնողներ ու ավազակներ»:

Բյուզանդական կայսրությունը 872 թ. մեծաքանակ զորքեր ուղարկեց պավլիկյանների դեմ, նրանց պարտության մատնեց և Տևրիկ քաղաքը հիմնահատակ ավերեց, իսկ պավլիկյանների մի մասին փոխադրեց Թրակիա: Սակայն այստեղ էլ պավլիկյանների շարժումը չդադարեց և տարածվեց նաև բալկանյան ժողովուրդների մեջ: Բուլղարիայում սկսված բոգոմիլների շարժումը սերտորեն կապված էր պավլիկյանների հետ:

Կոստանդին VII Ծիրանածին կայսրը (913—959), որը նաև բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակ էր, նշում է, որ իր պապը՝ Վասիլ I-ը, մանիքեացիներին և պավլիկյաններին «գլխովին ոչնչացրեց և դժոխքի տարտարոսներն ուղարկեց»:

Պավլիկյան շարժմանը հաջորդեց Վանա լճից հյուսիս՝ Ապահունիքի գավառի Թոնդրակ գյուղից սկիզբ առած թոնդրակյան շարժումը: Թոնդրակյանների առաջնորդ ու գաղափարախոս Սմբատ Զարեհավանցին քարոզում էր մարդկանց հավասարություն և գտնում էր, որ աստծու և մարդկանց միջև միջնորդ հանդիսացող եկեղեցին ու նրա սպասավորներն ավելորդ են և հորինված են ժողովրդին խաբելու, շահագործելու համար: Նա մերժում էր հոգու անմահությունը, այսպես կոչված դրախտային կյանքը և նշում, որ այն, ինչ եկեղեցին խոստանում է դրախտում, պետք է մարդիկ ստանան երկրի վրա: Գրիգոր Մագիստրոսը հայտնում է, որ Սմբատ Զարեհավանցին «քարոզում էր ոչնչացնել քահանայական բոլոր ներգործության միջոցները, մանավանդ որ սնոտի էր համարում դրանք»: Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ, թոնդրակյանները «եկեղեցին և եկեղեցական արարողությունները բոլորովին չեն ընդունում, ո՛չ մկրտություն, ո՛չ պատարագ և նրա խորհուրդը, ո՛չ խաչ և ո՛չ պաս պահելու կարգը»:

910-ական թվականներին աշխատավոր բնակչության դրության վատթարացման հետևանքով Այրարատում, Սյունիքում և այլ վայրերում բռնկվեցին գյուղացիական ապստամբություններ: Ապստամբները հրի ու սրի էին մատնում ֆեոդալների կալվածքները, բռնագրավում իշխող դասի ունեցվածքը:

906 թ. Տաթևի վանքի շինարարությունն ավարտվելուց հետո հոգևոր հայրերը իշխաններից ստացան մեծ հողատարածություններ և մի շարք գյուղեր, որոնք մինչ այդ ազատ էին: 915 թ. վանքապատկան գյուղացիներն ապստամբեցին, հոգևորականների մի մասը սպանվեց, իսկ մյուս մասը փախուստի դիմեց: Ի վերջո ապստամբությունը ճնշվեց, և նրա կենտրոն Ցուրաբերդ գյուղն ավերվեց: Սակայն գյուղացիական ելույթները դեռ երկար տարիներ շարունակվում էին: Դրանց ակտիվորեն մասնակցում էին նաև թոնդրակեցիները:

Թոնդրակյան շարժումը խոր հետք թողեց և շարունակվեց X—XI դարերում: Այն պայքարի դուրս բերեց նաև քաղաքի ընչազուրկ տարրերին, հատկապես Անիի ստորին խավերին: Բազմաթիվ տեղերում ստեղծված թոնդրակյան համայնքները գործում էին ինքնուրույն և չէին ենթարկվում ֆեոդալներին ու իշխանության մարմիններին: Երբ Հայաստանը Բյուզանդիայի կողմից նվաճվեց, կայսերական զորքերը ճնշեցին նաև թոնդրակյան շարժումը. նրանց համայնքները հիմնահատակ ավերեցին, իսկ ապստամբների մի մասին էլ երկրից դուրս քշեցին դեպի բալկանյան երկրներ:

ՀԻՆ ԵՎ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հայ ժողովրդի հնագույն հոգևոր մշակույթից մեզ են հասել միայն առանձին պատառիկներ, որոնք հաճախ, առասպելական լինելով հանդերձ, արտացոլում են հայ ժողովրդի պայքարն օտար զավթիչների դեմ, նրա ներքին կյանքը, հավատալիքներն ու կենցաղը: Մշակութային այդ անգնահատելի արժեքների մի զգալի մասը գրի է առել պատմահայր Խորենացին և դրանով իսկ փրկել կորստից, իսկ մեծ մասը պահպանվել է Գողթան գավառի ժողովրդական երգերում, պատմության հնագույն մատյաններում ու օտար աղբյուրներում: Գողթան երգերից հնագույնը եղեգնից ծնված բոցեղեն պատանի Վահագնի ծննդի մասին է, որը մի հրաշալի կերտվածք է:

Երկնում էր երկինքը,
Երկնում էր երկիրը,
Երկնում էր և ծովը ծիրանի,
Ծովում երկունքով էր բռնված
Նաև եղեգնիկը կարմիր.
Եղեգնի փողից ծուխ էր ելնում,
Եղեգնի փողից բոց էր ելնում
Եվ բոցի միջից
Վազում էր խարտյաշ մի պատանյակ.
Հուր էին վարսերը նրա,
Բոց էր մորուքը նրա,
Իսկ աչքերն էին արեգակներ:

Հայ ժողովրդի հնագույն առասպելներն արտացոլում են այն հերոսական մաքառումները, որ կրել

է նա իր պատմության ընթացքում: Հայկի և Բելի առասպելում հայերի նախահայր Հայկը պատկերվում է որպես մի հերոս, որը Հայաստան ներխուժած օտար բռնակալ Բելին ոչնչացնելով, հարազատ ժողովրդի համար ազատ ապրելու հնարավորություն է ստեղծում:

Մի այլ առասպել պատմում է, որ Ասորեստանի թագուհի Շամիրամը ցանկանում է արժանանալ Հայոց թագավոր Արա Գեղեցիկի սիրուն, բայց մերժում է ստանում: Արա Գեղեցիկը ներկայացվում է որպես ազնիվ մարդ ու մեծ հայրենասեր: Առավել հետաքրքիր և իրական են վիպական զրույցները նվիրված Հայոց թագավորներ Երվանդին, Արտաշեսին, Արտավազդին ու Տիգրանին, որոնցում արտացոլում են գտել հայ պետականության ծագումն ու հզորացումը, ժամանակի հոգեբանական ու կենցաղային գունագեղ դրվագները: Այդ տեսակետից շատ ուշագրավ է Արտաշեսին նվիրված վեպը, որտեղ պատմվում է հայոց արքայի շինարարական մեծ գործունեության, հայրենիքը թշնամիներից պաշտպանելու, իր չար ու նախանձ որդուն՝ Արտավազդին, անիծելու մասին: Արտավազդը որսի ժամանակ Մասիսի փեշերում ընկնում է իր առջև բացված վիհը և շղթայակապվում: Որսի շները կրծում են շղթաները, որ ազատեն տիրոջը, բայց դարբինները, մուրճով զարկելով սալին, ամրացնում են շղթաները, որ չարը հավերժ պատժված մնա մթության մեջ և լույս աշխարհ չվերադառնա:

Հնագույն ժամանակներում հայերն օգտագործում էին արամեական և հունական գրեր: Արտավազդ II թագավորը, որ գրող, պատմաբան և ողբերգակ էր, իր երկերը գրում էր հունարեն: Հայոց թագավորները թողել են արամեերեն և հունարեն բազմաթիվ արձանագրություններ:

Տիգրանակերտի թատրոնի շենքում բեմադրվում էին հայ, հույն և ուրիշ հեղինակների երկեր, ինչպես, օրինակ. Էվրիպիդեսի «Բաքոսուհիները» ողբերգությունը:

Հին ժամանակներում, ինչպես նշվեց, հայերը հեթանոսներ էին և պաշտում էին բազմաթիվ աստվածների, որոնցից Արամազդը երկնքի և երկրի տիրակալն էր, բոլոր աստվածների հայրը, որը մարդկանց բարօրություն էր շնորհում, իսկ նրա աղջիկը՝ Անահիտը, պտղաբերությունը, մայրությունը հովանավորող աստվածուհին էր: Անահիտի պաշտամունքը շատ ուժեղ էր: Նրան ոսկե արձան էր կանգնեցվել Եփրատի ափին, Երիզա (Երզնկա) ավանի տաճարում: Այդ արձանիկը մ.թ.ա. 35 թ. հռոմեական զորավար Անտոնիոսն առևանգեց: «Անահիտի սրբավայրերը,— գրում է Ստրաբոնը,— հայերը [պաշտում են] առանձնահատուկ. տարբեր վայրերում և հատկապես Ակլիսներում [Երզնկա] հաստատված են նրա [սրբավայրերը], որտեղ կարգված են ստրուկներ և ստրկուհիներ»:

Արևի աստվածը Տիրն էր, ապա՝ Միհրը: Տիրը նաև դպրության աստվածն էր, իսկ Վահագնը՝ կայծակի, Աստղիկը՝ սիրո, նրանց արձանները տեղադրված էին տաճարներում: Այդ սրբավայրերում էին պահվում նաև ձեռագիր մատյանները:

Մովսես Խորենացին նշում է, որ Տիգրան II-ը «մեհյաններ շինելով և մեհյանների առաջ բագիններ կանգնեցնելով, բոլոր նախարարներին հրամայում է կռհեր մատուցել և երկրպագություն անել»: Հայ մշակույթը սերտ կապերի մեջ էր հարևան ժողովուրդների քաղաքակրթության հետ: Հայաստանում հատկապես տարածվել էր հելլենական մշակույթը, հայ իրականության մեջ ձեռք բերելով ինքնատիպ գծեր: Արմավիրը, Արտաշատը, Տիգրանակերտը, Վաղարշապատը և այլ քաղաքներ տնտեսական ու կուլտուրական նշանավոր օջախներ էին: Դրանցում կառուցվել էին մշակույթի և արվեստի բազմաթիվ հուշարձաններ: Քաղաքներում արտադրվող գեղարվեստական բազմապիսի առարկաներ արտահանվում էին շատ երկրներ:

Հայ ժողովրդի մշակութային կյանքում առանձնահատուկ դեր է պատկանում Մեսրոպ Մաշտոցին (361—440), որը ստեղծեց հայերեն այբուբենը: Կորյունը գրում է, որ իր ուսուցիչը Տարոն գավառի Հացեկաց (Խասգեղ) գյուղացի Վարդանի որդին էր, որը մանուկ հասակից «կրթվել էր հելլենական դպրությամբ...» Հետո նա կառուցել էր արքունի դիվանատունը, ապա ուսուցչություն արել Գողթն գավառում: Հետագայում նա աշխատում է Սահակ կաթողիկոսի մոտ և տարվում հայ գրերի ստեղծման հոգսերով: «Այն օրից,— գրում է Խորենացին,— որ Մեսրոպն արքունական դռնից հեռացավ, նա (թագավորը:— Ծ. Ա.) ոչ մի ճարտար դպիր գտնել չէր կարողանում, որովհետև պարսկական գիր էին գործածում»: Մեսրոպ Մաշտոցը հայերենին հարազատ տառեր ստեղծելու համար նախապատրաստական մեծ աշխատանք է կատարում: «Եվ այսպես նա շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար»,— գրում է Կորյունը: Մաշտոցը, մի խումբ մանուկներ առնելով, գնում է Ասորիքի Եդեսիա (Ուռհա) և Ամիդ (Դիարբեքիր) քաղաքները, ներկայանում եպիսկոպոսներին և իր հետ տարած երեխաների մի մասին տեղավորում է ասորական, իսկ մյուսին՝ հունական դպրոցներում: Այդ ընթացքում նա «իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր,— գրում է Կորյունը:— Եվ այնտեղ շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց

սիղոբաներով-կապերով»: Այնուհետև Մաշտոցը վերադարձավ մայրաքաղաք Վաղարշապատ, որտեղ նրան դիմավորեցին մեծ շուքով ու հանդիսավորությամբ:

Թագավորի հրամանով դպրոցներ բացեցին և սկսեցին երեխաներին ուսուցանել հայերեն այբուբենը: Տարբեր «կողմերը, գավառներն ու տեղերը խումբ-խումբ ուղարկեց ճշմարտության աշակերտներին,— գրում է պատմահայրը,— գիտության մեջ կատարելության հասածներիս [խմբերը], կարող [համարելով] ուրիշներին էլ սովորեցնելու»:

Հայ գրերի գյուտը, որը պատմական անհրաժեշտություն էր դարձել, ոչ միայն կարևոր էր հայ ժողովրդի մշակույթի ինքնությունը պահպանելու, այլ նաև նրա համար, որ նա կարողանար դիմակայել աշխարհակալ Պարսկաստանին և Բյուզանդիային: Գրերի ստեղծմամբ հայ մշակույթն արտակարգ վերելք ապրեց, բացվեցին բազմաթիվ դպրոցներ ու ձեռագրատներ: Առաջին ուսուցիչն ու դասատիարակը ինքը՝ Մեսրոպ Մաշտոցն էր: Լայն ծավալ ստացան թարգմանչական գրականությունը, ինչպես նաև ինքնուրույն գործերի ստեղծումը: V—VII դարերում պատմական ասպարեզ իջավ հայ գիտության և մշակույթի հայտնի ներկայացուցիչների մի ամբողջ համաստեղություն: Նրանց մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում պատմիչներ Կորյունը, Փավստոս Բուզանդը, Ագաթանգեղոսը, Եղիշեն, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Սեբեոսը, փիլիսոփաներ Դավիթ Անհաղթն ու Եզնիկ Կողբացին, մաթեմատիկոս ու տիեզերագետ Անանիա Շիրակացին և շատ ուրիշներ, որոնք ակնառու դեր խաղացին հայ ժողովրդի գիտության ու մշակույթի զարգացման բնագավառում:

Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Կորյունը գրեց իր ուսուցչի կյանքը՝ «Վարք Մաշտոցի» երկը: Կարևոր է հատկապես Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը», որում պատկերված են Հայաստանի III և IV դարերի պատմության կարևորագույն դեպքերը և հատկապես քրիստոնեության ընդունումը: Մյուս նշանավոր պատմական երկը Փավստոս Բուզանդի աշխատությունն է, որտեղ ցույց է տրված IV դարում սասանյան տիրակալության դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը:

Դիլիջան. Գոշավանքի ընդհանուր տեսարանը

Սպիտակավոր (1321 թ.)

Աշտարակ. Համբերդ

Դիլիջան. խաչքար Գոշավանքում

Մեսրոպ Մաշտոց

V դարի ականավոր պատմիչ է Եղիշեն, որը «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» գրքում հայրենասիրական բարձր շնչով նկարագրել է 450—451 թթ. Վարդանանց պատերազմը սասանյան բռնակալների դեմ: Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը» ևս նվիրված է V դարում հայ ժողովրդի ազատագրական պայքարին: Սակայն V դարի հայ պատմագրության գլուխգործոցը պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է, որն ամփոփում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն շրջանից մինչև Արշակունիների թագավորության վերջը:

VI—VII դարերի հայոց պատմությունը շարադրված է պատմիչ Սեբեոսի, իսկ VIII դարինը՝ Ղևոնդ Երեցի «Պատմության» մեջ, որտեղ լուսաբանվում է արաբական տիրակալության շրջանի ողբերգական ու հերոսական դրվագներով լի պատմությունը: Մովսես Կաղանկատվացու երկը վերաբերում է Աղվանից երկրի պատմությանը:

V դարում հայ փիլիսոփայական միտքը ևս կգալի նվաճումների հասավ: Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկը վերաբերում է քրիստոնեական կրոնի փիլիսոփայական հիմունքների քննադատությանը, ինչպես նաև հեթանոսական աղանդների մերժմանը:

Փիլիսոփայական մտքի կարկառուն դեմքը Դավիթ Անհաղթն է, որը Աթենքի փիլիսոփայական հանդեսներում հաղթողի անուն էր վաստակել: Նրա «Սահմանք իմաստասիրութեան» երկը փիլիսոփայական մտքի գլուխգործոց է:

Հովհան Մանդակունին V դարի հայոց դպրության ամենատաղանդավոր ներկայացուցիչներից է, որը զբաղվել է թարգմանությամբ և մատենագրությամբ, ստեղծել բարձրարվեստ ճառեր, թատերախաղեր, շարականներ: Կատարելության հասած իր խոսքի ազդեցությամբ նա խարազանել է հետամնաց բարքերը, արմատավորել նորը՝ առաջադիմականը:

VII դարի հայ գրականության աչքի ընկնող դեմքերից է Դավիթ Քերթողը, որը թողել է «Ողբ մեծ իշխան Ջիվանշիրի մահվան առթիվ» ստեղծագործությունը: Դավիթ Քերթողն ապրում էր իշխանի պալատում և «Ողբը» գրել է Ջիվանշիրի դավադրական սպանության կապակցությամբ: Այն Մովսես Կաղանկատվացին ամբողջովին մեջ է բերել «Պատմություն Աղվանից աշխարհի» աշխատությունում: Այդ պոեմը գրված է ժամանակի քերթողական արվեստի բարձր մակարդակով և բուռն ներշնչանքով: Ահա դրանից երկու քառյակ:

Դառնության փոխվեց խաղաղությունը մեր,
Ավազակները դռնբաց խուժեցին ներս,
Քանզի մեծասքանչ տերությունն ընկավ,
Եվ մարեց ճառագայթը մեր պետական:

...Ընտրյալ փառքը հասավ ամենուր,
Տարածվեց անհուն աշխարհով ողջ,
Իր հնարագետ հանճարի մասին
Գովերգ հնչեցրին տիեզերքով մեկ:

Բնական և տեխնիկական գիտությունները ևս կգալի կարգացում ապրեցին: Հայտնի մաթեմատիկոս և տիեզերագետ Անանիա Շիրակացին VII դարում հանդես եկավ բազմաթիվ գիտական աշխատություններով:

Շիրակացին ծնվել է Շիրակ գավառի Անի ավանում, սովորել Տրապիզոնում՝ հույն ականավոր մա-

թեմատիկոս Տյուքիկոսի դպրոցում: Շիրակացու «Տիեզերագիտությունը», «Աշխարհացույցը» «Խնդրագիրքը» և այլ ուսումնասիրություններ խոշոր ավանդ էին ժամանակի գիտության մեջ: Նրա բազմաթիվ գիտական դրույթները մեր օրերում էլ շատ թարմ են հնչում: Դեռ այն ժամանակ Շիրակացին գտնում էր, որ երկիրը գնդաձև է, որ անձրևը տեղի է ունենում «հողմի ճնշման տակ», իսկ կայծակն առաջանում է այն ժամանակ, երբ քամիներն ընկնում են «ամպերի շրջափակման մեջ և վիթխարի ուժով ճեղքում են այն: Այստեղից էլ առաջանում են ճայթյունն ու որոտը: Եվ հողմի ճնշման տակ հուր է ցայտում, որ կոչվում է փայլակ»: Ջյան, կարկտի, քամիների, արևի և լուսնի խավարման և բնության այլ երևույթների մասին Շիրակացին տվել է գիտական-մատերիալիստական բացատրություն: Շիրակացու «Աշխարհացույցը» վերաբերում է Հայաստանի և հարևան երկրների աշխարհագրությանը և նույնպես գիտական մեծ արժեք է ներկայացնում: Ուշագրավ է նաև նրա կազմած առաջին հայերեն «Խնդրագիրքը»:

Զգալի առաջընթաց կատարվեց նաև ճարտարապետության ու շինարարական արվեստի բնագավառում: Կառուցվեցին բերդեր, դղյակներ, տաճարներ, բազիլիկ կամարակապ եկեղեցիներ: Էջմիածնում V դարում կառուցված գմբեթավոր եկեղեցին, VI—VII դարերում տարբեր տիպի գմբեթավոր եկեղեցիները հայկական ճարտարապետության կարևոր նվաճումներն են: Ճարտարապետական գլուխգործոցներ են Հռիփսիմե և Գայանե եկեղեցիները, Զվարթնոցի հոյակապ տաճարը և ուրիշ շատ այլ կառույցներ:

Իջևան. Մակարավանք



Արաբական և բյուզանդական ավերիչ արշավանքներն ու երկրի քայքայումը կասեցրին գիտության ու արվեստի պարգացումը: Միայն սկսած IX—X դարերից, երբ խալիֆաթն ու բյուզանդական կայսրությունը թուլացան, և հայ ժողովուրդը սկըսեց ինքնուրույն զարգացման ուղի բռնել, տնտեսական վարթոնք ապրեց նաև մշակույթը:

ՊԱՅՔԱՐ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՏԻՐԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Թուրք քոչվորների՝ սելջուկ հրոսակների, արշավանքը Հայաստանի համար ծանր հետևանքներ ունեցավ: Բյուզանդիան անհեռատես գտնվեց թուրք-սելջուկների վտանգի հանդեպ: Անիի թագավորության անկումից 3 տարի էր անցել, երբ 1047—1048 թթ. սելջուկները ներխուժեցին Հայաստան և մեծ ավարով ու գերիներով վերադարձան Ատրպատական, իսկ 1054 թ. Տուղրիլ բեկի ասպատակությունները հասան մինչև Կարս ու Կարին: Սելջուկները 1064 թ. սուլթան Ալփ-Ասլանի գլխավորությամբ ավերեցին Հայաստանի ծաղկուն մայրաքաղաքը՝ Անին: Բնակչության զգալի մասը ոչնչացվեց, իսկ նկատելի մի հատվածն էլ գաղթեց Բյուզանդիայի փոքրասիական շրջանները և հատկապես Կիլիկիա: Սելջուկների արշավանքն այնքան անսպասելի էր, որ տեղացի շատ կառավարողներ գլուխները կորցրին և չկարողացան ժամանակին կազմակերպել քաղաքների ու գյուղերի պաշտպանությունը: Բյուզանդական կայսրությունը փորձեց դիմադրել, բայց 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում ծանր պարտություն կրեց: Սելջուկներն անցան Եփրատ գետը և շարժվեցին դեպի Արևմուտք:

Սելջուկյան տիրապետությունը շատ ծանր հարված հասցրեց Հայաստանին: Քաղաքներն ու ավանները ավերվեցին, և երկիրը վերածվեց քոչվոր անասնապահների արոտավայրերի:

XI դարի վերջից սելջուկյան տիրակալությունը սկսեց տրոհվել մանր ամիրայությունների: Հայաստանում առաջացան Դվինի և Անիի Շեդադյան, երկրի հյուսիսում՝ Շահարմենների ամիրայությունները: Այդ ծանր ժամանակներում և հատկապես վրաց թագավոր, պետական խոշոր գործիչ Դավիթ

Օրբելյան իշխանական տան վինանշանը

Շինարարի կառավարման տարիներին (1089—1125) Հայաստանը մշտական աջակցություն էր ստանում Վրաստանից: Բազմաթիվ հայեր ապաստան ու օգնություն գտան վրաց ժողովրդի մոտ:

1124 թ. հայերի խնդրանքով Դավիթ Շինարարը 60-հազարանոց բանակի գլուխ անցած մտավ Անի և քաղաքն ազատեց օտարներից: Սակայն 1126 թ. սելջուկ բազմահազարանոց հորդաները նորից ներխուժեցին Շիրակ և պաշարեցին Անին: Ժողովրդական զանգվածները միահամուռ ոտքի ելան պաշտպանելու հայրենի քաղաքը: Այդ անհավասար պայքարում փառաբանվեցին շատ հերոսներ, որոնց թվում հայուհի Այծեմնիկը: «Նետահար աղջիկը շարունակում էր մասնակցել կռվին՝ իր օրինակով ոգեշնչելով հայ ռազմիկներին»:

Անին նորից անցավ օտարների ձեռքը և միայն 1161 թ. վրացական զորքերի օգնությամբ վերստին ազատագրվեց սելջուկներից: Քաղաքի կառավարիչ նշանակվեց հայ-վրացական զորքերի քաջարի զորավար Սարգիս Զաքարյանը: Թամար թագուհու օրոք (1184—1213) հայ-վրացական զորքերը զորավար (ամիրսպասալար) Զաքարե Զաքարյանի հրամանատարությամբ սելջուկ նվաճողների լծից ազատագրեցին Հայաստանի զգալի մասը:

Հայ ժողովրդի մի մասը, հալածվելով սելջուկ հորդաների ասպատակություններից, ապաստան գտավ Միջերկրական ծովի ափին՝ Կիլիկիայում: Նրանց թվում էր նաև Անիի Գագիկ II թագավորի մերձավորներից Ռուբենը, որին 1080 թ. հաջողվեց Լեռնային Կիլիկիայում ստեղծել հայկական իշխանություն: Հետագայում Լևոն I իշխանը (1129—1137) դաշտային Կիլիկիան ևս, Մամեստիա և Ադանա քաղաքներով, կարողացավ խլել Բյուզանդիայից և միացնել իր իշխանությանը, իսկ Ռուբեն III-ը 1182 թ. գրավեց նաև Տարսոն քաղաքը: Բյուզանդական կայսրությունը ստիպված էր ընդունել արդեն փաստ դարձած հայկական իշխանության անկախությունը:

Լևոն II-ն (1187—1219) ավելի ընդարձակեց և ամրապնդեց հայկական իշխանությունը Կիլիկիայում: Նրան հաջողվեց խաչակիրներին դուրս մղել Անտիոքից և տիրանալ Այաս նավահանգստին, իսկ Իկոնիայի սելջուկներից գրավեց սահմանամերձ մի շարք շրջաններ: Լևոն II-ը 1198 թ. Տարսոն քաղաքում թագադրվեց և հռչակվեց Կիլիկիայի հայոց թագավոր: Թագավորության մայրաքաղաքը Սիսն էր: Լևոն II-ի թագադրությունը ճանաչվեց Բյուզանդիայի և եվրոպական մի շարք պետությունների կողմից:

Կիլիկիան տնտեսական խոշոր վերելք ապրեց: Հատկապես զարգացան դաշտավարությունն ու այգեգործությունը, ինչպես նաև անասնապահությունը: Արդյունահանում էին երկաթ, արծաթ, կապար և այլ օգտակար հանածոներ: Մեծ չափով զարգացան արհեստները, լայն ծավալ ստացավ արտաքին առևտուրը: Կապված լինելով բազմաթիվ երկրների հետ, Կիլիկյան Հայաստանը զգալի դեր էր կատարում միջազգային առևտրի ասպարեզում: Այն առևտրական սերտ կապերի մեջ էր միջերկրածովյան ավազանի շատ քաղաքների և մանավանդ Վենետիկի ու Ջենովայի հետ: Իտալացի հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոն գրել է, որ հայերն «ունեն մի քաղաք ծովի վրա, որ կոչվում է Այաս, որտեղ նրանք մեծ առևտուր են կատարում: Որովհետև դուք պետք է իմանաք, թե բոլոր համեմունքները և մետաքսյա կերպասները, արծաթյա և ուրիշ արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը: Եվ Վենետիկի, Ջենովայի և ուրիշ երկրների վաճառականներն այստեղ են գալիս վաճառելու իրենց ապրանքները և կամ գնելու ինչ-որ իրենք պետք ունեն»:



Լամբրոնի բերդը

Հայկական Կիլիկիան ֆեոդալական պետություն էր: Խոշոր ֆեոդալներն անվանվում էին բերդատեր պարոններ, իսկ մանրերը՝ ձիավորներ: Շահագործվող գյուղացիական մասսան բաժանվում էր երեք խմբի. պետական գյուղացիներ, որոնք պետությանը վճարում էին բերքի 1/5 մասը, կիսազատ գյուղացիներ, որոնք, բացի այդ հարկից, շաբաթական մեկ օր պետք է աշխատեին ֆեոդալի տնտեսության մեջ, իսկ երրորդ խումբը՝ ճորտերը կամ պարիկոսներն էին, որոնք հարկերից ու տուրքերից բացի կոռային ծանր աշխատանք էին կատարում:

Կիլիկիայի Լևոն II թագավորի մահից հետո 1219 թ. գահ բարձրացավ նրա դուստր Զաբելը, որը 1226 թ. ամուսնացավ Կոստանդին Գունդստաբլի որդի Հեթումի հետ, որով և Կիլիկիայում հաստատվեց Հեթումյանների դինաստիան:

Մոնղոլական նվաճումների ժամանակ Կիլիկիան ևս կանգնեց վտանգի առաջ: Հեթում I-ը (1226—1270) դաշինք կնքելու առաջարկությամբ դիմեց մոնղոլական կորավար Բաչուին և հասավ այն բանին, որ մոնղոլները Կիլիկիա չմտան: 1254 թ. Հեթումը ճանապարհորդեց մոնղոլական պետության մայրաքաղաք Կարակորում, որտեղ և Մանգու մեծ խանի հետ դաշինք կնքեց: Կիլիկիան պարտավորվեց որոշ տուրք վճարել և ապա մասնակցել սուլթանի դեմ մղվող պատերազմներին, իսկ մոնղոլները չպետք է խառնվեին Կիլիկիայի ներքին գործերին և արտաքին վտանգի դեպքում նրան օգնություն ցույց տային:

Եգիպտոսի սուլթան Բեյբարսը 1266 թ. ներխուժեց Կիլիկիա: Մառի կոչվող վայրում հայերը պարտվեցին: Կռվում զոհվեց Հեթումի որդի Թորոսը, իսկ մյուս որդին՝ Լևոնը, գերի ընկավ: Երկիրն ավերվեց, Սիս քաղաքը կողոպտվեց, և շատ հայեր գերեվարվեցին: Սակայն Լևոն III-ը (1270—1289) կարողացավ երկիրը պաշտպանել Եգիպտոսի սուլթանի ոտնձգություններից: 1285 թ. Եգիպտոսի մամլուքները նորից ներխուժեցին Կիլիկիա և կողոպտեցին Այասը: Լևոն III-ը ստիպված հաշտություն խնդրեց և պարտավորվեց տարեկան շուրջ 200 հազար ոսկի տուրք և 10 հազար ձող երկաթ տալ: 1305 թ. մամլուքները 7-հազարանոց բանակով նորից ներխուժեցին Կիլիկիա, բայց ջախջախվեցին և ետ շպրտվեցին: Սակայն արտաքին թշնամիների ասպատակությունները՝ մի կողմից, ներքին հակասությունների սրումը՝ մյուս կողմից, թուլացրին Կիլիկյան թագավորությունը: Հռոմի պապի հորդորանքով 1307 թ. Սիսում և 1309 թ. Ադանայում կայացած ժողովները կաթոլիկություն ընդունելու որոշում կայացրին, որի կողմնակից ունիթորները և հակառակորդ հակաունիթորները կատաղի պայքար սկսեցին միմյանց դեմ: Օգտվելով նման խառը վիճակից, եգիպտական կորքերը 1321—1322 թթ. և ապա 1335 թ. ներխուժեցին Կիլիկիա և գրավեցին Այաս, Մամեստիա, Ադանա և Տարսոն քաղաքները: 1337 թ. պայմանագրով Այասը և մի շարք բերդեր անցան Եգիպտոսին: Բացի այդ, Կիլիկիան իրավունք չուներ որևէ երկրից օգնություն խնդրել:

Հեթում II թագավորը

Նման պայմաններում ներքին պայքարն ավելի սրվեց, և 1342 թ. գահն անցավ Լուսինյան տոհմին: Ներքին հակասությունները և արտաքին ճնշումը գնալով թուլացնում էին երկիրը: Կիլիկիայի վրա հարձակվում էին թե՛ մամլուքները և թե՛ Մերձավոր Ասիա թափանցած թուրքմեն ցեղերը: Կիլիկիան արդեն 1350—1360 թթ. կորցրեց դաշտային մասը, և 1370 թ. մամլուքները, ապա նաև թուրքմեններն ու Հալեպի էմիրությունը միացյալ ուժերով հարձակվեցին Լեռնային Կիլիկիայի վրա ու շրջապատեցին նրա մայրաքաղաք Սիսը: Լիպարիտ սպարապետը կորքի և բնակչության գլուխն անցած հերոսական դիմադրություն ցույց տվեց: Սպարապետը հերոսի մահով ընկավ, իսկ քաղաքի բնակիչները երկար պաշարված մնալով՝ սովի մատնվեցին և 1375 թ. հանձնվեցին: Լուսինյան դինաստիայի վերջին թագավոր Լևոն VI-ը գերի ընկավ և տարվեց Կահիրե:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԼՈՒԾԸ, ԼԵՆԿԹԵՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

1236 թ. Հյուսիսային Հայաստան ներխուժեցին մոնղոլական հորդաները և գրավեցին այն, իսկ 1242—1245 թթ. նրանք նվաճեցին նաև Հայաստանի հարավային ու արևմտյան շրջանները:

Մոնղոլական տիրապետությունը մի ահավոր չարիք էր նվաճված ժողովուրդների համար: Կ Մարքսի բնորոշմամբ, մոնղոլական լուծը «ոչ միայն ճընշում, այլև անպատվում ու ցամաքացնում էր նրա տակ ընկած ժողովրդի ոգին իսկ: Մոնղոլ թաթարները հաստատեցին սիստեմատիկ ահաբեկման մի ռեժիմ, որի սովորական միջոցներն էին կողոպուտներն ու մասսայական կոտորածները»:

Մոնղոլներն իրենց քոչվորական կենցաղը ջանում էին փաթաթել տեղական բարձր մշակույթ ունեցող ժողովուրդների վկին: Նրանք վայրենաբար ավերում էին քաղաքներն ու գյուղերը, ջրանցքներն ու ջրամբարները, ծաղկուն այգիներն ու բերրի դաշտերը վեր էին ածում արոտավայրերի: «Մեր աչքերով տեսանք ավերն ու տառապանքները,— գրում է Կիրակոս Գանձակեցին,—որ կատարեցին [մոնղոլները] մեր ամբողջ երկրում... Եվ նրանք սփռվեցին առհասարակ դաշտերի, լեռների, ձորերի երեսին իբրև մորեխի բազմությունը... Այնտեղ պետք էր տեսնել, [թե ինչպես] սրերը անխնա կոտորում էին տղամարդկանց ու կանանց, երիտասարդներին ու մանուկներին, ծերերին ու պառավներին... սպանությունների գնում էին խրախճանքով, ինչպես հարսանիքի կամ խնջույքի»: Եվ հետո շարունակում



Վահկա բերդը

է. նրանք «հափշտակում, պատառոտում էին ինչպես գայլերը: Նրանց ձիերը չէին հոգնում գնալուց, ոչ էլ նրանք էին ձանձրանում ավարը հավաքելուց»: Դա մի ահավոր չարիք էր, որ կախվել էր հայ ժողովրդի գլխին: Երկիրը տնտեսական ու քաղաքական լիակատար անկման հասավ: Ահա թե մոնղոլական տիրապետությունն ինչպես է բնութագրել նրանց մոտ ծառայության մեջ եղած Ռաշիդ ադ-Դինը. «Երբեք երկրներն ավելի չեն ամայացել, քան այդ տարիներին, առանձնապես այն վայրերը, որտեղով անցել է մոնղոլական կորքը, քանի որ մարդու առաջացման ժամանակից սկսած ոչ մի արքայի չի հաջողվել իրեն ենթարկել այնքան տերություններ, որքան նվաճեց Չինգիզ խանը և նրա տոհմը, և այնքան ժողովուրդ, որքան նրանք կոտորեցին, չի կոտորել ոչ ոք»: Ավերելու և կոտորելու մոլուցքն էր ուղեկցում գազանաբարո բռնակալներին:

Մոնղոլական ավերիչ տիրակալությունն ի վերջո ներքին երկպառակությունների և ճնշված ժողովուրդների համընդհանուր դժգոհության ու ազատագրական պայքարի հետևանքով կործանվեց: Սակայն տարբեր քոչվորական ցեղերի արշավանքները Հայաստան չդադարեցին: Հատկապես ավերիչ էին կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի ասպատակություններն ու նվաճումները:

Իշխան Էաչի Պռոշյան (XIV դ.)

1380—1390-ական թվականներին Հայաստանը ոտնակոխ արեցին արյունարբու Լենկթեմուրի հրոսակները: Վան քաղաքը հերոսաբար դիմադրեց, որի համար Լենկթեմուրի հրամանով 3 հազար մարդ բերդի պարիսպներից անդունդ նետվեց, հազարն էլ տանջամահ արվեց:

Պետրոս գրիչը Լենկթեմուրի ավերածությունների մասին գրում է. «Արևելքից ելնելով չար բռնավորը... որի անունը Լենկթեմուր է, բազում և անթիվ զորքով պատեց Պարսկաստանից մինչև Հոռոմոց երկիրը [Բյուզանդիան] և գալով Հայաստան, քանդեց ու գերեց ամենքին և անողորմ սրախողխող արեց հայերին, թե տաճիկներին՝ ում որ գտավ»:

Անդադրում պատերազմները, նվաճողների դաժանությունը, ինչպես նաև ֆեոդալական երկպառակտչական բախումները երկիրը հասցրին ամայացման ու աղքատության: Անվերջ էին փախստականների քարավանները: Բնակչության զգալի մասը դարձյալ ստիպված էր ապաստան որոնել օտարության մեջ: Շատ քաղաքներ, ամբողջ գավառներ անմարդաբնակ դարձան:

Լենկթեմուրի մահից հետո (1405) Հայաստանը երկար ժամանակ կռվախնձոր էր դարձել կարա-կոյունլու և ակ-կոյունլու քոչվորական ցեղերի միջև:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՔՑԱՆՆԵՐԻ ՄԵՋ

XV—XVI դարերում Հայաստանը դառնում է ավերիչ նոր արշավանքների և Թուրքիայի ու Պարսկաստանի բախումների թատերաբեմ:

Թուրքական մի ցեղախումբ, ամրանալով Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան մասում, 1299 թ. Օսման ցեղապետի գլխավորությամբ կազմավորեց օսմանյան թուրքական պետությունը: 1453 թ. թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը և վերջ տվեցին Բյուզանդական կայսրությանը: Ապա թուրքերը սկսեցին իրենց ծավալապաշտական քաղաքականության ավելի լայն մասշտաբներով իրականացումը:

Պարսկաստանում Սեֆյան դինաստիայի հաստատումից հետո (1502) այն արագորեն հզորացավ: Շահ Իսմայիլը իր իշխանությանը ենթարկեց համարյա ամբողջ Հայաստանը: Եվ ահա Հայաստանին տիրելու համար 1512 թ. սկսվեցին թուրք-պարսկական պատերազմները, որոնք ընդմիջումներով շարունակվեցին մեկ դարից ավելի: Հայաստանը դարձավ Պարսկաստանի ու Թուրքիայի միջև անվերջ պատերազմների թատերաբեմ:

Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև 1555 թ. կնքվեց պայմանագիր, որով Հայաստանի արևելյան մասին տիրեցին պարսիկները, իսկ արևմտյանին՝ թուրքերը: Սա Հայաստանի առաջին բաժանումն էր երկու երկրների միջև:

Անդրկովկասին տիրելու համար պարսկա-թուրքական պատերազմը նոր ուժով վերսկսվեց սուլթան Մուրադ III-ի օրոք: Այդ պատերազմում հաջողության հասան թուրքերը, և 1590 թ. հակառակորդների միջև կնքվեց նոր պայմանագիր, որով համարյա ամբողջ Անդրկովկասն ընկավ Թուրքիայի իշխանության տակ: Սակայն, չհաշտվելով տարածքային նման լուրջ կորուստների հետ, Պարսկաստանի տիրակալ Շահ-Աբաս I-ը 1603 թ. հակահարձակման անցավ և թուրքերից խլեց ամբողջ Անդրկովկասը: Իսկ 1604 թ., երբ նա ստիպված նահանջում էր, Արևելյան Հայաստանն ամայացրեց՝ 350 հազար հայերի տեղահանեց, նրանց մի մասին քշելով Պարսկաստան:

Հատկապես տուժեց Ջուղան, որի բնակչությունն ամբողջովին բռնագաղթի ենթարկվեց, և Սպահանի մոտ հիմնադրվեց Նոր Ջուղա քաղաքը: Առաքել Դավրիժեցին նշում է. «Բոլոր ջուղայեցիները քշված, տարված էին և շինությունները հրկիզված»: Թուրքական վավերագրերից մեկում ասվում է. «Ջուղայից մինչև Նախիջևան, Երևան ու Վան չի եղել մի շինություն, որ կանգուն լինի»: Հատկապես ծանր էին Երևանի բերդի մատույցներում մղված կռիվները, որոնք տևեցին ինն ամիս: Քաղաքը գրոհելիս շահի զորքերը տեղահան արեցին խաղաղ բնակիչներին, այդ թվում երեխաներին ու կանանց: Շահ Աբասը բացի զուտ ռազմական նպատակներ հետապնդելուց, հայերին Պարսկաստան բռնագաղթեցնելով, ձգտում էր նրանց օգնությամբ զարկ տալ իր երկրի տնտեսական կյանքի և առևտրի զարգացմանը: Թուրքերն էլ իրենց հերթին շուրջ 100 հազար հայերի գերեվարեցին ու վաճառքի տարան Եգիպտոս և այլ երկրներ:

Պարսկաստանի և Թուրքիայի միջև պատերազմը շարունակվեց 1606—1610 թթ.: Այդ տարիներին զանգվածային գաղթերը վիթխարի չափեր ընդունեցին: Հսկայական ավերածությունները և սովը Հայաստանի բնակչությանը հասցրին հուսահատ վիճակի: Հայ բնակչության դրությունը ավելի սաստկացավ ջալալիների աշխարհավեր շարժման ժամանակ:

1614 թ. Շահ-Աբասը ձեռնարկեց նոր արշավանք՝ ավերելով Անդրկովկասի շատ շրջաններ:

1639 թ. հաշտության պայմանագրով տեղի ունեցավ Հայաստանի երկրորդ բաժանումը, ըստ որի Արևելյան Հայաստանը բաժին ընկավ Պարսկաստանին, իսկ Արևմտյանը՝ Թուրքիային:

Թուրք-պարսկական բռնապետության ծանր ու դարավոր լուծն ավերիչ հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի կյանքում:

Պարսկաստանի իշխանության տակ ընկած Արևելյան Հայաստանը բաժանվեց Չուխուր-Սադի (Երևան, Նախիջևան), Ղարաբաղի և այլ բեկլարբեկությունների, որոնք իրենց հերթին բաժանվեցին մահալների: Բեկլարբեկությունները ղեկավարում էին շահի հաստատած բեկլարբեկերը, իսկ մահալները՝ նայիբները կամ միրբոլուքները, գյուղերը՝ գյուղական ավագները, քյոխվաները, ռեսերն ու այլ պաշտոնյաներ: Քաղաքների ղեկավարները կոչվում էին քալանթարներ, ոստիկանական տեղամասերի պետերը՝ դրաուգներ, իսկ ստորին պաշտոնյաները՝ յուզբաշիներ (հարյուրապետեր) և չավուշներ (տասնապետեր), շարքայինները՝ ֆեռաշներ: Զորապետները կոչվում էին թարխաններ, շարքային զինվորները՝ սարվազներ:

Արևմտյան Հայաստանը բաժանվեց Կարսի, Էրզրումի (Կարին), Բայազետի, Վանի և Մուշի փաշայությունների: Վերջիններս իրենց հերթին բաժանվեցին սանջակների: Փաշայության գլուխ էր կանգնած փաշան, իսկ սանջակները ղեկավարում էին սանջակ-բեկերը: Գյուղերում նշանակվում էին ավագներ, որոնք կոչվում էին մելիքներ, տանուտերեր, քյոխվաներ, ռեսեր և այլն: Փաշայությունները ենթարկվում էին սերասքերներին, որոնց նշանակում էին սուլթանները: Նրանք տնտեսական, քաղաքական ու ռազմական կյանքի բնագավառներում օժտված էին անսահմանափակ իրավունքնե-

Հայերի բռնի գաղթը Շահ Աբասի կողմից 1604 թ.

րով: Փաշաներին նույնպես սուլթանն էր նշանակում, և նրանք փաշայության սահմաններում մեծ իրավունքներ ունեին: Փաշաները նշանակում էին սանջակ-բեկերին, իսկ վերջիններս՝ գյուղական կառավարիչ-ավագներին:

Աշխատավոր զանգվածները, գտնվելով խաների ու փաշաների բռնապետական իշխանության ներքո, իրավազուրկ ու ճնշված վիճակում էին: Նրանք ծանր պարհակներ էին կրում և բազմապիսի հարկեր վճարում: Ամեն ինչ կախված էր պետական պաշտոնյայի կամքից: Հաճախ միևնույն հարկը գանձում էին մի քանի անգամ: Բայց ամենից ծանրն այն ժամանակ էր, երբ գյուղ էին գալիս պաշտոնյաները կամ զորամասերը: Գյուղացիները պարտավոր էին կերակրել նրանց, կատարել նրանց բոլոր ցանկություններն ու քմահաճույքները, անգամ «դիշ քիրասի» (ատամնավարձ) վճարել:

Հայ աշխատավորները զուրկ էին ամենատարրական իրավունքներից. նրանք չէին կարող ձի նստել, զենք կրել, ամուսնության թույլտվություն ստանալու համար պարտավոր էին բեյին թանկարժեք նվերներ մատուցել: Հարստահարիչներն անպատիժ սպանում էին հայերին, խլում նրանց կանանց ու երեխաներին, ունեցվածքը: Բռնությամբ ստիպում էին մահմեդականություն ընդունել: Քրիստոնյաներն արհամարհական ձևով «զիմմի» (ծառա, հպատակ, ստրուկ) էին անվանվում: Նրանց վկայությունը դատարանում չէր անցնում, բողոքը չէր հարգվում: Հայը իրավունք չուներ պաշտպանվելու մահմեդականի հարձակումից, չուներ անձի և ինչքի ապահովություն: Շատ ծանր և ստորացուցիչ էր հարեմների համար աղջիկների ընտրությունը և տղաների մանկահավաքը (դևշիրմե)՝ նրանց հավատափոխ անելու և ենիչերիների բանակին զինվորագրելու նպատակով:

Այդպիսին էր վիճակը նաև Արևելյան Հայաստանում՝ պարսից խաների ու բեկերի իշխանության ներքո: Խաները բազմաթիվ կամայական հարկեր էին սահմանում, հայ գյուղացիներին քշում էին հարկադիր աշխատանքների, ամենափոքր անհնազանդության դեպքում սպանում իրենց հպատակներին:

Երևանի Հուսեյն խանը, որն ուներ սարդարի տիտղոս, «անհաշիվ տուրք էր հավաքում,— գրում է Ի. Շոպենը,— դրամ էր կտրում, հանցագործներին ըստ իր հայեցողության պատժում էր աչքերը հանելով, անդամահատելով կամ մահացնելով՝ առանց որևէ բողոքարկման, մի խոսքով գործում էր ինքնիշխան»:

Երկպառակտչական պատերազմներն ու ֆեոդալական անվերջ կռիվները քայքայում էին գյուղացիական տնտեսությունները: Հողագործությունն ու անասնապահությունը գտնվում էին ցածր մակարդակի վրա, ոռոգիչ սիստեմներն ավերվել և շարքից դուրս էին եկել: Ջրից օգտվելու համար գյուղացիները պետք է իրենց ուժերից վեր մեծ գումար վճարեին:

Թեև ըստ Ղուրանի հողը համարվում էր ալլահի և երկրում նրա փոխանորդների՝ խալիֆի, շահի կամ սուլթանի սեփականությունը, իրականում խաները, փաշաները և այլք հողատարածություններին տիրում էին որպես մուլք, թիուլ և այլն: Ղուրանը ժխտում էր ճորտատիրական իրավունքը, բայց գյուղացիները գտնվում էին ստրկական վիճակում: Խաները, փաշաները, մելիքները, մուլքադարները, թիուլդարները, բեյերը և աղալարները փաստորեն ինչպես հողատարածությունների, այնպես էլ դրանց ամրացված գյուղացիների սեփականատերերն էին: Աշխատավոր գյուղացիները ենթարկվում էին տնտեսական ու քաղաքական հարկադրանքի: Անդրկովկասի խանություններում, Ի. Հ. Պետրուշևսկու բնութագրմամբ, «ռայաթների զգալի մասը փաստորեն անմիջական կախման մեջ էր գտնվում տեղական խանից· կամ մասնավոր սեփականատիրոջից, որոնց պատկանում էին նրանք»:

Նկարագրելով խանական իշխանության կամայականությունները Քանաքեռ գյուղում, Զաքարիա Սարկավագը գրում է, թե ինչպես էին ծանր հարկեր հավաքում, բռնություններ գործադրում, ծեծում ու սպանում գյուղացիներին: Հյուպատոս Թումանովսկու 1780 թ. սեպտեմբերի 25-ի զեկուցագրում հարկային ճնշման մասին ասվում է, որ հպատակները խանի պահանջները պետք է կատարեին անառարկելիորեն, իսկ «եթե որևէ մեկը պատճառաբաներ, թե անկարող է, ապա ոտքերի տակ գցած ծեծում էին... և ի վերջո ամբողջ ունեցվածքը խլում»:

Խաների ու նրանց պաշտոնյաների դաժանությունն անսահման էր: Խ. Աբովյանի բառերով ասած, Երևանի սարդարի եղբայր արյունարբու Հասան խանը առանց մարդ սպանելու չէր կարող քնել:

Խաների ու փաշաների իշխանության ներքո կյանքն անտանելի էր դառնում: Հայ ժողովրդի ծոցից դուրս էին գալիս մարտիկներ, որոնք համարձակորեն պայքարի էին ելնում՝ բոլորին կոչ անելով հետևել իրենց օրինակին: Պայքարը հաճախ ընդունում էր ինտերնացիոնալ բնույթ, հայերը, ինչպես նաև վրացիները միաբան ուժերով էին հանդես գալիս ընդհանուր թշնամու դեմ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVII ԴԱՐՈՒՄ

Օտար նվաճողների ավերիչ արշավանքներն այնքան հաճախ էին մեկը մյուսին հաջորդում և երկիրը ավերածության հասցնում, որ հայ ժողովրդի բոլոր խավերն ինքնապաշտպանության բնազդով միավորում էին իրենց ուժերը, միասնական ճակատ կազմում գոյատևելու համար: Բայց և այնպես Հայաստանում սոցիալ-դասակարգային պայքարը երբեք էլ չի մարել: Այն միշտ էլ դասակարգային հասարակության ուղեկիցն ու առաջմղիչ ուժն է եղել և հայ իրականության պայմաններում հանդես է եկել մեկ թույլ, մեկ էլ բուռն ու բորբոքված ձևով, շատ անգամ էլ, ինչպես նշել ենք, կրոնական քողի տակ:

Սոցիալական պայքարի վառ օրինակ է 1606—1620 թթ. Գանձասարի վանքի հոգևորական Մեխլու վարդապետի գլխավորած գյուղացիական շարժումը, որը տարածվեց Արարատյան երկրում և անցավ Արևմտյան Հայաստան: Այդ շարժումն ուղղված էր աշխարհիկ և հոգևոր շահագործողների դեմ: Մեխլուն կոչ էր անում վանքերի և ֆեոդալների հողերը գյուղացիներին տալ, նրանց ազատել ձրիակեր շահագործողներից: Շարժումն ընդգրկեց Հայաստանի ու Ադրբեջանի շատ շրջաններ: Այն ուղղված էր ինչպես տեղական, այնպես էլ օտար շահագործողների դեմ: Երբ Մեխլուն եկավ Քանաքեռ, գյուղացիները նրան դիմավորեցին մեծ խանդավառությամբ: Որոշ հետազոտողներ գտնում են, որ այդ շարժման մեջ առավել կարևորը հողատերերի դեմ հայ և ադրբեջանցի գյուղացիների համատեղ ելույթներն են: Մեխլուի շարժումը զգալի չափով ուղղված էր սեֆյանների տիրապետության դեմ: Այդ առումով այն նաև օտար լծի դեմ ազատագրական պայքարի երանգ ուներ: Այդ շարժման դեմ ելան կղերական և ֆեոդալական բոլոր հետադիմական ուժերը: Շարժման մասնակիցների և համակրողների նկատմամբ կիրառվեցին ամենադաժան հալածանքներ ու հետապնդումներ, գործի դրվեցին պատժի արտակարգ միջոցներ: Ապստամբությունը ճնշվեց, բայց նրա գաղափարներն այստեղ կամ այնտեղ դեռ երկար իրենց զգալ էին տալիս:

Գյուղացիական հուզումները շարունակվեցին նաև հետագա տարիներին: 1673 թ. Երևանի խանի, ֆեոդալների ու հոգևորականության դեմ ապստամբեցին Ագուլիսի ու մերձակա գյուղերի բնակիչները: Ապստամբությունը մեծ դժվարությամբ ճնշվեց: Զաքարիա Ագուլեցին հաղորդում է, որ խանի հեծյալ ջոկատը եկավ Ագուլիս և 1000 թուման հարկ պահանջեց, 35 հոգու կախաղան բարձրացրին, ամենուր հալածանք ու սարսափ տարածեցին: 1702 թ. Վանում բռնկված ապստամբությունն օսմանյան իշխանություններն անողոքաբար խեղդեցին: Ղեկավարներին մահապատժի ենթարկեցին, իսկ բնակչության վրա դրեցին դրամական տուգանք: 1671 թ. Երևանի շրջանում, Նախիջևանում, Ղարաբաղում և այլ վայրերում խոշոր ապստամբություն բռնկվեց Սաֆիկուլի խանի դեմ:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

Դարերով հայ ժողովրդի գլխին թափվող արհավիրքը չկոտրեց նրա ազատատենչ ոգին ու ազատագրվելու կամքը, չխորտակեց հայոց պետականության վերականգնման գաղափարը: Ուշագրավ է, որ դեռևս XV դարի 60-ական թվականներին ծագել էր Հայոց թագավորությունը վերականգնելու միտքը: Զաքարիա կաթողիկոսի եղբորորդի Սմբատը 1465 թ. օծվեց «Հայոց թագավոր» և մի քանի տարի անվանապես թագավորեց Վասպուրականում:

1547 թ. Էջմիածնում Ստեփանոս Սալմաստացի կաթողիկոսի գլխավորությամբ գումարվում է Հայաստանի ազատագրությանը նվիրված առաջին գաղտնի ժողովը: Կաթողիկոսը հատուկ նամակով ճանապարհվում է Եվրոպա, բայց Հռոմի պապի և եվրոպական պետությունների հետ նրա բանակցությունները ապարդյուն են անցնում: 1562 թ. Սեբաստիայում Միքայել Սեբաստացի կաթողիկոսի ղեկավարությամբ գումարվում է երկրորդ գաղտնի ժողովը, որն Աբգար դպիր Թոխաթեցու գլխավորությամբ և նրա որդի Սուլթանշահի մասնակցությամբ նոր պատվիրակություն է ուղարկում Հռոմի պապի մոտ: 1575 թ. Լվով, Վենետիկ և Հռոմ է ժամանում նաև Էջմիածնի Թադեոս կաթողիկոսը: Սակայն դա ևս որևէ արդյունք չի տալիս:

Հատուկ խնդրանքով Հռոմին դիմեցին նաև Կիլիկիայի հայերը. «Ամենուրեք մենք սփռված ենք,—գրում էին նրանք,—ինչպես ոչխարները գայլերի մեջ, ինչպես գառները առյուծների մեջ: Բոլորի համար մենք ստրուկ ենք, հպատակ անգութ տերերին, որոնք օր օրի մեզ կեղեքում են, բայց և չեն կշտանում ագահությունից»: Սակայն հայերը ոչ մի տեղից օգնություն չստացան:

XVII դարի 40—60-ական թվականներին Կրետե կղզու համար պատերազմ է սկսվում Վենետիկի հանրապետության և Թուրքիայի միջև, որի հետ ազատագրվելու հույսեր էին կապում հույները, ասորիներն ու հայերը: 1666 թ. բաղիշեցի մահտեսի Մուրադը գնում է Փարիզ և օգնություն խնդրում Լյուդովիկոս XV-ից: Եթե Ֆրանսիայի թագավորը օգ-

Ջանգվի հին կամուրջը (1697 թ.)

նություն ցույց տա, ասում է մահտեսի Մուրադը, ապա հույները, հայերն ու ասորիները ապստամբություն կբարձրացնեն Թուրքիայի դեմ և կազատագրվեն անօրենների լծից: Սակայն օգնություն չստացվեց, և նախապատրաստվող միացյալ ապստամբությունն էլ տեղի չունեցավ:

Հայ ժողովրդի միայն առանձին բեկորներ, լեռներին ապավինած, տեղ-տեղ պահպանել էին հայկական իշխանությունների հետքերը: Այդպիսին էր մանավանդ Զեյթունը, որն իր գլուխը չխոնարհեց նվաճողների առջև և պահպանեց իր կիսանկախ վիճակը, հաջողությամբ հետ մղելով թուրքական կորքերի գրոհները: Տեղական փոքրիկ իշխանություններ էին պահպանվել նաև Սասունում, Սյունիքում, Արցախում, Լոռու և Սևանի ավազանի որոշ շրջաններում: Բայց դրանք անջատ-անջատ, թշնամիներով շրջապատված փոքրիկ իշխանություններ էին, սոսկ տեղական սահմանափակ նշանակությամբ:

1677 թ. Էջմիածնում գումարվեց մի նոր գաղտնի ժողով՝ 6 հոգևորական և 6 աշխարհիկ գործիչների մասնակցությամբ: Դարձյալ որոշվեց պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ օգնություն խնդրելու: Պատվիրակությունը Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գլխավորությամբ անցնում է Վրաստան, ապա Կոստանդնուպոլիս: Այստեղ կաթողիկոսը մահանում է, իսկ պատվիրակության անդամները ցրվում են: Եվրոպա է անցնում միայն պատվիրակության եռանդուն մասնակից և հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրին: Նա լինում է Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում ու ամեն ջանք գործադրում հայ ժողովրդի ազատագրության համար: Ի վերջո գերմանական իշխաններից մեկի՝ Պֆալցի կուրֆյուրստ Իոհան Վիլհելմի հուսադրական նամակներով՝ ուղղված Հայաստանի մելիքներին և վրաց թագավորին, Օրին վերադառնում է Հայաստան:

1699 թ. Սյունիքի Անգեղակոթ ավանում Իսրայել Օրու գլխավորությամբ հայ մելիքների գաղտնի ժողով է գումարվում: Որոշվում է հայ ժողովրդին ազատագրելու խնդրանքով դիմել եվրոպական պետություններին: Մելիքներն իրենց ստորագրություններով և կնիքներով թղթեր ու լայն լիազորություններ են տալիս Իսրայել Օրուն, որը Մինաս վարդապետ Տիգրանյանի հետ մեկնում է Գերմանիա, իր հետ տանելով 36 կետից բաղկացած մի ծրագիր: Սակայն ոչ ոք շահագրգռված չէր հայ ժողովրդի ազատագրության հարցով: Պֆալցի մեծ իշխանը և ավստրիական կայսրը հրաժարվում են որևէ իրական օգնություն ցույց տալ:

Այսպիսով, շուրջ 150 տարի հայոց պատվիրակները բախեցին Հռոմի պապի և եվրոպական պետությունների դռները, դեգերեցին ամբողջ Եվրոպայով մեկ և վերջնականապես համոզվեցին, որ Արևմտյան Եվրոպայի տերությունների հետ ազատագրական հույսեր կապելն ապարդյուն է:

Եվրոպայից հուսախաբ հայ ժողովուրդն իր հայացքը հառեց դեպի հյուսիս՝ Ռուսաստան: Դեռևս XI—XIII դարերում Ռուսիայի հետ հայերն առևտրական կապեր ունեին: Հայ առևտրականներն այցելում էին Կիև, Նովգորոդ, Մոսկվա և այլ քաղաքներ: Ստեղծվել էին նաև որոշ կուլտուրական կապեր: Կիևում կար հայկական փոքրիկ գաղթօջախ: Հայ վարպետները մասնակցել են Վլադիմիր-Սուզդալյան տաճարներից մեկի շինարարությանը, Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմե կույսի պատկերներով նկարազարդվել է Նովգորոդի եկեղեցիներից մեկը, իսկ XIII դարում ռուս նկարիչը հեղինակել է Անիի եկեղեցիներից մեկի որմնանկարները:

Հետագայում, երբ Մոսկովյան պետությունը կորեղանում է, հայ-ռուսական կապերն ավելի են ուժեղանում: XVI դարի կեսերին, երբ Ռուսաստանը գրավում է Կազանն ու Աստրախանը, հայ վաճառականները սկսում են Մոսկվայի հետ առևտուր անել Վոլգայի վրայով: Աստրախանում և Մոսկվայում առաջանում են հայկական գաղթօջախներ: 1660 թ. Նորջուղայեցի Խոջա Զաքարը Ալեքսեյ Միխայլովիչ ցարին նվիրում է թանկագին քարերով զարդարված մեծարժեք մի գահ, որն այժմ էլ պահվում է Մոսկվայի Կրեմլի թանգարանում:

1666 թ. Մոսկվա է ժամանում իրանահայ վաճառականների մի մեծ խումբ, որի հետ էր նաև Ջուղայի հայ վաճառական և Իրանի շահի դեսպանորդ Գրիգոր Լուսիկենցը (Լուսիկով): Նրանք հետամուտ էին ծավալելու իրանական մետաքսի և այլ ապրանքների առևտուրը Ռուսաստանում և նրա վրայով՝ եվրոպական երկրներում:

1667 թ. Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության և ռուսական արքունիքի միջև առևտրական պայմանագիր կնքվեց: Հայ առևտրականներն իրավունք էին ստանում մետաքս, ուղտի բուրդ, ներկեր ու արևելյան այլ ապրանքներ բերել Ռուսաստան և ազատ առևտուր անել: Դա առաջին հայ-ռուսական առևտրական պայմանագիրն էր, որը մեծապես նպաստեց նրանց տնտեսական կապերի զարգացմանը և հող նախապատրաստեց քաղաքական հարաբերությունների համար:

XVII դարի 70-ական թվականներից սկսվում են հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները: 1671 թ. Գանձասարի Պետրոս կաթողիկոսը դիմում

Հայ մելիքների ժողովը Անգեղակոթում (1699 թ.)

Իսրայել Օրի

է Ալեքսեյ Միխայլովիչ ցարին և խնդրում օգնել թեթևացնելու հայերի ծանր վիճակը: Ալեքսեյ Միխայլովիչից օգնություն է խնդրում նաև Էջմիածնի Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը: Այս ամենը նախադրյալներ են ստեղծում հայերի ռուսական կողմնորոշման ձևավորման համար, որի դրոշակակիրը եղավ հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, մեծ հայրենասեր Իսրայել Օրին:

Արևմտաեվրոպական տերություններից հուսախաբված, Իսրայել Օրին եկավ այն վերջնական համոզման, որ միայն Ռուսաստանը կարող է իրական օգնություն ցույց տալ հայերին: Այդ համոզմամբ նա Մինաս վարդապետի հետ 1701 թ. ամռանը ժամանեց Մոսկվա, բանակցություններ վարեց Պետրոս I-ի հետ և նրան ներկայացրեց Հայաստանի ազատագրության իր ծրագիրը: Լավ տեղյակ լինելով Անդրկովկասի և հարևան երկրների վիճակին, Օրին անհրաժեշտ էր համարում պայքարի դուրս բերել Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին և ստեղծել միասնական ճակատ՝ ընդհանուր թշնամու դեմ: Իսրայել Օրու ազատագրական ծրագրերըն ու առաջարկները ռուսական արքունիքում հավանության արժանացան:

Միաժամանակ, Օրին Պետրոս I-ին է ներկայացնում հայ մելիքների նամակը, որտեղ ասված էր. «Եվ թող կորություն լինի ձեզ, որ հաղթենք մեր թշնամիներին, ինչպես հաղթեցինք շատերին, որպեսզի մեզ համար լույս ծագի ձեր տերությունից: Կխնդրենք և կաղաչենք, որ աստծո ողորմությամբ ազատագրեք մեր խեղճ ազգին, որը ենթակա է տարբեր պատահարների... Խնդրում ենք ձեր բարի կամքով ընդառաջեք մեզ և լինեք պարծանք մեր ազգի համար, քանի որ որևէ տեղից ոչ մի հույս չունենք... Մեր որոշումն է, որ մեր իշխաններով ու պարոններով հնազանդվենք ձեր մեծ թագավորությանը»:

Ռուսական արքունիքում Իսրայել Օրու առաջարկությունները քննարկելու ժամանակ այն եզրակացությանը եկան, որ անհրաժեշտ էր ճշտել դեպի Անդրկովկաս ռուսական զորքերի արշավանքի ուղիները, տեղական բնակչության կազմն ու քաղաքական տրամադրությունները, նրանց կողմնորոշումը և այլն: Օրին պատրաստակամություն հայտնեց գլխավորելու այդ գործը և տեղում հայ մելիքների ու ազատագրական շարժման այլ գործիչների հետ միասին քննարկել այդ հարցերը: Օրու դերն ավելի ընդգծելու համար Պետրոս I-ը նրան շնորհում է գնդապետի կոչում, և 1707 թ. նա, Հռոմի պապի ներկայացուցչի անվան տակ, ռուսական դեսպանության կազմում գալիս է Աստրախան, իսկ 1708-ին՝ Շամախի: 1709 թ. նա հասնում է Սպահան: Կաթոլիկ քարոզիչները և ֆրանսիական դեսպանը լուրեր են տարածում, թե ռուսական դեսպան Օրին սերում է հայ թագավորների սերնդից և Ռուսաստանի օգնությամբ ցանկանում է վերականգնել Հայոց պետականությունը: Այդ պատճառով շահի արքունիքում Օրու հանդեպ թշնամական տրամադրություններ են ստեղծվում:

Ռուսաստան վերադառնալիս Օրին հանդիպումներ ունեցավ հայ մելիքների, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի և այլ գործիչների հետ: Դեսպանությունը հօգուտ Ռուսաստանի լայն գործունեություն ծավալեց, կարևոր տեղեկություններ հավաքեց նախատեսվող ռուսական արշավանքի համար:

Օրին կարևոր նշանակություն էր տալիս Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությանն ու համատեղ պայքարին: Այդ և շատ ուրիշ խնդիրների մասին նա մանրամասն զեկուցագիր էր պատրաստում ռուսական կառավարությանը ներկայացնելու, բայց 1711 թ. սեպտեմբերին Աստրախանում հանկարծամահ է լինում:

Օրու մահից հետո ազատագրական շարժման գործը շարունակեցին Մինաս վարդապետը, Եսայի

Հասան-Ջալալյանը և ուրիշներ: Պետրոս I-ը 1711 թ. մարտի 2-ին սենատին հղած հրահանգում գրում էր, որ անհրաժեշտ է «ընդլայնել առևտուրը Պարսկաստանի հետ և հայերին հնարավորին չափ սիրաշահել, արժանվույն կերպով նպաստել և շահագրգռել, որպեսզի հաճախակի այցելեն Ռուսաստան»:

XVIII դարի 20-ական թվականներին պարսկական տերությունը խոր ճգնաժամ էր ապրում: Երկրում անիշխանությունն ու չարաշահումները մեծ չափերի էին հասել: Դրությունն ավելի ծանրացավ, երբ 1722 թ. աֆղանները գրավեցին Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանը: Նրանք ավերեցին Նոր Ջուղան և հայերից մեծ չափերի ռազմական տուրք վերցրին: Դրա հետ մեկտեղ բարդանում էին ռուս-պարսկական հարաբերությունները: Շամախիում ռուսական առևտրականներին կողոպտելն առիթ դարձավ, որ Պետրոս I-ը սկսի իր կասպիական (պարսկական) արշավանքը: 1722 թ. օգոստոսին ռուսական զորքերը մտան Դերբենդ: Պետրոս I-ի կասպիական արշավանքը հսկայական վերելք առաջացրեց ազատության կարոտ հայ և վրաց ժողովուրդների շրջանում: Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը և վրաց թագավոր Վախթանգ VI-ը, 1722 թ. գարնանը և ամռանը հանդիպելով Գանձակում ու Թիֆլիսում, որոշեցին միավորել ուժերը և շարժվել դեպի Շամախի՝ ռուսական բանակին ընդառաջ: Վրաց 30-հազարանոց և Ղարաբաղի հայկական 10-հազարանոց զորքերը 1722 թ. սեպտեմբերի 22-ին, հանդիպելով Գանձակից ոչ հեռու գտնվող Չոլակ կոչվող վայրում, հավատարմության երդում տվին և ապա պատրաստ սպասում էին հրահանգի՝ դեպի Շամախի շարժվելու, որտեղ հոկտեմբերի սկզբներին պետք է միանային ռուսական զորքերին: Սակայն երկու ամիս անց լուր ստացվեց, որ Պետրոս I-ը ներքին ու արտաքին աննպաստ հանգամանքների պատճառով ընդհատել է արշավանքը և վերադարձել Աստրախան: Այդ ծանր լուրը լսելով, հայ-վրացական զորքերը հուսահատ ետ վերադարձան:



Իսրայել Օրու հանդիպումը Պետրոս I-ի հետ
(Նկարիչներ՝ Գ. Ղուկասյան, Գ. Ափիկյան)

Հայերը, շրջապատված թուրք-պարսկական ուժերով, մնացին մեկուսացած և պատրաստվում էին ապատագրական ահեղ մարտերի: Ղարաբաղում (պատմական Արցախում) ստեղծվեցին ռազմական ճամբարներ ու ամրություններ, որոնցից աչքի էին ընկնում Մռավ լեռան ստորոտի Մեծ Սղնախը և Շոշ գյուղի Քարագլուխ կոչվող ամրոցը՝ Փոքր Սղնախը:

Սղնախներ ստեղծվեցին նաև Սյունիքում: Տեղերում մելիքների գլխավորությամբ ստեղծված մարտական ջոկատները, որոնք պարսկական տիրապետության ժամանակ պինական պարտավորություններ էին կատարում, դարձան սղնախների ռազմական ուժերի հիմնական կորիզը: Դրանց շուրջը համախմբվեցին նաև տարբեր տեղերից Ղարաբաղի սղնախները ժամանած հայերը: Իրենց հերոսությամբ հատկապես աչքի ընկան «Շիրվանցի տղերքը», որոնք ծառայել էին Շամախու խանական կորքերի կազմում և 1717 թ. անցել Ղարաբաղ: Նրանցից ամենաաչքի ընկնողն Ավան յուզբաշին էր, որը շուտով դարձավ Ղարաբաղի ռազմական ուժերի ճանաչված ղեկավարն ու ազատագրական պայքարի առաջնորդը:

1723 թ. ամռանը թուրքական կորքերը գրավեցին Թիֆլիսը և ավերեցին այն: Կախեթի թագավոր Կոնստանտինը (Մահմադ կուլի խան) ամրացավ Գանձակում և դիմադրություն կազմակերպեց: Հայ-վրացական միացյալ պինված ուժերը հերոսական պայքարի ելան: Թշնամին Գանձակի պատերի տակ հազարավոր դիակներ թողնելով՝ փախուստի դիմեց: Այդ հաղթանակը թուրքերին ստիպեց մեկ տարով հետաձգել իրենց արշավանքը Երևանի վրա:

1724 թ. հունիսին թուրքական կորքերը Գյումրիի վրայով ներխուժեցին Արարատյան դաշտ և շարժվեցին դեպի Երևան: Թուրք ջարդարարները մասսայաբար գերի տարան Շորագյալի և Ապարանի գյուղերի բնակիչներին: Այնուհետև, շրջանցելով Երևանը, նրանք գրավեցին Նախիջևանը, Օրդուբադը և ապա շարժվեցին Երևանի վրա: Հայ ժողովուրդը հերոսական մարտի ելավ: Թուրքերն անընդհատ համալրումներ ստանալով, իրենց բանակի թվաքանակը հասցրին 70 հազարի: 1724 թ. հունիսի 7-ին սկսված պաշտպանական մարտերը տևեցին երեք ամիս, որոնց մասնակցում էին թվով 5 հազար երևանցիներ և գյուղերից այստեղ եկած հայրենասերներ: Պաշտպանությանը մասնակցում էին նաև Գանձակից և Լոռուց եկած ջոկատները: Հայերը հերոսաբար ետ էին մղում թուրքերի կատաղի հարձակումները, մեծ կորուստներ պատճառում նրանց:

Քաղաքում ստեղծված պարենային դժվարությունները ծանր կացություն էին ստեղծել, բայց ժողովուրդը հերոսաբար շարունակում էր դիմադրել: Սակայն Երևանի Մեհրալի խանը տեղի տվեց և քաղաքը հանձնելու բանակցություններ սկսեց: Թշնամին սեպտեմբերի 26-ին, մոտ 20 հազար կոհ տալուց հետո, ներխուժեց քաղաք և սկսեց այն կողոպտել ու ավերել, իսկ կանանց ու երեխաներին գերի վերցնել:

1725 թ. գարնանը թուրքերին հաջողվեց գրավել Թավրիզը և ապա բոլոր ուժերով շարժվել հայկական սղնախների վրա: Սարու Մուստաֆա փաշայի կորքերը 1725 թ. օգոստոսին գրավեցին Լոռու բերդը, ապա շարժվեցին դեպի Ղազախ, Շամշադին և հոկտեմբերին տիրացան Գանձակին:

1725 թ. փետրվարին Ղարաբաղի Վարանդայի շրջանի հայերը որոշեցին առերես հպատակվել և թուրքական 6-հազարանոց կորամասը բաժանելով 33 գյուղերում, գիշերը ընդհանուր ահազանգով ոչնչացրին 5 հազարին: Նրանք նաև սպանեցին հրամանատար փաշաներից երկուսին, գերի վերցրին երրորդին:

1726 թ. Ղարաբաղի վրա հարձակվող թշնամու 40-հազարանոց բանակը երեքօրյա համառ մարտերից հետո երկու կորապետ և 800 մարդ կորցնելով, ետ մղվեց ու վերադարձավ Գանձակ: Ավան յուզբաշին մեծ հաղթանակ տարավ: Նա այնուհետև Թարխան յուզբաշու հետ պայքարը շարունակեց Դիզակի շրջանում, ամրանալով Տողի բերդում: Սակայն բոլորն էլ այն համոզմանն էին, որ առանց ռուսական կորքի կայուն խաղաղություն ապահովել հնարավոր չէ:

Ռուսաստանից աջակցություն ստանալու միտումով Ավան յուզբաշին և սղնախների մյուս ղեկավարներն իրենց ջոկատներով 1726 թ. անցան Կասպից ծովը ու միացան ռուսական կորքերին, հույս ունենալով նորից վերադառնալ և ռուսական կորքերի օգնությամբ ազատել հայրենի երկիրը:

Ղափանի 50 տանուտերերի ու մելիքների խնդրանքի համաձայն վրաց թագավոր Վախթանգի որդի Շահնավազը (Բակուրը) 1722 թ. վերջին Դավիթ Բեկին իր 30 կտրիճներով ուղարկում է Ղափան՝ ազատագրական շարժումը գլխավորելու: Նրանց թվում էին Մխիթարը, Ավթանդիլը, Բայանդուրը և ուրիշներ:

Մեծ հայրենասեր ու քաջակորով Դավիթ Բեկը Սյունիքում ամենից առաջ լուրջ միջոցների դիմեց տեղում վերացնելու ֆեոդալական ներհակությունները, կապելու մահմեդական ցեղապետերին: Նա ամրացավ Շինուհայր ավանում և իր շուրջը համախմբեց Տաթևի ու շրջակա պինական ուժերին: Թշնամու դեմ մղված մարտերում առաջին իսկ շրջանից իր հերոսությամբ հատկապես աչքի ընկավ Դավիթ Բեկի կորականներից Մխիթար սպարապետը:

Սյունիքում գործող բոլոր խմբերը անցան Դավիթ Բեկի կորավարության տակ: Նրա ղեկավարությամբ ստեղծվեց ռազմական խորհուրդ: Մխիթարը նշանակվեց կորքերի սպարապետ, իսկ կորաջոկատների հրամանատարներն էին Տեր-Ավետիսը, Փարսադանը, Թորոսը, Պապին, Բայանդուրը և ուրիշներ: Շուտով Դավիթ Բեկի կորքերը թշնամուց մաքրեցին Սյունիքը: Ազատագրական ոգին համակել էր հայկական բոլոր շրջանները: 1724 թ. ամռանը կատաղի մարտեր տեղի ունեցան Բարգուշատի և Լևապի շրջաններում, ուր քաջագործություններով աչքի ընկավ Չավնդուրցի մելիք Թորոսը:

Դավիթ Բեկը կարողացավ հերոսական ջանքերի գնով Սյունիքում ստեղծել հայկական ինքնուրույն իշխանություն: Պարսկական շահը ճանաչեց Դավիթ Բեկի իշխանությունը և նրա հետ դաշինք կնքեց:

Պաշտպանության համար ամրացվեցին Որոտանի, Շինուհայրի, Տաթևի, Մեղրիի, Խնձորեսկի բերդերը: Հատկապես աչքի էր ընկնում Հալիձորի անառիկ բերդը:

1725 թ. ուժեղ մարտեր տեղի ունեցան Գողթնում: Դավիթ Բեկը թշնամուն մեծ ջարդ տալուց հետո վերադառնում է Հալիձոր: Սակայն թշնամին Թավրիզից նոր ուժեր հավաքելով, գրավում է Մեղրու Փոքր թաղը: Մեղրեցիները համառ դիմադրություն են ցույց տալիս, մինչև որ Բայանդուր կորավարի ուժերը օգնության են հասնում, թշնամուն փախուստի մատնում ու հետապնդում մինչև Օրդուբադի սահմանները: Թշնամին մեծ կորուստներ է տալիս: Կռիվները շարունակվում էին Բարգուշատում և Սիսիանի լեռներում, որտեղ աչքի են ընկնում Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը:

1726 թ. թուրքական մեծաքանակ կորքերը հարձակվում են Ղափանի վրա, գրավում շրջանի մեծ մասը: Դավիթ Բեկն ամրանում է Հալիձորի բերդում: Թուրքերը պաշարում են Հալիձորի բերդը, քանիցս գրոհում, բայց գրավել չեն կարողանում: 1727 թ. գարնանը, կատաղի մարտերից մեկի ժամանակ, Մխիթար սպարապետն իր մի խումբ կըտրիճներով անակնկալ կերպով բերդից դուրս է գալիս, սրընթաց հարվածում թշնամուն և փախուստի մատնում: Համառ մարտերով առաջ շարժվելով, Դավիթ Բեկի հերոսները թուրքական կորքերից մաքրեցին Ղափանը և շարժվեցին դեպի Մեղրի:

Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը, կազմակերպելով լեռներում ցրված մեղրեցիներին, ծպտյալ մտան Մեղրի, դուրս քշեցին խուճապի մատնված թուրքերին և Արաքսի կիրճում շրջապատելով, ոչնչացրին: Նրանք սրի քաշեցին նաև թուրք հարկահաններին և հրի մատնեցին հարկացուցակները: Մեղրի ժամանեց նաև Դավիթ Բեկը: Նա իր կորքերին միացրեց Մեղրու և Չավնդուրի ջոկատները, Կարճևանով առաջ անցավ և գրավեց Օրդուբադը:

1728 թ. հայ ազատագրական պայքարը մեծ կո-

Դավիթ Բեկի ճակատամարտը Սյունիքում 1727 թ. (Ա. Բեքարյանի կտավից)

րուստ կրեց. մահացավ Դավիթ Բեկը: Նրա մահվանից հետո ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց Մխիթար սպարապետը: Սակայն թուրքերը նոր ուժեր հավաքելով՝ ընդհանուր հարձակում սկսեցին: Մխիթար սպարապետը դառնում է դավադրության զոհ, և ապստամբների ուժերը ջլատվում ու թուլանում են: Այնուհանդերձ հայ ժողովուրդը շարունակեց պայքարը: 1730-ական թվականներին Իրանի գահակալ Նադիր շահը թուրքական զորքերին դուրս քշեց Անդրկովկասից, օգտագործելով նաև տեղական հակաթուրքական ուժերին: Նա հայ մելիքներին ու բարձր հոգևորականությանը սիրաշահելու և օգտագործելու խորամանկ քաղաքականություն էր վարում: Նրա օրոք Ղարաբաղում հիմնվեցին «խամսայի» (հինգ) մելիքությունները: Սակայն ժողովրդի նկատմամբ ճնշումներն ու հալածանքները գնալով սաստկանում էին: Հայաստանի տարբեր շրջաններից հազարավոր աշխատավորներ, շինարար վարպետներ ու արհեստավորներ գաղթեցվեցին Պարսկաստան:

Շուշի քաղաքում Նադիր շահի սպանությունից հետո (1747) Իրանի և Անդրկովկասի քաղաքական վիճակը դարձավ անկայուն: Միջֆեոդալական կռիվները և ավազակային արշավանքները պատուհաս էին դարձել աշխատավոր ժողովրդի գլխին: Քայքայվում էին Ղարաբաղի մելիքությունները: Բայց միաժամանակ հզորանում էր հարևան Վրաստանը, որը եղբայրական սերտ կապերի ու համագործակցության մեջ էր Հայաստանի ու հայ ժողովրդի հետ:

1760 թ. վրաց Թեյմուրազ II թագավորը մեկնում է Ռուսաստան՝ օգնություն խնդրելու: Նույն թվականին հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցին հատուկ կոնդակով դիմում է Ելիզավետա կայսրուհուն, խնդրում հաշվի առնել Հայաստանի և Վրաստանի ծանր կացությունը, ընդառաջել Թեյմուրազին և օգնության ձեռք մեկնել: Նրա հաջորդը՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, ավելի եռանդուն գործունեություն ծավալեց: Նա հայ ժողովրդին օգնության ձեռք մեկնելու խնդրագիր ուղարկեց Եկատերինա II կայսրուհուն: Հայ-ռուսական հարաբերությունները ավելի ուժեղացան, և Ռուսաստանի օգնությամբ Արևելյան Հայաստանի ազատագրումը դարձավ օրակարգի հարց: Այդ ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալեցին ինչպես ռուսահայ, այնպես էլ հնդկահայ գաղթավայրերը, հայ ազատագրական շարժման ականավոր գործիչները:

Այս շրջանի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից է մեծ հայրենասեր Հովսեփ Էմինը, որը 1759—1760 թվականներին լինելով Հայաստանում և Վրաստանում, համոզվում է, որ հայոց ազատագրությունը կարող է իրականանալ միայն Ռուսաստանի աջակցությամբ: 1761 թ. աշնանը Էմինը Լոնդոնից գալիս է Պետերբուրգ, հանդիպում ռուսական կանցլեր կոմս Մ. Վորոնցովի հետ: Նա Հերակլ II-ին ներկայացնում է հայ և վրաց ժողովուրդների ազատագրման ու միացյալ պետություն ստեղծելու իր ծրագիրը: Հերակլ II-ը սկզբում հաճույքով է ընդունում Էմինին և համաձայնում նրան օժանդակել: Էմինի հորդորանքով Մշո սուրբ Կարապետ վանքի վանահայր Հովնանը լայն աշխատանք է ծավալում ռազմական ջոկատներ կազմակերպելու, ապագա ապստամբության մասնակիցներ հավաքագրելու ուղղությամբ: 1764 թ. Էմինը գնում է Ղարաբաղ՝ մելիքների պայքարը կազմակերպելու համար: Հաջողության չհասնելով, նա վերադառնում է Վրաստան և, չստանալով վրաց թագավորի աջակցությունը, 1768 թ. հուսախաբ մեկնում է Հնդկաստան:

XVIII դարի 70—80-ական թվականներին հնդկահայ գործիչները և հատկապես Մադրասի հայրենասերների խմբակը լայն աշխատանք ծավալեցին Հայաստանի ազատագրման և անկախ պետության ստեղծման համար: Այդ խմբակի անդամներից Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, Գրիգոր Խոջաջանյանը և ուրիշներ հայ ժողովրդի ազատագրման խնդիրը կապում էին նրա ապստամբական պայքարի հետ: Ազատագրական պայքարի հաջող ելքի համար նրանք անհրաժեշտ էին համարում զինված օգնություն ստանալ Ռուսաստանից և Վրաստանից: Թուրք-պարսկական տիրակալությունից ազատագրվելով՝ հայերը պետք է ստեղծեին անկախ պետություն: Այդ նպատակին հասնելու համար նրանք խնդիր էին դնում առաջին հերթին ժողովրդի մեջ տարածել լուսավորություն, երիտասարդությանը կազմակերպել և նրան տեղյակ դարձնել հայրենի երկրի պատմությանն ու աշխարհագրությանը, նրան դաստիարակել հայրենասիրական գաղափարներով: Դրա համար Շահամիր Շահամիրյանը 1771 թ. Մադրասում իր հիմնադրած տպարանում հրատարակում և Հայաստան ու հայաբնակ վայրեր է առաքում հայրենասիրական գրականություն: Նա նամակագրական կապեր է հաստատում Ղարաբաղի մելիքների, Էջմիածնի կաթողիկոսի և Հերակլ II-ի հետ: Մադրասի խմբակի աշխատանքն ավելի է աշխուժանում, երբ Մադրաս է գալիս Հովսեփ Էմինը, որի ազատագրական գաղափարներն ավելի են ոգևորում հնդկահայերին:

1772 թ. Շահամիրյանի տպարանում տպագրվում է Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» աշխատությունը: Դա հայ իրականության մեջ առաջին քաղաքական-հրապարակախոսական գիրքն էր, որը խոշոր նշանակություն ունեցավ

հայ հասարակական մտքի զարգացման գործում: Մադրասցիները «Նոր տետրակի» օրինակներն ուղարկում են Էջմիածին, Ղարաբաղ, Աստրախան, Պետերբուրգ և հայաշատ այլ վայրեր: Նրանք ջերմորեն պաշտպանում էին Ղարաբաղի մելիքների և Հերակլ II-ի միասնությունը, Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու գաղափարը:

Շահամիր Շահամիրյանի որդի Եղիազարի ջանքերով, որը 1785 թ. Պետերբուրգ էր եկել ռուսական կառավարությանը ներկայացնելու հայ ժողովրդի ազատագրման հնդկահայերի ծրագիրը, 1785 թ. «Նոր տետրակը» Պետերբուրգում հրատարակվեց նաև ռուսերեն: Այդ հրատարակությունը ռուս մտավորականության ուշադրությանն արժանացավ: Նրա բաժանորդներից էին նաև Սուվորովն ու Կուտուզովը: Հայ հասարակական և քաղաքական մտքի զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև Շ. Շահամիրյանի 1773 թ. տպագրված «Որոգայթ փառացը»: Դա երկրորդ քաղաքական-հրապարակախոսական գիրքն էր, որտեղ զարգացվում էր բուրժուական հանրապետության գաղափարը, մերժվում ազնվականության և եկեղեցականների դասային արտոնությունները, ճորտությունն ու ավատատիրական կարգերը: Հեղինակի կարծիքով ապագա հայոց պետության բարձր մարմինը՝ «Հայոց տունը» (պառլամենտը) պետք է ընտրվեր առանց ցենզի, բոլորի կողմից, երկաստիճան ընտրական սիստեմով: «Որոգայթ փառացի» համաձայն, եկեղեցին պետք է անջատված լիներ պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց: Հայաստանի բուրժուական հանրապետությունը պետք է լիներ Ռուսաստանին դաշնակից և բարեկամ:

Սահմանադրական բուրժուական հանրապետության այս ծրագիրն իր ժամանակի առաջադեմ մտքի կարևոր վավերագրերից էր, որը նշանակալից ազդեցություն ունեցավ հայ հասարակական մտքի զարգացման վրա:

1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Հայաստանի ազատագրության հույսերը նորից կենդանացան, և դրա արտահայտությունն էր Աստրախանի բնակիչ Մովսես Սարաֆյանի՝ 1769 թ. Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային ներկայացրած Հայաստանի ազատագրման ծրագիրը: Այնտեղ խնդիր էր դրվում ռուսական և վրացական զորքերի, հայ կամավորական խմբերի ու Ղարաբաղի մելիքների օգնությամբ ազատագրել Հայաստանը և Ռուսաստանի հովանավորությամբ ստեղծել ինքնուրույն հայկական պետություն՝ հայ մելիքներից մեկի թագադրումով:

Այդ շրջանում Ռուսաստանի համար հրատապ հարց դարձավ Կասպից ծովի ավազանում ամրապնդվելը: Դրա համար ծրագրվում էր գրավել Անդրկովկասը և Ռուսաստանի հովանավորության տակ առնել տեղի ժողովուրդներին: Այդ ծրագրի իրագործումը հանձնարարվեց ռուս մեծ զորավար Ա. Սուվորովին, որը 1780 թ., նախքան Աստրախան մեկնելը, Պետերբուրգում հանդիպումներ ունեցավ արքեպիսկոպոս Հովսեփ Արղության և Հովհաննես Լազարյանի հետ: Այդ հանդիպումների ժամանակ Ա. Սուվորովը մանրամասն տեղեկություններ հավաքեց Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի մասին: Նա հայ գործիչներին հուսադրում էր, որ հայկական պետականության վերականգնումը մոտակա խնդիր է դարձել: Սուվորովի նշանակման լուրը Ղարաբաղում և հայկական շատ շրջաններում ոգևորությամբ ընդունվեց:

1783 թ. Հ. Արղության 18 կետից բաղկացած «Հյուսիսային ծրագրի» նախագիծը ներկայացվեց ռուսական արքունիք, որում խնդիր էր դրվում Ռուսաստանի հովանավորության տակ վերականգնել հայկական թագավորությունը: Եկատերինա II-ը Հայոց թագավոր պետք է ընտրեր հայերից կամ ռուսներից, որը պետք է օծվեր Էջմիածնում: Հայաստանում պետք է պահվեր ռուսական զորք: Հայոց մայրաքաղաքը պետք է լիներ Վաղարշապատը կամ Անին: Հայկական թագավորությունն իր դրոշը պիտի ունենար և դրամ կտրելու իրավունք:

Հայ-ռուսական պայմանագրի մի ուրիշ նախագիծ է կազմում Շ. Շահամիրյանը, որի համաձայն Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն: Հայոց կառավարությունը ղեկավարելու էր ազգությամբ հայ նախարարը: Հայաստանն իր մշտական դեսպանը պետք է ունենար Պետերբուրգում: Ապահովության համար ռուսական 6-հազարանոց զորամասը պետք է մնար Հայաստանում և միայն քսան տարվա ընթացքում մաս-մաս հեռանար: Անհրաժեշտության դեպքում Հայաստանը Ռուսաստանի տրամադրության տակ կդներ 6-հազարանոց զորամաս և այլն:

Այս բոլոր ծրագրերն ու մտորումներն արտահայտում էին հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ վերականգնել հայոց՝ դարերի խորքից եկող պետականությունը: Սա ապացույց է այն բանի, որ հայ ժողովուրդը, դարերի խաչմերուկներում կորցնելով իր իրական պետականությունը, ջերմորեն փայփայել էր, սակայն, պետականության ստեղծման վեհ գաղափարը:

Վրաց թագավոր Հերակլ II-ը 1782 թ. խնդրում է Ռուսաստանի հովանավորությունը և 1783 թ. հուլիսի 24-ին Գեորգիևսկում կնքված պայմանագրի համաձայն Քարթլի-Կախեթի թագավորությունը ստանում է այն:

Այդ նույն ժամանակ Պարսկաստանում իշխանության համար ներքին պայքարն ավարտվում է կաջարների հաղթանակով: Այդ հարստության հիմնադիր Աղա Մահմադ շահը 1795 թ. հունիսի վերջերին 50 հազար կորքով ավերիչ արշավանք է սկըսում դեպի Անդրկովկաս: Նա Ղարաբաղից հարձակվում է Վրաստանի վրա, սեպտեմբերի 12-ին գրավում է Թիֆլիսը, բնակչությանը սրի քաշում, մի մասին էլ գերի վերցնում:

Աղա Մահմադ շահի ավերիչ արշավանքը խիստ հարված հասցրեց Ռուսաստանի հեղինակությանը: Այն վերականգնելու նպատակով ռուսական զորքերը 1796 թ. ապրիլին Վ. Զուբովի հրամանատարությամբ Ղզլարից սկսում են իրենց արշավանքը դեպի Անդրկովկաս: Վ. Զուբովի հետ էր նաև Հ. Արղությանը, որը հայ կանգվածներին կոչ էր անում բոլոր միջոցներով օգնել ռուսներին: Ռուսական զորքերը մայիսին գրավում են Դերբենդը, ապա Ղուբան, Բաքուն, իսկ դեկտեմբերին՝ Գանձակը: Հայ բազմաչարչար բնակչությունն ամենուր գրկաբաց է ընդունում ռուս զորքերին:

Սակայն շուտով ստացվում է նոր կայսր Պավել I-ի հրամանը արշավանքը դադարեցնելու և զորքերը վերադարձնելու մասին:

1797 թ. Աղա Մահմադ շահը նոր արշավանք է սկսում: Շահի զորքերը, գրավելով Շուշին, սկսում են ավերել ու կողոպտել Ղարաբաղը, նպատակ ունենալով ասպատակել ամբողջ Անդրկովկասը: Սակայն 1797 թ. մայիսին Շուշիում շահն իր սպասավորների ձեռքով սպանվում է, և պարսկական զորքերը խուճապահար փախուստի են դիմում: Այնուհանդերձ դրությունն Անդրկովկասում մնում է լարված: Թուրքական փաշաների ու պարսկական խաների հարձակումները, ներքին միջֆեոդալական կռիվները, սովն ու համաճարակը երկրամասը հասցրել էին ծայրահեղ քայքայման ու ավերածության: Փրկության միակ ելքը Ռուսաստանին միանալն էր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Արաբական տիրակալության անկման և հայկական թագավորության վերականգնման (մինչև մոնղոլական արշավանքը), ինչպես նաև Զաքարյանների շրջանում և հետագա տարիներին հայ մշակույթը ժամանակ առ ժամանակ պատմական տըվյալ ժամանակաշրջանի ընձեռած հնարավորության համեմատ կգալի առաջընթաց ապրեց:

Հայաստանում և Կիլիկիայում գործում էին նախնական և բարձր տիպի դպրոցներ: Նախնական դպրոցներում ուսուցանում էին գրել, կարդալ, թվաբանություն, երաժշտություն, իսկ բարձր տիպի դպրոցներում կամ վարդապետարաններում, որտեղ կրթությունը տևում էր 10—12 տարի, դասավանդում էին մաթեմատիկա, գրականություն, պատմություն, աստվածաբանություն, փիլիսոփայություն, տիեզերագիտություն, բժշկություն, երաժշտություն և այլ առարկաներ: Վարդապետարաններ էին գործում Հաղպատում, Սանահինում, Դպրեվանքում (Անիի մոտ), Տաթևում, Կեչառիսում, Գեղարդում, Գոշավանքում, Հաղարծնում, Խորանաշատում, Նարեկավանքում և այլուր:

Գլաձորի համալսարանը (հիմնադրված 1282 թ.) գիտության և մշակույթի խոշոր կենտրոն էր, որը ղեկավարում էր նշանավոր գիտնական-փիլիսոփա և քերական Եսայի Նչեցին: Գլաձորի համալսարանը գործեց մինչև 1340-ական թվականները:

Կրթության և լուսավորության կարևոր կենտրոն էր Տաթևի համալսարանը, որը գործեց 1373—1412 թթ., խոշոր մտածողներ Հովհաննես Որոտնեցու և ապա Գրիգոր Տաթևացու (1346—1409) ղեկավարությամբ: Ուսումնառության ընթացքում այստեղ աշակերտներին դասավանդում էին գիր-գրականություն, երաժշտական, նկարչական, ձեռագրագիտական արվեստներ, ինչպես նաև փիլիսոփայություն, տրամաբանություն, աշխարհագրություն, բնագիտություն և այլն:

Կարևոր ուսումնակրթական կենտրոն էր նաև Մեծոփի դպրոցը, որը գլխավորում էին Հովհաննես և Թովմա Մեծոփեցիները: Թովմա Մեծոփեցու գըրչին էր պատկանում լեզվաուսուցողական առաջին հայերեն դասագիրքը: Նրա մահվանից հետո (1446) Մեծոփի դպրոցը կորցնում է իր նշանակությունը:

Հայաստանում և հայկական գաղթավայրերում XVII—XVIII դարերում մշակութային կյանքը վերակենդանանում է: Ստեղծվում են բազմաթիվ կրթական ու մշակութային կենտրոններ: Կարևոր երևույթ էր XVII դարի սկզբին Սյունաց Մեծ կամ Հարանց անապատում կրթական գործի կազմակերպումը Մովսես Մոկացու գլխավորությամբ: 1615 թ. այստեղ է գալիս նաև Մովսես Տաթևացին, որի ջանքերով ստեղծվում է ուսումնական նշանավոր կենտրոն: Պողոս Մոկացու աջակցությամբ դպրոցներ են կառուցվում Աստապատում, Շոռոթում, Ագուլիսում, իսկ 1620-ական թվականներին՝ նաև Հովհաննավանքի դպրոցը: Այն հետո տեղափոխվում է Էջմիածին, որտեղ դասավանդում են Սիմեոն Ջուղայեցին, Ոսկան Երևանցին, Ստեփանոս Լեհացին և ուրիշներ:

XVII դարի 30-ական թվականներին հիմնվում է Նոր Ջուղայի դպրոցը: Իր գոյության 50 տարիների ընթացքում այդ դպրոցը բեղմնավոր գործունեություն է ծավալում, գործնական գիտելիքներ հաղորդում աշակերտներին: Դպրոցի ուսուցիչ Կոստանդ Ջուղայեցին կազմում է թվաբանության դասագիրք: Ուսուցիչներից ու սաներից ոմանք աչքի ընկնող դեր են կատարում հայ ազատագրական և լուսավորական շարժման մեջ:

1717 թ. Վենետիկի մոտ՝ Սուրբ Ղազար կղզում, Մխիթար Սեբաստացին հիմնում է Մխիթարյան միաբանությունը: Այդ միաբանության դպրոցի առաջին ուսուցիչը ինքը՝ Մխիթար Սեբաստացին էր: Այստեղ դասավանդում էին աստվածաբանություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, քերականություն: Մխիթարյանները մեծ դեր կատարեցին հայագիտության զարգացման բնագավառում:

Միջին դարերում գիտության տարբեր բնագավառներում հանդես եկան բազմաթիվ ականավոր գիտնական-մտածողներ: Նրանցից Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Ստեփանոս Տարոնցին (X դ.), Արիստակես Լաստիվերտցին (XI դ.), Մատթեոս Ուռհայեցին, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Ականցին, Վանական վարդապետը, Ստեփանոս Օրբելյանը (XII—XIII դդ.) մեծ ավանդ մուծեցին հայ պատմագրության մեջ: Պատմագիտական մեծ արժեք են ներկայացնում նաև Առաքել Դավրիժեցու, Գրիգոր Դարանաղցու, Երեմյա Քեոմուրճյանի, Զաքարիա Քանաքեռցու, Աբրահամ Կրետացու, Աբրահամ Երևանցու (XVII դ.) և ուրիշների աշխատությունները, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են ոչ միայն հայ, այլև հարևան ժողովուրդների պատմության համար:

Հայ պատմագրությունն ավելի բարձր զարգացման է հասնում XVIII դարում: Նշանավոր պատմաբան Միքայել Չամչյանը (1738—1823), պատմահայր Մովսես Խորենացուց հետո, առաջին անգամ և օտար աղբյուրների հարուստ նյութերի օգտագործմամբ շարադրում է Հայաստանի ամբողջական սիստեմատիկ պատմությունը՝ սկզբից մինչև իր օրերը, երեք ստվար հատոր: Չամչյանը մեծ ազդեցություն է գործել հայ պատմագիտական մտքի զարգացման վրա, ունեցել է իր հետևորդներն ու երկրպագուները:

XVIII դարի հայ ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրության համար բացառիկ արժեք են ներկայացնում Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմություն Աղվանից» և Ստեփանոս Շահումյանի «Ընտիր պատմություն Դավիթ Բեկին» աշխատությունները:

Փիլիսոփայության և բնական գիտությունների ականավոր դեմքերից են Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990—1058), Հովհաննես Սարկավագը (1045—1129), որը նաև մաթեմատիկոս, բնագետ ու տոմարագետ էր, իսկ Կիլիկիայում աչքի ընկավ Վահրամ Ռաբունին:

XII—XIII դդ. խոշորագույն օրենսգիրը Մխիթար Գոշն էր, որի կազմած «Դատաստանագիրքը» կարևոր գիտական և պատմական արժեք ունի: Նրա օրինակով Սմբատ Գունդստաբլը կազմեց Կիլիկիայի գործող դատաստանագիրքը:

Բժշկության ասպարեզում աչքի ընկան Մխիթար Հերացին, որը 1184 թ. ավարտեց «Ջերմանց մխիթարություն» աշխատությունը, նշանավոր բժիշկ-բնագետ Ամիրդովլաթ Ամասիացին (1414—1496), որի աշխատությունները գիտական և գործնական խոշոր նշանակություն ունեցան:

1611 թ. լույս է տեսնում Աբրահամ Պոլսեցու կենդանաբանական ձեռնարկը: 1781 թ. Ս. Աղամալյանցը հրատարակում է իր «Թվաբանություն» դասագիրքը, իսկ 1794 թ. լույս է տեսնում Սահակ Պրոնյանի «Երկրաչափությունը»: Հայտնի բժիշկ-գիտնական Պետրոս Քալանթարյանը, որն աշխատում էր Մոսկվայում, 1793 թ. Նոր Նախիջևանում հրատարակում է «Բժշկարան» ուշագրավ ուսումնասիրությունը: Նա ծանոթ էր ոչ միայն եվրոպական, այլև միջնադարյան ու արաբական բժշկությանը: Ստեփանոս Շահրիմանյանը, որը ճանաչված բժիշկ և բնագետ էր, 1791—1796 թթ. Կ. Պոլսում պայքարելով վարակիչ հիվանդությունների դեմ, գրել է ժանտախտի մասին իր աշխատությունը, որը ծանրակշիռ ուսումնասիրություն է: Նա գրել է նաև ուշագրավ աշխատություն Հայաստանի բուսական աշխարհի մասին:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ավետիք Բաղդասարյանի (Տիգրանակերտցու) «Տեֆտեր գիրք» աշխատությունը, որտեղ ամփոփված են գիտության բազմաթիվ ճյուղերին վերաբերող նյութեր:

IX—X դարերում ձևավորվեց «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը, որում արտացոլվել է հայ ժողովրդի հերոսական պայքարն արաբական տիրապետության դեմ: Սա հայ ժողովրդի հիանալի ստեղծագործությունն է, որտեղ խտացված են մարդասիրության, բարեկամության և ռամկասիրության վեհ գաղափարները: Էպոսի հերոսները դատապարտում են կավթողական պատերազմները, կռվում արդարության, ազատության և իրենց հայրենիքի անկախության համար:

Այդ շրջանում ստեղծվեցին նաև մի շարք կարևոր գրական երկեր: Դրանց մեջ առանձնակի տեղ է գրավում Գրիգոր Նարեկացու (951—1003) «Մատյան ողբերգության» հանճարեղ պոեմը: Պակաս արժեքավոր չեն նաև Ներսես Շնորհալու (1101—1173) «Ողբ Եդեսիո» պոեմը և բազմաթիվ այլ բանաստեղծություններ ու հանելուկներ, Ֆրիկի (1234—1315)՝

Միջնադարյան մանրանկար

անհավասարությունն ու անարդարությունը խարազանող բանաստեղծությունները: Սիրո և գեղեցկության անկուգական երգիչ էր Կոստանդին Երզնկացին:

Գրականության մեջ հանձինս Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առաջ եկավ ու կարգացավ առակագրությունը, որի սոցիալական արժեքը շատ մեծ է, քանի որ առակներում մերկացվում են ճընշումն ու շահագործումը, ագահությունն ու շահամոլությունը:

XV—XVIII դարերում վերակենդանացվում և նորովի է շարադրվում անցյալի գրական ժառանգությունը: Այդ նկատվում է «Շարակնոց» և «Գանձարան» կոչվող ժողովածուներում, որոնցում, եկեղեցականից բացի, կցալի տեղ է գրավում նաև ժողովրդի քաղաքացիական պատմությունը: Տվյալ ժամանակաշրջանին բնորոշ են «Տաղարան» կոչվող ժողովածուները, որոնք ընդունվում էին որպես երգարան և ընթերցարան: Դրանց մեջ պետեղվում էին ժողովրդական երգեր և բանահյուսական արժեքավոր ստեղծագործություններ: Դրանցից հատկապես ուշագրավ են «Տաղ սիրոյ, գարնան և ուրախության» շարքերը: Զարգանում են նաև կենցաղային երգիծական բնույթի առակ-ասացվածքներն ու բանաստեղծությունները, ձևավորվում է միջնադարյան առակների «Աղվեսագիրք» խորագիրը կրող ժողովածուն: Բանաստեղծությունների «Ողբ» շարքը նկարագրում էր կոտորածները, բռնությունները, գերեվարությունը, մանկահավաքը և այլ կարգի դըժբախտ դեպքեր:

Զարգանում ու տարածվում էին նաև աշուղական երգերը: XIV դարի վերջի և XV դարի սկզբի գրողներից էին Առաքել Սյունեցին, Գրիգոր Խլաթեցին, Առաքել Բաղիշեցին, Մկրտիչ Նաղաշը և ուրիշներ: Մկրտիչ Նաղաշը հայտնի է նաև իր նկարչական ու տաճարաշինական աշխատանքներով: Նա է առաջին անգամ մշակել ու հատուկ ձև տվել պանդըխտության երգերին:

Մկրտիչ Նաղաշի՝ ժողովրդի հույզերը արտահայտող երգերը լայն տարածում գտան և դրանց ազդեցությամբ նոր երգեր հյուսվեցին: XVI դարում հրապարակ եկան մի շարք ականավոր տաղասացբանաստեղծներ, որոնց շարքում հատուկ տեղ է գրավում Գրիգորիս Աղթամարցին, որը նաև բարձր ձիրքով օժտված նկարիչ էր: Այդ ժամանակաշրջանի մեծ համբավ ձեռք բերած երգիչ-բանաստեղծներից է Նահապետ Քուչակը: Զգալի հետաքրքրություն են ներկայացնում Սիմեոն Ապարանցու, Հովսեփ Սեբաստացու, Թադևոս Սեբաստացու, Մինաս Թոխաթացու հայրենասիրական բանաստեղծությունները:

XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի ամենաականավոր բանաստեղծը, երգիչ-երաժիշտն ու նկարիչը Նաղաշ Հովնաթանն էր, որը հրավիրվում է Թիֆլիս՝ որպես վրաց արքունիքի պալատական նկարիչ ու երգիչ: Նա ստեղծել է սիրային և բարոյախրատական երգերի մի ամբողջ շարք: Նրա ստեղծագործության մեջ հատուկ տեղ են գրավում աշխատավոր մարդու ծանր դրությունը, սոցիալական անհավասարության դեմ բողոքը:

Ականավոր գրող-բանաստեղծ էր Պաղտասար դպիրը: Նրա Տաղարանները XVIII դարում հրատարակվել են յոթ անգամ: Պաղտասար դպիրը հայատառ թուրքերենով հրատարակում է բազմաթիվ աշխատություններ: Նրա գործը շարունակեց իր աշակերտ Պետրոս Ղափանցին: Հայրենիքի կարոտն արտահայտող «Ղարիպ» և «Կռունկ» շարքերը կատարելության են հասնում նրա ստեղծագործություններում:

Միջնադարյան մանրանկար

Միջնադարյան մանրանկար

Միջնադարյան մանրանկար



Միջնադարյան մանրանկար

Սայաթ Նովա

XVIII դարի վերջի երգի ու բանաստեղծության թագն ու պարծանքը Սայաթ-Նովան է, որը գուսանական երգաձևի միջոցով տվեց խոր ժողովրդականությամբ և անկրկնելի արվեստով աչքի ընկնող բանաստեղծական նոր հորինվածքներ: Նա ստեղծագործում և երգում էր հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն ու պարսկերեն: Սայաթ-Նովայի ստեղծագործության նյութը սիրերգությունն է, աշխատավորական խավերի առօրյա կյանքի արտացոլումը:

Միջին դարերում այս կամ այն չափով կարգացան արվեստի տարբեր ճյուղեր, հատկապես հայկական ճարտարապետությունը: Դրա փայլուն կոթողներից են Անիի հուշարձաններն ու մոնումենտալ կառույցները, Հաղպատի, Տաթևի, Հաղարծինի, Սանահինի, Խորանաշատի, Մարմաշենի, Նոր Վարագի, Կեչառիսի վանքերը և ուրիշ շենքեր: Վասպուրականում իր նշանավոր կառույցներով հայտնի դարձավ ճարտարապետ Մանվելը: Վանա լճի Աղթամար կղզում նրա կառուցած եկեղեցին գողտրիկ մի հրաշալիք է:

Մեծ կարգացում ապրեց խաչքարագործական արվեստը: Հայոց խաչքարերը ոչ միայն արվեստի, այլև հայ ժողովրդի հոգեկան աշխարհն ամփոփող կերտվածքներ են, իմաստության ու հարատևության խորհրդանիշներ:

X—XVIII դարերում մեծ վերելք ապրեցին նաև մանրանկարչությունը, ձեռագրերի կարդարումը գլխագրերով ու լուսանցքազարդերով: Մանրանկարչությունը կգալի առաջընթաց ապրեց Անիում, Հաղպատում, Գլաձորում, Վասպուրականում, Կիլիկիայում և Ղրիմի գաղթօջախներում: Կիլիկիայում հանդես եկան մանրանկարչության այնպիսի մեծատաղանդ վարպետներ, ինչպիսիք են Թորոս Ռոսլինը, Սարգիս Պիծակը և ուրիշներ:

Որոշ կարգացում ապրեց նաև կիրառական արվեստը, հատկապես գորգագործությունը: Հայկական գորգերն արտահանվում էին շատ երկրներ և մեծ հռչակ ունեին: Հայտնի էին հատկապես հայկական «վիշապագորգերը»:

Եղեգնաձորի շրջան. Նորավանք (XIII դ.)



Միջնադարյան պատկերաքանդակ

Եղեգնաձոր. Արենիի վանքը

Արվեստը կարգանում էր և հայ գաղթավայրերում: Լվովում XVII դարում հայտնի էր հայազգի դիմանկարիչ Բոգուշների ընտանիքը, Նոր Ջուղայում՝ նկարիչ Հովհաննես Մրքուզը, Մինասը և ուրիշներ, որոնք կրում էին Արևմուտքի նկարչական ռեալիստական արվեստի բարերար ազդեցությունը: Նոր Ջուղայի հայ արվեստագետներից Բոգդան (Աստվածատուր) Սալթանովը, 1666 թ. հաստատվելով Մոսկվայում, աշխատում էր Զինապալատում և կգալի դեր խաղաց ռուսական արվեստի կարգացման գործում:

XVIII դարի հայ նկարչական արվեստը մեծ չափով կապված է Հովնաթանյանների տաղանդավոր գերդաստանի և նրանց նախահոր՝ Նաղաշի անվան հետ, որի հետնորդները լայն գործունեություն ծավալեցին Երևանում, Էջմիածնում ու Թիֆլիսում և հայ գեղանկարչությունը կարգացման մի նոր աստիճանի հասցրին:

Զգալի կարգացում ապրեց նաև երաժշտությունը: Հատուկ խազերով գրանցվում էին հոգևոր երգեր և երաժշտական այլ գործեր: Գուսանական երգերը մեծ տարածում գտան: Կրոնական ծեսերը, ինչպես նաև ժողովրդական տոները նշանավորվում էին երգեցողությամբ:

Հայ մշակույթի պահպանման ու կարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ տպագրա-

Արթիկի շրջան. Հառիճի վանքը



Եղեգնաձոր. Գլաձորի համալսարանը



Աղթամարի տաճարը

կան գործը: 1512 թ. Վենետիկում Հակոբ Մեղապարտի ջանքերով տպագրվեցին առաջին հայերեն գրքերը՝ «Ուրբաթագիրքը», «Պատարագ տետրը», «Աղթարքը», «Պարզատումարը», «Տաղավարը», «Տաղարանը»: Հատկապես ուշագրավ է «Տաղարանի» հրատարակությունը, որն ընդգրկում է Շնորհալու, Ֆրիկի, Հովհաննես Թլկուրանցու, Մկրտիչ Նաղաշի և այլոց բանաստեղծությունները:

Աբգար դպիր Թոխատեցին 1565 թ. Վենետիկում տպագրեց տոմարացույցը, իսկ հաջորդ տարում՝ Սաղմոսարանը: Ապա տպագրական պարագաներով նա վերադառնում է Կ. Պոլիս և այնտեղ շարունակում տպագրական գործը:

Կարևոր դեր խաղաց Հովհաննես Քարմատանենցու 1616 թ. Լվովում ստեղծած տպարանը, որտեղ տպագրվում էին հայերեն և հայատառ ղփչաղերեն գրքեր: Հայերեն գրքեր են տպագրվում 1642 թ. Վենետիկում և 1644 թ.՝ Լիվոռնոյում:

Խաչատուր Կեսարացու ջանքերով 1638 թ. Նոր Ջուղայում ստեղծվում է տպարան, ուր սկսում են հայերեն գրքեր տպագրել: Ամստերդամում հիմնըվում է Մատթեոս Ծարեցու տպարանը, որի մահվանից հետո (1661) նրա գործը շարունակում են Կարապետ Անդրիանացին և Ոսկան Երևանցին: Այնուհետև տպարանը տեղափոխվում է Լիվոռնո և ապա Մարսել, որտեղ գործում է մինչև 1680-ական թվականների վերջը: Ոսկան Երևանցու աշակերտներից Մատթեոս Վանանդեցին Ամստերդամում հիմնեց նոր տպարան, որը սկսեց գործել 1685 թ. և 1695 թ. լույս ընծայեց առաջին հայերեն քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյցը», Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և այլ գրքեր:

Հայ տպագրության նշանավոր կենտրոն է դառնում Կ. Պոլիսը, որտեղ 1698 թ. Գրիգոր Մարզվանեցին լույս ընծայելով «Տաղարանը», հիմք է դնում այն մեծ գործին, որը շարունակվում է 150 տարի: XVIII դարում Կ. Պոլսում ու Զմյուռնիայում գործում էին շուրջ երկու տասնյակ հայկական տպարաններ:

Հնդկաստանի Մադրաս քաղաքում 1772 թ. Շահամիրյանները ստեղծեցին հայկական տպարան, որտեղ, ինչպես նշվեց, լույս տեսան «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» և «Որոգայթ փառաց» աշխատությունները: 1794 թ. Հարություն Շմավոնյանի հիմնած տպարանում սկսեց լույս տեսնել հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարարը»: Այնուհետև տպարանը տեղափոխվում է Կալկաթա, որի տնօրեն Հովսեփ Ստեփանոսյանը 1796 թ. տպագրում է Աբրահամ Կրետացու «Պատմութիւն անցիցը» և այլ գրքեր:

1781 թ. Գրիգոր Խալդարյանցը Պետերբուրգում հիմնադրած տպարանում տպագրում է «Տետրակ

Կամոյի շրջան. Հայրավանք

Նորատուս. խաչքարեր (IX—XVII դդ.)

այբբենարան» և այլ գրքեր: Նրա մահվանից հետո Հովսեփ Արղությանն այդ տպարանը տեղափոխում է նախ Նոր Նախիջևան, իսկ հետո՝ Աստրախան: Բուն Հայաստանում առաջին տպարանը հիմնվում է 1771 թ. Էջմիածնում՝ Սիմեոն Երևանցու ջանքերով: Այնտեղ 1776 թ. հիմնադրվում է նաև թղթի գործարան:

Պետականությունից զրկված Հայաստանում հայերեն գրքի տպագրությունը նշանակալից երևույթ էր: Սկսած 1512 թ. հայերեն առաջին գրքի տպագրությունից մինչև XVIII դարի վերջը լույս է տեսել շուրջ 1000 անուն մեսրոպատառ գիրք:

Հայաստանի բախտը պատմականորեն այնպես է դասավորվել, որ նա մշտապես ենթարկվել է օտար նվաճողների արշավանքներին, որոնք անխնա խորտակել ու ոչնչացրել են նրա նյութական մշակութային արժեքները: Եվ, այդուհանդերձ, պահպանված հայ հոգևոր և նյութական մշակույթի կոթողները կարևոր ներդրում են համաշխարհային մշակույթի մեջ:

Ծաղկաձոր: Կեչառիսի վանքը



Միջնադարյան մանրանկար

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼԻ ԼՈՒՍԱՄՓՈՓՈՒՄ

XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի ֆեոդալական գժտությունները, երկպառակտչական պատերազմները, պարսկական ու օսմանյան նվաճողների անվերջանալի ավերիչ ասպատակությունները Անդրկովկասը հասցրել էին տնտեսական անկման ու քայքայման:

Յուրաքանչյուր խանություն և ֆեոդալական առանձին տիրույթ վարում էր տնտեսական ու քաղաքական մեկուսի կյանք: Նրանք ունեին իրենց կշռաչափերը, մաքսային արգելքները և այլն, որոնք սաստիկ խանգարում էին տնտեսության ու առևտրական հարաբերությունների կարգացմանը: Օրինակ, ապրանքը Բաքվից Թիֆլիս տեղափոխելու համար հարկավոր էր հինգ տեղ մաքսատուրք վճա-

Հին Ջուղայի գերեզմանատունը



Օշականի կամուրջը (XVIII դ.)

Միջնադարյան մանրանկար

րել: Քաղաքական առանձին գործիչների՝ օտար լծից սեփական ուժերով ապատագրվելու փորձերը հաջողությամբ չպսակվեցին: Դա երկրամասի ժողովուրդներին ու նրանց քաղաքական գործիչներին կրկին ու կրկին համոզում էր, որ առանց Ռուսաստանի օգնության անհնար է ազատվել Թուրքիայի և Պարսկաստանի լծից: Ճիշտ է, որոշ գործիչներ պաշտպանություն էին որոնում նաև Արևմտյան Եվրոպայում, սակայն նրանց հույսերը չարդարացան: Կյանքն անվիճելիորեն ցույց տվեց, որ միակ ուժը, որին կարելի էր ապավինել, Ռուսաստանն էր:

Հարկ է նշել, որ Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու գործում կարևոր դեր խաղաց Վրաստանը՝ հայ ժողովրդի բազմադարյան բարեկամը: Նրան հաջողվեց պահպանել իր պետականությունը և պատմական բազում անելանելի իրադարձությունների ժամանակ Հայաստանին նեցուկ լինել: Երբ 1799 թ. Գյուլիստանի տիրակալ Մելիք Աբովն իր ռուսական կողմնորոշման համար զրկվեց մելիքությունից ու ենթարկվեց հալածանքների, նա իր հպատակ բնակչության հետ տեղափոխվեց Վրաստան և Բորչալուի ուղեմասում Գեորգի VII թագավորից ի տիրապետություն ստացավ Ախկորպի գյուղը:

Ղարաբաղից փախած շատ հայեր իրենց ուղերձներում Մելիք Աբովի տիրույթներում վերաբնակվելու թույլտվություն էին խնդրում: 1800 թ. սեպտեմբերի 2-ին Ռուսաստանի ներկայացուցիչ Պ. Կովալենսկուն մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի ուղղած խնդրագրում ասվում է, որ Ղարաբաղից Փամբակ փախած ընտանիքների թիվը հասել է 400-ի: Ինքը՝ մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը, Վարանդայի տերը, ևս ուներ ռուսական կողմնորոշում: Սկսած 1780-ական թվականներից նա քանիցս օգնության համար դիմել էր ռուսական կառավարությանը: 1799 թ. նա անձամբ գնացել էր Պետերբուրգ և ընդունվել Պավել I-ի կողմից: Այդ ամենի համար էլ նա զրկվել էր իր տիրույթներից: Այնժամ նա իր հպատակ բնակիչների հետ, օգտը-

Միջնադարյան մանրանկար

«Գոհար» ձեռագործ գորգը (XVII դ.), Բրիտանական թանգարան

վելով վրաց թագավորի հովանավորությունից, վերաբնակվեց Վրաստանի սահմանամերձ հայկական շրջանում՝ Լոռիում: Հետագայում մեծ ծառայությունների ու պարսից սարբազների դեմ մղված պայքարում ցուցաբերած խիզախության համար ռուսական կառավարությունը նրան պարգևատրեց սրով:

Երևանի Մահմադ խանն ամեն կերպ խոչընդոտում էր խանությունից հայերի հեռանալուն: Պ. Կովալենսկուն ուղղած նամակում (1800) նա գանգատվում էր «երախտամոռ» հայերից, որոնք լքում են իր խանության սահմանները, և պահանջում էր նրանց ետ վերադարձնել:

1801 թ. հունվարի 18-ի ցարական մանիֆեստով Արևելյան Վրաստանը միացվեց Ռուսաստանին: Արևելյան Վրաստանի հետ միասին Ռուսաստանին միացվեցին նաև Հայաստանի երկու շրջանները՝ Լոռի-Փամբակն ու Շամշադինը: Այդ պատմական փաստն Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու համար ավելի բարենպաստ հող ստեղծեց և հայ ժողովրդի ազատագրական շարժման նոր վերելք առաջ բերեց: Մի քանի մելիքներ իրենց հպատակ բնակչության հետ անցան Վրաստանի սահմանները: Նրանք ձգտում էին այնտեղ հենակետ ստեղծել և ռուսական կորքերի ու վրաց ժողովրդի օգնությամբ իրականացնել իրենց նվիրական իղձը:

1802 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ քաղաքում բանակցություններ տեղի ունեցան, մի կողմից, ռուսական պետության և, մյուս կողմից՝ Ղուբայի ու Թալիշի խանությունների ներկայացուցիչների միջև: Բանակցություններն ավարտվեցին 1802 թ. դեկտեմբերի 26-ի Գեորգիևսկի պայմանագրի կնքումով, որտեղ ասված էր, թե այդ խանություններն իրենց խնդրանքով անցնում են Ռուսաստանի հպատակության ու հովանավորության տակ:

Վրաստանում ռուսական կորքերի գլխավոր հրամանատար Պ. Ցիցիանովին 1802 թ. սեպտեմբերի 26-ի կառավարական ռեսկրիպտում հանձնարարվում էր Ռուսաստանի կողմը գրավել դրացի խաներին՝ այդ նպատակով օգտագործելով Հայոց պատրիարք Դանիելին և նրան նվիրված մարդկանց: «Սակայն հայերը,— ասվում էր ռեսկրիպտում,— իբրև արդյունաբերող և Ասիայի սույն մասում ամբողջ առևտուրը իրենց ձեռքում պահող ժողովուրդ, արժանի են ձեր հատուկ ուշադրությանն ու պաշտպանությանը, քանի որ Պարսկաստանի կողմից կեղեքվելու դեպքում տարակույս չի կարող լինել, որ այս ժողովրդի մեծամասնությունը որքան շուտ կգա, թե կառավարության կանոնավոր կառուցվածքը ապահովում է իրեն, կհաստատվի Վրաստանում»:

Անդրկովկասում Ռուսաստանի տիրապետությունները շարունակ ընդարձակվում էին: 1803 թ. Ռուսաստանին միացվեցին Ջարո-Բելոկանի համայնքն ու Եղիսայի սուլթանությունը, իսկ 1804 թ. հունվարի սկզբին՝ Գյանջայի խանությունը:

Անդրկովկասում Ռուսաստանի ամրապնդվելը, մի կողմից, տեղական ժողովուրդներին ոգևորում ու ազատագրական պայքարի էր մղում շահական ու սուլթանական լծի դեմ, իսկ, մյուս կողմից էլ երևան էր հանում ինչպես Պարսկաստանի ու Թուրքիայի, այնպես էլ Արևմուտքի գաղութային տերությունների տագնապը: Անգլիական ու ֆրանսիական գաղութարարները բոլոր միջոցները ձեռնարկում էին խանգարելու Ռուսաստանի ներթափանցումն Արևելք: Նրանք Պարսկաստանին ու Թուրքիային հրահրում էին ռազմական ընդհարումների Ռուսաստանի դեմ, ֆինանսավորում և զինում էին շահի ու սուլթանի կորքերին: Անգլիական գաղութարարներն իրենց գործակալների միջոցով կաշառում էին բոլորին՝ շահից մինչև ուղտապանը: Բրիտանական դիվանագիտությունը հասավ նրան, որ 1804 թ. պարսից 50-հազարանոց բանակը գահաժառանգ Աբբաս Միրզայի ղեկավարությամբ ներխուժեց Անդրկովկաս: Շահի գործակալները տեղացի ֆեոդալներին կոչ արեցին ապստամբել ռուսների դեմ: Շահը բացահայտորեն հայտարարեց, որ իր կորքերը պետք է Անդրկովկասը մաքրեն «ռուս գյավուրներից» և ռուսական կորքերին քշեն մինչև Ղզլար:

Այսպիսին էր գործերի վիճակը 1804 թ., երբ գեներալ Պ. Ցիցիանովը սկսեց երևանյան արշավանքը: Այդ ժամանակ Անդրկովկասում ռուսական կորքերի թիվը մեծ չէր՝ հետևակային յոթ գունդ և հեծելազորային մի քանի էսկադրոն, որոնք ցրված էին երկրամասի տարբեր շրջաններում: Այդուհանդերձ, ռուսական հրամանատարությունը, ձեռնարկելով արշավանքը, հաջողության հույս ուներ՝ ապավինելով ռուս զինվորների հերոսության և շահական բռնակալությանն ատող հայ ժողովրդական կազմավորումների աջակցության վրա: Եվ իսկապես, այդ արշավանքի ժամանակ հայերը ռուս զինվորներին ցույց տվին ամենաեռանդուն օգնություն: Ռուսների մոտ փախած երևանցի մի բնակիչ նրանց հաղորդեց, որ 40-հազարանոց պարսից կորքը տեղավորված է Երևանից ոչ հեռու և պատրաստվում է հարձակվել Փամբակի վրա, ապա շարժվել Թիֆլիս: Երևանի Մահմադ խանը բերդում սահմանել էր խիստ կարգեր: Նա հրամայել էր յուրաքանչյուր ընտանիքից պատանդ վերցնել, որպեսզի նրանց ազգականների՝ թշնամու կողմն անցնելու դեպ-

քում կախի նրանց: Երևանյան արշավանքի մասնակիցներից մեկը՝ Ե. Բասինը, խանի դաժանությունների մասին եղբորը գրել է. «Առանց սրտի ցավի չի կարելի տեսնել Էջմիածինը... Մեր գալուց ոչ շատ առաջ Երևանի խանը այստեղից քշել էր պատրիարքին և վերցրել վանքի գանձերը, որոնք հասնում են մինչև յոթ միլիոնի»:

Մայիսի վերջին Պ. Ցիցիանովն իր կորքերը հավաքեց Սողանլուղ կոչվող վայրում, որտեղից և որոշեց սկսել հարձակումը: Կովկասյան ժանդարմական գունդը Գուչկովի հրամանատարությամբ շարժվում էր ավանգարդում: Արփաչայ գետի մոտ նա միացավ գեներալ Լեոնտևի ջոկատին: Այստեղ նրանք մարտի մեջ մտան պարսից կորքերի դեմ: Ռուսները թշնամուց ազատեցին գերության մեջ գտնվող 100 հայ ընտանիք, ինչպես նաև վերցրեցին մեծ քանակությամբ ռազմամթերք, ձիեր, սննդամթերք և այլն:

Հունիսի 12-ին Պ. Ցիցիանովը կորքով մտավ Գյումրի, իսկ արդեն հունիսի 19-ին մոտեցավ Էջմիածնի վանքին: Այստեղ նրանց վրա հարձակվեց պարսկական 22-հազարանոց կորքը Աբբաս Միրզայի առաջնորդությամբ, բայց ետ շպրտվեց: Հունիսի 25-ին ռուսական կորքերի միացյալ ջոկատը Պ. Ցիցիանովի հրամանատարությամբ շարժվեց դեպի Երևան: Հասնելով Քանաքեռ, ռուսները ընկրսեցին գյուղում ամրություններ կառուցել: Գնդապետ Կոչլովսկու գումարտակն առաջ նետվեց և սկսեց սվինամարտը: Պարսիկները «հենց որ տեսան գնդապետին պինվորների հետ... շտապ փախան»:

Ռուսական կորքերն ընդհուպ մոտեցան ուժեղ ամրացված Երևանի բերդին: «Երևանի բերդը, որ կառուցված է Զանգու գետի վրա, ամենաբարձր, ուղղաձիգ ու ժայռոտ ափին, շրջապատված էր կրկնակի պարսպով: Ներքին՝ աղյուսից ու քարից շինված պարիսպը չափազանց հաստ էր, բավականաչափ բարձր և ուներ 17 աշտարակ, արտաքին պարիսպը, որը շինված էր ներքինից 15-20 սաժեն հեռավորության վրա, կավից ու քարից էր, նրանից շատ ցածր ու բարակ: Բերդը շրջափակված էր լայն ու խոր խրամով, որը տեղ-տեղ լցված էր ջրով: Բերդի հրետանին բաղկացած էր 60 թնդանոթից, երկու հրասանդից: Կայազորը կազմված էր 7000 մարդուց»:

Երևանի խանը, անհանգստացած ռուսական կորքերի մոտենալուց, մեկը մյուսի ետևից իշխան Պ. Ցիցիանովին էր ուղարկում նամակներ, որոնցում հավաստում էր, «թե ինքը վաղուց է սպասում ռուսաց կորքերին, որ իր կորքերը ռուսների վրա կրակել են հակառակ իր կամքի, և որ ինքը պատրաստ է ամեն ինչ անել, բացի քաղաքը հանձնելուց»: Բայց կազակներն ու հայերը կռահեցին խանի խորամանկությունը: Աբբաս Միրզային օգնության է հասնում Ֆաթհ-Ալի շահը՝ 15-հազարանոց կորքով և Գառնիչայի մոտ միանում նրան:

Սակայն մեկևկես ամսվա ընթացքում շահին չհաջողվեց «անպարտելի ռուսական կորքին ստիպել նահանջել քաղաքից»: Երևանի հայերի վիճակն ավելի ծանրացավ: Շատերին քշեցին Պարսկաստանի խորքերը: Բայց քիչ չէին նաև այնպիսիները, որոնց հաջողվեց փախչել բերդից և միանալ ռուսական կորքերին: Ռուսական կորքերի շարքում էր գործում հայկական ջոկատը Մելիք Աբովի հրամանատարությամբ: «Չլիներ Մելիք Աբովը,—ասվում է մի փաստաթղթում,—Ցիցիանովի թիկունքը միանգամայն կքայքայվեր այն օրհասական ժամանակներին, երբ նա իր բանակով աղետված էր Երևանի պատերի տակ»:

Գեներալ Պ. Ցիցիանովը նորից դիմեց Երևանի խանին և քաղաքի բնակիչներին՝ կոչ անելով հանձնել քաղաքը: Սակայն ռուսական կորքերի վիճակը օրեցօր վատանում էր, որովհետև սննդամթերքի պաշարները սպառվում էին: Այդ պայմաններում հարկավոր էր կամ վերացնել շրջափակումը, կամ գրոհել քաղաքը: Սեպտեմբերի 2-ին պաշարումը վերացվեց, և ռուսները նահանջեցին, այդ ընթացքում ևս մի քանի հարված հասցնելով պարսիկներին:

Որոշվեց ռազմարշավը վերսկսել ձմռանը: Սակայն մի շարք պատճառներով (ռուսական կորքի ծանր դրությունը, Պ. Ցիցիանովի առողջական վիճակը և այլն) ձմեռային ռազմարշավը տեղի չունեցավ:

Մելիք Աբրահամն ու յուզբաշի Գաբրիելը 1804 թ. վերջին Ցիցիանովին նամակով հաղորդեցին, որ Երևանի նոր խան Մեհդի-Ղուլին մտադիր է «առաջվա պես հայերին արտաքսել Պարսկաստանի խորքը, ինչպես պատմում են պատմական հին գրքերը, բայց մենք, տեսնելով նրանց այդպիսի չար մտադրությունը, ինչ-որ ձևով փրկվեցինք նրանց ձեռքից...» Մոտ 200 հայ ընտանիք գաղթեց Ղարաքիլիսա, իսկ ավելի քան 500 ընտանիք հարկադրված էր մնալ Երևանում, քանի որ նրանց վրա «պահակներ էին կարգված... և այդպես նրանք մնացին... պարսիկների ձեռքում... մեկ անհանգստացնում է այնտեղ մնացած հայերի խղճալի վիճակը»: Մելիք Աբրահամն ու յուզբաշի Գաբրիելն իրենց որդիներին ուղարկելով Ցիցիանովի մոտ, հավատացնում էին, որ Երևանում 3 հազարից ավելի ռազմիկ չի մնացել, իսկ «բերդում և նրանից դուրս ապրող Երևանի բնակիչները, թաթարները (ադրբեջանցիները:— Ծ. Ա.) ամենքն էլ խոսել են մեզ հետ

և պայման դրել, որ կարճ ժամանակ հետո եթե ձեր կորքը Երևան գա, ապա բոլորը ձեզ կհնազանդվեն և առանց անհանգստության կտիրեք բերդին՝ նրան պատկանող ամեն ինչի հետ»:

Բնակչությունը կանգվածաբար անցնում էր ռուսական կորքերի գրաված շրջանները: Շիրակի բնակիչները Սարդարի բռնություններից փրկվելու համար 1805 թ. դիմեցին ռուսական հրամանատարությանը, հայտնելով Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու իրենց ցանկությունը: Գեներալ Նեսվետաևի կորամասերը, ընդառաջելով Շիրակի ժողովրդական կանգվածների խնդրանքին, 1805 թ. մարտի 30-ին գրավեցին Արթիկը, և դրանով իսկ Շիրակը միացրին Ռուսաստանին:

1805 թ. մայիսին ռուսական կորքերը Նեսվետաևի հրամանատարությամբ Փամբակից Արթիկի ու Թալինի վրայով կրկին շարժվեցին դեպի Երևան ու գրավեցին Էջմիածինը: Գեներալ Նեսվետաևը Ցիցիանովին զեկուցեց, որ հայերն ամեն ինչում օգնում են ռուսական կորքերին: Գեներալը գրում էր, թե իր ջոկատում գտնվող թարգմանիչ «Անդրեյ Արշակովը, որ իր անձնակազմում ունի փամբակցի հիսուն սպառազինված հեծյալ հայերից կազմված խումբ... ոչ մի առիթ բաց չի թողել իրենց հետ միասին թշնամու դեմ գործելու և իսկական ռազմական ծառայություն կատարելու համար՝ ինձ վստահված կազակների գնդի հետ համահավասար»: Երբ Թալինի շրջանում կենտրոնացած պարսից կորքերը փորձեցին անցնել ռուսական կորամասերի թիկունքը, Նեսվետաևը ստիպված էր թողնել Էջմիածինն ու նահանջել: Այս անգամ ևս նահանջող ռուսական կորքերին հետևում էին բազմաթիվ հայ ընտանիքներ:

Ռուսական կորքերի նահանջից հետո Երևանի խանությունում սկսվեց հայ ազգաբնակչության հալածանք՝ «բոլոր հայ բնակիչներին» Պարսկաստանի խորքերն արտաքսելու մտադրությամբ:

Այդ նույն ժամանակ Ղարաբաղում գնդապետ Կարյագինի 500 մարդուց բաղկացած ջոկատը անձնազոհ պայքարում էր 10-հազարանոց պարսից բանակի դեմ: «Հայերն ու Ղարաբաղի ադրբեջանցիները խիզախ դիմադրություն էին ցույց տալիս պարսից զավթիչներին՝ օգնելով ռուսական զինված ուժերին»: Իշխան Պ. Ցիցիանովը շնորհակալություն էր հայտնում մելիք Ռուշանին, որն իր հեծելազորով օգնության էր հասել գնդապետ Կարյագինին: Շրջակայքի հայ ազատաբաղձ բնակչությունը ամենուրեք աջակցություն էր ցույց տալիս ռուսական բանակին: Ղարաբաղում ռուս զինվորներին օգնություն ցույց տալու գործում հատկապես աչքի ընկան Կուսապատ գյուղի բնակիչները: Այդ գյուղից Հակոբ ու Վանի (Հովհաննես) Աթաբեկյաններն անմիջական մասնակցություն ունեցան պարսիկների դեմ 1805—1812 թթ. ձեռնարկված շատ ռազմարշավների. նրանք անհատույց պարենամթերք էին մատակարարում Կարյագինի ու Կոտլյարովսկու ջոկատներին, օգնում նրանց ջախջախելու պարսից գահաժառանգ Աբբաս Միրզայի կորքերին:

Յուզբաշի Վանի Աթաբեկյանը հերոսական սխրանք գործեց՝ Ասկերանի շրջանում՝ շրջապատումից ազատելով ռուսական ջոկատին: Շահբուլաղի մոտ ջոկատը նորից շրջապատվեց պարսից կորքերի կողմից: Այս անգամ ջոկատին սպառնում էր սովը: Վանի յուզբաշին, հաղթահարելով անհավատալի դժվարություններ, հաց ու այլ մթերքներ հասցրեց, և ջոկատը կրկին հաղթեց պարսից կորքերին: 1803 թ., երբ գեներալ Պ. Ցիցիանովը սկսեց իր արշավանքը Գանձակի վրա, նրա առաջարկով Շամշադինի շրջանի Հախում (Վարագավան) գյուղի բնակիչ Գրիգոր Մանուչարյանցը կազմակերպեց 500 հայերից բաղկացած հեծյալ ջոկատ և ռազմերթի դուրս եկավ: Նա գործուն մասնակցություն ունեցավ նաև երևանյան արշավանքին: Պարսից հեծելազորին առաջին հարվածը հասցրեց նրա ջոկատը: Հերոսական սխրանքների համար Գրիգոր Մանուչարյանցն արժանացավ ս. Գևորգի 4-րդ աստիճանի շքանշանի և տարեկան 300 ռուբլի ցմահ թոշակի:

Աբբաս-Միրզայի կորքերը պաշարեցին Շուշիի բերդը: Հերոսական պաշտպանները, քանիցս ետ մղելով հակառակորդի մեծաթիվ բանակի գրոհները, նրան հետ շպրտեցին: Շահի կորքերը, չկարողանալով գրավել բերդը, շարժվեցին Գանձակ, այնտեղից էլ որոշեցին ներխուժել Թիֆլիս: Սակայն Զագամի շրջանում Կարյագինի ջոկատը պարտիզանական ջոկատների օգնությամբ ուժեղ հարված հասցրեց հակառակորդին՝ նրան փախուստի մատնելով:

Պարսից ջախջախված կորքերը Դիլիջանի ու Ղազախի վրայով նահանջեցին Երևանի ուղղությամբ: Պարտիզաններն ու ժողովրդական աշխարհազորայինները ծուղակ պատրաստեցին և մեծ վնաս հասցրին նրանց, իսկ վիրավոր Աբբաս-Միրզան հազիվ փրկվեց՝ փախչելով: Այս հաջողությունները հող նախապատրաստեցին ռուսական բանակի կորքերի հետագա հաղթանակների համար:

Այդ ժամանակամիջոցում տեղի ունեցան կարևոր իրադարձություններ և անդրկովկասյան որոշ խանություններ մտան ռուսական պետության կազմի մեջ, ինչը կարևոր նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու գործում: 1805 թ. մայիսի 14-ին Քյուրաքչայ գետի վրա գեներալ Պ. Ցիցիանովը և Իբրահիմ

խանը պայմանագիր ստորագրեցին՝ Ղարաբաղի խանությունը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ: Նույն թվականին Ռուսաստանին միացավ նաև Շաքիի խանությունը, 1806 թ.՝ Ղուբայի ու Բաքվի, իսկ 1809 թ.՝ Թալիշի խանությունները:

Գեներալ Պ. Ցիցիանովը 1806 թ. փետրվարի 10-ին գեներալ Նեսվետաևին գրում էր, որ Բաքուն գրավելուց հետո մտադիր է վերադառնալ Թիֆլիս, կարգի գցել գործերը, ամեն ինչ անել, որպեսզի «ընթացիկ ձմռանն իսկ գրավի նաև Երևանը, որովհետև, երբ այս բերդը մեր ձեռքում լինի, այն ժամանակ այլևս հարկ չի կգացվի, որ Բաբախանը (շահը:— Ծ. Ա.) ամռանը անցնի այս ափը...»: Չնայած դժվարություններին, Պ. Ցիցիանովը մտադիր էր փետրվարին ձեռնարկել Երևանի գրավումը: Բայց Բաքվում Պ. Ցիցիանովի դավադիր սպանությունը, որ կա:ːարվեց շահի գործակալների օգնությամբ, հնարավորություն չտվեց իրագործելու այդ ծրագիրը:

1806 թ. պարսից կորքերը նորից ներխուժեցին Անդրկովկաս: Նրանք գործում էին երկու ուղղությամբ՝ Ղարաբաղ—Ելիզավետպոլ և Երևան—Շորագյալ: Նոր ասպատակության նպատակն էր մի հարվածով գրավել Թիֆլիսը, ավերել ամբողջ երկրամասը:

Պարսից կորքերի մի խումբ (7 հազար մարդ) Գյոկչայի կողմից շարժվում էր Ղազախ—Շամշադին ուղղությամբ, այն հաշվով, որ այստեղ միանար Աբբաս-Միրզայի կորքերին և միասին շարժվեին Թիֆլիսի վրա: Բայց Ղարաբաղում գործող գեներալ Նեբոլսինի ջոկատը ջախջախեց Աբբաս-Միրզայի կորքերին և նրանց հետ շպրտեց դեպի Արաքս:

Պարսիկների դեմ պայքարում ռուսական կորքերին տեղացի բնակչության աջակցությունը կարևոր գործոն էր: Ելիզավետպոլի շրջանում ռուսական կորամասերի հետ գործում էր 300 հեծյալից բաղկացած պարտիզանական մի ջոկատ: Նրանց օգնում էին նաև տեղացի կամավորներից ստեղծված ստորաբաժանումները:

Ղազախի շրջանում փոխգնդապետ Էրիսթովի կորամասին գործուն օգնություն ցույց տվեց ղազախցիների հեծելախումբը, որը պարսից սարվազներին ստիպեց փախչել Դիլիջանի կիրճից ու Շամշադինից:

Հեծյալ ջոկատներ էին գործում նաև Շամշադինի շրջանում: Հայկական հեծելազորն օգնություն ցույց տվեց մայոր Զագորելսկու ջոկատին, որը Ղարաքիլիսայից շարժվում էր դեպի Դիլիջանի կիրճը:

Անդրկովկասում ռուսական կորքերի գործողությունները հանգիստ չէին տալիս Անգլիային ու Ֆրանսիային: Նրանք թուրքերին ու պարսիկներին ամեն կերպ հրահրում էին նորից ասպատակելու երկրամասի քաղաքներն ու գյուղերը: 1806 թ. հունիսի 23-ին Երևանի Մեհդի-Ղուլի խանը հարձակվեց Շորագյալում տեղակայված ռուսական կորքերի վրա, սակայն գլխովին ջախջախվեց: Շահը նրան հեռացրեց Երևանից՝ փոխարենը նշանակելով Մարաղայի Ահմադ խանին: Դա սթափեցնող ազդեցություն գործեց մյուս խաների վրա:

Երևանի 1808 թ. հատակագիծը



Գրիգոր Մանուչարյանի հեծյալ ջոկատի գործողություններից (նկարիչ՝ Հ. Ռուխկյան)

Հաշվի առնելով տեղացի բնակչության ռուսասիրական տրամադրությունը, Երևանի նոր սարդար Ահմադ խանը սկսեց վարել ավելի զգույշ քաղաքականություն, քան իր նախորդները: Քաղաքի բնակիչներին իր կողմը հակելու համար նա հայտարարեց, որ մտադիր է «Փամբակում ու Շորագյալում տեղաբաշխված ռուսական կորքերի հետ ապրել հաշտ ու խաղաղ», սակայն, իրականում, սկըսեց հակառուսական դաշնակիցներ որոնել:

1808 թ. Գուդովիչի հրամանատարությամբ ձեռնարկվեց ռուսական կորքերի երևանյան երկրորդ արշավանքը: Մարտին պարսից կորքերը կենտրոնացվեցին Երևանի խանությունում, իսկ արդեն սեպտեմբերին Աբբաս-Միրզան չորսհազարանոց հեծելազորով եկավ Նախիջևան: Երևանի խանն անհանգստացած էր տեղի ազգաբնակչության՝ դեպի Ռուսաստան կողմնորոշվելու տրամադրություններից: Իր ուժը ցուցադրելու նպատակով նա 1808 թ. սեպտեմբերի 29-ին մինչև 2 հազար մարդու հասնող ջոկատով Աշտարակի շրջանում հարձակվեց ռուսական ջոկատի վրա, բայց պարտություն կրեց: Փոխգնդապետ Պոդլուցկու ջոկատը, հետապնդելով խանի կորքին, 1808 թ. հոկտեմբերի 17-ին վերջնականապես ջախջախեց նրան և շպրտեց Արաքսի այն կողմը: Ռուսական կորքերը մտան Էջմիածին և շարժվեցին դեպի Երևան ու պաշարեցին այն: Երևանի բնակիչներն անհամբերությամբ էին սպասում ռուսների կողմից քաղաքի գրավմանը: Ռուսական կորքերի կողմից պաշարված Երևանն ամրացնելու համար շահն այնտեղ ուղարկեց ֆրանսիացի զինվորական մասնագետների:

Քաղաքի պաշարումը ռուսական կորքերի կողմից շարունակվում էր: Գեներալ-ֆելդմարշալ Գուդովիչը, հիացած իր ռազմիկներով, գրում էր. «Բոլոր գեներալները... ինչպես նաև շտաբ-սպաներն ու բոլոր ստորին աստիճանավորներն ամեն մեկն առանձնահատուկ եռանդով է կատարում իր պաշտոնը և որպես արժանի ռազմիկ, քաջաբար է կըռվում...»:

1808 թ. երևանյան արշավանքի ժամանակ Գուդովիչն իր հետ վերցրեց նաև Գրիգոր Մանուչարյանցին, որը Նախիջևանի շրջանում ջախջախեց թշնամու ջոկատը, ինքն էլ վիրավորվեց: Գուդովիչի ներկայացմամբ նա արժանացավ Վլադիմիրի ու Աննայի շքանշանների: Ավելի վաղ նշանակված տարեկան 300 ռուբլի թոշակի փոխարեն նրան սահմանվեց 600 ռուբլի: Անսահման խիզախության համար թշնամիները նրան անվանում էին «դալի քեշիշ» («գիժ տերտեր»):

Երևանի խանին օգնության գնացող Աբբաս Միրզայի կորքերի դեմ գեներալ Նեբոլսինի 1808 թ. հոկտեմբերի 28-ի հաղթանակը կարևոր նշանակություն ունեցավ: Նա «իր հետ ունենալով երկու հիանալի ու քաջ գնդապետների՝ Լիսանովիչին ու Կոտլյարովսկուն, կատարելապես ջախջախեց Բաբախանի որդուն և փախուստի մատնեց պարսիկներին, որոնք... չափազանց անկանոն փախան Նախիջեվան... Գեներալ-մայոր Նեբոլսինը առանց որևէ դիմադրության գրավեց Նախիջևանը...», սակայն անբարենպաստ եղանակի ու վատ մատակարարման պատճառով բերդը պաշարած ռուսական կորքերի վիճակն օրավուր վատանում էր, մանավանդ որ կորքերը հոգնել էին անընդհատ կռիվներից: Նոյեմբերի 17-ի առավոտյան ժամը 5-ին Գուդովիչը հրաման տվեց գրոհով վերցնել բերդը: Գրոհի ժամանակ գնդապետ Սիմոնովիչը ծանր վիրավորվեց: Նրան փոխարինած մայոր Վիլյակովը նույնպես վիրավորվեց: Բերդը գրոհող մյուս ջոկատների հրամանատարները՝ գնդապետ Բուլգակովը, մայոր Խավիցկինը, կապիտան Չիլիշչևը կոհվեցին, իսկ մայոր Բորշչևը վիրավորվեց: Չնայած թշնամու համառ դիմադրությանը, «մի քանի սպա գրենադերների հետ քաղաք մտան և կռվեցին առյուծի նման»:

Չնայած բոլոր ջանքերին և ռուսական կորքերի խիզախությանը, այն ժամանակվա ռազմական տեխնիկայի վերջին խոսքով ամրացված բերդի գրոհն անհաջող ավարտվեց: 1808 թ. նոյեմբերի 30-ին բերդի երկու ամիս տևած պաշարումը վերացվեց: Միաժամանակ Գուդովիչը գեներալ Նեբոլսինին հրամայեց թողնել Նախիջևանն ու վերադառնալ Ելիզավետպոլ:

Արևմտյան տերությունները գործի էին դնում բոլոր միջոցները, որպեսզի Անդրկովկասում պահպանվեր լարված դրությունը: Նապոլեոն Բոնապարտը, պատրաստվելով Ռուսաստանի դեմ մեծ պատերազմի, դրանից դեռ շատ առաջ սկսեց ձեռնարկել մի շարք միջոցներ՝ Պարսկաստանին ու Թուրքիային հակառուսական բլոկի մեջ մտցնելու համար: Շահին ուղղած նամակում նա հատկապես ընդգծում էր Վրաստանն ու ամբողջ Անդրկովկասը գրավելու և Կասպիականի շրջանները ռուսների դեմ ամրացնելու անհրաժեշտությունը: Անգլիական դիվանագիտությունն ավելի հմուտ էր գործում և կաշառքի միջոցով շահին հակեց իր կողմը: Անգլիան հասավ այն բանին, որ Պարսկաստանի հետ պայմանագիր կնքեց ընդդեմ Ռուսաստանի: Ըստ այդ պայմանագրի, անգլիական զինվորական հրահանգիչների խումբը, Մալկոլմի գլխավորությամբ, 1810 թ. ժամանեց Թեհրան: Կովկասյան գծի և Վրաստանի կորքերի գլխավոր հրամանատար գեներալ Ա. Տորմասովը 1809 թ. սեպտեմբերի 10-ի նամակում գրում էր, որ անգլիական ոսկին, որ «առատաձեռն թափվում է Պարսկաստանի վրա, այս փողատենչ ժողովրդի վրա ունեցավ իր սովորական ներգործությունը և ուրիշ ընթացք տվեց մեր գործերին, քանի որ հաշտության բանակցությունների փոխարեն... [շահը] իր կորքերը շարժեց դեպի մեր սահմանները»: Պարսկաստանը Անգլիայից ստացավ հսկայական գումար և մոտ 2 միլիոն ռուբլու սպառազինություն: Անգլիան այնտեղ ուղարկեց 32 հրանոթ, 12 հազար հրացան, 12 հազար զինվորի հանդերձանք և այլն:

1812 թ. մայիսին կնքվեց Բուխարեստի հաշտության պայմանագիրը, որով Թուրքիան ճանաչում էր Անդրկովկասում ռուսական տիրապետությունները: Սակայն նապոլեոնյան բանակի արշավանքը Ռուսաստան աշխուժացրեց Թուրքիայի ու Պարսկաստանի ագրեսիվ մտադրությունները: 1812 թ. սկզբին Աբբաս Միրզայի 20-հազարանոց բանակը հանկարծակի ներխուժեց Ղարաբաղ և սկսեց ավերիչ արշավանքը դեպի Ելիզավետպոլի գավառ:

Անդրկովկասի բոլոր մասերում, որտեղ էլ հայտնըվեին թշնամու կորքերը, տեղի ազգաբնակչությունը ծուղակներ էր պատրաստում և ոչնչացնում նրանց: Երևանի սարդարը չհնազանդվելու և ռուսներին համակրելու համար ավերիչ արշավանքներ նախաձեռնեց Դիլիջանի ուղեմասի հայկական գյուղերի վրա: Այստեղ գտնվող ռուսական կորքերի ջոկատը գեներալ Լիսանովիչի հրամանատարությամբ, ղազախցի ու բորչալուցի հայ կամավորների օգնությամբ ջախջախեց ու ետ շպրտեց սարդարին:

Պարսկական կորքերն ավերիչ արշավանքներով ու պրովոկացիոն գործողություններով ջանում էին թուլացնել և ջախջախել ռուսների ուժերը՝ դրանով օգնելով նապոլեոնյան կորքերին հաղթանակ տանելու Ռուսաստանի նկատմամբ: Հայտնի է, որ թուրքական էմիսարները Կովկասում և այլ վայրերում տարածում էին սուլթան Մահմուդ II-ի ֆերմանները, որոնք մուսուլմաններին «սրբազան պատերազմի» էին կոչում «ռուս գյավուրների» դեմ: Ֆերմաններից մեկում սուլթանը հրամայում էր

«միահամուռ կերպով հարձակում ձեռնարկել գյավուրների երկրամասի վրա, ամայացնել այն և թալանել ունեցվածքը, նրանց ընտանիքներին ու կավակներին գերի վերցնել և դրանով իսկ խորտակել նրանց ուժը»:

Պարսից կավթիչների դեմ մղված պայքարում ևս ռուսական կորքերին այս շրջանում մեծ օգնություն էր ցույց տալիս հայ կամավորական հեծելակորային ջոկատը՝ փառաբանված հերոս Գ. Մանուչարյանցի հրամանատարությամբ: Շատ հայեր էլ մտել էին նաև վրացական կամավորական ջոկատների մեջ: Այսպես, 1812 թ. պարսից սարվակների կողմից Սղնախ քաղաքի պաշարման ժամանակ ռուսական կորքերին օգնության եկան վրաց աշխարհազորայինները և նրանց հետ միասին 800 զինված հայ կամավորներ, որոնցից շատերը հանդես բերած խիզախության համար ներկայացվեցին կառավարական պարգևների: Կայսերական հատուկ շնորհագրում հայ ազգաբնակչության ծառայությունների մասին ասվում էր, որ «նրանք կոհաբերում էին ունեցվածքն ու բոլոր միջոցները և անգամ կյանքը հօգուտ մեկ և ի բարօրություն ընդհանուրի: Վրաստանի ամբողջ հայ ժողովրդի և բոլոր խավերի այդպիսի եռանդը, որոնք կազմում են նրանց ծառայություններն ու սխրանքները, մեկ վրա հաճելի պարտականություն են դնում՝ ամբողջ աշխարհի առաջ վկայել նրանց հանդեպ արդար երախտագիտությունն ու բարյացակամությունը»:

Այդ ժամանակամիջոցում հատկապես աչքի ընկան գեներալ Կոտլյարովսկու կորքերը, որոնք 1812 թ. հոկտեմբերի 18-ին Արաքս գետի մոտ՝ Ասլանդուզում, խոշոր հաղթանակ տարան: Ասլանդուզում պարսից ընտիր ուժերը ջախջախվեցին, և շահը ստիպված էր հաշտություն խնդրել: Պարսից կորքերը կրախի մատնվեցին նաև ռազմական գործողությունների մյուս հատվածներում: Գեներալ Կլոդա ֆոն Ցուրգենբուրգը իր ջոկատը Ելիզավետպոլից սրընթաց շարժեց Շաքիի խանության ուղղությամբ և քշեց Փիր-Ղուլի խանի հեծելազորը: Իսկ գեներալ Լիսանովիչի կորքերը ջախջախեցին պարսից ջոկատները, որոնք Երևանի սարդարի հրամանատարությամբ հարձակվել էին Փամբակի ու Շորագյալի գավառների վրա: Թշնամին մեծ կորուստներ կրեց:

Ռուսական կորքերի հաղթանակի շնորհիվ 1813 թ. հոկտեմբերի 12-ին կնքվեց Ռուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդների համար շահեկան Գյուլիստանի հաշտության պայմանագիրը, որով Անդրկովկասի կգալի մասը՝ Դաղստանը, Վրաստանը, Հյուսիսային Ադրբեջանը, Շամշադինը, Ղարաբաղը, Շորագյալը և Փամբակը մտան Ռուսաստանի կազմի մեջ: Սակայն Երևանը և Հայաստանի մեծ մասը շարունակում էին հեծել Օսմանյան Թուրքիայի ու Պարսկաստանի լծի տակ:

Հաշտություն կնքելուց հետո էլ պարսից կավթիչները չհանդարտվեցին: Անգլիական գաղութարարների դրդմամբ նրանք շարունակում էին ներկայացնել Անդրկովկասի նկատմամբ իրենց հավակնությունները: Անգլիական դիվանագիտությունն ամեն կերպ խանգարում էր կնքված պայմանագրի իրագործմանը: Այսպես, 1814 թ. անգլո-պարսկական պայմանագիրն ուղղված էր Ռուսաստանի դեմ՝ Գյուլիստանի հաշտության պայմանագիրը վերանայելու համար: Ի պատասխան Անգլիայի ու Պարսկաստանի այդ մեքենայությունների, Ալեքսանդր I կայսրը պաշտոնապես հայտարարեց, որ «անդրկովկասյան մարզերի ազգաբնակչությունը ցանկություն է հայտնել միանալ մեզ: Չկատարել նրանց ցանկությունը ու նրանց հանձնել ձեր ձեռքը, բացարձակապես անարդարացի կլիներ»: Հայտնի է, որ Եփրեմ կաթողիկոսը 1813 թ. ապրիլի 15-ի նամակով՝ ուղղված Կովկասի ռուսական իշխանություններին, մասնավորապես գլխավոր հրամանատար Ռտիշչևին, խնդրում էր ազատագրել Արարատյան երկիրը, քանի որ հայ ազգի ապագան ու բարեկեցությունը կախված են Ռուսաստանից:

Այսպիսով, Անդրկովկասի ժողովուրդները, այդ թվում հայ ժողովուրդը, չնայած Պարսկաստանի, Թուրքիայի և արևմտաեվրոպական տերությունների հակառուսական բոլոր գործարքներին, մինչև վերջ հավատարիմ մնացին Ռուսաստանին: Հայերի մեծ ծառայությունների և Ռուսաստանի նկատմամբ նրանց նվիրվածության մասին հայ ժողովրդին ուղղված 1813 թ. սեպտեմբերի 15-ի շնորհագրում մասնավորապես ասվում էր, որ «բոլոր դասերի այն հայերը, որոնք ապրում են Վրաստանում, միշտ էլ լեցուն են եղել երախտագիտությամբ հանդեպ մեր բարձր հովանավորությունը... Այդ զգացումները նրանք բազմիցս ապացուցել են գործով և անսասան հավատարմությամբ...» Գեներալ Ռտիշչևը քաղաքացիական նահանգապետ գնդապետ Սիմոնովիչին կարգադրեց ամբողջ հայ ժողովրդին ուղղած շնորհագիրը հայտարարել «հանդիսավորապես, Թիֆլիսի հայոց գլխավոր վանքի տաճարում»: Ցուցում տվեց նաև այդ շնորհագրին ծանոթացնել «Վրաստանի գավառներում ապրող բոլոր հայերին ևս»:

Հայ ժողովուրդն օտար լծից կարող էր ազատագրվել միայն Ռուսաստանի օգնությամբ: Ուստի նա նվիրված էր նրան և կռվում էր նրան միանալու համար՝ իր փրկությունը գտնելով դրանում:

Հենց դրա համար էլ հայ ժողովուրդը ինչպես ռուս-պարսկական (1804—1813), այնպես էլ ռուս-թուրքական (1806—1812) պատերազմներում ամենաակտիվ աջակցությունն ու օգնությունն էր ցույց տալիս ռուսական բանակին:

1812 թ. Հայրենական պատերազմի տարիներին ևս հայ ժողովրդի զավակները նվիրված մասնակցություն ցուցաբերեցին թշնամու դեմ մղված պայքարին: Նրանց թվում կային փառաբանված գեներալներ ու սպաներ, շարքային ռազմիկներ, ժողովրդական աշխարհազորի մարտիկներ: Շատ հայեր ռուսական բանակին օգնում էին նյութական միջոցներ հանգանակելով: Գեներալներ Վ. Մադաթովի, Դ. Դելյանովի, Դ. Աշխարումովի և այլոց անունները հայտնի էին ամբողջ ռուսական բանակին:

Ղարաբաղի մելիքներից սերված՝ ռուսական բանակի գեներալ Վ. Մադաթովն աչքի ընկավ շատ մարտերում: Դեռևս պատանի, Մադաթովին բերեցին Սանկտ Պետերբուրգ և տվեցին զինվորական ծառայության: Նա ծառայել էր Պրեոբրաժենյան, ապա նաև Պավլովյան գրենադերային գնդերում: 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմում Վ. Մադաթովն իրեն դրսևորեց որպես համարձակ ու նախաձեռնող սպա: Հայրենական պատերազմի սկզբում փոխգնդապետի կոչումով նա արևմտյան 3-րդ բանակի ավանգարդային ջոկատի հրամանատարն էր: 1812 թ. հունիսին Մադաթովի ջոկատն անցավ թշնամու թիկունքը և խորտակիչ հարված հասցրեց նրան: Զարգացնելով հաջողությունը, Մադաթովի ջոկատն ուրիշ զորամասերի հետ Կոբիրին քաղաքի շրջանում շրջապատեց հակառակորդին և ջախջախեց նրան՝ գրավելով շատ զինամթերք ու գերելով մեծ թվով զինվորների: Հերոսական սխրանքների համար Վ. Մադաթովն արժանացավ գնդապետի կոչման և պարգևատրվեց ս. Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով: Հետապնդելով հակառակորդին, Վ. Մադաթովի ջոկատը գերի վերցրեց 2 գեներալ, 25 սպա, 400 զինվոր, ձեռք բերեց շատ զենք ու պարենամթերք: Նրա անունը հայտնի դարձավ ամբողջ բանակին, իսկ 1813 թ. սեպտեմբերին նրան շնորհվեց գեներալ-մայորի կոչում:

Գեներալ Վ. Մադաթովն աչքի ընկավ նաև 1813 թ. Լայպցիգի մոտ մղված «ժողովուրդների ճակատամարտում»: Վ. Մադաթովը ներկայացուցիչն էր սուվորովյան դպրոցի այն համաստեղության, կարդում ենք ռազմական հանրագիտարանում, որը «ռուսական բանակին տվեց Բագրատիոն, Միլորադովիչ, Երմոլով, Դենիս Դավիդով, Կոտլյարովսկի»:

Նապոլեոնի դեմ պայքարում իր հերոսական գործողություններով 1807 թ. աչքի ընկավ նաև Դ. Դելյանովը: Նա արժանացավ փոխգնդապետի կոչման և պարգևատրվեց ս. Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով: Կուտուզովը հատկապես նշել է նրա սխրանքները Բորոդինոյի ճակատամարտում: 1813 թ. Դելյանովը, մասնակցելով Փարիզի մոտ մղված ճակատամարտին, արժանացավ գեներալ-մայորի կոչման: Հայրենական պատերազմի մասնակիցներ էին նաև նրա եղբայրները, որոնցից մեկը հերոսաբար կոհվեց Վիտեբսկի մոտ:

Ռուսական բանակի ականավոր գործիչներ Մ. Կուտուզովը, Մ. Բարկլայ դե Տոլլին, Պ. Կոնովիցինը և ուրիշ նշանավոր զորապետներ բարձր են գնահատել գնդապետ Դ. Ախշարումովի գործունեությունը: Նա հատկապես աչքի ընկավ Բորոդինոյի ճակատամարտում և պարգևատրվեց ս. Աննայի 2-րդ աստիճանի շքանշանով: Դ. Ախշարումովը մասնակցեց Փարիզի գրավմանը, իսկ 1820 թ. ստացավ գեներալ-մայորի կոչում: Դ. Ախշարումովը նաև զինվորական պատմաբան էր: 1813 թ. հրատարակվել է նրա «1812 թ. պատերազմի պատմական նկարագրությունը» հետաքրքիր աշխատությունը: Դա հայրենական պատերազմի վերաբերյալ առաջին վավերագրական աշխատությունն էր: 1819 թ. այն լրացվեց, վերահրատարակվեց և արժանացավ մասնագետների բարձր գնահատականին: Այդ աշխատության մեջ արժեքավորն այն էր, որ Դ. Ախշարումովը դեռ այն ժամանակ նկատել էր հայրենական պատերազմում Ռուսաստանի հաղթանակի բացառիկ կարևոր գործոնը՝ պատերազմի ժողովրդական բնույթը: Ախշարումովի բնութագրմամբ՝ Բորոդինոյի ճակատամարտը վճռական իրադարձություն էր, որը կարևոր դեր խաղաց ամբողջ Եվրոպայի հետագա ճակատագրում:

Հայրենական պատերազմին մասնակցեց նաև գեներալ Պ. Մելիքովը, որը, Մ. Կուտուզովի բնութագրմամբ, «իրեն հիանալի դրսևորեց ուրիշների հանդեպ»: Շատ ճակատամարտերի մասնակից էր գեներալ Պ. Հայրապետովը: Հերոսական սխրանքներ կատարեցին Դավիթ, Պյոտր և Ալեքսանդր Աբակումով եղբայրները: Բնութագրելով Ալեքսանդր Աբակումովին, Մ. Կուտուզովը գրել է. նա «աներկյուղ քաջությամբ գրոհում էր թշնամու գնդի վրա, նրա հանդեպ կարևոր հաղթանակ տարավ և գերի վերցրեց 175 մարդ»: Քաջության համար նա ներկայացվեց գեներալ-մայորի կոչման: Լայպցիգի մոտ մղված ճակատամարտում հերոսի մահով կոհվեց Արտեմ Լազարևը: Այդ կռիվներին մասնակցեց նաև նրա եղբայր Լազար Լազարևը: Ռուսական բանակի շարքերում մարտնչել են նաև հայ ժողովրդի բազում այլ զավակներ՝ Աուստեռլիցի ճակատամարտի և

Գեներալ Վ. Մադաթով

1812 թ. հայրենական պատերազմի մասնակից մայոր Գ. Մելիք-Օսիպովը, 1813 թ. հերոսի մահով ընկած Մ. Լալաևը, Վ. և Խ. Բեհբութով եղբայրները: Բորոդինոյի ճակատամարտում քաջությամբ աչքի ընկան հայ ռազմիկներ Վարդապետյանը, Աղամփարովը, Պ. Մելիքովը, Թումանովը, Արղութինսկին, Սումբատովը, Շելկովնիկովը, Կասպարովը, Աբրամովը, Ասլանյանը և շատ ուրիշներ:

Նոր Նախիջևանի հայ ազգաբնակչությունը ռուսական բանակին օգնելու համար կազմակերպեց ժողովրդական աշխարհազորայինների ջոկատ: Քաղաքի մագիստրատը լայն աշխատանք ծավալեց նաև Նոր Նախիջևանի մոտակայքում գտնվող հայկական գյուղերում: Հրապարակվեցին հայությանն ուղղված դիմումներ, որոնցում կոչ էր արվում մարտի ելնել պաշտպանելու Ռուսաստանը և բոլոր միջոցներով օգնություն ցույց տալու նրան: Ժողովրդական աշխարհազորի ակտիվ կազմակերպիչներից մեկը Մ. Աբրահամյանն էր:

Մոլդավիայում բնակվող հայերը հասարակական հայտնի գործիչ Մանուկ բեյ Միրզոյանի գլխավորությամբ կազմակերպեցին ժողովրդական միլիցիայի մի մեծ ջոկատ: Ռուսաստանի տարբեր քաղաքներում ապրող հայերը ամենուր կազմակերպեցին դրամական միջոցների, մթերքների ու զենքի հանգանակում: Այսպես, Նոր Նախիջևանի հայ համայնքը 1807 թ. ռուսական բանակին օգնելու համար ժողովեց 10550 ռուբլի, 150 պարկ մթերք, 243 հրացան ու ռազմամթերք: Երբ 1812 թ. Նապոլեոնի զորքերը ներխուժեցին Ռուսաստան, նորնախիջևանցիները հավաքեցին ու պետական գանձարան մուծեցին ևս 30 հազար ռուբլի:

1812 թ. հայրենական պատերազմի ծանր օրերին Գրիգորիոպոլի հայ համայնքը ջերմ աջակցություն ցույց տվեց ռուսական բանակին: Վավերագրերից մեկում նշվում են ավելի քան 200 աստրախանահայերի անուններ, որոնք նվիրատվությունների ֆոնդ են մուծել նշանակալի գումար, իսկ նրանցից շատերը 3—6 հազարական ռուբլի: Աստրախանի նահանգապետի հաղորդման մեջ ընդգծվում է, որ հայրենիքին օգնելու համար միջոցներ հանգանակելիս աչքի է ընկել հայ ազգաբնակչությունը: Ամբողջ Աստրախանի նահանգում հոգևորականությունը հավաքել էր 11 հազար ռուբլի, ազնվականներն ու չինովնիկները՝ 57553, ռուս վաճառականներն ու մեշչանները՝ 50900, թաթարները՝ 21 հազար, հնդկացիները, պարսիկներն ու խիվացիները՝ 24850, իսկ հայ համայնքը՝ 72765 ռուբլի: «Հայոց դասը,— կարդում ենք այդ վավերագրում,— ներկայումս աչքի է ընկել իր կողմից մինչև 73 հազար ռուբլի նվիրաբերելով, արդեն կատարելապես ապացուցելով իր օրինակելի եռանդը բարձր միապետի գահին: Սրանում իր չափազանց խելամիտ համոզմունքներով գործին կգալի հաջողություն բերեց հայ դատավորներից մեկը՝ Գրիգորի Աբեսալոմովը, որը մյուս երկու դատավորների մասնակցությունից անկախ, սեփական նվիրատվությունից բացի, ինքն անձամբ հայերի նվիրատվությունը բարձրացրեց այդքան կարևոր աստիճանի»: Ոչ լրիվ տվյալներով հետագայում աստրախանահայերի նվիրատվությունների գումարը հասավ 100340 ռուբլու:

Պատերազմի ժամանակ Սանկտ Պետերբուրգի կանայք դիմեցին Ռուսաստանի բոլոր կանանց՝ կոչ անելով օգնություն ցույց տալ թշնամու դեմ մղվող պայքարին: Արձագանքելով այդ կոչին, Աստրախանի կանայք նվիրաբերեցին 7710 ռուբլի, որից 4335 ռուբլին հավաքել էին հայուհիները: Հայրենասեր հայուհիներ Գալուստովան, Ե. Մանուկովան և ուրիշներ հասարակական մեծ աշխատանքների ու հայրենիքի ֆոնդը նվիրատվություններ մուծելու համար ռուսական կառավարության կողմից պարգևատրվեցին: Աստրախանահայեր Ի. Վարտանովը և Գ. Արզումանովը պատերազմի ժամանակ Կասպից ծովում իրենց նավերը դրեցին ռուսական կառավարության տրամադրության տակ և պարսկական սահմաններից կասպյան էսկադրայի ու ծովային գումարտակի համար անվճար բեռներ էին տեղափոխում, որի համար և արժանացան կառավարական պարգևների:

Ղվլարի հայերը 1812 թ. հուլիսի վերջերից մինչև օգոստոսի 19-ը ռազմական կարիքների համար նվիրաբերեցին 15860 ռուբլի: Հայրենական պատերազմի ֆոնդին նվիրատվություններն ամենուրեք կատարվում էին հայրենասիրական մեծ վերելքի պայմաններում և հասան նշանակալից չափերի: Այդ ծանր օրերին, ասված է ժամանակի վավերագրերից մեկում, ամենուրեք հայերն իրենց պարտքն էին համարում «իրենց հավատարմությունը ցույց տալ պետությանն ու հայրենիքին»: Նույնիսկ բուն Հայաստանում, որը գտնվում էր Պարսկաստանի ու Թուրքիայի ծանր լծի ներքո, գաղտնի գումարներ էին հանգանակում և կաթողիկոսի ու այլ անձանց միջոցով ուղարկում ռուսական կառավարությանը:

Ռուսաստանը բարձր գնահատեց հայ ժողովրդի նվիրվածությունը և անշահախնդիր օգնությունը: 1813 թ. սեպտեմբերի 15-ի կայսերական հրամանագրում հատուկ ընդգծվում էր Անդրկովկասի հայերի ներդրումը ռուսական բանակին օգնություն կազմակերպելու գործում: Էջմիածնի կաթողիկոսը և Հայաստանի ուրիշ շատ գործիչներ նվիրատվությունների հանգանակումը կազմակերպելու համար ռուսական կառավարությունից ստացան շքանշաններ ու մեդալներ:

Այսպիսով, դեռևս Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց առաջ, ռուս ժողովրդի համար այդ ծանր շրջանում, երբ նա հերոսական պայքար էր մղում Նապոլեոնի «մեծ բանակի» դեմ, հայ ժողովուրդն ուժերի ներածին չափով իր լուման ներդրեց Ռուսաստանի հաղթանակի գործում:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

1812 թ. հայրենական պատերազմում Ռուսաստանի պատմական հաղթանակն Անդրկովկասի ժողովուրդներին օսմանյան ու պարսկական կեղեքումներից լիովին ազատագրվելու վստահություն ներշնչեց:

Գյուլիստանի պայմանագրով, ինչպես նշվեց, Հայաստանի որոշ շրջաններ անցան Ռուսաստանին, որտեղ հայերի դրությունը նկատելիորեն բարելավվեց: Սակայն այդ պայմանագիրն ինչպես սոցիալ-քաղաքական, այնպես էլ միջազգային տեսանկյունից չէր կարող երկրում կայուն վիճակ ստեղծել և խաղաղության երաշխիք դառնալ հայ ժողովրդի համար, քանի որ անգլիական ու ֆրանսիական դիվանագիտության ձեռքին Պարսկաստանը քաղաքական գործիք էր: 1814 թ. Անգլիայի ու Պարսկաստանի միջև կնքվեց Թեհրանի պայմանագիրը, որով Պարսկաստանը լիովին ենթարկվեց անգլիական քաղաքականության շահերին: Պարսկաստանին դրդելով վերանայելու Գյուլիստանի պայմանագիրը, Անգլիան խոստացավ նրան վերադարձնել Թալիշն ու Լենքորանը, ինչպես նաև օգնել Անդրկովկասից դուրս բերելու ռուսական զորքերը: Այդ ամենը առաջացրեց հայ ազգաբնակչության տագնապը: 1814 թ. հունիսին Ներսես Աշտարակեցին ռուսահայ թեմի առաջնորդ Հովհաննես Գառնակերյանին դիմեց մի նամակով, որտեղ խնդրում էր կայսրին տեղյակ պահել, թե հայերը գտնըվում են ծանր վիճակում և փրկություն են աղերսում:

Հարկային լուծը, կրոնական հալածանքներն ու ազգային ճնշումը, աղքատությունն ու սովը ծանր բեռի նման ընկած էին հայ ժողովրդի վրա, որի համբերության բաժակը լցվել էր: Ահա թե Շորագյալի գավառի հայ բնակչության վիճակն ինչպես է նկարագրել ռուսական զորքերի գլխավոր հրամանատար և Վրաստանի կառավարիչ գեներալ Ա. Երմոլովը: «Այս նահանգը,— գրել է նա,— գտնըվելով հենց սահմանի վրա, միշտ էլ ենթակա է եղել թշնամու ավերմանը»: Հազար հայ ընտանիքից 1817 թ. սույն գավառում մնացել է միայն 174-ը, որոնք էլ գտնվում են «ամենաաղքատ վիճակում»: Բնութագրելով Երևանի խանության ազգաբնակչության դրությունը, 1817 թ. ապրիլին Ա. Երմոլովը գրել է. «Պարսկական սահմանամերձ մարզերում դժգոհություններ են ծագել կառավարության դեմ, մանավանդ Երևանի նահանգում դրանք այն աստիճանի են ի հայտ եկել, որ դրանց դեմ խիստ միջոցներ են կիրառվում: Բնակիչների դժգոհությունները և մեր կողմն անցնելու շատերի ցանկությունն այնքան սովորական են, որ ես դրանում որևէ արտակարգ բան չեմ գտել»:

Սահմանային և վիճելի ուրիշ հարցերը կարգավորելու համար ռուսական կառավարությունը 1816—1817 թթ. Պարսկաստան ուղարկեց հատուկ միսիա՝ Ա. Երմոլովի գլխավորությամբ: Նրան ցուցում տրվեց սահմանային հարցերը լուծելուց բացի, հասնել նաև առևտրի ընդլայնմանն ու ձեռք բերել Պարսկաստանի չեզոքության վերաբերյալ հավաստիացումը՝ այլ երկրների հետ Ռուսաստանի պատերազմելու դեպքում: Ա. Երմոլովը պետք է կատարեր ևս մեկ, շատ կարևոր խնդիր՝ թուլացներ անգլիական ազդեցությունը Պարսկաստանում: Հանձնարարվեց նաև Թեհրանում հաստատել մշտական միսիա: Սակայն սկզբից ևեթ բանակցությունները փակուղի մտան: Պարսկաստանը պահանջեց վերադարձնել Թալիշի ու Ղարաբաղի խանությունները: Մերժելով այդ պահանջները, Ռուսաստանը միաժամանակ ջանաց ձեռք բերել Պարսկաստանի հավաստիացումը Թուր-

քիայի դեմ պատերազմելու դեպքում չեզոքություն պահպանելու վերաբերյալ: Բայց պարսից շահն անգլիական դիվանագիտության ազդեցության տակ Հյուսեին Ղուլի խանին դրդեց թշնամական գործողությունների Ռուսաստանի դեմ: Սարդարն իր խանության տարածքով անցնող վաճառականական քարավանների վրա հարձակումներ կազմակերպեց:

Անգլիական դիվանագիտությունն իր հերթին պարսից շահի և թուրքական սուլթանի միջև գաղտնի բանակցություններ էր կազմակերպում Ռուսաստանի դեմ համատեղ հանդես գալու համար: Այդ բանակցությունների հետևանքով 1823 թ. Պարսկաստանի ու Թուրքիայի միջև կնքվեց Ռուսաստանի դեմ ուղղված պայմանագիր:

1826 թ. հուլիսին 60-հազարանոց պարսից զորքն Աբբաս-Միրզայի գլխավորությամբ, խախտելով Գյուլիստանի հաշտության պայմանագիրը, հանկարծակի ներխուժեց Ղարաբաղ և Փամբակի ու Շորագյալի գավառները:

Հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Ներսես Աշտարակեցին 1826 թ. հուլիսին հայ ժողովրդին կոչ արեց պայքարի դուրս գալ պարսից զորքերի դեմ: Այդ կոչում նա հայրենակիցներին հիշեցնում էր, որ նրանց «սիրելի հայրենիքի» անկման պատճառն այն էր, որ հայերը սփռված են ամբողջ աշխարհով մեկ, շատերն ապրում են հայրենիքից հեռու, օտարության մեջ, շատերը հեծում են օտար լծի տակ: Ապա Ներսես Աշտարակեցին խոսում էր այն մասին, որ Ռուսաստանը «իր հզոր աջը տարածել է» հայ ժողովրդի «հանգստության ու բարօրության համար», որ Ռուսաստանն առաջներում էլ հարկ եղած դեպքում պաշտպանել է հայերին, նա այդ անում է մանավանդ այժմ, երբ «ամբողջ աշխարհի առաջ ճանաչված է որպես մեր ազգի հովանավոր ու պաշտպան...»:

Պարսից զորքերի հանկարծակի հարձակումը հսկայական վնաս պատճառեց հայ ժողովրդին ու խլեց բազում կյանքեր: Բայց ժողովուրդն անձնազոհ պայքարի ելավ թշնամու դեմ, իր միջից առաջ քաշելով պարտիզանական պայքարի հերոսների ու կազմակերպիչների: Չնայած ժողովրդի անձնուրաց դիմադրությանը, շահական զորքերը կարողացան պաշարել Շուշիի բերդը: Բերդապարսպի մոտ նրանք հանդիպեցին ռուսական կայազորի ու ազգաբնակչության միացյալ ուժերի համառ դիմադրությանը: Պարսիկները չկարողացան գրավել բերդը: Շուշիի հերոսական պաշտպանությունը շարունակվեց 48 օր: Տղամարդկանց հետ հավասարապես քաղաքի պաշտպանությանը մասնակցում էին կանայք՝ ցույց տալով իսկական հերոսություն: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ռուսական բանակի հայազգի գեներալ Ի. Լազարևի հուշերը, որը դեռևս պատանի, գտնվել է պաշարված քաղաքի պարիսպներից ներս: «Ես հիշում եմ Հարություն Ալթունովին,— գրել է նա,— գեորգիևյան խաչն ու ոսկե մեդալը վկին, որը կամովին ցանկություն հայտնեց անցնել պարսից բանակի միջով, որպեսզի պաշարված քաղաքի մասին տեղեկություններ հասցներ գեներալ Երմոլովին... Հիշում եմ, թե ինչպես բերդում ապաստանած գյուղացիներն իրենց բոլոր անասունները կայազորին էին տալիս՝ սնվելու համար: Ինչպես մեր հարուստներ Հախումովը, Բեգրանբեկ Մելիք Շահնազարովը, Ջոհրաբ աղա Թարումովը և ուրիշներ ընդհանուր օգտագործման համար տրամադրեցին իրենց ունեցած հացի ամբողջ պաշարը... Հիշում եմ նաև, թե մեր հայերը ինչպես էին ցորենի ծանր պարկերը գիշերով ուսած Շուշիքենդ գյուղի ջրաղացը տանում, որտեղ յուզբաշի Սաֆար և Ռոստոմ Թարխանով եղբայրները արագ աղում էին և ետ էին ուղարկում: Առանց այդպիսի օգնության կայազորը երբեք չէր դիմանա վեցշաբաթյա պաշարմանը»: Պատմաբան Վ. Պոտտոն գրել է. «Նույնիսկ նրանց կանայք հերոսուհիներ էին, և նրանցից մեկի՝ Խաթայիի, անունը այն ժամանակ գիտեր ամբողջ Ղարաբաղը...»

Հայերի նվիրվածությունը Ռուսաստանին վառ դրսևորվեց ռազմական գործողությունների ժամանակ: Ա. Երմոլովը Նիկոլայ I-ին 1826 թ. սեպտեմբերի 17-ին ուղղած զեկուցագրում, խոսելով Աբբաս Միրզայի զորքերի նկատմամբ տարած հաղթանակի մասին, նշել է ինչպես ռուսական զորքերի բացառիկ քաջությունն ու անվախությունը, որոնք փախուստի են մատնել թշնամու գերազանցող ուժերին, այնպես էլ հայերի հավատարմությունը: «Սակայն,— գրել է նա,— որոշ չափով արդարացի կլիներ, եթե եզրակացնեինք, որ հազիվ թե Աբբաս Միրզան հանդգնի մի ճակատամարտ ևս տալ Ղարաբաղում, քանի որ, ինչպես ես եմ ակնկալում, տեղի բնակիչները, մանավանդ հայերը, որոնք մըշտապես հավատարիմ են մեզ, ոչ միայն որևէ պարենամթերք չեն տա, այլև նույնիսկ կոչնչացնեն նրա ցրիվ եկած զորքերին, որոնց մեջ սարսափը բազմապատկել է խուճապը»:

Ծանր վիճակ ստեղծվեց Լոռի-Փամբակի շրջանում: Հայտնի հերոս Գրիգոր Մանուչարյանցն իր ջոկատով կարողացավ պարսից սարվազների կողմից շրջապատված Հաղպատի վանքից կովելով դուրս բերել կառամյալ Եփրեմ կաթողիկոսին և տանել Թիֆլիս:

Ա. Երմոլովի առաջադրանքով Գ. Մանուչարյանցի ջոկատը Շամշադին—Սևանի շրջանում պարսից զորքերից ազատագրեց 300 գերյալ հայ ընտա-

Հայ գյուղացիների օգնությունը ռուսական վորքին

նիք և ապահովեց այդ շրջանի անվտանգությունն ու կարգուկանոնը: Ա. Երմոլովը եկավ Հասան-սու և անձամբ շնորհակալություն հայտնեց Գ. Մանուչարյանցին: Նա նաև բավարարեց Մանուչարյանցի խնդրանքը՝ Շամշադինի հայկական գյուղերն ապատելով աղալարների կախումից:

Շամխորի հայտնի ճակատամարտի նախօրյակին՝ 1826 թ. օգոստոսի 22-ին, Գ. Մանուչարյանցի հեծյալ ջոկատը սրընթաց հարվածով ջախջախեց Ջուրաբ խանի պարսից կորքերին: Դա 1826 թ. ամբողջ գործողությունների ժամանակ առաջին լուրջ հարվածն էր Աբբաս-Միրզայի բանակին:

Պարսից կորքերը, չկարողանալով կավթել Շուշին, շարունակեցին արշավանքը դեպի Ելիզավետպոլ: Գրավելով քաղաքը, պարսից բանակի առաջապահ կորամասերը շարժվեցին Թիֆլիսի ուղղությամբ: 1826 թ. սեպտեմբերի 3-ին սրընթաց ռազմերթի դուրս եկավ գեներալ Վ. Մադաթովի երկուհազարանոց ջոկատը, որը շուտով Շամխորի բերդից ոչ հեռու ընդհարվեց Աբբաս Միրզայի 10-հազարանոց առաջապահի հետ: Գեներալ Վ. Մադաթովը, հմտորեն դասավորելով իր կորքերը, ստեղծեց այն պատրանքը, թե պարսիկների դեմ շարժվում է շատ մեծ բանակ, ապա թշնամուն խորտակիչ հարված հասցրեց: Փառաբանված գեներալ, հայրենական պատերազմի հերոս Վ. Մադաթովի այդ փայլուն հաղթանակը ռազմական գործողությունների ընթացքը փոխեց հօգուտ Ռուսաստանի: Զգալով ռուսական կորքերի ուժը, պարսից սարվակներն անգլիական հրահանգիչների հետ ստիպված էին փրկվել՝ փախուստի դիմելով: Խոսելով Վ. Մադաթովի հերոսության մասին, շատերը նշում էին, որ միայն «նրա հայտնվելը նշանակում էր հաղթանակ»:

Անդրկովկասի ժողովուրդները մոբիլիզացրին իրենց բոլոր ուժերը՝ պայքարելու պարսից սարվակների դեմ: Ղարաբաղում, Շիրվանում, Ելիզավետպոլում, Ղազախում, Շամշադինում, Շիրակում, Կախեթում և այլուր կազմակերպված հայկական, վրացական ու ադրբեջանական կամավորական ջոկատները և ժողովրդական աշխարհազորայինները ռուսական փոքրաթիվ կորքերի հետ մարտի ելան պաշտպանելու Անդրկովկասը: Պարսից սարվակների դեմ պայքարում էին Չարդախլու, Ջահիր, Բարսում, Բարում և մերձակա ուրիշ հայկական գյուղերի պարտիզանական ջոկատները: Սեպտեմբերի 13-ին Ելիզավետպոլ հասան պարսից կորքերի գլխավոր ուժերը: Ելիզավետպոլի ճակատամարտը նոր

հաղթանակ բերեց ռուսական բանակին: Ռազմատենչ Աբբաս-Միրզան իր ջոկատների մնացորդներով հազիվ ազատվեց՝ փախուստի դիմելով: Այս անգամ էլ ժողովրդական աշխարհազորայիններն էական օգնություն ցույց տվեցին ռուսական բանակին:

1826 թ. Երևանի խանը նորից հարձակվեց Փամբակի ու Շորագյալի վրա և սարսափելի ավերածություններ կատարեց: Լոռի-Փամբակի շրջանում Երևանի սարդարի ու պարսից կորքերի դեմ ռազմական գործողությունները գլխավորում էր 1812 թ. հայրենական պատերազմի հերոս, պոետ-պարտիզան, գեներալ-մայոր Դ. Դավիդովը: Նրա կորքերի ավանգարդում էր գտնվում գնդապետ Սևարսեմիձեի ղեկավարությամբ գործող վրացական հեծելազորը, որը կգալի դեր խաղաց այդ մարտերում:

Գեներալ Վ. Մադաթովի կորքերը 1826 թ. դեկտեմբերին Արաքս գետի աջ ափին ջախջախեցին ու ետ շպրտեցին պարսից կորքին: Մարտերում սըխրանքներով աչքի ընկավ հայերից ու որոշ ադրբեջանցիներից կազմված կամավորական ջոկատը:

1827 թ. գարնանը ռուսական կորքերը գեներալ Ի. Պասկևիչի հրամանատարությամբ շարժվեցին Երևանի ուղղությամբ: Հայ ժողովրդի բախտը կախված էր ռուս-պարսկական պատերազմի ելքից: Լավ գիտակցելով այդ, հայ ժողովուրդն ամեն կերպ օժանդակում էր ռուսական կորքերին:

Ներսես Աշտարակեցին և Ի. Պասկևիչը

Հայ կամավորական ջոկատների կազմակերպիչն ու ոգեշնչողը Ներսես Աշտարակեցին էր: Վավերագրերից մեկում նշված էր, որ Ներսեսը բազում տարիներ ապացուցելով իր նվիրվածությունը Ռուսաստանին, նպաստել է նաև Երևանի գավառի հայերից՝ 400 հեծյալից և 800 հետևակայիններից բաղկացած կամավորական ջոկատի ստեղծմանը, որը ռուսական բանակի շարքերում հերոսական պայքար է մղել թշնամու դեմ:

Պարսիկների դեմ պայքարին մասնակցած հայ ռազմիկներից հատուկ ուշադրության են արժանի Վեքիլովն ու Քալանթարովը: Խոսելով Ռուսաստանին նրանց մատուցած ծառայությունների մասին, Ի. Պասկևիչը 1827 թ. մայիսի 30-ին Ի. Դիբիչին ուղղված զեկուցագրում նշում է, որ Վեքիլովը, որն արիության ու խիզախության օրինակներ է տվել դեռևս 1826 թ. Գյումրիում, այնուհետև գլխավորել է հայկական հեծելազորը և «աննկուն եռանդով պաշտպանել սահմանը», իսկ 1827 թ. մայիսի 21-ին «համոզել անձնատուր լինել Ձորակում ամրացած և իրենց շրջապատած կազակների վրա ուժեղ կրակ բացած 90 պարսիկի»: Ի. Պասկևիչն իր զեկուցագրում խնդրում էր պարգևատրել Վեքիլովին և Քալանթարովին:

1827 թ. օգոստոսի 1-ին Ղրիմյան հետևակային գնդի 2-րդ գումարտակն ընկավ թշնամու հետևակի ու հեծելազորի կրակի տակ: Ղրիմյան գնդի գումարտակի հետ էին նաև հայկական երկրորդ գնդի 65 հայեր, որոնք այդ անհավասար մարտում ցուցաբերեցին արիություն և դժվարին պայմաններում կողմնորոշվելու ունակություն: 1827 թ. օգոստոսի 5-ի զեկուցագրում 20-րդ հետևակային դիվիզիայի պետ գեներալ-լեյտենանտ Ա. Կրասովսկին միջնորդեց այդ խիզախ մարտիկներին պարգևատրելու մասին:

Նկատի առնելով հայերի արիությունն ու անձնազոհությունը, կառավարությունն ընդունեց հայկական կամավորական գնդեր, այսինքն՝ կանոնավոր զորքեր կազմելու մասին որոշում: Դեռևս 1827 թ. մարտին Թիֆլիսում կազմավորվեց հայկական առաջին գունդը: Ռազմական նահանգապետ Ն. Սիպյագինի նախագահությամբ ստեղծվեց կառավարական հատուկ հանձնաժողով, որը շուտով մշակեց հայ կամավորական գնդերի կանոնադրությունը և հաստատեց հաստիքները: Այդ ամենն առաջ բերեց հայ ժողովրդի չտեսնված ոգևորությունը:

Խերսոնյան գնդի պրապորշչիկ Սումբատովի հրամանատարությամբ 1827 թ. գարնանը Թիֆլիսում ստեղծված հայ կամավորական ջոկատներից մեկը ժամանեց Ջալալօղլի: 150 մարդուց բաղկացած այդ ջոկատը երդում տվեց և իր դրոշի ներքո գնաց հաղթական կռվի: Թիֆլիսում հաջողությամբ էր ընթանում աշխարհազորային ջոկատներում հայերի հավաքագրումը: Ի. Պասկևիչի՝ 1827 թ. մայիսի 11-ին Ի. Դիբիչին ուղղած զեկուցագիրը վկայում է, որ մի քանի օրվա ընթացքում աշխարհազորայինների շարքերն է մտել 100 հայ:



Խաչատուր Աբովյան

1827 թ. մայիսին Վրաստանում ռուսական զորքերի հրամանատարը հայերին դիմեց մի կոչով, որն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Հայեր, ձեր ջանքերն ըստ արժանվույն վարձահատուցված են, դուք ձեր սեփական դրոշի ներքո կունենաք սեփական գնդեր ձեր կեղեքված եղբայրներին հանգըստացնելու, ձեր ընտանիքների անվտանգությունն ապահովելու»: Կոչը հռչակելու երրորդ օրը Թիֆլիսից դուրս եկավ առաջին հայկական գունդը: 1827 թ. մայիսի 15-ին այն փոխպորուչիկ Ակիմովի հրամանատարությամբ Թիֆլիսից ուղղվեց Էջմիածին՝ «գործող զորքերին միանալու համար»: Շատերը ցանկություն հայտնեցին դառնալ կամավորներ և իրենց լուման ներդնել հայրենիքի ազատագրման գործում: Վավերագրերից մեկում այդ մասին ասված է. «Ճանապարհին հայ բնակիչներից շատերը նույնպես պատրաստ են միանալու իրենց եղբայրակիցներին. նրանց թիվը հասնում է 1000 մարդու, բոլորն էլ հայեր: Ամենքն էլ գործում են հավատարմության ու նվիրվածության ոգով...» Նույն այդ վավերագրում ասվում է, որ 1827 թ. մայիսի 8—10-ին Երևանի բերդից «տեղացի հայ բնակիչներից 150 մարդ փախել ու միացել է ռուսներին»: Կամավորական շարժումը գտավ համաժողովրդական աջակցություն: Ներսիսյան դպրոցի տեսուչ Հ. Ալամդարյանը, Թիֆլիսում ելույթ ունենալով հայ կամավորական գնդի առջև, հայտարարեց, թե նրանք կռիվ են գնում հայ ժողովրդի գոյության համար, և դա պետք է լավ գիտակցեն:

1827 թ. օգոստոսին Թիֆլիսում կազմակերպվեց հայկական երրորդ գունդը, որը պաշտոնաթող կապիտան Բուբուրովի հրամանատարությամբ շարժվեց Երևանի ուղղությամբ, որպեսզի միանա գեներալ մայոր Ա. Կրասովսկու ջոկատին:

Ռուս զինվորների օգնությամբ օտար լծից ազատագրվելու գաղափարը տոգորել էր ամեն մի հայ աշխատավորի: Այդ մասին գեներալ Ն. Մուրավյովը գրել է. «Թվում էր, թե մի նոր ոգի է համակել բոլոր հայերին, որոնք հույս ունեն տեսնել իրենց թագավորության վերականգնումը...»: Այնուհետև նա նշում էր, որ հայ կամավորներն Օրդուբադի շրջանում «վրացական գնդի գումարտակի հետ պարսիկների դեմ կռվում էին այնպես, ինչպես միայն կարելի էր երազել: Սույն նոր զորքը լավագույն հույս է ներշնչում, որ կգա մի ժամանակ, երբ կարելի կլինի տեղական զորքերից մի պատկառելի կորպուս կազմել, որը կկարողանա փոխարինել այստեղ՝ Վրաստանում, կլիմայի հետևանքով մեռնող ռուսներին»:

1827 թ. մարտին հայ գյուղացիներից կազմակերպված կամավորական ջոկատն ուներ ավելի քան հազար մարտիկ: Դա մեծ օգնություն էր ռուսական զորքերին:

Մշակվել էր 34 կետից բաղկացած հատուկ «կանոնադրություն՝ հայկական գումարտակներ կազմակերպելու համար»: 1827 թ. Ի. Պասկևիչը հաստատեց այն: «Կանոնադրության» մեջ հատկապես ընդգծվում էր, որ գումարտակում կամովին զինվորագրվում են 18—30 տարեկան բոլոր հայերը: Բայց միաժամանակ վերապահություն էր արվում, թե դա չէր կարող խստիվ պահպանվել, «այլ պահանջվում էր միայն, որպեսզի մարդը բավականաչափ ուժ ունենար արշավանքին դիմանալու համար»: Բոլոր կամավորները իրենց ընտանիքներով «ծառայության ժամանակ ազատվում են ամեն տեսակ հարկերից ու պարհակներից»: Պատերազմը վերջանալուց հետո կամավորներն իրավունք ունեին տուն վերադառնալ կամ ծառայության մտնել զեմստվային



Ներսես Աշտարակեցի

Գեներալ Ա. Դ. Կրասովսկի

Հայ կամավորների դրոշը (1826 թ.)

Սարդարապատի բերդի գրավումը 1827 թ. (Մաշկովի ալբոմից)



կորքերում, տալով ծառայությանը հավատարիմ լինելու երդում:

1827 թ. ապրիլի 27-ին ռուսական զորքերը պաշարեցին Երևանը: Աբբաս-Միրզան շտապեց օգնել Երևանի սարդարին: Սակայն Ի. Պասկևիչը գեներալ Ա. Կրասովսկու զորամասերին թողեց պաշարելու Երևանը, իսկ ինքը հիմնական ուժերով շարժվեց դեպի Նախիջևան՝ պարսից զորքերին ընդառաջ: Սկսվեցին կատաղի կռիվները: 1827 թ. հունիսի 5-ին Ջևան-Բուլաղի մոտ պարսից զորքերը պարտություն կրեցին: Աբբաս-Միրզան հաշտություն խնդրեց: Բանակցություններ վարելու համար ռուսական զորքերի շտաբից ուղարկեցին Ա. Գրիբոյեդովին, իսկ որպես թարգմանիչ՝ ադրբեջանցի պատմաբան, լուսավորիչ Աբբաս-Ղուլի աղա Բակիխանովին: Շուտով պարզվեց, որ Աբբաս-Միրզայի առաջարկը խորամանկ մի քայլ էր, որպեսզի ժամանակ շահեր ու նոր պատերազմ սկսեր: Մի քանի օր հետո պարսից զորքերը հանկարծակի հարձակում սկըսեցին և պաշարեցին Էջմիածինը, իսկ օգոստոսի 17-ին Օշականի մոտ շրջապատեցին Ա. Կրասովսկու ջոկատներից մեկը: Երեքհազարանոց այդ ջոկատը, հակագրոհի նետվելով պարսից 30-հազարանոց բանակի դեմ, լուրջ հաղթանակ տարավ: 1827 թ. դեկտեմբերի 11-ին իր բարեկամին ուղղած նամակում գրել է. «Երևանի բնակիչները, ի նշան իրենց նվիրվածության, դեկտեմբերի 6-ին ինձ մատուցեցին 13 հազար ռուբլի՝ Երևանի գավառում գտնվող զորքերին բաժանելու համար, որոնցից Երախտագետ հայ ժողովուրդը հավերժացրել է ռուս ռազմիկների հիշատակը՝ նրանց պատվին կանգնեցնելով փառքի մոնումենտալ հուշարձան: Թշնամին ստիպված էր թողնել Էջմիածինն ու անցնել Արաքսի աջ ափը: Ռուսական զորքերը սեպտեմբերի 20-ին գրավեցին Սարդարապատը և սեպտեմբերի 25-ին սկսեցին Երևանի պաշարումը: Հասան խանը համառորեն հրաժարվում էր հանձնել բերդը:

1827 թ. հոկտեմբերի 1-ին ռուսական զորքերը գրոհով գրավեցին Երևանը: Գրոհողների շարքերում հերոսաբար մարտնչում էր նաև հայ կամավորական ջոկատը: Անդրադառնալով Երևանի բերդի գրավմանը, Խ. Աբովյանը գրել է. «Դժոխքի քանդվելը մեղավորների համար էս գինը չէր ունենա, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար»:

Ի նշան երախտագիտության, Երևանի բնակիչները նվերներ ու թանկարժեք իրեր հավաքեցին և մատուցեցին ռուս ազատարար մարտիկներին: Այդ մասին բավական հետաքրքիր տվյալներ ենք գըտնում Ա. Կրասովսկու նամակներում ու ժամանակի

վավերագրական ուրիշ նյութերում: Ա. Կրասովսկին ամեն մեկին հասավ 1 ռ. 50 կ.»:

Երևանի գրավումից հետո ռուսական զորքերի ընդհանուր հարձակումը շարունակվեց: 1827 թ. հոկտեմբերի 13-ին նրանք մտան Թավրիզ, որտեղ «տեղի հայ և ադրբեջանցի ազգաբնակչությունը ռուսներին դիմավորեց աղուհացով»:

Ռուսական հաղթական զորքերը գրավեցին նաև Մարաղան, Խոյը, Ուրմիան, Սալամաստը, Արդաբիլը և սպառնացին Թեհրանին: Շահը ստիպված իրեն պարտված ճանաչեց և առաջարկեց կնքել հաշտության պայմանագիր: Բանակցությունները շարունակվեցին մի քանի ամիս:

Բանակցությունները վարելու գործում չափազանց մեծ դեր խաղաց Ա. Մ. Գրիբոյեդովը, որը «Դեհխարղանում և ապա Թուրքմենչայում հաշտության բանակցությունների ընթացքում դիվանագիտական հարաբերություններում ցույց տվեց առանձնահատուկ արվեստ...» 1828 թ. փետրվարի 22-ին կնքվեց Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը, որը պատմական նշանակություն ունեցավ անդըրկովկասյան ժողովուրդների կյանքում: Այդ պայմանագրով Երևանի և Նախիջևանի խանությունները մտան Ռուսաստանի կազմի մեջ: Այսպիսով, ամբողջ Անդրկովկասը միացավ Ռուսաստանին: Շահը պարտավորվեց վճարել 20 միլիոն ռուբլու ռազմատուգանք: Պարսկաստանում ապրող հայերն իրավունք ստացան գաղթել Հայաստան և ընդունել ռուսական հպատակություն:

Բնակչության մեջ համընդհանուր ուրախություն առաջացրեց Հայկական մարզի ստեղծումը: Այդ առիթով հայ հասարակական գործիչ Կոստանդին Արղությանը Ք. Լազարյանին գրել է. «Պարսկաստանի հետ կնքված հաշտությունը տարբեր առումներով ինձ հաճելի պահեր պատճառեց, որոնցից մեկը Երևանի ու Նախիջևանի գավառները Հայկական մարզ համարելն էր... Այս նոր մարզի բնակիչները՝ մեր ցեղակիցները, Հայկական մարզ անվանմամբ պարգև են ստանում մի տեսակ յուրօրինակ հարստություն: Չափազանց գեղեցիկ և չափազանց օգտակար մի հղացում...» 1828 թ. մարտի 21-ին նորաստեղծ Հայկական մարզի պետ նշանակվեց գեներալ Ա. Կրասովսկին: Նրանից հետո Հայկական մարզի երկրորդ դեմքը Ներսես Աշտարակեցին էր:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո հայ ազատագրական շարժման ակտիվ շատ գործիչների մոտ վերակենդանացավ Ռուսաստանի խնամակալության ներքո հայ պետականու-

Ջևան-Բուլաղի գրավումը ռուսական զորքերի կողմից 1827 թ. հուլիսի 7-ին

թյան վերականգնման գաղափարը: Այդ գաղափարի ակտիվ ջատագովներ դարձան Ն. Աշտարակեցին, Ք. Լազարյանը, Հ. Արղությանի ազգական, գրիգորիոպոլցի Կ. Արղությանը և ուրիշներ: Նորից առաջ քաշվեց Արղության—Լազարյանների ծրագիրը: Այդ ծրագրի առթիվ Կ. Արղությանը 1827 թ. նոյեմբերի 25-ին Ք. Լազարյանին գրել է, որ նայելով իր պապի՝ Հ. Արղությանի թղթերը, ինքը դրանց մեջ գտել է այն պայմանագրի տեքստը, որը «պետք է կընքվեր ռուս և հայ ժողովուրդների միջև՝ ենթադրելով վերջինիս քաղաքական դրության վերականգնումը: Այս թուղթը,— նշել է նա,— գրված հանգուցյալ պապիս ձեռքով, չափազանց ուշագրավ է՝ հանգամանքներին նայելով, որովհետև նրա մեջ խոսվում է թագավորության մասին, հայկական թագավորի մասին, որի ընտրությունը թողնվում է գերիմաստ թագավորի կամքին»:

Սակայն ցարական կառավարությունը մտադիր չէր հայկական պետություն ստեղծել: Նա ձգտում էր Արևելյան Հայաստանը դարձնել իր պրովինցիաներից մեկը: Այդ պատճառով էլ բավական վճռական միջոցներ էին ձեռնարկվում ինքնուրույն Հայաստանի կազմավորումը խափանելու ուղղությամբ: Դրա համար անհրաժեշտ էր շուտափույթ մեկուսացնել Ն. Աշտարակեցուն, և 1828 թ. նրան տեղափոխեցին Քիշնև՝ որպես Նախիջևան—Բեսարաբիայի հայկական թեմի առաջնորդ:

Նշված ժամանակաշրջանում ռուս-թուրքական հարաբերությունները բարդացան: Դրանք ավելի էին սրում արևմտյան տերությունները: 1828 թ. ամռանը սկսվեց ռուս-թուրքական պատերազմը: Հուլիսի 14-ին ռուսական զորքերն անցան Ախուրյան գետը և սկսեցին հարձակումը Կարսի ուղղությամբ: Թուրքական զորքերը ավերում էին հայկական գյուղերը, իսկ բնակչությանը քշում երկրի խորքերը: Վրա հասած ռուսական զորքերից հայերը խնդրում էին «ազատել իրենց կեղեքիչների ձեռքից ու ընդունել ռուսների հովանավորության ներքո»: Արևմտյան Հայաստանի հայերը հանձին ռուս զավակների տեսնում էին իրենց փրկիչ-եղբայրներին, որոնց երկար էին սպասել: Այդ պատերազմի ականատեսը պատմում է. «Ինչ-որ հարազատ մի ոգի ամեն մեկի զգացումը միացնում էր բոլորին: Եվ զարմանալի չէ. խաղաղ բնակիչները հանձնվում էին մեր պաշտպանությանը, մենք տեսնում էինք նրանց լիակատար վստահությունը հանդեպ ռուսները: Նրանց երախտագիտությունը ցնցում էր մեզ, առաջ բերում ժողովրդի հպարտություն, բարձր, ազնիվ զգացումներ»: Հայերը ցույց էին տալիս տարբեր տեսակի օգնություն. պարենամթերք էին բերում, որպես ուղեցույց-առաջնորդներ ուղեկցում էին ռուսական զորամասերին, հասցնում էին անհրաժեշտ տեղեկություններ, հանդես գալիս որպես հետախույզներ: Այս ամենը դյուրացնում էր ռուսական զորքերի առաջխաղացումը, որոնք հուլիսի 23-ին գրոհով վերցրին Կարսը: Կարսի գրավմանն ակտիվորեն մասնակցեցին հայկական, վրացական ու ադրբեջանական կամավորական ջոկատները: Ռուսներին անցան Ախալքալաք, Ախալցխա, Արդահան բնակավայրերը: 1828 թ. օգոստոսի 25-ին գեներալ Ա. Ճավճավաձեի զորամասը մտավ Բայազետի փաշայություն: Թուրքական զորքերը խուճապահար փախուստի դիմեցին: Բայազետի փաշան ստիպված էր հանձնել բերդի բանալիները: Սեպտեմբերի 12-ին ռուսական զորքերը տիրեցին նաև Թոփրակ-Կալեին ու Ալաշկերտին:


Օշականի ճակատամարտի հուշարձանը

Սակայն 1829 թ. գարնանը ռազմական իրադրությունը բարդացավ: Հունիսի 19—20-ին թուրքերը հանկարծակի հարձակում սկսեցին Կարսի և


Երևանի բերդի գրավումը (Մաշկովի ալբոմից)

Երևանի բերդի գրավումը 1827 թ.



Երևան. Ա. Ս. Գրիբոյեդովի հուշարձանը

Ախալցխայի ուղղությամբ: Ռուսական զորքերը վճռական հարվածով նրանց ետ շպրտեցին Սոդանլուղի լեռների մյուս կողմը: 1829 թ. հունիսի 24-ին ռուսական զորամասերը, գրավելով Հասան-Ղալա բերդը, մոտեցան Էրզրումին: Հունիսի 27-ին առանց կռվի հանձնվեց Էրզրումը, ապա ռուսական զորքերը գրավեցին Մուշը, Բաբերդը և ուրիշ քաղաքներ:

Ամենուրեք հայ աշխարհազորայինները ամենագործուն օգնություն էին ցույց տալիս ռուսական բանակին: «Երբ 1828 թ. ռուսաց բանակը Արզրում մտավ,— ասված է փաստաթղթերից մեկում,—տեղական հայերը Պասկևիչի առաջարկությամբ 500 հոգուց բաղկացած մի խումբ զինվոր դրեցին նրա տրամադրության տակ...» Հայերը ռուսական զորքերին ակտիվորեն օգնեցին նաև 1829 թ. հունիսին Հին Բայազետի պաշտպանության ժամանակ: Բայազետի հերոսական պաշտպանությունը, որը ղեկավարում էին գեներալներ Պոպովն ու Պանյուշինը, ռուս և հայ ժողովուրդների մարտական համագործակցության փայլուն դրվագներից էր: Այդ մարտերին մասնակցեց 2 հազար հայ, որոնք իրենց ռուս զինակիցների հետ կիսում էին զինվորական կյանքի բոլոր դժվարություններն ու հաղթանակի բերկրանքը:

Գեներալ Պոպովը, հիացած հայ զինվորների ու հրամանատարների արիությամբ, վկայում է, որ Հին Բայազետի համար մղված կռիվներում հայերը մարտնչել են որպես իսկական հերոսներ: 1829 թ. հոկտեմբերի 10-ին Ի. Պասկևիչը կայսրին գրել է. «Այս հեռավոր երկրներում, որտեղ քրիստոնեությունը քանի դար ճնշվել է անարդար լծից, Ձերդ կայսերական մեծության բանակը կարող է երկյուղ չկրել... Բայազետում 2 հազար հայ կռվել է մեր զորքերի շարքերում... Կարսում հայերից կազմվել է գումարտակ, և մինչև 80 հոգանոց նրանց հեծելազորը պաշտպանել է սահմանը ասպատակություններից»:

Հին Բայազետի համար մղված կռիվներում ռուս ռազմիկների հետ ուս ուսի մարտնչեցին նաև հայկական աշխարհազորի 400 մարտիկներ: Իսկ Դիադին բերդի համար մարտերում աչքի ընկան սարդարապատցի 50 աշխարհազորայիններ և Հին Բայազետի շրջակայքից հավաքված աշխարհազորայինների մի ջոկատ: 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմին մասնակցած հայ աշխարհազորայինների մասին պատմաբան Ա. Երիցյանը գրել է. «Երբ 1828 թ. սկսվեցավ օսմանյան պատերազմը, Արարատյան աշխարհի հայք տվին մոտ 2000 հետևակ զորք... մոտ 800 հոգուց բաղկացած հեծելագունդ, որոնք այնուհետև անբաժան էին ռուսաց հառաջ ընթացող բանակից»:

Ն. Աշտարակեցին կառավարությունից առաջադրանք ուներ ամեն բան անել, որպեսզի Մոլդավիայում, Վալախիայում և ռուսական զորքերի կողմից գրավված այլ շրջաններում հայերը հնարավոր ամեն տեսակ օգնություն ցույց տային Ռուսաստանին: Ներսեսին կոմս Բլուդովի ուղղած նամակում (1829 թ., մարտ) ասվում էր. «Դուք... կարող եք... նոր սկսվող պատերազմում նպաստել ոչ միայն մեր զորքերի հաջողությանը, այլև օգնել Եվրոպական Թուրքիայում հայերի վրա ունեցած Ձեր ազդեցությամբ»:

Հայերը ռուս-թուրքական պատերազմին ակտիվ մասնակցեցին նաև Բալկաններում: Ք. Լազարյանը ծառայում էր Բալկաններում գործող զորքերում, որտեղ նրան հանձնարարված էր թուրքահայերին հակել Ռուսաստանի կողմը: Նրան օգնում էին Օդեսայի, Գրիգորիոպոլի, Քիշնևի և Բուխարեստի հայերը: Գրիգորիոպոլի հայերի (հատկապես Կ. Ար-

Ռուս և հայ զինվորների հուշարձանը Աբովյանում

Ռուսական մեդալ ի պատիվ Երևանի գրավման (1828 թ.)

ղության) միջոցով ուղարկվեցին «կոչեր ու հաղորդումներ թուրքահայերին»: Կ. Արղությանը նման նյութերը Թուրքիա էր հասցնում Վենետիկի հայ վաճառականների միջոցով, որոնք առևտրական գործերով կապված էին Կ. Պոլսի հետ: Բացի այդ, Ք. Լազարյանի և Կ. Արղությանի առաջադրանքով շատ հայեր թափանցում էին Թուրքիա և արժեքավոր տեղեկություններ հասցնում ռուսական բանակին:

Ռուս-թուրքական պատերազմի ճակատներում դրության տերը բացահայտորեն Ռուսաստանն էր: Թուրքական սուլթան Մահմուդ II-ը ստիպված էր հաշտություն խնդրել: 1829 թ. սեպտեմբերի 2-ին կնքվեց Ադրիանապոլսի պայմանագիրը, որով Ռուսաստանին անցան Անապան ու Փոթին՝ մերձսևծովյան շրջաններով, ինչպես նաև Ախալցխան ու Ախալքալաքը: Այդ հաղթանակը Անդրկովկասի ժողովուրդների համար ունեցավ զգալի նշանակություն: Բոլոր երկրների հայերը հանդիսավորապես նշեցին ռուսական բանակի հաղթանակը: Նոր Նախիջևանի և ուրիշ վայրերի հայոց եկեղեցիներում ռուսական բանակի տարած հաղթանակի առթիվ կատարվեցին հանդիսավոր արարողություններ:

* * *

Դեկաբրիստները, որոնց մի զգալի մասը աքսորվել էր Անդրկովկաս, կենդանի հետաքրքրություն հանդես բերեցին երկրամասի ժողովուրդների բախտի նկատմամբ, ողջունեցին ազատագրվելու

Թուրքմենչայի պայմանագրի կնքումը 1828 թ. փետրվարի 10-ին (Մաշկովի ալբոմից)

նրանց ձգտումները: Ռուսական բանակի կազմում նրանք ակտիվ մասնակցություն ունեցան ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին:

Դեկաբրիստների գործունեությունն Անդրկովկասում և, մասնավորապես, Հայաստանում կարևոր տեղ է գրավում ռուս-հայկական կապերի մեջ: Ե. Լաչինովը եգերյան 39-րդ գնդի կազմում մասնակցեց Սարդարապատի բերդի պաշարմանը: Նա աչքի ընկավ քաջությամբ ու խիզախությամբ, ինչի համար էլ նրան շնորհվեց ենթասպայի կոչում: Հետագայում Ե. Լաչինովը գեներալ Կրասովսկու հետ, որի շտաբում նա ծառայում էր, մի քանի անգամ ուղևորություն կատարեց Արևելյան Հայաստանում: Եվ միայն 1832 թ. դեկտեմբերին՝ հիվանդության պատճառով, նա ազատվեց զինվորական ծառայությունից: Լաչինովի մերձավորագույն բարեկամներից մեկը հայտնի հայագետ, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, պրոֆեսոր Շահան Ջրպետյանն էր: Ե. Լաչինովը նրա հետ ծանոթացել էր Երևանի մարզի վիճակագրական նկարագիրը կազմելու առիթով:

Երևանի, Սարդարապատի ու Էջմիածնի շրջանում ռազմական գործողություններին մասնակցեց նաև Մ. Պուշչինը՝ դեկաբրիստ Ի. Պուշչինի կրտսեր եղբայրը: Մ. Պուշչինը այդ մարտերում հանդես բերեց բացառիկ քաջություն: Մեծ են նրա ծառայությունները հատկապես Երևանի բերդի գրավման ժամանակ, սակայն նրան միայն այնքան գնահատեցին, որ տվեցին ենթասպայի կոչում:

1812 թ. հայրենական պատերազմի մասնակից Ն. Սեմիչևը Պետրոպավլովսկի ամրոցում վեցամսյա բանտարկությունից հետո 1826 թ. հուլիսին փոխադրվեց Կովկաս, որտեղ ծառայեց Ի. Պասկևիչի հրամանատարությամբ գործող գլխավոր ջոկատի կազմում: Ն. Սեմիչևը ակտիվորեն մասնակցեց 1827 թ. պատերազմի շատ մարտերին, ինչպես նաև 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմին, ամենուրեք հանդես բերելով խիզախություն:

Երևանի պաշարմանն ու գրավմանը մասնակցեց նաև Ֆ. Վիշնևսկին, որը 1827 թ. փետրվարից ծառայում էր Կովկասում: Ֆ. Վիշնևսկու ծառայացուցակում կարդում ենք. «Սեպտեմբերի 24-ից մինչև հոկտեմբերի 1-ը մասնակցել է այդ կարևոր բերդի պաշարմանն ու գրավմանը... և այդ ճակատամարտում աչքի ընկնելու համար բարձրագույնի հրամանով արժանացել է ենթասպայի կոչման»:

Արևելյան Հայաստանը պարսից լծից ազատագրելու կռիվներին ակտիվ մասնակցություն ունեցան նաև դեկաբրիստներ Ա. Ռինկևիչը, Ն. Շերեմետևը, Մ. Մալյուտինը, Ն. Օրժիցկին, Վ. Սուխորուկովը և շատ ուրիշներ: Ռուս-թուրքական պատերազմում աչքի՛ ընկան Կովկաս աքսորված դեկաբրիստներ Զ. Չերնիշևը, Ա. Վադկովսկին, Վ. Գոլիցինը, Ա. Բրոկեն, Վ. Տոլստոյը և ուրիշ սպաներ ու շարքայիններ:

Կովկաս էին աքսորված նաև երեք Բեստուժև և երկու Կոնովիցին եղբայրները: Պ. Բեստուժևը մասնակցել է Սարդարապատի, Երևանի, իսկ ռուս-թուրքական պատերազմում՝ Կարսի, Ախալքալաքի ու Ախալցխայի ճակատամարտերին: Թե ինչպես է կռվել նա, կարելի է դատել նրա եղբոր՝ ռուս հայտնի գրող-դեկաբրիստ Ալեքսանդր Բեստուժև-Մառլինսկու 1828 թ. դեկտեմբերի 14-ին իր եղբայրներ Նիկոլային ու Միխայիլին գրած նամակից: Նա գրել է, որ Պյոտրը «պարսիկների դեմ փառավոր կռիվներից հետո, հազարավոր հիվանդություններից ու հարձակումներից հետո ստացել է ենթասպայի կոչում»:

Բեստուժև հինգ եղբայրներից ամենակրտսերը՝ Պավելը, 1826 թ. նոյեմբերին ուղարկվել էր Կովկաս, 13-րդ հրետանային բրիգադ: Ախալցխայի և Էրզրումի համար մղված մի շարք կռիվների մասնակից Պ. Բեստուժևը պարգևատրվել է մի շարք շքանշաններով: «Մարտերում աչքի ընկնելու համար,— նրա մասին ասված է պաշտոնական վավերագրերից մեկում,— ստացել է ս. Աննայի 4-րդ աստիճանի՝ «Քաջության համար» մակագրությամբ, և Ստանիսլավի 4-րդ աստիճանի շքանշաններ: Երեք անգամ արժանացել է բարձրագույնի բարեհաճությանը և երկու անգամ ստացել արտահերթ աշխատավարձ՝ տարեկան դրույքի չափով»:

Բեստուժև եղբայրներից Ալեքսանդրը նույնպես եղել է Հայաստանում: Նա 1829 թ. սեպտեմբերի 26—27-ին մասնակցել է Բաբերդի գրավմանը, եղել է Կարսում, Էրզրումում և այլ վայրերում, բազմաթիվ հետաքրքիր գրառումներ է կատարել Ռուսաստանի նկատմամբ հայերի ունեցած բարյացակամ վերաբերմունքի մասին:

Հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ Ա. Բեստուժև-Մառլինսկու մեծ հետաքրքրության մասին են վկայում նրա նամակները, որոնք լի են հայերի դառն վիճակի նկատմամբ անկեղծ կարեկցանքով: Նրա 1830 թ. օգոստոսի 20-ի նամակում կարդում ենք. «Ես հետո թափառեցի հայկական թագավո-

Գեներալ մայոր Ն. Ն. Ռաևսկի

Դ. Վ. Դավիդով



Դեկաբրիստ Մ. Ի. Պուշչին

րության ավերակներում, ես տեսա Պարսկաստանի նվաճած այդ տխուր երկիրը, ես կոխկրտեցի Արարատի ստորոտը, եղա Սարդարապատում, Երևանում, որը այն ժամանակ դեռևս վարակված էր ժանտախտով: Նրա մեչիդների վրա տեսա մեր ռումբերի ու արկերի հարվածները, տեսա այն լեռնային ճանապարհը, որով Էջմիածին էր գնացել Կրասովսկին, որտեղ այնքան ռուսներ էին ընկել ոչ թե պարտված, այլ հոգնած: Ընդհանրապես, այս ամբողջ երկրամասը թախիծ է պատճառում մարդու սրտին. մերկ, այրված հրաբխային լեռներ, անկենդան տափաստաններ կամ կիրճեր, որոնց մեջ ոլորապտույտ բարձրանում է փոշին և խշշում մոլախոտը: Ահա բոլորը: Գյուղերը գետնի տակ են, բնակիչները՝ ցնցոտիներով»:

Դեկաբրիստ Ա. Օդոևսկին Կովկասին նվիրեց 13 բանաստեղծություն: Պ. Կոնովնիցինը Կովկասում իր ծառայությունն սկսեց կովկասյան սակրային գումարտակում, որտեղ նա համարվում էր լավագույններից մեկը: Նա մասնակցել է Սարդարապատի, Երևանի, Էջմիածնի կռիվներին, քաջաբար մասնակցել Աբասաբադ բերդի գրավմանը: Թուրքական արշավանքի ժամանակ նա Ախալքալաքը պաշարողների թվում էր և ցուցաբերած քաջության համար նշվել է հրամանատարության կողմից: Ի. Կոնովնիցինն իր ավագ եղբոր նման մասնակցել է Սարդարապատի ու Երևանի բերդերի գրավմանը և ռուս-թուրքական պատերազմի այլ ճակատամարտերին:

Դեկաբրիստներ Ի. Բուրցովը, Պ. Լեմանը, Վ. Վոլխովսկին և Ա. Միկլաշևսկին նույնպես Կովկաս աքսորվածների թվում էին, բայց նրանց պինվորական աստիճանները պահպանված էին: Գնդապետ Ի. Բուրցովն աչքի ընկավ 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմում: 1828 թ. օգոստոսից նա Խերսոնյան գրենադերյան գնդի հրամանատարն էր, իսկ Կարսի պաշարման ժամանակ՝ խրամատի պետը: Այդ նույն պաշտոնում էր նաև Ախալցխայի պաշարման ժամանակ՝ 1828 թ. օգոստոսին: Համարյա ամեն մի հարցի շուրջ Ի. Պասկևիչը խորհրդակցում էր Ի. Բուրցովի հետ: Բերդը գրոհելու օրը նա կորքերի առաջին շարքերում էր: Բաբերդի համար մղված կռիվներում նա ծանր վիրավորվեց և շուտով մահացավ:

Դեկաբրիստ Ե. Ե. Լաչինով

Պարսկաստանի ու Թուրքիայի դեմ մղված պատերազմների շրջանում փառապանծ ուղի անցավ գնդապետ Պ. Լեմանը: Թիֆլիսի պինվորական նահանգապետ, գեներալ-ադյուտանտ Սիպյագինը 1828 թ. մարտի 27-ին նրան շնորհակալություն հայտնեց այն բանի համար, որ նրա ջոկատը, գտնվելով Թուրքիայի սահմանի վրա, կարողացավ ոչ միայն հաջողությամբ ետ մղել թուրքական բանակի գրոհները, այլև գերապանց ամրացնել Ծալկա բերդը: Սողանլուղի բարձունքների, ինչպես նաև Քաթնլի և Միլդուպի շրջանում մղված կռիվներում Պ. Լեմանն անձնական քաջության համար պարգևատրվեց ս. Գևորգի 4-րդ աստիճանի շքանշանով:

Վ. Վոլխովսկին որպես կապիտան մասնակցեց Սարդարապատի ու Երևանի պաշարմանը: 1827 թ. դեկտեմբերի սկզբին, Ի. Պասկևիչի հանձնարարությամբ, նա եկավ Թեհրան, որպեսզի պարսից կառավարությանը շարադրի Ռուսաստանի պայմանները: Դիվանագիտական այդ կարևոր առաքելությունը նա գերապանց կատարեց: Ռուս-պարսկական պատերազմի տարիներին Վ. Վոլխովսկին արժանացավ փոխգնդապետի կոչման:

Երբ 1826 թ. հուլիսի վերջին Աբբաս-Միրզան իր 60-հազարանոց բանակով պաշարեց Շուշին, որտեղ էր գտնվում նաև դեկաբրիստ, փոխգնդապետ Ա. Միկլաշևսկին: Բերդի ուրիշ պաշտպանների հետ նա ցույց տվեց իսկական հերոսության օրինակ: Ռուս-թուրքական պատերազմի տարիներին նա հատկապես աչքի ընկավ Կարսի, Ախալքալաքի, Ախալցխայի գրոհների ժամանակ: 1828 թ. նոյեմբերին Ա. Միկլաշևսկուն շնորհվեց գնդապետի կոչում: 1828 թ. մարտին նա ստանձնեց 42-րդ եգերյան գնդի հրամանատարությունը:

Ռուս-պարսկական պատերազմի ամբողջ ընթացքում քաջաբար մարտնչեց լեյբ-գվարդիայի հավաքական գունդը, որը բաղկացած էր «դեկտեմբերի 14-ի շարքային խռովարարներից», այսինքն՝ դեկաբրիստների ապստամբության շարքային մասնակիցներից, որոնք, Ի. Պասկևիչի վկայությամբ, «միանգամայն գովելի օրինակ տվեցին իրենց չափազանց խիստ կարգապահությամբ»:

Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում դեկաբրիստների գտնվելու տարիներին նրանք տեղացի բնակիչների մեջ ձեռք բերեցին շատ նոր ծանոթներ ու բարեկամներ: Հայերից դեկաբրիստների հետ մոտիկից շփվել են Հ. Ալամդարյանը, Ն. Աշտարակեցին, Շ. Զրպետյանը, Վ. Բեհբութովը, Վ. Մադաթովը, Լ. Լազարևը և ուրիշներ:

Հայ նոր գրականության նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Հ. Ալամդարյանը, Մ. Պուշչինի հետ ծանոթացել է 1827 թ.: Ն. Աշտարակեցուն գրած նամակում հիանալի բնութագրելով Մ. Պուշչինին, նա խնդրել է նրան նյութական օգնություն ցույց տալ, գտնելով, որ այդ հանճարեղ պատանին արժանի է «կարեկցության ամենայն բարեկամաց յուրոց»:

Բարեկամական հարաբերություններ էին հաստատվել նաև Մ. Պուշչինի և Ն. Աշտարակեցու միջև: Նրանց ծանոթացրել էր դոկտոր Մարտինենկոն, որն արդեն երկար ժամանակ ապրում էր Անդրկովկասում: Այդ ծանոթությունը տեղի էր ունեցել 1827 թ. Էջմիածնում: Մ. Պուշչինն ինքը այդ մասին գրել է. «Ներսեսը իմ՝ Էջմիածնում գտնվելու ամբողջ ժամանակ շատ սիրալիր էր իմ հանդեպ և ինձ էր ուղարկում ամեն տեսակ պաշարներ: Երբ մենք անցանք Երևան, այն ժամանակ էլ Ներսեսը չմոռացավ ինձ, այնտեղ էր ուղարկում ինձ համար սննդամթերքի ամբողջ քարավաններ, որը ես կիսում էի ընկերներիս հետ»: Ն. Աշտարակեցու մասին հարգանքով է խոսել նաև դեկաբրիստ Ե. Լաչինովը, որը 1827 թ. դեկտեմբերին և 1828 թ. սկզբին նրա ու գեներալ Ա. Կրասովսկու հետ ճանապարհորդել է Արևելյան Հայաստանում: Նրանք եղել են նաև Աշտարակ գյուղում, ուր, Ե. Լաչինովի խոսքերով, ապրում էին Ներսեսի ազգականները:

Կովկասյան կորպուսի հրամանատարական կազմում քիչ հայեր չեն եղել, որոնց հետ մտերմացել են Կովկաս աքսորված դեկաբրիստները, 1812 թ. հայրենական պատերազմի մասնակից գեներալ Վ. Բեհբութովի հետ ծանոթ էին Պ. Բեստուժևն ու Լաշկևիչը: Հայտնի է, որ 1828 թ. վերջին Պ. Բեհբութովը նրանց թույլատրել է հրատարակել «Ախալցիխսկի Մերկուրի» թերթը, որը բովանդակում էր լուրեր, կանայան անեկդոտներ, անցած արշավանքի դեպքեր, պինվորական կենցաղի պատկերներ, Կովկասում Եկատերինայի ժամանակների ռուս-թուրքական պատերազմի տարբեր սխրանքների մասին տեղեկություններ, ինչպես նաև տեղական ակնարկներ: Պ. Բեհբութովի բարեկամներից մեկը դեկաբրիստ Ի. Բուրցովն էր:

Գեներալ Վ. Մադաթովի հետ դեկաբրիստ Ն. Սեմիչևի ծանոթությունը տեղի է ունեցել դեռևս Նապոլեոնի դեմ մղված պատերազմի ժամանակ: «1815 թ.,— գրել է Ն. Սեմիչևը,— Ֆրանսիայի սահմանները մտնելու ժամանակ գտնվում էի գեներալ-մայոր, իշխան Մադաթովի հրամանատարությամբ գործող առաջապահ ջոկատում... և ինձ ամեն օր ուղարկում էին թշնամու մասին հետախուզություն կատարելու»: Վ. Մադաթովի հետ ծանոթ էր նաև գնդապետ Միկլաշևսկին, որը 1826—1827 թթ. վերջերին ծառայում էր Վ. Մադաթովի ջոկատում:

Այս ցանկը կարելի է էլի շարունակել, բայց կարևորն այն է, որ հայերն ու ռուսները միասին են մարտնչել օտար լծից Հայաստանի ազատագրման համար: Եվ այդ համատեղ պայքարը դարձավ ռուս և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության փայլուն և կարևոր օղակներից մեկը:

ԿԱՊԻՏԱԼԻԶՄ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բազում դարերի ընթացքում անվերջ պատերազմների ու բռնությունների հետևանքով Արևելյան Հայաստանի ազգաբնակչությունը զգալիորեն կրճատվել էր: 1829—1832 թթ. Ի. Շոպենի կազմած վիճակագրական տեղեկագրերից երևում է, որ Երևանի խանության 1111 գյուղերից 359-ը լիովին ավերված ու ամայի էին: 1828 թ. Նիկոլայ I-ին տրված զեկուցագրում Ի. Պասկևիչը հաղորդում էր, որ «հայերով բնակեցված երկրամասը... այժմ ներկայացնում է կատարյալ ամայություն»: Ազգաբնակչությունը տառապում էր նաև վարակիչ հիվանդությունների համաճարակներից: 1829 թ. Հայկական մարզում մոլեգնեց ժանտախտը, իսկ 1830 թ.՝ խոլերան, որոնք տարան բնակչության 15 %-ը: Ի. Շոպենի վկայությամբ «1829 թ. Թուրքիայից փոխանցված ժանտախտի վարակը... ոչնչացրեց ամբողջ գյուղեր»:

Հայտնի է, որ Թուրքմենչայի պայմանագրի նախնական տարբերակը չէր նախատեսում հայերի ներգաղթ: Այդ հարցի մասին հոդվածը մտցվեց հայ ժողովրդի մեծ բարեկամ Ա. Գրիբոյեդովի ջանքերով: Ռուսական կառավարությանն ուղղած նամակներից մեկում նա խնդրում էր լուրջ ուշադրություն դարձնել հայերի ներգաղթին և բարենպաստ պայմաններ ստեղծել նրանց հայրենիք վերադառնալու համար: «Պարսկաստանից հայերին մեր մարզերը գաղթեցնելու վերաբերյալ նոթերում» Ա. Գրիբոյեդովը, մատնացույց անելով հայերի ծանր վիճակը, խնդրում էր օգնություն ցույց տալ ներգաղթածներին, որպեսզի Պարսկաստանից եկածների «բարեկեցությունը կայունանա»:

Ա. Գրիբոյեդովը 1828 թ. Վ. Մ. Միկլաշևիչին գրել է. «Մեզ մոտ է անցել մինչև 8 հազար հայ ընտանիք, և ես այժմ նրանց թողած ունեցվածքի համար հանգիստ չունեմ ո՛չ ցերեկը, ո՛չ էլ գիշերը, սակայն պահպանում եմ նրանց գույքը և նույնիսկ եկամուտները...»: Նրա կազմած մի վավերագրում կարծիք է հայտնվում, թե պարսից ճնշումից Հայաստանի ազատագրումը կարելի է ավարտված համարել միայն այն դեպքում, եթե այնտեղ «բազմապատկվի հայերի թիվը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է ռուսական բանակի գրաված շրջանների՝ Տավրոսի, Խոյի, Սալմաստի, Մարաշի բոլոր հայերին վերաբնակեցնել Նախիջևանի, Երևանի և Ղարաբաղի մարզերում: Նրանց նկատմամբ, ովքեր իրենց անհեռատեսության պատճառով ընդունակ չեն գիտակցելու ռուսական տիրապետության ներքո սպասվելիք բարվոք վիճակը, պետք է իրագործվի ողջամիտ հարկադրանք»:

Ն. Աշտարակեցին իր հերթին հայերին կոչ էր անում վերադառնալ իրենց նախնիների հայրենիքը: Նա գտնում էր, որ հայրենիքի փրկությունը կախված էր Արարատյան դաշտավայրում հայ ժողովրդի բազմանալուց:

Գնդապետ Լազարևը 1828 թ. փետրվարի 14-ին Ի. Մ. Պասկևիչին ուղղած զեկուցագրում խնդրում էր հայերին ամեն տեսակի օժանդակություն ցույց տալ, մասնավորապես ամենաաղքատ հայ ընտանիքներին նպաստ նշանակել, օգնել ներգաղթի ժամանակ, պարենամթերք մատակարարել: Չնայած պարսից պաշտոնյաներն ամեն կերպ խանգարում էին հայերի վերաբնակեցմանը, հայերն առանց որևէ փոխհատուցման լքում էին իրենց տները, այգիները, մշակված դաշտերը և տեղափոխվում Արարատյան դաշտավայր: Երբ ներգաղթը գլխավորող գնդապետ Լազարևը պարսից իշխանությունների ներկայացուցիչ Ասքեր խանի ներկայությամբ հայ գյուղացիներին հարցրեց, թե նրանք կամովի՞ են արդյոք ուզում ներգաղթել, նրանք պատասխանեցին. «Այո, ավելի լավ է, որ մենք ռուսների խոտն ուտենք, քան պարսիկների հացը»: Երեք ամսվա ընթացքում Պարսկաստանից Անդրկովկաս ներգաղթեց 8 հազար ընտանիք (40 հազար մարդ):

Ռուս-թուրքական պատերազմից հետո տասնյակ հազար հայեր Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանից ևս սկսեցին գաղթել ռուսական կայսրության սահմանակից շրջանները: Գաղթեց մոտ 90 հազար մարդ, այդ թվում 6500 ընտանիք Էրզրումի և մոտ 4200-ը՝ Բայազետի փաշայություններից: Թուրքիայից հայերի ներգաղթին օժանդակեց Էրզրումի հայ արքեպիսկոպոս Կարապետ Բագրատունին, որը ներգաղթողներին ուղեկցում էր մինչև Ախալցխա և օգնում տեղավորվել: Հատուկ ծառայությունների համար նա պարգևատրվեց ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանով:

Այն հայերին, որոնք ցանկություն էին հայտնել վերաբնակվել Ռուսաստանին պատկանող տարածքներում, հնարավորություն տրվեց շարունակելու իրենց նախկին զբաղմունքները: Ներգաղթածներից նրանց, ովքեր զբաղվել էին առևտրով, թույլատրվեց հաստատվել քաղաքներում. ընդ որում նրանք կարող էին օգտվել նույն իրավունքներից, ինչ և տեղացի առևտրականները: Իսկ գյուղական վայրերում բնակություն հաստատած ներգաղթածներին հատկացվեցին հողամասեր: Նրանք վեց տարով ազատվեցին հարկերից և երեք տարով՝ զեմստվային պարհակներ կատարելուց:

1831 թ. Հայկական մարզի ազգաբնակչությունն ուներ հետևյալ պատկերը. ազգաբնակչության ընդհանուր քանակը հասնում էր 164450 մարդու, որից 82377-ը հայ էր:

Հայկական մարզի գերբը՝ հաստատված 1833 թ. փետրվարի 27-ին Նիկոլայ I-ի կողմից

* * *

Ռուսաստանին միացվելուց հետո Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքը, միաձուլվելով ամբողջ Ռուսաստանի տնտեսական կյանքին, զարգանում էր արագ տեմպերով: Առևտրական կապերի ուժեղացումը, միասնական դրամանիշերի, չափ ու կշռի միավորների ստեղծումը, մաքսային սիստեմի վերակառուցումը, հաղորդակցության միջոցների ընդլայնումը, ճանապարհների շինարարությունը և բնական հարստությունների հանքավայրերի հետազոտումը նոր հեռանկարներ բաց արեցին երկրի զարգացման համար: 1828 թ. մարտի 21-ին Նիկոլայ I կայսրի հրովարտակով, ինչպես նշվեց, կազմվեց Հայկական մարզը, որի մեջ մտան Երևանի ու Նախիջևանի նախկին խանությունները: Ստեղծվեց հատուկ մարզային վարչություն, որի պետն էր գեներալ Ալ. Ճավճավաձեն (1828—1830), իսկ հետո այդ պաշտոնը գրավեց գեներալ Վ. Բեհբութովը: 1836 թ. եկեղեցական կանոնադրության հիման վրա կարգավորվեցին եկեղեցու և պետության փոխհարաբերությունները: Վերացվեցին հին խանական կարգերը, իսկ 1838—1840 թթ. վարչական ռեֆորմների և ցարական օրենքների կիրառման հետևանքով՝ նաև Հայկական մարզը: Դրան հետևեց 1846 թ. դեկտեմբերի 14-ի հրովարտակը, որով Անդրկովկասը Ռուսաստանի օրինակով բաժանվեց նահանգների: Երևանի նահանգը, որ ձևավորվեց 1849 թ., ընդգրկում էր Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Օրդուբադի գավառները: 1846 թ. դեկտեմբերի 6-ի ցարական ռեսկրիպտը, ապա նաև 1847 և 1851 թթ. կանոնադրություններն օրինականացրին գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերությունները: Տեղացի ֆեոդալները, աղալարները, մելիքներն ու բեկերը, այսպես կոչված «բարձր դասը», հավասարվեցին ռուս կալվածատերերին: Այդ դասը ցարիզմի սոցիալական հենարանն էր Արևելյան Հայաստանում:

Հայերի վերաբնակեցումը Հայաստանի սահմաններում շարունակվեց նաև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո: Մեծ թվով հայեր Թուրքիայից ռուսական տիրապետության սահմանները գաղթեցվեցին 1853—1856 և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Բնական աճի և հայերի վերաբնակեցման հետևանքով Արևելյան Հայաստանի բնակչությունը մեծապես աճեց: Եթե դարասկզբում Արևելյան Հայաստանի ազգաբնակչությունը կազմում էր 100 հազար մարդ, ապա 1863 թ. Երևանի նահանգում ապրում էր 1071,6 հազար մարդ: Ընդ որում, հայերի տեսակարար կշիռը կազմում էր 56,7 %: Ազգաբնակչության աճը Հայկական ՍՍՀ այժմյան տարածքում ուներ հետևյալ պատկերը. 1831 թ. նրա ազգաբնակչությունը կազմում էր 161747, իսկ 1873 թ.՝ 496140 մարդ, այսինքն՝ աճել էր 307 %-ով: 1886 թ. նույն այդ տարածքի ազգաբնակչությունը կազմում էր 655833 մարդ, իսկ 1914 թ.՝ ավելի քան

1 միլիոն մարդ, այսինքն՝ 1831—1914 թթ. ազգաբնակչությունն աճել էր 627 %-ով:

Տնտեսական ու մշակութային կարգացմանը զուգընթաց առաջացան նոր քաղաքներ, և մեծացավ քաղաքային ազգաբնակչությունը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակ կար միայն մի քաղաք՝ Երևանը: 1837 թ. Գյումրի գյուղում հիմնվեց Ալեքսանդրապոլ ամրոցը, որը 1840 թ. վերածվեց գավառական քաղաքի, իսկ XIX դարի վերջին դարձավ երկաթուղային խոշոր կայարան ու առևտրատնտեսական կենտրոն:

Նոր Բայազետ քաղաքն առաջացավ Քյավառ գյուղի տեղում: 1736 թ. այն ավերել էր Նադիր շահը, իսկ նրա բնակիչները գերի էին տարվել: 1829 թ. Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից այստեղ եկան հայ գաղթականներ. այդ կապակցությամբ էլ Քյավառը վերանվանվեց Նոր Բայազետ (այժմ՝ Կամո): Այն 1850 թ. դարձավ գավառական քաղաք:

Եթե 1873 թ. Երևանի ազգաբնակչությունը կազմում էր 11938, Ալեքսանդրապոլինը՝ 19976, իսկ Նոր Բայազետինը՝ 5363 մարդ, ապա 1897 թ. Երևանում արդեն ապրում էր 29006, Ալեքսանդրապոլում՝ 30616, իսկ Նոր Բայազետում՝ 8486 մարդ: Ընդ որում, 1897 թ., 1831 թ. համեմատությամբ, քաղաքային ազգաբնակչությունն ավելացավ 6, իսկ գյուղականը՝ 4,8 անգամ: Քաղաքային ազգաբնակչությունը հատկապես արագորեն աճեց 1870 թ. գյուղացիական ռեֆորմից հետո:

Արևելյան Հայաստանի միանալը Ռուսաստանին շրջադարձային կետ դարձավ նրա տնտեսության կարգացման մեջ: Ռուսաստանում կարգացող սոցիալ-տնտեսական հարաբերությունները բարերար ազդեցություն ունեցան Հայաստանի տնտեսական կարգացման վրա. վերացվեցին ֆեոդալական մասնատվածությունն ու մաքսային սահմանները, տընտեսությունն ընդգրկվեց համառուսական տնտեսական շրջանառության մեջ: Տնտեսական կյանքում կատարվեցին կարևոր տեղաշարժեր. զգալիորեն ընդարձակվեցին ցանքատարածությունները, աճեց գյուղատնտեսական մթերքների արտադրությունը. պայմաններ ստեղծվեցին մանուֆակտուրային-գործարանային արտադրության համար, ընդլայնվեց ներքին շուկան, ապրանքափոխանակությունն ուժեղացավ ոչ միայն երկրի ներսում, այլև անդրկովկասյան այլ նահանգների ու Ռուսաստանի հետ: Հայաստանում հատկապես կարգացան կոնյակի արտադրությունը, պղնձահանքային արդյունաբերությունը, կառուցվեցին բամբակազտիչ գործարաններ և այլն: Առևտրի կարգացման համար հաստատվեցին արտոնյալ տարիֆներ, որոնք խթանեցին տրանզիտի ուժեղացումը: Ծագեցին արդյունաբերական ու գյուղատնտեսական ընկերություններ, որոնք նպաստեցին տեղերում ռուսական արդյունաբերության համար հումքի բազայի ընդլայնմանը, ինչպես նաև գյուղատնտեսական արժեքավոր կուլտուրաների՝ բամբակի, խաղողի և այլնի մշակության կարգացմանը: Հայաստանն աստիճանաբար ներքաշվեց համառուսական շուկայի մեջ:

Ֆեոդալական ճորտատիրական կարգն իրեն սպառել էր, և ցարիզմը ստիպված էր վերևից՝ 1861 թ. ռեֆորմով այն վերացնել: Երևանի նահանգում նման կարգի ռեֆորմ կատարվեց 1870 թ. մայիսի 14-ին: Սակայն այն ըստ էության գյուղացիներին չազատեց ճորտական կախումից: Եռգնման վճարումները նոր ծանր բեռ էին գյուղացիների համար: Գյուղացիները կանգվածաբար թողնում էին իրենց հողամասերը, փոխակերպվում բատրակների կամ էլ մի կտոր հաց վաստակելու համար քաղաք էին գնում: Մինչև 1912 թ. օրենքը եռգնման գործարքներ համարյա չիրականացվեցին: Այդ օրենքի համաձայն 15 տարին լրացած ամեն մի անձ կարող էր եռգնել մինչև 5 դեսյատին հող. ըստ որում, կալվածատերը լավագույն հողերի $1/3$-ը իրեն էր վերցնում: Գյուղացին մինչև եռգնումը մնում էր կախյալ վիճակում: Ռուսաստանում պետության տված վարկերի միջոցով գյուղացիները կարող էին փրկագնվել, իսկ Անդրկովկասում վարկեր չտրվեցին, և գյուղացիները նախկինի պես մնացին կախյալ վիճակում: Երևանի նահանգում 30 տարվա ընթացքում ընդամենը 41 դեսյատին հող էր եռգնվել: Գյուղացիները նախկինի պես կալվածատիրոջը վճարում էին բահրա՝ բերքի 4/30 մասը և կատարում զանազան պարհակներ, կոռ ու բեգյար: Այսպիսով, այդ կիսատ-պռատ ռեֆորմը գյուղացիներին հող ու ազատություն չտվեց, և նրանք նախկինի պես մնացին ճնշված ու հալածված: Եվ, այդուհանդերձ, ռեֆորմը ուղի հարթեց բուրժուական կարգերի կարգացման համար:

Կապիտալիզմի կարգացումը փոխեց նաև գյուղի սոցիալ-տնտեսական դեմքը, աստիճանաբար տիրապետող դարձան ապրանքային հարաբերությունները, առևտրական գյուղատնտեսությունը, որ հատկապես ցայտուն արտահայտվում էր բամբակագործության, գինեգործության և անասնապահության բնագավառներում:

Զգալիորեն ընդարձակվեցին ցանքատարածությունները, բարձրացավ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը: Եթե 1829 թ. ցանքատարածությունները կազմում էին ընդամենը 37,5 հազար հեկտար և համախառն բերքը՝ 1825 հազար փութ, ապա 1900 թ. ցանքատարածությունները հա-

սան 228,2 հազար հեկտարի, իսկ համախառն բերքը՝ 16061,2 փթի: Նշված ժամանակամիջոցում ցորենի բերքատվությունն աճեց 9, գարունը՝ ավելի քան 5 անգամ և այլն: Ընդ որում, հարկ է նշել, որ գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը հատկապես դրսևորվեց ռեֆորմից հետո: Հատուկ նշանակություն ստացավ առևտրական հողագործությունը, աճեց գյուղատնտեսական կուլտուրաների համախառն բերքատվությունը, որն ընդունեց ապրանքային բնույթ: Հայաստանի լեռնային շրջաններում ուժգնորեն կարգացավ անասնապահությունը և դրա հետ կապված պանրագործությունն ու անասնապահական այլ մթերքների արտադրությունը: Նախալեռնային շրջաններում հիմնականում աճեցնում էին հատիկային կուլտուրաներ, իսկ հարթավայրային շրջաններում՝ բամբակ ու խաղող: 1870—1900 թթ. Երևանի նահանգում բամբակի արտադրությունն ավելացավ 9, իսկ խաղողինը՝ 2 անգամ:

Մասնագիտացումը և աշխատանքի հասարակական բաժանման խորացումը, առևտրական երկրագործության ու շուկայական հարաբերությունների կարգացումը գյուղացիական տնտեսությունը ներքաշեցին շուկայական հարաբերությունների ոլորտը, արագացրին գյուղացիական համայնքի քայքայումը և գյուղացիության շերտավորումը:

XIX դարի վերջին Հայաստանի գյուղացիական տնտեսություններն իրենց տրամադրության տակ ունեին մշակության պիտանի բոլոր հողերի 32 %-ը, իսկ կալվածատերերը, վանքերն ու պետությունը տիրում էին հողերի 68 %-ին, ընդ որում՝ ամենալավ մասին: Մինչդեռ հարկային լուծը ծանրացած էր գյուղացիության աղքատ մասի ուսերին: Գյուղացիների զգալի մասը զրկված էր անասուններից ու արտադրության այլ միջոցներից: Երևանի գավառի գյուղացիական բոլոր տնտեսությունների 37 %-ը և Էջմիածնի գավառի 42 %-ը չունեին ո՛չ բանող, ո՛չ էլ մթերատու անասուններ: Մոտավորապես այդպիսին էր պատկերը նաև Երևանի նահանգի այլ գավառներում: Այս ամենն առաջ էր բերում սնանկացող գյուղացիների հոսք դեպի երկրամասի այնպիսի արդյունաբերական կենտրոններ, ինչպիսիք էին Բաքուն, Թիֆլիսը, Բաթումը և այլն: Այսպես, 1884 թ. 10 ամսվա ընթացքում Զանգեզուրի գավառից վաստակի համար Բաքու էր գնացել 2925 մարդ: 1908 թ. միայն Դարալագյազի ուղեմասի Թոռ, Փաշալու, Ազատիկ և Մարտիրոս գյուղերից արտագնացության էր դիմել 504 մարդ: Պաշտոնական տվյալներով միայն 1903 թ. Երևանի գավառից վաստակի համար Հայաստանի սահմաններից հեռացել է 13400 մարդ:

Մոտավոր հաշվումներով XIX դարի վերջին հայ բնակչության դասակարգային կառուցվածքն ուներ հետևյալ պատկերը. խոշոր բուրժուազիայի, կուլակության և այլ շահագործողների տեսակարար կշիռը կազմում էր 17,1 %, պրոլետարական ու կիսապրոլետարական բնակչությանը՝ 45,3 և միջին խավերինը՝ 37,6 %:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Անդրկովկասն արդեն լիովին ներգրավվել էր արդյունաբերական կապիտալիզմի ոլորտը: «Հարավի հետ միասին,— գրել է Վ. Ի. Լենինը,— պետք է հիշատակել նաև Կովկասը, որի համար նույնպես բնորոշ է լեռնարդյունաբերության կարմանալի աճը հետռեֆորմյան ժամանակաշրջանում»: Հայաստանի պղնձարդյունաբերությունը, Ռուսաստանի այլ շրջանների համեմատությամբ, ուներ աճի ամենաբարձր տոկոսը: Այսպես, եթե 1880 թ. Հայաստանի բոլոր պղնձաձուլական գործարաններն արտադրում էին 4269 փութ պղինձ, ապա 10 տարի անց՝ 1890 թ., պղնձաձուլումը հասավ 23568 փթի, այսինքն՝ ավելացավ 5,5 անգամ, իսկ 1865 թ. մինչև 1900 թ.՝ 8,1 անգամ: Արդեն 1906 թ. պղնձի արտադրությունը հասավ տարեկան 140 հազար փթի: Աճեց նաև Կողբի և Նախիջևանի աղահանքերի հանույթը:

Արագորեն կարգացավ օղու և կոնյակի արտադրությունը: 1896 թ. գինու արտադրությունը Հայաստանում կազմում էր 546 հազար դույլ, իսկ 1900 թ.՝ 1180 հազար դույլ: Գինու-կոնյակի արտադրանքը 1865—1900 թթ. աճեց 24,5 անգամ: 1888 թ. Երևանի նահանգում մանուֆակտուրային տիպի օղեթորման ձեռնարկությունների թիվը հասավ 200-ի: Դրանցից բացի, այստեղ կար երեք խոշոր գործարան: 1889 թ. օղեթորումը կազմում էր 54 հազար դույլ, իսկ 1893 թ. հասավ 193 հազար դույլի: Հայաստանում արտադրվող կոնյակը շուտով ձեռք բերեց համաշխարհային հռչակ: Եթե 1880 թ. Հայաստանում Թայիրովի առաջին գործարանն արտադրում էր 34848° կոնյակ, ապա հետագայում առաջացան Աֆրիկովի, Սարաջևի, Գյոզալովի ու Մկրտիչևի գործարանները, որոնք 1900 թ. կոնյակի արտադրությունը հասցրին 1.283.398°-ի:

Հայաստանի տնտեսության ուժեղացման համար հսկայական նշանակություն ունեցավ Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս (1899), Ալեքսանդրապոլ—Ուլուխանլու (1902), ապա նաև Երևան—Ուլուխանլու—Ջուլֆա (1908) երկաթգծերի կառուցումը: XIX դարի վերջին Անդրկովկասում կառուցված էր ավելի քան 1650 **կմ** երկաթուղի: Այդ ճանապարհներն արագացրին կապիտալիզմի կարգացումը Անդրկովկասում՝ այն կապելով համառուսական շուկայի հետ: «Այսպիսով, ռուսական կապի-

տալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր ֆաբրիկաների համար շուկա էր ստեղծում»:

Կապիտալիզմի կարգացմանը համապատասխան Հայաստանում, ինչպես նաև բովանդակ Ռուսաստանում ընթանում էր ազգաբնակչության շերտավորման պրոցես: XX դարի սկզբին բուն Հայաստանում ֆաբրիկագործարանային բանվորների թիվը կազմում էր մոտ 19 հազար մարդ: Ձևավորվում էր հայ ազգային բուրժուազիան, որը երկրամասի արդյունաբերական շատ կենտրոններում տիրում էր մեծ կապիտալի: Բուն Հայաստանում և Անդրկովկասի այլ կենտրոններում կապիտալիզմի զարգացման հետևանքով առաջացան տնտեսական ու մշակութային ազգային կենտրոններ:

Խոսելով Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորելու պատմական նշանակության մասին, հարկ է հատկապես առանձնացնել այնպիսի մի գործոնի դերը, ինչպիսին համառուսական պրոլետարական շարժման մեջ հայ աշխատավորներին ներգրավելն է: XIX դարի վերջին և XX դարի սկզբին Անդրկովկասի ինտերնացիոնալ կազմ ունեցող բանվոր դասակարգը հանդես էր գալիս որպես ռուսաստանյան պրոլետարիատի մարտական ջոկատներից մեկը, որպես հեղափոխական հզոր մի ուժ:

Այսպիսով, Արևելյան Հայաստանի միանալը Ռուսաստանին բարենպաստ ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի վրա և պայմաններ ստեղծեց, որպեսզի երկիրը թևակոխի զարգացման կապիտալիստական ուղի:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

Արդյունաբերության զարգացումն ու գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի ներթափանցումն ուղեկցվում էին աշխատավոր մասսաների տնտեսական վիճակի վատթարացմամբ, քաղաքական իրավազրկությամբ, հալածանքներով ու ճնշումով: Ցարիզմի տիրապետության հենց առաջին տարիներին սկսեցին դժգոհություններն ու գյուղացիների ըմբոստությունները: Գյուղացիները ճնշվում էին թե՛ տեղական կալվածատերերի և թե՛ ցարական աստիճանավորների կողմից: 1838 թ. հունվարին գյուղացիները Շիրակի մի շարք գյուղերում հրաժարվեցին տուրք վճարել: Հոռոմ գյուղի բնակիչները բորբոքված խմբովին գնում են Ալեքսանդրապոլ և հարձակվում պրիստավի բնակարանի վրա: Ի վերջո ոստիկանների և կայազորից հրավիրված ջոկատի ճնշման տակ գյուղացիները նահանջում են: Նրանցից 27 հոգի ձերբակալվում և բանտ են նետվում: Նույն թվականի փետրվարին ապստամբություն է բարձրանում Նոր Բայազետի գավառի 30 գյուղերում, որտեղ ցարական աստիճանավորներին ծեծում և գյուղերից դուրս են վռնդում: Ապստամբությունը ճնշվում է Կովկասի կառավարչապետի հրամանով այստեղ եկած զորքի ուժով միայն: Նրա ղեկավարներից 10 հոգու մարմնական պատիժների են ենթարկում, իսկ Արծրունուն, Գ. Շահումյանին և Ն. Բուդաղյանին բանտ են նետում:

Գյուղացիական ելույթներ են տեղի ունենում նաև Էջմիածնի, Ախտայի, Կոտայքի, Դարալագյազի, Նախիջևանի, Զանգեզուրի և այլ շրջաններում:

Գյուղացիության պայքարը շարունակվեց 1850—1860-ական և, մանավանդ, 1870—1880-ական թվականներին՝ ագրարային ռեֆորմից հետո, քանի որ այս վերջինն էլ գյուղացիների վիճակը չբարելավեց: Ծանր դրությունից դուրս գալու համար գյուղացիները պայքարում էին ինչպես որ կարող էին: Նրանք հրաժարվում էին հարկ վճարել և պարհակներ կատարել: Բողոքներ և դիմումներ էին գրում վերադաս մարմիններին, բռնագրավում էին կալվածատիրական հողերը, հրի մատնում նրանց կալվածքները և երբեմն էլ ավելի կազմակերպված պայքարի էին ելնում՝ գյուղից վռնդելով բեգերին, աղալարներին և ցարական աստիճանավորներին: Կալվածատեր Գեղամյանների դեմ Բջնի գյուղի բնակիչների պայքարը շարունակվեց ավելի քան կես դար: Գյուղացիները գրում էին, որ Գեղամյաններն իրենց ծայրահեղ աղքատության են հասցրել, իսկ 1875 թ. Շահրիար գյուղի բնակիչները կալվածատեր Շահխաթունյանին անվանում էին «սարսափելի հրեշ», «աստծու պատիժ»: Նոր Բայազետի մի շարք գյուղերում աղալարների դեմ հողազուրկ գյուղացիության պայքարը շարունակվեց ավելի քան 40 տարի: Երևանի գավառի Գոդակլու և Դալար գյուղերի բնակիչների ելույթները 1884 թ. վերջացան պինված ընդհարումներով: Գյուղացիները հրաժարվում են ճանաչել կալվածատերերի իշխանությունը և հայտարարում. «Բանտ կնստենք, Սիբիր կգնանք, բայց կալվածատերերին ոչինչ չենք վճարի»: Հաշտարար միջնորդը, ծանոթանալով իրավիճակին, այն բնութագրել է որպես «խռովություն կամ ապստամբություն, որը պետք է անհապաղ վերացվի ամենախիստ հարկադրական միջոցներով»: Այդ աստիճանավորը հատկապես վտանգավոր էր համարում այն, որ նշված գյուղերի «կոչերը տարածվել ու տարածվում են ուրիշ գյուղերում, օրինակ, Էվջիլարում, Ղամարլուում, Զոհրաբլուում, Դվինում և այլուր»:

ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼ

ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԳՆԱՑՔ.

ՄԱՐՏ 1858 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 3.-4

ՄՈՍԿՎԱ,

Imprimerie d'Ernest Barfknecht.

1858.

«Հյուսիսափայլ» հանդեսը

Գյուղացիների պայքարը տարերային էր ու անկազմակերպ, և գյուղացիական ցաքուցրիվ շարժումները հեշտությամբ ճնշվում էին:

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

1850—1870 թթ. Արևելյան Հայաստանի կյանքում կարևոր երևույթ էր հայ հասարակական-քաղաքական հոսանքների հանդես գալը և դրանց սահմանազատվելը՝ կղերաֆեոդալական, լիբերալ-բուրժուական և հեղափոխական-դեմոկրատական ուղղությունների: Կղերաֆեոդալական հոսանքը, որի ջատագովներն էին Մ. Մսերյանը, Ս. Ջալալյանը, Հ. Չամուռճյանը, Ղ. Պալթազարյանը և ուրիշներ, կառչում էր ֆեոդալական կարգերին, ազգի գոյության հիմքը համարում կրոնն ու գրաբար լեզուն: Լիբերալ-բուրժուականն արտահայտում էր նոր զարգացող բուրժուազիայի շահերը, ձգտում ռեֆորմների միջոցով վերափոխել հին կարգերը, զարկ տալ աշխարհաբար լեզվին և լուսավորու-

թյանը: Դրանք այն միջոցներն էին, որոնց օգնությամբ նոր վարգացող բուրժուակիան ուվում էր ուժեղ դիրքեր գրավել հասարակական-քաղաքական կյանքում: Այդ հոսանքի ականավոր դեմքերն էին Ստ. Նազարյանը, Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը և ուրիշներ: Որպես լիբերալներ՝ նրանք դեմ էին հեղափոխական ճանապարհով հին կարգերի վերափոխմանը:

Լայն ժողովրդական մասսաների շահերն արտահայտողը հեղափոխական-դեմոկրատական հոսանքն էր, որի ամենաականավոր ներկայացուցիչը Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Գերցենի և Օգարևի հետևորդ Մ. Նալբանդյանն էր: Նա պայքարում էր հեղափոխական ճանապարհով հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրման, դեմոկրատական կարգերի ստեղծման համար: Հայ ժողովրդի ազատագրությունը նա սերտորեն առնչում էր ռուս ժողովրդի ազատագրման հետ:

Մ. Նալբանդյանը համոզված էր, որ «Ռուսիո ազատությունը ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ մեծ խորհուրդ ունի»: Մ. Նալբանդյանի հետևորդն էր Հ. Սվաճյանը, որը գերադասում էր «ազատության հետ գերեզման մտնել, քան անոր մահը տեսնել»:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՐՅՈՒՆՈՏ ՍՈՒԼԹԱՆԻ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

Արևմտյան Հայաստանը, մնալով թուրքական բռնապետության տակ, տնտեսական ու քաղաքական ծանր կացության մեջ էր: Թուրք փաշաներն ու բեկերը կարող էին հաշվեհարդար տեսնել և ամեն կարգի ստորացուցիչ կամայականության ենթարկել հայերին: Հայերը համարվում էին իրավազուրկ ռայա և կյանքի ու ինչքի ապահովություն չունեին: Հատկապես ծանր էր հայ գյուղացու վիճակը: Թուրք փաշաներն ու քուրդ բեգերը կարող էին բռնի զգրավել գյուղացու ունեցվածքը և ցանկացած ձևով բռնադատել նրան: Նրանք գյուղացիներից գանձում էին աշար՝ բերքի $^{1}/_{10}$-ը, գլխահարկ, անասնահարկ, արոտավայրերի, անասունների, կբաղմունքի (արհեստների, առևտրի) և բազմաթիվ այլ հարկեր ու տուրքեր: Գյուղացիներին ցանկացած դեպքում քշում էին կոռ ու բեգյարի, ստիպում ամիսներով հարկադիր աշխատանք կատարել: Ահա այդ վիճակն էր, որ հայ ժողովրդին հասցրել էր աղքատության ու կարիքի, նրան կանգնեցրել ֆիզիկական բնաջնջման վտանգի առաջ: Հենց այդ պատճառով էլ հայ ժողովրդի առաջադեմ ներկայացուցիչներին հուզող հարցերի հարցը սուլթանական լծի տակ տառապող Արևմտյան Հայաստանի ճակատագիրն էր, նրա ազատագրման խնդիրը, որը սերտորեն կապվում էր Ռուսաստանի հետ: Սակայն նման ծանր պայմաններում գտնվելով հանդերձ, հայերը ռազմաֆեոդալական Թուրքիայում մեծ դեր էին կատարում արհեստների, արդյունագործության և առևտրի, ինչպես նաև մշակույթի զարգացման բնագավառներում: Հատկապես Արևմտյան Հայաստանի այնպիսի քաղաքներում, ինչպիսիք էին Կարինը, Վանը, Երզնկան, Խարբերդը, Բիթլիսը, բավականին զարգացած էին արհեստներն ու առևտուրը: Արհեստների և առևտրի, ինչպես նաև հայ մշակույթի խոշոր կենտրոնը Կ. Պոլիսն էր: Այստեղ էր գտնվում նաև պատրիարքարանը՝ արևմտահայության հոգևոր կենտրոնը: Երկրի տարբեր ծայրերից հազարավոր ընչազուրկ հայեր Կ. Պոլիս էին գալիս մշակություն անելու: Սակայն այդ չարքաշ պանդուխտներից շատերը, որոնք եկել էին այստեղ բախտ որոնելու և իրենց ընտանիքներին օգնելու, մեռնում էին աղքատության մեջ, հարազատների կարոտը սրտներում:

Մ. Նալբանդյանը Լոնդոնի ռուս հեղափոխական դեմոկրատների շրջանում

Հայերի ազատագրական հույսերը չէին մարում, և 1853—1856 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ նրանք կգալի օգնություն ցույց տվին ռուսական բանակին: Անդրկովկաս ներխուժած թուրքական 60-հազարանոց բանակին դիմակայելով՝ հայազգի գեներալ Վ. Բեհբութովը իր 18-հազարանոց բանակով, հայերի աջակցությամբ, 1854 թ. հուլիսին Քյուրաքդարայի ճակատամարտում պարտության մատնեց և ցիրուցան արեց թշնամու զորքերին: Դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ռուսական զորքերի կողմից 1855 թ. նոյեմբերին Կարսի գրավման համար: Հայ կամավորական ջոկատները և առանձին հայ հերոսներ աչքի ընկան նաև Բաշկադըքլարի և Կարսի գրավման ճակատամարտերում: Նրանցից շատերը պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով: Սակայն Ղրիմի պատերազմում Ռուսաստանը պարտություն կրեց, և Արևմտյան Հայաստանը մնաց թուրքական արյունոտ լծի տակ:

Այս տարիները բնորոշ են նաև ամիրայության դեմ հայ աշխատավորների մղած պայքարով, որի կենտրոնը դարձավ Կ. Պոլիսը: Այստեղ 1841 թ. ավելի քան 3 հազար հայ արհեստավորներ բողոքի ցույց կազմակերպեցին ամիրաների և մյուս ճնշողների դեմ: Նրանց հաջողվեց որոշ չափով սահմանափակել ամիրաների կամայականությունները: Դրա հետևանքով 1844 թ. արհեստավորները տեղ գրավեցին հայ ազգային ժողովում: Կղերաամիրայական հետադիմության դեմ դեմոկրատական ուժերի պայքարը ղեկավարում էին Եվրոպայի մի շարք երկրներում կրթություն ստացած, լուսավորական շարժման ջատագով հայ երիտասարդները: Այդ շարժումն ավելի նպատակասլաց ընթացք ստացավ, երբ 1857 թ. Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչե), Ն. Պալյանը և ուրիշներ մշակեցին «Ազգային սահմանադրությունը», որը պետք է հանդիսանար արևմտահայության ներքին կյանքի կանոնագիրքը: Սահմանադրության դեմ դուրս եկան բոլոր հետադիմական ուժերը, որոնց դեմ պայքարի դրոշ բարձրացրեց Մ. Նալբանդյանի զինակից Հ. Սվաճյանի «Մեղուն»: Կ. Պոլսի ազգային ժողովը երկար վեճերից հետո 1860 թ. սահմանադրությունը հաստատեց, իսկ 1863 թ. այն որոշ կրճատումներով ու փոփոխություններով վավերացվեց սուլթանի կողմից: Դրանից հետո կազմվեց Ազգային ժողով, որ հանդես էր գալիս որպես օրենսդիր մար-

Միքայել Նալբանդյանի արձանը

Գեներալ-լեյտենանտ Ա. Տեր-Ղուկասով

մին և ընտրում էր իր կենտրոնական վարչությունը՝ գործադիր մարմինը: Ստեղծվեցին նաև տնտեսական, ուսումնական և դատաստանական խորհուրդներ, սահմանվեցին հայ ազգային ու կրոնական մարմինների իրավունքները և այլն:

Ինչ խոսք, թուրքական բռնակալության պայմաններում իսկական դեմոկրատական օրենքներ չէին կարող լինել, բայց և այնպես սահմանադրական շարժումը կարևոր առաջադիմական երևույթ էր արևմտահայ կյանքում:

1860 թ. Էրզրումի, Արաբկիրի և Արևմտյան Հայաստանի ուրիշ շատ շրջանների հայերը դիմեցին Ռուսաստանին, խնդրելով օգնել իրենց՝ ազատագրվելու օսմանյան լծից: 1866 թ. ռուսական կառավարությանն այդպիսի խնդրանքով դիմեց նաև Բայազետի ու Մուշի ազգաբնակչությունը: Սուլթանական լծի դեմ արևմտահայության հերոսական ըմբոստությունների առավել պայծառ էջերից է զեյթունցիների 1862 թ. ապստամբությունը: Զեյթունցիները կիսանկախ վիճակում էին, և Մարաշի փաշաների՝ զեյթունցիներին ամբողջովին իրենց ենթարկելու ջանքերն ապարդյուն էին անցնում: Մարաշի Ազիզ փաշան պահանջում է մի քանի տարվա հարկերը միանգամից վճարել և երբ մերժում է ստանում, 1862 թ. հուլիսին 10-հազարանոց զորքով հանկարծակի հարձակվում է Զեյթունի վրա, ավերում ու կողոպտում մի քանի հայկական գյուղեր և ապա պաշարում Զեյթունը: Զեյթունցիները, բոլորը միահամուռ՝ տղամարդիկ ու կանայք, ծերերն ու երեխաները, ոտքի ելան հերոսական պայքարի: Նրանցից շատերը անձնուրաց պայքարի օրինակներ ցույց տվին:

Զեյթունցիները փոքրիկ և արագաշարժ խմբերով այս ու այն կողմից հարձակվում էին թշնամու վրա, մեծ կորուստներ պատճառում նրան, մաշում նրա ուժերը: Ի վերջո, թշնամին ավելի քան 2 հազար կորուստ տալով նահանջեց: Թուրքական կառավարությունը ստիպված քննիչ հանձնաժողով ուղարկեց, և փոխադարձ զիջումներով զեյթունցիների հետ համաձայնություն կնքվեց:

Զեյթունի 1862 թ. ապստամբությունը հայ ժողովրդի հերոսական պայքարի փայլուն էջերից էր, Սմբատ Շահազիզի խոսքերով ասած՝ «հայկական քաջասրտության փառավոր ապացույցը»:

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ 1877—1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

1877 թ. ապրիլին սկսված ռուս-թուրքական պատերազմն ընդգրկեց Բալկանյան և Կովկասյան ճակատները: Ապրիլի 12-ին ռուսական զորքերը Կովկասյան ճակատում հարձակման անցան Ալեքսանդրապոլ—Կարս, Իգդիր—Բայազետ, Ախալցխա—Արդահան ուղղություններով:

Տաղանդավոր հայ զորավար Ա. Տեր-Ղուկասովի զորքերը սրընթաց հարվածով գրավեցին Բայազետը, Ալաշկերտը և ապա առաջ շարժվելով՝ հասան Դահարի բարձունքները: Սակայն այստեղ տեղի ունեցած խոշոր ճակատամարտում գեներալ Գեյմանի զորամասը պարտություն կրեց և նահանջեց: Դրությունը ծանրացավ, և թուրքական 10-հազարանոց բանակը շրջապատեց Բայազետի բերդը: Փոքրաթիվ կայազորը և հայ կամավորները ուժեղ դիմադրությամբ կարողացան պաշտպանել այն: Նրանց հաջողվում է կամավոր Ա. Տեր-Պողոսյանի (Խենթի) միջոցով իրենց ծանր վիճակի մասին լուր տալ Ա. Տեր-Ղուկասովին: 23 օրվա պաշարումից հետո Ա. Տեր-Ղուկասովի ջոկատի օգնությամբ հերոսամարտիկները ճեղքում են թշնամու օղակը և կազմակերպում ռազմագիտության մեջ հայտնի տերղուկասովյան նահանջը: Պատմական այս հերոսական անցքերն են, որ այնքան տաղանդավոր կերպով պատկերել է մեծ վիպասան Րաֆֆին իր «Խենթը» վեպում: Շուտով ռուսական զորքերը նոր հարձակում սկսեցին ու գրավեցին Արդահանը և ապա հոկտեմբերին Ալաջայի բարձունքներում ջախջախիչ հարված հասցրին թուրքական զորքերին: Նրանց գլխավոր հրամանատար Մուխտար փաշան հազիվ կարողացավ ճողոպրել և գլուխն ազատել: Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատար հայազգի գեներալ Լորիս-Մելիքովի հրամանով գեներալ Հ. Լազարևը նոյեմբերի 6-ին սրընթաց գրոհով գրավում է Կարսը, որը ջանասիրությամբ ամրացրել էին անգլիական մասնագետները: Կարսի գրավումը կովկասյան կորպուսի ամենախոշոր հաղթանակն էր: 1878 թ. ռուսական զորքերը գրավեցին նաև Կարինը: Թուրքիան պարտություն կրելով նաև Բալկանյան ճակատում, ստիպված հաշտություն խնդրեց:

Ինչպես միշտ, այս պատերազմում ևս հայերը մեծ աջակցություն ցույց տվին ռուսական բանակին: Անդրկովկասի բոլոր հայաշատ վայրերում հայ կամավորական ջոկատներ ստեղծվեցին, որոնք ռուսական բանակի ավանգարդում թշնամուն մահացու հարվածներ էին հասցնում: Արևմտյան Հայաստանի հայերը գրկաբաց էին ընդունում ռուսական բանակին, նյութական և բարոյական օգնություն ցույց տալիս և բոլոր միջոցներով աջակցում նրա հաղթանակին: Նրանք ռուսական բանակին նայում էին որպես իրենց փրկարարի: Մեծ չափերի էր հասնում հայերի նյութական օգնությունը. միայն Երևանի նահանգի բնակչությունը ռուսական բանակին տրամադրեց մոտ 45 հազար սայլ, 6500 ուղտ, 1600 ձի և փոխադրական այլ միջոցներ, աշխատող ուժ, պարենի հսկայական պաշար և այլն: Հայ կանայք ու աղջիկներն արտակարգ հոգատարությամբ էին շրջապատում վիրավոր զինվորներին ու սպաներին: Շատ հայեր աչքի ընկան իրենց արտակարգ հերոսությամբ, որոնց թվում՝ Տեր-Պողոսյանը (Րաֆֆու «Խենթը» վեպի հերոս Վարդանը), աշխարհազորային Սարգսյանը, հայ գեներալներից՝ Լորիս-Մելիքովը, Ա. Տեր-Ղուկասովը, Հ. Լազարևը, Ալխազյանը և ուրիշներ:

Ռուս-թուրքական պատերազմի ամենախոշոր նվաճումներից էր Կարսի մարզի միացումը Ռուսաստանին, որի կազմի մեջ էին մտնում նաև Արդահանի, Կաղզվանի և Օլթիի շրջանները: Կարճ ժամանակում մարզը Ռուսաստանի կազմում տնտեսական և մշակութային առաջընթաց ապրեց: Նրա բնակչությունն աճեց և XIX դարավերջին հասավ 300 հազարի:

Ռուս-թուրքական պատերազմից հետո հայերն այն համոզմանն էին, որ վերջապես կլուծվի Հայկական հարցը՝ Արևմտյան Հայաստանը կազատա-

Րաֆֆու խենթը իր քաջերի խմբով

գրվի թուրքական վայրագ լծից: Կ. Պոլսի պատրիարք Ն. Վարժապետյանի առաջարկով հարց է դրվում Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրում հատուկ կետ մտցնել Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի հովանավորությամբ ինքնավարություն ստեղծելու կամ էլ գրավված շրջանները Ռուսաստանին միացնելու մասին: Ինչպես և պետք էր սպասել, այդ առաջարկը թշնամաբար է ընդունվում ոչ միայն Թուրքիայի, այլ նաև արևմտյան տերությունների կողմից: Պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն Թուրքիան պարտավորվում էր «հայկական մարզերում, առանց ուշացման, գործադրել տեղական պայմաններից բխող բարենորոգումներ ու ռեֆորմներ, պաշտպանել հայերի ապահովությունը քրդերից ու չերքեզներից»: Սակայն 1878 թ. հունիսին Բեռլինի չարաբաստիկ կոնգրեսը 16-րդ հոդվածը փոխարինեց 61-ով, որով Թուրքիան ռեֆորմները պետք է անցկացներ կոնգրեսին մասնակցող տերությունների հսկողության տակ, իսկ ռուսական բանակն անհապաղ դուրս բերվեր Արևմտյան Հայաստանից: Մ. Խրիմյանի գլխավորած հայկական պատվիրակությունը, որը պետք է հայերի պահանջները ներկայացներ, անգամ իրավասություն չունեցավ կոնգրեսի շենքը մտնելու և ձեռնունայն վերադարձավ: Դրանից հետո Թուրքիայում հայերի վիճակն ավելի վատացավ: Թուրք բռնապետները, վրեժով լցված, դիմեցին ամենադաժան հալածանքների: Նրանք ոչ միայն ռեֆորմներ անցկացնելու գործը խափանեցին, այլև որոշեցին Հայկական հարցը լուծել՝ հայերին ոչնչացնելով:

Գեներալ-ադյուտանտ իշխան Մ. Լորիս Մելիքով

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի գործը կազմակերպող ու գլխավորող բազմաթիվ խմբակներ ու կազմակերպություններ առաջացան Ալեքսանդրապոլում (1869 թ. «Բարենպաստ ընկերություն»), ուսուցիչ Ա. Կրիտյանի ղեկավարությամբ՝ Վանում (1872 թ., «Միություն ի փրկության»), Մեծ Ղարաքիլիսայում (1874 թ.), Կարինում (1881 թ., «Պաշտպան հայրենյաց»)՝ Խ. Կերեկցյանի գլխավորությամբ: Մոսկվայի հայ ուսանողների «Հայրենասերների միությունը» (1882 թ.) հրատարակում էր «Ազատության ավետաբեր» թերթը, որում կոչ էր արվում «արյունով գնել ազատությունը»: Կոչի բնաբանն էր Մ. Նալբանդյանի խոսքերը. «Պիտի գոռամ, պիտի կրկնեմ անդադար՝ ազատություն»: Բազմաթիվ այլ խմբակներ են ստեղծվում Թիֆլիսում և այլ վայրերում:

Ազատագրական շարժումները չէին դադարում: 1878 և 1884 թթ. զեյթունցիները կրկին ապստամբություն բարձրացրին սուլթանական վարչակարգի դեմ: 1880 թ. ազատագրական շարժումն ընդգրկեց

Կարսի բերդի առումը (1877 թ.)



Վասպուրականը, Սասունն ու Ալաշկերտը: 1886 թ. հակաթուրքական ապստամբություն բռնկվեց Վանում, բայց խեղդվեց արյան մեջ: Ի պատասխան այդ ապստամբությունների, թուրքական կառավարությունը շարունակեց բռնել հայերին բնաջնջելու ուղին:

Իր դաժանությամբ «արյունոտ» անունը վաստակած սուլթան Աբդուլ-Համիդը հայերի դահիճը դարձավ: Նա նպատակ էր դրել Հայկական հարցը «լուծել» հայերի ոչնչացումով: Այդ նպատակով էլ 1891 թ. ստեղծվեցին հիմնականում քրդերից կազմված համիդիե զորամասերը: Արյունոտ սուլթանի հրամանով թուրքական բազմահազար բանակը ներխուժեց Սասուն և ավերեց ու ոչնչացրեց բազմաթիվ հայկական գյուղեր, իսկ 1895—1896 թթ. նման հայկական ջարդեր տեղի ունեցան Պոլսում, Էրզրումում, Վանում, Խարբերդում, Սեբաստիայում, Մալաթիայում և հայաշատ այլ վայրերում: 1890-ական թվականներին թուրքական յաթաղանի զոհը դարձավ ավելի քան 300 հազար հայ, ավերվեցին քաղաքներն ու գյուղերը:

Սակայն արևմտահայությունը հերոսաբար պայքարում էր դաժան թշնամու դեմ: Այդ պայքարի առաջին շարքերում էին արդեն վաղուց հերոսացած զեյթունցիները: Նրանք թուրք փաշաներին հարկադրեցին իրենց մնացած զորքերը ետ քաշել Զեյթունից և հաշտություն խնդրել: 1896 թ. զեյթունցիների օրինակով վանեցիները մի ամբողջ շաբաթ հերոսաբար դիմադրեցին թշնամուն: Նման պաշտպանական մարտեր տեղի ունեցան Արևմտյան Հայաստանի նաև այլ վայրերում:

Բեռլինի վեհաժողովի հայոց պատվիրակությունը

Հայ զինագործներ

Արևմտյան տերությունները ոչ միայն չէին զսպում թուրքական բարբարոսներին, այլև, իրենց շահերից ելնելով, սիրաշահում էին Թուրքիային: Գերմանիան Թուրքիայի վրայով դեպի արևելք շարժվելու շահամոլական նկատառումներից ելնելով, օգնում էր նրան, իսկ Անգլիայի պրեմիեր-մինիստրը հայերի աղերսանքին պատասխանում էր, թե անգլիական նավերը չեն կարող Արարատի գագաթը բարձրանալ: Նույն անտարբերությունը ցույց տվեց Ֆրանսիան:

XIX դարի վերջին տասնամյակներում ձևավորվում են հայ քաղաքական կուսակցությունները: 1885 թ. Մարսելում Մ. Փորթուգալյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Արմենիա» թերթը, որի նպատակն էր հայ մասսաներին նախապատրաստել ազատագրական պայքարի՝ «Մահ կամ ազատու-



Բեռլինի վեհաժողովը (1878 թ.)

1895—1896 թթ. հայկական կոտորածների քարտեզը



թյուն» նշանաբանով: Թերթը պահանջ էր դնում անհապաղ իրագործել 61-րդ հոդվածում նշված հայկական ռեֆորմները: «Արմենիան» իր հայրենասիրական ոգով մեծ արձագանք գտավ համայն հայության մեջ և իր շուրջը համախմբեց ժամանակի շատ գործիչների ու հատկապես հայ երիտասարդությանը, որոնք և կոչվեցին արմենականներ: Նրանք իրենց կազմակերպությունները ստեղծեցին բազմաթիվ հայաշատ վայրերում և հայրենասիրական բուռն աշխատանք ծավալեցին: Հետագայում արմենականները վերակազմվեցին ռամկավար-ազատական կուսակցության:

1887 թ. Ժնևում հայ ուսանողների աջակցությամբ Ավետիս և Մարո Նազարբեկյան ամուսինները սկսեցին հրատարակել «Հնչակ» թերթը և այդ անունով էլ կոչեցին իրենց հիմնադրած մանրբուրժուական ազգային կուսակցությունը: Նրանք գտնվում էին ռուս նարոդնիկների ազդեցության տակ: Ծանոթանալով Գ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» կազմակերպության աշխատանքներին, նրանք սկսեցին ինչ-որ չափով տարվել մարքսիստական գաղափարներով, թարգմանեցին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի որոշ աշխատություններ: Հնչակյաններն առաջնահերթ խնդիր էին համարում սուլթանական լծից հայերի ազատագրումը: Այդ ուղղությամբ նրանք լայն աշխատանք ծավալեցին Արևելյան և Արևմտյան Հայաստանի շատ վայրերում, տեղերում ստեղծեցին իրենց կուսակցության ճյուղավորումները: Աբդուլհամիդյան ջարդերն ու հայ ազատագրական պայքարի անհաջողությունները կուսակցության ներսում որոշ ճգնաժամ առաջացրին:

1896 թ. հնչակյան կուսակցությունից անջատված մի խումբ երիտասարդներ ստեղծեցին «Վերակազմյալ հնչակյաններ» կազմակերպությունը: Ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ այդ կուսակցության մի շարք անդամներ մտան ՌՍԴԲԿ-ի շարքերը:

Դաշնակցությունը՝ հայ մանրբուրժուական կուսակցությունը, ստեղծվել է Թիֆլիսում 1890 թ., Ք. Միքայելյանի, Ս. Զավարյանի և Ռոստոմի (Ստ. Զորյան) նախաձեռնությամբ: Այդ կուսակցությունը ևս հանդես եկավ ազգային-ազատագրական պայքարի դրոշով: Սակայն այն գործում էր անարխիստական, տեռորիստական մեթոդներով, հանդես գալիս նեղ ազգայնական պահանջներով: Դաշնակցությունը աշխատավորների ինտերնացիոնալ միավորման հակառակորդ էր: Ստ. Շահումյանի խոսքերով

Զեյթուն. ընդհանուր տեսարան

Զեյթուն. իշխանների խմբանկար

ասած՝ դաշնակցությունը միշտ էլ եղել է հայ բուրժուազիայի հարազատ զավակը, նրա շահերի արտահայտիչն ու պաշտպանը:

* * *

Անդրկովկասում XIX դարի վերջին տասնամյակներում արդյունաբերության արագ զարգացման հետ մեկտեղ ձևավորվեց բանվոր դասակարգը, ուժեղացող ճնշման և շահագործման հետևանքով սկիզբ առան բանվորական ելույթները: Հայ բանվորության գերակշռող մասը կենտրոնացած էր Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում: 1872 թ. Թիֆլիսում Միրզոյանի տեքստիլ ֆաբրիկայի գործադուլավոր բանվորների մեծ մասը հայեր էին, իսկ 1881 թ. Բաքվում ծխախոտի ֆաբրիկայի գործադուլավոր բանվորների մեջ նրանք կազմում էին 90 %: 1882 թ. Բաքվում Միրզաբեկյանի ֆաբրիկայի գործադուլավոր բանվորների գերակշռող մասը ևս հայեր էին: Անդրկովկասյան պրոլետարիատի ինտերնացիոնալ կենտրոններում էլ թրծվեց հայ բանվորների հեղափոխական պայքարը: Այդ բանվորների մի մասը ժամանակի ընթացքում վերադառնում է Հայաստան և տեղում թափ հաղորդում հեղափոխական շարժմանը:

XIX դարի 80-ական թվականներից սկսած տնտեսական բնույթի ելույթներ էին տեղի ունենում Ալավերդում, Ալեքսանդրապոլում, Երևանում, իսկ 1896 թ. գործադուլ հայտարարեցին երկաթուղու շինարարության Ախթալայի տեղամասի բանվորները: Գործադուլը ճնշվեց զենքի ուժով, իսկ ղեկավարները բանտարկվեցին: Նույն թվականի դեկտեմբերին Սանահինի տեղամասում կապալառուի և նրա պաշտպան ցարական աստիճանավորների դեմ ըմբոստացավ 300 բանվոր: Ոստիկանները զենքի ուժով ճնշեցին գործադուլը: 1897 թ. նույն բախտին արժանացավ նաև Կարսի տեղամասի շինարար բանվորների ելույթը: Դրանք բանվորական շարժման առաջին քայլերն էին Հայաստանում, որոնք հանդես էին գալիս իրարից անջատ-անջատ և ցարական կառավարությունը դրանք հեշտությամբ ճնշում էր:

Բանվորական շարժման առաջացմանը զուգընթաց սկսեց նաև մարքսիզմի տարածումը հայ իրականության մեջ: Դեռևս 1887 թ. «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» ֆրանսերենից թարգմանվում է հայերեն և նրա երկու գլուխը 1894 թ. Աթենքում տպագրվում է «Գաղափար» ամսագրում: Նույն թվին Հովսեփ Աթաբեկյանը Շտուտգարդում այն թարգմանում է գերմաներենից: Հիմնականում մարքսիզմը Հայաստան էր ներթափանցում Ռուսաստանից, այնտեղ սովորող հայ ուսանողների միջոցով: Հայ առաջին մարքսիստներից էին Գ. Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեդ) և Ի. Լալայանցը, որը Ն. Ֆեդոսեևի մարքսիստական խմբակի անդամ էր և Վ. Ի. Լենինի մտերիմ զինակիցը: Իսկ Բ. Կնունյանցն ու Ա. Զուրաբյանը 1895 թ. Պետերբուրգում Վ. Ի. Լենինի հիմնադրած «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» ակտիվ անդամներից էին:

1892 թ. Թիֆլիսում ձևավորվում է «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան», որը 1893—1895 թթ. հրատարակում է «Ազատ Հայաստան», ապա նաև «Կռիվ» անլեգալ հեղափոխական թերթերը: Նրա անդամներից շատերը հետագայում մտան ՌՍԴԲԿ-ի շարքերը: Հայ երիտասարդներից շատերը 1896 թ. Թիֆլիսում գործող մարքսիստական խմբակների անդամներ էին: 1898 թ. Թիֆլիսում հիմնադրված հայ մարքսիստների խմբակի մեջ էին մտնում Մ. Մելիքյանը (Դեղուլչա), Հ. Փիլոսյանը, Գ. Ղարաջյանը, Ա. Կախոյանը (բանվոր Խեչո) և ուրիշներ: 1900 թ. լույս է տեսնում այդ խմբակի «Բանվոր» ձեռագիր թերթը: Խմբակը սերտ կապերի մեջ էր տեղի մարքսիստական մյուս խմբակների հետ: Իսկ Հայաստանի տարածքում առաջին մարքսիստական խմբակը հիմնադրվում է 1899 թ. Ջալալօղլիում (Ստեփանավան) Ստ. Շահումյանի ղեկավարությամբ: Իր գործունեության

հենց առաջին օրերից Ստ. Շահումյանը, որպես նվիրված լենինյան, մեծ դեր է խաղացել Անդրկովկասի հեղափոխական շարժման զարգացման գործում:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐՈՒՄ

XIX դարում երկրի տնտեսական, քաղաքական ու հասարակական մտքի զարգացմանը զուգընթաց զգալի տեղաշարժեր էին նկատվում նաև մշակույթի ու լուսավորության բնագավառում: Հայ ժողովրդի մշակութային հիմնական օջախները գտնվում էին Հայաստանի սահմաններից դուրս՝ Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում, Պետերբուրգում, Աստրախանում, Նոր Նախիջևանում, Արևմտյան Հայաստանի և արտասահմանյան բազմաթիվ քաղաքներում, հատկապես Կոստանդնուպոլսում, Վենետիկում, Կալկաթայում, Մադրասում, որտեղ կային հայկական ուսումնական հաստատություններ, հրատարակվում էին թերթեր ու հանդեսներ, ստեղծվում ընկերություններ, որոնք նշանակալի դեր էին խաղում գրականության, արվեստի, գիտության ու լուսավորության զարգացման բնագավառում: Սակայն շատ բան արվեց նաև Երևանի նահանգում:

Հայ ժողովրդի լուսավորության գործը առաջ մղելու համար կարևոր էր դպրոցական-լուսավորական գործի ծավալումը: Դեռևս 1810 թ. Աստրախանում բացվեց Աղաբաբյան դպրոցը, իսկ 1815 թ. Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանը, որն անգնահատելի դեր խաղաց հայ հասարակական մտքի, լուսավորության ու գիտության զարգացման, հայ-ռուսական բարեկամական կապերի ամրապնդման գործում: 1821 թ. Կալկաթայում հիմք դրվեց Մարդասիրական ճեմարանին, իսկ 1824 թ.՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցին: Ներսիսյան դպրոցը կովկասահայ երիտասարդության բազմաթիվ սերունդների կրթական օջախը դարձավ: Այդ դպրոցն ավարտած շատ երիտասարդներ հետագայում դարձան հայ մշակույթի, հասարակական ու քաղաքական կյանքի ականավոր դեմքեր: Պակաս դեր չխաղացին նաև Երևանի գավառական (1832) և թեմական (1837) դպրոցները, ինչպես նաև Շուշու թեմական (1838) և տեղերում գործող ծխական դպրոցները: Հայկական դպրոցներ են բացվում նաև հայ կուլտուրայի այնպիսի կենտրոններում, ինչպիսիք էին Վենետիկը, Փարիզը, Կ. Պոլիսը, Զմյուռնիան, Վանը, Կարինը և այլն:

Դպրոցական գործը և լուսավորությունն աշխարհաբար լեզվի ու աշխարհիկ կրթության շնորհիվ զարգացման նոր փուլ են մտնում XIX դարի երկրորդ կեսին: Բացվում են նոր ուսումնական հաստատություններ՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1874), Վանի վարժարանը (1878), Երևանի ուսուցչական սեմինարիան և գիմնազիան (1881), ինչպես նաև Նոր Նախիջևանի թեմական դպրոցը, Կարինի Սանասարյան վարժարանը և այլն: 1890 թ. Երևանի նահանգում գործում էր 147 ուսումնական հաստատություն՝ 10280 աշակերտով, իսկ արտասահմանյան երկրներում հայկական բազմաթիվ նոր դպրոցներ են բացվում: Դպրոցական գործի լայն թափ ստանալուն զուգընթաց հանդես են գալիս մանկավարժական գիտության այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք էին Պ. Շանշյանը, Ա. Բահաթրյանը, Ս. Մանդինյանը, Ղ. Աղայանը, Ռ. Պերպերյանը և ուրիշներ: Սակայն թե՛ սուլթանի և թե ցարի ազգահալած քաղաքականությունը զգալապես արգելակում էր լուսավորության տարածումը: 1885—1895 թթ. ցարական ռեակցիայի հետևանքով հայկական դպրոցները փակվեցին, իսկ արյունարբու սուլթանը ոչ միայն արգելքներ էր ստեղծում, այլ նաև հայ ուսուցիչներին բանտ էր նետում: Արևմտյան Հայաստանի դպրոցներում արգելվում էր հայոց պատմության դասավանդումը, «Հայաստան», «ազատություն», «հեղափոխություն» բառերի օգտագործումը:



Հովակիմ Լազարյան

Հայ ժողովրդի մշակույթի զարգացման գործում կարևոր դեր է խաղացել պարբերական մամուլը, որի մեծ մասը հրատարակվել է Հայաստանից դուրս: Դրանցից կարելի է նշել Վենետիկում հրա-

տարակվող «Տարեգրությունը» (1799—1803), «Եղանակ բյուզանդյանը» (1803—1820), «Բազմավեպը» (1843-ից մինչև այժմ), Կալկաթայի «Ազգասերը» (1845—1848) և «Ազգասեր արարատյանը» (1848—1851), Կ. Պոլսի «Լրագիրը» (1832—1849), «Հայաստանը» (1846—1852), Զմյուռնիայի «Արշալույս արարատյանը» (1849—1887) և այլն:

Հայ մամուլը վարգացման լայն ընթացք է ստանում XIX դարի երկրորդ կեսին: Գ. Լևոնյանի տըվյալներով, եթե 1794—1859 թթ. հրատարակվել է 54 անուն հայերեն պարբերական, ապա նույնքան հրատարակվում է միայն 1860-ական թվականներին, իսկ XIX դարի երկրորդ կեսին՝ 340 անուն: Այնպիսի կարևոր օրգաններ, ինչպիսիք են «Հյուսիսափայլը», «Մեղուն», «Ծաղիկը», «Մշակը», «Մասիսը», «Արևելյան մամուլը», «Փորձը», «Մուրճը» և այլն, հույժ կարևոր դեր խաղացին հայ ժողովրդի ինքնագիտակցության վարգացման, հայ մշակույթի տարածման, ազգային-ազատագրական պայքարի վերելքի, սոցիալական ու այլ պրոբլեմների արծարծման գործում: Սկզբնավորվեց նաև պատմագիտական, գրական և մշակութային բազմաթիվ այլ երկերի հրատարակումը: 1809 թ. Պետերբուրգում ռուսերեն հրատարակվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», իսկ 1821 թ. Մոսկվայում՝ Հ. Ալամդարյանի ռուս-հայերեն բառարանը: Այդ նույն թվականին լույս է տեսնում նաև Դ. Մելիքովի ռուս-հայ-վրացերեն բառարանը, իսկ 1836—1837 թթ. Վենետիկում՝ Նոր Հայկազյան բառարանը: Այդ տարիներին հայագիտական կարևոր աշխատություններ են ստեղծում Ղ. Ինճիճյանը, Մ. Ավգերյանը, Խ. Աբովյանը, Մ. Թաղիադյանը և ուրիշներ:

Դարի երկրորդ կեսին առաջընթաց քայլ է կատարվում պատմագիտության, փիլիսոփայության և տնտեսագիտության վարգացման բնագավառներում: Առանձնակի տեղ են գրավում Մ. Նալբանդյանի մատերիալիստական աշխարհըմբռնումով շարադրված փիլիսոփայական և տնտեսագիտական ուսումնասիրությունները: Խիստ արժեքավոր էին նաև Ստ. Նազարյանի, Ք. Պատկանյանի, Մ. Էմինի, Ղ. Ալիշանի, Հ. Տաշյանի, Ստ. Պալասանյանի, Ա. Երիցյանի և այլոց հայագիտական ուսումնասիրությունները: Բնական գիտությունների ասպարեզում մեծ ավանդ ունեն երկրաբան Ա. Արծրունին, կենսաբան, դարվինիստ Ն. Տաղավարյանը, բժիշկ Լ. Տիգրանյանը և ուրիշներ:

XIX դարի 30—40-ական թվականներին մեծ դեմոկրատ ու լուսավորիչ Խ. Աբովյանի ջանքերով վերջնական ձևավորում է ստանում արևելահայ նոր գրականությունը: Այդ ուղղությամբ կգալի աշխատանք կատարեցին նաև Հ. Ալամդարյանն ու Մ. Թաղիադյանը: Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը նոր դարագլուխ բացեց հայ գրականության և հասարակական մտքի պատմության մեջ:

Դարի երկրորդ կեսին բուռն վարգացում ապրեց նաև հայ գեղարվեստական գրականությունը՝ իր բոլոր ժանրերով հանդերձ: Հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը հիմք դրեց հեղափոխական-դեմոկրատական պոեզիային:

Դեմոկրատական ազատաշունչ պոեզիայի փայլուն դեմքերից էր Սմբատ Շահազիզը, որի «Լևոնի վիշտը» Մ. Նալբանդյանը և ուրիշ մտածողներ համարում էին նաև իրենց սեփական վիշտը: Հայ քաղաքացիական պոեզիայի ականավոր դեմքեր էին Մ. Պեշիկթաշլյանն ու Ռ. Պատկանյանը (Գամառ-Քաթիպա), իսկ լիրիկայի մեծ վարպետներ էին Հ. Հովհաննիսյանն ու Պ. Դուրյանը:

Ռ. Պատկանյանի բանաստեղծությունները հայ երիտասարդության համար հայրենասիրական մարտակոչ են հանդիսացել:

Հանդես են գալիս նաև արձակի, հատկապես վիպասանության այնպիսի վարպետներ, ինչպիսիք էին Պ. Պռոշյանն ու Ղ. Աղայանը, որոնք նկարագրել են հայ աշխատավոր ժողովրդի չարքաշ կյանքը, նրա սոցիալական պայքարը: Հայ վիպագրության ամենատաղանդավոր ներկայացուցիչը Րաֆֆին (Հ. Մելիք-Հակոբյան) էր, որն իր վեպերում, մերկացնելով թուրքական բռնապետությունը, հայ ժողովրդին ազատագրական պայքարի է կոչում: Րաֆֆու հետ միասին Ծերենցն ու Մուրացանը հայ պատմավիպագրությունը բարձրացրին մի նոր աստիճանի: Այդ շրջանում գրական ասպարեզ էին իջել նաև Ալ. Շիրվանզադեն ու Նար-Դոսը:

Հայ ռեալիստական դրամատուրգիայի հիմնադիրն ու ամենաականավոր ներկայացուցիչը Գ. Սունդուկյանն էր, որի «Պեպոն» սոցիալական պայքարի գեղարվեստական արտացոլման փայլուն օրինակ է: Հայ գրականության բացառիկ դեմքերից էր մեծ երգիծաբան Հ. Պարոնյանը:

Հայ ժողովուրդը արվեստի բնագավառում ևս մեծ նվաճումների հասավ: Հատկապես մեծ է դիմանկարիչ Հ. Հովնաթանյանի դերը, որից հետո ասպարեզ եկան Վ. Սուրենյանցը, Գ. Բաշինջաղյանը, Է. Մահտեսյանը և ապա աշխարհահռչակ ծովանկարիչ Հ. Այվազովսկին, որը նկարել է «Արարատ լեռան հովիտը», «Սևանա լիճը», «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թվականին» և ուրիշ գործեր:

Երաժշտության բնագավառում դարի երկրորդ կեսին հանդես եկան այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք էին Տ. Չուխաջյանը, Ք. Կարա-Մուրզան, Մ. Եկմալյանը և ուրիշներ: Տ. Չուխաջյանի «Արշակ II» օպերան և «Կարինե» երաժշտական կոմեդիան արվեստի գլուխգործոցներ են:





Րաֆֆի

Գ. Սունդուկյան



Պետրոս Ադամյանը Քինի դերում

Սիրանույշ

1827 թ. Երևանում Ա. Գրիբոյեդովի ներկայությամբ բեմադրվում է նրա «Խելքից պատուհաս» պիեսը, որը 1832 թ. հայ, վրացի և ռուս թատերասերների ջանքերով մեծ հաջողությամբ բեմադրվում է նաև Թիֆլիսում: 1841 թ. Երևանում աշակերտների ջանքերով բեմադրվում է նաև Խ. Աբովյանի փոխադրած «Թեոդորա կամ որդիական սեր» դրաման: Խ. Աբովյանը, ինչպես նաև Գ. Շիրմազանյանը կգալի չափով նպաստեցին հայ թատերական արվեստի հետագա վարգացմանը: Արդեն 1850-ական թվականներից Մոսկվայում, Անդրկովկասի քաղաքներում, Կ. Պոլսում և այլ վայրերում հայ ուսուցիչների, աշակերտների և սիրողների ջանքերով ներկայացումներ էին տրվում: 1851 թ. Թիֆ-

լիսում սկսում է գործել Թամամշյանի թատրոնը, իսկ 1861 թ. հիմնադրվում է Կ. Պոլսի Արևելյան թատրոնը: Շուտով, հանձինս Պ. Ադամյանի, Գ. Չմշկյանի, Սիրանույշի և ուրիշների ասպարեզ է գալիս հայ տաղանդավոր դերասանների մի ամբողջ սերունդ, որը որոշակի ազդեցություն գործեց հայ թատերական արվեստի կարգացման հետագա ընթացքի վրա:

Այսպիսով, դարերի խորքից եկող հայ մշակույթը XIX դարում, ռուս և մյուս ժողովուրդների հետ ունեցած լայն կապերի ու առնչությունների պայմաններում, զարգացման ավելի լայն ընթացք ունեցավ:

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ռուսաստանը XIX դարի վերջին և XX դարի սկզբին թևակոխում է իմպերիալիզմի դարաշրջանը: Վ. Ի. Լենինի բնորոշմամբ դա կապիտալիզմի զարգացման ամենաբարձր ստադիան է, երբ արդյունաբերության կենտրոնացումն ու համակենտրոնացումը մեծ չափերի են հասնում, է՛լ ավելի են սրվում հակասություններն աշխատանքի և կապիտալի միջև: Ռուսական կապիտալիզմը համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ է քաշում նաև Կովկասը: «Եվրոպական կապիտալիզմը, որը տիրապետող արդյունաբերական եղանակ էր դարձել Ռուսաստանում,— գրել է Ստ. Շահումյանը,— վերջին տասնամյակների ընթացքում մուտք գործեց մեր երկիրը և դրեց իր ուժեղ և ուրույն դրոշմը հայկական իրականության վրա»: Այդուհանդերձ, Հայաստանի արդյունաբերությունը թույլ էր. այստեղ առավել զարգացած էր պղնձարդյունաբերությունը: Ըստ որում, Ալավերդու և Ախթալայի պղնձահանքերն ամբողջովին ֆրանսիական կապիտալիստների ձեռքում էին, իսկ Զանգեզուրինը՝ հայ և հույն կապիտալիստների: Իր արտադրանքով աչքի էր ընկնում պղնձաձուլական «Սյունիք» գործարանը: Օգտագործվում էին նաև Սիսի Մադանի (Շահալի) պղնձահանքերը: Միայն Ալավերդին 1903 թ. տվեց ավելի քան 75 հազար փութ պղինձ: Զգալի չափով ավելացավ Կողբի և Նախիջևանի աղահանքերի հանույթը:

Զարգանում և ապրանքային բնույթ էր ստանում բամբակի մշակությունը: Երևանի նահանգը դառնում է բամբակի հումք մատակարարող կարևոր շրջան և արագորեն ընդգրկվում համառուսաստանյան շուկայի մեջ:

Արագորեն զարգանում էր գինու-կոնյակի, ինչպես նաև բրնձի արտադրությունը: Անասնապահու-





Հին Երևան. Ծիրանի թաղի տեսարանը

Ալեքսանդրապոլի ընդհանուր տեսքը

Լենինական. Ամենափրկիչ եկեղեցին

թյունը նույնպես ընթանում էր ապրանքային տընտեսության զարգացման ուղիով: Լոռի—Փամբակում զարգացած էր ցեղային անասնապահությունը: Կազմակերպվեց շվեյցարական պանրի գործարանային արտադրություն:

Արդյունաբերության զարգացման և ընդհանրապես առաջադիմության համար կարևոր նշանակություն ունեցավ Թիֆլիս—Երևան երկաթուղու շինարարությունը: Կառուցվեցին խճուղիներ և այլ ճանապարհներ, որոնք Հայաստանի մի շարք շրջաններ կապում էին երկաթուղային կայարանների հետ: Զանգեզուրը Եվլախով կապվում էր Բաքվի հետ, Դիլիջանն ու հարակից շրջաններն Աղստաֆայով՝ Բաքվի ու Թիֆլիսի հետ, իսկ Հայաստանի հյուսիսարևմտյան շրջանները Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Երևան, Ալեքսանդրապոլ—Կարս երկաթգծով՝ միմյանց հետ:

Արդյունաբերության զարգացումը նպաստեց քաղաքային բնակչության աճին և նոր քաղաքների առաջացմանը, արագացրեց բանվոր դասակարգի ձևավորումը: Այնուհանդերձ, XX դարի սկզբին քաղաքային բնակչությունը ազգաբնակչության միայն 8,5 %-ն էր կազմում:

Մեծ թվով հայ բանվորներ էին աշխատում Անդրկովկասի մյուս արդյունաբերական կենտրոններում, հատկապես Բաքվում, որտեղ 1904 թ. 61 հազար բանվորների 27 %-ը հայեր էին:

Ծանր էր բանվորների տնտեսական ու սոցիա-



Լենինական, Սև բերդը

լական վիճակը, նրանք ապրում էին խոնավ ու մութ նկուղներում, կիսաքաղց: Աշխատանքային օրվա միջին տևողությունը 12 ժամ էր, իսկ որոշ տեղերում այն հասնում էր 14—16 ժամի: Աշխատունակությունը կորցրած, հաշմանդամ դարձած բանվորները փողոց էին նետվում ու որևէ օգնություն չէին ստանում: Հատկապես ծանր էր երեխաների ու կանանց աշխատանքը: Երեխաները ստանում էին բանվորի աշխատավարձի մեկ երրորդը, իսկ կանայք՝ երկու երրորդը:

Կարս քաղաքն արևմուտքից

Ամենաչնչին առիթներով բանվորներին տուգանում էին: Պատահում էր, որ բանվորի ամբողջ աշխատավարձը պահվում էր որպես տուգանք: Ավելի ծանր էր Հայաստանի լեռնարդյունաբերության մեջ աշխատող բանվորների դրությունը: Աշխատելով հանքախորշերում՝ նրանք ամեն րոպե ենթակա էին վտանգի: Աշխատանքի անվտանգության ապահովումը, բժշկական և կուլտուր-կենցաղային սպասարկումը խիստ անբավարար էին:

Աշխատավոր մասսաների վիճակն ավելի ծանրացավ դարասկզբին, երբ տնտեսական ճգնաժամը ցնցեց ամբողջ երկիրը և հսկարավոր բանվորների գործազրկության մատնեց: Անբերրիությունն ու մթերքների թանկությունն է՛լ ավելի վատթարացրին աշխատավորների դրությունը, սրելով դասա-

Հայ առևտրականի տուն Վանում

կարգային հակասություններն ու քաղաքական պայքարը:

Դարասկզբին Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում, մեկը մյուսի հետևից ստեղծվեցին լենինյան-իսկրայական կազմակերպություններ: 1901 թ. ձևավորվեցին ՌՍԴԲԿ Բաքվի և Թիֆլիսի կոմիտեները, իսկ 1902 թ.՝ Բաթումի կոմիտեն: 1901—1902 թթ. սոցիալ-դեմոկրատական խմբակներ էին գործում Ալեքսանդրապոլում, Երևանում, Կարսում. Սանահինում, Հաղպատում և այլուր: Հատկապես եռանդուն գործունեություն էր ծավալել 1902 թ. Ալեքսանդրապոլում հիմնադրված սոցիալ-դեմոկրատական պինվորական կազմակերպությունը, որը կապ էր հաստատել քաղաքի աշխատավորների հետ:

Հայ ժողովրդի քաղաքական կյանքում կարևոր իրադարձություն էր 1902 թ. Հայ սոցիալ-դեմոկրատների միության ստեղծումը, որի կազմի մեջ մտնում էին Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ա. Զուրաբյանը, Ա. Խումարյանը, Մ. Մելիքյանը (Դեդուշկա), Ս. Խանոյանը և ուրիշներ: Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը հրատարակեց «Պրոլետարիատ» թերթը, որի առաջին համարում տպվեց նրա մանիֆեստը: Միությունն իրեն համարում էր ՌՍԴԲԿ-ի անբաժան մասը և նշում, որ «միանգամայն համերաշխ է նրա հետ և նրա հետ միասին կռվելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես և հայկականի՝ մասնավորապես»: Վ. Ի. Լենինը միության հանդես գալու կապակցությամբ գրել է. «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածք տալու նրա հիանալի փորձը» :

1903 թ. մարտին ստեղծվում է Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ղեկավար մարմինը՝ ՌՍԴԲԿ-ի կովկասյան միութենական երկրային կոմիտեն, որի կազմի մեջ էին մտնում Ստ. Շահումյանը, Մ. Ցխակայան, Բ. Կնունյանցը, Ա. Ծուլուկիձեն, Ա. Խումարյանը և ուրիշներ: Կովկասյան միության օրգանն էր «Պրոլետարիատի կռիվը» թերթը, որը հրատարակվում էր հայերեն, վրացերեն և ռուսերեն:

ՌՍԴԲԿ II համագումարին որպես պատգամավորներ մասնակցում էին Բ. Կնունյանցն ու Ա. Զուրաբյանը: Համագումարում ունեցած իր ելույթներում Բ. Կնունյանցը պաշտպանեց ինտերնացիոնալիստական միասնական կուսակցություն ստեղծելու մասին լենինյան գիծը: Նրա ելույթներն արժանացան Վ. Ի. Լենինի բարձր գնահատականին: Հայ բոլշևիկները, հավատարիմ լենինյան գծին, ջանում էին հայ ժողովրդի ազատագրական պայքարը կուգակցել համառուսաստանյան հեղափոխական շարժման հետ:

XX դարի սկզբին Անդրկովկասի, ինչպես նաև Հայաստանի աշխատավորների՝ նախկինում ցաքուցրիվ, անկազմակերպ ելույթներն ավելի կազմակերպված բնույթ ստացան: Հատկապես 1901 թ. Թիֆլիսի մայիսմեկյան ցույցից հետո, ինչպես նշել է «Իսկրան», «Կովկասում սկսվում են բացահայտ հեղափոխական շարժումներ»: Դրանց նոր թափ հաղորդեցին Բաթումի և Բաքվի 1902 թ. վիթխարի ցույցերը:

1903—1904 թթ. Ալավերդու պղնձահանքերի գործադուլավոր բանվորները բողոքում էին շահագործման ու ճնշումների և պաշտոնյաների ապօրինությունների դեմ: 1904 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում գործադուլ են հայտարարում Չիթողցյանի գործարանի բանվոր-ծառայողները: Գործադուլային կոմիտեն պահանջում էր կրճատել աշ-

Հայկական ընտանիքի հինգ սերունդներ

խատօրվա տևողությունը, բարձրացնել աշխատավարձը, ապահովել վճարովի արձակուրդ, բարելավել կենցաղային պայմանները, կազմակերպել բժշկական օգնություն: Երբ այդ պահանջները մերժվում են, սոցիալ-դեմոկրատների կոչով բանվորներն ապրիլի 30-ին նոր ցույց են կազմակերպում: Նրանց են միանում երկաթուղայինները և աշխատավորական այլ խավեր: Ոստիկանությունը ցրում է ցույցը և արգելում մայիսմեկյան տոնակատարությունը: Գործադուլներ ու ցույցեր են տեղի ունենում նաև Երևանում, Կարսում, Սարիղամիշում և այլ վայրերում, որոնց կազմակերպման համար եռանդուն գործունեություն էին ծավալում բոլշևիկները:

Բոլշևիկները կարևոր նշանակություն էին տալիս անլեգալ գրականության տարածմանը: Վ. Ի. Լենինի ցուցումներով այդ ուղղությամբ Ժնևում մեծ աշխատանք էր կատարում Ստ. Շահումյանը, «Մենք,— գրել է Լենինը,— այժմ եռանդուն մտածում ենք այստեղ վրացական և հայկական գրականության հրատարակությունը կազմակերպելու մասին: Այդ գործին ձեռնամուխ են եղել ձեռնհաս մեծ աշխատանք էր կատարում Ստ. Շահումյանը: թարգմանությամբ հայերեն լույս է տեսնում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և մարքսիստական այլ գրականություն: Բաքվից և Թիֆլիսից բացի, անլեգալ գրականություն էր տպա-

Հայ աղջիկներ

Ստեփան Շահումյան

Բոգդան Կնունյանց

գրվում նաև Ալեքսանդրապոլում, Կարսում, Շուշիում և այլ վայրերում:

Հեղափոխական պայքարի գաղափարները թափանցում էին նաև գյուղ: Ստ. Շահումյանը 1904 թ. «Երևանից» հոդվածում գրում էր. «Հայկական շատ գյուղերում արդեն կան գյուղական երիտասարդական կազմակերպություններ, որոնք կապված են մեր կոմիտեների հետ, ստանում են մեր գրականությունը և լարված ուշադրությամբ հետևում են հայ և այլազգի բանվորների հերոսական պայքարին: Այս պայքարը,— ավելացնենք վերջում,— արդեն բազմաթիվ փայլուն հաղթանակներ է տարել...»

Գյուղացիությունը տառապում էր սակավահողությունից, գյուղատնտեսական աշխատանքները կատարվում էին ձեռքով: Բերքատվությունը ցածր էր: Պարբերաբար վրա հասնող անբերրիությանն ուղեկցում էին սովն ու համաճարակ հիվանդությունները:

Երևանի նահանգում հողազրկությունն ու սակավահողությունը հասնում էին մեծ չափերի: Էջմիածնի գավառի մի շարք գյուղերի բնակիչներ լրիվ հողազուրկ էին և իշխանություններից խնդրում էին Չիբուխլու գյուղի մոտ գտնվող պետական հողերից իրենց հող տալ, որպեսզի կարողանան պահպանել իրենց գոյությունը: 1905 թ. Լոռու մի շարք գյուղերի բնակիչներ ևս հողազուրկ էին, մինչդեռ կառավարությունն այստեղ վերաբնակիչների համար ստեղծել էր «պահեստի ֆոնդ»: Գյուղացիները խնդրում էին այդ հողերից գոնե վարձակալությամբ կտորներ տալ իրենց, բայց ամեն անգամ մերժում էին ստանում: Գյուղացիների վիճակն ավելի ծանր էր վանքապատկան ու եկեղեցապատկան կալվածքներում: Էջմիածնի վանքապատկան հողերում ապրում էին ավելի քան 19 հազար գյուղացիներ, որոնք պարտավոր էին կատարել կալվածքներում պահանջվող բոլոր աշխատանքները և միաժամանակ վճարել հարկեր՝ բնամթերքով ու դրամով, որոնց չափը օրենքով չէր սահմանափակված:

Բերքատվությունը կախված էր ոռոգումից, իսկ ջուրը գտնվում էր գյուղի հարուստների կողմից նշանակված ջրբաշխի իրավասության տակ: Հաճախ գյուղացիները ստիպված էին մեծ կոհաբերությունների գնալ, որպեսզի իրավունք ստանան օգտվելու ոռոգման ջրից:

1903 թ. նոյեմբերին Հաղպատի աշխատավոր գյուղացիները, կապ հաստատելով Սանահինի բանվորների ու սոցիալ-դեմոկրատների հետ, ապստամբում են կալվածատեր Բարաթովի դեմ: Կալվածատիրոջ պահանջով գյուղ ժամանած ոստիկանները կրակում են անզեն գյուղացիների վրա: Հաղպատցիներից մի քանիսը կոհվում են: Շուտով գյուղ են

գաչիս օկրուգային և տեղական դատաքանների ներկայացուցիչներն ու պատժիչ կորախումբը: Ապըստամբության մասնակիցներից 34 հոգի բանտ են նետվում, գյուղը դրվում է խիստ հսկողության տակ և էքզեկուցիայի ենթարկվում: Նոյեմբերի 17-ին հաղպատցիները, դիմելով Թիֆլիսի նահանգապետին, գրում էին. «Այժմ մենք պատժված ենք, այն էլ դաժան կերպով: Մեր գյուղը լցված է կորքով, որին մենք պետք է կերակրենք: Մենք կընկնենք լիովին քայքայման և անկման մեջ: Եթե անգամ մի շաբաթ շարունակվի նման դրությունը...»: Հաղպատցիների պայքարը ղեկավարում էին Ա. Սոխիկյանը, Ս. Աթանեսյանը և Կ. Մելքումյանը:

Ցարական կառավարության ազգահալած մեծապետական քաղաքականությունը Կովկասի կառավարչապետ Գոլիցինի օրոք առավել սաստկացավ: Փոքր ժողովուրդների ձուլումը դարձել էր պետական քաղաքականություն:

1903 թ. հունիսի 12-ի ցարական օրենքով բռնագրավվում էր հայ եկեղեցական գույքը, ծխական դպրոցները զրկվում էին նյութական միջոցներից: Փակվեցին հայկական շատ դպրոցներ, փաստորեն արգելվեց նաև բարեգործական ընկերությունների գործունեությունը: Հայ ժողովրդի նկատմամբ գործադրված այդ բռնությունը կայսրության հայաբնակ բոլոր վայրերում բողոքի ու դժգոհության հսկայական ալիք առաջացրեց, մի բողոք, որն արժանացավ ռուս և մյուս ժողովուրդների առաջադեմ խավերի ու պրոլետարական մասսաների պաշտպանությանը:

Հունիսի 12-ի օրենքի դեմ լայն պայքար է ծավալվում: Բաքվում տեղի ունեցած բողոքի ցույցը վեր է ածվում ցուցարարների և ոստիկանության միջև պինված ընդհարման: Թիֆլիսում պայքարն այնքան է սրվում, որ քաղաքում ռազմական դրու-



«Պրոլետարիատ» թերթը («Հայ սոցիալ-դեմոկրատների» օրգանը)



Газета «Пролетариатис Брдзола» («Борьба Пролетариата») на русском, грузинском и армянском языках выходила с апреля 1903 по октябрь 1905 года

«Պրոլետարիատի կռիվը» թերթը (ՌՍԴԲԿ Կովկասյան միության օրգանը)

թյուն է հայտարարվում: Ղարաբաղում հուզումները ճնշելու համար գործի է դրվում նույնիսկ հրետանին: Հակացարական հուզումներ են տեղի ունենում նաև Գանձակում, Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Էջմիածնում և այլուր:

ՌՍԴԲԿ կովկասյան միության կոմիտեն, ողջունելով հայ ժողովրդի պայքարը, նշում էր, որ

«հայերը, շատ լավ հասկանալով ցարի հետին նպատակները՝ արդեն բարձրացրել են կռվի դրոշը, նրանց արյունը արդեն թափվել է... Իսկ մենք՝ սոցիալ-դեմոկրատ ընկերներս, մենք՝ համաշխարհային պրոլետարիատի մեծ բանակի զինվորներս, միշտ ու ամեն տեղ մեր կրծքով պետք է պաշտպանենք բոլոր ճնշվածներին... Չինովնիկների պկվելի կամայականության դեմ ելած հայերի թվում առաջին շարքերը մեզ պետք է պատկանեն»: Բ. Կնունյանցը «Իսկրա» թերթում տպագրած իր «Նոր կողոպուտ» հոդվածում ողջունում էր հայ ժողովրդի պայքարը և մերկացնում ցարիզմի շովինիստական քաղաքականությունը: Հայ բնակչությունը «վճռականորեն դեմ է դուրս եկել թագակիր ավազակին և զենքը ձեռքին պաշտպանում է իր իրավունքները»,— գրում էր նա:

Չհանդուրժելով Գոլիցինի դաժանությունները, մի քանի հայ երիտասարդներ նրա վրա ռումբ են նետում և վիրավորում: ՌՍԴԲԿ կովկասյան միության կոմիտեն «Գազանը վիրավորված է» կոչում նշում էր, որ «բոլոր գոլիցիններն արժանի են ավելիին», սակայն նրանք «կանհետանան և ինչպես ծուխ կցրվեն միմիայն ինքնակալության անկմամբ»: Միայն միասնական հեղափոխական պայքարը կարող էր փրկել ժողովրդին:

ՌՍԴԲԿ Կովկասյան սոց. դեմ. բանվորական միության կոչը (1905 թ.)


Պրօլետարներ բօլօր երկրների, միացէք!

ՌՈՒՍԱՍՏ. ՍՕՑ.-ԴԵՄ. ԲԱՆՒՈՐ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ.

Կովկասեան Սօց.-Դեմօկ. Բանւորական Միութիւն

Կորչի պատերազմը;

Կորչի ցարի կառավարութիւնը!

Մենք պահանջում ենք.—

Ամբողջ ժողովրդից ազատ քուէարկով ընտրւած Հիմնադրական Ժողովի հրաւիրելը.

Ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրաւունք:

Բոլոր ժողովրդների օրէնքի առաջ հաւասարութիւն, առանց սեռի և ազգութեան խտրութեան.

Մամուլի, խօսքի, ժողովների, միութիւնների և գործադուլների ազատութիւն.

8 ժամեայ բանւորական օր:

Կեցցէ Դեմոկրատական Հանրապետութիւն!

Կեցցէ Ռ. Ս.-Դ. Բ. Կուսակցութիւնը!

Կեցցէ միջազգային Սօց.-Դեմօկրատիան!

Կորչի բուրժուազիան;

Կեցցէ Սօցիալիզմը!

Ռ. Ս. Դ. Բ. Կ. ԲԱԳՒԱՅ ԿՈՄԻՏԷՏ.

Գրիգոր Վարդանյանի միջոցով 1926 թ. զորավար Անդրանիկն իր սուրը նվիրում է ՀՊՊԹ-ին

Ժողովրդական այդ շարժումները իրենց ազգային-ազատագրական բնույթով կարևոր նշանակություն ունեցան աշխատավորական պանգվածների հեղափոխականացման գործում: Չնայած ցարիզմը դաժանորեն ճնշեց այդ շարժումները, բայց նոր բռնկումներից խուսափելու համար 1905 թ. օգոստոսին հայ եկեղեցական կալվածքները ստիպված ետ վերադարձրեց: Դա հայ ժողովրդի հաղթանակն էր:

Արևմտյան Հայաստանում հայ աշխատավոր մասսաները թուրքական լծի տակ անհամեմատ ավելի ծանր ճնշման ու դաժան հալածանքի էին ենթարկվում: Հայ գյուղացիության նույնիսկ ֆիզիկական գոյությունը մշտական վտանգի տակ էր: Կամայականությունը, բռնությունն ու սպանությունները սովորական երևույթ էին: Պետության հովանավորությունը վայելող ավազակախմբերը և սուլթանի մեծ ու փոքր պաշտոնյաները գործում էին անկաշկանդ: Մի շարք վայրերում հայ գյուղացիներն ստիպված էին դիմելու ինքնապաշտպանու-

թյան: Քաջարի սասունցիները, որ հայտնի էին իրենց հերոսությամբ, չհանդուրժելով թուրքական վայրագությունները, 1904 թ. մարտին վենքի դիմելով՝ Սասունը դարձրին անառիկ բերդ: Կովկասից այստեղ անցած խմբերը թափ էին հաղորդում ապստամբությանը: Թուրքական կորքը, մարտ-ապրիլ ամիսներին շրջապատելով Սասունը, արյունահեղ կռիվներ մղեց ապստամբների դեմ: Արևմտահայ գյուղացիության ապստամբությունը Սասունում ու այլ շրջաններում գլխավորում էին ժողովրդական հերոս Անդրանիկը, Գևորգ Չավուշը, Աղբյուր Սերոբը, Հրայրը և ուրիշներ:

Թշնամին, նոր ուժեր ստանալով, դաժանորեն ճնշեց ապստամբությունը, ավերեց ու հրի մատնեց հայկական գյուղերն ու ավանները: Բայց Սասունի մարտական ոգին չկարողացավ ընկճել. արևմտահայությունն ազատություն նվաճելու հավատով շարունակեց իր հերոսական պայքարը:

1905—1907 թթ. բուրժուադեմոկրատական հեղափոխության նախօրյակին բանվորների որոշ մասի մեջ դեռևս իշխում էր այն թյուր կարծիքը, որ իբր թե ճնշողներն ու շահագործողները միայն կապիտալիստներն ու կալվածատերերն են, տեղական կեղեքիչները, իսկ ցարը ժողովրդի բարեկամն է: Այդ պատրանքն ի չիք դարձավ 1905 թ. հունվարի 9-ի «Արյունոտ կիրակիի» իրադարձություններից հետո, երբ ցարը հրամայեց գնդակոծել ցուցարարներին, որի հետևանքով սպանվեցին ու վիրավորվեցին բազմաթիվ բանվորներ, կանայք ու երեխաներ: Բանվորների խաղաղ ցույցի գնդակոծումը ցնցեց ամբողջ Ռուսաստանը և հանդիսացավ 1905—1907 թթ. հեղափոխության սկիզբը:

1905 թ. հունվարի 9-ից հետո Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում հեղափոխական շարժումը մասսայական բնույթ ստացավ և հանգեց քաղաքական գործադուլների ու զինված ապստամբությունների: ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության կոչերից մեկն ազդարարում էր, որ 1905 թ. հունվարի 9-ին «առաջին անգամ լսվեց հեղափոխական թմբկահարությունը, որն ամբողջ Ռուսաստանին արթնացրեց իր ձմեռային խոր քնից»:

1905 թ. ապրիլին տեղի ունեցավ ՌՍԴԲԿ III համագումարը: Կովկասի իրադարձությունների առթիվ համագումարի ընդունած բանաձևում արձանագրվեց, որ Կովկասում ինքնակալության դեմ մղվող հեղափոխական պայքարը համաժողովրդական ապստամբության բնույթ է ստացել: Համագումարը ողջունեց Կովկասի պրոլետարիատին ու գյուղացիությանը և տեղական կուսակցական կազմակերպություններին հանձնարարեց լայն աշխատանք ծավալել աշխատավորական մասսաների շրջանում:

Հեղափոխական ելույթները Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, Ալավերդում, Ալեքսանդրապոլում, Երևանում և այլուր լայն թափ ստացան: Ցարիզմը, ամենուրեք հզորացող հեղափոխական ելույթներից սարսափած, դիմեց պրովոկացիայի և 1905 թ. փետրվարին հրահրեց հայ-ադրբեջանական ազգամիջյան ընդհարումներ, որոնց զոհ դարձան բազմաթիվ անմեղ հայեր:

Հայ հայդուկների խումբ


Աղբյուր Սերոբ

Հրայր

Գևորգ Չավուշ

ՌՍԴԲԿ կովկասյան միության Թիֆլիսի կոմիտեն Անդրկովկասի աշխատավորներին ուղղված իր կոչում մերկացրեց ցարիզմի «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը: Նա աշխատավորությանը դիմեց այսպիսի կոչով. «Դուք, հայեր, թաթարներ (ադրբեջանցիներ:— Ծ. Ա.), վրացիներ, ռուսներ, ձեռք մեկնեք միմյանց, ավելի սերտորեն միավորվեցեք և իրարից ձեզ բաժանելու կառավարության փորձերին միահամուռ պատասխանեցեք՝ կորչի՜ ցարական կառավարությունը, կեցցե՜ ժողովուրդների եղբայրությունը»:

Ցարիզմի հակաազգային քաղաքականության մերկացումով հանդես եկան Մ. Գորկին, Հ. Թումանյանը, ադրբեջանցի բանաստեղծ Սաբիրը և ժողովուրդների բարեկամության ջատագով այլ առաջադեմ գործիչներ:

Ցարիզմի դեմ մղված պայքարում Անդրկովկասի բանվոր դասակարգը հանդես էր գալիս միասնական շարքերով, ամրապնդում ազգամիջյան կապերը, բարեկամության կոչ անում: Ժողովուրդների բարեկամությունը ցեմենտում էր մեծ Լենինի ստեղծած բոլշևիկյան կուսակցությունը:

1905 թ. ապրիլին ընդհանուր գործադուլ են հայտարարում Ալեքսանդրապոլի երկաթուղայինները: Նրանց հետևում են Թիֆլիս—Երևան, Ալեքսանդրապոլ—Կարս գծերի երկաթուղայինները: Երկաթուղայիններին շուտով հետևում են արդյունաբերության տարբեր ճյուղերի աշխատավորները: Այսպես, 1905 թ. ապրիլ—մայիս ամիսներին Երևանի մի շարք ձեռնարկություններում բանվորները դադարեցնում են աշխատանքը: Շուստովի և Սարաջևի գինու-կոնյակի գործարանների աշխատողները պահանջում են սահմանել 8-ժամյա աշխատանքային օր, բարձրացնել աշխատավարձը, բարելավել բուժսանիտարական վիճակը: Գործադուլային շարժումն ընդգրկում է նաև Կարսի ու Ալեքսանդրապոլի ձեռնարկությունները, որտեղ աշխատավորներն առաջադրում էին քաղաքական պահանջներ՝ խոսքի, մամուլի, ժողովների ազատություն, մայրենի լեզվով ձրի ուսուցում և այլն:

1905 թ. Ալավերդում կայացած մայիսմեկյան ցույցին մասնակցում են նաև շրջակա գյուղերի աշխատավորները: Ցուցարարների առջև ճառով հանդես է գալիս Ստ. Շահումյանը: Նա կոչ է անում պայքարի դուրս գալ բուրժուակալվածատիրական կարգերը տապալելու համար, իսկ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության խորհրդակցություններում համառոտ նշում է բոլշևիկների խնդիրները տվյալ հեղափոխության մեջ:



42

Пролетаріи всѣхъ странъ соединяйтесь!

Къ солдатамъ Александропольскаго гарнизона срока службы 1901 и 1902 года

Товарищи! Цѣлыхъ четыре года мы задыхались въ казарменной дисциплинѣ, наши друзья начальники насъ угащали зуботычинами и ругательствами; были подвергаемы различнымъ истязаніямъ задушили безмысленными занятіями; цѣлыхъ четыре года мы жили только одной надеждой, что это время кончится и мы возвратимся къ своимъ раднымъ и заживемъ по человѣчески

Кончились эти четыре года, а мы все еще продолжаемъ задыхаться въ этой развращающей, казарменной обстановкѣ; мы все еще продолжаемъ служить тому Царю—измѣннику; по приказанію котораго разстрѣливаютъ нашихъ отцовъ и матерей. Неужели за эти четыре года мало крови высосали наши друзья (якобы) начальники, что насъ оставили на безконечное время служить забыть палачами своего раднаго народа, который насъ вспоилъ и вскормилъ.?

Товарищи! Наши вампиры—начальники говорятъ, что насъ задержали потому, что въ Россіи мало войскъ, а нашему правительству невбходимо очень много солдатъ!

Спросите этихъ самыхъ начальниковъ къ чему мы имъ нужны, если не существуютъ; ни внѣшные ни внутренніе враги. Ранше намъ твердлии, что солдатъ служитъ защитой царя и отъ внутреннихъ враговъ, между тѣмъ сами же наши начальники объясняли что манифестомъ царя отъ 17 Октября даны народу разныя свободы и что теперь не существуютъ внутренніе враги. Такъ для чего же насъ держатъ, если не для того, чтобы посредствомъ нашихъ же штыковъ обратно отнять ту «куцую» свободу, за которую наши отцы и братья залили Россію цѣлымъ потокомъ крови. Наполнимъ нашимъ начальникамъ, что хотя наши штыки и остры, но усидѣть на нихъ нелзя.

Довольно намъ служить врагомъ народа. Потребуемъ немедленнаго увольненія въ запасъ всѣхъ окончившихъ срокъ службы, а дотого времени откажемся отъ исполненія всякихъ службъ и занятій; не побоимся нашихъ подлецовъ-начальниковъ; будемъ устраивать собранія и митинги, соединимся во едино и бо „въ единеніи-сила" потребуемъ также для оставшихся товарищей.

1) Прощеніе всѣмъ пострадавшимъ товарищамъ солдатамъ за политической убѣжденія за также пострадавшимъ за нарушеніе военнаго закѣноположенія. 2) Уменшеніе срока дѣйствительной службы и пребыванія въ запасѣ, 3) вѣжливаго обращенія, 4) увольненія содвора внѣ служебнаго времени, 5) улучшеніе пищи одежды и увеличенія жалованія, 6) уничтоженія несенія солдатами полицейской, службы 7) выборнаго начальства и должностныхъ, какъ нижнихъ чиновъ, равно и офицеровъ, 8) выборнаго суда съ участіемъ нижнихъ чиновъ и офицеровъ, 9) свободы слова, союзовъ, собраній и печати также для солдатъ, 10) предоставить право солдатамъ быть избираемыми и избирателями въ народное учредительное собраніе, 11) удаленіе со службы всѣхъ сверхсрочнослужащихъ

Долой самодержавіе царя и ми[illegible]
Да здравствуетъ самодержавіе [illegible]
Долой произволъ и насиліе,
Да здравствуетъ единеніе нар[illegible]
Да здравствуетъ Рос. Соц.-Дем[illegible]
Да здравств. военно-рево[illegible], соц.-[illegible] организ.
Да здравствуетъ Соціализмъ.

Александропольская Соціалъ-демократическая организація военныхъ

№ 8 3 Ноября 1905 года,

Ալեքսանդրապոլի սոցիալ-դեմոկրատական զինվորական կազմակերպության կոչը կայազորի զինվորներին (1905 թ.)

Երևան, Սարաջևի գինու գործարանի 1906 թ. գործադուլին մասնակցած բանվորները

Հոկտեմբերին բռնկվեց հզոր գործադուլ, որը, տարածվելով ամբողջ երկրում, դարձավ համառուսաստանյան: Հոկտեմբերի 15-ին սկսվեց Անդրկովկասի երկաթուղայինների ընդհանուր գործադուլը: Կառավարությունը ստիպված էր Անդրկովկասյան երկաթուղում ռազմական դրություն հայտարարել: ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը, որ գլխավորում էր այդ գործադուլը, հատուկ թռուցիկում 16 կետից բաղկացած պահանջներ ներկայացրեց (8-ժամյա աշխատանքային օր, խոսքի, մամուլի, ժողովների ու միությունների ազատություն):

Ալեքսանդրապոլ — Կարս երկաթուղում տնօրինում էր գործադուլային կոմիտեն, որը ղեկավարվում էր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ցուցումներով: Գործադուլավորներին միացան Ղարաքիլիսայի, Սանահինի, Շահալիի երկաթուղայինները: Սանահինցիները եղբայրական ողջույն են հղում Բաթումի և Քութայիսի գործադուլավորներին: Գործադուլային շարժումը Կարսում ավելի ուժեղ ընթացք ստացավ և վերածվեց զինված ընդհարման բանվորների ու ոստիկանների միջև: Այստեղ բանտից ազատված աքսորականներին աշխատավորները դիմավորեցին հանդիսավորությամբ ու հեղափոխական երգերով, իսկ կանայք նրանց նվիրեցին իրենց գործած կարմիր դրոշակը: Այսպիսով, հոկտեմբերյան գործադուլային շարժումն ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում, համընդհանուր բնույթ ստացավ:

Ցարական կառավարությունն այլ ելք չունենալով՝ հրատարարակեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որով ժողովրդին դեմոկրատական ազատություններ էր խոստանում: Հայաստանի բոլշևիկները, հատկապես ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի և Կարսի կազմակերպությունները, հատուկ կոչեր հրատարակեցին՝ խնդիր դնելով չխաբվել մանիֆեստով և շարունակել պայքարը ցարական բռնակալական կար-



Հեռագիր՝ Ալավերդում 1905 թ. մարտին տեղի ունեցած գործադուլի մասին

Սանահինի կայարանի դեպոյի մի խումբ բանվորներ (1905 թ.)

գերի դեմ: Ցարական մանիֆեստը ՌՍԴԲԿ Կարսի կազմակերպությունը 1905 թ. հոկտեմբերի 26-ի կոչում բնութագրեց այսպես. դուք բոլորդ «համոզվեցիք, թե ինչ «իսկական» ազատություն է «շնորհել սիրառատ» թագավորն իր ժողովրդին: Այդ ազատությունը բոլոր մեծ ու փոքր բռնակալների թալանի ու ճնշումների ազատությունն է: Բանվորներին առաջվա պես ազատություն է տրվում... մեռնել քաղցից և փտել բանտերում... գյուղացիներին ազատություն է տրվում... խեղդվել վաշխառուների ու կալվածատերերի ճանկերում... Այսպես է հասկացվում ազատությունը նորին մեծության բոլոր պնակալեզների կողմից»:

Հայաստանի բանվոր դասակարգի քաղաքական պայքարի պատմության մեջ աննախադեպ երևույթ էր Ալավերդու բանվորների 1905 թ. նոյեմբերի 20-ին սկսած հնգօրյա գործադուլը: Այն ցնցող տպավորություն գործեց: «Հետաքրքիր էր տեսնել,—գրում է «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթը,— թե ինչպես միատեսակ պայմանները միավորեցին տարբեր ազգությունների բանվորներին, ինչպես այդ հեռավոր խուլ անկյունում բանվորները որոշեցին ինչ էլ որ լինի ամուր կանգնեն մինչև իրենց պահանջների բավարարումը»: Մոտ 4 հազար հայ, հույն, ռուս, վրացի, ադրբեջանցի, պարսիկ և այլ ազգի բանվորներ գործադուլային կոմիտեի (Ս. Փիրուզյան, Ա. Դևդարիանի, Մ. Աղամյան, Չխեիձե, Մ. Մուրադյան, Ն. Ջաֆարով և ուրիշներ) գլխավորությամբ ոտքի ելան և ներկայացրին իրենց պահանջները: Նրանք խնդիր էին դնում սահմանել 8-ժամյա աշխատանքային օր, 20 %-ով ավելացնել աշխատավարձը, վերացնել տուգանքները, հաստատել բանվորական վերահսկողություն: Բանվորներն իրենց պահանջներն ավարտում էին «Կեցցե՜ ՌՍԴԲԿ»-ն կոչով:

Ալավերդու բանվորներին միացան Սանահինի աշխատավորները, Օձուն, Այգեհատ և այլ գյուղերի գյուղացիները, որոնք կարմիր դրոշակներով ու հեղափոխական երգերով շարժվեցին դեպի Ալավերդու պղնձաձուլական գործարան: Նոյեմբերի 25-ին բանվորների լիազորների պահանջները մասնակի փոփոխություններով ընդունվեցին:

Ալավերդում և Հայաստանի այլ շրջաններում հեղափոխական եռանդուն աշխատանք էին կատարում Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Մ. Մելիքյանը և ուրիշներ:

1905 թ. դեկտեմբերին հեղափոխական փոթորիկը հասավ իր բարձրակետին: Մոսկվայում բանվոր դասակարգը բոլշևիկների ղեկավարությամբ պինված ապստամբության դիմեց: Այդ նույն ժամանակ գործադուլներ ու պինված ելույթներ տեղի ունեցան նաև Անդրկովկասում:

Ալեքսանդրապոլի երկաթուղայինները հանդես էին գալիս կազմակերպված՝ երկաթուղային կոմիտեի գլխավորությամբ: Կոմիտեն ամբողջովին իր հսկողությունը սահմանեց գնացքների երթևեկության վրա: Տեղերում ստեղծված պինված ջոկատները հսկում էին հեղափոխական կարգի պահպանմանը: Հաճախ նրանք ընդհարվում էին ապստամբությունը ճնշելու համար տեղերն ուղարկված պատժիչ կորամասերի հետ: Նման ընդհարումներ տեղի ունեցան, օրինակ, Սանահինում, Ալեքսանդրապոլում, Կարսում:

Հեղափոխական պայքարն ընդգրկել էր նաև բանակային կորամասերը:

1905 թ. դեկտեմբերից հետո հեղափոխությունն ամբողջ երկրում սկսեց վայրէջք ապրել: Սակայն աշխատավորների պայքարը չդադարեց: Ավելին, Հայաստանում 1906 թ. գարնան ու ամռան ամիսներին հեղափոխական ելույթները կգալիորեն աշխուժացան: Մայիսմեկյան ցույցերը Երևանում անցան բուռն վերելքով: Լայն չափեր ընդունեց գործադուլային շարժումը: 1906 թ. հունիս-հուլիսին այն ծավալվեց Ալեքսանդրապոլում: Օգոստոսին գործադուլներ սկսվեցին Ալավերդում, Երևանում, Կարսում և այլ վայրերում: 1906 թ. հունիսի 3-ին Ալավերդու պղնձաձուլական գործարանի բանվորները և Շամլուղի հանքագործները գործադուլ հայտարարեցին, որը շարունակվեց մինչև հունիսի կեսը: Այն ճնշելու համար Շուլավերից պինվորական խմբեր եկան:

Օգոստոսի 2-ին Ալավերդու հանքագործները համախմբված փողոց դուրս եկան: Գործադուլային կոմիտեն նորից ներկայացրեց 1905 թ. նոյեմբերյան գործադուլի ժամանակ առաջադրված այն պահանջները, որոնք չէին իրագործվել: Այդ պահանջները պաշտպանեց ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունը: Հաշվի առնելով Ալավերդու բանվորների մղած պայքարի խոշոր քաղաքական նշանակությունը, ՌՍԴԲԿ կովկասյան միության մարզային բյուրոյի հատուկ հանձնարարությամբ Ալավերդի ժամանեցին և գործադուլը գլխավորեցին Ստ. Շահումյանն ու Ս. Սպանդարյանը: Բազմացվեցին ու գյուղերն ուղարկվեցին հատուկ թռուցիկներ, որոնցում կոչ էր արվում օգնություն ցույց տալ գործադուլավորներին: Ղարաքիլիսայից և շրջակա գյուղերից բանվորներին կգալի նյութական օգնություն ուղարկվեց: Դրա շնորհիվ բանվորները մի ամբողջ ամիս համառորեն շարունակեցին գործադուլը: Ջալալօղլիից այստեղ եկան հրանոթներով պինված պատժիչ կորքեր, իսկ Շուլավերից՝ ոստիկանների

Սուրեն Սպանդարյան

մի հատուկ խումբ: Գործադուլը վենքի ուժով ճընշվեց: Աշխատանքից ազատվեցին ակտիվ գործադուլավորները, իսկ Իրանից եկած մեծ թվով բանվորներ արտաքսվեցին:

Համառ էր նաև Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքի ծառայողների 1906 թ. օգոստոսի 21-ի գործադուլը, որը գլխավորում էին ՌՍԴԲԿ Երևանի և Թիֆլիսի կոմիտեները: Գործադուլավորները երեք ամիս պայքարեցին՝ պահանջելով բարձրացնել աշխատավարձը, բարելավել կենցաղային պայմանները, վերջ տալ ճնշումներին ու հալածանքներին: 1907 թ. գործադուլ հայտարարեցին Սարաջևի գինու-կոնյակի գործարանի բանվորները, նրանք պահանջում էին 8-ժամյա աշխատանքային օր, աշխատավարձի բարձրացում և այլն: Ոստիկանության բռնությունններն ու հալածանքները չընկճեցին բանվորներին: Գործարանատերն ստիպված էր բավարարել բանվորների որոշ պահանջներ:

1907 թ. մարտին գործադուլային շարժումը մեծ թափ ստացավ Ղափանի հանքերում ու գործարաններում: Ընդհանուր գործադուլին, որ ղեկավարում էր սոցիալ-դեմոկրատական կոմիտեն, մասնակցում էին ավելի քան երկու հազար հայ, ադրբեջանցի, ռուս, պարսիկ և հույն բանվորներ: Ղափանի աշխատավոր մասսաները սերտ կապ են հաստատում բանվորական-հեղափոխական Բաքվի հետ: Բանվորների 27 կետից բաղկացած պահանջները քաղաքական և տնտեսական պայքարի կարևոր խընդիրներ էին առաջադրում: Գործարանատերերը ոստիկանների օգնությամբ դիմում են բռնություններին, բանտարկում գործադուլի ղեկավարներին: Սակայն բանվորների համառ պայքարի շնորհիվ բանտարկվածներն ազատ են արձակվում և իրենց որոշ պահանջները բավարարելուց հետո համաձայնում են վերսկսել աշխատանքը:

Հեղափոխական շարժումը նայն արմատներ էր գցել նաև գյուղում: Ստ. Շահումյանը գրում էր, որ քաղաքական գիտակցությունը մուտք է գործում հայկական գավառները. նույնիսկ ամենահեռավոր և ամենահետամնաց գյուղերում արդեն կան պրոլետարական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, որոնք աստիճանաբար իրենց շուրջն են համախմբում գավառների կենսունակ, իսկապես հեղափոխական-պրոլետարական տարրերին և կազմակերպում նրանց՝ հանուն սոցիալիզմի, ընդհանրապես, և հանուն անմիջական հեղափոխական կռվի ռուսական բռնակալության դեմ՝ մասնավորապես:

Հայկական գյուղում ծավալվող հեղափոխական պայքարի հիմքում ընկած էր հողային հարցը: Հողի և ազատության համար դարեր շարունակ պայքարող հայ գյուղացիությունը սկսում է հասկանալ, որ դրան կարող է հասնել միայն բանվոր դասակարգի օգնությամբ, նրա հետ դաշնակցած:

Ս. Սպանդարյանը 1905 թ. նշում էր, որ ագրարային հարցը դառնում է ամենակարևոր և հրատապ հարցերից մեկը՝ գրավելով բոլոր քաղաքական կուսակցությունների ուշադրությունը: Ահա թե ինչու բանվոր դասակարգը և նրա հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը «գնում են գյուղ, իրենց խոսքով, իրենց քարոզով» գաղափարական կապ հաստատելով գյուղի և քաղաքի աշխատավորների միջև:

1906 թ. գարնանը գյուղացիական ելույթներ տեղի ունեցան Հայաստանի մի շարք գյուղերում: Շամշադինի շրջանում գյուղացիները գրավեցին կալվածատերերի հողերը և նրանց գյուղերից դուրս վռնդեցին: Սակայն պինվորական ջոկատը վենքի ուժով ճնշեց գյուղացիների ելույթները, կողոպուտի ու ավերածության ենթարկելով գյուղերը:

Կարբի գյուղի ապստամբների ղեկավարներին բանտ նետեցին և գյուղի վրա էքզեկուցիա նշանակեցին, որը տևեց 20 օր: Մի շարք գյուղերում աշխատավորները հրաժարվում էին տուրք վճարել և հայտարարում էին. «Բերքը կայրենք դաշտում, ինչպես այդ անում են գյուղացիները Ռուսաստանում»:

Դաժանորեն ճնշվեց նաև Հաղպատի գյուղացիների 1905 թ. հունիսյան ապստամբությունը: Գավառապետի պատժիչ ջոկատը հաշվեհարդար տեսավ ապստամբների հետ: Ութ մարդ սպանվեց, մյուսները թողեցին գյուղը և պաշտպանություն գտան լեռներում ու անտառներում: Ոստիկանները գյուղն ավերեցին:

Զինված ելույթներ ունեցան Զանգեզուրի գավառի Խնձորեսկ, Քարահունջ և այլ գյուղերի աշխատավորները: Ուղարկված կորքը գնդակոծեց գյուղերը: Չնայած պարտությանը, հայ աշխատավոր գյուղացիները պայքարի մեծ փորձ ձեռք բերեցին:

Ցարիզմը զենքի գործադրմանը զուգընթաց փորձում էր մասսաներին հնազանդեցնել նաև օրենսդրական պատրանքներով: 1905 թ. դեկտեմբերին օրենք հրապարակվեց «Օրենսդրական» նոր դումա հրավիրելու մասին: Մինչ այդ «խորհրդակցական» բուլիգինյան դուման, որը բոլշևիկները բոյկոտել էին, տապալվել էր: Հեղափոխությունը ծավալելու նպատակով բոլշևիկները աշխատավորներին կոչ արեցին բոյկոտի ենթարկել նաև ցարական այդ դուման: Ալեքսանդրապոլի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը դիմեց աշխատավորներին՝ կոչ անելով բոյկոտել ընտրությունները:

Ցարական ընտրական օրենքը հակադեմոկրատական էր և չէր արտահայտում աշխատավորների շահերը: Ընտրական օրենքը դումայում ամբողջովին ապահովում էր կապիտալիստների ու կալվածատերերի գերակշռությունը: Չնայած դրան, դումայականների անգամ չնչին ապստամբությունը դուր չեկավ ցարական սատրապներին, և 1906 թ. հուլիսի 8-ին առաջին Պետական դուման ցրվեց:

Ցարական ռեակցիան ամենուրեք հարձակվում էր: Հեղափոխությունը վայրէջք էր ապրում: Բոլշևիկները որոշեցին մասնակցել երկրորդ Պետական դումային, որպեսզի օգտագործեն նրա ամբիոնը՝ հօգուտ հեղափոխության շահերի պրոպագանդայի: Սակայն երկրորդ Պետական դուման ևս առաջինի բախտին արժանացավ և 1907 թ. հունիսի 3-ի օրենքով ցրվեց: 1907 թ. հունիսերեքյան պետական հեղաշրջումից հետո սկսվեց դաժան ռեակցիան, և հեղափոխությունն անկում ապրեց:

Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը վճռական դեր խաղաց հայ ժողովրդի կյանքում, որը մասնակից դարձավ ռուսական պրոլետարիատի հեղափոխական մեծ պայքարին: Հայաստանը, տնտեսական ու կուլտուրական կյանքով կապված լինելով Անդրկովկասի և Ռուսաստանի հետ, համաձուլվում էր ռուսական հեղափոխության ոլորտի մեջ, և հայ ժողովրդի պայքարն ընթանում էր ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո, բոլոր ժողովուրդների հեղափոխական շարժման ընդհանուր հունով:

Հակոբ Հակոբյան

Ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության պարտությունից հետո ցարական կառավարությունը հարձակման անցավ և դաժանորեն ճնշեց ու հալածեց հեղափոխական ուժերին. ամենուր մոլեգնում էր ռեակցիան: Է՛լ ավելի սաստկացան հայ ժողովրդի նկատմամբ մինչ այդ էլ կիրառվող սոցիալական և ազգային հալածանքներն ու ճնշումը: Փակվեցին ազգային կուլտուրայի բազմաթիվ օջախներ, կուլտուր-կրթական հաստատություններ ու ընկերություններ, պարբերականներ, դպրոցներ:

Վատթարացավ բանվորների վիճակը: Ալավերդու և Ղափանի հանքագործները շարունակում էին մնալ նյութական և բնակարանային ծանր կացության մեջ, իսկ աշխատանքային օրվա տևողությունը հասնում էր 12—14 և անգամ 18 ժամի: Բանվորներն աշխատում էին վարչակազմի և ժանդարմերիայի խիստ հսկողության տակ, արգելված էին ամեն կարգի ժողովներն ու հավաքույթները:

Ծանր հալածանքները մեռցրին ազատ խոսքը, մթագնեցին լուսավոր միտքը, մտավորականության մի մասի մեջ առաջացան անկումային, հուսահատական և հոռետեսական տրամադրություններ: Բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունները հարեցին այդ անկումային տրամադրություններին, նրանց մի մասը փորձեց համաձայնության գալ ցարիզմի հետ: Միայն բոլշևիկյան

կուսակցությունն էր, որ անլուր հալածանքի ենթարկվելով՝ անցավ խոր ընդհատակ և շարունակեց իր հեղափոխական ուղեգիծը: Չնայած նրան, որ կուսակցության շատ ականավոր գործիչներ կամ բանտ էին նետվել, կամ էլ Սիբիր քշվել, այն կարողացավ պահպանել իր ուժերը և խոր ընդհատակից ղեկավարել հեղափոխական պայքարը:

Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի բոլշևիկները հեղափոխական բուռն պայքարի ընթացքում միշտ էլ մնացին առաջին դիրքերում և հանդես եկան որպես լենինյան գվարդիայի մարտական ջոկատներից մեկը: Նրանք այդպիսին էլ մնացին ռեակցիայի ծանր տարիներին և հետևողականորեն շարունակեցին պատրաստվել գալիք մարտերին: Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակից Ստ. Շահումյանը 1908 թ. ամենայն վճռականությամբ գրում էր. «Մենք հաստատ համոզված ենք Իլյիչի դիրքավորման ճշտությանը»:

Չնայած ռեակցիայի ծանր պայմաններին, Հայաստանի մի շարք ձեռնարկություններում գործադուլներն ու բանվորական ելույթները չէին դադարում: Հատկապես պետք է նշել Ալավերդու և Ղափանի հանքագործների, Երևանի և Ալեքսանդրապոլի տպագրիչների, Ուլուխանլուի երկաթուղայինների, Կարսի բերդում աշխատող բանվորների ելույթներն ու բողոքի ցույցերը: Այդ պայքարի ընթացքում բանվորները որոշ հաջողությունների են հասնում իրենց տնտեսական վիճակի բարելավման հարցում. օրինակ, Կարսի բերդի բանվորները կապալառուներին ստիպեցին օրավարձը բարձրացնել 30 կոպեկով:

Հայտնի են նաև 1908 թ. գյուղացիական ելույթները Ղափանի շրջանի գյուղերում, աշակերտական-ուսանողական հուզումներն Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Երևանի թեմական դպրոցում, արական գիմնազիայում և այլուր:

1910-ական թվականներից սկսած Հայաստանի տնտեսության, հատկապես արդյունաբերության զարգացման մեջ նկատվում է որոշ վերելք: Զգալի չափով ավելացավ պղնձի արտադրությունը, իսկ դրա հետ մեկտեղ ուժեղացավ բանվորների շահագործումը: Միաժամանակ աշխուժացավ գործադուլային շարժումն Ալավերդու, Ղափանի պղնձի և Կողբի աղահանքերում, Երևանի և Ալեքսանդրապոլի արդյունաբերական ձեռնարկություններում: Լենայի ոսկու հանքերի գործադուլավորների գնդակոծումն ու դաժան հալածանքները բուռն զայրույթ առաջացրին ամբողջ երկրում, ինչպես նաև Հայաստանում: Էջմիածնի, Նոր Բայազետի, Երևանի, Ալեքսանդրապոլի և այլ գավառներում ծայր առած գյուղացիական ելույթները հաճախ վերջանում էին զինված ընդհարումներով: Անդրկովկասի ժամանակավոր պարտավորյալ և կախյալ գյուղացիների մասին ցարական կառավարության 1912 թ. դեկտեմբերին հրապարակած օրենքը որևէ չափով չնպաստեց գյուղացիների վիճակի լավացմանը, քանի որ նրանք, ստանալով իրենց հողաբաժինները ետ գնելու իրավունք, պետք է պետությանը վճարեին ոչ միայն հողի գինը, այլ նաև նրա վրա բարդված տոկոսները: Այդ օրենքը գյուղում ուժեղացնում էր կուլակային խավի՝ ցարիզմի սոցիալական հենարանի դիրքերը: Միաժամանակ գյուղում ուժեղանում են դասակարգային շերտավորումը, ծայրաստիճան աղքատությունն ու ընչազրկությունը: Այդ հողի վրա էլ գնալով մեծ ծավալ է ընդունում հայ գյուղացիների արտագնացությունը դեպի Անդրկովկասի և Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններ: Եթե 1912 թ. Երևանի նահանգից արտագնացների թիվը 37 հազար էր, ապա հաջորդ տարում՝ 49 հազար:

Տնտեսական քայքայման ու քաղաքական հակասությունների սրումը նոր թափ հաղորդեց հեղափոխական շարժումների վերելքին: Աշխուժացավ բոլշևիկների գործունեությունը: Նշանակալից էր ՌՍԴԲ(բ)Կ Պրագայի 1912 թ. կոնֆերանսը, որը համագումարի նշանակություն ունեցավ: Այնտեղ ընտրված և Վ. Ի. Լենինի գլխավորած Կենտկոմի կազմի մեջ մտան նաև Ս. Սպանդարյանն ու Ստ. Շահումյանը: Կոնֆերանսի որոշումներն ուղենիշ հանդիսացան հեղափոխական պայքարի նոր ընթացքի համար: Կոնֆերանսի նախօրյակին Ստ. Շահումյանն Անդրկովկասից Աստրախան աքսորվեց, իսկ կոնֆերանսից հետո Ս. Սպանդարյանը՝ Սիբիր, որտեղ և ծանր հիվանդությունից 1916 թ. մահացավ:

Հայ հեղափոխական գործիչները՝ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ս. Կասյանը, Ս. Կասպարովը, Կամոն և ուրիշներ, սերտ կապեր ունեին Վ. Ի. Լենինի հետ: Ստ. Շահումյանը, որը մարքսիզմի և հատկապես ազգային հարցի խոշոր տեսաբան էր, 1913 թ. գրեց «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» հայտնի աշխատությունը: Այդ ժամանակ Վ. Ի. Լենինը ավելի մեծ կարևորություն էր տալիս ազգային հարցին և, ինչպես նշում է Ն. Կրուպսկայան, «աշխուժացավ Իլյիչի և Շահումյանի նամակագրությունն ազգային հարցի շուրջը»: Վ. Ի. Լենինը 1913 թ. դեկտեմբերի 6-ին Ստ. Շահումյանին հղած նամակում գրում էր. «Թանկագին բարեկամ: Շատ ուրախ եղա 15. XI թվակիր Ձեր նամակի համար: Դուք պիտի իմանաք, որ իմ վիճակում մարդ անչափ գնահատում է Ռուսաստանի ընկերների, մանավանդ խոհուն և

Կամո (Սիմոն Տեր-Պետրոսյան)

տվյալ հարցով զբաղվող ընկերների կարծիքները: Ձեր արագ արձագանքները այս պատճառով ինձ համար առանձնապես հաճելի էին: Զգում ես քեզ ավելի պակաս կտրված, երբ այդպիսի նամակներ ես ստանում»:

Հայ բոլշևիկներից շատերը նաև կուսակցական մամուլի ակտիվ գործիչներ էին, իսկ Ստ. Շահումյանը, Բ. Բորյանը, Ս. Հովսեփյանը, Ա. Մռավյանը, Ա. Կարինյանը և ուրիշներ՝ նաև «Պրավդայի» ակտիվ թղթակիցներ:

* * *

Արևմտահայությունը սուլթանիզմի արյունոտ լծի տակ շարունակում էր մնալ ծանր և տանջալից վիճակում: XIX դարի վերջերից թուրքական բուրժուազիան սկսում է հանդես գալ որպես կազմակերպված ուժ և հանձինս երիտթուրքերի կուսակցության ձգտում է տապալել սուլթանի իշխանությունն ու իր ձեռքը վերցնել երկրի կառավարումը: Սուլթանիզմի դեմ հայ ժողովրդի մղած բազում մարտերն անհաշողությամբ էին վերջացել և նա, բնականաբար, շահագրգռված էր աբդուլհամիդյան դաժան կարգերի տապալմամբ: Եվ ահա այդ խնդրում երիտթուրքերը հանձինս դաշնակցության գտնում են իրենց դաշնակցին: Նրանք ամեն կարգի խոստումներ էին տալիս գալիք հանրապետական Թուրքիայում բոլոր ազգերի և հատկապես հայերի համար ազատ ու երջանիկ կյանք ստեղծելու մասին: Հայկական ուժերը հզոր հենարան էին երիտթուրքերի համար: Վերջիններս դաշնակցականների հետ նույնիսկ միացյալ համագումարներ ու խորհրդակցություններ գումարեցին, «եղբայրացման» երդում տվին և ապա գործի անցան՝ սուլթանին տապալելու համար: Դաշնակցությունն էլ, չընկալելով երիտթուրքական շարժման պանթուրքիստական էությունը, նրանց հետ գնաց գործարքի: 1908 թ. Թուրքիայում վերնախավային հեղաշրջում կատարվեց, և Աբդուլ Համիդը տապալվեց: Իշխանության գլուխ անցան երիտթուրքերը: Հայերը ցնծության մեջ էին, կարծես թե վրա հասավ դարերով ճնշված հայ և բոլոր մյուս ժողովուրդների փրկության ժամը: Ամբողջ երկրում՝ քաղաքներում ու գյուղերում, հանդիսություններ, եղբայրացման շքերթներ տեղի ունեցան, փողոցներում տերտերն ու մոլլան գրկախառնվում էին և միմյանց վստահեցնում, որ այլևս չի լինի ժողովուրդների թշնամանք, «գյավուրների» ջարդ և այլ չարագործություններ: Անգամ ազգային հերոս Անդրանիկին Թուրքիա հրավիրեցին՝ պառլամենտի դեպուտատ ընտրելու խոստումով: Սակայն իմաստնացած հերոսը հրաժարվեց այդ «պատվից» ու դեպուտատական 50 ոսկուց և հայ գործիչներին ասաց. «Զգույշ եղեք, շուտով դրանք ձեր գլուխն էլ կուտեն»: Եվ այդպես էլ եղավ. շատ չանցած ամբողջ երկրով մեկ ավելի ուժգնորեն սկըսեց մոլեգնել շովինիզմը: Երիտթուրքերը, ամրապնդելով իրենց իշխանությունը, որոշեցին ուծացման ենթարկել կամ ոչնչացնել բոլոր ոչ մահմեդական ժողովուրդներին: Առաջին զոհը պետք է դառնային հայերը: 1909 թ. գարնանը նրանք կազմակերպեցին Ադանայի հայերի ջարդը, որին զոհ գնաց ավելի քան 30 հազար մարդ: Սկսվեց հայ ժողովրդի նկատմամբ գործադրվող նոր ահաբեկումների ու ջարդերի շրջանը: 1912 թ. «Պրավդան», բնութագրելով երիտթուրքերի շովինիզմը, նշում էր, որ նրանք նպատակ են դրել «թուրքացնել օսմանյան կայսրության մեջ բնակվող սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին», և դա արվում է «ավելի կոպիտ ու համառ ձևով, քան Աբդուլ Համիդի ժամանակ»:

1912 թ. Բալկանյան պատերազմում, որին մասնակցում էր նաև հայկական վաշտը, բուլղար ժողովուրդը մեծ հաղթանակ տարավ և վերջնականապես ազատագրվեց թուրքական լծից: Հայ ժողովուրդը, բուլղարների օրինակով, ձգտում էր իրագործել տալ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը և ապահովել հայկական վիլայեթների ինքնավարության խնդիրը: Հայաշատ վայրերում բազմամարդ ժողովներ կայացան, որտեղ մեծ տերություններին

ուղղված որոշումներ ընդունվեցին: Թիֆլիսում ստեղծված ազգային բյուրոն և Էջմիածնի կաթողիկոսն ակտիվ գործունեություն ծավալեցին: Կաթողիկոսը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով հայ ժողովրդի անունից հատուկ դիմում ներկայացրեց ռուսական ցարին, խնդրելով պաշտպանել հայկական դատը: Կաթողիկոսը միաժամանակ եգիպտահայ ականավոր հասարակական գործիչ Պողոս Նուբար փաշային լիազորում է մեծ տերությունների առջև հանդես գալու արևմտահայության անունից:

Պատերազմի նախօրյակն էր, իմպերիալիստական տերությունների հարաբերությունները սրված էին, հակասությունները՝ բորբոքված: Հայկական հարցը նրանք օգտագործում էին որպես առիթ՝ իրենց գաղութատիրական ծրագրերն իրագործելու և Ռուսաստանի ներթափանցումը Մերձավոր արևելք կանխելու համար: Ավելի կոնկրետ քայլի դիմեց Ռուսաստանը, որի հետ էլ հայ ժողովուրդը կապում էր իր հույսերը: Ինչպես նշել է ռուս ականավոր գրող և հասարակական գործիչ, հայ ժողովրդի բարեկամ Վ. Բրյուսովը, «վաղուց արդեն հինավուրց Հայաստանի բախտը կապված է մեծ Ռուսաստանի բախտի հետ, մի հարյուրամյակ է արդեն, որ հայ ժողովրդի զգալի մասը ապրում է ռուսական կայսրության սահմաններում, հայերը մեր համաքաղաքացիներն են, իսկ մահմեդական լծից դեռ չազատագրված հայկական մարզերը հենց ռուսներից են սպասում իրենց ազատագրումը»:

Ռուսական կառավարության կողմից 1913 թ. հունիսին Թուրքիային ներկայացված նախագիծն առաջարկում էր Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սվազի վիլայեթները միավորել մեկ ինքնավար նահանգի մեջ և մեծ տերությունների համաձայնությամբ 5 տարի ժամանակով քրիստոնյա նահանգապետ նշանակել: Նահանգի պաշտոնյաները նշանակվելու էին թե՛ քրիստոնյաներից և թե՛ մահմեդականներից, իրավահավասար կերպով պետք է գործածվեին հայերեն, թուրքերեն և քրդերեն լեզուները: Հայերից բռնագրավված հողերն ու գույքը պետք է վերադարձվեին նրանց, իսկ հայ ժողովրդի համար պատուհաս դարձած «համիդիե» կորամասերը վերացվեին: Սակայն թուրքական կառավարությունը, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի աջակցությամբ, մերժեց այդ նախագիծը, իսկ Անգլիայի և Ֆրանսիայի երկդիմի քաղաքականության հետևանքով Ռուսաստանը ստիպված որոշ զիջումների գնաց: Այնուամենայնիվ, 1914 թ. հունվարի 25-ին Թուրքիան ստիպված էր հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու համաձայնագիր ստորագրել: Դրա համաձայն ստեղծվում էր երկու հայկական նահանգ, որոնց վերատեսուչները պետք է լինեին օտարերկրացիներ: Երկրում պարտադիր զինվորական ծառայություն էր մտցվում բոլոր քաղաքացիների համար. վարչական գործերը, ինչպես նաև ուսուցումը պետք է տարվեին մայրենի լեզվով: Շուտով պայթեց առաջին համաշխարհային պատերազմը, և այդ ծրագիրն էլ հօդս ցնդեց. հայ ժողովուրդը կանգնեց եղեռնի ահավոր սարսափի առջև:

Առաջին համաշխարհայինը, որ պայթեց 1914 թ. օգոստոսի 1-ին, մեծ չարիք էր ժողովուրդների և հատկապես բազմաչարչար հայ ժողովրդի համար: Պատերազմը թե՛ գերմանա-ավստրիական և թե Անտանտի բլոկի կողմից իմպերիալիստական, զավթողական էր, սակայն պատերազմի հրձիգը Գերմանիան էր՝ աշխարհին տիրելու իր խելացնոր պլաններով: Թուրքիան էլ պանիսլամիստական՝ մինչև Ալթայ իր սահմանները ձգելու նկրտումներով հանդես գալով Գերմանիայի դաշնակցի դերում, 1914 թ. նոյեմբերի սկզբներին ներխուժեց Բաթումի մարզ և ապա շարժվեց Սարիղամիշ—Կարս ուղղությամբ:

Սկսվեցին Կովկասյան ճակատի ահեղ մարտերը, որոնք հիմնականում տեղի էին ունենում Հայաստանի տարածքում: Թուրքական բանակն ամբողջովին գործում էր գերմանական գլխավոր շտաբի ցուցումներով, նրա հրամանատարական կազմում կային մեծ թվով գերմանացի սպաներ: Թուրքական բանակի հրամկազմի մի զգալի մասը, որոնց թվում և ռազմական մինիստր Էնվեր փաշան, Գերմանիայում էին ռազմական կրթություն ստացել: Երիտթուրքերի կառավարությունը ցանկանում էր գերմանացիների օգնությամբ գրավել Կովկասը և ապա առաջ անցնել դեպի արևելք, միավորել Ռուսաստանի կազմում գտնվող բոլոր մահմեդական ժողովուրդներին և իրականացնել իր պանթուրքիստական-պանիսլամիստական ծրագրերը: Սակայն թե՛ այդ ծրագրերի և թե՛ առհասարակ կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդներին ձուլելու ճանապարհին հայերը լուրջ խոչընդոտ էին, և երիտթուրքերը որոշեցին հայ ժողովրդին բնաջընջելու միջոցով «լուծել» Հայկական հարցը:

Սարիղամիշի շրջանում ծավալված ահեղ մարտերը 1915 թ. հունվարին պսակվեցին ռուսական բանակի փայլուն հաղթանակով: Թուրքական 90-հազարանոց բանակը, որ գործում էր Էնվեր փաշայի հրամանատարությամբ, լիակատար պարտություն կրեց: Ռուսական բանակի այդ հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ ռազմական գործողությունների հետագա ընթացքի վրա: Ռուսական բանակն առաջ անցավ և 1915—16 թթ. տիրեց ամբողջ Արևմտյան Հայաստանին: Հատկապես

կարևոր էր 1916 թ. փետրվարի 3-ին Էրզրումի գրավումը, որտեղ թուրքական բանակը պարտվեց և ետ շպրտվեց:

Ռուսական բանակի հաղթանակի գործում մեծ ավանդ մուծեցին հայ կամավորական խմբերը և ամբողջ հայ ժողովուրդը, որն ամենուր ցնծությամբ ու ջերմ սիրով էր ընդունում ռուս զինվորներին ու ամեն կարգի օգնություն ցույց տալիս նրանց: Բացի այդ, ռուսական բանակում զենքի տակ էին դրված շուրջ 250 հազար հայեր, իսկ ավելի քան 50 հազար հայեր էլ ծառայում էին դաշնակիցների՝ Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի բանակներում:

Ռուսական բանակին օգնություն ցույց տալու գործում մեծ էր հայ կամավորական 6 խմբերի դերը: Դրանցում ընդգրկված էին շուրջ 10 հազար անձնուրաց մարտիկներ, որոնք, անկախ պատերազմի իմպերիալիստական բնույթից և ցարիզմի քաղաքական նկրտումներից, ազատագրական պայքարի էին ելել ռուսական բանակի օգնությամբ Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու համար: Այս բարի նպատակով աշխարհի բոլոր ծայրերից և անգամ հեռավոր Ամերիկայից բազմաթիվ հայրենասերներ երկար ու տանջալից ճանապարհ էին կտրել, որպեսզի միանան հայ կամավորական խմբերին և կատարեն իրենց պարտքը՝ ազատագրեն սրբազան հայրենիքը: Կամավորական ջոկատները, լավ ծանոթ լինելով տեղանքին, հաճախ գտնվում էին ռուսական բանակի ավանգարդում, ցուցաբերում արտակարգ սխրանքներ: Նրանք հատկապես աչքի ընկան Սարիղամիշի, Դիլմանի, Վանի, Ալաշկերտի, Բիթլիսի և այլ ճակատամարտերում: Դիլմանի ճակատամարտում և ապա Բիթլիսի գրավման գործում արտակարգ հերոսություն ցույց տվեց Անդրանիկի ջոկատը և արժանացավ ռուս զորավարների բարձր գնահատականին: Կամավորական ջոկատների դերը շատ կարևոր էր նաև եղեռնից մազապուրծ եղած հայ գաղթականների ու որբ երեխաների փրկության գործում: Փրկված երեխաներից շատերը հետագայում դարձան Սովետական Հայաստանի ականավոր գրողներ, գիտնականներ, պետական և կուսակցական աշխատողներ:

Մինչդեռ ռուսական բանակը և նրան օժանդակող հայ կամավորական խմբերը թուրքական զորքերի դեմ հաղթանակ-հաղթանակի հետևից էին տանում, Արևմտյան Հայաստանում իրադարձությունների զարգացումը գնալով ողբերգական ընթացք էր ստանում:

Երիտթուրքերի կառավարության ջարդարար պարագլուխները՝ Էնվեր, Թալեաթ և Ջեմալ փաշաները, դոկտոր Նազիմը և ուրիշներ, օգտագործելով պատերազմական դրությունը, ձեռնարկեցին հայերին բնաջնջելու իրենց նախօրոք կազմած ծրագիրը: Նախ պատերազմը սկսելուն պես 18—50 տարեկան բոլոր զենք կրելու ընդունակ հայ տղամարդկանց զորահավաքի ենթարկեցին, ապա նրանց զինաթափեցին և որպես բանվոր («ամալե») շինարարական ու այլ աշխատանքի քշեցին և ճանապարհին տարբեր բանդաների օգնությամբ ոչնչացրին: Որից հետո հայ բնակչությանը, որպես անհուսալի տարրի, դեպի ռուսները համակրանք ունեցողի՝ սկսեցին աքսորի քշել դեպի Միջագետքի անապատները: Այդ գործը գլխավորում էր երիտթուրքերի կառավարական «Եռյակ գործադիր հանձնախումբը», որը և ի կատար ածեց տեղահան արված անզեն ու անօգնական հայ բնակչության ցեղասպանությունը: Այն իրագործելու համար ոտքի էին հանվել ամենադաժան դահիճներն ու զինված ավազակախմբերը, որոնցից հազարավորների բանտից ազատել ու զինել էին՝ հայերին ոչնչացնելու ցուցումով: 1915 թ. ապրիլի 15-ին տեղական իշխանություններին գաղտնի հրահանգ էր իջեցվել՝ նույն ամսի 24-ին հայերի ոչնչացումը սկսելու ցուցումով: Երիտթուրքերի ղեկավարներից մեկն իր հիշողություններում գրում է, որ այդ կուսակցության պարագլուխները գաղտնի խորհրդակցություն հրավիրեցին, որտեղ որոշվեց ոչնչացնել բոլոր հայերին՝ առանց սեռի և հասակի խտրության, ոչ մի մարդու չթողնել կենդանի: Այդ որոշման իրագործումը հանձնարարվել էր հանցագործներից և ավազակներից բաղկացած հատուկ խմբի, իսկ նրա ղեկավարությունը՝ «գործող եռյակին»:

Ներքին գործերի նախարար արյունարբու Թալեաթ փաշան իր գաղտնի հրահանգում կարգադրել էր ոչնչացնել բոլոր հայերին՝ կանանց ու ծերերին, «չխնայել նույնիսկ օրորոցի երեխաներին», իսկ երիտթուրքերի կուսակցության կոմիտեի քարտուղար Նազիմը հայտարարում էր, որ հայ ազգը պետք է այնպես արմատախիլ արվի, որ «հայ անունը մոռացվի»: Երիտթուրքերի 1915 թ. ապրիլի 15-ի գաղտնի հրամանագրում նշվում է, որ երկիրը, ազգը, պետությունն ու կրոնը Հայկական հարցի առաջադրման վտանգից պաշտպանելու համար, «օգտվելով այն անկախությունից, որ մեզ ընձեռել է պատերազմը, որոշեց վերջնականապես վերջ դնել այդ հարցին, բնաջնջելով այդ խորթ տարրը, քշելով նրան Արաբիայի անապատները, համաձայն մեր տված գաղտնի հրահանգի»: Կարճ ժամանակում մոտ երեք միլիոն հայություն ունեցող Արևմտյան Հայաստանն ամայացավ: Հայերը ոչնչացվեցին նաև Թուրքիայի մյուս հայաբնակ վայրերում: Տեր-Զորը դարձավ տասնյակ հազարավոր հայերի գերեզման: Միայն Տրապիզոնի նավահան-

Կոմիտասի հուշարձանը

գըստում ծով նետվեցին և խեղդամահ արվեցին ավելի քան 14 հազար հայեր: Տիգրիս և Եփրատ գետերն արյունով էին ներկված, լեփ-լեցուն էին դիակներով: Սովն ու համաճարակ հիվանդությունները դեռ աքսորի ճանապարհին մեծ կոտորածներ էին խլում. ոմանք էլ չէին սպասում թշնամու դամոկլյան սրին և ինքնասպան էին լինում, ժայռից անդունդ գլորվում, կամ հորդացած գետի ալիքների մեջ նետվում: Հենց սկզբից, մեկ գիշերվա ընթացքում՝ ապրիլի 24-ի գիշերը, թուրք ջարդարարները ձերբակալեցին ավելի քան 700 հայ մտավորականների՝ գրողների ու արվեստագետների, գիտնականների, բժիշկների, հրապարակախոսների ու մամուլի աշխատողների և աքսոր քշելու պատրվակով նրանց բոլորին ահավոր տանջանքների ենթարկելով, ոչնչացրին: Նրանց թվում էին ականավոր գրողներ Գր. Զոհրապը, Դ. Վարուժանը, Սիամանթոն, Ռ. Սևակը և ուրիշներ: Իսկ տաղանդավոր երգահան Կոմիտասը, այդ վայրագություններից ցնցված, խելագարվեց: Այդ բոլորը կատարվեց գերմանական իմպերիալիստների հավանությամբ, աջակցությամբ ու ցուցումներով: Հայկական կոտորածների հանցանքը Գերմանիայի վրա է, գրել է Կ. Լիբկնեխտը, «ամբողջ աշխարհը գիտի այդ մասին և ամբողջ աշխարհը բնականորեն դրա համար պատասխանատու է համարում Գերմանիային. չէ որ թուրքական կառավարությունը ղեկավարում են Կոստանդնուպոլսում գտնվող գերմանական սպաները»: Դա պատմության մեջ աննախընթաց գենոցիդ էր. թուրքական յաթաղանին զոհ դարձան 1,5 միլիոն հայեր, բռնագրավվեցին նրանց հողերն ու ունեցվածքը, ավերվեցին հայրենի օջախները, հուշարձաններն ու գերեզմանները, այն բոլորը, ինչ Հայոց աշխարհի սրբությունն էր: Ոճրագործ Թալեաթ փաշան այդ բոլորից հետո ցինիկաբար ի լուր աշխարհի հայտարարում էր. «Չկա այլևս Հայկական հարց, քանի որ չկան նաև հայեր»: Այդ բոլորը կատարվում էր մեծ տերությունների աչքի առջև, և հայ ժողովուրդը կեղծ վշտահարությունից ու դատարկ խոստումներից բացի, ոչինչ չստացավ: Հասարակական ականավոր գործիչ և մեծ գիտնական Ֆ. Նանսենը դիպուկ նկատել է. «Շատ ավելի լավ կլիներ, եթե Հայաստանի անունը երբեք չարտասանվեր որևէ եվրոպական դիվանագետի կողմից»:

Այդ ծանր օրերին աշխարհի առաջադեմ գործիչների ձայնը հնչեց որպես ցասումնալից բողոք տեղի ունեցող վայրագությունների և վանդալիզմի դեմ: Նրանց թվումն էին Կ. Լիբկնեխտը, Յոհ. Լեփսիուսը, Ա. Ֆրանսը, Ռ. Ռոլանը, Ֆ. Նանսենը, Մ. Գորկին, Վ. Բրյուսովը, Յու. Վեսելովսկին և շատ ուրիշներ, որոնք պատշաճն են մատուցել հայ ժողովրդի ազատագրական հերոսամարտերին, համաշխարհային քաղաքակրթության մեջ նրա մատուցած ավանդին և դատապարտել հայության ցեղասպանությունը:

Ռուս գրող Վ. Բրյուսովը դատապարտելով թուրք ջարդարարներին, նշել է. «Ոչինչ չի կարող արդարացնել մասսայական կոտորածները, ամբողջ պրովինցիաների ավերումը, գյուղերից ու քաղաքներից քշած բնակչության մատնումը սովահարության և այլն»: Ա. Ֆրանսը 1916 թ. ապրիլի 9-ին Սորբոնի համալսարանի միտինգում ունեցած իր ելույթում ասել է. «Արևելքում մեր քույրն է մեռնում... որովհետև նրա հանցանքը եղել է այն, որ բաժանել է մեր զգացումները, սիրել է այն, ինչ մենք ենք սիրում... նա ճաշակել է, ինչպես մենք, իմաստությունը, արդարությունը, պոեզիան, արվեստը: Ահա այդ է եղել նրա աններելի հանցանքը... Հայաստանը մեռնում է, բայց նա կվերածնվի: Նրան մնացել է շատ քիչ արյուն՝ թանկագին արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ»:

Բոլշևիկյան կուսակցությունն ու նրա ականավոր գործիչները, ինչպես նաև «Պրավդա» թերթը

բազմիցս անդրադարձել են հայ ժողովրդի ողբերգությանը: Ս. Մ. Կիրովը 1916 թ. փետրվարին հատուկ հոդվածով հանդես է եկել «Թերեք» թերթում և մերկացրել թուրք ջարդարարներին, որոնք նպատակ էին դրել «ամբողջովին բնաջնջել հայ բնակչությանը»: Նա կոչ էր անում բարեկամական ձեռք մեկնել օգնության կարոտ հայ ժողովրդին, իսկ Ս. Օրջոնիկիձեն նշել է, որ նոր պատմության մեջ «քիչ կան այնպիսի ժողովուրդներ, որոնք տված լինեն այնպիսի մեծ կոհեր, ինչպիսին հայերը, և քիչ կան այնպիսի երկրներ, որտեղ թափված լինի այնքան արյուն, որքան Հայաստանում...»

Չնայած երիտթուրքերի գործադրած ջանքերին՝ լրիվ բնաջնջելու հայությանը, շնորհիվ առաջին հերթին ինքնապաշտպանական մարտերի, ժողովրդի մի մասը փրկվեց: Թուրքական յաթաղանի դեմ այս ողբերգական շրջանում հայ ժողովրդի հերոսամարտերից ամենանշանավորներից մեկը Վանի ինքնապաշտպանությունն է: Թուրք ջարդարարները, սրի քաշելով բազմաթիվ գյուղեր, 1915 թ. ապրիլի 7-ին 6 հազար զորքով և 12 թնդանոթով սկսեցին գրոհել Վանի Այգեստան թաղամասը, որտեղ կուտակվել էին նաև գյուղերից մազապուրծ եղած հայերը: Վանի հերոսամարտիկները մահու և կենաց պայքարի ելան և որոշեցին կյանքի գնով պաշտպանել հարազատ քաղաքը: Պաշտպանական մարտերը ղեկավարում էր 7 հոգուց կազմված զինվորական հատուկ մարմինը՝ Ա. Եկարյանի գլխավորությամբ: Քաղաքի պաշտպանության գործի աչքի ընկնող գործիչներից էին նաև Կայծակ Առաքելը, բուլղարացի Գրիգորը և ուրիշներ:

Զինվորական խորհուրդը Այգեստանը ռազմական 7 շրջանների բաժանեց, և ամեն մասում նշանակվեցին պատասխանատու պետեր: Ստեղծվեցին նաև 73 պաշտպանական դիրքեր: Զենք կրող 1053 մարտիկները բաժանվեցին այդ դիրքերի վրա: Ստեղծվեցին նաև հետախուզության և ինֆորմացիայի հանձնախումբ, ինչպես նաև զենքի ու զինամթերքների հաշվեկշիռը կարգավորող մարմին և այլն:

Քաղաքի արհեստանոցները վեր էին ածվել զինագործարանների, որոնք գիշեր-ցերեկ զենք ու զինամթերք էին մատակարարում Վանի հերոս պաշտպաններին: Նրանք նույնիսկ հրանոթներ ձուլելու գործը ձեռնարկեցին և բացի այդ, օրական մոտ 2 հազար փամփուշտ էին տալիս: Հերոս մարտիկները պարգևատրվում էին զինվորական կոմիտեի կողմից սահմանված արծաթյա «Պատվո խաչ» շքանշանով:

Մայիսի 5-ին և 6-ին Վանի պաշտպանները հարձակման անցան և թուրքական զորքին փախուստի մատնելով՝ ավերեցին բանտը, որտեղ դահիճների



Կախաղան հանված հայ բժիշկները և նրանց դահիճները

կոհն էին դարձել Վանի հնչակյան ղեկավար գործիչների խումբը և 180 երիտասարդ հայրենասերներ: Մայիսի 5-ին Վանի հերոս պաշտպանները մեծ շուքով դիմավորեցին հայ կամավորներին, իսկ հաջորդ առավոտյան գեներալ Նիկոլաևի գլխավորած ռուսական զորամասին: Մայիսի 7-ին գեներալ Նիկոլաևի հրամանով Ա. Մանուկյանը նշանակվեց Վանի նահանգապետ:

Կամավորներն օգնության հասան նաև Շատախի և Հայոց ձորի հայկական գյուղերին, որոնք նույնպես հերոսաբար շարունակում էին ինքնապաշտպանական մարտերը:

Վասպուրականի ինքնապաշտպանության զինվորական մարմինը մայիսի 6-ին հաղթանակի կո-

չով դիմեց հայ ժողովրդին, որտեղ ասված էր. «Հայ ժողովուրդ, ահա կբոլորենք մենք ամսօրյակը— ամսօրյակը պայքարի ու փառքի, մահվան ու հաբության մեր ցեղին: Ամսօրյակը նաև հայության առաջին և պայծառ գարունին»: Երբ անարգ թշնամին կռիվ հայտարարեց «քաղաքակրթության և արդարության դեմ, մեր դեմ, մենք հավատքով փարեցինք մեր զենքին և մեր հոգիի խորքերեն կզացինք, որ հաղթանակը մերը պիտի ըլլա», քանի որ «մեր կռիվը խավարի դեմ էր, տգիտության ու բռնության դեմ՝ ճշմարտության և արդարության համար»: Թշնամին դաժան էր ու անարգ, և ցանկանում էր «վերջնական հարվածը հասցնել մեր ցեղի կորացած մեջքին... Եվ կուրծք տվինք մենք թշնամիի մոլեգին ու ամբարտավան... հարձակումներուն... ոչ մեկ տեղ և ոչ մեկ վայրկյան թշնամին տեսավ մեր զինվորը պարտված և մեր դիրքերը լքված»:

Կոչում արտահայտված է հայ ժողովրդի անհուն հավատն ու հույսն իր ապագայի հանդեպ:

Վանի նահանգապետությունը գոյություն ունեցավ միայն 70 օր, որից հետո՝ 1915 թ. հուլիսի կեսերին, ռուսական բանակի նահանջի պատճառով Վասպուրականից և այլ տեղերից այնտեղ հավաքված ավելի քան 200 հազար հայեր բռնեցին գաղթի ուղին՝ դեպի Կովկաս:

Հայաստանի բազմաթիվ շրջաններում ևս հայ ժողովուրդն արյունարբու թշնամու դեմ հերոսական պայքարի ելավ իր կյանքն ու ինչքը պաշտպանելու համար: Շապին Գարահիսարի հայերը, ժամանակին կռահելով երիտթուրքերի խարդախ նպատակները, հրաժարվեցին զենքը հանձնել իշխանություններին և չկատարեցին Միջագետք տեղահանության հրամանը: Նրանք նախօրոք ապահով վայր տեղափոխեցին կանանց ու երեխաներին, իսկ տղամարդիկ հերոսաբար դիմադրեցին: Սակայն թշնամին, նոր ուժեր ստանալով, կարողացավ կոտրել շապինգարահիսարցիների դիմադրությունը և ահավոր ջարդ կազմակերպել: Նշանակալից էին Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերը: Միջերկրական ծովի ափի Սուետիայի գավառակի 6 հայկական գյուղերի թվով ավելի քան 4 հազար հայեր, 1915 թ. ամռանը Մուսա լեռան բարձունքներում ամրանալով՝ սկսեցին պաշտպանվել կառավարական զորքերի գրոհներից: Նրանք հերոսաբար ետ մղեցին թշնամու անընդմեջ գրոհները, բայց զենքն ու մթերքները վերջանում էին և այլևս չէին կարողանա դիմադրել, եթե նրանց չհաջողվեր մեծ հնարքով ընկնել մոտակա ֆրանսիական շոգենավը և հեռանալ ափերից: Այդ դյուցազներգությունն արտացոլված է Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» պատմավեպում: Պաշտպանական հերոսամարտեր տեղի ունեցան Արևմտյան Հայաստանի այլ շրջաններում՝ Ուրֆայում, Սասունում և այլուր:

Պատերազմի տարիներին, գտնվելով ռազմաճակատի սահմանագծում, մեծ չափով տուժեց նաև Արևելյան Հայաստանը: Աշխատունակ մասի բանակ կանչվելու հետևանքով քայքայվել էին առանց այն էլ թույլ արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, հարկերի և պարհակների ավելացումը ծանր վիճակի մեջ էր դրել աշխատավոր մասսաներին: Տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականների ներհոսքն է՛լ ավելի սրեց պարենային ճգնաժամը: Հայաստանում միայն տասնյակ ու տասնյակ հազարավոր որբ ու անօգնական երեխաներ կային. նրանց մի մասը սովի, համաճարակի և անապահով պայմանների զոհ դարձավ:

Այսպիսով, հայ ժողովուրդը իմպերիալիստական պատերազմի զոհը դարձավ և կանգնեց կատարյալ բնաջնջման առջև: Փրկության միակ ելքը, ինչպես ցույց էր տալիս Վ. Ի. Լենինը և նրա գլխավորած բոլշևիկյան կուսակցությունը, իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի, հեղափոխական պայքարի վերածելն էր, տիրող կարգերի տապալումը և աշխատավորների իշխանության ստեղծումը: Հայ ժողովուրդը կրկին իր հույսն ու հավատը կապում էր Ռուսաստանի, այս անգամ արդեն ռուսական հեղափոխական պրոլետարիատի հետ:

1917 թ. փետրվարի 27-ին տապալվեց Ռոմանովների 300-ամյա տիրակալությունը և հաղթանակեց բուրժուադեմոկրատական հեղափոխությունը: 1917 թ. մարտի 9-ին Ժամանակավոր կառավարությունը վերացրեց Կովկասի փոխարքայությունը և ստեղծեց Անդրկովկասի հատուկ կոմիտե (օզակոմ), որը կազմված էր Պետական դումայի նախկին անդամներից, բուրժուազիայի և կալվածատերերի ներկայացուցիչներից: Օզակոմի կողքին Անդրկովկասում գործում էին նաև սովետները:

Հայաստանի քաղաքներում ու գյուղական վայրերում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Ալավերդում, Ղափանում, Կարսում, Սարիղամիշում և այլուր, նույնպես ստեղծվեցին բանվորական, գյուղացիական, զինվորական սովետներ ու կոմիտեներ, որոնցում, սակայն, իշխող դիրք գրավեցին դաշնակցականները, էսէռներն ու մենշևիկները և կատաղի պայքար սկսեցին բոլշևիկների դեմ:

Երևանի սովետի գործունեության մասին բոլշևիկյան «Պայքար» թերթը գրել է. «Այստեղ տակավին հրապարակ չի եկել բանվորների պատգամավորական խորհուրդը... Այս խորհուրդը բաղկացած է դաշնակցական ճղճիմ միջավայրի անգույն ներկայացուցիչների մեծամասնությունից, երրորդ

ամիսն է դեռ օրորվում է անորոշության և կանավան այնպիսի խղճուկ հարցերի շուրջը ժամանակ մեռցնելուց, որ տակավին իր գործադիր կոմիտեի ընտրությունը չի կայացրել և իր պարտականությանը չի անցել»:

1917 թ. հունիսի 24-ին Ղարաքիլիսայում կայացած պինվորական մասերի ժողովը, մերկացնելով մենշևիկ համաձայնողականներին, իր բանաձևում գրում էր. «Պահանջում ենք ամբողջ իշխանության անցումը հեղափոխական մարմիններին, այսինքն պինվորական, բանվորական և գյուղացիական դեպուտատների ձեռքը»:

Ականավոր բոլշևիկ Ս. Ալավերդյանը 1917 թ. հուլիսին Սարիղամիշից հաղորդում էր, որ Փետըրվարյան հեղափոխության հաղթանակից հետո «հեղափոխական պրոլետարիատը և բանակը, ջերմորեն արձագանքելով հասարակական կյանքի բոլոր երևույթներին, համախմբվեցին հեղափոխական դրոշի տակ»: Սակայն «Կավկազսկի ռաբոչի» թերթի հաղորդմամբ՝ ինչպես մյուս տեղերում, Սարիղամիշում ևս հանդես են գալիս «պրովոկատորներ՝ Արյունոտ Նիկոլայ-ժանդարմի նախկին ծառաներից և ոստիկաններից, որոնք կատարելով իրենց սև գործը, ջանում են դժգոհություն և քայքայում առաջացնել հեղափոխական ուժերի շարքերում»:

Ժամանակավոր կառավարության ստեղծումը գոհունակությամբ ընդունվեց հայ բուրժուազիայի կողմից: 1917 թ. ապրիլին Թիֆլիսում ձևավորվեց բուրժուական-կադետական «Հայ ժողովրդական կուսակցությունը», իսկ դաշնակցությունը շտապեց հրավիրել «ազգային համագումար», որը ստեղծեց Հայ ազգային խորհուրդ: Վերջինս կոչված էր հայկական կառավարության դեր կատարելու:

Ժամանակավոր կառավարությունը հենց սկըզբից վարում էր հակաժողովրդական քաղաքականություն, հրահրում ազգամիջյան ընդհարումներ: Այն աշխատավորների վիճակը բարելավելու և ոչ մի քայլ չկատարեց, չլուծեց ո՛չ բանվորական, ո՛չ գյուղացիական և ո՛չ էլ ազգային հարցերը, իսկ ավերիչ պատերազմը շարունակվում էր և նորանոր կոհեր խլում:

Աշխատավորական մասսաները պայքարի դրոշ բարձրացրին՝ նոր, իսկական սոցիալիստական հեղափոխություն կատարելու համար: Այդ պայքարը գլխավորում էին բոլշևիկները, որոնցից շատերը նոր էին վերադարձել աքսորավայրից և ազատվել բանտերից: Նրանց նշանաբանն էր՝ իրագործել բուրժուադեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերածելու լենինյան ապրիլյան թեզիսները և կուսակցության VI համագումարի որոշումները: Այդ պահանջների իրագործման համար պայքարի ելան նաև Հայաստանի աշխատավորական մասսաները՝ Երևանի մեխանիկական գործարանի բանվորները, Ալեքսանդրապոլի տպագրիչները, Ալավերդու և Ղափանի հանքագործները և այլ ձեռնարկությունների աշխատավորներ: Հողի և ազատության համար պայքարի էին դուրս եկել նաև գյուղի աշխատավորները: 1917 թ. մայիս-հունիս ամիսներին գյուղացիները վենքի են դիմում և գրավում «Ախթալա» կալվածքը, Արզական, Բջնի, Ալափարս գյուղերի կալվածատիրական հողերը: Նման երևույթներ են տեղի ունենում նաև Շամշադինում, Նոր Բայազետում, Զանգեզուրում և այլ վայրերում: Կալվածատիրական հողերի գրավումը տեղի էր ունենում ամենուր: Ուշագրավն այն է, որ հողը գրավվում էր ոչ թե անհատների, այլ ամբողջ գյուղի հասարակության կողմից՝ հավասար օգտագործելու նպատակով: Սակայն, ինչպես հավաստում է «Կավկազսկի ռաբոչին», իշխանության ներկայացուցիչները ցանկանում էին մեղքը գցել առանձին անհատների վրա՝ «նպատակ ունենալով սքողել գյուղացիական պայքարի մասսայական բնույթը և «կասկածելի» մարդկանց «օրինական» պատասխանատվության ենթարկել»:

1917 թ. ապրիլին Անդրկովկասյան հատուկ կոմիտեն օրենք հրապարակեց տեղական իշխանության մարմինների ընտրության մասին: Սակայն իրականում ոչ մի ընտրություն չկայացավ. տեղի կոռբաներն ու կուլակները բռնի ուժով գրավեցին բոլոր պաշտոնները: Դրան գյուղացիները պատասխանեցին հեղափոխական ելույթներով: Ստ. Շահումյանը 1917 թ. հոկտեմբերի 22-ին Անդրկովկասի գյուղացիությանն ուղղված կոչում նշում էր, որ ցարիզմի տապալումից հետո ութ ամիս է անցել, բայց դրությունը երկրում չի փոխվել, նախկինի պես գյուղացիների վավակները կոհվում են ռազմի դաշտում, իսկ այստեղ կալվածատերերը շարունակում են գյուղացիների կեղեքումն ու հալածանքը: Գյուղում նորից հանդես եկան պատժիչ ջոկատները, որոնք ցրեցին հողային կոմիտեները, իսկ գյուղացիների ընտրյալներին բանտերը նետեցին, վերականգնվեցին ցարական օրենքները:

Պարզից էլ պարզ էր դարձել, որ քաղաքի ու գյուղի աշխատավորներին հուզող սոցիալ-տնտեսական խնդիրները կարող էին լուծվել միայն ու միայն բոլշևիկների ղեկավարությամբ, նրանց առաջ քաշած հեղափոխական լոզունգների իրականացման միջոցով:

Հովհաննես Թումանյան

Ավետիք Իսահակյան


Վահան Տերյան


Սիամանթո

Գրիգոր Զոհրապ

Դանիել Վարուժան

Վ. Ի. Լենինը դեռևս 1917 թ. հունիսին հայտարարում էր, որ բոլշևիկները կարող են իշխանությունը վերցնել իրենց ձեռքը, իսկ Ստ. Շահումյանը 1917 թ. հոկտեմբերին կայացած բոլշևիկյան կազմակերպությունների կովկասյան երկրային I համագումարում ասաց, որ չնայած ամբողջ դժվարությանը, մենք կարող ենք «համարձակորեն ընդառաջ գնալ կյանքի առաջադրած խնդիրներին և, մեր ձեռքը վերցնելով իշխանությունը, հեղափոխությունը հասցնել մինչև հաղթական վերջը»:

Երկրային համագումարին մասնակցում էին նաև Ալավերդու, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի և այլ վայրերի բոլշևիկները, որոնց թվում էին Ա. Միկոյանն ու Պ. Արվելաձեն: Ա. Միկոյանը, համագումարում ելույթ ունենալով, խոսեց Հաղպատում և Ալավերդում ուժեղացող հեղափոխական պայքարի մասին: «Տեղական մարմինների ընտրությունները,— ասաց նա,— մեկ տվին հինգ անգամ շատ տեղ, քան դաշնակցականներին: Ալավերդու գործարանի բանվորները, ինչպես նաև մոտակա գյուղերի գյուղացիները գնում են կուսակցության ետևից»: Ա. Մռավյանն իր ելույթում հատկապես նշեց Անդրկովկասի աշխատավորների՝ միացյալ ուժերով պայքարի ելնելու անհրաժեշտությունը: Նա շեշտեց, որ «մասսաները էսէռներից երես են թեքել, պինվորները ձգտում են դեպի բոլշևիկյան կազմակերպությունը»: Իսկ Գ. Կորգանովն իր ելույթում ընդգծեց, որ «պինվորական ստորաբաժանումներում ուժեղանում են հեղափոխական տրամադրությունները, պինվորները ինքնաբերաբար մերժենում են բոլշևիկների հեղափոխական տակտիկային և առաջադրում ու պաշտպանում նրա լոզունգներն ու պահանջները»:

Ստ. Շահումյանը, համագումարից հետո Պ. Արվելաձեի հետ այցելելով Ալեքսանդրապոլ, 1917 թ. հոկտեմբերի 8-ին հանդիպումներ ունեցավ աշխատավորական մասսաների հետ և պեկուցում կարդաց ընթացիկ մոմենտի մասին, որը լսվեց շատ մեծ հետաքրքրությամբ: Հաջորդ օրը նա ելույթ ունեցավ գյուղացիների գավառային համագումարում և կոչ արեց համախմբվել բոլշևիկյան կուսակցության շուրջը, հետևել նրա լոզունգներին: Ստ. Շահումյանի ելույթը կայակորի երկուհազարանոց ժողովում ընդունվեց բուռն խանդավառությամբ: Ժողովն իր բանաձևում դատապարտեց Ժամանակավոր կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը: Շուտով Ալեքսանդրապոլի սովետի ղեկավարությունն անցավ բոլշևիկների ձեռքը, իսկ Կարսի բոլշևիկների ընդհանուր ժողովը, դատապարտելով մենշևիկների դավաճանական քաղաքականությունը, որոշեց սահմանապատվել նրանցից: Կուսակցության Կենտկոմի քարտուղար Ե. Ստասովան Կարսի բոլշևիկներին այդ առթիվ գրեց. «Ողջունում ենք ձեր ինքնուրույն ելույթը և գոյությունը»:

Այսպիսով, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում Փետրվարյան հեղափոխությունից հետո աշխատավորական մասսաները բոլշևիկների ղեկավարությամբ նախապատրաստվում էին սոցիալիստական հեղափոխության մարտերին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայ պարբերական մամուլը բուռն կարգացում ապրեց XX դարի առաջին տասնամյակներում և նրա օրգանների թիվը հասավ շուրջ 750 անունի: Դա պատահական չէր, քանի որ հայ ժողովրդի այդ շրջանի բուռն ու ողբերգական, ինչպես նաև հերոսությամբ լի պատմությունն ամենից առաջ և անմիջապես արտացոլվում էր պարբերական մամուլում: Հայ մամուլի համար հատկապես կարևոր երևույթ էր բոլշևիկյան պարբերականների հանդես գալը, որոնք խոր հետք թողեցին հայ հասարակական մտքի կարգացման ամբողջ ընթացքի վրա: Սկսած «Պրոլետարիատ» (1902) թերթից, հետագա տարիներին լույս տեսան «Պրոլետարիատի կռիվը», «Կայծ», «Նոր խոսք», «Պայքար», «Սոցիալ-դեմոկրատ», «Խոսք», «Բանվորի կռիվը» և այլ պարբերականներ, որոնց թիվը մինչև 1920 թ. հասավ 40-ի: Այդ թերթերը հրատարակվում էին այնպիսի ականավոր լենինյանների կողմից, ինչպիսիք էին Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ս. Կասյանը, Մ. Մելիքյանը, Ար. Մելիքյանը, Ս. Խանոյանը, Դ. Շահվերդյանը, Ա. Կախոյանը, Ա. Մռավյանը և ուրիշներ, որոնց տեսական և հեղափոխական պրակտիկայի հարցերը լուսաբանող հոդվածները կարևոր նշանակություն ունեցան մասսաների քաղաքական դաստիարակության և նրանց հեղափոխական պայքարի պատրաստելու գործում:

Պարբերական մամուլը մեծ չափով խթանեց նաև գեղարվեստական գրականության կարգացումը: Ռեալիստական արձակի այնպիսի փայլուն դեմքեր, ինչպիսիք էին Ալ. Շիրվանզադեն, Նար-Դոսը, Գր. Զոհրապը, Վրթ. Փափազյանը, իսկ պոեզիայի մեջ Հ. Հովհաննիսյանը, Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը, Դ. Վարուժանը հայ գրականությունը հասցրին կարգացման նոր աստիճանի:

Հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հ. Հակոբյանը և ապա Շ. Կուրղինյանը, Մ. Արավին և ուրիշներ մեծ դեր խաղացին հեղափոխական նոր գրականության կարգացման գործում: Մեծ է Հ. Թումանյանի դերը ոչ միայն որպես ազգային մեծ բանաստեղծի, այլ նաև գրական կյանքի կազմակերպչի, մեծ հայրենասերի, ժողովուրդների բարեկամության ջատագովի: Իսկ մեծ քնարերգու և սիրո երգիչ Ավ. Իսահակյանն իր գլուխգործոց «Աբու-Լալա-Մահարի» և այլ գործերով հասավ պոետական արվեստի այնպիսի մակարդակի, որ ռուս մեծ բանաստեղծ Ալ. Բլոկը նրա մասին ասաց. «Այդպիսի լուսավոր ու անմիջական տաղանդ այժմ ողջ Եվրոպայում չկա»:

Հայ պոեզիայի ամենատաղանդավոր դեմքերից էր Վ. Տերյանը, որի քնարը, հպորացած Հոկտեմբերյան հեղափոխության շնչով, նոր ուժով հնչեց:

Ուժեղանում են նաև հայ-ռուսական գրական կապերը, որում կարևոր դեր խաղաց Վ. Բրյուսովը՝ 1916 թ. հրատարակելով «Հայաստանի պոեզիան» ժողովածուն, որով ռուս ընթերցողին ներկայացվեց հայ գրականության գոհարների հատընտիրը: Վ. Բրյուսովը բազմիցս հանդես է եկել հայ ժողովրդի պատմության, գրականության ու արվեստի գնահատությամբ: 1916 թ. նա Երևանում հատուկ դասախոսություն է կարդում հայկական պոեզիայի մասին: Հ. Թումանյանը լսելով այդ պեկուցումը,

Արմենակ Շահմուրադյան (ձախից), Կոմիտաս և Սպիրիդոն Մելիքյան (1907 թ.)

Մակար Եկմալյան


Կոմիտաս (Մուրադյանի նկարից)

Վարդգես Սուրենյանց

ասել է. «Սիրով ու պատկառանքով խոնարհվում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև՝ Պուշկինի, Լերմոնտովի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կըրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ-շատերը»: Այս առումով մեծ է նաև Մ. Գորկու դերը, որի խմբագրությամբ ռուսերեն լույս է տեսել հայ գրողների երկերի ժողովածուն և մեծ ընդունելություն գտել ռուս ընթերցողների շրջանում:

Զգալի հաջողություններ ձեռք բերեց նաև հայ արվեստը: Հատկապես երաժշտության բնագավառում մեծ դեր խաղաց Կոմիտասը, որն անխոնջ եռանդով հավաքեց ժողովրդական երաժշտության գոհարները և դրանց նոր կյանք տվեց: Նրան է պատկանում նաև շատ ժողովուրդների հայ արվեստին հաղորդակից դարձնելու պատիվը: Նա հանդես է եկել Բեռլինում, Փարիզում, Շվեյցարիայի, Իտալիայի, Եգիպտոսի մի շարք քաղաքներում և շատ հեռուները հասցրել հայ երաժշտական արվեստի փառքը:

Այս շրջանում հանդես եկավ հայ դասական երաժշտության ականավոր վարպետ Ալ. Սպենդիարյանը, որն իր տաղանդավոր ստեղծագործությունների համար դարձավ Գլինկայի անվան մըրցանակի եռակի դափնեկիր: Հայ երաժշտական արվեստի մեջ վգալի ավանդ է ներդրել նաև Ա. Տիգրանյանը: Նրա «Անուշ» օպերան, որն առաջին անգամ բեմադրվել է 1912 թ. Ալեքսանդրապոլում, համարվում է հայ օպերային արվեստի գլուխգործոցը: Հայտնի անուններ էին Մ. Եկմալյանը և երգիչ Ա. Շահմուրադյանը:

Հայ արվեստի մեծ երախտավորներից էին ականավոր նկարիչներ Գ. Բաշինջաղյանը, Վ. Սուրենյանցը, Մ. Սարյանը և քանդակագործ Ա. Տեր-Մարուքյանը: Հայ ճարտարապետության ուսումնասիրման բնագավառում մեծ ավանդ թողեց Թ. Թորամանյանը, իսկ ճարտարապետական մոնումենտալ կառույցների ճանաչված վարպետ էր Ալ. Թամանյանը: Թատերական արվեստի տաղանդավոր ներկայացուցիչներից էին Սիրանույշը, Հ. Աբելյանը, Գ. Չմշկյանը և Ի. Ալիխանյանը: Չնայած ապրած ահավոր ողբերգությանը, հայ ժողովրդի ստեղծագործական միտքը մշակույթի նոր հրաշալիքներ էր ստեղծում:

Լենինական. ՍՍՀՄ ժողովրդական քանդակագործ Ս. Մերկուրովի տուն-թանգարանը

ՍՈՑԻԱԼԻԶՄ

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱՐԱՐ

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը համայն մարդկության պատմության մեջ նոր դարաշրջանի սկիզբ դրեց, այն փրկարար նշանակություն ունեցավ բոլոր ճնշվածների, այդ թվում նաև ֆիզիկական բնաջնջման արհավիրքի առջև կանգնած հայ ժողովրդի համար: «Մենք իրավունք ունենք հպարտանալու և հպարտանում ենք նրանով,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ մեզ երջանկություն բաժին ընկավ սկսելու սովետական պետության կառուցումը, սկսելու դրանով համաշխարհային պատմության նոր դարաշրջան»:

Մեծ Հոկտեմբերի հաղթանակը ռուսական հերոսական բանվոր դասակարգի և երկրի բոլոր ժողովուրդների աշխատավորական մասսաների պայքարի փայլուն հաղթանակի արդյունք էր: Հայ ժողովրդի զավակները մյուս ժողովուրդների աշխատավորների հետ հերոսական պայքարի ելան սովետական իշխանության հաղթանակը և նրա նվաճումները քաղաքացիական պատերազմի տարիներին պաշտպանելու համար: Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակից Ա. Մյասնիկյանը Սովետական Ռուսաստանի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնակատարն էր, Բելոռուսիայի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի նախագահը և ապա Մոսկվայի քաղաքային կոմիտեի քարտուղարը: Իսկ 24-րդ Երկաթյա դիվիզիայի և ապա առաջին հեղափոխական բանակի հրամանատար լեգենդար Գայը (Հ. Բժշկյան) պատմության մեջ մտավ որպես նոր շրջանի դյուցազուն: Այն ահեղ օրերին, երբ Վ. Ի. Լենինը թշնամու գնդակից վիրավորված բուժվում էր, Գայն իր դիվիզիայով գրավելով առաջնորդի ծննդավայր Սիմբիրսկը, հեռագրեց Մոսկվա. «Թանկագին Վլադիմիր Իլյիչ, Ձեր հայրենի քաղաքի գրավումը պատասխան է Ձեր մեկ վերքին, իսկ երկրորդի պատասխանը կլինի Սամարան»: Ինչ խոսք, որ դա Իլյիչի վերքերի ամենաբուժիչ սպեղանին էր: Իր հերոսական գործունեությամբ մեծ համբավ վաստակեց չապաևյան հռչակավոր դիվիզիայի, ապա թուրքեստանյան 4-րդ և սպիտակ լեհերի դեմ գործող 12-րդ բանակների փառաբանված հրամանատար Գ. Ոսկանյանը: Պետրոպավլովյան ամրոցի կոմիսարն էր Մ. Տեր-Հարությունյանցը, որը մեծ հաջողությամբ էր կատարում բոլշևիկյան կուսակցության և անձամբ Վ. Ի. Լենինի բազմաթիվ կարևորագույն հանձնարարությունները: Մարտական դիրքերում կռվեցին հայ ժողովրդի շատ անձնուրաց զավակներ, որոնց թվում էր Մոսկվայի համար մղվող մարտերի հերոս 20-ամյա Լ. Լիսինյանը:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը մեծ խանդավառությամբ ընդունվեց Հայաստանում, ամենուր՝ քաղաքներում ու գյուղական վայրերում բազմամարդ միտինգներ ու ցույցեր տեղի ունեցան: Հոկտեմբերի 27-ին Ալեքսանդրապոլում գտնըվող դիվիզիայի ժողովում պեկուցումով հանդես եկան բոլշևիկները, որոնք նշեցին Հոկտեմբերյան հեղափոխության փրկարար նշանակությունը, իսկ նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ քաղաքի կայազորի զինվորական միտինգը, որին մասնակցեց 5 հազար հոգի: Նոյեմբերի 6-ին աշխատավորների մեծ ցույց տեղի ունեցավ Ղարաքիլիսայում, իսկ 10-ին՝ Ջալալօղլիում, Սարիղամիշում և այլ վայրերում: Սարիղամիշում կազմակերպված բաց ժողովին մասնակցում էին տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ, իսկ «մենշևիկները, ինչպես նշում էր «Կավկազսկի ռաբոչին», ինչպես միշտ, մարտից խուսափեցին»: Զեկուցումով հանդես եկող բոլշևիկ Կիասովը և ելույթ ունեցողները դատապարտեցին «էսէռների դավաճանական պաշտպանողական քաղաքականությունը և հայտնեցին իրենց լիակատար անվստահությունը»: Ժողովն իր բանաձևում լիակատար վստահություն հայտնելով սովետական կառավարությանը, պատրաստակամություն հայտնեց բոլոր միջոցներով պաշտպանել նրան:

1917 թ. դեկտեմբերի 1-ին Սարիղամիշի գյուղացիական պատգամավորների սովետը, քննարկելով ընթացիկ մոմենտի հարցը, որոշում ընդունեց պաշտպանել Ժողովրդական կոմիսարների խորհուրդը և այն ճանաչել երկրի միակ օրինական իշխանություն, իսկ Թիֆլիսում ստեղծել Ժողկոմխորհի ներկայացուցչություն և կովկասյան բանակը դնել սովետական Ռուսաստանի գլխավոր հրամանատարության տրամադրության տակ: 1918 թ. հունվարի

28-ին Սարիղամիշի կայազորի ընդհանուր միտինգը ևս որոշեց միակ իշխանություն ճանաչել Ժողկոմխորհը, քանի որ այն «գործնականում երկիրը տանում է դեպի ընդհանուր դեմոկրատական խաղաղություն, վերացնում ապագա պատերազմների ծագման հնարավորությունները, ամբողջ հողը ամենաչքավոր գյուղացիությանն է տալիս և Ռուսաստանում հաստատում ժողովրդի լիակատար իշխանություն...» Բանաձևում նաև նշվում էր, որ «հեղափոխական բանակը պատրաստ է բանվորագյուղացիական բանակի առաջին իսկ կանչով պաշտպանել ռուսական մեծ հեղափոխությունը»:

Այսպիսով, մեծ Հոկտեմբերը լայն արձագանք գտավ Հայաստանի քաղաքներում ու գյուղերում: Աշխատավորական մասսաները բուռն ցանկություն և պատրաստակամություն էին հայտնում պաշտպանելու հեղափոխության նվաճումները: Սակայն ներքին և արտաքին հակահեղափոխական ուժերի, բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունների, մենշևիկների, էսէռների, մուսավաթականների ու դաշնակցականների հակաժողովրդական քաղաքականության հետևանքով Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակը բավական ձգձգվեց:

1917 թ. նոյեմբերին Թիֆլիսում ստեղծվեց Անդրկովկասյան կոմիսարիատը, իսկ 1918 թ. ապրիլին կազմվեց Սեյմը, որում ղեկավար դիրք գրավեցին վրաց մենշևիկներն ու ազգայնական մյուս կուսակցությունների ներկայացուցիչները: Գործունեության լայն ասպարեզ բացվեց ազգային խորհուրդների համար:

Կոմիսարիատը, ինչպես նաև Սեյմը, ամենակատաղի հակասովետական, հակառուսական քաղաքականություն էին վարում, հալածում հեղափոխական գործիչներին, արգելում բոլշևիկյան թերթերն ու հրատարակությունները: Կոմիսարիատի ցուցումներով զինաթափվում են տուն վերադարձող ռուսական զորամասերը: Դեռ ավելին, մուսավաթական բանդաները Շամխոր կայարանում և այլ վայրերում կազմակերպեցին ռուս զինվորների ջարդը: Դա նենգ դավաճանություն էր ռուս ժողովրդի և ռուս զինվորների նկատմամբ, որոնք չորս տարի շարունակ իրենց արյան գնով պաշտպանել էին Կովկասյան ճակատը:

1917 թ. դեկտեմբերի 16-ին սովետական կառավարության որոշմամբ Ստ. Շահումյանը նշանակվեց Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար: Անդրկովկասյան կոմիսարիատը սկսեց հետապնդել Ստ. Շահումյանին և սպառնաց նրան ձերբակալել: Ստ. Շահումյանը ստիպված անցավ ընդհատակ և ապա Թիֆլիսից տեղափոխվեց Բաքու: Սակայն, չնայած կոմիսարիատի գործադրած բռնություններին, հեղափոխական խմորումները շարունակվում էին: Սարիղամիշի կայազորի զինվորների 1918 թ. հունվարին ընդունած բանաձևում ասվում էր. «Քննելով ընդհանուր դրությունը Ռուսաստանում և մասնավորապես Կովկասում, մենք որոշեցինք չենթարկվել Անդրկովկասյան կոմիսարիատի հակահեղափոխական կարգադրություններին», իսկ Ալեքսանդրապոլի կայազորի և քաղաքի աշխատավորների ընդունած բանաձևում ասված էր. «Միակ իշխանությունը, որն ապահովում է մեզ կայուն խաղաղություն... սովետների իշխանությունն է... Կովկասում ուրիշ իշխանություն չի կարող կազմակերպվել, բացի սովետներից»:

Ալ. Մյասնիկյան

Երկրամասի մի շարք վայրերում 1918 թ. հունվարին սովետական իշխանություն է հաստատվում: «Մշակ» թերթը հայտնում է, որ Սարիղամիշում իշխանությունն անցել է սովետների ձեռքը և «զինվորահեղափոխական կոմիտեն ձերբակալել է հայկական զինվորական վարչության անդամներին (դաշնակցականներին:— Ծ. Ա.)»: Սակայն հակահեղափոխական ուժերը ամենակատաղի հարձակումներ են գործում և դաժանորեն ոչնչացնում հեղափոխության օջախները, ինչպես այդ տեղի է ունենում Կաղզվանում: «Բանվորի կռիվը» բոլշևիկյան թերթը, անդրադառնալով այդ հարցին, 1918 թ. հունվարի 6-ին գրում էր. «Մենք, իհարկե, չենք վը-

Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանը Երևանում

հատվում, որովհետև համոզված ենք, որ մութ ուժերի օրերը հաշված են...»

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո, այսպիսով, Անդրկովկասում ստեղծվեց բավականին բարդ իրավիճակ. մի կողմից, աննախընթաց վերելք ապրեց մասսաների պայքարը սովետական իշխանության համար, իսկ, մյուս կողմից՝ տեղական և օտարերկրյա հակասովետական ուժերի ղեկավարությամբ ստեղծվեց հակահեղափոխական դիկտատուրա: Ահա այսպիսի պայմաններում էր, որ սովետական կառավարությունը, իրագործելով լենինյան ազգային քաղաքականության սկզբունքները, հովանի եղավ բոլոր ճնշված ազգերին, այդ թվում և բազմաչարչար հայ ժողովրդին: Դրա վկայություններից է «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որն ընդունվեց 1917 թ. դեկտեմբերի 24-ին:

Դեկրետի նախնական տեքստը կազմել էր ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից հայկական կոմիսարիատի քարտուղար, ականավոր բանաստեղծ Վ. Տերյանը: Նրա կազմած տեքստում հատկապես նշված էր, որ «Թուրքահայաստանի ճակատագրի հարցը եղել է հայ հասարակական կյանքի ամենասուր, ամենածանր, ամենացավոտ հարցը: Արդեն շատ տասնյակ տարիներ ոչ միայն հայ մտավորականության, այլև բանվորական ու գյուղացիական դեմոկրատիայի ամենալայն մասսաների բոլոր մտքերն ու ամբողջ ուշադրությունը գամված են եղել հայկական կյանքի այդ «անիծյալ հարցին»»: Վ. Տերյանը հակիրճ տալիս էր Հայկական հարցի պատմությունը և մերկացնում արևմտյան տերությունների «ազգակուլ» քաղաքականությունը, նշում, որ Հայկական հարցում նրանց գործը «ցավակցություններից, գլադստոնյան ճա-

ռերից» այն կողմ չի անցնում: Վ. Տերյանը հայ բոլշևիկների անունից վստահորեն հայտարարում էր. «Եվ ահա հասել է վերջապես ժամանակը, երբ մենք մասսային կարող ենք ասել՝ «աջակցեք բանվորների ու գյուղացիների կառավարությանը և հաստատ հավատացեք, որ նա ձեզ չի խաբի, նա ձեզ կտա ազատություն, որը ապարդյուն ջանում էիք ստանալ մինչև այժմ, հանուն որի այնքան արյուն ու արցունք եք թափել»:

Միայն Սովետական Ռուսաստանն էր, որ կործանման եզրին կանգնած հայ ժողովրդին, պատմության մեջ հայերի նկատմամբ առաջին մարդասիրական պետական ակտը հրապարակելով: «Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայտարարում է հայ ժողովրդին,— ասված է «Թուրքահայաստանի մասին» դեկրետում,— որ Ռուսաստանի բանվորական ու գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանում» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»: Դեկրետում նշվում էր, որ Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրս գալու դեպքում պետք է ստեղծվի ժողովրդական միլիցիա և երկրից տարբեր վայրեր քշված հայերը վերադառնան հայրենիք, որպեսզի դեմոկրատական սկզբունքներով ստեղծվի դեպուտատների սովետ և կազմվի ժողովրդական կառավարություն:

Սակայն միջազգային իրադրությունը բարդացավ, իմպերիալիստական տերություններն իրենց սուրն ուղղեցին երիտասարդ սովետական իշխանության դեմ: Գերմանական գաղութարարները, ներխուժելով սովետական Ռուսաստան, ահավոր սպառնալիք ստեղծեցին հեղափոխության համար: Նրանք սովետական իշխանության վզին փաթաթեցին Բրեստ-Լիտովսկի ծանր պայմանագիրը, իսկ Անդրկովկասի հակասովետական ուժերը, իմպերիալիստների հետ միավորված, Անդրկովկասը կտրեցին սովետական Ռուսաստանից: Նրանք դրանով ռազմաճակատը բացեցին թուրքական բանակի առջև և հայ ժողովրդին նոր ահավոր վտանգի առջև կանգնեցրին: Խափանվեց հայ ժողովրդի ինքնորոշման հարցը և «Թուրքահայաստանի մասին» դեկրետի իրագործման խնդիրն ի չիք դարձավ:

Հոկտեմբերյան հեղափոխության դրոշը դարձավ ճնշվածների դրոշը: Հեղափոխական ավանդույթներին հավատարիմ Բաքվի պրոլետարիատն ընթանում էր Հոկտեմբերի հաղթանակի համար պայքարի առաջին շարքերում: 1917 թ. հոկտեմբերի 31-ին Բաքվում հռչակվեց սովետական իշխանություն: Դա պատմական իրադարձություն էր երկրամասի

Գայ (Հայկ Բժշկյան)

բոլոր ժողովուրդների կյանքում: Անդրկովկասի ժողովուրդներին Բաքվի Ժողկոմխորհի ուղղած կոչում ասված էր. «Բաքվի սովետի դրոշը ազատության դրոշն է և աշխատավորների եղբայրության դրոշը»: 1918 թ. մարտի 15-ին Ստ. Շահումյանի զեկուցման առթիվ Բաքվի սովետն ընդունեց մի բանաձև, որը կոչ էր անում «օգնության գնալ ամբողջ Անդրկովկասի բանվոր դասակարգին ու գյուղացիությանը և նրանց հետ խորտակել Սեյմի հակահեղափոխական ու հանցավոր իշխանությունը»:

1918 թ. մարտի վերջին — ապրիլի սկզբին Բաքվում ճնշվեց մուսավաթականների բարձրացրած հակահեղափոխական խռովությունը: Բաքվում հաստատվեց սովետական իշխանություն՝ Բաքվի կոմունան, երկրամասում սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարի հուսալի հենարանը:

Վ. Ի. Լենինը ուշադիր հետևում էր Անդրկովկասի բոլշևիկների գործունեությանը և անհրաժեշտ օգնություն էր ցույց տալիս նրանց: 1918 թ. մայիսի 14-ի հեռագրում նա Ստ. Շահումյանին գրում էր. «Մենք հրճվանքի մեջ ենք ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությունից: Կարողացեք դրան միացնել այն ամենազգույշ դիվանագիտությունը, որը անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ, և մենք կհաղթենք»:

Սակայն Անդրկովկասում վիճակը գնալով բարդանում էր, քանի որ Անդրկովկասյան սեյմը չէր

Երևան. Գայի արձանը

ճանաչել Բրեստի պայմանագիրը և երկրամասը անջատել էր սովետական Ռուսաստանից: Օգտվելով դրանից, թուրք-գերմանական օկուպանտները բոլոր միջոցներով ջանում էին կավթել Բաքուն և ճնշել տեղի սովետական իշխանությունը: Կարսը գրավելուց հետո թուրքական զորքերի գլխավոր հրամանատարը հայտարարեց. «Ես անխուսափելի եմ համարում Բաքուն գրավելու համար թուրքական զորքեր ուղարկելը»: Միաժամանակ թուրքական պինվորականությունը ձգտում էր Արևելյան Հայաստանում ևս ցեղասպանություն կատարել: 1918 թ. մայիսի 15-ին թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլը: Հայկական զորքերը ստիպված էին նահանջել դեպի Ղարաքիլիսա և ապա Դիլիջան: Հայ ժողովուրդն ազգային-ազատագրական պատերազմի ելավ: Թուրքական զավթիչների դեմ ժողովրդական աշխարհազորայիններին ջոկատներին միացան նաև ազգային զորամասերի հազարավոր մարտիկներ: Նրանք հասկանում էին, գրում էր Ստ. Շահումյանը, որ իրենց սպառնում է իսպառ ոչնչացում: Նրանք երես թեքեցին դաշնակիցներից՝ ցանկանալով «պենքը ձեռքներին հանդես գալ վերահաս վտանգի դեմ»:

Վ. Ավանեսով

Անմահ լենինյաններ (նկարիչ՝ Գևորգ Մնացականյան)



Սարդարապատ



Սարդարապատի ճակատամարտը

Թուրքական զորքերը ներխուժեցին Արարատյան դաշտ և մայիսի 21-ին գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը: Դրվեց հայ ժողովրդի լինել չլինելու հարցը: Ժողովրդական կանգվածները սրբազան պատերազմի ելան ընդդեմ թշնամու: Սկսվեց Սարդարապատի պատմական ճակատամարտը: Մայիսի 22-ին հայկական զորքերը, աշխարհազորայինների հետ թուրքերին հետ մղեցին և ազատագրեցին Սարդարապատը: Ստանալով օգնական ուժեր, թուրքերը փորձեցին կավթել Երևանն ու տիրել ամբողջ Արևելյան Հայաստանին: Նրանք ձգտում էին գրավել երկաթուղին, զորքերը նետել Ջուլֆա և շարունակել արշավանքը՝ Բաքուն գրավելու նպատակով: Սկսվեցին համառ կռիվներ: Հայկական զորքերն ու աշխարհազորայինները, ցույց տալով արիության ու խիզախության օրինակներ, կարողացան պարտության մատնել թշնամու գերակշռող ուժերին և հետ շպրտել նրանց: Երկօրյա համառ մարտերից հետո թուրքական զորքերը զգալի կորուստներ կրելով, ստիպված էին նահանջել:

Մայիսի 24—28-ին համառ կռիվներ տեղի ունեցան Փամբակի, Ղարաքիլիսայի և Լոռու շրջանում: Հայ ժողովրդի այդ հերոսական դիմադրությունը հետ պահեց թուրք ագրեսորների նշանակալի ուժերին՝ կասեցնելով նրանց առաջխաղացումը դեպի սովետական Բաքու: Թուրք պինվորականությունը բացահայտորեն դրել էր դեպի Բաքու ճանապարհ բացելու հարցը: Մայիսի 26-ին Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Խալիլ բեյը վերջնագիր ներկայացրեց Չխենկելիի կառավարությանը՝ կովկասյան երկաթգծով թուրքական զորքերին ազատ փոխադրելու վերաբերյալ:

1918 թ. մայիսի վերջերին Սեյմը կազմալուծվեց, և կազմակերպվեցին Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի բուրժուական երեք հանրապետությունները: Անդրկովկասի անդամահատումը ձեռնտու էր թուրք զավթիչներին: 1918 թ. մայիսի 24-ին Ստ. Շահումյանը Ռուսաստանի Ժողկոմխորհին տեղյակ պահեց, որ թուրքերը, գրավելով Ալեքսանդրապոլը, զորքերը նետում են Ջուլֆա և աչք են դրել Բաքվին: «Մենք միջոցներ ենք ձեռք առնում ճանապարհը փակելու համար,— շարունակում էր Ստ. Շահումյանը,— ուժեղացնում ենք մեր ջոկատները Հաջիկաբուլում, մեկ գումարտակ ենք ուղարկում Բաքու—Ջուլֆա ճանապարհով... Միաժամանակ մենք Թիֆլիսից հաղորդումներ հաղորդումների հետևից ենք ստանում այն մասին, որ Բաթումում թուրքերի ու գերմանացիների գլխավոր պահանջը զորքերի փոխադրումն է Բաքու»:

1918 թ. մայիսի վերջին Նուրի փաշան իր շտաբի հետ ժամանեց Գյանջա (Կիրովաբադ) և սկսեց պատրաստվել հարձակվելու Բաքվի վրա: Մուսավաթականները թուրքերին ամեն կերպ օգնում էին բոլշևիկների դեմ նրանց մղած պայքարում:

Ղարաքիլիսայի ճակատամարտի սխեմա-քարտեզը



Այս ծանր օրերին հայ ժողովուրդը իր փրկությունը տեսնում էր սովետական Ռուսաստանի օգնության մեջ: Այդ իրողության գիտակցմամբ էլ Անդրանիկի ջոկատը Սևանի վրայով Դիլիջանից եկավ Նախիջևան և կասեցրեց սովետական Բաքվի վրա շարժվող թուրքական զորքերի առաջխաղացումը: Խոյի և Սալմաստի շրջանում թուրքական բանակի թիկունքին Անդրանիկի հանկարծակի հարվածը նրան ստիպեց կասեցնել հարձակումը Բաքվի վրա: Թուրքական յաթաղանի հետապնդումից փրկվեց նաև Պարսկաստան անցնող ավելի քան 60 հազար հայ գաղթական: Խոյում մարտերը շարունակվեցին մի քանի օր: Թուրքական զորքերը զգալի կորուստներ կրեցին: Ստանալով օգնական ուժեր, նրանք ստեղծեցին Անդրանիկի ջոկատը շրջապատելու վտանգ: Այդպիսի պայմաններում նա նահանջեց Ջուլֆա—Նախիջևանի շրջանը, որտեղ հսկողության տակ վերցրեց թուրքական զորքերին և զգալիորեն կասեցրեց նրանց առաջխաղացումը դեպի Բաքու:

1918 թ. հուլիսին Անդրանիկը Նախիջևանում հռչակեց սովետական իշխանություն և Կովկասի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանին հաղորդեց, թե ինքն իր ջոկատով գտնվում է Ռուսաստանի կենտրոնական իշխանության տրամադրության տակ և ենթարկվում է նրան: Պատասխան հեռագրում Ստ. Շահումյանը գրեց. «Ժողովրդական առաջնորդ Անդրանիկին: Ձեր հեռագիրն ստացել եմ: Լրիվ տեքստը հաղորդել եմ Մոսկվա, կենտրոնական կառավարությանը: Իմ կողմից հանձին Ձեզ ողջունում եմ իսկական ժողովրդական հերոսին»: Այնուհետև Ստ. Շահումյանը խնդրում էր «չխոնարհել հեղափոխական դրոշը և կապի ուղիներ գտնել դեպի սովետական Բաքու»: Իր հրամանում Անդրանիկը խստիվ նախազգուշացնում էր, որ սովետական իշխանությունը չճանաչող և նրա թշնամիներին օգնող անձինք օրենքից դուրս կհամարվեն և կենթարկվեն ամենախիստ պատասխանատվության: Իր սովետական կողմնորոշման մասին նա գրել է. «...Ղրկեցի այս հեռագիրը հայտնելու Մոսկվայի կառավարությանը, թե ես ու իմ բանակս և ժողովուրդը անկեղծ ու հավատարիմ ենք ռուսներուն»: Նախիջևանը սովետական Ռուսաստանի անբաժանելի մաս հռչակելն ունեցավ քաղաքական ու բարոյական հսկայական նշանակություն: Ամրանալով տեղում, Անդրանիկն ուզում էր Շուշի—Աղդամ—Եվլախի վրայով կապ հաստատել Բաքվի սովետական իշխանության հետ:

«Իզվեստիա», ապա նաև «Վեչերնիե իզվեստիա Մոսկովսկոգո սովետա» թերթերը ողջունեցին Անդրանիկի սովետական կողմնորոշումը, գտնելով, որ դա «սովետական իշխանության խոշոր հաղթանակն է»:

Հատկապես մուսավաթականներն ու մենշևիկները պատրաստ էին երկիրը հանձնել թուրքական ու գերմանական օկուպանտներին, միայն թե խուսափեին սովետական իշխանությունից: Օտարերկրյա օկուպանտների հետ հակահեղափոխական կուսակցությունների, հատկապես մուսավաթականների դավաճանական քաղաքականությունը հանգեցրեց Բաքվի կոմունայի անկմանը:

Մեստo печати.

Приложение № 10.

Телеграмма

Копия тел. № 12266.

Из Баку пр. 217

Москву Ленину

Москву Ленину.

Мной получена из Джульфы от армянского народного вождя Андроника следующая телеграмма: Комиссару по делам Кавказа Шаумяну 14 июля.

Безусловно подчиняясь Брест-Литовскому договору Нахичеванский с'езд, где в настоящее время нахожусь и я со своим отрядом об'явил себя неотделимой частью Российской республики. Прошу об'явить кому следует, что я со своим отрядом с сегодняшнего дня нахожусь в распоряжении и подчинении Центрального Российского Правительства. Вступлению турецких войск в пределы Нахичеванского уезда постараюсь воспрепятствовать. Жду ответа и распоряжения № 57. Ген.-Майор Андроник. Конец телеграмме. С своей стороны отвечу. Приветствуем с предложением держаться. Прошу вашего ответа 17 июля Шаумян.

*) Воспроизводится по подлиннику. С Ш

Ստ. Շահումյանի հեռագիրը Լենինին՝ Անդրանիկի հեռագրի առթիվ

Գերմանական ու թուրքական զինվորականության աջակցությամբ Անդրկովկասում մոլեգնում էր ներքին հակահեղափոխությունը: Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1918 թ. սեպտեմբերի 20-ին Թուրքիայից պահանջեց դադարեցնել կամայականությունն ու բռնությունը: Նա նշեց, որ իր գործողություններով Թուրքիան փաստորեն վերջ է դնում Ռուսաստանի ու Թուրքիայի միջև գոյություն ունեցող խաղաղ հարաբերություններին:

Գերմանական բլոկի պարտությունից հետո Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում սկսեցին իշխել անգլո-ամերիկյան իմպերիալիստները, որոնք երկպառակություն էին սերմանում երկրամասի ժողովուրդների միջև: Բայց աշխատավոր զանգվածները, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ պայքարելով սովետական իշխանության համար, ամրապնդում էին ինտերնացիոնալ միասնությունը: Վավերագրերից մեկում հաղորդվում է, որ «շովինիզմի, ազգայնական հալածանքի ամենաթեժ պահին կովկասյան երկրամասային կոմիտեն ոչ մի անգամ չխոնարհեց ինտերնացիոնալի մեծ դրոշը... Կովկասյան երկրամասային կոմիտեն հավատարիմ մնաց բանվորական ինտերնացիոնալի լոզունգին և Կովկասի ժողովրդական զանգվածներին միավորման կոչ արեց»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի հակասովետական քաղաքականությունը մեծ չարիք դարձավ երկրամասի ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի համար: Կապիտալիստների, խաների և բեգերի, ինչպես նաև օտարերկրյա իմպերիալիստների վրա հենվող այդ քաղաքականությունը ծնեց ազգային թշնամանք ու ներքին խոր հակասություններ:

Անդրկովկասյան սեյմում մենշևիկների, մուսավաթականների ու դաշնակցականների միջև ազգայնամոլությունն այն աստիճան սրվեց, որ նրանց ներկայացուցիչները՝ Չխենկելին, Ռամիշվիլին, Խատիսյանը, Քաջազնունին, Սահակյանը, Խան Խոյսկին, Հաջինսկին և ուրիշներ, կատաղի հակամարտության մեջ էին գտնվում: Այդ վայ-կառավարողներից յուրաքանչյուրն իր նպատակն էր համարում կողոպտել հարևան ազգին, բռնագրավել նրա հողերը: Եվ Սեյմն իր 47-օրյա տխրահռչակ գոյությունից հետո 1918 թ. մայիսի 26-ին ինքնալուծարքի ենթարկվեց: Սեյմում «պետական միաբանություն չստեղծվեց,— խոստովանեց մենշևիկ Ծերեթելին:— Անդրկովկասյան հանրապետությունը գոյություն ունեցավ սոսկ անունով»:

Մայիսի 28-ին Թիֆլիսում կայացած «Դաշնակցության ներկայացուցչական ժողովի և թաղային կոմիտեների» արտակարգ նիստը Հայաստանը հայտարարեց անկախ հանրապետություն: Մինչև կառավարություն կազմելը նրա ֆունկցիաների կատարումը դրվեց Հայոց ազգային խորհրդի վրա, որը մայիսի 30-ին իրեն հայտարարեց «Հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»: Վերջապես, հունիսին կազմվեց դաշնակցական կառավարություն, որը մինչև հուլիսի 17-ը իր գոյությունը քարշ տվեց Թիֆլիսում և ապա տեղափոխվեց Երևան: Օգոստոսի 1-ին բացվեց Հայաստանի պառլամենտի՝ խորհրդարանի նիստը, որը նույն Ազգային խորհուրդն էր: Դաշնակցական ջոջերը հետագայում նշեցին, որ «պառլամենտ չկար Հայաստանում... չկար և կառավարություն», դրանք ձև էին առանց բովանդակության: «Աշխատանք» թերթը գրում էր. «Փաստ է, որ Հայաստանում իրավական կառավարություն չկա, բացի թղթի վրա գոյություն ունենալուց»: Իսկ «Հայաստանի աշխատավորը» փաստարկում էր, որ երկրում թագավորում են «բռնությունը, կամայականությունն ու անիրավությունը»:

Դաշնակցական կառավարությունը, որն իր ներքին քաղաքականությամբ հենվում էր քաղաքի և գյուղի շահագործողների, իսկ արտաքին քաղաքականության ասպարեզում՝ իմպերիալիստական տերությունների վրա, որոնց ձեռքին խաղալիք էր դարձել, նորանոր չարիքներ բերեց սովի ու մահվան ճիրաններում տառապող հայ ժողովրդին:

Ազգային խորհրդի պատվիրակությունը (Ա. Խատիսյան, Հ. Քաջազնունի, Մ. Բաբաջանյանց) 1918 թ. հունիսի 4-ին թուրքերի հետ կնքեց Բաթումիի պայմանագիրը, որով փաստորեն Արևելյան Հայաստանը ևս դրվեց թուրք ջարդարարների ծանր լծի տակ: Այդ բոլորից հետո դաշնակցական կառավարության վարչապետ Ա. Խատիսյանը այնպիսի ստորաքարշության հասավ, որ հայտարարեց. «Եթե չլիներ սուլթանը, չէր լինի նաև ազատ Հայաստանը»: Հեգնանքի առարկա այսպես կոչված «ազատ Հայաստանը» վերածվեց պանթուրքիզմի ծրագրերին նպաստող գործիքի: Դեռ Բաթումիի բանակցությունների ժամանակ հայ ժողովրդի դահիճներից մեկը՝ Ջեմալ փաշան, հայտարարել էր. «Մենք



Երևանի ձիաքարշը



Ղանթարը նախասովետական Երևանում (Լ. Հակոբյանի կտավից)

պետք է ընդարձակվենք դեպի Արևելք, դեպի Բաքու, դեպի Դաղստան, դեպի Թուրքեստան ու Ադրբեջան: Մենք պետք է ճանապարհ ունենանք դեպի այդ երկրամասերը»: Այդ պայմաններում դաշնակցական կառավարությունը, վարելով հակասովետական քաղաքականություն, մերթ Գերմանիայի, մերթ Անգլիայի ու ԱՄՆ-ի և նույնիսկ հայ ժողովրդի դահիճ թուրք ջարդարարների գիրկն էր նետվում՝ ճնշելու համար հայ ժողովրդի հեղափոխական պայքարը, խափանելու նրա օրինական ձգտումը՝ տեղում իրականացնելու Մեծ հոկտեմբերի նվաճումները:

Դաշնակցական կառավարության տխրահռչակ իշխանության տարիներին Հայաստանի տնտեսությունն է՛լ ավելի քայքայվեց և կատարյալ ավերածության հասավ: Արդյունաբերական ձեռնարկությունների արտադրությունը խիստ կրճատվեց, իսկ

պղնձարդյունաբերությունը, որ մինչ պատերազմը Հայաստանի արդյունաբերական արտադրանքի 45 %-ն էր տալիս, բոլորովին դադարեց գործելուց: 1919 թ. Հայաստանի արդյունաբերության արտադրանքը, 1913 թ. համեմատությամբ, 12 անգամ կրճատվեց, իսկ տրանսպորտը գրեթե ամբողջովին քայքայվեց: Ծանր էր բանվորների վիճակը. չնչին աշխատավարձով նրանք աշխատում էին օրական 12—14 ժամ: Երևանի մի խումբ բանվորներ, նկարագրելով իրենց ողբալի վիճակը, գրում էին. «Եթե դուք շաբաթ օրերն անցնեք մեկ մոտ, կտեսնեք, որ մենք առավոտյան ժամը 7-ից մինչև գիշերվա ժամը 12-ը ոտքի վրա ենք... Նշանակում է 16 ժամ անընդհատ աշխատում ենք»: Բանվորները գների առասպելական բարձրացման պայմաններում չընչին աշխատավարձ էին ստանում, այն էլ 2—3 ամիս ուշացումով: 1920 թ. փետրվարին Սարիղամիշից բողոքում էին, թե արդեն «11-րդ օրն է ինչ երկաթուղային բանվորները առանց հացի են, իսկ դեկտեմբեր ամսվա (1919 թ.) ռոճիկները չեն ստացել»:

Կատարյալ քայքայման հասավ նաև գյուղատնտեսությունը, կրճատվեցին ցանքատարածությունները, խիստ ընկավ բերքատվությունը: Նախապատերազմյան 345 հազար հեկտար ցանքատարածության դիմաց 1919 թ. մնացել էր 82 հազար: Հարկերն ու պարհակները և դաժան հալածանքները գյուղացիությանը հասցրել էին ծայրահեղ աղքատության: Սովն ու համաճարակը մեծ կոհեր էին խլում: «Սովը և համաճարակը կոտորում են ժողովրդին,— գրում էր անգամ դաշնակցական «Հառաջ» թերթը...— Հազարավոր դիակներ անտեր ու անթաղ են մնացել»: Օրհասական էր տասնյակ հազարավոր անտուն ու անօթևան գաղթականների, որբ ու անօգնական երեխաների վիճակը: Բոլշևիկյան «Խոսք» թերթի հաղորդմամբ, օր չէր լինում, «որ ամեն գյուղում սովամահության դեպքեր չպատահեն, գյուղ չենք գտնում, որի պատերի տակ տասնյակներով, հարյուրներով անտեր, կմախքացած և սովամահության դռանը կանգնած կիսամեռ որբերի չհանդիպենք»:

Ահավոր չարիք էին դաշնակցականների կամայական բռնագրավումները: 1915 թ. նոյեմբերին, ինչպես հաղորդում էր «Մշակ» թերթի թղթակիցը, խուզարկում են Եղվարդ գյուղը, «գրավում են ինչ իրենց դուր է գալիս՝ յուղ, թխած հաց... աչքի տեսած ցորենի ամբողջ պաշարը. երեկ Արամ Մուրադխանյանի տանից տարան ունեցած բոլոր ցորենը: Մուրադխանյանի ընտանիքը բաղկացած է 18 հոգուց, նրանք այդ ամբողջ օրն ու այսօր սոսկալի հեծկլտանք են բարձրացրել... երկուսը դանակով ինքնասպանության փորձ են անում...»

«Խոսք» թերթում 1919 թ. փետրվարի 22-ին տպագրված «Հայ գյուղը դեմոկրատ հանրապետության մեջ» հոդվածում նկարագրվում է Նոր Բայազետի Ղարանլուխ գյուղի քայքայված ու մղձավանջային վիճակը, որտեղ «գյուղացու վերջին հացահատիկը ձեռքից խլել են... պինվորները գյուղացու տունը խուզարկելիս, իբր թե պետական իրեր գտնելու նպատակով, թալանել են գյուղացիներին... Չկա մի գյուղ, որտեղ գյուղացիները վերծ լինեն իրենց այդ «փրկարար ու պաշտպան» պինվորների թալանից: Այս բոլորի վրա ավելացնենք պրիստավի, գալավայի, ռեսի և միլիցիոների բռնությունները, ծեծը, աշկարա կաշառակերությունն ու վաշխառուների կեղեքումը, և այն ժամանակ ձեզ համար պարզ կլինի, որ հայ գյուղը կատարյալ դըժոխք է»:

Գյուղացիներից գանձում էին բազմաթիվ հարկեր, որոնց թիվը, օրինակ, Լոռվա «Չեկոք գոտում» հասնում էր 14-ի. դրանցից էին՝ բահրային տուրքը, հողային, կեմստվային հարկերը, ռազմական տուրքը և այլն: Մեծ չափերի էր հասնում պարհակային աշխատանքը, որը կատարվում էր պետության, կորքի և դաշնակցական աստիճանավորների համար: 1920 թ. հոկտեմբերին Էջմիածնից հայտնում էին, որ պարհակի գնացած 100 սայլից ոչ մեկը չի վերադարձել, «դաշտային աշխատանքները կանգնել են, անվերջ պահանջներ ենք ստանում, որ հնարավորություն չկա կատարելու»: Նույնիսկ դաշնակցական պառլամենտի հանձնաժողովը չէր կարողացել թաքցնել, որ 1919 թ. սեպտեմբեր—նոյեմբեր ամիսներին Նոր Բայազետի գյուղերում սովից մահացել էր 54 հոգի: Նույն հանձնաժողովի տվյալներով բազմաթիվ գյուղեր և ընտանիքներ կան, որոնք «մերկ են՝ այդ բառի իսկական իմաստով: Կանայք, երեխաներն ու տղամարդիկ հաճախ տնից դուրս գալու հնարավորություն անգամ չունեն՝ մերկության պատճառով»:

Գյուղացիները ո՛չ հող և ո՛չ էլ ազատություն ստացան. «հեղափոխական ճանապարհով խլված հողը հետ են առնում գյուղացուց,— ասված էր «Սպարտակ» կազմակերպության 1919 թ. օգոստոսի 1-ի կոչում,— և վերադարձնում են կալվածատիրոջը...» Ս. Օրջոնիկիձեն 1918 թ. հոկտեմբերի 12-ին Վ. Ի. Լենինին հաղորդում էր. «Հայաստանի վիճակը ողբերգական է. Երևանի նահանգի երկու գավառների ոչ մեծ հողակտորի վրա կենտրոնացել են 600 հազար գաղթականներ, որոնք սովից և համաճարակից մասսայաբար կոտորվում են... Հայ-

կական բնակչությունն օգնություն է սպասում սովետական Ռուսաստանից»:

Մեծ չափերի հասնող ճնշումը, կողոպուտն ու սպեկուլյացիան, սանձազերծված անօրինականությունը ժողովրդին հյուծում ու մահվան էին դատապարտում: Անկում ապրեցին մշակույթը, արվեստն ու գիտությունը: Փակվեցին դպրոցներն ու մշակույթի օջախները, 1920 թ. Ալեքսանդրապոլում հիմնադրված համալսարանը չգործեց, մնաց թղթի վրա:

Իսկ ամենասարսափելին ազգամիջյան ընդհարումներն ու ջարդերն էին, որ անընդհատ հրահրում էին ազգամոլ կուսակցությունները, բուրժուական նացիոնալիստները: Հեղափոխական պայքարի ամեն մի փորձ արյան մեջ էր խեղդվում: Դաշնակցական կառավարողները դաժան դատաստան էին տեսնում սովետական իշխանության համար պայքարի ելած աշխատավորների հետ:

Սկզբում գերմանա-թուրքական, իսկ հետո անգլո-ամերիկյան ու ֆրանսիական ինտերվենտները Հայաստանում կատարյալ գաղութային վարչակարգ ստեղծեցին: ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կողմից Հայաստանի «գերագույն կոմիսար» նշանակվեց ամերիկյան գնդապետ Հասկելը, որն առաջնորդվելով «Բաժանիր, որ տիրես» սկըզբունքով, ազգամիջյան ջարդեր էր հրահրում: Այդպես 1918 թ. դեկտեմբերին սկսվեց պատերազմը մենշևիկյան Վրաստանի և դաշնակցական Հայաստանի միջև՝ հայ և վրաց ժողովուրդների եղբայրասպան պատերազմը, որի հետևանքով այնտեղ ստեղծված «Չեզոք գոտում» հաստատվեց անգլո-ֆրանսիական ինտերվենտների գերիշխանությունը: «Եթե Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերությունների ամբողջ պատմությունը,— գրել է Ս. Օրջոնիկիձեն,— այդ երկու եղբայրական ժողովուրդների միջև երբեք պատերազմ չի տեսել, ապա բավական եղավ, թույլ տվեք ասել, սոցիալիստների՝ մենշևիկների ու դաշնակցականների, իշխանության գլուխ անցնելը, և երկու եղբայրական ժողովուրդները մահացու կռիվ սկսեցին...» «Նոր խոսք» թերթը փաստարկում էր, որ «Կովկասն արդեն ընկել է միջազգային կապիտալիստական մրցման ցանցի մեջ, իսկ մանր ժողովուրդները վաղուց գործիք են դարձել խոշոր գիշատիչների ձեռքում... Ընդհարվեցին հայը և վրացին, իսկ վիճելի տարածությունը հարուստ պղնձահանքերով ընկավ եվրոպական գայլերի ձեռքը»:

Մենշևիկյան-դաշնակցական պատերազմը սկըսվելու նախորդ օրը՝ 1918 թ. դեկտեմբերի 8-ին, լույս տեսավ «Կոմունա» թերթը, որտեղ ժողովրդին ուղղված կոչում ասված էր, թե մենշևիկներն ու դաշնակցականները իմպերիալիստների թելադրանքով ժողովրդին «քշել են եղբայրասպան պատերազմի... Սթափվեցե՛ք, ապստամբեցե՛ք արյունարբու դավադիրների դեմ»: Թերթը հայ և վրաց աշխատավորներին կոչ էր անում տապալել բռնակալների իշխանությունը և մղել ոչ թե սահմանների, այլ իշխանության կռիվ, ոչ թե ազգային-բուրժուական, այլ սոցիալիստական պետություն ստեղծելու կռիվ:

Սակայն բուրժուական նացիոնալիստները և նրանց օտարերկրյա տերերը շարունակում էին բռնություններն ու հալածանքներն աշխատավոր մասսաների նկատմամբ: 1919 թ. մարտին անգլիական զորքերի հրամանատարը դաշնակցական կառավարությանը կարգադրում է վերջ տալ բոլշևիկների գործունեությանն Ալեքսանդրապոլում: Դաշնակցական կառավարությունը սերտ կապերի մեջ էր Դենիկինի հետ: Ա. Միկոյանը ժամանակին հաղորդել է, որ դաշնակցական կառավարությունը, «վայելելով դաշնակիցների ու Դենիկինի համակրանքն ու աջակցությունը, ամեն կերպ պաշտպանում է նրանց, իսկ Դենիկինի հետ գտնվում է ռազմական գաղտնի դաշինքի մեջ»: Դաշնակցականները նույնիսկ Կարսի բերդից թնդանոթներ և այլ ռազմամթերք ուղարկեցին Դենիկինի բանակին:

Օտարերկրյա զավթիչները հեղափոխական շարժումները ճնշելու համար երկրի ներսում ստեղծել էին լրտեսական ցանց, հսկողության տակ վերցրել փոստի, հեռագրատան և այլ հիմնարկների գործունեությունը: Նրանք առանց այն էլ քայքայված երկրի հարստությունը՝ բամբակը, կաշին, պղինձը, խմիչքը և այլ ապրանքներ, բռնագրավում ու տանում էին:

Ահա այդպիսին էր հայ ժողովրդի վիճակը դաշնակցական վարչակարգի և իմպերիալիստական տերությունների դաժան քաղաքականության պայմաններում: Ազատագրման հույսի աղբյուրը սովետական Ռուսաստանն էր: 1919 թ. Երևանում կայացած բոլշևիկների սեպտեմբերյան խորհրդակցությունը, քննարկելով հեղափոխական պայքարի մի շարք հրատապ հարցեր, ընտրեց ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե (Արմենկոմ): Առավել կարևոր նշանակություն ունեցավ 1920 թ. հունվարյան կոնֆերանսը, որը խնդիր դրեց զինված ապստամբության միջոցով տապալել դաշնակցական կարգերը, իսկ արդեն նույն թվականի հունիսին հիմք դրվեց Հայաստանի կոմունիստական կուսակցությանը: Մինչ այդ հայկական շրջաններում, Անդրկովկասում ու Ռուսաստանում արևմտահայ գաղթականությանն օգնելու և բոլշևիկյան գաղափարները պրոպագանդելու գործում ակտիվ աշխատանք էր տանում Գ. Հայկունու գլխավորած «Հայաստանի կոմու-

նիստական կուսակցություն» կազմակերպությունը, որի ներկայացուցիչները մասնակցեցին Կոմինտերնի հիմնադրմանը և ՌԿ(բ)Կ VIII համագումարի աշխատանքներին:

Բոլշևիկները միաժամանակ մեծ ուշադրություն էին դարձնում Հայաստանի երիտասարդության մեջ տարվող աշխատանքներին: 1919 թ. Երևանում ստեղծված երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» միությունը իր կազմակերպությունները ստեղծեց Հայաստանի մի շարք շրջաններում՝ Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում, Դիլիջանում և այլ վայրերում: «Սպարտակի» ղեկավարները՝ Ղ. Ղուկասյանը, Ա. Բուդաղյանը և Ա. Խանջյանը, հանդես եկան որպես հեղափոխական պայքարի եռանդուն մարտիկներ: Նրանց ջանքերով 1919 թ. մայիսի 1-ին լույս տեսավ «Սպարտակ» թերթը, որը, սակայն, շուտով, անգլիական օկուպանտների պահանջով, արգելվեց:

Տիրող բռնությունների ու հալածանքների պայմաններում գնալով ուժեղանում էին դժգոհություններն ու աշխատավորների հակակառավարական ելույթները: 1918 թ. օգոստոսին Ղազախի շրջանի գյուղացիական համագումարը որոշեց կապվել Բաքվի հետ և տեղում հաստատել սովետական իշխանություն: Նույն ամսին Ապարանի ու Եղվարդի գյուղացիները զինված ելույթ ունեցան և ընդհարվեցին դաշնակցական զորամասի հետ, իսկ հոկտեմբերին Շահրիզ (Գեղամավան) գյուղի ապըստամբությունը ճնշվեց զենքի ուժով: Նոյեմբերին Մեծ Մազրա գյուղի բնակիչները հրաժարվեցին հարկ վճարել, որի պատճառով գյուղը ռմբակոծվեց: 1918 թ. հոկտեմբերի 20-ին Շամշադինի շրջանի Ղուլալի (Այգեձոր) գյուղի զինված ելույթը ճնշվեց դաշնակցական միլիցիայի կողմից: Զոդի ապստամբությունը ևս արյան մեջ խեղդվեց: Կոթի (Շավարշավան) գյուղացիները իշխանության ներկայացուցիչներին դուրս քշեցին գյուղից և հայտարարեցին, որ այլևս նրանց չեն ենթարկվում: 1919 թ. փետըրվարի 23-ի մի հաղորդման մեջ ասված էր. «Հուզումները հասել են այն աստիճանի, որ մի շարք հայկական գնդեր ապստամբել են Հայաստանի կառավարության դեմ և զինված փողոց են դուրս եկել գոյություն ունեցող կառավարությունը տապալելու, ամբողջ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար»:

Ալեքսանդրապոլում աշխատավորների մեջ հուժկու վրդովմունք առաջացրեց 1920 թ. հունվարի 15-ին բանվորների ձերբակալությունը, որի դեմ ուսանող երիտասարդների միությունը իր բողոքը հայտնեց՝ բնութագրելով այդ ակտը որպես «ոստիկանական վերաբերմունք և հին ռեժիմի բռնություն»:

1918 թ. սեպտեմբերի 22-ից Երևանում Ա. Մելիքյանի խմբագրությամբ լույս տեսնող բոլշևիկյան «Խոսք» թերթը մեծ դեր կատարեց աշխատավոր մասսաներին հեղափոխական պայքարի պատրաստելու գործում: Անգլիական գաղութարարների և դաշնակցականների կողմից թերթը 1919 թ. մարտին արգելվեց:

Դաշնակցականները, ինչպես նաև երկրամասի բուրժուական մյուս ազգայնականները, իրենց գործողություններով մերկացնում էին իրենց, և ժողովուրդը ի դեմս նրանց տեսնում էր իր թշնամիներին: Կոմինտերնի I կոնգրեսում Հայաստանի ներկայացուցչի զեկուցման մեջ ժողովրդական զանգվածների վրա բոլշևիկների ազդեցության ուժեղացման մասին շատ փաստեր բերվեցին: Հատկապես նշվեց, որ հեղափոխական շարժումն ուժեղացել է երկաթուղայինների, Սարիղամիշի և այլ զորամասերի շրջանում, իսկ արհեստակցական միությունները վերածվել են «կոմունիստների կուսակցության գլխավորությամբ բանվոր դասակարգի մարտական հեղափոխական մարմինների»:

Կարմիր բանակը, Հյուսիսային Կովկասում ջախջախելով դենիկինյան հորդաներին, մոտենում էր Անդրկովկասի սահմաններին: Դա ամբողջ Անդրկովկասում առաջ բերեց հեղափոխական ուժերի համընդհանուր վերելք: Ադրբեջանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները 1920 թ. ապրիլի 27-ի լույս 28-ի գիշերը տապալեցին մուսավաթական վարչակարգը և հաստատեցին սովետական իշխանություն:

Ադրբեջանում սովետական իշխանության հաղթանակը պատմական իրադարձություն էր ադրբեջանական ժողովրդի կյանքում և միաժամանակ դարձավ ամբողջ Անդրկովկասում մեծագույն իրագործումների սկիզբը: Սովետական Ադրբեջանը, Ս. Օրջոնիկիձեի բնութագրմամբ, «մեր ելակետն էր, որտեղից մենք գրոհեցինք մենշևիկների ու դաշնակցականների ազգայնական-բուրժուական կառավարությունների վրա»: Ադրբեջանում սովետական իշխանության հաստատումը հաղթանակի հավատ ներշնչեց նաև Հայաստանի ու Վրաստանի աշխատավորության մեջ: ՌԿ(բ)Կ Հայկական կոմիտեն Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի անվամբ ուղարկած ողջույնում հայտնում էր, որ Հայաստանի աշխատավորները, «թևավորված այդ դասակարգային հեղափոխական ներքին ճակատում, ինչպես նաև դաշնակցական դավաճանական կառավարության նկատմամբ տարած այդ հաղթանակով, հավատում են, որ մոտ է իրենց հաղթանակի ժամը»: Կարմիր բանակը որքան մոտենում էր Հայաստանի սահմաններին, այնքան

Ղուկաս Ղուկասյան

Բագրատ Ղարիբջանյան



Ստեփան Ալավերդյան

ավելի շոշափելի էր դառնում աշխատավորական պանգվածների հեղափոխական վերելքը: Գյուղացիները Հայաստանից խմբովին անցնում էին Սովետական Ադրբեջան և կարմիր բանակի օգնությամբ կազմակերպում պինվորական ջոկատներ:

Մայիսմեկյան ցույցերը Երևանում և Հայաստանի շատ քաղաքներում անցան հեղափոխական աննախընթաց վերելքի պայմաններում: Ալեքսանդրապոլը դարձավ դասակարգային կռիվների կենտրոն:

Հայաստանում հեղափոխական աշխատանքը գլխավորելու համար ՌԿ(բ)Կ Կենտկոմը և Կովկասյան երկրային կոմիտեն այնտեղ են ուղարկում մի շարք կուսակցական աշխատողների: Նրանց թվում էր ականավոր բոլշևիկ Ս. Ալավերդյանը, որը Երևան է ժամանում 1918 թ. նոյեմբերին: Առաջին խոշոր քայլը, որ կատարվեց Ս. Ալավերդյանի գալուց հետո, դա այն էր, որ բոլշևիկները վերջնականապես սահմանազատվեցին մենշևիկներից և տեղում ստեղծեցին Երևանի բոլշևիկյան կազմակերպության կոմիտե: Այդ առթիվ «Խոսք» թերթը 1918 թ. նոյեմբերի 30-ի համարում հայտարարեց, որ «կազմված է Երևանի կոմունիստական կազմակերպություն», որը մինչև համագումարի հրավիրումը «հանրապետության սահմաններում հանդիսանալու է կուսակցության գերագույն օրգանը»:

Մենշևիկները Երևանում հրատարակում էին «Կայծ» թերթը և ձգտում բոլշևիկներին էլ նրան մասնակից դարձնել: Բոլշևիկյան «Կոմունա» թերթը, բացահայտելով մենշևիկների նպատակը, գրում էր. «Մենք ամենակատեգորիկ կերպով հայտարարում ենք, որ չկա ոչ մի բոլշևիկ, որ գործակցելիս լինի մենշևիկների հետ»: Ալեքսանդրապոլում մենշևիկներից սահմանազատվելու գործում կարևոր դեր են կատարում այստեղ գործուղված ականավոր բոլշևիկ Ե. Սևյանը, իսկ Քավթառլուի գավառամասի շրջակա գյուղերում՝ Ա. Փանյանը: 1919 թ. գարնանը Գորիսում ստեղծված բոլշևիկյան ընդհատակյա գավառային կազմակերպությունը Ք. Մկրտչյանի, Մ. Մաշուրյանի, Բ. Հարությունյանի ղեկավարությամբ լայն աշխատանք է ծավալում նաև գավառի գյուղերում: Նոր Բայազետում 1919 թ. մարտին գործում էր Բ. Բատիկյանի գլխավորությամբ կազմված բոլշևիկյան կոմիտեն: Նույն թվականի աշնանն այստեղ մեկնած Հ. Սարուխանյանի եռանդուն գործունեության շնորհիվ հեղափոխական աշխատանքն ավելի է աշխուժանում:

1919 թ. մայիսին տեղի ունեցավ Շամշադինի առաջին կուսակցական կոնֆերանսը, որտեղ ընտրված շրջանային կոմիտեն սերտ կապ հաստատեց Բաքվի, Թիֆլիսի և Թովուզի ՌԿ(բ)Կ կազմակերպությունների հետ:

ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի հանձնարարությամբ 1919 թ. հուլիսին Ա. Մռավյանը, գալով Հայաստան, ծանոթանում է Երևանի, Աշտարակի և այլ շրջանների բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքներին ու սերտ կապ հաստատում նրանց հետ:



Բատիկ Բատիկյան



Հովհաննես Սարուխանյան



Սարգիս Մուսայելյան

Հեղափոխական պայքարի ալիքն է՛լ ավելի ուժեղացավ, երբ 11-րդ կարմիր բանակի զորամասերը մոտեցան Հայաստանի սահմանին: 1920 թ. մայիսմեկյան ցույցերը դարձան հայ աշխատավորական մասսաների ուժերի ստուգատես: Դաշնակցական բանակում ևս ուժեղանում էին հեղափոխական տրամադրությունները: Ս. Մուսայելյանի ղեկավարած զրահագնացքի անձնակազմն առաջինը բարձրացրեց ապստամբության դրոշը և կոչ արեց տապալել դաշնակցականների իշխանությունը: Դաշնակցականները մայիսի 4-ին Ս. Մուսայելյանի հետ բանակցություններ վարելու համար նրա մոտ ուղարկեցին Ալեքսանդրապոլի գավառային կոմիսար Լոռեցյանին և մոբիլիզացիայի կոմիսար Վալադյանին: Բոլշևիկներ Ավիսը, Ս. Մուսայելյանն ու Ա. Գոգունցը դաշնակցականներից վճռականապես պահանջեցին հեռանալ իշխանությունից: «Դաշնակցականների կուսակցական կոմիտեն,— գրել է Ս. Մուսայելյանը,— ինձ և իմ բոլոր աշխատակիցներին տեռորի դատապարտեց... Փորձեր եղան պայթեցնելու իմ գնացքը կամ ուժով գրավելու այն, մարդիկ էին նշանակված, որոնք պետք է ինձ խփեին և գնացքը խլեին... Հեղաշրջումը օրվա խնդիր էր դարձել»: Ալեքսանդրապոլի կայարանում իշխանությունը գտնվում էր զրահապատի հրամանատարության ձեռքին: Երբ դաշնակցական գեներալը կառավարության անունից հեռախոսով առաջարկում է անձնատուր լինել, Ս. Մուսայելյանը պատասխանում է. «Թող չջանան շուռ տալ պատմության անիվը, թող չփորձեն կանգնեցնել իրադարձությունների բնական ընթացքը, դաշնակցական կառավարության երգը արդեն երգված է, և մենք երկրի բոլոր կենդանի ուժերին կոչ ենք անում միավորվել կարմիր բանակի դրոշի շուրջը և տառապյալ հայ ժողովրդին դուրս բերել դաշնակների ստեղծած ողբերգական վիճակից»:

Մայիսի 7-ին, կայարանում, »Վարդան զորավար» զրահագնացքում կայացած Հայաստանի բոլշևիկների ներկայացուցիչների խորհրդակցությունը որոշեց սկսել զինված ապստամբություն, որը ղեկավարելու համար կազմվեց ռազմահեղափոխական կոմիտե: Հեղկոմներ ստեղծվեցին նաև մի շարք գյուղերում ու քաղաքներում:

Արդեն 1920 թ. մայիսի 8-ին Ս. Օրջոնիկիձեն Վ. Ի. Լենինին հաղորդեց, որ սովետական իշխանության հաղթանակը Բաքվում Հայաստանի աշխատավորական զանգվածների մեջ առաջ է բերել հանդիսավոր ու բերկրալի տրամադրություն, «Երևանում ու Ալեքսանդրապոլում ավերված են դաշնակցական կուսակցական բոլոր շենքերը: Լիդերների դիմանկարները պատառոտել են ու այրել»:

1920 թ. մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում ստեղծված ռազմահեղափոխական կոմիտեն Հայաստանում հռչակեց սովետական իշխանություն: Հեղափոխական շարժումն ընդգրկեց բազմաթիվ շրջաններ ու գյուղական վայրեր: Հատկապես ակտիվ աշխատանք տարան Քավթառլուի ենթաշրջանի բոլշևիկները, որոնք կազմեցին հեղկոմ Ս. Փան-

յանի գլխավորությամբ: Ապստամբեցին նաև Կարսի, Սարիղամիշի, Նոր Բայազետի, Դիլիջանի, Զանգեզուրի և այլ շրջանների աշխատավորները: Հեղկոմը մայիսի 9-ին Կարսում արտակարգ դրություն հայտարարեց և իր հսկողության տակ վերցրեց երկաթուղային կայարանը, փոստը, բանկը, պարենավորման արհեստանոցները և այլ հիմնարկներ: Մայիսի 10—14-ին այստեղ կատաղի մարտեր ծավալվեցին սովետական իշխանության համար: Սակայն ուժերն անհավասար էին, և հեղկոմի անդամները որոշեցին նահանջել դեպի Ալեքսանդրապոլ: Մայիսի 14-ին Արգինայի ձորում՝ անհավասար մարտերում հերոսի մահով կոհվեցին Ղ. Ղուկասյանը, Ս. Ծառուկյանը, Հ. Մանուկյանը, Ք. Խաչատրյանը և ուրիշներ:

Մայիսի 10-ին Սարիղամիշի ռազմահեղափոխական կոմիտեն Ա. Ճուղուրյանի գլխավորությամբ գրավեց քաղաքային վարչության շենքը և հայտարարեց սովետական իշխանություն: Հատկապես կարևոր դեր կատարեց հայկական բանակի 4-րդ գունդը, որը հայտնի էր իր բոլշևիկյան տրամադրություններով: Կարսում սովետական իշխանության անկումից հետո մայիսի 18-ին Սարիղամիշում ևս ապստամբները տեղի տվեցին: Ապստամբության դրոշ բարձրացրին նաև Իգդիրի աշխատավորները, որի ղեկավար կազմը ձերբակալվեց և նետվեց Երևանի բանտը:

Հեղափոխական շարժումը մեծ թափ ընդունեց Նոր Բայազետում. մայիսի 17-ին այստեղ հաստատվեց սովետական իշխանություն: Ապստամբները, շարժվելով դեպի Ելենովկա, նպատակ էին դնում կապ հաստատել Ալեքսանդրապոլի հետ, տեղյակ չլինելով, որ այնտեղ սովետական իշխանությունն արդեն տապալվել է: Մայիսի 19-ին Նոր Բայազետում ևս ապստամբությունը ճնշվեց: Ապստամբությունը Շամշադինում սկսվեց մայիսի 14-ին և աստիճանաբար ընդգրկեց Ղրղի (Արծվաբերդ), Նորաշեն, Չորաթան և այլ գյուղեր: Մայիսի 20-ին հայկական բանակի 6-րդ գնդի Սև Քարում գտնվող վաշտը, անցնելով բոլշևիկների կողմը, Ս. Հակոբջանյանի գլխավորությամբ անցնում է Քարվանսարա: Գնդին օգնության է գալիս Շ. Ամիրխանյանի գլխավորած ժողովրդական միլիցիայի ջոկատը: Այստեղ ևս հռչակվում է սովետական իշխանություն: Քարվանսարայի հեղկոմը մայիսի 21-ին սովետական իշխանությունը պաշտպանելու կոչով դիմում է ժողովրդին և միաժամանակ օգնություն խնդրում 11.րդ կարմիր բանակի հրամանատարությունից: Նույն օրը կարմիր բանակի մի ջոկատ է ժամանում Քարվանսարա և մեծ խանդավառությամբ է ընդունվում բնակչության կողմից: «Ազգաբնակչությունը դիմավորեց նրան աղ ու հացով,—հաղորդվում է մի փաստաթղթում,—և արցունքով աղերսում էր հրամանատարին՝ պաշտպանել Երևանի վրա ապստամբների հետագա արշավանքը...» Աչաջուր գյուղի աշխատավորները հայտարարում էին, որ, «եթե մեկ հետ լինեն ռուս կարմիրբանակայինները, մենք հավատացած կլինենք մեր հաղթանակի մեջ»: Դիլիջանը ևս անցավ ապստամբների ձեռքը:

Հեղափոխական շարժումներ սկսվեցին նաև Զանգեզուրում և այլ վայրերում: Սակայն դաշնակցական կառավարությունը կարողացավ համախմբել բոլոր հետադիմական ուժերին և ամենուր ճնշել ու արյան մեջ խեղդել մայիսյան ապստամբությունը: Ալեքսանդրապոլում մայիսի 14-ին գործադրված սպանդը և այնտեղ սովետական կարգերի տապալումը բացասաբար անդրադարձան ամբողջ երկրում ծայր առած հեղափոխական շարժման վրա: Դաշնակցական տեռորի կոհը դարձան Ս. Ալավերդյանը, Ս. Մուսայելյանը, Հ. Սարուխանյանը, Բ. Ղարիբջանյանը, Ա. Փանյանը, Ղ. Ղուկասյանը, Ե. Սևյանը, Վ. Ալեքսեևը, Բ. Հարությունյանը և շատ ուրիշներ:

Ապստամբության պարտության պատճառներից էր այն, որ նրա ղեկավարությունը, ինչպես նաև Արմենկոմը չունեին վճռական, միասնական ու հարձակողական գործողությունների մշակված գիծ: Ապստամբությունները Հայաստանի տարբեր շրջաններում սկսվեցին տարբեր ժամանակ, իրարից կտրված: Դա էլ իր հերթին դաշնակցական կառավարությանը հնարավորություն տվեց անջատ-անջատ ճնշելու ապստամբությունը: Ոչ բոլոր քաղաքներում բանվորական և զինվորական հեղափոխական ջոկատները կարողացան պատշաճ կապ ստեղծել գյուղական չքավորական մասսաների հետ և օգտագործել սոցիալիստական հեղափոխության կարևոր ռեզերվը գյուղում: Մինչդեռ, դրան հակառակ, դաշնակցականները, գյուղում իրենց ազատ զգալով, կարողացան կազմակերպել իրենց սև ուժերը և դրանք դուրս բերել քաղաքի դեմ, հեղափոխական մարտիկների դեմ: Հայտնի է, որ մարքսիզմը ապստամբությանը մոտենում է որպես կատարյալ արվեստի, նրա հաղթանակի կարևոր պայմաններից մեկը համարելով այն, որ սկսելով ապստամբությունը, պետք է կանգ չառնել, որ պաշտպանությունը զինված ապստամբության մահն է: Մինչդեռ Մայիսյան ապստամբության ժամանակ, սկսելով ապստամբությունը, հեղափոխական ուժերը ընդհանուր ճակատով հարձակման չանցան, հանդես բերեցին դանդաղկոտություն:

Անհրաժեշտ է նշել նաև կարևոր այն հանգամանքը, որ կարմիր բանակը 1920 թ. մայիսին

ստեղծված ներքին և միջազգային որոշ հանգամանքների պատճառով չկարողացավ օգնության հասնել Հայաստանի ապստամբ աշխատավորությանը: Նա զբաղված էր Ադրբեջանի որոշ վայրերում հակասովետական ավանտյուրան ճնշելով:

Մայիսյան ապստամբությունը համաժողովրդական հզոր շարժում էր, որը հսկայական դեր խաղաց մասսաների դաստիարակության գործում, հիմքից խարխլեց դաշնակցականների տիրապետությունը և ցույց տվեց, որ նրա օրերը հաշված են:

Մայիսյան ապստամբության առաջին տարեդարձի կապակցությամբ Ալ. Մյասնիկյանն ասել է. «Խորհրդային իշխանության սկիզբը անցյալ տարվա Մայիսյան ապստամբությունն է: Դեռ այն ժամանակ կարող էինք ասել, որ խորհրդային իշխանության հաղթանակը ապահովված է, քանի կա աշխատավորություն, որի վրա խորհրդային իշխանությունը կարող էր հենվել երկու ոտքով»:

Մայիսյան ապստամբությունը, չնայած պարտությանը, հսկայական դեր խաղաց մասսաների հեղափոխականացման գործում: Կոփվելով նրա բոցերի մեջ, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ամիսներ հետո անցան վճռական մարտի և տապալեցին շահագործողների տիրապետությունը:

* * *

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Հայկական հարցն արևմտյան իմպերիալիստական պետությունների ձեռքին դարձավ սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարի օղակներից մեկը:

1918 թ. սկզբներին հայկական վեց վիլայեթները համարյա ամբողջովին մաքրված էին թուրքական զորքերից և գրավված ռուսական զորքերի ու հայկական ազգային զորամասերի կողմից: Նահանջելիս ռուսական զորքն այդ շրջաններում թողեց մեծ քանակությամբ զենք, ռազմամթերք, պարեն ու հանդերձանք:

Թուրք ջարդարարները, օգտվելով առիթից, սկըսեցին իրենց զորքն արագորեն առաջ շարժել և գրավել ռուսական զորքերի թողած շրջանները: Նրանք գրավեցին ամբողջ Արևմտյան Հայաստանը, վտանգի տակ դրին նաև Արևելյան Հայաստանը:

Թուրքիան, Բաթումում շարունակելով Հայաստանի նկատմամբ թալանչիական քաղաքականությունը, համաձայնեց տալ մի չնչին լեռնոտ տերիտորիա՝ մոտ 10 հազար քառ. վերստ՝ Սևանա լճի արևելյան և հարավարևելյան կողմերում: Դրա դիմաց Բաթումում դաշնակցական պատվիրակության անդամները՝ Ա. Ահարոնյանն ու Ա. Խատիսյանը, իրենց գոհունակությունը հայտնեցին թուրքական կառավարությանը:

Երբ 1918 թ. աշնանը գերմանա-թուրքական կոալիցիան պարտություն կրեց, Ա. Ահարոնյանը մեկնեց Ֆրանսիա՝ դաշնակիցներին պահանջներ ներկայացնելու նպատակով: Այդ նույն ժամանակ արևմտահայերը Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ կազմեցին առանձին պատվիրակություն, որը դաշնակիցների Գերագույն խորհրդում պետք է պաշտպաներ արևմտահայերի շահերը: Այդ երկու պատվիրակությունները երկարատև գժտություններից հետո, վերջապես, համաձայնության եկան և 1919 թ. փետրվարի 12-ին «անկախ Հայաստան» ստեղծելու պահանջով համատեղ պահանջագիր ներկայացրին Խաղաղության կոնֆերանսին: Այդ պահանջագրով «անկախ Հայաստանը» պետք է ընդգրկեր Կիլիկիան, Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները, ինչպես նաև Տրապիզոնի վիլայեթը:

Թուրքիան 1918 թ. Պաղեստինի ճակատում անգլո-ֆրանսիական զորքերից լուրջ պարտություն կրեց: Այս ճակատում անգլո-ֆրանսիական զորքերը կռվում էին անգլիացի գեներալ Ալեմբիի հրամանատարությամբ, որի մեջ էր մտնում նաև Արևելյան լեգեոնը (կամ Հայկական լեգեոնը), թվով երեք գումարտակ (մոտ 2000 հոգի): Հայկական լեգեոնը հատկապես աչքի ընկավ 1918 թ. սեպտեմբերի 19-ի Արարայի ճակատամարտում թուրքական զորքերի դեմ տարած հաղթանակում:

Հայկական լեգեոնը ֆրանսիական զորքերին ակտիվ օգնություն ցույց տվեց նաև Կիլիկիան գրավելիս: Տեղահան արված հայերի մի մասն սկսեց վերադառնալ և սկսել իր նախկին կյանքը: 1919 թ. մայիսին Կիլիկիա ժամանած ֆրանսիական կառավարության կոմիսար գնդապետ Բրեմոնը հայտարարեց, թե իբր իրենք մտահոգված են անկախ հայկական պետություն ստեղծելու գործով: «Դաշնակիցներս շատ երկար խորհեցանք այս մասին,— ասել է նա:— Մեր ցանկությունն է, որ հայերը տեր դառնան իրենց երկրին»: Ֆրանսիական իմպերիալիստները Կիլիկիայի հայությանը մի կողմից գայթակղեցնում էին իրենց «բարեկամական» խոստումներով, իսկ մյուս կողմից՝ Հայկական լեգեոնի գոյությամբ, որը, Լեռյի արտահայտությամբ, հայկական շրջանների համար պետք է հանդիսանար «հայ քաղաքական ապագայի այն ամուր նեցուկը, որի վրա կարծում էին, թե պիտի կառուցվեր ոչ միայն Կիլիկիայի, այլև ամբողջ Թուրքիայի Հայաստանի բախտը»:

Կատաղի ու ավերիչ պատերազմական գործողությունները Կիլիկիայում շարունակվեցին մոտ

երկու տարի: «Դաշնակից» ֆրանսիացիները հայերին փաստորեն թողեցին թուրքական զորքերի դեմ մեն-մենակ: Քեմալականների հարձակումները Կիլիկիայի վրա 1920 թ. ավելի ուժեղացան: Հայերը թուրք ջարդարարներին հերոսական դիմադրություն էին ցույց տալիս: Դրա փայլուն օրինակն էր Հաճըն քաղաքի հերոսական պաշտպանությունը, որը տևեց 7 ամիս 8 օր: Պաշարված լինելով և դրսից որևէ օգնություն չստանալով, քաղաքի հայ բնակչությունը հերոսաբար դիմադրում էր թշնամուն: Բազմաթիվ այլ քաղաքների ու բնակավայրերի պաշտպանության ժամանակ հայերը կրկին ցույց տվին հայրենասիրության և խիզախության փայլուն օրինակներ: Բայց թուրքերի գերակշռող ուժերը մեծ զոհերի գնով կարողացան գրավել քաղաքներն ու գյուղերը և ավերել դրանք: Հիմնովին ավերվեց հերոսական Հաճըն քաղաքը, որը պատերազմից առաջ ուներ 25 հազար բնակիչ: Գրավելով քաղաքը, քեմալականները կազմակերպեցին սոսկալի ջարդ: 10 հազար բնակչությունից փրկվեց միայն 480 հոգի:

Հայ բնակչության նույնպիսի ջարդ կազմակերպվեց նաև Մարաշ քաղաքում, որտեղ, ինչպես գրում է Լեոն, ֆրանսիական մոտ 3000 զինվոր «լոկ ականատեսի դեր էին կատարում հայերի կոտորածների հանդեպ... թուրքական զորքերը հրդեհեցին հայկական գյուղերն ու քաղաքները, կոտորեցին հազարավոր անօգնական կանանց, ծերերի և երեխաների: Այդ բոլորից հետո 1920 թ. ապրիլին Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Քերզոնը լորդերի պալատում հայտարարեց, թե Կիլիկիան պետք է վերադարձվի Թուրքիային: Այդ հայտարարության առթիվ հայերը և Կիլիկիայի մյուս քրիստոնյա ժողովուրդներն իրենց բողոքն ուղարկեցին խաղաղության Գերագույն խորհրդին: Ֆրանսիայի վարչապետին նույնպիսի դիմում էր ուղարկել Կ. Պոլսի Զավեն պատրիարքը: Արևմտահայ պատվիրակությունները դեռևս շարունակում էին հույս դնել Ֆրանսիայի վրա, հայտարարելով, որ «Կիլիկիան հոժար է խաղաղ կյանք մը ապրելու ֆրանսիական հովանավորության տակ»: Հայաստանը ֆրանսիացիների գերիշխանությանը հանձնելու՝ հայ բուրժուազիայի ներկայացուցիչների ցանկության մասին է վկայում նաև 1920 թ. հուլիսի 28-ին Գ. Չիչերինի հեռագիրը Բ. Լեգրանին, որտեղ նա հայտնում էր, թե «Հայոց կաթողիկոսը այժմ հոգում է, որպեսզի Ֆրանսիան վերցնի Հայաստանի մանդատը»:

Ադանան, դեռևս 1920 թ. հուլիսից պաշարված լինելով քեմալական զորքերի կողմից, գտնվում էր ծանր դրության մեջ: Այդ ծանր պայմաններում հայերի և մյուս քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչները օգոստոսի 4-ին հատուկ դիմում են ուղարկում ֆրանսիական իշխանություններին և կազմում ժամանակավոր կառավարություն, որի նախագահ է դառնում Մ. Տամատյանը: Սակայն ֆրանսիական կոմիսար գնդապետ Բրեմոնի կարգադրությամբ այդ կառավարությունը ցրվում է:

1920 թ. սեպտեմբերին, ֆրանսիական հրամանատարության կարգադրությամբ, լուծարքի է ենթարկվում Հայկական լեգեոնը, որը, կոմիսար Բրեմոնի խոսքերով՝ պետք է իբր «հայկական բանակի կորիզը դառնար»:

1920 թ. օգոստոսի 10-ին, Փարիզի մոտ՝ Սևրում, հաղթող պետությունները Թուրքիայի սուլթանական կառավարությանը հարկադրեցին ստորագրել մի պայմանագիր, որի 6—րդ և 88—91-րդ հոդվածներով Թուրքիան պարտավորվում էր ճանաչել Հայաստանի անկախությունը Վանի, Բիթլիսի և մասամբ էլ Էրզրումի ու Տրապիզոնի վիլայեթների սահմաններում: Սահմանների վերջնական որոշումը թողնվում էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին, որի միջնորդությամբ պետք է ստեղծվեր, այսպես կոչված, «անկախ Հայաստանը»: Ազգերի լիգայում հարց դրվեց, որպեսզի «անկախ Հայաստանի» մանդատը վերցնի ԱՄՆ-ը: Սակայն ԱՄՆ-ի և մյուս իմպերիալիստների ախորժակը չէր սահմանափակվում միայն Հայաստանով: ԱՄՆ-ը ձգտում էր ստանալ ամբողջ Անդրկովկասը, որպեսզի այստեղից էլ իր ազդեցությունը տարածեր դեպի Մերձավոր Արևելք:

Հայաստանի մանդատը մի խաղ էր իմպերիալիստների ձեռքին, որոնցից յուրաքանչյուրը ցանկանում էր, օգտագործելով առիթը, ավելի շատ տարածք ձեռք գցել:

Սևրի պայմանագրով «գոտեպնդված», դաշնակցականները չէին տեսնում Թուրքիայում Մ. Քեմալի գլխավորությամբ ծավալվող ազգային շարժումը, որը սկզբից ևեթ հաշվի չէր ուզում նստել Սևրի պայմանագրի հետ: Այս պայմանագիրը կնքվել էր սուլթանական Թուրքիայի հետ, մինչդեռ այդ ժամանակ Անատոլիայում և Արևմտյան Հայաստանում տիրում էին քեմալականները, որոնց իշխանության տակ էին գտնվում այդ պայմանագրով նախատեսված «անկախ Հայաստանի» հողերը:

Իմպերիալիստական պետություններից յուրաքանչյուրը, ստորագրելով այդ պայմանագիրը, միաժամանակ ուներ Թուրքիային սիրաշահելու իր հաշիվները: Հատկապես ֆրանսիական կապիտալը պաշտպան կանգնեց Թուրքիային: Անգլիան նույնպես ուզում էր տիրել Անդրկովկասին, իսկ Ֆրանսիան՝ Սիրիային. Կիլիկիային և Մերձավոր Արևել-

քի մյուս շրջաններին: Այդ նույն ժամանակ ֆրանսիական կառավարությունն իր ներկայացուցիչ Ֆ. Բույոնին ուղարկեց Անկարա՝ այնտեղ գաղտնի պայմանագիր կնքելու, որի համաձայն երկու կողմերի միջև դադարեցվելու էին պատերազմական գործողությունները, և քեմալականները ստանալու էին Կիլիկիան, Սիրիայից բավականաչափ տարածք, փոխարենը Ֆրանսիան ստանալու էր երկաթուղային կոնցեսիաներ: Ֆրանսիան քեմալականներին տվեց նաև բավականաչափ ռազմամթերք ու հանդերձանք: «Քեմալականությունը կենդանացավ, ուժեղացավ,— իրավացիորեն գրում է Լեոն,— ֆրանսիական իմպերիալիզմը մի անգամ էլ փրկեց խորտակվող Թուրքիային, ոտքի կանգնեցրեց նրան և ուղարկեց հաղթելու հույներին ու այդ միջոցով ոչնչացնելու Սևրի դաշնագիրը»: Այսպիսով, ֆրանսիական իմպերիալիզմը հայ, հույն և մյուս ժողովուրդների շահերը վաճառքի հանեց և այն փոխարինեց կոնցեսիաներով: Շուտով նույն տանջալից հալածանքներին ենթարկվեց նաև Զմյուռնիայի և ծովափնյա հայաբնակ այլ վայրերի բնակչությունը, որը ցրվեց աշխարհով մեկ:

Կիլիկիայի անկումն ու տեղացի հայերի ոչնչացումը կրկին ու կրկին ապացուցեցին հայ ժողովրդի բախտն արևմտյան իմպերիալիստական պետությունների հետ կապելու քաղաքականության լիակատար սնանկությունը:

Այդ դժվարին պահին, հայ ժողովրդին վերահաս արհավիրքից փրկելու նպատակով, սովետական Ռուսաստանի կառավարությունն առաջարկում է իր օգնությունը և 1920 թ. հունիսին դիմում դաշնակցական կառավարությանը: Դիմումում մասնավորապես ասված էր, որ Ռուսաստանի սովետական կառավարությունն իր պատրաստակամությունն է հայտնում միջնորդելու քեմալականների հետ հարաբերությունները խաղաղ կերպով լուծելու: Սակայն դաշնակցականները ոչ մի կերպ չէին ցանկանում իրենց հույսը կտրել արևմտյան իմպերիալիստներից: Դաշնակցական կառավարությունը ձևականորեն իր միսիան ուղարկեց Մոսկվա, սակայն գործն այնպես կազմակերպեց, որ խափանի բանակցությունները:

1920 թ. սեպտեմբերին քեմալականները պատերազմ սկսեցին Հայաստանի դեմ: Դաշնակցականների արևմտյան «բարեկամները», «մոռանալով» տված խոստումները, երես թեքեցին նրանցից՝ Հայաստանը թողնելով թուրք ջարդարարների անարգել հոշոտմանը: Հակառակ դրան, չնայած դաշնակցականների անբարյացակամ և բացահայտ հակասովետական քաղաքականությանը, սովետական կառավարությունն իր օգնության ձեռքը մեկնեց հայ ժողովրդին: Սովետական կառավարությունն ամեն կերպ ցանկանում էր կանխել ռազմական ընդհարումները Թուրքիայի ու Հայաստանի միջև և բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ ճանապարհով:

Այն ծանր օրերին, երբ դաշնակցական զորքերը խուճապահար լքում էին հայկական քաղաքներն ու գյուղերը, բնակչությունը մատնելով թուրքական սրին, սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինը դաշնակցական կառավարությանն առաջարկեց սովետական Ռուսաստանի միջնորդությունը՝ բանակցություններ վարելու և պատերազմին վերջ տալու համար: Այդ նպատակով սովետական Ռուսաստանի կառավարությունն Ալեքսանդրապոլ ուղարկեց իր ներկայացուցչին, որի վրա դրված էր հայ-թուրքական բանակցությունների միջնորդի դերը: Դաշնակցականները, սակայն, այս անգամ էլ հրաժարվեցին այդ օգնությունից;

Դաշնակցական բանակն ի վիճակի չէր որևէ զգալի դիմադրություն ցույց տալ թշնամուն և առաջին իսկ հարվածից սկսեց նահանջել: 1920 թ. սեպտեմբերի 29-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշն ու Կաղզվանը, հոկտեմբերի 30-ին՝ Կարսը, նոյեմբերի 5-ին՝ Ալեքսանդրապոլը:

Դաշնակցական բանակը քայքայվել էր, զինվորները լքում էին բանակը: Կարսը թշնամուն հանձնելուց հետո գեներալ Հախվերդյանը գլխավոր հրամանատարությանն ուղարկած զեկուցագրում հայտնում էր. «Կարսի տակ մեր կրած անհաջողության և զորքի ներկա դրության պատճառն այն եմ համարում, որ, նախ, գնդերը երկու երրորդական մասով լի են համոզված դեզերտիրներով, երկրորդ, օֆիցերների մեծ մասը թույլ են և կռվի մեջ չեն վայելում զինվորների վստահությունը, երրորդ, հրամանատարները նույնպես թույլ են, անշնորհք հրամաններով սպանել են զինվորների հավատը»:

Իսկ գեներալ Սիլիկյանը զեկուցում էր, որ զորամասերն ինքնակամ թողնում են ռազմաճակատը, և որ «լքումն ու կազմալուծումը զարգանում են արագ տեմպով»:

Թուրքերի արագ առաջխաղացումը և հայկական շրջանների գրավումն առաջ բերեցին Անտանտի ուժերի աշխուժացում: Ենթադրվում էր, որ Անտանտն այս շրջաններում կարող է զորք իջեցնել և շարժվել դեպի Բաքու: Գ. Չիչերինն այս կապակցությամբ Ս. Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում հայտնում էր. «Թուրքերի առաջխաղացման կապակցությամբ Անտանտն ուժեղ ակտիվություն է հանդես բերում: Գնդապետ Ստոքսը շրջում է

Հայաստանում, դիտում է ճակատը, ուղարկում է պեկուցագրեր»: 1920 թ. հոկտեմբերի 19-ին Գ. Չիչերինը Ս. Օրջոնիկիձեին հեռագրում է, թե «տեղեկություններ կան, որ Անտանտը փորձեր է անում Բաքվի վրա նոր արշավանք սկսելու»: Անտանտը Դենիկինի ջախջախումից հետո առիթ էր փնտրում սովետական Ռուսաստանի դեմ նոր արշավանք կազմակերպելու համար: Բայց սովետական Ռուսաստանը, չնայած իր միջազգային և ներքին անասելի ծանր պայմաններին, ամեն կերպ պաշտպանում էր փոքր ժողովուրդների շահերը: 1920 թ. հոկտեմբերի 5-ին Գ. Չիչերինը ՌՍՖՍՀ լիազորներկայացուցիչ Բ. Լեգրանին ուղղած հեռագրում հայտնում էր, որ «...Հայաստանը վերջին ժամանակներս ավելի և ավելի է վերածվում Անտանտի հարձակողական քաղաքականության գործիքի: Բայց մենք թույլ չենք տա, որ նրան ոչնչացնեն»:

1920 թ. նոյեմբերին սովետական Ռուսաստանի կողմից հայ ժողովրդին օգնելու հարցն ավելի գործնական բնույթ ընդունեց: Ս. Օրջոնիկիձեն Կովկասյան ճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Տրիֆոնովին հայտնում էր, թե Հայաստանի վրա Մ. Քեմալի հարձակման կապակցությամբ ամենից հավանականն այն է, որ սովետական Ռուսաստանը կմիջամտի Հայաստանը փրկելու համար:

Այսպիսով, 1920 թ. ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում արևմտյան իմպերիալիստների քաղաքականության հիմնական նպատակն էր գրավել Անդրկովկասը և այն դարձնել Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարի կարևորագույն հենակետ: Դրա հետ միաժամանակ արևմտյան տերությունները ձգտում էին Անդրկովկասն օգտագործել որպես կարևորագույն ստրատեգիական շրջան՝ իրենց տիրապետությունը Մերձավոր արևելքում ընդլայնելու և ամրապնդելու համար: Այդ նպատակների իրականացման ճանապարհին նրանք գործադրում էին բոլոր միջոցները՝ ընդհուպ մինչև արյունահեղ պատերազմների հրահրումը: Հենց արևմտյան տերությունների, քեմալականների և դաշնակցականների քաղաքականության պտուղն էր այն նոր աղետը, որն ապրեց հայ ժողովուրդը 1920 թ. սեպտեմբերի կեսերից ընդհուպ մինչև սովետական կարգերի հաղթանակը:

Թուրքական բանակն անմիջապես ցույց տվեց իր իսկական դեմքը: Կարսից և Ալեքսանդրապոլի գավառից լուրեր էին ստացվում թուրքական բանակի գազանությունների մասին: Քեմալականները, վերսկսելով ռազմական գործողությունները Զաջուռի շրջանում, ամբողջովին մերկացրին իրենց որպես մոլի ապգայնականների և ագրեսորների: Թուրքերը սկզբում գաղտնի, իսկ հետո բացարձակ կերպով սկսեցին մասսայաբար հավաքել տղամարդկանց և տանել Թուրքիայի խորքերը՝ տաժանակիր աշխատանքի, որտեղ նրանց մի ֆունտ հաց տալով, աշխատեցնում էին օրական 14—15 ժամ:

Ալեքսանդրապոլում թուրքական կորքերի ներկայացուցիչ նշանակվեց կատաղի հայատյաց Դուշդի փաշան: Այդ ջարդարարը սոսկալի հալածանքներ սկսեց և ամբողջ Ալեքսանդրապոլի շրջանը կատարյալ ավերածության ու ամայության հասցրեց: Նա բնակչությանը վերջնագիր ներկայացրեց՝ պահանջելով երեք օրում 10 հազար հրացան տալ, իմանալով հանդերձ, որ հայերը մինչ այդ ամբողջովին պինաթափ էին արվել: Այդ առիթը օգտագործելով, նա նոր ջարդեր ու հալածանքներ սկըսեց անզեն ու անօգնական ժողովրդի նկատմամբ:

1920 թ. աշնանը Հայաստանի, ինչպես նաև ամբողջ Կովկասի ներքին և արտաքին հարաբերություններում չափազանց բարդ փոփոխություններ տեղի ունեցան: Վ. Ի. Լենինը 1920 թ. նոյեմբերի 21-ին նշել է, որ «Կովկասում ներկայումս հյուսվում են շատ բարդ պայմաններ, որոնք վերին աստիճանի դժվար է ըմբռնել, ըստ որում մեր վզին կարող է պատերազմ փաթաթվել նույնիսկ օրավուր»:

Վ. Ի. Լենինը շարունակ հետևում էր հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին: Նա խորապես համոզված էր, որ ազատության ձգտող բազմաչարչար հայ ժողովրդի պայքարը հաղթանակով կպսակվի: Ահա թե ինչ է ասել նա նույն՝ 1920 թ. նոյեմբերի 21-ին իր արտասանած ճառում. «Թերթի հաղորդագրություններն այն մասին, թե ինչ է կատարվում Հայաստանում, Թուրքիայում, որոշ պատկերացում են տալիս ձեզ այդ մասին: Ստեղծվում է չափազանց խճճված դրություն, բայց ես միանգամայն վստահ եմ, որ այդ դրությունից մենք դուրս կգանք... Սակայն հնարավոր է, որ հանգամանքներն ուղղակի մեր վզին պատերազմ փաթաթեն կամ անուղղակի կերպով հանգեցնեն դրան: Մենք կարող ենք դրա վրա միանգամայն հանգիստ նայել՝ դա կլինի պատերազմ հեռավոր ծայրամասում, ըստ որում, մեր կողմը կլինի ուժերի լիակատար գերակշռությունը, որը կապահովի, հավանաբար, նույնիսկ ավելի մեծ շահում, քան այն, որ ստացվեց լեհական պատերազմից»:

Զգալով իրենց մոտալուտ կործանումը, դաշնակցականները շտապում են հաշտության բանակցություններ սկսել թուրքերի հետ և նախապատրաստվել ճնշելու ամբողջ երկրով մեկ բարձրացող ժողովրդական ապստամբությունները, խափանելու սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում: Սակայն արդեն ուշ էր: Երկրի բոլոր մասերում հեղափոխական բռնկումները մեծ չափերի էին հասել: Նոյեմբերի 28-ին խմբապետ Սեպուհը Դիլիջանից կառավարությանը հայտնում էր. «Այս րոպեիս կապիտան Խաչատրյանը հաղորդում է, որ երկրորդ, վեցերորդ և առաջին ռազմամիլիցիոն վաշտերը լքել են դիրքերը և ցրվել տուն: Այսօր թողել են և գնացել նաև հինգերորդ և յոթերորդ վաշտերը: Պահեստում (դիրքերի վրա) մնում է չորրորդ վաշտը, որի վրա հույս դնել չեմ կարող: Հայտնում են, որ դասալիքները փախչելով, գյուղերում հայտարարում են իրենց կառավարությունը...

...Բաղանիս գյուղում (Նոյեմբերյանի շրջան:— Ծ. Ա.) սպա Սախումյանը դասալիքներ է ժողովել և բանտարկել՝ կորամասերը վերադարձնելու համար: Դասալիքները հարձակվել են բանտի վրա՝ ազատելու իրենց ընկերներին, և փորձել են ձերբակալել սպա Սախումյանին, բայց նա ազատվել է»:

1920 թ. Հայաստանում օրավուր աճող դասակարգային պայքարի նշանաբանը սովետական կարգերի հաստատումն էր, որը պետք է հաջողությամբ պսակվեր կարմիր բանակի եղբայրական օգնության շնորհիվ:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1920 թ. նոյեմբերի 22-ին Ի. Ստալինին ուղղված մի շարք հեռագրերով Ս. Օրջոնիկիձեն պահանջում էր կարմիր բանակի զորամասերին թույլատրել օգնության հասնելու և ազատագրելու հայ ժողովըրդին: Ս. Օրջոնիկիձեն իրավացիորեն նշում էր, որ «այլևս հնարավոր չէ սպասել, քանի որ թուրքերը նպատակ են դրել վերջնականապես հաշիվ տեսնել Հայաստանի հետ...» Նոյեմբերի 25-ին Ս. Օրջոնիկիձեն հեռագրով հայտնում է Մոսկվա, որ Քարվանսարայի ու Դիլիջանի շրջանների գյուղացիներից ստացվել են բազմաթիվ համախոսականներ և դիմումներ, որոնցում նրանք պահանջում են երկրում հաստատել սովետական կարգեր:

1920 թ. նոյեմբերի 29-ի առավոտյան Քարվանսարայի և Շամշադինի աշխատավորները Հայաստանի կոմունիստական կուսակցության գլխավորությամբ ապստամբություն բարձրացրին դաշնակցական կառավարության դեմ: Դաշնակցական զորքերը, որոնք հրաման էին ստացել ամենադաժան միջոցներով ճնշել ժողովրդական ապստամբությունը, մեծ մասամբ չէին դիմադրում, իսկ մի մասն էլ ուղղակի անցավ ապստամբների կողմը: Նոյեմբերի 29-ին Քարվանսարայում Ռազմահեղափոխական կոմիտեն Հայաստանը հայտարարեց Սովետական Սոցիալիստական Հանրապետություն: Հեղկոմի կազմի մեջ էին մտնում Ս. Կասյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Մռավյանը, Ավիս Նուրիջանյանը, Ա. Բեկզադյանը, Ի. Դովլաթյանը:

Ս. Կասյան

Նոյեմբերի 29-ին գեներալ Խանկալամովը դաշնակցական կառավարությանը հայտնում է, որ կարմիր զորքերը մտել են Քարվանսարա և ձերբակալել սպաներին, որոնց թվում Սեպուհի գործակալ կապիտան Խաչատրյանին: Ձերբակալվել էին նաև քաղաքային վարչության անդամները: Սեպուհի կարգադրությամբ զորամասեր են ուղարկվում Քարվանսարայի ուղղությամբ: Բայց կարմիր զորքերն արդեն մոտենում էին Դիլիջանին: Հեղկոմը սովետական իշխանության հաղթանակի մասին հրապարակում է հատուկ դեկլարացիա, որում հատկապես նշվում էր. «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ՝ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը՝ այսօրվանից Հայաստանը հայտարարում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Այսօրվանից Խորհրդային Հայաստանի կարմիր դրոշակը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից»: Այնուհե-



Ա. Բեկզադյան
Ա. Նուրիջանյան,

և դեկլարացիայում ասված էր. «Եվ որքա՞ն ավանտյուրիստական է եղել դաշնակցական Հայաստանի արտաքին քաղաքականությունը, որն իր ապիկարությամբ ու վայրենի արտահայտություններով երկիրն ամայացրել է, ավեր դարձրել:

Բոլոր ճնշված ժողովուրդների պաշտպանը՝ Ռուսաստանի Խորհրդային իշխանությունը, շատ անգամ է ցանկացել ազդել դաշնակցական կուսակցության վրա, նրան խլել Անտանտի գիշատիչներից և այդպիսով հնարավորություն տալ բազմատանջ ու դաշնակցականներից դիվահար Հայաստանի աշխատավոր ժողովրդին ազատ շունչ քաշել: Բայց փոխանակ ցանկալի հետևանքների հասնելու, մենք տեսել ենք կոմունիստների նկատմամբ գործ դրված խստություններ՝ կախաղաններ ու գնդակահարություններ, նորանոր քրքիջներ: Ազատ Խորհրդային Հայաստանի կարմիր դրոշակը հուսահատության ու դառնությունների անդունդից դուրս կբերի նրա աշխատավոր զավակներին: Հաղթական ինտերնացիոնալի առաջին հնչյունների հետ ընդմիշտ կանհետանա Հայաստանում գոյություն ունեցող ցեղական ու ազգային պառակտումների ուրվականը և տեղի կտա ժողովուրդների եղբայրության՝ նրանց առօրյա կյանքում... Ներկա ծանր պայմաններում ու լուրջ րոպեին,— այնուհետև կարդում ենք դեկլարացիայում,—ընդունելով իշխանության ամբողջ պատասխանատվությունը, մենք Հայաստանի ժողովրդական ուժերին կոչ ենք անում մեզ աջակցել բանվորագյուղացիական իշխանության թշնամիների դեմ կռվելու և կանչում խորհրդային անդուլ, ստեղծագործական աշխատանքի»:

Ա. Նուրիջանյանը նոյեմբերի 30-ին Ս. Օրջոնիկիձեին հայտնում էր, որ մինչև Հայաստանի սահմանը կարմիր բանակի մտնելը «գյուղացիները մի քանի անգամ դհոլ ու կուռնայով մոտեցել էին մեր սահմանին (Ադրբեջանի:— Ծ. Ա.), բայց մեր կորքերին չհանդիպելով, ետ են քաշվել: Մեր տրամադրության տակ եղած բոլոր տեղեկությունները ասում են այն մասին, որ ամբողջ Հայաստանում դիմադրություն չի լինի, չնայած նրան, որ Դիլիջանում է գտնվում մաուզերիստների մի մասը... ստացված տեղեկությունների համաձայն, այնտեղ գտնվող գունդը մեր կողմն է, որի գլուխ է կանգնած կոմունիստների ընդհատակյա բջիջը: Մեր գալուց առաջ այնտեղ միտինգ է տեղի ունեցել, որը բաժանվել է երկու մասի՝ մեր կողմ և մեր դեմ: Մի խոսքով, եթե դաշնակները դիմադրեն էլ՝ միայն Դիլիջանում, նրանից այն կողմը չեն դիմադրի»:

Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն հայ ժողովրդի անունից դիմում է Սովետական Ռուսաստանի կառավարությանը և անձամբ Վ. Ի. Լենինին՝ խնդրելով օգնություն ցույց տալ Հայաստանի ազատագրված աշխատավորությանը: Այդ դիմումում ասված էր. «Թող հայտնի լինի համաշխարհային հեղափոխության առաջնորդին, որ Դիլիջանի և Քարվանսարայի շրջանի գյուղացիները, վրդովված դաշնակցական կառավարության հանցագործ քաղաքականությունից և երկրում խորացող անարխիայից, ապստամբության դրոշ են բարձրացրել... Դիլիջանը մեր ձեռքին է: Ոգևորված ապստամբները առաջ են սլանում վերջնականապես խորտակելու Անտանտի ատելի գործակալներին:

Կատարելով նրանց կամքը և տեղական Հեղկոմ կազմելով՝ մենք առաջ ենք շարժվում, համոզված լինելով, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարար սոցիալիստական մեծ Ռուսաստանի հերոսական կարմիր բանակը մեր այս դժվարին պայմաններում մեզ օգնության կհասնի:

Դեկլարացիա Հայաստանը սոցիալիստական խորհրդային հանրապետություն հայտարարելու մասին


ԴԵԿԼԱՐԱՑԻԱ

Հայաստանի բոլոր բանվորների և գյուղացիների կողմից մենք խնդրում ենք Ժողկոմխորհին այդ օգնությունը ցույց տալ մեզ»:

1920 թ. նոյեմբերի 30-ին Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Բ. Լեգրանը դաշնակցական կառավարությանը հայտարարում է, որ սովետական կարգերի հաստատումը Հայաստանում արդեն կատարված փաստ է և առաջարկում է խաղաղ կերպով զիջել իշխանությունը Հայաստանի հեղկոմին, «որը ռուսական սովետական զորքերի գլխավորությամբ Ղազախի գավառի կողմից մտել է Հայաստանի տերիտորիան»:

Դեկտեմբերի 2-ին Բաքվում Ս. Օրջոնիկիձեն ստանում է Բ. Լեգրանի հեռագիրը՝ դաշնակցական կառավարության լիազորությունները վայր դնելու մասին: Ըստ այդ հեռագրի, դեկտեմբերի 2-ին հեղկոմը դեռևս գտնվում էր Դիլիջանում, իսկ Երևան էր գալու դեկտեմբերի 3-ին: Հեղկոմին դիմավորելու համար Երևանից ուղարկվում է Բ. Լեգրանի օգնական Բոբրիշչևը:

Այդ նույն հեռագրով Բ. Լեգրանը հայտնում է, որ «կոմունիստներին ազատելու հրամանը տրված է և կյանքում իրագործվում է: Թուրքերի թշնամական գործողությունների դեպքում անհրաժեշտ է... ունենալ բավականաչափ զինվորական ուժ...»:

Դեկտեմբերի 2-ին Ս. Օրջոնիկիձեն Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի մասին հայտնում է Մոսկվա՝ Վ. Ի. Լենինին, նշելով, որ դեկտեմբերի 3-ի վաղ առավոտյան Հեղկոմը Դիլիջանից կգնա Երևան: Ելնելով ստեղծված իրադրությունից, Ս. Օրջոնիկիձեն Սովետական Ռուսաստանի կառավարությանն առաջարկում է լուծել հետևյալ հարցերը.

«1. Հեղկոմի հրավերի համաձայն պաշտոնապես թույլատրել կարմիր բանակի զորամասերը մտցնելու Հայաստան:

2. Անհապաղ ուղարկել Լենինի պատասխան հեռագիրը Հեղկոմի անունով»:

Ս. Օրջոնիկիձեի այդ հեռագրից հստակ երևում է, որ մինչև դեկտեմբերի 2-ը կարմիր բանակը Հայաստան մտցնելու վերաբերյալ չի եղել սովետական կառավարության պաշտոնական որոշումը: Ս. Օրջոնիկիձեն մինչ այդ կատարված գործողությունների նախաձեռնողն էր. Նա իր վրա էր վերցրել դեպքերի զարգացման ամբողջ պատասխանատվությունը: Եվ դա նա կատարում էր հայ ժողովրդին օր առաջ փրկելու ազնիվ ձգտումով: Երբ արդեն սովետական իշխանության հաղթանակը կատարված փաստ էր, նա Սովետական Ռուսաստանի կառավարությանը խնդրում է՝ պաշտոնա-



Վ. Ի. Լենինի հեռագիրը Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին



Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան Ռազմա-Յեղափոխական կոմիտէն յայտարարում է Հ. Ս. Խ. Հ. Բանւորա-Գիւղացիութեան կազմը.

1. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Ռազմական գործերի Ժողովրդական Կոմիսար՝ Ալէքսանդր ՄԵԱՍՆԻԿԵԱՆ (Ալ. Մարտունի).

2. Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսար՝ Ասքանազ ՄՌԱՎԵԱՆ.

3. Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսար՝ Պօղոս ՄԱԿԻՆՑԵԱՆ, որին ենթարկւում է Հակայեղափոխութեան դէմ կռւող Արտակարգ Յանձնաժողովը.

5. Արդարադատութեան Ժողովրդական Կոմիսար՝ Արտաշէս ԿԱՐԻՆԵԱՆ.

4. Ժողովրդական Տնտեսութեան Խորհրդի Նախագահ՝ Սարգիս ՍՐԱՊԻՈՆԵԱՆ (Լուկաշին).

6. Հողագործութեան Ժողովրդական Կոմիսար՝ Արամայիս ԵՐԶՆԿԵԱՆ.

7. Պարենաւորման և Արտաքին առևտրի Ժողովրդական Կոմիսար՝ Ալէքսանդր ԲԵԿԶԱԴԵԱՆ.

8. Ֆինանսական Ժողովրդական Կոմիսար՝ Սարգիս ԽԱՆՈՅԵԱՆ.

9. Աշխատանքի և Սոցիալական Ապահովութեան Ժողովրդական Կոմիսար՝ Արշակ ԽԱՉԻԵԱՆ.

10. Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսար՝ Աշոտ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

11. Առողջապահութեան Ժողովրդական Կոմիսար՝ Սարօ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ.

12. Փոստ-Հեռագրի Ժողովրդական Կոմիսար՝ Դրաստամատ ՏԷՐ-ՍԻՄՈՆԵԱՆ.

13. Բանւորա-Գիւղացիական Տեսչութեան Ժողովրդական Կոմիսար՝ Ալէքսանդր ՇԱՀՎԷՐԴԵԱՆ.

Իսկականի հետ ճիշտ է Գործերի Վարիչ ԳԱԳՈՎ.

21 Մայիսի 1921 թ.
Երևան.

ԳԱՅԵՂԿՈՄԻ ԿԱԶՄԸ

Հայհեղկոմի կողմից հաստատւած է Գայհեղկոմի հետևեալ կազմը.

1. Սէրօ ՄԱՆՈՒՑԵԱՆ — Նախհեղկոմ.
2. Վահան ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
3. Հայկ ԱՄԱՏՈՒՆԻ
4. Նահապետ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ
5. Գէորգ ՀԱՆԷՍՕՂԼԵԱՆ

(2–5) Անդամներ

Լ. Գ. ՍԱՐԳԻՍԵԱՆ — նշանակւած է վարիչ Կոմմունական անտեսութեան [illegible] Հայաստանի.

Իսկականի հետ ճիշտ է Գայհեղկոմի Գործերի վարիչ՝ [illegible]

ՀՍԽՀ Ժողկոմխորհի առաջին կազմը

կան կարգադրություն անել կարմիր բանակը Հայաստան մտցնելու մասին:

Դեկտեմբերի 2-ին Հայաստանի հեղկոմի նախագահ Ս. Կասյանի անունով ստացվեց Վ. Ի. Լենինի ողջույնի հեռագիրը, որտեղ հեղափոխության առաջնորդը ողջունում էր «իմպերիալիզմի ճնշումից պատագրված աշխատավորական սովետական Հայաստանին»:

Դեկտեմբերի 3-ին Ի. Ստալինը ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնարարությամբ Ս. Օրջոնիկիձեին հայտնում է, որ թույլատրվում է կարմիր զորքերը մտցնել Հայաստան, բայց միաժամանակ իր կողմից զգուշացնում էր, որ դա կատարվի ճակատի կամ բանակի հրամանատարության անունից և շատ մեծ զգուշությամբ, որպեսզի ավանտյուրիստների համար պատրվակ չծառայի և նոր պատերազմի առիթ չտա: Քաղբյուրոն նաև Ս. Օրջոնիկիձեին առաջարկում է մտածել Հայաստանի նյութական ապահովման մասին, այնտեղ ուղարկել ավելի շատ կոմունիստներ:

Դեկտեմբերի 3-ին ստանալով սովետական կառավարության և ՌԿ(բ)Կ Կենտկոմի համաձայնությունը, Ս. Օրջոնիկիձեն կարմիր բանակի կորամասերին հրամայում է Միխայլովի ու Հեկկերի գլխավորությամբ անմիջապես մտնել Ղազախի շրջանը և առաջ շարժվել:

Դիլիջանում համախմբված կարմիր զորքերն ու հեղափոխական մասսաները շարժվում են երկու ուղղությամբ՝ դեպի Երևան և դեպի Ղարաքիլիսա: Կարմիր բանակի երևանյան խմբավորումը գլխավորում էր բրիգադի հրամանատար Երմոլենկոն, իսկ Ղարաքիլիսայի խումբը՝ Կուրիշկոն: Վերջինս, դեկտեմբերի 3-ին իր առաջատար խմբի հետ հասնելով Ղարաքիլիսա, ծանոթանում է իրադրությանը և կապ հաստատում տեղի կուսակցական կազմակերպության հետ: Կոմունիստների օգնությամբ անմիջապես ստեղծվում է ժամանակավոր հեղկոմ:

Կարմիր զորքերի ժամանումը հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ է ընդունում: Ամենուր կազմակերպվում են ցույցեր և տոնական հանդեսներ: Երևանում կայացած բազմամարդ միտինգի մասնակիցները Վ. Ի. Լենինին ուղղած հեռագրում հայտնում են. «Խիտ և կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր դրոշի շուրջը, աշխատավորությունը, հանձինս Ձեզ, ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջամարտիկին, որի ալիքները, խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները, հասան հեռավոր Հայաստան»:

1920 թ. դեկտեմբերի 2-ին արդեն տապալված դաշնակցական կառավարությունը հրաժարվում է իշխանությունից և ընդունում սովետական կարգերի հաստատումը: Բայց դա չխանգարեց, որպեսզի իշխանություն չունեցող այդ կառավարության ներկայացուցիչները թուրքերի հետ անօրեն կերպով ստորագրեն Ալեքսանդրապոլի ստորացուցիչ պայմանագիրը, որով մեծ հարված հասցրին հայ ժողովրդին: Այդ պայմանագրի համաձայն Հայաստանն ամբողջովին դրվում էր Թուրքիայի հսկողության տակ և կարող էր ունենալ միայն 1500 գինվորից բաղկացած «բանակ», 8 թնդանոթ, 24 գնդացիր: Փոխարենը թուրքերը խոստ էին տալիս «պաշտպանել» արդեն իսկ դիակ դարձած դաշնակցական կառավարությանը թե՛ ներքին և թե՛ արտաքին թշնամիներից (երկու դեպքում էլ կողմերն ի նկատի ունեին հեղափոխական շարժումների ճնշումը): Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին «Կոմունիստ» (Երևան) թերթը «Դաշնակցության կապիտուլյացիան» առաջնորդող հոդվածում գրում է. «Երկնեց լեռը՝ մուկ ծնեց: Ահա և դաշնակների միացյալ և անկախ Հայաստանը: Դա ոչ այլ ինչ է, քան բոլոր անկյուններից խուզված Երևանի նահանգը, որը փոխանակ դաշնակների երազած մի ելքի՝ դեպի ծով, ունի միայն մի ծով՝ առանց ելքի»:

Սովետական Հայաստանի կառավարությունը Սովետական Ռուսաստանի օգնությամբ չեղյալ հայտարարեց այդ պայմանագիրը և խստորեն բողոքեց քեմալականների կողմից օկուպացված շրջաններում հայ ժողովրդի նկատմամբ գործադրվող բռնությունների դեմ:

Իրենց ձեռքին պահելով Հայաստանի մի շարք շրջանները, առանձնապես Ալեքսանդրապոլի ու Կարսի շրջանները, քեմալականները կատարում են ավերիչ գործողություններ, քանդում, հրի ու սրի են մատնում հայկական բնակավայրերը: 1921 թ. հունվարի 12-ի նոտայով սովետական Հայաստանի կառավարությունը քեմալականներից պահանջում է վերջ տալ ավերածություններին ու կոտորածներին: Այսպես, 1920 թ. դեկտեմբերի 20-ին Քյավթառլու է մտնում թուրքական զորքերի մի ջոկատ, որը գյուղում տեղավորվելուց հետո աշխատանքի է հանում մի խումբ գյուղացիների, այդ թվում նաև ինը կոմունիստի: Աշխատանքը վերջացնելուց հետո կոմունիստ գյուղացիներին, ինչպես նաև նրանց համակրողներին թուրքերը տեղնուտեղը ոչնչացնում են:

Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Մռավյանը 1921 թ. հունվարին հայտնում է, որ Ալեքսանդրապոլի դրությունը շատ ծանր է, որ թուրքերը տանում են ամեն ինչ, անասունները, ամբողջ մթերքը, բոլոր տղամարդկանց, անգամ տնային իրերը՝ սեղանները, աթոռները, փայտը և ամբողջ վառելանյութը, տպագրական սարքավորումը և այլն: «Քաղաքում թագավորում է համաճարակը,— շարունակում է նա,— որը հետևանք է վառելիքի, մթերքների և դեղորայքի պակասի»: «Բազմաթիվ չտեսնված գազանություններ են կատարվում, որոնք դժվար է նկարագրել... Նպատակը հասկանալի է. կոտորել ամբողջ բնակչությանը»:

Ալեքսանդրապոլի հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 29-ի զեկուցագրում ասված էր. «Քաղաքում տրամադրությունը տագնապային է: Ահա երկու շաբաթից ավելի է, որ քաղաքից տարվում է բացարձակապես ամեն ինչ. գյուղատնտեսական գործիքներ, շոգեքարշեր, հեռագրական և հեռախոսային ապարատներ, ավտոմեքենայի մասեր, մեքենաներ, տնային իրեր և այլն, մի խոսքով քաղաքացիների ամբողջ ունեցվածքը տարել են: Գավառն ամբողջովին ավերվել է: Ամբողջ անասունները քշել տարել են, բնակչության մի մասին կոտորել են, մյուս մասը փախել է»:

Ալեքսանդրապոլի աշխատավորների նկատմամբ քեմալականների գործադրած բռնությունների դեմ բողոքում է Սովետական Ռուսաստանի կառավարությունը: Գ. Չիչերինն Ալեքսանդրապոլում թուրք օկուպանտների կատարած վայրագությունների մասին հեռագիր է տալիս հեղկոմի նախագահ Ս. Կասյանին, որում իր վրդովմունքն է հայտնում թուրքերի գազանությունների մասին և նշում. «Մեկ անչափ հուզեց Ալեքսանդրապոլի շրջակայքում օկուպանտների գործադրած էքսցեսները և Ալեքսանդրապոլի հեղկոմի ծանր դրությունը: Մենք այդ մասին արդեն դիմել ենք թուրքական կառավարությանը և վճռականորեն պահանջել թուրքական իշխանությունների վերաբերմունքի փոփոխում եղբայրական Հայաստանի սովետական հանրապե-

տության հանդեպ... կանենք ամեն ինչ, որպեսզի ավելի սերտ կապ ստեղծենք Հայկական հանրապետության հետ և անհրաժեշտ օգնություն ցույց տանք եղբայրական Սովետական Հայաստանի աշխատավոր մասսաներին»:

1921 թ. ապրիլի 2Յ-ին Սովետական Ռուսաստանի աջակցությամբ Ալեքսանդրապոլն ու գավառի գյուղերն ազատագրվեցին թուրքական տիրապետությունից և միացան Սովետական Հայաստանին:

* * *

Քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի տարիներին սովետական կառավարությունը մտցրեց հացի մոնոպոլիա, արգելեց հացի մասնավոր առևտուրը և սահմանեց պարենմասնատրում, որպեսզի հաշվառման ենթարկվի գյուղացիների մոտ եղած պարենամթերքի ամբողջ ավելցուկը, կարգավորվի բանակի և աշխատավորների մատակարարումը: Պաշտպանության բացառիկ դժվարին պայմաններից բխող և ժամանակավոր բնույթ կրող միջոցառումների այդ ամբողջ սիստեմը կոչվում էր ռազմական կոմունիզմ: Այդ քաղաքականությունից բխող որոշ միջոցառումներ ըստ անհրաժեշտության իրենց տարածումը գտան նաև ազգային հանրապետություններում:

1920 թ. դեկտեմբերի 8-ին Հայաստանի հեղկոմի դեկրետով հանրապետությունում մտցվեց ռազմական կոմունիզմի քաղաքականություն: Ամենուրեք զգացվում էր հացի և բոլոր տեսակի մթերքների ծայրահեղ պակաս, աղքատությունն ու երկրի քայքայվածությունը չտեսնված չափերի էին հա-



«Կարմիր առավոտ (նկարիչ՝ Էդվարդ Իսաբեկյան)

«Հայաստանը 1920 թ.» (նկարիչ՝ Ա. Բեքարյան)

Երևանի բնակիչները ողջունում են XI կարմիր բանակին

Հայաստանը՝ ապատագրված (նկարիչ՝ Ասլանյան)



Հայաստանի ԺԿԽ-ի շենքը Երևանում (1921 թ.)

սել: Հեղկոմը ստիպված էր մթերքներ ձեռք բերելու համար դիմել արտակարգ միջոցների: Հենց այդ նպատակներից էր ելնում 1920 թ. դեկտեմբերի 2-ին ընդունված «Պարենավորման մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանագիրը:

Մի փոքր ավելի ուշ՝ դեկտեմբերի 18-ին, պարենավորման ժողկոմ Ա. Բեկզադյանի «Պարենավորման գործերի կանոնավորման մասին» հրամանագրում նշվում էր, որ «պարենավորման մթերքների բաշխման նորմաների մշակումն ու որոշումը, ինչպես և բռնագրավման, տեղափոխության, ստացման և արտահանման իրավունքը պատկանում է միայն պարենժողկոմին, առանց որի թույլտվության ոչ մի պետական հիմնարկություն, ինչպես և մասնավոր հաստատություն ու անհատ, իրավունք չունի այդ ուղղությամբ որևէ գործ անել»:

Ազգաբնակչության մեջ ընդհանուր սպառման պարենային մթերքների բաշխումը կատարվում էր միայն պարենժողկոմի և նրա տեղական հաստատությունների ու կոոպերատիվների միջոցով: Արգելվում էին այս ուղղությամբ կատարվող մասնավոր ձեռնարկումները:

Երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու, ժողովրդի նյութական ու կուլտուրական կյանքը նորմալ հունի մեջ դնելու ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք այլ միջոցառումներ ևս: Այդ տեսակետից կարևոր էր տասնյակ-հազարավոր անապահով երեխաներին սովից և հիվանդություններից փրկելու գործը: Հեղկոմը սկսեց միջոցներ ձեռնարկել որբ երեխաներին հավաքելու և նրանց կյանքն ապահովելու ուղղությամբ: Երեխաների նկատմամբ հոգատարության վառ օրինակ հանդիսացավ 1920 թ. դեկտեմբերի 16-ին հեղկոմի նախագահ Ս. Կասյանի և սոցապժողկոմ Հ. Կոստանյանի ստորագրությամբ հրապարակված «Խտացրած կաթը «Մանկանց սննդի» ֆոնդին հանձնելու մասին» հրամանը: Ահա թե ինչ էր ասվում այնտեղ. «Հայաստանի պահեստներում գտնվող խտացրած կա-

թը հանձնել «Մանկանց սննդի» ֆոնդին: Արգելվում է այսուհետև խտացրած կաթը բաժանել ոչ երեխաներին»:

Չնայած ձեռնարկված միջոցներին, պարենավորման գործը շարունակում էր մնալ ծանր: Երկրի քայքայվածությունն ու սովն այնքան լայն չափերի էին հասել, որ կառավարության ձեռնարկած բազմաթիվ միջոցները քիչ արդյունք էին տալիս: 1921 թ. հունվարի 22-ին Ս. Կասյանի և Ա. Բեկզադյանի ստորագրությամբ հրապարակված հրամանագրով գավառային հեղկոմներին կից պարենավորման բաժինները վերանվանվեցին պարենավորման գավառային կոմիտեներ, որոնք անմիջապես ենթարկվում էին պարենավորման ժողկոմատին: Դրանով սովետական Հայաստանի հեղկոմը նպատակ ուներ ավելի ուժեղացնել կառավարության հսկողությունը երկրի տնտեսական միջոցները կենտրոնացված ձևով բաշխելու վրա:

«Երկաթուղայիններին կորական կացության մեջ հայտարարելու մասին» Հեղկոմի դեկտեմբերի 12-ի հրամանը ևս բխում էր երկրի տնտեսությունը վերականգնելու շահերից:

«Վառելանյութի մասին» կառավարական հրամանագիրը հավաստում էր, որ բոլոր տեսակի վառելանյութերը՝ փայտը, ածուխը, նավթը, հաշվի են առնվում և գործադրվում երկաթուղիների կարիքների համար:

Երկրում ստեղծված ծանր պայմաններից էր ելնում նաև Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 14-ի՝ «Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի իրավասության մասին» դեկրետը: Հեղկոմն այդ դեկրետով, մինչև Հայկական ՍՍՀ սահմանադրության մշակումն ու հաստատումը, մի շարք կանոններ մշակեց ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի իրավասության վերաբերյալ: Ներքին գործերի ժողկոմատը լայն աշխատանք ծավալեց հին պետական ապարատն իր քաղաքական ու վարչական կարգով ոչնչացնելու և նորը ստեղծելու ուղղությամբ: 1920 թ. դեկտեմբերին Հեղկոմի հրապարակած դեկրետներով ու կիրառած միջոցառումներով Հայաստանում պետականացվում են բանկերը, մասնավոր ձեռնարկությունները, հեռագրալարերը, քայլեր են արվում երկրի ֆինանսական դրությունը բարելավելու ուղղությամբ:

Կուլտուրական շինարարությունը նորմալ հունի մեջ դնելու նպատակով վերականգնվեցին և բացվեցին մշակույթի բազմաթիվ նոր օջախներ: Զինժողկոմի 1920 թ. դեկտեմբերի 16-ի հրամանով բոլոր ուսուցիչները, աշակերտներն ու ուսանողներն ազատվում էին զինվորական ծառայությունից: Ելնելով այդ հրամանից, լուսժողկոմն իր դեկտեմ-

Եղիշե Չարենց

բերի 18-ի հրամանով «դպրոցների վարչական մարմիններին առաջարկում էր միջոցներ ձեռք առնել անհապաղ վերսկսելու դպրոցական կանոնավոր պարապմունքները»: Ժողովրդական լուսավորության գործն ավելի լավ հիմքերի վրա դնելու նպատակով լուսժողկոմի 1920 թ. դեկտեմբերի 28-ի հրամանով կոմիսարիատին կից ստեղծվում է ժողովրդական լուսավորության կոլեգիա, որը պետք է գործեր «որպես խորհրդակցական օրգան, լուսավորության ժողովրդական կոմիսարի նախագահությամբ»: Կոլեգիայի անդամ ընտրվեց նաև բանաստեղծ Ե. Չարենցը:

1921 թ. դեկտեմբերի 31-ին հրապարակվեց «Դպրոցներում կրոնական առարկա դասավանդելու արգելքի մասին» հրամանը, որը կարևոր նշանակություն ունեցավ ուսումն ու լուսավորության գործը կրոնի ազդեցությունից հեռու պահելու համար: Լուսավորության գործը կարգավորելու նպատակով պետականացվեցին հոգևոր հարստություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկները:

Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը խոշոր աշխատանքներ ծավալեց պատմական հուշարձանները ժողովրդի սեփականությունը դարձնելու, ինչպես նաև հանրապետությունում թատերական գործը և կուլտուրայի ու արվեստի մյուս

Սովետական Հայաստանի պետհամալսարանի շենքը (այժմ՝ Ժողովրդական տնտեսության ինստիտուտ)

բնագավառները կարգացնելու համար: Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի գործունեության մեջ կարևոր նշանակություն ունեցավ Երևանի պետական համալսարանի ստեղծումը: 1920 թ. դեկտեմբերի 28-ին լուսժողկոմը «Երևանի ժողովրդական համալսարանի կազմակերպման մասին» հրամանով հավանություն է տալիս համալսարանի ժամանակավոր կանոնադրությանը, հաստատում է հաստիքային կազմը: Այդ հրամանով համալսարանի դասախոսներ են հաստատվում Մ. Աբեղյանը, Ա. Տերտերյանը, Գր. Ղափանցյանը, Ստ. Լիսիցյանը, Հ. Մանանդյանը, Թ. Թորամանյանը և ուրիշներ: Առաջին անգամ հայ աշխատավոր մասսաների զավակներին հնարավորություն է տրվում անարգել կերպով բարձրագույն կրթություն ստանալ: Լուսժողկոմի «Երևանի ժողովրդական համալսարանի ժամանակավոր կանոնադրության մասին» հրամանում ասված էր. «Երևանի ժողովրդական համալսարանը բանվորագյուղացիական ազատ դպրոց է, որը մասսաների սեփականություն է դարձնում բնական և սոցիալական գիտությունների ու նրանց ուսումնասիրության մեթոդները, նպաստելով կյանքի գիտակցական վերաշինությանը՝ կոմունիստական աշխարհայացքի հիմունքներով»: Համալսարանում առաջին հերթին առանց քննության ընդունվում էին 16 տարին լրացած «բանվորներն ու չքավոր գյուղացիները և ապա մյուս քաղաքացիները»: Անհրաժեշտության դեպքում նրանց համար կազմակերպվում էին լրացուցիչ պարապմունքներ:

Երևանի համալսարանին և, առհասարակ, կուլտուրական շինարարությանը մեծ նշանակություն էր տալիս Ալ. Մյասնիկյանը: Նա անհրաժեշտ էր համարում լայն աշխատանք ծավալել աշխատավորների կուլտուրական մակարդակը բարձրացնելու, մամուլը, գրականությունն ու կուլտուրայի բոլոր միջոցներն այդ նպատակին ծառայեցնելու ուղղությամբ: «Եթե թերթն ու գիրքը,—գրում էր նա,—ժողովրդական լայն մասսաների սեփականությունը չդառնան, ապա դրանք հրատարակելը ոչ մի միտք չունի:

Սակայն մեր կուլտուրայի կենտրոնն է կազմելու պետական համալսարանը Երևանում: Նրա, ինչպես և գրագիտության տարածման համար միջոցներ չպետք է խնայել: Սրանք համարժեք և կենսական մեծություններ են: Որովհետև համալսարանն այն հնոցն է ու լաբորատորիան, որից կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի ծայրերը: Գիրն ու ընթերցանությունը տարածելու համար պետք են լուսավոր գլուխներ, որ կտա համալսարանը: Հողի մշակությունը պահանջում է դաշտագետներ, որոնց ստեղծելու է դարձյալ համալսարանը: Արդյունագործությունն ու արհեստը չեն կարող բարգավաճել առանց ճարտարապետի, որը նույնպես պատրաստելու է համալսարանը: Ընդհանուր կուլտուրայի պարկերակը բանելու է շարունակ ու անընդհատ, եթե առողջ պահվի սիրտը: Համալսարանն այդ սիրտն է: Նա չափանիշ է լինելու հայկական կուլտուրայի, նրա մշակույթի և նրանց երկուսի կանոնավոր զարգացման: Համալսարանը կստեղծի նոր աշխատավորական ինտելիգենցիա բառի իսկական իմաստով. նա կինտելիգենտացնի ողջ երկիրը: Իսկ առանց այս հանգամանքի կդժվարանա, նույնիսկ անկարելի կդառնա սոցիալիստական կարգերի զարգացումը: Չէ՞ որ սոցիալիզմը մի ամբողջ, մի նոր, մի կատարյալ կուլտուրա է»:

Մեծ կարևորություն տալով մասսաներին բժշկասանիտարական օգնություն ցույց տալու հարցերին, Հայաստանի հեղկոմը դեկրետ է ընդունում «Ժողովրդական առողջապահության ժողկոմատ կազմակերպելու մասին»: Ժողկոմատը միավորելու էր բոլոր ցաքուցրիվ բուժական հիմնարկները:

Հեղկոմը հատուկ հրամանագիր է հրապարակում «Բծավոր տիֆի տարածման դեմ պայքարելու միջոցների մասին» և պարտադրում, որ «բոլոր տեղական հեղկոմները կամ նրանց բժշկասանիտարական բաժիններն» անհապաղ աշխատանքի կոչեն բժշկական բոլոր տեսակի մասնագետներին: Հրամանագիրը պարենավորման մարմիններին պարտավորեցնում է մթերքներով բավարարել առաջին հերթին հիվանդանոցներին ու սանիտարական հիմնարկներին: Միջոցներ են նշվում շտապ կարգով ձեռք բերելու «բոլոր անհրաժեշտ սանիտարական-տեխնիկական պիտույքները, ում և ում մոտ գտնվելիս լինեին, բացառությամբ կարմիր բանակինը, ըստ որում, այդ պիտույքների օգտագործումն ու արտահանումը պետք է տեղի ունենան բացառապես տեղական բժշկասանիտարական բաժինների թույլտվությամբ»:

Այդ ժամանակ Երևանում կուտակվել էր հսկայական թվով գաղթականություն: Շտապ միջոցներ ձեռնարկվեցին նրանց վիճակը բարելավելու, աշխատանքով ու ապրուստի միջոցներով ապահովելու համար:

Սկսվեցին վերաշինման լայն աշխատանքները: Բանվորներն ու ծառայողները կազմակերպեցին առաջին շաբաթօրյակները: 1921 թ. հունվարի 1-ին Երևանում կազմակերպված շաբաթօրյակին մասնակցում էր ավելի քան 1500 մարդ: Շրջաններում աշխատավորները եռանդուն կերպով վերականգնում էին քայքայված տնտեսությունը: Շաբաթօրյակների մասնակիցները վերականգնում էին ավերված գործարանները, ջրանցքները, ճանապարհները, կարգի գցում տների բակերն ու փողոցները:

Աշխատավորները բուռն խանդավառությամբ էին համակված: Հաղթահարելով նյութական դժվարությունները, նրանք ոչինչ չէին խնայում հարազատ երկրի տնտեսական կյանքի բարելավման ու սովետական իշխանության ամրապնդման համար:

ԼՈՌՈՒ «ՉԵԶՈՔ ԳՈՏՈՒ» ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը հնարավորություն ստեղծեց ազատագրելու «Չեզոք գոտին»: 1920 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի հեղկոմը Ս. Կասյանի ստորագրությամբ հատուկ նոտա է ուղարկում վրացական մենշևիկյան կառավարությանը՝ առաջարկելով զորքերը դուրս բերել «Չեզոք գոտու» շրջաններից և արգելք չստեղծել երկաթգծով Ադրբեջանից Հայաստան ուղարկվող տարանցիկ բեռների փոխադրման համար:

Մենշևիկյան կառավարությունը բազմաթիվ միջոցների է դիմում «Չեզոք գոտու» գյուղերում կոմունիստական կազմակերպությունները ճնշելու և գյուղացիությանը հալածելու համար: Լոռու գյուղերում և երկաթուղագծի վրա աշխատող բանվորների շրջանում գնալով ուժեղանում էր ապստամբական տրամադրությունը: Լոռու աշխատավոր գյուղացիության և բանվորների հեղափոխական պայքարը գլխավորում էին տեղական բոլշևիկյան կազմակերպությունները: Այդ գործում ղեկավար դեր էին կատարում ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն: Առանձնապես մեծ էին Ս. Օրջոնիկիձեի ծառայությունները:

1920 թ. դեկտեմբերի 20-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը Ղարաքիլիսայում կազմակերպում է ապստամբության շտաբ, իսկ 1921 թ. հունվարին այստեղ, «Չեզոք գոտու» ներկայացուցիչների մասնակցությամբ, տեղի է ունենում Լոռու կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանսը, որի աշխատանքները գլխավորում էր Ա. Մռավյանը:

Կոնֆերանսից հետո ապստամբության շտաբը հրավիրում է հատուկ խորհրդակցություն, որին մասնակցում են «Չեզոք գոտու» ներկայացուցիչները, Ղարաքիլիսայի կայազորի հրամանատարությունը, ինչպես նաև մի շարք ուրիշ պատասխանատու աշխատողներ, մշակվում է ապստամբությունը կազմակերպելու պլան:

1921 թ. փետրվարի 7-ին ստեղծվում է Լոռու ռազմահեղափոխական կոմիտե: Տեղերում ևս ստեղծվում են ընդհատակյա հեղկոմներ, ինչպես նաև պարտիզանական զինված ջոկատներ: ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն Լոռում աշխատանքները գլխավորելու համար այնտեղ էր ուղարկել Հ. Լազյանին և Գ. Առուստամյանին:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի ցուցումով ապստամբության սկիզբը որոշվում է 1921 թ. փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը: Ճիշտ ժամանակին ապստամբությունն սկսվում է: Վ. Ի. Լենինը 1921 թ. փետրվարի 28-ին Լոռու հեղափոխական պայքարի մասին նշել է. «...Փետրվարի սկզբին սարսափելի ապստամբություն բռնկվեց, որը զարմանալի արագությամբ տարածվեց և ընդգրկեց ոչ միայն հայ բնակչությանը, այլև վրացական բնակչությանը»:

Կոմունիստական կազմակերպությունների ծավալած ագիտացիայի շնորհիվ մենշևիկյան բանակի զինվորների զգալի մասն անցնում է աշխատավորների կողմը և մասնակցում ապստամբությանը: Ապստամբության շտաբն անմիջապես դիմում է կարմիր բանակի օգնությանը: Փետրվարի 12-ին 11-րդ կարմիր բանակը Ս. Օրջոնիկիձեի հրամանով անցնում է «Չեզոք գոտու» սահմանը և օգնում ապստամբ աշխատավորներին: Կարմիր բանակի զորամասերն արագորեն առաջ շարժվելով և

արժանանալով աշխատավորների խանդավառ ընդունելությանը, ապատագրում են Շահալի կայարանը, Ալավերդու գործարանը, երկաթգծի կարևոր հանգույցները: Երեք-չորս օրվա ընթացքում ամբողջ Բորչալուի գավառն ապատագրվում է, և Լոռում հաստատվում է սովետական իշխանություն:

1921 թ. փետրվարի 17-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Երևանի կոմիտեն, ողջունելով աշխատավորների հերոսական պայքարը, նշում են. «Այսօր Լոռու կարմիր հողի վրա առաջին անգամ միանում են Հայաստանի ու Վրաստանի գյուղացիները՝ ընդդեմ հայ ու վրացի տիրող դասակարգերի, որպեսզի վաղը նրանց միացյալ հարվածների տակ հօդս ցնդի Թիֆլիսում բույն դրած եվրոպական ու անդրկովկասյան հակահեղափոխության վերջին բաստիլիան՝ մենշևիկյան Վրաստանը»:

Կարմիր բանակի մուտքը Բորչալու մեծ թափ հաղորդեց Վրաստանում ծավալված հեղափոխական պայքարին: Վրաց աշխատավորությունն օրավուր անհամբեր սպասում էր կարմիր բանակի օգնությանը: 1921 թ. փետրվարի 16-ին Շուլավեր գյուղում (այժմ Շահումյան) կազմակերպվում է Վրաստանի ռազմահեղափոխական կոմիտե, որը Վրաստանում հռչակում է սովետական իշխանություն: ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստներն իրենց բոլոր ջանքերը գործադրում էին օգնելու մենշևիկներին և ճնշելու վրաց ժողովրդի պայքարը: Սակայն արդեն ուշ էր:

Կարմիր բանակի զորամասերն անցնում են հարձակման և փետրվարի 25-ին մտնում Թիֆլիս:

Սովետական իշխանությունը շուտով տարածվում է ամբողջ Վրաստանում: Դրանով ավարտվեց սովետական իշխանության հաստատումն ամբողջ Անդրկովկասում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԸ

1921 թ. հունվարի 28-ին անգլիական «Թայմս» թերթը գրում է, որ «դաշնակցական լիդերներն այս ամսի սկզբին Թիֆլիսում տեղի ունեցած կոնֆերանսում վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բոլշևիզմի դեմ» և շեշտում դրսից դաշնակցականներին օգնելու անհրաժեշտությունը:

Եվ իսկապես, դաշնակցական ավանտյուրիստները, հենվելով ներքին ու արտաքին հակասովետական ուժերի վրա, սկսեցին իրենց ելույթները: Դարալագյազում, Արագածի ստորոտում, Բաշգյառնիում և մի շարք այլ վայրերում ծվարելով, դաշնակցականները հնարավորություն ստացան նախապատրաստելու փետրվարյան ավանտյուրան: Նրանք օգտվեցին նաև ռազմական կոմունիզմի քաղաքականության առանձին միջոցառումների իրականացման ժամանակ թույլ տրված սխալներից ու վրիպումներից, որոնց հետևանքով առանձին տարրերի մոտ որոշ դժգոհություն էր առաջացել դեպի նորաստեղծ սովետական կարգերը: Մյուս կողմից, թույլ էր պայքարը կուլակային սաբոտաժի և դաշնակցական գործակալության դեմ: Դաշնակցականները որոշ լեռնային շրջաններում անգամ հանդես գալով սովետական իշխանության անունից, բռնություններ էին գործադրում գյուղացիների նկատմամբ, մտնում գյուղերը իբրև հեղկոմի կոմիսար և կողոպտում գյուղացիներին: Ապա գալիս էր դաշնակցական խմբապետը և ասում՝ տեսնո՞ւմ եք, թե բոլշևիկներն ինչպես են վարվում ձեզ հետ:

Չնայած այն բանին, որ 1921 թ. հունվարի 21-ին Հայաստանի հեղկոմը հրամանագիր էր հրապարակել «Հեղափոխական կարգ և հասարակական ապահովություն հաստատելու մասին», բայց այն փաստորեն չէր իրագործվում: Այդ հրամանագրում ասված էր. «Ներքին գործոց ժողկոմին իրավունք է վերապահվում Հայաստանի հանրապետության սահմաններից հեռացնելու հեղափոխական կարգին և հասարակական ապահովությանը վտանգ սպառնացող անձանց ու մաուզերիստներին, կողոպտիչներին, գողերին, կեղծողներին, գողացած իրեր գնողներին, գաղտնի որջեր պահողներին, անառականոցներ պահողներին և ուրիշներին... ակնհայտ հակահեղափոխականներին և չարաշահողներին»: Միայն 1921 թ. փետրվարի 9-ին Հեղկոմը Ռուսաստանի Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) լիազոր Գ. Աթարբեկյանի համառ պահանջով, հայտնվելով Երևանում ստեղծված խիստ լարված դրության առջև, ձերբակալեց մոտ 100 դաշնակցականի:

Դաշնակցական ավանտյուրայի նախապատրաստման գործում մեծ դեր խաղացին նաև արտաքին պատճառները: Դաշնակցական ավանտյուրան, խռովությունը, գրել է Գ. Աթարբեկյանը, «կրում էր ոչ տեղական բնույթ: Թուրքիան, մենշևիկյան Վրաստանը և Անտանտն այն նախապատրաստել էին, ցանկանալով հակահեղափոխությունը դարձնել ելակետ»:

Դաշնակցականներն իրենց ուժերը տեղաբաշխել էին Ապարանում, Նոր Բայազետում, Կոտայքում և Դարալագյազում: Դեկտեմբերի 2-ին դաշնակցական Կ. Սասունին անցնում է Էջմիածնի շրջան և հրահանգում միավորել հակահեղափոխական ուժերը: Դեկտեմբերի 12-ին Շիրակի և Էջմիածնի գյուղերում կազմակերպվում են գաղտնի կոմիտեներ:

Կ. Սասունին կապ էր պահպանում Դրոյի ու Ս. Վրացյանի հետ և նրանցից ստանում անհրաժեշտ տեղեկություններ ու ցուցումներ: Երևանում դաշնակցական գաղտնի կոմիտեն, կամ, ինչպես այն կոչում էին, «Հայաստանի փրկության կոմիտեն», կազմվել էր դեկտեմբերի 12-ին, դաշնակցական բյուրոյի լիազոր Ս. Վրացյանի գլխավորությամբ, որը կապ պահպանելով շրջաններում եղած դաշնակցական ուժերի հետ, ձգտում էր միավորել դրանք:

1921 թ. հունվարի 27-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը «Դաշնակցության վերջին ավանտյուրան» հոդվածում, նկարագրելով Հայաստանում ստեղծված ծանր դրությունը, կոչ էր անում լարել բոլոր ուժերը ջախջախելու դաշնակցական ավանտյուրիստներին: Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 21-ին Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպությունը ՀԿ(բ)Կ Կենտկոմին է ներկայացնում մի դիմում, որով դատապարտում է Հայաստանի հեղկոմի լիբերալ վերաբերմունքը և նշում, որ «խմբապետների տեղը ոչ թե կարմիր բանակի հրամանատարական կազմում է, այլ Արտակարգ հանձնաժողովի նկուղում»:

Փետրվարին սկսելով ավանտյուրան, դաշնակցականները «վարչապետ» Ս. Վրացյանի գլխավորությամբ իրենց պաշտոնական օրգան «Ազատ Հայաստանի» միջոցով կատաղի պայքար են ծավալում Սովետական Ռուսաստանի դեմ, փորձում մոլորեցնել մասսաներին և հաճոյանալ քեմալականներին: Հենվելով Ալեքսանդրապոլի պայմանագրի վրա, Ս. Վրացյանն իր նենգ պլանները իրագործելու համար ռազմական օգնություն է խնդրում թուրքական արևելյան ճակատի հրամանատար Բահաեդդին փաշայից:

1921 թ. փետրվարի 13-ին դաշնակցականները զինված ելույթ են սկսում Դարալագյազում: Նրանք հարձակվում են Քեշիշքենդի վրա և այնտեղ գտնըվող կարմիր բանակի զորախմբի անձնակազմին գազանաբար հոշոտում:

Փետրվարի 14-ին նշանակվում է դաշնակցական զինված ուժերի փորձնական ստուգում: Այդ հավաքին ներկայանում է 400 հոգի, որոնք, հրահանգներ ստանալով, վերադառնում են տեղերը՝ պատրաստվելու հակասովետական ելույթների: Նույն օրը «Հայրենիքի փրկության կոմիտեն» ծածկագիր հրահանգ է ուղարկում, պահանջելով փետրվարի 16-ի գիշերը Երևանում և մնացած տեղերում ըսկսել խռովությունը:

Դաշնակցականները հարձակում են սկսում Բաշգյառնիում, Ապարանում, Նոր Բայազետում, Ախտայում (Հրազդան) և մի շարք այլ շրջաններում: Բաշգյառնիում էր գտնվում դաշնակցականների գլխավոր շտաբը: Փետրվարի 15-ին նրանք Բաշգյառնիում, Ալագյազի ստորոտում և Նեբլու գյուղում կենտրոնացրել էին Երևանի վրա հարձակվելու համար նախատեսված ուժերը: Փետրվարի 16-ին դաշնակցականները գրավում են Բաշգյառնիի մի շարք գյուղեր, շարժվում դեպի Քանաքեռ և այստեղից հարձակվում Երևանի վրա: Դաշնակցական մեկ այլ խումբ գործում էր Ելենովկա-Դիլիջան գծի վրա, նպատակ ունենալով գրավել այն և խանգարել Ադրբեջանից եկող կարմիր բանակի գործողությունները:

Դաշնակցական ավանտյուրիստների մյուս խումբը շարժվում է դեպի Էլար (Աբովյան) և գրավում այն: Նրան հաջողվում է վերցնել Մհուբը և կտրել հեռախոսային կապը Երևանի ու Ելենովկայի միջև: Բաշգյառնիից մի ուրիշ բանդա հարձակվում է Շորբուլաղի վրա և խնդիր դնում Երևանին հարվածել արևելյան կողմից: Մի այլ բանդա փետրվարի 16-ին Բաշգյառնիից շարժվում է դեպի Վ. Աղբաշ գյուղը՝ նպատակ ունենալով կտրել Երևանի և սովետական Նախիջևանի միջև ընկած երկաթգիծը: Փետրվարի 16-ին դաշնակցական ավանտյուրիստներն իրենց հարձակումը սկսում են Աշտարակ—Էջմիածին—Երևան ուղղություններով, որտեղ գործում էին Արագածի ստորոտում կենտրոնացած մաուզերիստական խմբերը: Հաջորդ օրը՝ փետրվարի 17-ին, նրանց հաջողվում է գրավել Աշտարակի և Էջմիածնի շրջանները:

Փետրվարի 17-ին դաշնակցականները շրջապատում են Երևանը: Այստեղ կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ քաղաքի աշխատավորները կազմակերպում են խմբեր և կոմունիստական ջոկատներ, որոնց մեջ են մտնում ռազմաքաղաքական դպրոցի ունկնդիրները, միլիցիայի աշխատակիցները և այլն: Այդ ժամանակ Երևանի պաշտպաններին օգնության են հասնում կարմիր բանակի փոքրաթիվ զորամասերը: Փետրվարի 17-ին և 18-ին Երևանի շուրջը և նրա փողոցներում կատաղի մարտեր են տեղի ունենում: Կարմիր բանակի մի ջոկատ Երմոլենկոյի գլխավորությամբ փետրվարի 17-ին Քանաքեռի տակ 4 ժամ շարունակ կռիվ է մղում թվով մի քանի անգամ գերազանցող դաշնակցական խմբերի դեմ: Ջոկատն ի վերջո շրջապատվում է և ամբողջովին ոչնչացվում: Ջոկատի հրամանատար Երմոլենկոն կոտորվում է: Երևանի պաշտպանները թշնամու գերակշռող ուժերին մի քանի անգամ ետ են շպրտում, սակայն

թշնամին շարունակ նոր ուժեր է ստանում շրջաններից և ուժեղացնում հարձակումը:

Փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը թշնամին կարողանում է Կոնդի ու Նորքի կողմից ներխուժել քաղաք և միանալ քաղաքի ներսում գտնվող հակահեղափոխական ուժերին: Փետրվարի 18-ին Երևանի փողոցներում տեղի են ունենում կատաղի մարտեր: Շահթախթից Երևանին օգնության եկող կարմիր բանակի 178-րդ գունդն ուշանում է և երբ հակահեղափոխական ուժերի դեմ մարտի մեջ է մըտնում, քաղաքն արդեն գրավված էր: Կարմիր բանակի հրամանատարությունն անհրաժեշտ է գտնում ուժերը խնայելու համար նահանջել: Գունդը շարժվում է Երևան—Ղամարլու—Ջուլֆա երկաթգծի ուղղությամբ, նպատակ ունենալով կարմիր բանակի ձեռքում պահել երկաթգծի այդ կարևոր հանգույցը:

Երևանից բացի, թշնամին գրավում է նաև Էջմիածնի, Աշտարակի, Ապարանի, Ախտայի, Կոտայքի, Նոր Բայազետի և Դարալագյազի շրջանները: Սովետական իշխանությունը կանգուն մնաց Ղամարլուում (Արտաշատ), Ղարաքիլիսայում (Կիրովական), Դիլիջանում և Ղազախ-Շամշադինում, ինչպես նաև մենշևիկյան լծից ազատագրված Լոռում:

Փետրվարի 18-ին կարմիր բանակի զորամասերը՝ Աղբաշ գյուղի շրջանում գտնվող Հայկական առաջին հրաձգային բրիգադը (2-րդ և 3-րդ գընդերը, որոնց կոմիսարն էր Լ. Մխչյանը), 178-րդ հրաձգային գունդը և կարմիր բանակի երևանյան զորամասերը, Բլագովիդովի էսկադրոնն ու չորս մարտկոց «Ազատամարտ» և «Մուսայելյան» անունները կրող զրահագնացքների պաշտպանության տակ սկսում են երկաթգծով ետ նահանջել դեպի Շիրազլու—Արարատ կայարանը: Նրանց հետ էր նաև Ցանուշևսկու կոմունիստական պարտիզանական ջոկատը: Կարմիր բանակի զորամասերի հետ քաղաքից դուրս են գալիս նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմը, Հայաստանի հեղկոմը, Սովետական Հայաստանի մի շարք հիմնարկներ, ժողկոմատներ ու կազմակերպություններ: Կարմիր բանակի զորամասերն իրենց հետ տանում են երեք շոգեքարշ և մի քանի վագոն պարեն ու ռազմամթերք, որը, սակայն, շատ քիչ էր:

1921 թ. մարտի 4-ին Հայաստանի հեղկոմը հատուկ կոչով դիմում է աշխատավորությանը և պահանջում լարել բոլոր ուժերը ընդդեմ հակահեղափոխության: Կոչում ասված էր. «Հայաստանի խորհըրդային իշխանության ոչ թե հանցանքը, այլ քաղաքական սխալը կայանում է նրանում, որ նա դաշնակների դավադրության իրագործման միայն նախօրյակին ձեռնարկեց այդ կուսակցության մի շարք ղեկավարների ձերբակալումը»:

Փետրվար ամսին Ղամարլուի և Վեդու (Արարատ) շրջաններում կարմիր բանակի զորամասերը թշնամու դեմ սկսում են հերոսական պայքարը, որը շարունակվում է 45 օր՝ մինչև մարտի 9-ը: Հեղկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամները, անձամբ մասնակցելով մարտական գործողություններին, իրենց օրինակով ոգեշնչում էին կռվող կարմիր մարտիկներին ու պարտիզաններին: Էջմիածնի գյուղացիները, դիմադրելով խմբապետներին, հայտարարում էին, թե իրենք չեն կարող պատերազմի գնալ և կռվել իրենց եղբայրների ու հարազատների դեմ: Նրանք երդվում էին զենքը «վայր չդնել մինչև Հայաստանում վերջնականապես հաստատվի բանվորների և գյուղացիների իշխանությունը»:

Դաշնակցականները մեծ հույսեր էին կապում մենշևիկյան Վրաստանի հետ: «Դաշնակցական երևանյան հեղաշրջման ոգեշնչողներին պետք է փնտրել Թիֆլիսում»,— ասել է Ս. Օրջոնիկիձեն: 1921 թ. փետրվարի 21-ին մենշևիկյան կառավարության արտաքին գործերի մինիստր Սաբախտարաշվիլին հատուկ ողջույնի հեռագիր է ուղարկում Ս. Վրացյանին և իր կառավարության օգնությունն է առաջարկում դաշնակ ավանտյուրիստներին, նշելով, որ նրանց պատրաստ են օգնելու նաև իմպերիալիստական արտաքին ուժերը: Սակայն այդ հույսերը խորտակվեցին, երբ փետրվարի 25-ին Վրաստանում հաղթանակեցին սովետական կարգերը: Դա ինքնին մի մեծ հարված էր դաշնակցական ավանտյուրային: Դաշնակցականները սկսում են ավելի ուժգին բախել քեմալականների դռները: «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանը 1921 թ. մարտի 1-ին օգնության խնդրանքով պաշտոնապես դիմում է Թուրքիայի կառավարությանը: Ս. Վրացյանը հենվում էր 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագրի վրա և համաձայնում Հայաստանը նորից դնել Թուրքիայի լծի տակ՝ վերջինից խնդրելով կատարել այդ պայմանագրի պայմանները: Ս. Վրացյանը մարտի 18-ին նորից է դիմում Թուրքիայի «Ազգային ժողովին», խնդրելով օգնություն ցույց տալ զինամթերքով: Դաշնակցականները օգնություն են հայցում նաև անգլիական իմպերիալիստներից ու Իրանի խաներից:

Բայց դաշնակցականների հակաժողովրդական գործելակերպն է՛լ ավելի է գրգռում աշխատավոր մասսաների զայրույթը: Կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ ամենուրեք ստեղծվում են գումարտակներ դաշնակցական արկածախնդիրների դեմ պայքարելու համար: Փետըր-

վարի 26-ին Ղազախ—Շամշադինի գավառի Քարվանսարա, Սևքար, Աչաջուր և մի շարք այլ գյուղերում կազմակերպված այդպիսի գումարտակները մեկնում են Ելենովկա և օգնության հասնում կարմիր բանակի զորքերին: Այդպես են վարվում նաև Դիլիջանում, Ղարաքիլիսայում, Ղամարլուում, Վեդիում, Ելենովկայում, Լոռիում՝ բոլոր այն վայրերում, ուր կանգուն էր սովետական իշխանությունը: Այդպիսի ջոկատներ են կազմակերպվում նաև Նոր Բայազետի շրջանում: Օրդաքլու գյուղում, օրինակ, փետրվարի վերջին կազմակերպվում է 500 հոգուց բաղկացած ջոկատ, որը մարտի 15-ին մասնակցում է Նոր Բայազետի ազատագրման համար մղված մարտերին:

Կտրված լինելով գլխավոր կետերից, Հայաստանի հեղկոմը չէր կարողանում կապվել շրջանների հետ և իրականացնել ընդհանուր ղեկավարությունը: Կազմակերպական աշխատանքը կատարում էին տեղական կոմունիստական կազմակերպությունները: 1921 թ. փետրվարի 26-ին Դիլիջանում Գ. Աթարբեկյանի գլխավորությամբ կազմակերպվում է Դիլիջան—Ղարաքիլիսա գավառների Ռազմահեղափոխական կոմիտե: Շուտով ինքնաթիռով դրամ և նյութական միջոցներ են հասցվում Վեդիում գտնվող հեղկոմին, օգնության են հասնում նաև կարմիր բանակի զորամասերը, որ նաև բարոյաքաղաքական մեծ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հերոսական պայքարի ընթացքի համար:

1921 թ. մարտի 25-ից կարմիր բանակի սկսած ընդհանուր հարձակումը պսակվեց լիակատար հաղթանակով: Ապրիլի 2-ին, հերոսական մարտեր մղելով, 11-րդ կարմիր բանակի զորամասերը երկու կողմից մոտենում են Երևանին: Նույն օրը զորամասերից մեկը քաղաք է մտնում Քանաքեռի, իսկ մյուսը՝ Աշտարակի կողմից: Նորից Երևանի վրա ծածանվում է Հոկտեմբերի կարմիր դրոշը:

Ապրիլի 3-ին դաշնակցականներից ազատագըրվում է նաև Էջմիածինը: Ապրիլի 4-ին Երևանի և նրա շրջակայքի աշխատավորները ցնծությամբ են դիմավորում ազատարար կարմիր մարտիկներին:

1921 թ. ապրիլի 7-ին ազատագրվում է նաև Բաշգյառնին՝ դաշնակցական ավանտյուրայի գլխավոր կենտրոնը: Ապրիլի 9—15-ը ազատագրվում են նաև Հայաստանի մի շարք այլ կարևոր շրջաններ: Հայկական առաջին հրաձգային բրիգադի զորամասերն ապրիլի 12-ին սկսում են իրենց հարձակողական մարտերը Դարալագյազում կենտրոնացած դաշնակցական հրոսակախմբերի դեմ: Ապրիլի 14-ին կարմիր զորքերն ազատագրում են Արփա գյուղը, 15ին՝ Ահնիձորը, Քեշիշքենդը և Գնդևազը: Դաշնակցական ավանտյուրան լիկվիդացվում է նաև Ղարանլուղում (Մարտունի), Բասարգեչարում (Վարդենիս):

Հայ ժողովրդի վրա դաշնակցական խռովությունը ծանր նստեց: Դաշնակցական ավանտյուրիստները հափշտակում էին աշխատավորների վերջին ունեցվածքն ու սովի մատնում նրանց ընտանիքները: Փախուստի ժամանակ նրանք իրենց հետ տարան բազմաթիվ թանկարժեք իրեր, ավերեցին Հայաստանի թանգարանները, վերցրին շատ նկարներ, որոնց մի մասը տեղափոխեցին արտասահման: Դաշնակցական պարագլուխները հափշտակեցին և իրենց հետ արտասահման տարան պետական գանձարանի հարստությունը և պետական հիմնարկներից այլ թանկարժեք իրեր:

1921 թ. մարտի 25-ին, երբ կարմիր բանակն արդեն մոտենում էր Երևանին, դաշնակցականները, տեսնելով իրենց ծանր դրությունը, Երևանի բանտից առանձնացնում և ուժեղ հսկողության տակ դեպի Բաշգյառնի ու Զանգեզուր են ուղարկում 69 հեղափոխական մարտիկների՝ նրանց այնտեղ գազանաբար հոշոտելու համար: Ապրիլի 3-ին Բաշգյառնիի մոտ դաշնակցականները խոր ձորն են գլորում 3 հիվանդի, իսկ 5-ին՝ այդ թվում Հայաստանի կոմերիտմիության ականավոր գործիչ Ա. Բուդաղյանին և բոլշևիկ Տ. Թաղիանոսյանին, Վեդու շրջանում սվինահար են անում: Մինչև Քեշիշքենդ հասնելը դաշնակցականները սպանում են նաև կարմիր հրամանատար Ռ. Պողոսյանին և զինկոմ Ն. Օլթեցյանին: Քեշիշքենդում նրանք Զանգեզուր քշվող մարտիկներին են միացնում 40 հոգուց բաղկացած մի նոր խումբ: Ապրիլի 13-ին դաշնակցական ավանտյուրիստները բանտարկյալներին խիստ հսկողության տակ բերում են Գնդևազ, իսկ մի քանի օր հետո Տաթևի մոտ 104 հեղափոխական գործիչների գնդակահարում և ժայռից ձորն են նետում:

Փետրվարյան ավանտյուրայի տապալումից հետո դաշնակցության պարտված ուժերը քաշվում են դեպի Զանգեզուր և միանում Նժդեհի զորամասերին:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում տեղի էր ունեցել դաշնակցականների, հոգևորականների և կուլակային խավերի առաջին համագումարը, որը Զանգեզուրը հայտարարել էր «Ինքնավար Սյունիք»: Այն կոչվում էր նաև «Ազատ Սյունիք»: Նժդեհը, որպես ռազմական դիկտատոր, հայտարարվել էր «Սյունաց սպարապետ», որը, կապ հաստատելով արտաքին ուժերի հետ, հույս էր դնում նրանց օգնությամբ Հայաստանում տապա-



Հայաստանում սովետական կարգերի 50 ամյակին նվիրված հուշասյուն

լել սովետական իշխանությունը և վերականգնել դաշնակցական բռնապետությունը:

1921 թ. ապրիլի 21-ին Տաթևում կայացած դաշնակցականների ժողովը լուծարքի ենթարկեց «Հայրենիքի փրկության կոմիտեն» և ստեղծեց «Հայաստանի կառավարություն»: Շուտով, ապրիլի 26-ին, Տաթևի վանքում հրավիրվում է «Ինքնավար Սյունիքի» II համագումարը, որի որոշմամբ Զանգեզուրը հայտարարվում է «Լեռնահայաստան», իսկ Գորիսը՝ նրա մայրաքաղաք: Այստեղ էլ հենց կազմըվեց դաշնակցական կառավարության պառլամենտը, նշանակվեցին նախարարներ: Ապրիլի 27-ին Նժդեհը հաստատվեց «Լեռնահայաստանի» վարչապետ:

Սովետական Հայաստանի կառավարությունը, ցանկանալով վերջ տալ արյունահեղությանը, 1921 թ. մայիսի սկզբներից սկսեց խաղաղ բանակցություններ վարել «Լեռնահայաստանի» կառավարողների հետ: Բանակցությունների վայր նշանակվեց Սիսիանի շրջանի Ղալաջուղ գյուղը, որտեղ մայիսի 12-ին տեղի ունեցավ երկու կողմերի պատվիրակների առաջին նիստը: Սովետական Հայաստանի պատվիրակները (Ա. Կարինյան, Վ. Մելնիկով) առաջարկեցին «վերջ տալ ազգամիջյան պատերազմներին և ստեղծել աշխատավորական ուժեղ բանվորագյուղացիական իշխանություն, որը պիտի խաղաղ աշխատանքի և խորհրդային իշխանության գործի հետ կապի հայ ժողովրդի բոլոր տարրերին՝ գյուղացիության լավագույն խավերից սկըսած մինչև հայ մտավորականության բոլոր խմբակցությունները»: Սակայն դաշնակցականները մերժեցին այդ առաջարկը՝ պատճառաբանելով, որ միայն «Լեռնահայաստանի» համագումարն է իրավասու այդ որոշելու:

Դաշնակցականներն ամեն կերպ ձգտում էին ժողովրդից գաղտնի պահել սովետական պատվիրակության ժամանումը Ղալաջուղ: Սակայն շուտով այդ մասին հայտնի դարձավ շրջակա գյուղերում և մոտակա զորամասերում, որը խթանեց Սովետական Հայաստանին միանալու՝ աշխատավորների բուռն ձգտման բացահայտ դրսևորմանը:

Զանգեզուրում դաշնակցականների միջև ևս ներքին պայքար էր մղվում: Այն հատկապես սուր էր Նժդեհի և Ս. Վրացյանի միջև: 1921 թ. մայիսի 28-ին Նժդեհի և Ս. Վրացյանի միջև տեղի ունեցած բանակցություններն ավարտվեցին նրանով, որ, վերջապես, հունիսի 1-ին փաստորեն գոյություն ունեցող երկու կառավարությունները ձուլվեցին, և ստեղծվեց այսպես կոչված «Հայաստանի կառավարություն», որի վարչապետը դարձավ Ս. Վրացյանը, Նժդեհին թողնելով ռազմական ուժերի հրամանատարությունը:

Ինչպես նշում է Գ. Աթարբեկյանը, Զանգեզուրում հակասովետական խռովությունը ջախջախելու հարցը մանրամասնորեն քննարկվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հեղկոմի միացյալ նիստում՝ Ս. Օրջոնիկիձեի, Ա. Գեկկերի և Շ. Էլիավայի մասնակցությամբ: Խորհրդակցությունը գալիս է այն եզրակացության, որ անհրաժեշտ է փորձել խռովությանը վերջ տալ խաղաղ ճանապարհով: Այդ նպատակով լրացուցիչ ներում է հրապարակվում՝ ընդհուպ մինչև Ս. Վրացյանի նկատմամբ:

Սակայն Զանգեզուրի «տիրակալները» Սովետական Հայաստանի կառավարության խաղաղասիրական առաջարկին պատասխանեցին մարտահրավերով: 1921 թ. հունիսի 15-ի գիշերը նրանց զորքերը հարձակվեցին Դարալագյազում գտնվող կարմիր զորամասերի վրա: Նրանց նպատակն էր գրավել Արփայի կամուրջը և շրջապատման մեջ առնելով՝ ջախջախել կարմիր բանակի զորամասերը: Բայց կարմիր բանակի հերոս մարտիկները համառ մարտերով ճեղքեցին շղթան, դուրս եկան շրջապատումից և ամրացան Արփա գյուղի բարձունքներում: Դաշնակցականները, գրավելով Չանախչի—Արփա—Գնիշիկ գիծը, սկսեցին դաժան կերպով տանջել և հալածել տեղացի աշխատավորներին: Այդ ժամանակ Սովետական Հայաստանի կառավարական մարմիններում որոշ կազմակերպչական բարեփոխումներ էին տեղի ունեցել: Դեռ 1921 թ. մայիսին Հայաստանի հեղկոմը վերակազմըվել և ստեղծվել էր ՀՍՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհուրդ, որի նախագահը դարձավ Ալ. Մյասնիկյանը (Մարտունի):

1921 թ. հունիսի 19-ին ՀՍՍՀ Ժողկոմխորհը Զանգեզուրում վերսկսված կռիվների առթիվ հատուկ կոչով դիմեց հայ աշխատավորությանը: Այդ կոչում ասված էր. «Աշխատավորներ, մենք չէինք, որ ուզում էինք այս կռիվը, բայց մենք ստիպված ենք այժմ ընդունել այն: ...Մենք մի րոպե անգամ չենք կասկածում, թե ով պիտի լինի հաղթողն այս կռվում: Խորհրդային իշխանությունը, որ այսօր հաստատորեն ամրապնդվել է համայն Ռուսաստանում, Ասիայի մեծ մասում և ամբողջ Կովկասում, կխորտակի և Զանգեզուրի հակահեղափոխական որջը:

Այս կռվի ծանրության ամբողջ մեղքն ընկնում է Զանգեզուրում ապաստանած խմբապետների ու «փրկիչների» վրա: Աշխատավորության անեծքը թող լիովին ընկնի նրանց արդեն իսկ դամբարանի վրա»:

Այդ նույն օրը Սովետական Հայաստանի բազմաթիվ շրջաններում տեղի են ունենում աշխատավորների և կարմիրբանակայինների միտինգներ, որտեղ որոշումներ են ընդունվում՝ լարելու բոլոր ուժերը դաշնակցականների ավանտյուրիստական իշխանությունը Զանգեզուրում տապալելու և այնտեղ սովետական կարգեր հաստատելու մասին:

Ալ. Մյասնիկյանի և Երևանի ռազմական խմբավորման շտաբի պետի ստորագրությամբ Հայաստանի կարմիր բանակի զորամասերին հրաման է տրվում ազատագրելու Զանգեզուրը: Այդ հրամանում ասված էր. «Մենք հաշտություն էինք ցանկանում, մենք մեր աշխատավոր ժողովրդի կոշտացած ձեռքը մեկնեցինք զանգեզուրցիներին, մենք առաջարկեցինք նրանց ցած դնել զենքը և միանալ մեր մտերիմ, հարազատ ընտանիքին, բայց նրանք դիմավորեցին մեզ գնդակներով:

...Սովետական Հայաստանը, որը շահագրգռված է Զանգեզուրն իր մայր հեղափոխական ընտանիքի գիրկն ընդունելու և ազատելու երկիրը զանազան բախտախնդիրներից ու հակահեղափոխական կեղտոտ արատից, նորից կոչ է անում ձեզ գրոհ տալ, Զանգեզուրի մախնոյական դավաճանական գայլին մահացու հարված հասցնել»:

Հունիսի 20-ին Հայկական առաջին հրաձգային բրիգադը գրավում է Քեշիշքենդը, 22-ին՝ Արփա գյուղը, 26-ին՝ Նոր Փաշալուն ու Գնդևազը և առաջ շարժվելով՝ մոտենում Զանգեզուրին:

Կարմիր զորամասերը աշխատավորների մեջ լայն ագիտացիոն-մասսայական աշխատանք էին տանում: Նրանք տարածում էին պլակատներ, թերթեր և գրականություն: Քեշիշքենդ և Մալիշկա գյուղերում նրանք ստեղծում են ակումբ, շատ տեղերում՝ խրճիթ-ընթերցարաններ, կազմակերպում են երեկոներ, ներկայացումներ:

Հունիսի 30-ին Հայկական առաջին հրաձգային բրիգադի զորամասերը մտնում են Սիսիան: Հուլիսի 2-ին Ղարաբաղի սահմանից, Շուշի քաղաքի կողմից դեպի Գորիս են շարժվում կարմիր բանակի զորամասերը (82-րդ հետևակ բրիգադը, 124-րդ առանձին բրիգադը և 108-րդ հեծելագունդը) և նույն օրը մտնում Գորիս: Միաժամանակ Գորիս է հասնում նաև Հայկական հեծյալ գունդը: Գորիսի շրջանը վերջնականապես ազատագրվում է դաշնակցական բանդաներից: Նժդեհի ջարդված բանդաները քաշվում են դեպի Ղափան—Մեղրի, ձգտելով այդ շրջաններում ուժեր հավաքագրել և շարունակել պայքարը սովետական իշխանության դեմ:

Սակայն կարմիր բանակի զորամասերը, հետապնդելով դաշնակցական ավանտյուրիստներին, քայլ առ քայլ ջախջախում են նրանց:

Հայկական հեծյալ գունդը հունիսի 4-ին ազատագրում է Տաթևը, իսկ Ղարաբաղ-Զանգեզուրյան խմբի զորքերը հուլիսի 7-ին՝ Ղափանը: Հուլիսին 11-րդ բանակի հետախուզությունը հաղորդում է, որ թշնամու փախուստի մատնված զորքերը Քյուրդքենդ գյուղի մոտ անցնում են Արաքսը և մեկնում Պարսկաստան: Հուլիսի 13-ին առանց կռվի ազատագրվում է Մեղրին:

Զանգեզուրում կարմիր բանակի զորամասերի հրամանատարությունը հուլիսի 16-ին հատուկ հրամանագիր է հրապարակում, որտեղ ասված էր, որ Զանգեզուրում վերջ է տրված դաշնակցական ավանտյուրային: Հայ աշխատավորությունն ազատագրված է ճնշողների լծից և կարող է անցնել շինարարական խաղաղ աշխատանքի: Այսպիսով, Հայաստանում քաղաքացիական կռիվներն ավարտվում են հեղափոխական ուժերի լիակատար հաղթանակով:

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Ազատագրված և վերածննդի ուղին բռնած հայ ժողովուրդը, ոգեշնչված ռուս և եղբայրական մյուս ժողովուրդների օգնությամբ, մեծ եռանդով սկսեց կառուցել իր նոր, սոցիալիստական կյանքը:

Սովետական իշխանությունը Հայաստանում դաշնակցական տիրապետությունից ժառանգել էր լիովին քայքայված և ավերված տնտեսություն: Բավական է նշել, որ երկրում կային 50 հազար որբեր, 200.000 անտուն գաղթականներ, որոնք զրկված էին ապրուստի նվազագույն պայմաններից: 1920 թ. Հայաստանում բամբակի մշակումը դադարել էր, իսկ նախքան պատերազմը տարեկան ավելի քան 700.000 փութ բամբակի հումք էր ստացվում: Այդպիսի անկման հասավ նաև խաղողագործությունը: Եթե 1913 թ. Հայաստանում ստացվում էր 16,5 միլիոն աստիճան սպիրտ, ապա 1920 թ.՝ 1,5 միլիոն աստիճան, իսկ 3,3 միլիոն դույլ գինու արտադրությունը նվազեց՝ հասնելով մինչև 100—150 հազար դույլի: Պահածոների արտադրությունը, որը նախքան պատերազմը կազմում էր տարեկան մոտ 100 հազար փութ, բոլորովին դադարել էր: Նույն վիճակին էր հասել նաև հացահատիկի և մյուս կուլտուրաների մշակումը:

Արդյունաբերությունը, հատկապես պղնձարդյունաբերությունը, բոլորովին քայքայվել էր:

Հայ ժողովուրդը, տեր դառնալով իր երկրին և ստեղծելով իր պետությունը, սկսեց արագ թափով առաջ ընթանալ Հոկտեմբերյան հեղափոխության նշած ուղիով: Նրան օգնություն կազմակերպելու գործին մեծ հոգատարությամբ էր հետևում Վ. Ի. Լենինը: Սովետական Հայաստանի զարգացման և բարգավաճման համար ծրագրային նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի պատմական նամակը՝ «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին»: 1921 թ. մայիսի սկզբներին այդ նամակը հրապարակվեց մամուլում և աշխատավորության կողմից ընդունվեց մեծ խանդավառությամբ: Այդ նամակում Վ. Ի. Լենինն, ընդգծելով Կովկասի յուրահատկությունները, առաջադրում էր մի շարք այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք էին խաղաղության ամրապնդումը և սովետական հանրապետությունների եղբայրական միության ստեղծումը, նոր տնտեսական քաղաքականության հիման վրա սովետական իշխանության ամրապնդումը, երկրամասի էկոնոմիկայի զարգացումը՝ ժողովրդական տնտեսությունն էլեկտրիֆիկացնելու հիման վրա, գյուղատնտեսության զարգացումը՝ ոռոգման աշխատանքների ընդլայնման միջոցով և այլն:

Վ. Ի. Լենինն իր դիրեկտիվ նամակում նշելով, որ «...կովկասյան հանրապետություններն է՛լ ավելի գյուղացիական երկրներ են, քան Ռուսաստանը», որ նրանցում արդյունաբերությունն ավելի թույլ էր զարգացած և բանվոր դասակարգը փոքրաթիվ էր, Անդրկովկասի հանրապետությունների առաջնահերթ խնդիրն էր համարում քայքայված գյուղատնտեսության վերականգնումը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ՀԿ(բ)Կ Կենտկոմը դիմեց աշխատավորներին և կուսակցության անդամներին, նրանց կոչ անելով բոլոր ուժերն ի սպաս դնել երկրի տնտեսական ճակատի կազմակերպմանը: Այդ կոչն աշխատանքային մեծ խանդավառություն առաջացրեց մասսաների մեջ:

Այսպես, օրինակ, 1921 թ. մայիսի 21-ին Թալին գյուղում հրավիրվեց Էջմիածնի գավառի գաղթական գյուղացիների համագումարը, որի մասնակիցներն իրենց ընդունած բանաձևում գրում էին. «Երդվում ենք մեր սրբազան աշխատանքով ամրապնդել և ապահովել աղքատ գյուղացիներիս համար հարազատ բանվորագյուղացիական բանակը հակահեղափոխական ոտնձգություններից»: Էջմիածնի գավառի գաղթականներն իրենց պատրաստակամությունն են հայտնում լարելու բոլոր ուժերը երկրի քայքայված, ավերված տնտեսությունը վերականգնելու համար: Համագումարը ողջույնի հեռագիր է ուղարկում ժողովուրդների մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինին, Հայաստանի կոմկուսի Կենտկոմին,

Հայաստանում սովետական իշխանության հաստատման համար զոհվածների հուշարձանը

Ա. Մռավյանը և Ս. Տեր-Գաբրիելյանը Վ. Ի. Լենինի մոտ

Ադրբեջանի և Վրաստանի սովետական կառավարություններին: 1921 թ. հունիսի 17-ին Բաշգյառնիում տեղի ունեցավ 50 գյուղերի գյուղացիների միացյալ համագումարը, որտեղ որոշում կայացվեց վերակառուցել աշխատանքը գյուղում և պատվով կատարել երկրի տնտեսության վերականգնման աշխատանքները:

Սակայն Հայաստանի համար ծայր աստիճան դժվար էր սեփական միջոցներով վերականգնել քայքայված տնտեսությունը: Նրան մեծ և անշահախնդիր օգնություն ցույց տվեց ռուս մեծ ժողովուրդը, Սովետական Ռուսաստանը: Դեռ 1920 թ. դեկտեմբերի 12-ին Վ. Ի. Լենինը, ընդունելով Հայաստանի հեղկոմի անդամներին, մանրամասն ծանոթանում է Հայաստանի տնտեսական-քաղաքական վիճակին և նշում, որ Սովետական Ռուսաստանը բոլոր միջոցները ձեռք կառնի օգնելու Հայաստանին:

Որպես առաջին օգնություն հենց 1920 թ. դեկտեմբերին Սովետական Ռուսաստանի ֆինժողկոմատը Հայաստանին բաց է թողնում երկու միլիարդ ռուբլու սովետական թղթադրամ (ոսկու հաշվով 600 հազար ռուբլի): Վ. Ի. Լենինի հրահանգով Հայաստան են ուղարկվում հացահատիկ, սննդամթերք, կտորեղեն, գործիքներ և այլ իրեր: Հայաստանը Ռուսաստանից ստանում է սերմացու, իսկ Մոսկվայի բանվորներն օգնության կարգով մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ են ուղարկում: Հայաստանի կոմկուսի Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը գրել է. «Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Հայաստանի սերտ համերաշխության ու համագործակցության մի փառավոր փաստ է այն նվերը, որ Մոսկվայի բանվորներն իրենց համեստ պահեստներից բաժին են բերում գյուղացիական Հայաստանին:

Հայաստանի աշխատավորությունն արդեն կգում է իր թիկունքում կանգնած վիթխարի Ռուսաստանի անհաղթելի ուժը և այդ հանգամանքը նոր եռանդ պիտի ներշնչի մեր բանվորագյուղացիությանը՝ տասնապատկելու իր ջանքերը շինարարության աշխատանքի ասպարեզում»:

1921 թ. ապրիլին Սովետական Ռուսաստանի Ժողկոմխորհի հատուկ որոշմամբ մեկուկես միլիոն ռուբլի (ոսկու կուրսով) դրամ է բաց թողնվում Հայաստանին՝ նրա տնտեսական ծանր վիճակը շտկելու համար: 1921 թ. ապրիլի 9-ին Վ. Ի. Լենինը Ս. Օրջոնիկիձեին հեռագրում է. «Ստացա Ձեր ծածկագիրը Անդրկովկասի պարենային հուսահատական դրության մասին: Մենք ձեռք առանք մի շարք միջոցներ, Հայաստանին մի քիչ ոսկի տըվինք...» Իվանովո-Վոզնեսենսկի տեքստիլագործ բանվորները 1922 թ. Սովետական Հայաստանին՝ Ալեքսանդրապոլում կառուցվող տեքստիլ ֆաբրիկայի համար, նվեր ուղարկեցին տեքստիլ ֆաբրիկայի սարքավորում: Ժամանակի ընթացքում այն վերաճեց տեքստիլ մեծ կոմբինատի, որը Լենինականը դարձրեց հանրապետության տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոն:

Սովետական Հայաստանին օգնություն էին ցույց տալիս նաև Անդրկովկասի մյուս հանրապետությունները: Սովետական Ադրբեջանից Հայաստանն առանց վճարի ստացել է ավելի քան 36 հազար փութ վառելանյութ՝ նավթ, բենզին, մազութ և այլն:



РЕСПУБЛИКА

СОВЕТ

НАРОДНЫХ КОМИССАРОВ

Москва, Кремль

В СМЕТНЫЙ ОТДЕЛ ЦЕНТРАЛЬНОГО ... УПРАВЛЕНИЯ НК ФИНАНСОВ.

Пр.№ 656 п.5.

ПОСТАНОВЛЕНИЕ.

Совет Народных Комиссаров в заседании от 4-го Апреля 1921 года,

ПОСТАНОВИЛ:

1/Отпустить параграфом особым последним к смете Народного Комиссариата Финансов Р.С.Ф.С.Р. в ссуду Советской Армении ОДИН МИЛЛИАРД, СТО ДВАДЦАТЬ ПЯТЬ МИЛЛИОНОВ РУБЛЕЙ /1.125.000.000 р./, составляющих по курсу один золотой рубль – семьсот пятьдесят руб. советскими знаками – ОДИН МИЛЛИОН, ПЯТЬСОТ ТЫСЯЧ РУБЛЕЙ /1.500.000 руб./ золотом.

2/Выдать эту ссуду в валюте равноценной указанному в пункте 1-м количестве золотых рублей.

Председатель Совета Народных Комиссаров

Секретарь:

ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի որոշումը Սովետական Հայաստանին դրամական օգնություն ցույց տալու մասին

Հայաստանին օգնելու համար ուղարկված հացով ու նավթով բարձված առաջին գնացքը:

1921 թ. երկրի պարենային դրությունը շատ ծանր էր: Սովի հետևանքով մի շարք տեղերում դժգոհություններ էին առաջանում, որը և ամեն կերպ ցանկանում էր օգտագործել դասակարգային թշնամին: 1922 թ. ապրիլի 9-ին Ս. Օրջոնիկիձեն, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի պլենումում ելույթ ունենալով, նշում էր, որ ստեղծված ծանր դրությունից դուրս գալու համար անհրաժեշտ է ուժեղացնել կապը ինչպես Անդրկովկասի հանրապետությունների, այնպես էլ Դաղստանի միջև: Նա նշում էր, որ «ընկեր Լենինը ցուցում է տվել սովետական հանրապետությունների միավորման անհրաժեշտության մասին, և որ այդ միավորումը պետք է տևական լինի»: Ս. Օրջոնիկիձեն իր այդ ելույթում հանգամանորեն հիմնավորում էր անդրկովկասյան հանրապետությունների երկաթուղիների և արտաքին առևտրի միավորման կարևորությունը:

Վ. Ի. Լենինն այդ ժամանակ պահանջ էր դնում Անդրկովկասի մասշտաբով ստեղծել միասնական տնտեսական մարմին: Ս. Օրջոնիկիձեն նշել է, որ եթե «կարողանանք այդ հարցը լուծել լենինյան դիրեկտիվների ոգով, որտեղ նա վճռականապես հարց է դնում Անդրկովկասի համար մի ընդհանուր տնտեսական մարմին ստեղծելու, ապա արտաքին առևտրի և երկաթուղիների միավորումը կլինի առաջին կարևոր քայլը մարզային տնտեսական մարմնի ստեղծման ուղղությամբ»: Նա դարձյալ կանգ է առնում Սովետական Հայաստանին օգնելու խնդրի վրա: «Ադրբեջանական և վրացական հանրապետությունները,— ասել է Ս. Օրջոնիկիձեն,— պետք է իրենց վրա վերցնեն Հայաստանի մատակարարման գործը, քանի որ նա ավելի քիչ միջոցներ ունի: Նրա վիճակը սարսափելի է»:

1921 թ. ապրիլի 16-ին տեղի ունեցավ անդրկովկասյան երկաթուղիների միավորումը: Միասնական տրանսպորտի ստեղծումն ընդլայնեց ապրանքափոխանակությունը և ուժեղացրեց տնտեսական կապերը:

1921 թ. հունիսի 2-ին հատուկ պայմանագիր կնքվեց երեք հանրապետությունների արտաքին առևտրի միավորման վերաբերյալ: Որոշ ժամանակից հետո վերացվեցին տնտեսական սահմանները, մաքսատները, ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Ռուսաստանի միջև: Այդ միջոցառումները զգալի չափով նպաստեցին ապրանքաշրջանառության ուժեղացմանը:

Հայաստանի կոմունիստները, առաջնորդվելով մեծ Լենինի ցուցումներով և կոմունիստական կուսակցության X համագումարի որոշումներով, ձեռնամուխ եղան նոր տնտեսական քաղաքականության իրականացմանը: 1921 թ. հունիսի 25-ին


ԴԵԿՐԵՏ

58 Հայաստանի օգնութեան կոմիտէի մասին

1921 թ. Սեպտեմբերի 28.

Ի նկատի ունենալով մի շարք հասարակական գործիչների խնդիրը հաստատել իրենց կազմած «Հայաստանի Օգնութեան Կոմիտէն», որի նպատակն է օգնութեան հասնել Հայաստանի սովեալ ազգաբնակութեան և իր այդ գործունէութեան ընթացքում նաև օժանդակել երկրի ընդհանուր շինարարութեան գործին, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը որոշեց ներկայացուած ստատուտը հաստատել և թոյլատրել կոմիտէին սկսել իր գործունէութիւնը յիշուած նպատակի սահմաններում:

Ժողկոմների Խորհրդի Նախագահ՝
Ա. Մեասնիկեան (Ալ. Մարտունի)

Քարտուղար՝ Մ. Ղարաբէկեան

Հր. „Խորհրդային Հայաստան"
1921 թ. Հոկտեմբերի 29 № 203

Դեկրետ ՀՕԿ-ի ստեղծման մասին

Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհը հատուկ դեկրետով պաշտոնապես պարենմասնատրումը փոխարինեց պարենհարկով:

1921 թ. հուլիսի 20-ին ՀՍՍՀ Ժողկոմխորհի որոշմամբ Սովետական Հայաստանը բաժանվեց ինը գավառների՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Դիլիջանի, Լոռի-Փամբակի, Մեղրու, Դարալագյազի և Զանգեզուրի: Այդ վարչական բաժանումը, տնտեսական միջոցառումների հետ միասին, օգնեց պետական ապարատի կարգավորմանը, նրա աշխատանքների ուժեղացմանը: 1921 թ. դեկտեմբերին Հայաստանում անցկացվեցին սովետների առաջին ընտրությունները: 1922 թ. հունվարի 26-ին բացվեց ՀԿ(բ)Կ առաջին համագումարը, որը քննարկեց մի շարք կարևոր հարցեր, իսկ հունվարի 30-ին Երևանում գումարված Հայաստանի սովետների առաջին համագումարը փետրվարի 3-ին ընդունեց Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության սահմանադրությունը, որը պատմական իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Սահմանադրությունը հաստատեց նաև ՀՍՍՀ պետական գերբը: Հովհ. Թումանյանը հրճվանքով նշել է. «Ահա մի իշխանություն, որի գերբի վրա տեսնում ենք ոչ թե գազաններ ու պենքեր, այլ մուրճ ու մանգաղ, բանվորի և գյուղացու աշխատանքային խորհրդանիշը միատեղ ու միասին, մի իշխանություն, որը գալիս է իր հետ բերելով հաշտ ու խաղաղ կյանք ու արդար աշխատանք և ոչ թե կռիվ ու կոտորած»:

Մ. Կալինինին համագումարի մասնակիցների ուղղած հեռագրում նշվում էր, որ համագումարը «հիացմունքով ու սիրով լի իր հայացքը, իր հոգու անկեղծ խոսքն է ուղղում բանվորագյուղացիական Ռուսաստանին: Համագումարը գիտակցում է այն օգնությունը, որ Սովետական Ռուսաստանը ցույց է տվել մեր երկիրն Արևմտյան Եվրոպայի իմպերիալիստների ու նրանց ծառա դաշնակների լծից ազատագրելու գործում»:

Տվյալ ժամանակաշրջանում հուզող բազմաթիվ հարցերից էր գյուղում տարվող աշխատանքը: Այդ առթիվ Ալ. Մյասնիկյանը նշել է. «Գյուղի հեռանկարը, նրա առաջնակարգ լինելը ո՛չ մի դեպքում, ո՛չ մի ժամանակ չպետք է վրիպի մեր ուշադրությունից: Մեր կառավարությունը, որպես արթուն հսկիչ, աշխատում է և է՛լ ավելի ջանքեր կթափի այդ ուղղությամբ»:

1921—1922 թթ. Հայաստանի աշխատավորներն արագ տեմպերով կարգավորեցին ոռոգիչ սիստեմը, կառուցեցին նոր ջրանցքներ, որոնք այնքան կարևոր նշանակություն ունեցան գյուղատնտեսության վերելքի համար: Աշխատանքներ ծավալվեցին Երևանի հիդրոէլեկտրակայանի ընդլայնման և նոր հիդրոէլեկտրակայաններ կառուցելու ուղղությամբ: Շարք մտան «Արարատ» գինու-կոնյակի գործարանը, մեխանիկական, կաշվի և այլ ձեռնարկություններ: Երևանի մեխանիկական գործարանը ՌՍՖՍՀ Ժողկոմխորհից նվեր ստացավ մեկ ձուլարան և 30 հաստոց:

Սովետական իշխանության կարևորագույն հաղթանակը ժողովուրդների լենինյան բարեկամությունն էր: Վ. Ի. Լենինը հույս էր հայտնում, որ Կովկասի ժողովուրդների «սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուապիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»: Այդ խնդիրը առանձնահատուկ նշանակություն էր ստանում հատկապես Անդրկովկասում, քանի որ այստեղ մենշևիկների, դաշնակցականների և մուսավաթականների տխրահռչակ տիրապետության շրջանում նացիոնալիզմն ու ազգային հակասությունները հասել էին չտեսնված սրության: Ս. Մ. Կիրովը, խոսելով հայ-ադրբեջանական բարեկամության մասին, ասել է. «Թող մեկ չվախեցնեն նրանք, ովքեր ասում են, որ մենք ազգային թշնամանքի միջավայրում շնչահեղձ կլինենք: Մենք գիտենք, որ առաջնորդվում ենք լենինյան ծրագրով, որի առջև չի համարձակվի սուրը մերկացնել ո՛չ մի անիծյալ դաշնակ, ո՛չ մի անավնիվ մուսավաթական»:

Սովետական Հայաստանի բարգավաճման համար անչափ կարևոր դեր խաղաց Անդրֆեդերացիայի ստեղծումը: 1922 թ. մարտի 12-ին կազմավորվեց Անդրկովկասյան ֆեդերացիան: Ս. Կիրովը գրեց. «Վրաստան, Հայաստան, Ադրբեջան, եկեք ինքներդ, շտապեք այստեղ՝ կարմիր ֆեդերացիայի այս հարավային, բոցավառ երկնքի ներքո»:

Ալ. Մյասնիկյանը Անդրկովկասյան ֆեդերացիայի մասին նշել է, որ նրա շնորհիվ սովետական կարգերը Կովկասում «ավելի ևս ուժեղացան, քանի որ ֆեդերացիան նշանակում է ազգային համերաշխության ամենաիրական երաշխիքը, քանի որ նա տնտեսապես ու քաղաքականապես Կովկասի ժողովուրդներին է՛լ ավելի է բարձրացնում: Ֆեդերացիայի արժանիքները ակներև են: Շնորհիվ այդ ֆեդերացիայի է, որ ուժեղացած ու ոտքի կանգնած Հայաստանը այսօր կարող է ազատ շունչ քաշել...»:

1922 թ. դեկտեմբերի 30-ին սովետների համամիութենական առաջին համագումարում կազմավորվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, որի մեջ մտավ նաև Անդրկովկասյան ֆեդերացիան:

Անդրֆեդերացիան և ապա ՍՍՀՄ-ը որպես սովետական ժողովուրդների եղբայրական միավորման

Գառնու ձորը

Ջերմուկի ջրվեժը

Կալինինը Հայաստանում

մի նոր ձև, վառ օրինակ էին բոլոր ճնշվածների համար, իսկ սովետական Կովկասը, ինչպես նշել է Ալ. Մյասնիկյանը, կանխորոշում էր արևելյան ժողովուրդների բախտը:

Սովետական իշխանության առաջին իսկ տարիներին հայ ժողովուրդը մեծ հաջողությունների հասավ: 1925 թ. հիմնականում ավարտվեց ժողովրդական տնտեսության վերականգնումը: Կառուցվեցին մի շարք ջրանցքներ, ոռոգելի դարձան տասնյակ հազարավոր հեկտար անջրդի հողեր: 1922 թ. սկսված Շիրակի 30 կմ երկարությամբ ջրանցքի կառուցումը ավարտվեց 1925 թ. և ոռոգելի դարձրեց ավելի քան 10 հազար հեկտար հողատարածություն: Քայքայված չքավորական գյուղական տնտեսություններին մեծ օգնություն ցույց տվին 1921—1922 թթ. կազմակերպված արտադրական և վարկային կոոպերատիվ ընկերությունները:

Գյուղատնտեսության արագ վերականգնումը պայմաններ ստեղծեց քայքայված արդյունաբերության զարգացման համար: Առաջին հերթին այդ

Մաքսիմ Գորկին Հայաստանում

նկատելի էր գինու-կոնյակի արտադրության բնագավառում: Հատկապես կարևոր էր պղնձի արտադրության վերականգնումը, որը լիովին քայքայվել էր առաջին համաշխարհային պատերազմի և դաշնակցականների տիրապետության տարիներին: 1924 թ. Ղափանում վերսկսվեց պղնձի ձուլման արտադրությունը, մեծ աշխատանք ծավալվեց նաև Ալավերդու պղնձահանքերում, որի համար կառավարությունը տրամադրեց ավելի քան 2 միլիոն ռուբլի: Սակայն 1924—1925 տնտեսական տարում պղնձի արտադրանքը նախապատերազմյանի հազիվ 13,4 %-ն էր կազմում:

Սկսեցին կառուցվել նաև բազմաթիվ արդյունաբերական նոր ձեռնարկություններ. 1924 թ. շարք մտավ Սովետական Ռուսաստանի օգնությամբ կառուցված Լենինականի տեքստիլ ֆաբրիկան: 1926—1928 թթ. առաջացան արդյունաբերության նոր ճյուղեր՝ քիմիական, շինանյութերի և այլն: Արդյունաբերության զարգացման համար կարևոր խթան հանդիսացավ էլեկտրաէներգիայի արտադրության աճը: 1923 թ. սկսվեց Երևանի հիդրոէլեկտրակայանի առաջին հերթի կառուցումը, գործարկվեցին մի շարք շրջանային կայաններ: Վերականգնվեցին երկաթուղին և տրանսպորտի ու կապի միջոցները, որոնք նպաստեցին առևտրի ու ապրանքափոխանակության զարգացմանը: Հատկապես պետական ու կոոպերատիվ առևտուրը լայն ծավալ ստացավ թե՛ քաղաքում և թե՛ գյուղում: Դրանում կարևոր դեր խաղաց 1924 թ. սկզբին անցկացված դրամական ռեֆորմը, չերվոնեցի կայուն կուրսի և միասնական դրամական սիստեմի ստեղծումը: Այդ բոլորի հետևանքով բանվորների և գյուղացիների նյութական վիճակը բարելավվեց, պատմության գիրկն անցան ոչ հեռու անցյալի սովն ու համաճարակային հիվանդությունները: Վերածնված հայ ժողովրդի համար սկսվեց վերակառուցման ու շինարարական աշխատանքի մի նոր դարաշրջան: Հատկապես մեծ թափ ստացավ քաղաքաշինությունը: Ակադեմիկոս Ալ. Թամանյանի կազմած Երևանի հատակագիծը ՀՍՍՀ կառավարության կողմից 1924 թ. հաստատվեց և գործի դրվեց:

Վերածնվող Սովետական Հայաստանը դարձավ աշխարհով մեկ ցրված, թուրքական յաթաղանից մազապուրծ եղած և օտար ափերում դեգերող համայն հայությանը ձգող փարոսը: Դեռևս սովետական իշխանության առաջին տարիներին, երբ երկիրը քայքայվել էր ու գտնվում էր տնտեսական ծանր պայմաններում, սփյուռքահայության համար բոլոր հնարավոր պայմանները ստեղծվեցին ներգաղթելու հայրենիք: Եվ ահա Սովետական Հայաստանը գրկաբաց ընդունեց իր տարագիր զավակների առաջին քարավանները: 1922—1926 թթ. Մերձավոր արևելքի երկրներից, Հունաստանից ու Ֆրանսիայից հայրենիք վերադարձան ավելի քան 20 հազար հայ աշխատավորներ, որոնք իրենց լուման ներդրին սոցիալիստական շինարարության



Ճարտարապետներ Թ. Թորամանյան (ձախից) և Ալ. Թամանյան

Ֆ. Նանսենի ղեկավարած հանձնաժողովը հողժողկոմ Ա. Երզնկյանի մոտ աշխատելիս (1925 թ.)

մեջ: Երևանի շուրջը ստեղծվեցին Նոր Արաբկիր, Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա, Նոր Խարբերդ և մի շարք այլ բարեկարգ թաղամասեր ու ավաններ, որոնցից ամեն մեկը պատմական Հայաստանի հերոսապատումի մի վերհուշ է:

1924 թ. Վ. Ի. Լենինի մահը մեծ վիշտ պատճառեց համայն աշխարհի և հատկապես մեր երկրի աշխատավորական մասսաներին: Հայ ժողովուրդը մեծ առաջնորդի մահը սգում էր սրտի դառն կսկիծով: ՀԿ(բ)Կ Կենտկոմը, Հայաստանի Կենտգործկոմը, Ժողկոմխորհը և արհմիության խորհրդի նախագահությունը որոշում ընդունեցին Հայաստանի մայրաքաղաք Երևանի Լենինի անվան հրապարակում կանգնեցնել մեծ առաջնորդի արձանը, որպեսզի «ներկա և գալիք սերունդները ընկ. Լենինի կյանքը և նրա մեծ գործը օրինակ դարձնեն և նրանով ոգևորվեն»: Հայ ժողովուրդը հավատարիմ լենինյան մեծ դրոշին, վերածնվեց և մեծ հաջողությունների հասավ:

ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂԻՈՎ

ՀամԿ(բ)Կ XIV համագումարը, որ տեղի ունեցավ 1925 թ. դեկտեմբերին, հանրագումարի բերելով ժողովրդական տնտեսության վերականգնման արդյունքները, խնդիր դրեց կարճ ժամանակում հաղթահարել երկրի դարավոր հետամնացությունը և ստեղծել սոցիալիզմի կառուցման նյութատեխնիկական բազան: Սովետական ժողովուրդը մեծ ոգևորությամբ ընդունեց կուսակցության այդ որոշումը և իր խանդավառ աշխատանքով կարճ ժամանակում մեծ հաջողությունների հասավ: Սովետական Հայաստանում ևս հարվածային աշխատանքի արդյունքներն ամենուր ակնհայտ էին: Արդեն 1926 թ. շարք մտան Երևանի կարի ֆաբրիկան, ձեթ-օճառի գործարանը, սկսեց կառուցվել Ձերժինսկու անվան մեխանիկական գործարանը, իսկ հաջորդ տարում գործարկվեց Երևանի կարբիդի գործարանը: Կարևոր նշանակություն ունեցավ 1926 թ. մայիսի 26-ին Երևանի հիդրոէլեկտրակայանի առաջին հերթի գործարկումը, իսկ 1928 թ. նոյեմբերի 29-ին շարք մտավ Լենինականի հիդրոէլեկտրակայանը:

1929 թ. մայիսին ՀՍՍՀ սովետների VI համագումարը հաստատեց հանրապետության առաջին հնգամյա պլանը, որով տնտեսության և մշակույթի աննախընթաց կարգացման մեծ հեռանկարներ էին բացվում:

Հնգամյակի կատարման համար սոցիալիստական մրցություն ծավալելու կուսակցության կոչը մեծ արձագանք գտավ ամբողջ երկրում, ինչպես նաև Հայաստանում: 1929 թ. Երևանում հրավիրված աշխատավորների համաքաղաքային կոնֆերանսը սոցիալիստական մրցության պայմանագիր կնքեց ձեռնարկությունների միջև, որը մեծ չափով խթանեց արտադրական պլանների կատարումը: Սոցիալիստական մրցությունը լայն ծավալ ստացավ նաև մեր հանրապետության մյուս քաղաքներում, շրջաններում ու գյուղերում, ինչպես նաև

Ա. Վ. Լունաչարսկին և Ա. Մռավյանը Շիրակի ջրանցքի շինարարությունում

անդրկովկասյան հանրապետությունների արդյունաբերական ձեռնարկությունների միջև:

Գյուղատնտեսության մանրատված, անհատական տնտեսությունների սիստեմը խանգարում էր սոցիալիստական արդյունաբերության կարգացմանը: Գյուղատնտեսությունը ետ էր մնում սոցիալիստական շինարարության ընդհանուր տեմպերից: Հրատապ հարց էին դարձել գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը, լենինյան կոոպերատիվ պլանի իրագործումը: Ելնելով դրանից, ՀամԿ(բ)Կ XV համագումարը 1927 թ. դեկտեմբերին առաջ քաշեց գյուղատնտեսության կոլեկտիվացման ծրագիրը: Միայն 1928 թ. ընթացքում Սովետական Հայաստանում կազմակերպվեց 55 կոլտնտեսու-

Հայաստանի կառավարության անդամները Ալավերդու հանքերում (1926 թ.)



Ձորագէսի շինարարությունը



Ցեմենտի գործարան

թյուն: 1930 թ. սեպտեմբերից կոլեկտիվացումը մեծ թափ ընդունեց նաև Հայաստանում:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1930 թ. հունվարի 5-ին որոշում ընդունեց կոլեկտիվացման տեմպերի մասին, դատապարտեց այդ գործում թույլ տրված սխալներն ու կամավորության սկզբունքի խախտումները: Սակայն, ցավոք, այդ սխալներն ու խախտումները շարունակվեցին նաև հետագայում: Ավելին, կոլտնտեսային շինարարությունն ընթացավ լենինյան կոոպերատիվ պլանից կատարվող լուրջ շեղումներով:

Հանրապետության աշխատավորները, ոգևորված կուսակցության պատմական որոշումներով, սոցիալիստական մրցությունը բարձրացրին նոր աստիճանի: 1930 թ. սեպտեմբերին Հայաստանի ձեռնարկություններում հաշվվում էր 17 հազար հարվածային՝ արտադրության առաջավոր: Բանվորներն ու գյուղացիները պայքարում էին տեխնիկային տիրապետելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, հնգամյակը չորս տարում կատարելու համար: Առաջին հնգամյակը կատարվեց չորս տարի երեք ամսում, որի հետևանքով ՀՍՍՀ տնտեսական և մշակութային կյանքում արմատական փոփոխություններ կատարվեցին: Հայաստանում սոցիալիստական արդյունաբերության կարգացման տեմպերը զգալի չափով գերազանցեցին ՍՍՀՄ-ի միջինը: Դա լենինյան ազգային քաղաքականության փայլուն օրինակ էր: Հնգամյակի առաջին երկու տարում արդյունաբերության մեջ ներդրված գումարը գերազանցում էր նախորդ 8 տարիներում ներդրվածին: Իսկ հնգամյակում այդ նպատակի համար նախատեսված 275,8 միլիոն ռուբլու պլանը գերակատարվեց և իրացվեց 319,3 միլիոն ռուբլի: 1930 թ. սկսվեց Քանաքեռի հիդրոէլեկտրակայանի շինարարությունը, իսկ 1932 թ. գործարկվեցին Երևանի և Լենինականի էլեկտրակայանների երկրորդ հերթերը: Շարք մտավ նաև Ձորագէսը, որն էներգիա էր մատակարարում Ալավերդու արդյունաբերական շրջանին և Ղարաքիլիսայի (Կիրովական) քիմիական գործարանին: Արդեն հնգամյակի վերջում ՀՍՍՀ-ում գործում էր 29 էլեկտրակայան, որոնց կառուցման գործում մեծ դեր խաղաց Հայաստանի կոմերիտմիությունը, որը և արժանացավ ՀՍՍՀ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի:

Լայն թափով էին կարգանում հանրապետության պղնձարդյունաբերությունը, ինչպես նաև շինարարական ինդուստրիան: Հատկապես կարևոր էր երկաթուղագծերի (Լենինական—Արթիկ—Պեմզաշեն, Մինջևան—Ղափան գծերի կառուցումը) և խճուղիների ցանցի ընդլայնումը: Այդ շրջանում կարևոր խնդիր էր որակյալ բանվորական և տեխնիկական կադրերի պատրաստումը, որը և դարձավ ՀԿ(բ)Կ VII համագումարի քննարկման առարկան: Ձեռնարկվեցին անհրաժեշտ միջոցառումներ, որոնց շնորհիվ կադրերի պատրաստման բնագավառում ձեռք բերվեցին զգալի հաջողություններ:

Որոշ նվաճումներ ձեռք բերվեցին նաև կոլտնտեսային շինարարության բնագավառում: Եթե 1928 թ. կոլտնտեսություններն ունեին ընդամենը 106 տրակտոր, ապա 1932 թ. այդ թիվը հասավ 540-ի: Հատկապես կարևոր էր մեքենատրակտորային կայանների դերը: Առաջին ՄՏԿ-ն հիմնադրվեց 1930 թ. Սարդարապատում, իսկ հնգամյակի վերջում դրանց թիվը հասավ 7-ի: Ընդլայնվեցին ոռոգման սիստեմները, 1928 թ. գործարկվեց Այղր լճի ջրհան կայանը, իսկ 1930 թ.՝ Սարդարապատի ջրանցքը:

Զգալի չափով բարձրացավ աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակը: Առաջին հնգամյակում միայն բնակարանային շինարարության համար ծախսվեց 20 միլիոն ռուբլի: Բարե-

Արարատի ցեմենտի գործարանը

Իջևանի շրջան. Հայաստան բերված առաջին տրակտորը

կարգվեցին քաղաքները, ավաններն ու գյուղերը, իսկ 1931 թ. հիմնվեց Հոկտեմբերյան ավանը: Ընդլայնվեց ապրանքների ու մթերքների արտադրությունը, ծավալվեց առևտուրը:

Այսպիսով, սոցիալիստական արդյունաբերության բուռն վարգացման, կոլտնտեսային կարգի հաղթանակի, կուլտուրական հեղափոխության, պետական ու կոոպերատիվ առևտրի ասպարեզներում ձեռք բերված նվաճումների շնորհիվ Հայաստանում կառուցվում ու ամրապնդվում էին սոցիալիզմի տնտեսական հիմքերը և կայուն բազա էր ստեղծվում Հայաստանի սոցիալիստական արդյունաբերության և կոլտնտեսային գյուղատնտեսության հետագա վարգացման, ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ.

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը, իրագործելով սոցիալիզմի կառուցման խնդիրները, վճռական հաջողություններ ձեռք բերեց: Երկրի ինդուստրացումն ու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումն է՛լ ավելի ամրապնդեցին ՍՍՀՄ տնտեսական ու քաղաքական հիմքերը, նրա ռազմական հզորությունն ու միջազգային հեղինակությունը: Սոցիալիստական արդյունաբերության բազմաճյուղ վարգացումը հիմք ստեղծեց ամբողջ երկրի տեխնիկական վերազինման և երկրի պաշտպանունակության ամրապնդման համար: Արդյունաբերության բուռն վարգացման հետևանքով փաստորեն ապահովվեց ՍՍՀՄ տեխնիկատնտեսական անկախությունն առաջավոր կապիտալիստական երկրներից:

Սակայն սոցիալիզմի հայրենիք ՍՍՀՄ-ը դեռևս միայնակ էր և շրջապատված կապիտալիստական երկրներով: Ամենուր զգացվում էր իմպերիալիստների ռազմական ինտերվենցիայի վտանգը: Նման պայմաններում անհրաժեշտ էր արագացնել ժողովրդական տնտեսության վերակառուցման և վերազինման ավարտումը, մեծացնել երկրի հզորությունը: Դա պետք է կատարվեր երկրորդ հնգամյակի տարիներին, որի կազմման դիրեկտիվը տվեց ՀամԿ(բ)Կ XVII կոնֆերանսը (1932 թ. հունվար): Այն հաստատվեց 1934 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին տեղի ունեցած կուսակցության XVII համագումարում: Երկրորդ հնգամյակի տարիներին ՍՍՀՄ-ում հատկապես մեծ ուշադրություն դարձվեց մեքենաշինության, սև և գունավոր մետալուրգիայի, էլեկտրաէներգիայի արտադրության, քիմիական արդյունաբերության բուռն վարգացմանը: Այդ բազայի վրա պետք է իրականացվեր գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը, աշխատատար պրոցեսների մեքենայացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, թեթև ու սննդի արդյունաբերության վերելքը և աշխատավորների նյութական բարեկեցության բարելավումը:

Բոլոր հանրապետությունների հետ մեկտեղ երկրորդ հնգամյակի տարիներին Սովետական Հա-

Սիսիան. Շաքիի ջրվեժը



յաստանի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում ևս մեծ տեղաշարժեր կատարվեցին: Հնգամյա պլանի համաձայն հանրապետությունում կգալի վերելք ապրեցին գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը և այլն: Շարք մտան արդյունաբերական նոր ձեռնարկություններ՝ Երևանում, Ալավերդում, Ղափանում, Ղարաքիլիսայում, Լենինականում, Հոկտեմբերյանում և այլ վայրերում: Աճեց շինանյութերի՝ տուֆի, պեմզայի, մարմարի, բազալտի, ցեմենտի արտադրությունը: Արարատում ցեմենտի, Երևանում կղմինդրի, Արթիկում թերմոբետոնային բլոկների, Դսեղում հրակայուն աղյուսի գործարանների շարք մտնելը շինանյութերի արտադրությանը լայն թափ հաղորդեց:

Ժողովրդական տնտեսության բուռն վերելքի հետևանքով բնակչության հոսքը դեպի արդյունաբերական կենտրոններ մեծ ծավալ ընդունեց: Արագորեն աճեց նաև բանվոր դասակարգը: Կարճ ժամանակում փոխվեց նրա թե՛ քաղաքական և թե՛ ժրակական կազմը:

Սյունյաց լեռները

Տեխնիկական մտավորականության կազմը համալրվեց բանվորների շարքերից ելած նոր կադրերով: Հնգամյակի առաջադրած բարդ խնդիրների կատարման գործում մեծ դեր խաղացին կուսակցության XVII համագումարի կոչով ծավալված սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը: Մրցության ծավալման նախաձեռնողները բանվորական կոլեկտիվներն էին: Շարժումը ղեկավարում էին կուսակցական կազմակերպությունները:

Մրցությունը ծնեց տեխնիկային տիրապետելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նոր եղանակներ ու ձևեր: Սոցիալիստական մրցության ծավալման հետևանքով հանդես եկան աշխատանքի բազմաթիվ հերոսներ, առաջավոր ձեռնարկություններ: Սոցիալիստական մրցության հետագա զարգացման փայլուն հեռանկարներ բացվեցին: Դրանցից ամենամասսայականը ստախանովյան շարժումն էր: ՀամԿ (բ) Կ Կենտկոմի 1935 թ. դեկտեմբերյան պլենումը որոշեց ամեն կերպ խրախուսել և տարածել այդ շարժումը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում: Հայաստանում ստախանովյան շարժման առաջին նախաձեռնող-

Ս. Խանոյան

ները Ղափանի և Ալավերդու պղնձագործներն էին, գունավոր մետալուրգիայի առաջամարտիկները: Ստախանովյան աշխատանքի մեթոդներին անցնելու մասին Ալավերդում 1935 թ. հոկտեմբերի 15-ին կայացած հարվածային աշխատողների հավաքի կոչը կարևոր նշանակություն ունեցավ: Շուտով ստախանովյան շարժումն այնտեղ լայն ծավալ ստացավ, և հանքագործները սկսեցին գերակատարել պլանները:

Մեծ արդյունքի հասան Ղափանի պղնձագործները, նրանցից շատերը օրական նորմաների կատարումը կրկնապատկեցին: Անի-պեմզայի հանքերի բանվորները օրվա արտադրական նորմաները կատարում էին 150—180 %-ով: Ստախանովյան շարժումը լայն տարածում գտավ Քանաքեռգէսի շինարարության 117 բրիգադներում, որոնցում աշխատում էր 7,5 հազարից ավելի բանվոր: Արտադրական նորմաների գերակատարումը մասսայական բնույթ ստացավ նաև Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանի շինարարությունում: Աշխատանքը դառնալով փառքի և պատվի գործ, մեծ չափով նպաստեց նորարարական շարժման զարգացմանը, որը միաժամանակ ժողովրդական մասսաների ուժերի աճի և նրանց կոմունիստական գիտակցության բարձրացման ապացույցն էր:

Ստախանովյան շարժումը, որի առաջամարտիկները երիտասարդներն էին, լայն տարածում ստացավ 1936—1937 թթ.: Կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունների ամենօրյա հոգատարության շնորհիվ ստախանովյան շարժումը մեծ թափ հաղորդեց երկրի տնտեսական և սոցիալական առաջընթացին: Գործող տեխնիկական հնացած նորմաները փոխարինվեցին առաջավոր, նոր տեխնիկայի մակարդակին համապատասխանող, աշխատանքի արտադրողականության հետագա վերելքն ապահովող նորմաներով:

Ստախանովյան շարժումը ծավալվեց նաև գյուղատնտեսության մեջ և տրանսպորտում: 1933 թ. ՀամԿ (բ) Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան միացյալ պլենումի որոշումների համաձայն բոլոր ՄՏ կայաններին և սովխոզներին կից ստեղծվեցին քաղբաժիններ, որոնք հանդիսացան կուսակցական ղեկավարման արտակարգ մարմիններ: Նրանց օգնությամբ հնարավոր եղավ գյուղում բարելավել քաղաքական և տնտեսական աշխատանքը, բարձրացնել կարգապահությունն ու աշխատանքի արտադրողականությունը, լայն ծավալ հաղորդել սոցիալիստական մրցությանն ու աշխատանքի առաջավոր փորձի տարածմանը: Այդ աշխատանքի ընթացքում առաջ եկան գյուղատնտեսության տաղանդավոր ու գործիմաց բազմահազար կազմակերպիչներ, որոնք իրենց փորձը հաղորդելով ուրիշներին՝ որոշակի դեր կատարեցին կոլտնտեսային շինարարության բնագավառում: Կարևոր էր նաև արտադրական կադրերի տեխնիկական ուսուցումն ու վերապատրաստումը: Տեխնիկային տիրապետելը դարձավ սովետական ամբողջ հասարակության հարազատ գործը:

Գյուղի աշխատավորների շրջանում աշխատանքային վերելքը սկսվեց դեռ 1933 թ. կայացած հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարից հետո, որը կոչ արեց ավելի ծավալել սոցիալիստական մրցությունը: Նույն թվականի հունվարի 14-ին Հայաստանի հարվածային կոլտնտեսականների համագումարում ՀԿ (բ) Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը, հանդես գալով «Կոլտնտեսությունների մարտական խնդիրների մասին» զեկուցումով, կոչ արեց հարվածային աշխատանքով հասնել բարձր ցուցանիշների, ապահովել սոցիալիզմի հաղթանակը: 1934 թ. հունվարին կայացած ՀԿ (բ) Կ IX համագումարը ևս, անդրադառնալով կոլտնտեսային շինարարությանը, ընդգծեց այն կազմակերպչորեն ամրապնդելու, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում ՄՏ կայանների դերը բարձրացնելու անհրաժեշտությունը:

Խաչատուր Աբովյանի արձանը

1935 թ. նոյեմբերին լրացավ Սովետական Հայաստանի 15-ամյակը: Դա մեծ սխրանքների և հայ ժողովրդի վերածննդի փառապանծ տոնն էր: Հայ ժողովուրդն արտակարգ խանդավառությամբ նշեց իր վերածննդի՝ սովետական պետականության հաստատման տոնը, որին մասնակցեցին ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Կալինինը և եղբայրական ժողովուրդների պատվիրակները:

Հայ ժողովուրդն այդ մեծ տոնի առթիվ իր երախտագիտության խոսքն ուղղեց սովետական կառավարությանը և կոմունիստական կուսակցությանը: Այնտեղ մասնավորապես նշված էր. «Իրոք, նորից է ծնվել մեր երկիրը», և այդ վերածնված երկիրը մեր հիշողությունից հեռացնում է «փլատակների, մոխրի, սովի ու հեծեծանքի Հայաստանը: Խորհրդային Միության ժողովուրդների ընտանիքում բարձրացել է Խորհրդային Հայաստանը իր կենսուրախ ու երջանիկ ժողովրդով... Եվ իսկապես, ուր էինք և ուր հասանք այս տասնհինգ տարում...» Այդ նամակում հայ ժողովրդի երավանքի իրականացման հետևյալ խոսուն թվերն էին բերված. Լենինականի տեքստիլ կոմբինատը տալիս էր 13 միլիոն 683 հազ. մետր կտավ, 2211 տոննա մանվածք, Կիրովականի քիմկոմբինատը՝ 12 հազ. տոննա կարբիդ, Արարատի ցեմենտի գործարանը՝ 90 հազ. տոննա ցեմենտ, Ալավերդին և Ղափանը՝ 3600 տ պղինձ, Արթիկը՝ ավելի քան 100 հազ. խոր մ շինանյութ. Անիպեմզան՝ 133 հազ. խոր մ պեմզա: Հանրապետության ցենզային արդյունաբերության 187 միավորներ տարեկան տալիս էին 145 միլիոն ռուբլու արտադրանք, որը 1919 թ. մակարդակը գերազանցում էր 83 անգամ, իսկ բանվորների և ծառայողների թիվը 11 հազարից հասել էր ավելի քան 100 հազարի: Ահա սրանք էին եղբայրական ժողովուրդների, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ վերածնված Հայաստանի ձեռք բերած ակնառու հաջողությունները:

ՀԿ(բ)Կ Կենտկոմն ու Հայաստանի կառավարությունը լայն աշխատանք էին ծավալել հնգամյակը ժամկետից շուտ կատարելու, ժողովրդական տնտեսության տեխնիկական վերազինումն ապահովելու համար: Տեխնիկայի պրոպագանդումը լայն ընթացք ստացավ: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում ուսուցումն արտադրական պրակտիկայի հետ զուգակցելուն: Այդ նպատակով վերանայվեցին բոլոր ուսումնական հաստատությունների ծրագրերը, ստեղծվեցին մասնագիտական թեքումներով ինստիտուտներ ու ֆակուլտետներ, ֆաբրիկագործարանային ուսումնարաններ և այլ կարգի դասընթացներ:

1938 թ. հանրապետությունում գործում էին 560-ից ավելի տեխնիկական մինիմումի խմբակներ և արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող 5515 բանվորներ հանձնեցին տեխնիկական մինիմումը: Երկրորդ հնգամյակի ընթացքում ժողովրդական տնտեսությունը ստացավ նոր տեխնիկայով զինված 3014 կադր: Բարձրագույն կրթությամբ մասնագետների թիվը երկրորդ հնգամյակում, առաջինի համեմատությամբ, աճեց ավելի քան երկու անգամ, իսկ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներինը՝ մեկուկես անգամ: Զգալի չափով աճեց միջնակարգ մասնագիտական ուսումնարանների թիվը և 1937 թ. այն հասավ 57-ի, իսկ սովորողների քանակը՝ ավելի քան 10 հազարի: Աճեց կանանց ներհոսքը տեխնիկական ուսումնական հաստատություններ, իսկ արտադրության տարբեր բնագավառներում կանայք 1936 թ. կազմում էին աշխատողների 35,9 %-ը:

Գյուղատնտեսությունը ևս ապահովվեց բարձրորակ մասնագետներով: Երկրորդ հնգամյակում պատրաստվեցին բարձրագույն կրթությամբ 326 գյուղատնտես և 639 անասնաբույժ, միջին մասնագիտական կրթությամբ 1387 աշխատող:

Գյուղատնտեսության աշխատողների որակավորման ուղղությամբ մեծ աշխատանք էր ծավալվել ՄՏ կայաններում ու սովխոզներում գործող կուրսերում և տարբեր դասընթացներում: Երևանում ու Լենինականում գործում էին կոլտնտեսությունների նախագահների, հաշվապահների և այլ ղեկավար աշխատողների մշտական գործող դասընթացներ ու հատուկ դպրոցներ: Այդ բոլորի շնորհիվ գյուղատնտեսական կադրերի կազմում տեղի ունեցան քանակական և որակական փոփոխություններ:

Մարտիրոս Սարյան

Այսպիսով, երկրորդ հնգամյակի հիմնական խնդիրը՝ երկրի տեխնիկական վերազինումը, հաջողությամբ կատարելու համար նոր տեխնիկային տիրապետող կադրերի պատրաստման ուղղությամբ որոշակի աշխատանք կատարվեց: «Կադրերն են որոշում ամեն ինչ» կոչը խթանող ուժ հանդիսացավ: Երկրորդ հնգամյակի հաջող ավարտը ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում նկատելի փոփոխություն մտցրեց: Հնգամյակի ընթացքում ավարտվեց հանրապետության ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցումը, վերափոխվեց ՀՍՍՀ տնտեսական նկարագիրը: Հատկապես կարևոր նշանակություն ունեցան էլեկտրաէներգիայի հզոր բազայի ստեղծումը և ծանր արդյունաբերության ընդլայնումը: Քանաքեռգէսի երեք ագրեգատների, Թալինի և Եղեգնաձորի շրջանային էլեկտրակայանների շահագործումը, Դիլիջանի, Կիրովականի, Ղափանի, Գորիսի կայարանների վերակառուցումը նոր թափ հաղորդեցին հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացմանը:



Հակոբ Կոջոյան

Կարևոր նշանակություն ունեցան Ալավերդու կոմբինատի մետաղաձուլական, պղնձարջասպի, Ղափանի հարստացուցիչ գործարանների կառուցումը, մոլիբդենի և պղնձի նոր հանքային հարըստությունների հայտնաբերումն ու շահագործումը:

Վերակառուցվեցին Երևանի մեքենաշինական և Լենինականի մեխանիկական գործարանները: Շինանյութերի արտադրությունը նոր մակարդակի բարձրացվեց: Կառուցվեցին Դավալուի ցեմենտի, Երևանի բազալտ, գրանիտ և մարմար մշակող գործարանները:

Արդեն 1937 թ. հանրապետության ծանր արդյունաբերության տեսակարար կշիռը զգալի աճ տվեց և հասավ 84 %-ի: Աննախընթաց վարգացում ապրեց գինու, կոնյակի և պահածոների արտադրությունը:

Սովետական Հայաստանը դարձավ տեխնիկապես վինված ինդուստրիալ հանրապետություն, արագորեն աճեց տեխնիկական մտավորականության հզոր բանակը: Բանվոր դասակարգի բազմահազարանոց բանակը տեխնիկական ուսուցման շնորհիվ որակական զգալի փոփոխություն կրեց, աշխատանքի նկատմամբ նոր վերաբերմունք ստեղծվեց: Բանվոր դասակարգի նկատելի մասը դարձավ հարվածային: Արդյունաբերական նոր կենտրոնների առաջացման շնորհիվ տեղի ունեցավ բանվոր դասակարգի ուժերի նոր տեղաբաշխում: Ստեղծվեցին բանվորական բազմամարդ հզոր կոլեկտիվներ:

Երկրորդ հնգամյակի տարիներին ամբողջովին վերակառուցվեց սոցիալիստական գյուղատնտեսությունը: Գյուղացիական տնտեսությունների 88,7 և ցանքատարածությունների 92,6 %-ը 1937 թ. համայնացված էին: Հնգամյակի վերջում հանրապետությունում կար 1074 կոլեկտիվ և 16 սովետական տնտեսություն:

1935 թ. ՍՍՀՄ հարվածային կոլտնտեսականների երկրորդ համագումարում ընդունված գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը կարևոր խթան հանդիսացավ կոլտնտեսային շինարարության համար: Այն նպաստեց կոլտընտեսությունների աշխատանքային հնարավորությունները լայնորեն օգտագործելուն, աշխօրերի նորմավորումը կարգավորելուն, կադրերը ճիշտ տեղաբաշխելուն:

1937 թ. հանրապետության կոլտնտեսությունների համախառն եկամուտը հասավ 181,1 միլիոն ռուբլու, որը 1932 թ. մակարդակը գերազանցում էր մոտավորապես 4 անգամ: Ոռոգելի հողերի տարածությունը 1932 թ. 119,2 հազար հեկտարից 1937 թ. հասավ 160,6 հազար հեկտարի:

Փոխվեց գյուղի սոցիալական դեմքը: Բանվոր դասակարգի և գյուղացիության սոցիալական կազմի փոփոխման հետ մեկտեղ փոփոխվեց նաև նրանց ծոցից ելած մտավորականության կազմը, ստեղծվեց միատարր սոցիալիստական հասարակարգ:

ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սովետական Հայաստանում սոցիալիստական պետականության ստեղծումը ամենանպաստավոր պայմաններ ստեղծեց ավերված ու սովի մատնըված երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար: Մյուս կողմից, սոցիալիստական տնտեսական վերափոխումներն իրենց հերթին նպաստեցին ազգային պետականության հետագա կատարելագործմանը, որն արտահայտվում էր ավտոնոմիայի և ֆեդերացիայի ձևով: Հայ ժողովրդի ազգային պետականությունը սոցիալիզմի կառուցման գործում հանդես եկավ որպես քաղաքական ու տնտեսական կյանքի կազմակերպման կարևոր գործոն: Պետությունը նպաստեց նաև տարբեր ազգերի ու էթնիկական խմբերի միավորմանն ու կոնսոլիդացմանը:

Ազգային պետականության դերը հսկայական էր մյուս սովետական հանրապետությունների հետ կապերի ու փոխհարաբերությունների ամրապնդման, մասնագետների փոխանակման և այլ ասպարեզներում:

Սովետական բազմազգ պետության մեջ մտնում էին 7 միութենական, 16 ինքնավար հանրապետություն, 16 ինքնավար մարզ և 10 ազգային շրջան: Սոցիալիստական նոր տիպի ազգերի առաջացման պայմաններում ավելի լայնացան ազգային պետության գործունեության ոլորտները: Փոքր ազգերի տնտեսական ու կուլտուրական առաջընթացն ու կատարյալ վերածնունդը լայն ասպարեզ բացեցին նրանց ազգային պետականության զարգացման ու իրավունքների ընդլայնման համար:

1924 թ. ընդունված ՍՍՀՄ սահմանադրությունից հետո երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում մեծ փոփոխություններ էին կատարվել. ստեղծվել էր տեխնիկապես վերազինված ծանր արդյունաբերություն, գյուղում հաղթանակել էր կոլտընտեսային կարգը և կուլակությունը որպես դասակարգ վերացվել էր, ամբողջ երկրում հաստատվել էր արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը: Նման պայմաններում գոյություն ունեցող սահմանադրությունն այլևս չէր համապատասխանում երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխություններին:

Ելնելով դրանից, ՀամԿ (բ) Կ Կենտկոմի պլենումը 1935 թ. փետրվարի 1-ին առաջարկ մտցրեց սովետների VII համագումարում ՍՍՀՄ սահմանադրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ մըտցնելու մասին: Նույն թվականի փետրվարի 6-ին

ՍՍՀՄ սովետների VII համագումարը, հանրագումարի բերելով սոցիալիստական շինարարության հաջողությունները, որոշեց, հաշվի առնելով երկրում տեղի ունեցած փոփոխությունները՝ մշակել նոր սահմանադրություն:

ՍՍՀՄ Կենտգործկոմի նստաշրջանը կազմեց 31 հոգուց բաղկացած հանձնաժողով, որի ներկայացրած նախագիծը 1936 թ. հունիսին արժանացավ ՀամԿ (բ) Կ Կենտկոմի պլենումի և ապա ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահության հավանությանը: Նույն ամսի 12-ին նախագիծը հրապարակվեց մամուլում՝ համաժողովրդական քննարկման համար: Հինգ ամիս տևող քննարկմանը մասնակցեց երկրի հասակավոր բնակչության 55 %-ը և ապա 1936 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին արդյունքները հանրագումարի բերվեցին շրջանային, մարզային, երկրամասային, ինչպես նաև հանրապետական սովետների արտակարգ համագումարներում:

ՀՍՍՀ սովետների IX արտակարգ համագումարը տեղի ունեցավ 1937 թ. մարտի 23-ին, որտեղ Կենտգործկոմի նախագահ Գ. Հանեսօղլյանը զեկուցեց սահմանադրության նախագծի քննարկման արդյունքների մասին: Նա նշեց, որ այդ համաժողովրդական քննարկումը աշխատավորական լայն մասսաների մեջ աշխատանքային և քաղաքական ակտիվության մեծ վերելք առաջացրեց:

1936 թ. նոյեմբերի 25-ին Մոսկվայում իր աշխատանքն սկսեց ՍՍՀՄ սովետների VIII արտակարգ համագումարը, որին մասնակցում էր 63 ազգությունների 2018 պատգամավոր:

Համագումարում սահմանադրության ընդունումը նշանավորեց սովետական դեմոկրատիայի զարգացման նոր աստիճան, որը ձեռք բերված հաջողություններն ամրապնդում էր օրենսդրական կարգով: Այսպես, օրինակ, ոչ լրիվ հավասար ընտրությունները փոխարինվեցին հավասար, բազմաստիճանը՝ ուղղակի և բացը՝ գաղտնի ընտրություններով: Հաստատվում է «Յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սոցիալիզմի սկզբունքը, որը խթանում էր աշխատավորների շահագրգռվածությունը՝ հաշվի առնում անձնական և հասարակական շահը:

Նոր սահմանադրությունը նաև արձանագրում էր սոցիալիստական ազգերի զարգացումն ու ազգային պետականության հետագա կատարելագործումը:

ՍՍՀՄ սովետների VIII համագումարը որոշեց վերացնել Անդրֆեդերացիան, քանի որ այն արդեն կատարել էր իր պատմական դերը: Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի սովետական սոցիալիստական հանրապետությունները հասել էին զարգացման այնպիսի մակարդակի, որ կարող էին

Կոմիտասի անվան քառյակը. ձախից աջ՝ Ավետ Գաբրիելյան, Ռաֆայել Դավիդյան, Սարգիս Ասլամազյան, Հենրիկ Թալալյան



Ստ. Շահումյանի արձանը

ինքնուրույն կերպով մտնել ՍՍՀՄ-ի կազմի մեջ:

Սովետական Հայաստանը, ՍՍՀՄ սահմանադրության պահանջին համապատասխան, միութենական սուվերեն հանրապետություն լինելու բոլոր տվյալներն ուներ: Այն սահմանակից էր օտար պետության, բնակչությունը մեկ միլիոնից ավելի էր, 82,8 %-ը հայեր էին: 1936 թ. ՍՍՀՄ սահմանադրության նախագծի հրապարակումից հետո ՀՍՍՀ Կենտգործկոմը Ա. Խանջյանի նախագահությամբ ստեղծեց սահմանադրական հանձնաժողով, որի կազմած ՀՍՍՀ սահմանադրության նախագիծը նույն թվականի հոկտեմբերին հրապարակվեց մամուլում՝ համաժողովրդական քննարկման համար:

1937 թ. փետրվարի 22-ին ՀՍՍՀ Կենտգործկոմը, հանրագումարի բերելով քննարկման արդյունքները, հավանություն տվեց նոր սահմանադրության նախագծին և այն նախապատրաստեց Հայաստանի սովետների IX համագումարի քննարկմանը ներկայացնելու համար:

Նոր սահմանադրության քննարկումը լայն արձագանք գտավ ոչ միայն ՀՍՍՀ-ում, այլ նաև սփյուռքահայ աշխատավոր մասսաների շրջանում: Այն նշանակալից իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում, քանի որ հայկական պետականության ճակատագիրը հետաքրքրում էր համայն հայությանը:

1937 թ. մարտին Հայաստանի սովետների IX համագումարը քննարկեց սահմանադրության նախագիծը և այն ընդունեց որպես հիմնական օրենք: Գործի դրվեց ՀՍՍՀ սահմանադրությունը՝ սոցիալիստական կարգերի հիմնական օրենքը: Համագումարը ՍՍՀՄ սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն Անդրֆեդերացիան և նրա ղեկավար մարմինները համարեց վերացված: Նման որոշում ընդունեցին նաև Ադրբեջանական ՍՍՀ սովետների IX և Վրացական ՍՍՀ սովետների VIII համագումարները:

Հայկական ՍՍՀ նոր սահմանադրությունն ընդհանրացրեց սոցիալիստական շինարարության գործում հայ ժողովրդի ձեռք բերած պատմական արդյունքները, օրենսդրական կարգով ձևակերպեց Հայաստանի՝ որպես սուվերեն հանրապետության, ՍՍՀՄ կազմի մեջ մտնելու կարևոր փաստը:

Սահմանադրությունն օրենսդրական կարգով ամրապնդեց այն արմատական փոփոխությունները, որոնք կատարվել էին ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության, մշակույթի, հասարակական կյանքի, քաղաքական ու դասակարգային կառուցվածքներում: Նրանում արձանագրվում էին շահագործող դասակարգերի վերացումը, մարդու կողմից մարդու շահագործման իսպառ անհետացումը:

Սահմանադրությունն արձանագրում էր, որ ՀՍՍՀ-ն բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետություն է, որի քաղաքական հիմքը աշխատավորների դեպուտատների սովետներն են, իսկ տնտեսական հիմքը՝ արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը: Բոլոր քաղաքացիներին տրվում էր աշխատանքի, կրթության, բժշկական օգնության, հանգստի, թոշակավորման իրավունք: Աշխատավորության համար ստեղծված սոցիալական ապահովության երաշխավորված սիստեմն ապահովում էր քաղաքացիների բարեկեցիկ կյանքը:

Սովետական կարգերի և սոցիալիզմի հաղթանակով պայմանավորված նվաճումների շնորհիվ աշխատավորների մեջ իսպառ վերացավ անվստահությունը վաղվա նկատմամբ, արմատավորվեց այն համոզմունքը, որ սովետական պետության կարևորագույն խնդիրն է «բավարարել աշխատավորների նյութական ու կուլտուրական բարեկեցությունը, նրանց օրավուր աճող պահանջմունքները»:

ՀՍՍՀ սահմանադրությունը, կոչված լինելով ապահովելու բոլոր քաղաքացիների իրավունքներն ու ամենալայն դեմոկրատական ազատությունը, միաժամանակ նշում էր նրանց պարտականությունները:

Սահմանադրության մեջ արտացոլվում էին նաև ՀՍՍՀ առանձնահատկությունները, ընդգծվում էր ազգային մշակույթի ու լեզվի զարգացման կարևոր նշանակությունը: Նրանում նշվում էր, որ Հայկական ՍՍՀ-ն սուվերեն պետություն է, որի կազմում չկան ինքնավար հանրապետություններ ու մարզեր, ինչպես և օկրուգներ: Միաժամանակ ընդգծվում էր, որ Հայկական ՍՍՀ սահմանադրությունը իր հիմնական կառուցվածքով ու սկզբունքներով ելնում է ՍՍՀՄ սահմանադրության հիմնական դրույթներից: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ թե՛ ՍՍՀՄ-ի և թե՛ Հայկական ՍՍՀ-ի սահմանադրությունների տնտեսական ու քաղաքական հիմքերը նույնն էին: ՍՍՀՄ-ի և բոլոր հանրապետությունների սահմանադրություններում օրենսդրական կարգով ամրապնդված էր կոմունիստական կուսակցության ավանգարդային ու ղեկավար դերը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

1937 թ. դեկտեմբերի 12-ին կայացան ՍՍՀՄ Գերագույն սովետի ընտրությունները: Հայկական ՍՍՀ-ում 620220 ընտրողներից ընտրությանը մասնակցեցին 590541-ը կամ ընտրողների 95,2 %-ը: Սովետական Հայաստանից ընտրված 29 դեպուտատից 4-ը միության սովետի, իսկ 25-ը՝ ազգությունների սովետի դեպուտատներ էին:

1938 թ. հունվարի 12-ին կայացավ ՍՍՀՄ Գերագույն սովետի առաջին նստաշրջանը: Ընտրվեց նախագահություն, որի նախագահ դարձավ Մ.Կալինինը, իսկ տեղակալներ՝ 11 հանրապետությունների ներկայացուցիչները:

1938 թ. հունիսի 12-ին տեղի ունեցան Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ընտրությունները, որոնց մասնակցեց ընտրողների 99,06 %-ը: Կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին ձայն տվեց ընտրողների 99,67 %-ը: Ընտրված 256 դեպուտատից կոմունիստ էին 156-ը, անկուսակցական՝ 100-ը, բանվոր՝ 56-ը, կոլտնտեսական՝ 145-ը և ծառայող՝ 55-ը: Ըստ ազգային կազմի հայ էին 212, ադրբեջանցի՝ 27, ռուս՝ 13, քուրդ՝ 2, վրացի՝ 1, հույն՝ 1 դեպուտատ: Նրանցից 65-ը կանայք էին:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի առաջին նստաշրջանը տեղի ունեցավ 1938 թ. հուլիսի 12-ին, որտեղ ընտրվեց Գերագույն սովետի նախագահություն՝ Մ. Պապյանի նախագահությամբ: Կազմվեց հանրապետության կառավարություն, որի նախագահ ընտրվեց Ա. Փիրումյանը:

Այսպիսով, նոր սահմանադրության հաստատումը և գերագույն ու տեղական սովետների պետական մարմինների ստեղծումը սովետական պետականության զարգացման մի նոր աստիճան նշանավորեցին:

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

II հնգամյակի տարիներին ժողովրդական տնտեսության բուռն վերելքը ժողովրդի նյութական բարեկեցության համար նպաստավոր պայմաններ ստեղծեց: Տարեցտարի ավելանում էին քաղաքի և գյուղի աշխատավորների մշակույթի, լուսավորության, առողջապահության գործը բարձր մակարդակի հասցնելու, բնակչության օրավուր աճող պահանջները բավարարելու համար հատկացվող միջոցները:

Մեծ փոփոխություններ կատարվեցին նաև հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Բուռն աճ ապրեց ժողովրդական լուսավորությունը, զարգացավ հայ ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթը:

Աճեցին բանվորների և կոլտնտեսականների եկամուտները, և դրա հիման վրա բարձրացավ նրանց գնողունակությունը, զարգացան առևտուրն ու ապրանքաշրջանառությունը: Պետական ու կոոպերատիվ առևտուրը 1937 թ. 1932 թ. համեմատությամբ աճեց երեք անգամ: Լայն թափ ստացավ բնակարանային շինարարությունը: Երկրորդ հնգամյակում հանրապետության քաղաքներում և ավաններում շահագործման հանձնվեց 483 հազ. **քառ. մ** բնակելի տարածություն: Մեծ չափով ընդլայնվեցին սոցիալական ապահովության ֆոնդերը. հիվանդանոցներում մահճակալների քանակը 1932 թ. 1600-ից 1937 թ. հասավ 2214-ի:

Բազմաչարչար հայ ժողովուրդը շնորհիվ սովետական իշխանության հաղթանակի և կոմունիստա-

կան կուսակցության լենինյան իմաստուն քաղաքականության, փրկվելով ֆիզիկական բնաջնջման ահավոր վտանգից, սովետական ժողովուրդների համերաշխ ընտանիքում կատարյալ վերածնունդ ապրեց: 1939 թ. մարդահամարի համաձայն Հայաստանի բնակչությունը, 1926 թ. համեմատությամբ, աճել էր 145,4 %-ով և հասել 1.281.599-ի: Քաղաքային բնակչության աճը կազմում էր 219,3 %:

Շնորհիվ լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի, երկրորդ հնգամյակի վերջում Հայաստանի արդյունաբերության տեսակարար կշիռը կազմեց 84 %: ՀՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքը, 1919 թ. համեմատությամբ, ավելացավ 189,6 անգամ, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը 1,5 հազար կիլովատից հասավ 88,1 հազար կիլովատի:

Սոցիալիստական սեփականության պետական և կոոպերատիվ ձևերի ընդհանրությունն է՛լ ավելի ամրապնդեց բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը: Այդ դաշինքը կոփող ու առաջ մղող ուժը Հայաստանի բանվոր դասակարգն էր, որը սոցիալիստական ինդուստրիայի բուռն զարգացման հետևանքով աճել և հզոր ուժ էր դարձել: Եթե նախասովետական շրջանում Հայաստանի բանվորների թիվը 10 հազարից չէր անցնում, ապա 1932 թ. բանվորների և ծառայողների քանակը 93996 էր, իսկ 1936 թ. այն հասավ մոտ 105 հազարի: Արդեն 1937 թ. բանվորներն ու ծառայողները կազմում էին բնակչության 34,7, իսկ կոլտնտեսականները՝ 55,5 %-ը:

Սոցիալիզմի հաղթանակով որոշակի փոփոխության ենթարկվեց նաև գյուղացիությունը, որը մանր արտադրողների դասակարգից դարձավ կոլտնտեսային և իր բնույթով ավելի մերձեցավ բանվոր դասակարգին:

Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական առաջընթացը նպաստավոր պայմաններ ստեղծեց հայ սոցիալիստական ազգի ձևավորման համար: Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի կողման արգասիք էր հայ սոցիալիստական ազգը, որն իր քաղաքական ու հոգևոր կերպարով հանդես եկավ որպես միանգամայն նոր հասարակական կազմավորում, ազգի նոր տիպ: Այդ նոր ազգի տնտեսական հիմքը արտադրամիջոցների սոցիալիստական սեփականությունն էր, սոցիալիստական արտադրաեղանակը: Սոցիալիստական հայ ազգի ձևավորումն արդյունք էր այնպիսի որոշիչ գործոնների, ինչպիսիք էին երկրի՝ ինդուստրացումն ու արդյունաբերական խոշոր կենտրոնների ստեղծումը, բանվոր դասակարգի քանակական ու որակական աճը, գյուղի կոլեկտիվացումն ու սոցիալիստական շինարարության բուռն վերելքը, արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսական կապերի ամրապնդումը, տրանսպորտի ու կապի միջոցների արագ զարգացումը, առևտրի ծավալումը, քաղաքի և գյուղի սերտ կապը, ինչպես նաև հանրապետության բոլոր շրջանների և եղբայրական հանրապետությունների միջև տնտեսական ու կուլտուրական կապերի ընդլայնումը:

Սոցիալիստական հայ ազգի ձևավորման գործում կարևորը սովետական պետականության ստեղծումն էր, որը ժողովրդի ստեղծագործական ուժերի զարգացման լայն հեռանկարներ բացեց: Նման պայմաններում հայ աշխատավորական կանգվածների ուժերը միավորվեցին և կոնսոլիդացիայի ենթարկվեցին: Դրան նպաստեց նաև աշխարհով մեկ սփռված հայերի ներգաղթի կազմակերպումը, որի հետևանքով աճեցին հայ ժողովրդի ստեղծագործական ուժերը: Մյուս կողմից, արտասահմանյան հայ գաղթավայրերն ավելի կապվեցին մայր հայրենիքի հետ:

Հայկական պետականությունը շրջապատված էր բարեկամական ջերմ հոգատարությամբ, նյութական ու բարոյական հսկայական օգնություն էր ստանում: Այդ օգնության շնորհիվ էր, որ ավերված ու սովի մատնված Հայաստանը պատմական կարճ ժամանակում կարողացավ մոխրակույտերից վեր բարձրանալ, վերածնվել և ընթանալ սոցիալիզմի ուղիով:

Սոցիալիզմի հաղթանակի պայմաններում ազգային հարցում գործող երկու միտումները՝ ազգերի բարգավաճումն ու մերձեցումը, սկսեցին արագ առաջ գնալ: Տեղի ունեցավ ՍՍՀՄ-ի բոլոր ազգերի համակողմանի զարգացումը: Միութենական և ինքնավար հանրապետությունների իրավունքների ընդլայնումն է՛լ ավելի նպաստեց ազգերի մերձեցմանն ու փոխազդեցությանը, նրանց կապերի ու մտերմական հարաբերությունների ուժեղացմանը: ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների եղբայրական ընտանիքում աճեց ու ամրապնդվեց հայ ժողովրդի քաղաքական ու գաղափարական միասնությունը եղբայրական մյուս ժողովուրդների հետ: Ինչքան ազատ, այնքան ուժեղ էր ազգերի և ժողովուրդների մերձեցումն ու բարեկամությունը:

Լենինյան վեհ գաղափարներով տոգորված հայ ժողովրդի սոցիալիստական մշակույթը խոշոր նշանակություն ունեցավ հայ սոցիալիստական ազգի ձևավորման ու զարգացման համար: Հանդես գալով որպես մի միասնություն, հայ սոցիալիստական ազգը, եղբայրական մյուս ազգերի զարգացմանը

համընթաց, ավելի բարձր տեմպերով առաջ ընթացավ և դրանով իսկ իր ավանդը մուծեց ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման գործում:

Սոցիալիզմի կառուցման գործում սովետական ժողովրդի բոլոր հաղթանակների կազմակերպողն ու ոգեշնչողը կոմունիստական կուսակցությունն էր, նրա տեղական կազմակերպությունները, որոնք եռանդուն աշխատանք ծավալեցին մասսաների կազմակերպման, սոցիալիստական շինարարության հաղթանակն ապահովելու ուղղությամբ: Հսկայական չափով ուժեղացան կուսակցական կազմակերպությունների ազդեցությունը մասսաների վրա, նրանց ավանգարդային դերը ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում:

Սակայն այդ ժամանակաշրջանում դեռևս անբավարար էր կուսակցության երիտասարդ անդամների մեջ տարվող դաստիարակչական, նրանց մարքս-լենինյան գաղափարներով կոփելու աշխատանքը: Մի շարք կազմակերպություններում թույլ էր բանվորական կորիզը, որոշ դեպքերում էլ կուսակցության մեջ էին թափանցում կարիերիստական տարրեր, որոնք վնաս էին հասցնում ընդհանուր գործին: Այդ թերությունները վերացնելու համար 1933 թ. հունվարի 12-ին կայացած ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ միացյալ պլենումը որոշում ընդունեց կուսակցության պտման և ընդունելությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին: Զտման հետևանքով կուսակցությունը մաքրվեց անհարազատ տարրերից և դարձավ ավելի ամրակուռ ու մարտական: Զտումից հետո անցկացվեց կուսակցական փաստաթղթերի ստուգում և փոխանակում: Սակայն միաժամանակ ի հայտ եկան լուրջ սխալներ ու շեղումներ: Առանձին կարիերիստներ ձգտում էին կուսակցության շարքերի պտումն օգտագործել իրենց անազնիվ նպատակների համար և հաշվեհարդար տեսնել ազնիվ ու նվիրված կոմունիստների հետ: Դրա հետևանքով որոշ հանրապետություններում և հատկապես Հայաստանում կոմունիստների թիվը զգալի չափով կրճատվեց:

Անդրադառնալով այդ հարցին, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. հունվարյան պլենումը դատապարտեց թույլ տրված սխալները, կոմունիստների նկատմամբ ցուցաբերած հախուռն վերաբերմունքը, երբ առանց մանրամասն ստուգման շատերին հեռացնում էին կուսակցության շարքերից: Դրանք անհատի պաշտամունքի պայմաններում սովետական դեմոկրատիայի և կոլեկտիվ ղեկավարության խախտման կոպիտ փաստեր էին, որոնք լուրջ վնաս հասցրին սովետական օրինականությանը:

Նման պայմաններում դրսևորվեց Ստալինի անձի պաշտամունքը, խախտվեցին դեմոկրատիայի լենինյան սկզբունքները, անօրինականության զոհ դարձան բազմաթիվ լավագույն կադրեր: Անհատի պաշտամունքն արտացոլվեց 1937 թ. մայիսի 26-ին բացված ՀԿ(բ)Կ 10-րդ համագումարում: Բանն այնտեղ հասավ, որ համագումարում Ա. Խանջյանին վարկաբեկելու համար ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու ժամանակաշրջանի գործունեությունը գնահատվեց անբավարար: 1937 թ. սեպտեմբերյան պլենումը ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց Գ. Հարությունյանին:

Սակայն տեղի ունեցած խախտումներն ու անօրինականությունները չէին կարող շեղել սոցիալիստական երկրի զարգացման ընթացքը, ընդհատել ժողովրդական տնտեսության զարգացումը: 1936 թ. նոյեմբերից, կուսակցության մեջ ընդունելության վերսկսվելուց հետո, նրա շարքերն ընդունվեցին սոցիալիզմի գործին նվիրված բանվորներ, գյուղացիներ և աշխատավոր մտավորականության ներկայացուցիչներ: Մինչև 1937 թ. վերջը Հայաստանում կուսակցության շարքերն ընդունվեց մոտ 4 հազար մարդ: Զգալիորեն աճեց կուսակցական կազմակերպությունների բանվորական կորիզը: Գաղափարական ու քաղաքական լուսավորության գործը բարձր մակարդակի վրա դրվեց. ստեղծվեցին հատուկ կուրսեր, կուսդպրոցներ, կուսակցական լուսավորության տներ ու խմբակներ: Այդ բոլորը նպաստեց մասսաների վրա կուսակցության ղեկավար ազդեցության ուժեղացմանը:

Սովետական երկրի հաջողությունները է՛լ ավելի կզգալի կլինեին, եթե չլինեին մի շարք խանգարող հանգամանքներ, ինչպիսիք էին, օրինակ, անհատի պաշտամունքը և նրա հետևանքով առաջացած սովետական օրինականության խախտման փաստերը: Դրա հետևանքով շատ արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկություններ զրկվեցին ինժեներատեխնիկական լավագույն շատ կադրերից, որոնց պահանջը ազգային հանրապետություններում առանց այն էլ շատ մեծ էր:

Կոլտնտեսային շարժումը, որը կոչված էր գյուղում նոր հեղափոխություն ծավալելուն, կապված էր բազմաթիվ դժվարությունների, հատկապես կուլակային դասակարգի դիմադրության հետ: Կուլակային-բանդիտական շարժումները, որոնք բավականին ուժեղ ընթացք ստացան 1930—1931 թթ., թողել էին բացասական հետքեր: Կոլտնտեսություններին զգալի վնաս պատճառեցին նաև ղեկավարման վարչարարական մեթոդները, կոլեկտիվացման կամավորության սկզբունքի խախտումը, լեռնային շրջանների համար կոլեկտիվացման բարձր տեմպերի ընդունումը, տեղական առանձնահատկությունների անտեսումը: Այդ սխալներն ուղղելու

և կոլտնտեսային շինարարությունը նորմալ հունի մեջ դնելու համար մեծ աշխատանք ծավալվեց երկրորդ հնգամյակի տարիներին: Այդ աշխատանքի կարևորությունը պատկերացնելու համար բավական է նշել, որ գյուղացիության վգալի մասը կոլտնտեսության մեջ մտավ երկրորդ հնգամյակի տարիներին (Ադրբեջանական ՍՍՀ-ում մոտ 50 %-ը, Վրացական և Հայկական ՍՍՀ-ում՝ ավելի քան 40 %-ը): Կոլեկտիվացման տոկոսը 1937 թ., 1932 թ. համեմատությամբ, Ադրբեջանում 51-ից հասավ 87-ի, Հայաստանում՝ 38-ից 78-ի, իսկ Վրաստանում՝ 36-ից 77-ի:

Գնալով վերանում էր հանրապետությունների տնտեսական անհավասարությունը: Այսպես, եթե 1933—1937 թթ. ՍՍՀՄ պետական բյուջեն ընդհանուր առմամբ աճեց 164,1 %-ով, ապա Հայկական ՍՍՀ-ի բյուջեն՝ 239,1 %-ով:

ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացումը առավել արագ տեմպեր ընդունեց երրորդ հնգամյակի տարիներին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-Ն III ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

III հնգամյա պլանը (1938—1942) մնաց անավարտ. այն ընդհատվեց պատերազմի պատճառով: Այդուհանդերձ հնգամյակի ընթացքում ինչպես ամբողջ երկիրը, այնպես էլ ՀՍՍՀ-ն վգալի հաջողությունների հասավ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման և երկրի պաշտպանության ամրապնդման ասպարեզում: ՀՍՍՀ-ում գործարկվեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց թվում նաև Երևանի Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի կոմբինատը, Կիրովականի Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը, Ալավերդու ծծմբաթթվի գործարանը, ավարտվեց Երևանի Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանի վերակառուցումը, գործարկվեցին Քանաքեռի հիդրոէլեկտրակայանի բոլոր ագրեգատները, լայն թափ ստացավ Սևան—Հրազդան կասկադի շինարարությունը: Արդեն 1940 թ. հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների թիվը հասավ 120-ի, իսկ արդյունաբերական արտադրանքը կազմեց համախառնի 80 %-ը: 1920 թ. մինչև 1940 թ. հանրապետությունում կառուցվեցին ավելի քան 40 մեծ ու փոքր էլեկտրակայաններ՝ Երգէս-1-ը, Երգէս-2-ը (ՍՍՀՄ-ում առաջին ավտոմատ գէսը), Լենգէսը, Ձորագէսը, Քանաքեռգէսը և այլն: Դրանց շնորհիվ, եթե 1913 թ. Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրությունը 5,1 միլիոն **կվտ/ժամ** էր, ապա 1940 թ. կազմեց 395 միլիոն **կվտ/ժամ:**

Նկատելի էին նաև գյուղատնտեսության ասպարեզում ձեռք բերված հաջողությունները: Լիովին ավարտվեց գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը, բոլոր շրջաններն ապահովվեցին մեքենատրակտորային կայաններով, որոնք ունեին ավելի քան 2000 տրակտոր, 1000-ից ավելի կոմբայն և բազմաթիվ այլ մեքենաներ: 1939—1940 թթ. համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցող 48 կոլեկտիվ և պետական տնտեսություններ և 4 հազար առաջավորներ արժանացան պարգևների: Կարևոր նշանակություն ունեցավ ՍՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ ՀՍՍՀ-ում պտղաբուծության, տեխնիկական կուլտուրաների և ոռոգելի գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ 1940 թ. սեպտեմբերի 6-ի որոշումը: Կառավարության կողմից բաց թողնված հսկայական միջոցները խթանեցին գյուղատնտեսության վերելքը:

1940 թ. միլիոնատեր կոլտնտեսությունների թիվը հասավ 40-ի՝ 1937 թ. 12-ի դիմաց: Հանրապետությունում նկատելի տեղաշարժեր կատարվեցին տեխնիկական կուլտուրաների զարգացման բնագավառում: Եթե 1927 թ. բամբակի բերքատվությունը մեկ հեկտարից հավասար էր 13,1 ց, ապա 1939 թ. հասավ 19,3 ց: Ոռոգելի հողատարածությունները 1940 թ., 1913 թ. համեմատությամբ, մեծացան 2 անգամ և հասան 180 հազար հեկտարի, իսկ ցանքատարածությունն աճեց 25 %-ով: Այդ նույն ժամանակամիջոցում գյուղատնտեսության համախառն արտադրանքն ավելացավ 56, իսկ նրա ապրանքայնությունը՝ 50 %-ով:

Զգալի չափով զարգացավ նաև քաղաքաշինությունը, բարեկարգվեցին ավաններն ու գյուղերը: Քաղաքներում երրորդ հնգամյակի տարիներին կառուցվեց մոտ 250 հազ. **քառ. մ** բնակելի տարածություն: Երևանում ձևավորվեց Լենինի հրապարակը, որտեղ 1940 թ. նոյեմբերի 24-ին բացվեց մեծ առաջնորդի՝ երկրում լավագույն հուշարձաններից մեկը:

Բարելավվեց բնակչության բուժսպասարկումը, բարձրացավ նրա նյութական բարեկեցությունը: Բնակչությունը 1920 թ. 720 հազարից 1940 թ. հասավ 1 միլիոն 319 հազարի: Հանրապետությունում գործում էին 1155 դպրոց՝ 326 հազ. աշակերտով, 62 տեխնիկում և 10 բարձրագույն ուսումնական հաստատություն: Բացվեց Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը: 1939 թվականին Մոսկվայում տեղի ունեցավ հայկական արվեստի տասնօրյակը, որը վերածվեց վերածնված հայ ժողովրդի մշակույթի մեծ տոնի: Կարևոր իրադարձություն էր նաև «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարությունը:

«Պրավդան» 1939 թ. սեպտեմբերի 15-ին գրեց. «Սովետական մշակույթի միջոցով «Սասունցի Դավիթը» մտնում է համաշխարհային մշակույթի ոլորտի մեջ և դառնում մարդկության հերոսական մեծ էպոսի մի մասը»:

Գիտական հիմնարկները և 1935 թ. ստեղծված ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը բեղմնավոր աշխատանք էին ծավալել հանրապետության արտադրողական ուժերի զարգացման հեռանկարների, հայ ժողովրդի պատմության, գրականության, արվեստի, բազմադարյան մշակույթի պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ: 1940 թ. Հայկական ՍՍՀ-ի գիտական 40 հիմնարկներում աշխատում էր մոտ 800 գիտաշխատող: Երկրի ինդուստրացման և կոլտնտեսային կարգի հաղթանակի շնորհիվ մեկընդմիշտ անհետացավ գործազրկությունը, վերացավ անգրագիտությունը: Մինչպատերազմյան հնգամյակների տարիներին Հայաստանը ցարական Ռուսաստանի հետամնաց ագրարային ծայրամասից վերափոխվեց առաջավոր ինդուստրիալ-կոլտնտեսային հանրապետության:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Դեռ մինչև Հայրենական մեծ պատերազմը հայ ժողովրդի զավակները կարմիր բանակի շարքերում իրենց անձնազոհ սխրանքներով աչքի ընկան Խասան լճի և Խալխին գոլի շրջաններում ճապոնական զավթիչների դեմ մղված մարտերում, Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ազատագրման և ֆինն-սովետական պինված ընդհարումների ժամանակ: Երբ 1940 թ. սովետական կառավարության որոշմամբ նոր զինվորական կոչումներ սահմանվեցին, ապա առաջին գեներալական կոչումներ ստացողների թվում էին նաև հայ ժողովրդի փառաբանված զավակներ Մ. Բարսեղյանը, Ք. Ալավերդյանը, Ի. Վեքիլյանը, Բ. Առուշանյանը, Վ. Տամրուչին (Դեմիրճյանը): Սովետական Միության հերոսի կոչման արժանացան Մ. Բարսեղյանը, Կ. Սիմոնյանը, Գ. Հայրապետյանը, Ի. Մանասերյանը:

Զավթելով Եվրոպայի վգալի մասը, ֆաշիստական ագրեսորները 1941 թ. հունիսի 22-ին, խախտելով ՍՍՀՄ հետ կնքած չհարձակվելու պայմանագիրը, ուխտադրժորեն հարձակվեցին մեր երկրի վրա: Սովետների երկրի վրա մահացու վտանգ կախվեց: 1941 թ. հունիսի 23-ին սովետական կառավարությունը ժողովրդին կոչ արեց միասնական ուժերով, կազմակերպված ու ինքնազոհողությամբ, հայրենասիրական բուռն եռանդով ապահովել կարմիր բանակի, նավատորմի և օդային ուժերի հաղթանակը թշնամու հանդեպ: Հաղթանակի նշանաբանով սովետական բազմազգ ժողովուրդը, որպես մի հզոր ու անպարտելի ուժ, ոտքի ելավ և մեծ զոհերի գնով սկսեց ջախջախել թշնամու «անպարտելի կոչված» ուժերը:

Կոմունիստական կուսակցությունը սովետական բոլոր ժողովուրդներին պայքարի դուրս բերելով, մշակեց հայրենիքի պաշտպանության մարտական ծրագիր, որը շարադրված էր ՍՍՀՄ Ժողկոմխորհի և համԿ(բ)Կ Կենտկոմի 1941 թ. հունիսի 29-ի դիրեկտիվներում:

Հայ ժողովուրդը մեծ Հայրենականի ակտիվ մասնակիցն էր և իր արժանի լուման ներդրեց ֆաշիստական բարբարոսների ջախջախման գործում: Պատերազմի տարիներին ՀՍՍՀ-ից և Միության տարբեր վայրերից բանակ զորակոչվեցին մոտ 600 հազար հայորդիներ, որոնք ամենայն նվիրվածությամբ ծառայեցին սովետական բանակի շարքերում: Կարևոր էր ազգային զորամասերի ստեղծումը: Հայ ժողովրդի զավակներից կազմավորվեց վեց դիվիզիա, որոնցից 76-րդ լեռնահրաձգայինը գոյություն ուներ դեռ 1920-ական թվականներից և որի շարքերում կոփվեցին շատ անվանի հայ զինվորականներ: Այդ դիվիզիան հատկապես աչքի ընկավ ստալինգրադյան հերոսամարտում և կոչվեց 51-րդ գվարդիական: 1941 թ. դեկտեմբերին Երևանում ձևավորվեց 89-րդ դիվիզիան, որը 1942 թ. սեպտեմբերից մասնակցեց Հյուսիսային Կովկասում մղված մարտերին և ապա հասավ մինչև Բեռլին: 390-րդ դիվիզիան կազմավորվեց 1941 թ. և հաջորդ տարում մասնակցեց Կերչի արյունահեղ մարտերին: 1941 թ. ձևավորվեց նաև 409-րդ դիվիզիան, որը Թերեքի ափերից մինչև Դանուբ տեղի ունեցած մարտերի ակտիվ մասնակիցն էր: Երևանում կազմավորված 408-րդ դիվիզիան մասնակցեց Կովկասի սևծովյան ափերում տեղի ունեցած մարտերին, իսկ 261-րդ դիվիզիան ՍՍՀՄ-ի տարածքը թուրքական հնարավոր ներխուժումից պաշտպանող սահմանապահ զորամասերի կազմում էր:

Պատերազմի տարիներին ՀՍՍՀ-ում ստեղծվեց նաև 45 կործանիչ գումարտակ, որոնցում ընդգրկված էր 12 հազար մարդ: Այդ գումարտակները ոչ միայն ապահովեցին հանրապետության ռազմական կարևոր օբյեկտների պաշտպանությունը, այլ նաև ճակատ ուղարկեցին 8 հազար մարտիկ, որոնց թվում 700 պարաշյուտիստ-դեսանտայիններ: Բացի այդ, տասնյակ հազարավոր աշխատավորներ ընդգրկվեցին աշխարհազորային վաշտերում: Հանրապետության ստրատեգիական կարևոր նշանա-

Հովհաննես Բաղրամյան

կություն ունեցող վայրերում կառուցվեցին պաշտպանական հենակետեր: Կազմակերպվեց նաև բնակչության օդային պաշտպանության գործը:

Հայ ժողովուրդը թե՛ ճակատում և թե՛ թիկունքում ամեն ինչ անում էր հաղթանակի ապահովման համար: Հայ ժողովուրդը հայ մարտիկներին ուղարկեց պատգամ-նամակ, որի տակ ստորագրել էր 335 հազար աշխատավոր: Նրանց թվում էին Հ. Օրբելին, Ավ. Իսահակյանը, Մ. Սարյանը և շատ ուրիշներ: «Պրավդան», բարձր գնահատելով հայ ժողովրդի նամակի հայրենասիրական ոգեշնչող նշանակությունը, նշեց, որ հայ ժողովրդի լավագույն մարդիկ իրենց զավակներին «հիշեցնում են նրանց վեհ և սրբազան պարտքը, խոսում են խիզախության և պատվի մասին, ժողովրդի մարտական ավանդույթների մասին»: Հայ ժողովուրդն իր զավակներին պարտավորեցնում էր ամեն ինչ անել հաղթանակի համար: «Ձեր կատարած սխրագործությունների յուրաքանչյուր լուրը,— գրված էր նամակում,— հրճվանքով է լցնում մեր սրտերը, ոգևորում է մեզ՝ անդուլ, անձնազոհ աշխատանքի»: Նամակում հատկապես ընդգծվում էր սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ միասնության, եղբայրական ընտանիքի կարևոր դերն ու նշանակությունը հաղթանակի ապահովման գործում: «Մեր հայրենիքը հզոր է սովետական ժողովուրդների բարեկամությամբ: Հիշեցեք,— ասվում էր նամակում,— որ այդ եղբայրության, ժողովուրդների բարեկամության մեջ է մեր հզոր հայրենիքի՝ Սովետական Միության անպարտելիությունը»:

Հայ ժողովրդի զավակները, բարձր պահելով իրենց նախնիների մարտական ավանդույթները, սխրանքներով աչքի ընկան շատ ճակատամարտերում: Բրեստի պաշտպանների շարքերում կռվում էին բազմաթիվ հայ սարտիկներ, որոնք անմահացան անձնազոհ պայքարով: Բրեստի շրջակայքում մարտերին մասնակցեց նաև գեներալ Ք. Ալավերդյանի դիվիզիան, որն ընկնելով շրջապատման մեջ, մինչև վերջ շարունակեց պայքարը, իսկ անվեհեր գեներալը ֆաշիստական խոշտանգումների զոհ դարձավ:

Պատերազմի հենց սկզբից Կիևի համար մղված մարտերին մասնակցող շատ հայորդիների հետ էր նաև փառաբանված զորավար Հ. Բաղրամյանը, որը Հարավ-արևմտյան ռազմաճակատի շտաբի օպերատիվ վարչության պետն էր, իսկ 1941 թ. օգոստոսին արդեն գեներալ մայորի կոչումով դարձավ այդ նույն ռազմաճակատի շտաբի պետը:

Մոսկվայի մատույցներում ֆաշիստական հորդաների դեմ մղվող մարտերից մեկում 1941 թ. զոհվեց 1905 թ. կուսակցության անդամ, Հոկտեմբերյան հեղափոխության ակտիվ մասնակից, Մոսկվայի պատմա-փիլիսոփայական ինստիտուտի պրոֆեսոր Հ. Ալիբեկյանը: Այդ մարտերի ակտիվ մասնակիցներից էր Մ. Բարսեղյանը, որը Հարավ-արևմտյան

Սովետական Միության հերոս Քրիստափոր Ալավերդյան

ռազմաճակատի հրետանային զորքերի պետն էր: 33-րդ բանակի շտաբի փառաբանված պետ Ս. Գինոսյանը Մոսկվայի պաշտպանական մարտերում արժանացավ գեներալ-մայորի կոչման: Մոսկվայի պաշտպանության մասնակիցներից էին նաև Հ. Բաղրամյանը, Ս. Մարտիրոսյանը, Ի. Գասպարյանը, Հ. Մարտիրոսյանը, Ի. Վեքիլովը: Սովինֆորմբյուրոն բազմիցս հայտնել է նաև Ն. Բալայանի, Գ. Մելիքյանի, Գ. Շադունցի, Ա. Պետրոսյանի և շատ ուրիշների սխրանքների մասին: Այստեղ աչքի ընկավ և Լենինի շքանշանով պարգևատրվեց կոմերիտական կազմակերպիչ Գ. Հակոբյանը:

Հայաստանի աշխատավորները արտադրական նորմաները կատարելու հետ մեկտեղ պատրաստ էին ամեն մի րոպե ճակատ մեկնելու և սովետական բանակի հզորությունը բազմապատկելու: Այն ահեղ օրերին, երբ 1941 թ. Մոսկվային վտանգ էր սպառնում, սովետական բազմազգ ժողովուրդը իր միասնության պատնեշն էր կռում թշնամուն ջախջախիչ հարված հասցնելու համար: Այդ ծանր օրերին Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի բանվորներն իրենց պատրաստակամությունը հայտնեցին «կանգնել սրբազան մայրաքաղաքի պաշտպանների շարքերում, իրենց կյանքը տալ հանուն ժողովուրդների ազատության, պատվի ու անկախության... Մենք ձեզ հետ ենք, հարազատ մոսկվացիներ,— գրում էին նրանք,— մենք վստահ ենք մեր հաղթանակում, քանի որ մեր գործը արդար է»: Իսկ Լենինականի տեքստիլագործները հայտարարեցին. «Մենք կաշխատենք է՛լ ավելի մեծ եռանդով, երկրին կտանք ավելի շատ արտադրանք, իսկ եթե պետք լինի, զենքը ձեռքներիս կկանգնենք Մոսկվայի պաշտպանների շարքերում»:

Մոսկվայի մոտ սովետական բանակի տարած պատմական հաղթանակը կարևոր նշանակություն ունեցավ Հայրենական պատերազմի ամբողջ ընթացքի համար: Հենց այս ճակատամարտում սովետական բանակը մեկընդմիշտ հողմացրիվ արեց հիտլերյան բանակի անպարտելիության առասպելը:

Լենինգրադի պաշտպանության համար էին մարտնչում նաև Սոֆյա և Ռուզան Լալայան բժշկուհի քույրերը, որտեղ և զոհվեց Սոֆյան: Լենինգրադի պաշտպանության համար մարտնչող գնդապետ Ս. Խաչիկյանը ճակատից գրել է. «Ես երջանիկ եմ, որ գտնվում եմ հերոս լենինգրադցիների շարքերում, հպարտ եմ իմ զորամասով, որը կազմված է ռուսներից, ուկրաինացիներից, բելոռուսներից, հայերից, վրացիներից, ադրբեջանցիներից, ուզբեկներից և ղազախներից: Պաշտպանելով Լենինգրադը, դրանով իսկ մենք պաշտպանում ենք մեր Ուկրաինան, Բելոռուսիան, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը: Հեռու չէ այն օրը, երբ մենք թշնամուն ամբողջովին կջախջախենք Լենինգրադի մոտ»: Այդ զգացումով էին համակված սովետական բանակի բոլոր ազգերի զավակների սրտերը, որոնք ինքնազոհաբար կռվում էին թշնամու ջախջախման համար:

Նելսոն Ստեփանյան

Լենինգրադի պաշտպանության մարտերում հատկապես մեծ սխրանքներ գործեց Սովետական Միության կրկնակի հերոս, փառաբանված օդաչու Ն. Ստեփանյանը, որը «Քաջերից քաջ» տիտղոսին էր արժանացել: «Քանի դեռ բաբախում է իմ սիրտը,— ասել է նա,— իմ սրբազան պարտքն եմ համարում պաշտպանել հայրենիքը մինչև արյան վերջին կաթիլը...» Ն. Ստեփանյանը 1944 թ. դեկտեմբերի 14-ին զոհվեց օդային ահեղ մարտերից մեկում: Նա ոչնչացրել է թշնամու 26 ինքնաթիռ, 80 տանկ, 13 նավ, 600 ավտոմեքենա, բազմաթիվ ռազմական կարևոր օբյեկտներ: Ն. Ստեփանյանի մասին ադմիրալ Հ. Իսակովը գրել է. «Այդ քաջերից քաջ հրաշալի մարդու մասին կարելի է և պետք է շատ գրքեր գրվեն, նրա պայծառ անվան հետ շատ բան է կապված»:

Լենինգրադի պաշտպանության մարտերում զոհվեց 42-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ Բ. Գալստյանը: Ականավոր գրող Ն. Տիխոնովը նրան այսպես է բնութագրել. «Գալստյանն այնպիսի մարդ էր, որի հետ կապվում էիր ամբողջ հոգով. նա բարի և սրտառուչ էր, անվախ ու վճռ-

ռական: Վախկոտներին տանել չէր կարողանում: Գալստյանի անունը մենք կգրենք Լենինգրադի հերոս պաշտպանների հավերժության գրքում և միշտ կհիշենք նրան, որպես մեր մեծ քաղաքի հրաշալի հայրենասերի»: Երախտապարտ լենինգրադցիները նրա շիրիմի վրա գրել են. «Ընկեր, հանիր գլխարկդ: Այստեղ հանգչում է հայ ժողովրդի փառապանծ զավակ՝ Լենինգրադի հերոս պաշտպան գեներալ-մայոր Բենիամին Հովհաննեսի Գալստյանը»:

Լենինգրադի համար մարտնչել են նաև հայ գեներալներ Գ. Թումանյանը, Ի. Գասպարյանը, Ն. Հովհաննիսյանը, Ա. Քոչարյանը: Լենինգրադի մատույցներում հերոսի մահով ընկավ կամավորական ջոկատի հրամանատար Ա. Գասպարյանը: Հայ մարտիկները, պաշտպանելով Լենինգրադը, մարտնչում էին հարազատ օջախի՝ Հայաստանի համար: Ահա թե ինչ էին գրում Լենինգրադի հայ պաշտպաններն իրենց հարազատներին. «Սիրելի ծնողներ, քույրեր, եղբայրներ և կանայք, մենք՝ Լենինգրադի ճակատի հայ կարմիրբանակայիններս երդվում ենք ձեզ, որ ռուս ժողովրդի զավակների, մեր երկրի բոլոր ժողովուրդների զավակների հետ միասին կհզորացնենք մեր հարվածները, որպեսզի ջնջենք երկրի երեսից մարդկային կերպարանքը կորցրած ֆաշիստական բանակին»: Իսկ թիկունքում՝ հեռավոր Երևանում, մայրական գուրգուրանքով էին շրջապատված լենինգրադցիների շատ երեխաներ: Նրանց ծնողներից Մ. Անտոնովը, Գ. Մակարովը, Մ. Սիդրովը և ուրիշներ իրենց շնորհակալական նամակում գրում էին, թե իրենց հայտնի է դարձել, որ հայ ժողովուրդը իրենց «երեխաների դաստիարակության և կրթության համար ստեղծել է բոլոր պայմանները: Մենք հայ ժողովրդին ենք հղում մեր ջերմ շնորհակալությունն այն ուշադրության համար, որ ցույց է տրվում մեր երեխաներին»:

Օդեսայի և Սևաստոպոլի համար մղվող մարտերում զոհվեցին գնդապետ Հ. Մեհրաբյանը, կրահագնացքի հրամանատար Գ. Սահակյանը, օդաչու Վ. Վարդանյանը, կուսակցության Սևաստոպոլի քաղաքային կոմիտեի պատասխանատու աշխատող Ա. Պետրոսյանը և շատ ուրիշներ: Կերչի հերոսական մարտերի մասնակիցն էր 390-րդ հայկական դիվիզիան, որը մեծ կորուստ պատճառեց թշնամուն: Այստեղ էլ հերոսի մահով ընկավ դիվիզիայի փառապանծ հրամանատար գնդապետ Ս. Զաքիյանը:

Ֆաշիստական հորդաները ջանք չէին խնայում տիրելու Անդրկովկասի հարստություններին: Կովկասի նախալեռներում նրանց դեմ ելան կարմիր բանակի զորամասերը, որոնց շարքերում էին Կովկասի հերոս զավակները: Այդ մարտերի մասնակիցն էր հայկական 89-րդ դիվիզիան, որը 1942 թ. օգոստոսին թեժ մարտեր մղեց Թերեքի ափին և ազատագրեց շատ բնակավայրեր: Մարտերից մեկում զոհվեց դիվիզիայի հրամանատար գնդապետ Ա. Վասիլյանը, որին փոխարինած Ն. Սաֆարյանի հրամանատարությամբ դիվիզիան մասնակցեց Թամանյան թերակղզու ազատագրմանը և կոչվեց Թամանյան: Այդ դիվիզիայում՝ իրենց մկրտությունը ստացան բազմաթիվ հայ հերոսներ: Նրանց թվում էր Հ. Ավետիսյանը, որն իր արտակարգ սխրանքի համար հետմահու արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման և նրա անունն առհավետ գրանցվեց Սևաստոպոլյան գնդի առաջին վաշտի ցուցակում:

89-րդ դիվիզիայում էր ծառայում նաև Հ. Ավետիսյանի եղբայրը՝ Համայակը, որը հարազատներին հասցեագրած նամակում գրել է. «Պատերազմի հենց սկզբից մենք հինգ եղբայրներով կռվում ենք գերմանաֆաշիստական զավթիչների դեմ: Հերոսի մահով զոհվեց նաև իմ երկրորդ եղբայրը՝ Գևորգը: Երդվում եմ, կրկնակի վրեժ առնել եղբայրներիս արյան համար»: 89-րդ դիվիզիայի մարտիկներից Սովետական Միության հերոսի կոչման արժանացան նաև սակրավոր Ջ. Կարախանյանը, Ս. Առաքելյանը և ուրիշներ, իսկ դիվիզիան պարգևատրվեց Կարմիր աստղի ու Կարմիր դրոշի շքանշաններով:

Սովետական Միության հերոս Ս. Օհանյանի Դոն գետի ափին վեր խոյացած հուշարձանը խորհրդանշում է այն արտակարգ սխրանքը, որ նա կատարեց Դոնի-Ռոստովի շրջանում:

Ստալինգրադի պատմական ճակատամարտի մասնակից 51-րդ գվարդիական հայկական դիվիզիան ոչնչացրեց ավելի քան 8 հազար հիտլերականի, գերի վերցրեց մոտ 6 հազար հոգու, գրավեց 193 ինքնաթիռ, 91 տանկ և այլ ռազմավար: Բավական է նշել, որ դիվիզիայի հայ մարտիկներից 10-ը արժանացան Սովետական Միության հերոսի կոչման: Նրանց թվում էր փառաբանված օդաչու Ս. Բուռնազյանը, որն օդային կռիվներում ոչնչացրեց թշնամու 11 ինքնաթիռ: Ստալինգրադի ճակատամարտի տարեգրության մեջ իրենց կարևոր տեղն ունեն ճանաչված հայ զորավարներ Ս. Գալաջյանը (Գալաջև), Հ. Թումանյանը, Ի. Վեքիլյանը (Վեքիլով), Կարապետյանը, Բոստանջյանը, Հարությունյանը, Պողոսյանը, ավագ սերժանտ Խ. Բաղդասարյանը և ուրիշներ: Խ. Բաղդասարյանի մասին «Կրասնայա զնամյան» հատուկ թերթիկ հրապարակեց, որտեղ ասված էր. «Գնդացրորդ Խաչիկ Բաղդասարյանը ոչնչացրել է 245 գերմանացի: Փառք ու պատիվ սովետական դյուցազնին, կարմիր բանակի անվախ և ունակ մարտիկին, արևաշող

Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյան

Սովետական Միության հերոս Ջահան Կարախանյան

Սովետական Միության հերոս Խորեն Խաչատրյան

Հայաստանի հերոս զավակին»: Ստալինգրադի «Կրասնի օկտյաբր» գործարանի դիրեկտոր Պ. Մաթևոսյանը մինչև վերջ մարտնչեց հարազատ գործարանը պաշտպանելու համար:

Հայրենական պատերազմի ահեղ մարտերում կոփվեցին[*] հայ ժողովրդի ծոցից ելած սովետական բանակի և ռազմածովային ուժերի թվով 65 գեներալ ու ծովակալ: Նրանց թվում Սովետական Միության կրկնակի հերոս, Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանը: Նա մասնակցեց բազում հերոսամարտերի և պատերազմն ավարտեց 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի զորքերի հրամանատարի պոստում: Ռազմական փառքի հոյակապ ուղի է անցել զրահատանկային զորքերի մարշալ Հ. Բաբաջանյանը, որի բրիգադը թշնամուն ջախջախիչ հարված հասցրեց Կուրսկի ճակատամարտում: Ապա նրա կորպուսը մասնակցեց Ուկրաինայի ազատագրմանը: Որպես զրահատանկային բանակի հրամանատար Հ. Բաբաջանյանը մեծ դեր խաղաց ֆաշիստների վերջնական ջախջախման գործում:

Սովետական ռազմածովային ուժերի կազմակերպման գործում մեծ ավանդ ունի Սովետական Միության նավատորմի ծովակալ Հ. Իսակովը (Հովհաննես Տեր-Իսահակյանը): Նա պատերազմի առաջին շրջանում Հյուսիս-արևմտյան ուղղությամբ գործող զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալն էր, ռազմածովային ուժերի գլխավոր շտաբի պետը, ապա նաև Կովկասյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալը և Սևծովյան նավատորմի ղեկավարը: Ծանր վիրավորվելուց հետո Սովետական Միության հերոս Հ. Իսակովը զրկվեց ոտքից և ապաքինվելուց հետո սկսեց աշխատել որպես ռազմածովային ուժերի գլխավոր շտաբի պետ: Նա ռազմագիտության և պատերազմների պատմության խոշոր տեսաբան էր, ճանաչված գիտնական, բազմաթիվ աշխատությունների հեղինակ:

Մեծ Հայրենականի տաղանդավոր զորավարներից էր ավիացիայի մարշալ Ս. Խուդյակովը (Արմենակ Խամփերյանց), որը Բաքվի կոմունայի շարքային զինվորից հասավ Արևմտյան ռազմաճակատի ավիացիայի շտաբի պետի, ավիացիոն բանակի և վերջապես սովետական բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետի պաշտոնին: Հատուկ ծառայությունների համար նրան 1944 թ. շնորհվեց ավիացիայի մարշալի կոչում: Ճապոնական իմպերիալիստների ջախջախման ժամանակ Ս. Խուդյակովը հեռավորարևելյան 12-րդ ռազմաօդային բանակի փառաբանված հրամանատարն էր:

Ուկրաինայի և Չեխոսլովակիայի ազատագրման գործում և մի շարք ուրիշ մարտերում աչքի ընկավ ականավոր զորահրամանատար, գեներալ-լեյտենանտ, Սովետական Միության հերոս Ս. Մարտիրոսյանը, որն ընտրվեց Պրագայի պատվավոր քաղաքացի: Լեհաստանի ազատագրման համար մղված մարտերում հերոսի մահով զոհվեց գեներալ-մայոր Ն. Հովհաննիսյանը:

Հովհաննես Իսակով

Սերգեյ Խամփերյանց

Սովետական մարդիկ, անձնուրաց կռվելով, նպատակ էին դրել ֆաշիստական բարբարոսներին մինչև վերջ ջախջախել և հողմացրիվ անել նրանց որջը: Դեռ 1941 թ. դաժան օրերին Հ. Շիրազը գրել է.

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ռոնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

Սովետական Միության հերոս Աշոտ Ղազարյան

Հասավ բաղձալի օրը. 1945 թ. ապրիլի 25-ին սովետական զորքերը օղակեցին Բեռլինը և մայիսի 2-ին գրավեցին: Մայիսի 2-ին Բեռլինի վրա գրոհող 2,5 միլիոն սովետական մարտիկների շարքում էին մեր երկրի բոլոր ժողովուրդների հերոս զավակները: Այդ մարտերին մասնակցում էին 10-ից ավելի հայ գեներալներ, Սովետական Միության բազմաթիվ հերոսներ: Փառաբանված զորավար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանի հրամանատարությամբ 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան Բեռլինի գրավման հերոսական մարտերում իր սխրանքներով լի ուղին ավարտեց մեծ փառքով: Դիվիզիայի 7 հազար զինվոր և սպա պարգևատրվեցին շքանշաններով: Դիվիզիայի մարտիկները ոչնչացրել են 9 հազար և գերի վերցրել 11 հազար ֆաշիստ:

1945 թ. մայիսի 8-ին ֆաշիստական Գերմանիան կապիտուլյացիայի ենթարկվեց, իսկ մայիսի 9-ը համարվեց հաղթանակի տոն: Ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկությունն ազատ շունչ քաշեց, ցնծություն ապրեց և սրտագին ողջունեց սովետական բանակի հաղթանակը:

Նաիրի Զարյան

Հովհաննես Շիրազ



Սովետական զինված ուժերը խնդիր ստացան ջախջախել նաև հիտլերյան Գերմանիայի դաշնակից իմպերիալիստական Ճապոնիային: 1945 թ. օգոստոսի 9-ին սովետական բանակը, հարձակման անցնելով, ջախջախեց նաև ճապոնական զորքերին: Սեպտեմբերի 2-ին Ճապոնիան ստորագրեց անվերապահ կապիտուլյացիայի ակտը: Այս մարտերում էլ բազմազգ սովետական բանակի շարքերում աչքի ընկան շատ հայորդիներ, որոնց թվում էին գեներալ-մայոր Ա. Ղազարյանը, գեներալ-մայոր Ռ. Մարտիրոսյանը, գնդապետ Բ. Միտոյանը և ուրիշներ:

Հայ ժողովրդի զավակներն աչքի ընկան նաև պարտիզանական պայքարի ճակատներում և իրենց սխրանքներով թշնամու դեմ հերոսական պայքարի բազմաթիվ օրինակներ ցույց տվին: Ս. Հարությունյանի գլխավորած «Պոբեդա» ջոկատը, որը կռվում էր Սովետական Միության կրկնակի հերոս Ս. Կովպակի հրամանատարությամբ Ուկրաինայում գործող պարտիզանական միավորման կազմում, մեծ համբավ էր ձեռք բերել: Հայտնի էր նաև գեներալ Մ. Նաումովի հրամանատարությամբ գործող պարտիզանական միավորման մեջ մտնող Միկոյանի անվան ջոկատը, որի կազմում մարտնչում էին 250 հայեր: Մ. Նաումովն այդ ջոկատի մասին գրել է. «Միկոյանի անվան ջոկատն աչքի է ընկնում ոչ միայն իր հերոսությամբ, այլ նաև նրանով, որ նա միակ ազգային պարտիզանական ջոկատն է, որ կռվում է Ուկրաինայում՝ հանուն Սովետական Հայրենիքի»: Ֆաշիստների խոր թիկունքում, Կիևի, Լվովի, Անդրկարպատների շրջանում այդ ջոկատը, Ա. Հովսեփյանի հրամանատարությամբ, կատարեց պարտիզանական միավորման հրամանատարության մի շարք կարևոր առաջադրանքներ՝ անխնա ջախջախելով ֆաշիստներին: Կրասնոդոնի «Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա կոմերիտական կազմակերպության շարքերում ֆաշիստական զավթիչների դեմ մարտնչում էին խիզախ հայուհի Մ. Փեհլիվանովան և Ժ. Հարությունյանցը:

Հայտնի է նաև Մոգիլյովի մարզում գործող՝ Հ. Զաքարյանի ղեկավարած «Անհնազանդներ» կազմակերպությունը, որը մասնակցում էր թշնամու շտաբները պայթեցնելու, գնացքները խորտակելու, ռազմական պահեստները հրդեհելու և ֆաշիստների ուժերը ոչնչացնելու շատ կարևոր գործողությունների: Կարևոր առաջադրանքները կատարելու պահին էլ Հ. Զաքարյանը հերոսի մահով կոհվեց:

Բազմաթիվ հայորդիներ ֆաշիզմի դեմ մարտընչում էին օկուպացված Եվրոպայի շատ երկրներում: Նրանցից էին Իտալիայի ազգային հերոս Մ. Դաշտոյանը, Գ. Քոլոյանը, Բ. Պետրոսյանը, Ա. Սահակյանը և շատ ուրիշներ:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ հայ ժողովրդի 103 զավակներ արժանացան Սովետական Միության հերոսի կոչման, ավելի քան 70 հա-

կար հոգի պարգևատրվեցին Սովետական Միության մարտական շքանշաններով ու մեդալներով:

Մեծ Հայրենականի ահեղ տարիներին ճակատն ու թիկունքը դարձել էին միասնական ճամբար՝ «Ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով: Տնտեսական ու քաղաքական կյանքն ամբողջովին դրվեց ռազմական ռելսերի վրա:

Սովետական Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները ևս կարճ ժամանակում ամբողջովին վերակառուցվեցին ռազմաճակատի պահանջներին համապատասխան: Ճակատ մեկնած տասնյակ հազարավոր բանվորներին փոխարինելու եկան կանայք, աղջիկները, պատանիներն ու ծերերը, որոնք կարճ ժամանակում յուրացրին ռազմական արտադրանքի թողարկման տեխնոլոգիան: Ծնվեցին սոցիալիստական մրցության նոր ձևեր ու մեթոդներ, լայն ծավալ ստացավ 200—500—1000 %-ով պլան կատարողների հզոր շարժումը:

Կազմակերպվեցին կոմերիտական-երիտասարդական ճակատային բրիգադներ, որոնք ցույց տվին անձնուրաց աշխատանքի փայլուն օրինակներ: Եթե 1939 թ. Հայաստանի արդյունաբերության մեջ կանայք կազմում էին աշխատողների 37 %-ը, ապա 1945 թ.՝ 55 %-ը: Նրանք բոլորն էլ մարտական հերթափոխի կանգնեցին՝ «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» լոզունգով: Աշխատանքային սխրանքներ ցույց տվին հատկապես գունավոր մետալուրգիայի աշխատողները, որոնց արտադրանքը ծառայում էր հայրենիքի պաշտպանության նպատակներին:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի ձեռնարկություններում ռազմաճակատի համար թողարկվեցին ռազմական արտադրանքի բազմաթիվ տեսակներ: Քիմիական, տեքստիլ, սննդի և այլ ճյուղեր շարունակ սպասարկում էին ռազմաճակատին:

«Հաղթանակ» կամուրջը Երևանում





Ակադեմիկոս Հրաչյա Աճառյան



Ակադեմիկոս Մանուկ Աբեղյան



Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի

Պատերազմի տարիներին Հայաստանում կառուցվեց 114 խոշոր ձեռնարկություն, այդ թվում Երևանի էլեկտրամեքենաշինական ու ավտոդողերի գործարանները, Հոկտեմբերյանի պահածոների գործարանը և այլն: Այդ տարիներին սկսվեց Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի, Երևանի կոմպրեսորների, ժամացույցի, Սպիտակի շաքարի և այլ գործարանների շինարարությունը: Պատերազմի տարիներին արդյունաբերության կապիտալ ներդրումները կազմեցին 74 միլիոն ռուբլի, արտադրական ֆոնդերն աճեցին մոտավորապես 31,4 %-ով: Մեծ ուշադրություն էր դարձվում մեքենաշինության ու քիմիական արդյունաբերության զարգացմանը: Մեքենաշինության արտադրանքը 1940—1941 թթ. աճեց 70, քիմիականինը՝ 21, էլեկտրաէներգիայինը՝ 16 %-ով: Աշխատանքը շարունակվում էր գիշեր ու ցերեկ, մարդիկ շաբաթներով տուն չէին գնում, ռազմաճակատային դրությունն իշխում էր ամենուր, մարդկանց նվիրական գործերում, կենցաղում, գիտակցության մեջ: Ալավերդու պղնձահանքերի հանքափոր Ս. Խաչատրյանն իր պլանը կատարում էր 600 %-ով: Նման բարձր ցուցանիշներ տվեցին նաև Ղափանի հանքափորներ Լ. Ստեփանյանն ու Ա. Մարտիրոսյանը: Սովինֆորմբյուրոն նրանց սխրանքները համարեց սոցիալիստական աշխատանքի լավագույն օրինակ, իսկ Լենինականի դեպոյի մեքենավար Ա. Խաչատրյանն անձնուրաց աշխատանքի համար արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման:

Պատերազմի ժամանակ չնայած գյուղում բավականին դժվարություններ էին ստեղծվել, աշխատող ձեռքերի հիմնական մասը ճակատ էր մեկնել, մեքենաները քիչ էին, բայց և այնպես հարվածային ու նվիրված աշխատանքի շնորհիվ, 1940 թ. համեմատությամբ, 1944 թ. ցանքատարածություններն ավելացան 27 հազար հեկտարով, աճեց գյուղատնտեսական արտադրանքը: Պետական պլանային մատակարարումներից դուրս սովետական բանակի ֆոնդ հանձնվեց 84 հազար փութ հացահատիկ, կարտոֆիլ, միս և այլ մթերքներ: 1944 թ. Հայաստանի գյուղատնտեսության 383 աշխատող արժանացավ կառավարական պարգևների: Անասնապահության զարգացման մեջ ձեռք բերած հաջողությունների համար Հայկական ՍՍՀ-ն 1944 թ. նվաճեց Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ կարմիր դրոշը: Կոլտնտեսականների միջոցների հաշվին կազմակերպվեց «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյունը, որի համար հավաքվեց 33 միլիոն ռուբլի, իսկ Արտաշատի աշխատավորների միջոցներով պատրաստվեց «Սովետական Հայաստան» կրահագնացքը: Ստեփանավանի աշխատավորները Լենինգրադի վերականգնման ֆոնդին հատկացրին մոտ մեկ միլիոն ռուբլի: Նման օգնություն ցույց տրվեց նաև օկուպացումից ազատագրված մյուս շրջաններին:

1941 թ. հունիսի 30-ին Երևանում տեղի ունեցավ գիտնականների համաքաղաքային միտինգ: Ականավոր հայագետ Մ. Աբեղյանը, ելույթ ունենալով այդ միտինգում, ասաց. «Թույլ կտա՞նք



Հ. Ք. Բաղրամյան, Ա. Հ. Միկոյան, Ա. Հ. Միկոնյան

արդյոք, որպեսզի ֆաշիզմը, որ սովի, աղքատության ու ավերածության է ենթարկել Արևմտյան Եվրոպայի ժողովուրդներին, ոչնչացնի մեծ դժվարություններով ու զրկանքներով ձեռք բերած մեր ազատությունը, որ նա արգելի մեր ժողովրդին զարգացնելու իր սոցիալիստական կուլտուրան: Ոչ, այդ չի լինի»: Այդ ժողովում ելույթ ունեցող գիտնականները՝ Գ. Ղաֆադարյանը, Մ. Թումանյանը, Ս. Տեր-Ավետիսյանը, Ա. Տեր-Պողոսյանը և ուրիշներ, կոչ արեցին բոլոր միջոցներով սոցիալիստական հայրենիքը պաշտպանել ֆաշիստական բարբարոսներից: Կարմիր բանակի օրը՝ 1942 թ. փետրվարի 23-ին, ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեն անցկացրեց ճակատային մարտիկների կանանց համաքաղաքային ժողով, որտեղ ճառով հանդես եկան ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Ա. Պետրոսյանը, ուսուցչուհի Ա. Մարտիրոսյանը, ինժեներ Ա. Մարջանյանը և ուրիշներ: 3-րդ կարի ֆաբրիկայի բանվորուհի Ա. Օհանջանյանը հպարտությամբ նշեց, որ իր տղաներին ճակատ ուղարկելով՝ մայրական պատգամ է տվել մինչև վերջ ջախջախել ֆաշիզմը, և այժմ նրանք պատվով են կատարում մայրական ցուցումը: Իսկ ես,— շարունակեց նա,— ֆաբրիկայում իմ աշխատանքով օգնում եմ ճակատին, որպեսզի թշնամին շուտ ջախջախվի»: Հուզիչ էր ուսուցչուհի Ա. Մարտիրոսյանի ելույթը: «Իմ հայրը,— ասաց նա,— գնդապետ է, ամուսինս՝ լեյտենանտ, իսկ 18-ամյա եղբայրս՝ կամավոր: Նրանք բոլորը ճակատում ոչնչացնում են ֆաշիստական ճիվաղներին. Սովինֆորմբյուրոյի հաղորդումից ես իմացա հորս փառահեղ գործողությունների մասին: Նրա հրամանատարությամբ գործող զորամասը հերոսաբար է մարտնչում Տուլայի մոտ: Ջախջախելով ֆաշիստական զավթիչներին, նա այժմ հետապնդում է նրանց դեպի արևմուտք»:

Մեծ խանդավառությամբ անցավ 1942 թ. օգոստոսի 23-ին Թբիլիսիում կայացած անդրկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչների հակաֆաշիստական միտինգը, որտեղ ելույթ ունեցան Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահ Գ. Ստուրուան, պոետ Սամեդ Վուրղունը, ակադեմիկոս Հ. Օրբելին և շատ ուրիշներ: Միտինգի ընդունած կոչն ազդարարում էր. «Չկա այնպիսի ուժ, որը կարողանա անդրկովկասյան ժողովուրդներին իրարից բաժանել, անջատել նրանց ռուս ժողովրդից... մեր ավագ եղբորից, որ տվեց մեզ իսկական ազատություն և երջանիկ կյանք»: Կոչը վստահեցնում էր, որ «դժվարությունները չեն կարող մեզ ծնկի բերել, քանի որ Անդրկովկասի ժողովուրդները հաղթանակելու երկաթե կամքով են համակված»: «Անդրկովկասյան ժողովուրդների երդումը» վերնագրով առաջնորդող հոդվածում «Պրավդան» նշում էր, որ հիտլերականների ստոր գործարքը՝ թշնամանք սերմանել սովետական ժողովուրդների միջև, խայտառակ պարտություն կրեց: Հայրենական մեծ պատերազմի ահեղ բոցերում էլ ավելի ամրապնդվեցին ժողովուրդների բարեկամությունը, միասնական ընտանիքի վեհ գաղափարը:

Հայրենական մեծ պատերազմի ծանր օրերին սովետական ժողովրդի արդար գործին պաշտպան կանգնեցին համայն աշխարհի առաջադեմ մարդկությունը, սփյուռքահայ մասսաները: Արտասահմանյան հայությանը Սովետական Հայաստանի ներկայացուցիչների հղած նամակը պայքարի կոչ էր ֆաշիզմի դեմ: Այն ջերմ ընդունելություն գտավ բոլոր հայկական գաղութներում: Եվ սփյուռքահայերը թե՛ գաղափարական պայքարով, թե՛ անմիջական մասնակցությամբ ու նյութական օգնությամբ արեցին ամեն ինչ ֆաշիզմի ջախջախումն արագացնելու համար: Բազմաթիվ երկրներում գործող հակաֆաշիստական ճակատի ակտիվ մասնակիցներ էին նաև հայերը, իսկ Ֆրանսիայի դիմադրական շարժման մեջ շատ մեծ դեր խաղաց «Ֆրանսահայ ազգային ճակատը»: Այն իր լուման մուծեց ֆաշիզմի ջախջախման գործում: Ֆաշիստներն ամենավայրագ կերպով տանջամահ արին Մ. Մանուշյանին և բանաստեղծուհի Լ. Ասլանյանին: Մ. Մանուշյանը հետմահու արժանացավ Ֆրանսիայի ազգային հերոսի բարձր կոչմանը:

Միսաք Մանուշյան

Հայրենական պատերազմում զոհվածների պատվին կառուցված հուշարձանը Ախուրյանի շրջանի Ազատան գյուղում (արժանացել է ՀՍՍՀ պետական մրցանակի)

Հունաստանում աչքի ընկավ պարտիզան Ա. Ղուկասյանը, իսկ Բուլղարիայում՝ 18-ամյա պարտիզանուհի, հերոսուհի «Սաշկան»՝ Հերմինե Ռակկրատլյանը: Նա մորն ուղարկած նամակում գրել էր. «Սիրելի մայրիկ, գիտեմ, որ քո Հերմինեն քեզ մեծ վիշտ է պատճառում: Ներիր ինձ, որ քեզ, հորս և հարազատներիս թողել եմ, այլ կերպ չէի կարող վարվել: Ինչ էլ պատահի ինձ հետ, չվշտանաս: Դու պետք է հպարտանաս, որ քո Հերմինեն իր կյանքը նվիրում է ժողովրդի ազատությանն ու երջանկությանը: Համոզված եմ, որ մեր տանջանքները իզուր չեն անցնի: Գիտեմ, որ կարմիր բանակը կգա և մեզ բոլորիս կփրկի: Եվ Բուլղարիայի վրա կցոլա ազատության արևը: Ինչ ուժեղ ցանկությամբ եմ ուզում տեսնել այդ գեղեցիկ արևածագը»: Բուլղարական ժողովուրդը փառքով է պսակել հերոսուհու հիշատակը: «Նրա անունը, որպես տանջամահ հերոսուհու, ծաղկեպսակներով է հավերժացված,— գրել է ականավոր հեղափոխական գործիչ Մ. Պիչվարովան,— մենք մեր հարգանքի տուրքն ենք տալիս նրա անմահ հիշատակին, և թող հավերժ ապրի այն գաղափարը, որի համար նա զոհվեց»:

Սփյուռքահայերի հավաքած միջոցներով ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը 1943 թ. մտավ I Մերձբալթյան ռազմաճակատի

Երևանի հյուսիսային դարպասը

119-րդ առանձին տանկային գնդի կազմի մեջ, իսկ իրանահայերի ջանքերով ստեղծվեց «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունը: Իրանահայերի թանկարժեք նվերը Հ. Բաղրամյանին՝ ոսկեզօծ սուրը, պահվում է Սովետական Հայաստանի պատմության թանգարանում՝ որպես հուշ մեծ հաղթանակների և սփյուռքահայերի նվիրական ավանդի: Սփյուռքահայերի օգնության մասին ճակատի մարտիկներին ուղղված հայ ժողովրդի նամակում նշված է. «Սովետական երկրի հայերի հետ միասին նույն հոգսերով ու ձգտումներով են ապրում ամբողջ աշխարհի սփյուռքի հայ գաղթօջախները... Ամենուրեք նրանք կազմակերպում են Սովետական Միությանն օգնող կոմիտեներ, առաջադիմական լիգաներ և ուժերի ներածին չափ ցույց տալիս իրենց բարոյական և նյութական օգնությունը մեր հայրենիքի պաշտպանության գործին»: Ամերիկահայերը նույնպես ապրում էին ֆաշիզմի ջախջախման հոգսերով. «Մեր սրտերն ու մտքերը բևեռված են Ստալինգրադին,— գրում էին նրանք,— որտեղ պաշտպանվում է ոչ միայն Սովետական Միության ազատությունն ու անկախությունը, այլև բոլոր դաշնակից ազգերի ազատությունը... Հպարտանում ենք Հայաստանի ուստրերի և դուստրերի հերոսական պայքարով... Մենք ցույց կտանք հնարավոր ամեն տեսակի օգնություն: Անհողդողդ է մեր հավատը ատելի հիտլերիզմի դեմ վերջնական հաղթանակի նկատմամբ»:

Պատերազմի ահեղ տարիներին Սովետական Հայաստանի և սփյուռքահայության կապերն ավելի ամրացան: Ամբողջ հայ ժողովուրդն ինքնազոհաբար պայքարեց ֆաշիզմի ջախջախման ու երջանիկ կյանքի համար: Սովետական Հայաստանի 25-ամյա հոբելյանի առթիվ շնորհավորական ուղերձում ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ՍՍՀՄ Ժողկոմխորհը գրել են. «Հայրենական պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ: Հայ մարտիկները Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ ինքնազոհաբար պաշտպանեցին մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Պատերազմը վերջացավ մեծ զոհերի գնով: Այն սովետական ժողովրդից խլեց 20 միլիոն կյանք, շատ ընտանիքներ որբացան, շատերն էլ երիտասարդ կյանքը տվին՝ չտեսնելով իրենց երազանքների իրականացումը: Նրանք զոհվեցին գիտակցված մահով և անմահացան հանուն հայրենիքի ազատության, հանուն հարազատ ժողովրդի երջանիկ կյանքի: Հսկայական չափերի հասան նյութական կորուստները:

Վերադարձան հաղթողները՝ հայրենիքի փառքը բազմապատկած, համայն մարդկությանը սև ռեակցիայից փրկած, ժողովուրդներին խաղաղություն պարգևած սովետական բանակի հերոս մարտիկները:

Եկան նրանք, ռազմաճակատում հաղթողները և միացան թիկունքի հաղթողներին, և սկսվեց երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման, պատերազմի ավերիչ հետևանքները վերացնելու հերոսական աշխատանքը:

Առաջին հերթին լայն օգնություն կազմակերպվեց ֆաշիստական օկուպացումից ազատագրված հանրապետություններին, մարզերին, քաղաքներին և արդյունաբերական ձեռնարկություններին, սովխոզներին ու կոլտնտեսություններին: Դրանում նորից ու նորից դրսևորվեց սովետական ժողովուրդների լենինյան անխախտ բարեկամության ու ինտերնացիոնալ միասնության հզոր ուժը:

Հայաստանի աշխատավորները Ստալինգրադի վերականգնման ֆոնդին հատկացրին հսկայական

Երևան. «Մայր Հայաստան» կոթողը

միջոցներ. միայն Ախուրյանի և Ստեփանավանի շրջանների աշխատավորները Ստալինգրադ ուղարկեցին մի քանի միլիոն ռուբլու շինանյութ, գույք, անասուններ, կենսամթերք և այլն: Ստալինգրադի մարզկոմը երախտագիտության բարձր կգացումով նշեց, որ պատերազմի ահեղ օրերին իրենց քաղաքը «պաշտպանում էր ամբողջ երկիրը: Այժմ ամբողջ երկիրն է օգնում նրա վերականգնմանը: Մեծ գործ են կատարում նաև Հայաստանի աշխատավորները»:

Հայաստանի աշխատավորները ամենաակտիվ մասնակցություն ունեցան Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Ռոստովի, Ուկրաինայի և Բելոռուսիայի շատ քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնմանը: Հայաստանն օգնում էր ոչ միայն շինանյութով. բազմաթիվ շինարարական բրիգադներ, տեխնիկներ, ինժեներներ և այլ մասնագետներ ուղարկվեցին օր առաջ վերականգնելու ավերված շրջանները: 1945 թ. մայիսի 29-ին ՀԿԿ Կենտկոմը հատուկ որոշում ընդունեց՝ բոլոր միջոցներով օգնել Դնեպրոգէսի վերականգնմանը և այն ապահովել տուֆով: Պատերազմից տուժած շրջաններն ուղարկվեցին նաև մեծ քանակությամբ դպրոցական պիտույքներ, լաբորատոր սարքավորումներ, ուսուցչական կադրեր:

Պատերազմում տարած հաղթանակը, ֆաշիզմի ջախջախումն է՛լ ավելի բարձրացրին սովետների երկրի փառքն ու հեղինակությունը համայն աշխարհի աշխատավորության աչքում: Փոխվեց աշխարհի սոցիալ-քաղաքական քարտեզը, ստեղծվեց սոցիալիզմի հզոր սիստեմը, հզորացավ հեղափոխական պրոցեսը, մեծ թափ ստացան ազգային-ազատագրական շարժումները: ՍՍՀՄ-ը դարձավ ամբողջ աշխարհի ազատատենչ մարդկանց պայքարի ու հաղթանակի կարևոր հենակետը, խաղաղության հզոր դրոշակակիրը: Սփյուռքահայությունն էլ իր հույսերը կապեց մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ: Պատերազմի ավարտից հետո ավելի քան 30 երկրներում ապրող հայ գաղթօջախներից տասնյակ հազար հայեր ջերմ ցանկություն հայտնեցին վերադառնալ հայրենիք և մասնակցել նրա սոցիալ-տնտեսական առաջընթացին:

ՍՍՀՄ կառավարությունը, ընդառաջելով սփյուռքահայ մասսաների ցանկությանը, ինչպես նաև ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ կառավարության միջնորդությանը, 1945 թ. նոյեմբերին որոշում ընդունեց սփյուռքահայերի ներգաղթի վերաբերյալ: Կառավարությունը հսկայական միջոցներ տրամադրեց հայրենադարձներին նյութական օգնություն ցույց տալու, նրանց համար բարենպաստ բնակարանային և կենցաղային պայմաններ ստեղծելու, ըստ մասնագիտության աշխատանքով ապահովելու համար:

1946 թ. հուլիս—հոկտեմբեր ամիսներին հայրենադարձների առաջին խմբերը (թվով 5024 մարդ) Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Բուլղարիայից և Ռումինիայից հասան հայրենիք: Քարավանների դարձը շարունակվեց և 15 տարբեր երկրներից Սովետական Հայաստան վերադարձավ մոտ 100 հազար հայ: Ամենուր հայրենադարձներին ընդունում էին մեծ խանդավառությամբ: Շուտով նրանք, ընդգրկվելով սոցիալիստական աշխատանքի ոլորտներում, դարձան նոր կյանքի կառուցման ակտիվ մասնակիցներ:

ՍՍՀՄ Գերագույն սովետն իր երկրորդ գումարման առաջին նստաշրջանում, 1946 թ. մարտին, հաստատեց երկրի ժողովրդական տնտեսության կարգացման IV հնգամյա պլանը (1946—1950): Առաջին հերթին նախատեսվում էր արագ տեմպերով կարգացնել ծանր արդյունաբերությունը, երկաթուղային տրանսպորտը, գյուղատնտեսությունը, լայն սպառման ապրանքների արտադրությունը: Կարևոր տեղ էր տրված ժողովրդի նյութական կենսամակարդակի բարձրացմանը: ՀՍՍՀ Գերագույն սովետը 1946 թ. հուլիսյան նստաշրջանում օրենք ընդունեց Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության կարգացման IV հնգամյա պլանի մասին: Սկսվեց ստեղծագործ աշխատանքի մի նոր շրջան: Բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ խաղաղ պայմաններին համապատասխան ամբողջովին վերակառուցվեցին և տեխնիկապես վերազինվեցին: IV հնգամյա պլանով հանրապետության ժողովրդական տնտեսության կարգացմանը հատկացվել էր 1.420 միլիոն ռուբլի: Այդ գումարի կգալի մասը ծախսվեց նոր գործարանների, ֆաբրիկաների, էլեկտրակայանների, երկաթուղային և խճուղային ճանապարհների շինարարության վրա: Շարք մտան շինարարական նոր օբյեկտներ, կաբելի, շաքարի գործարանները և այլն: Կադրերի վերապատրաստման ու համալրման հարցը սուր բնույթ ստացավ և նոր տեխնիկայով պինված կադրերի պատրաստումը լայն ծավալ ընդունեց:

IV հնգամյակում կապիտալ շինարարության ընդհանուր ծավալը գերակատարվեց 34 %-ով: Եթե ՍՍՀՄ արդյունաբերության համախառն արտադրանքը նախատեսված 48-ի փոխարեն աճեց 72 %-ով, ապա Սովետական Հայաստանինը՝ 110-ի փոխարեն աճեց 149 %-ով: Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրանքը, 1940 թ. համեմատությամբ, հնգամյակի վերջում աճեց 2,5 անգամ: Հայաստանը կարգացման տեմպերով Էստո-



Վ. Ի. Լենինի հուշարձանը Երևանում

նիայից և Լատվիայից հետո ՍՍՀՄ-ում գրավեց երրորդ տեղը:

Քիմիական արդյունաբերությունը կգալի չափով գերազանցեց 1939 թ. մակարդակը, բարձրացավ արտադրանքի որակը: Մեքենաշինության արտադրանքը 1947 թ. նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ կրկնապատկվեց: Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանը արդեն 1948 թ. կատարել էր հնգամյա պլանը: 1950 թ. հանրապետությունում սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված էր 1200 բրիգադ: Մեծ հաջողությունների հասան երկաթուղայինները: 1948 թ. լեռնային շատ բարդ պայմաններում սկսվեց երկաթուղու էլեկտրիֆիկացումը:

Լենինականի երկաթուղային դեպոն վարպետ Վ. Վասեցյանի գլխավորությամբ համամիութենական սոցիալիստական մրցման մեջ գրավեց առաջին տեղը:

ՀՍՍՀ ժողովրդական տնտեսությունը նոր թափով կարգացավ V հնգամյակում (1951—1955), որի ընթացքում կապիտալ ներդրումների գումարը հասավ 2.721 միլիոն ռուբլու: Այդ հնգամյակի տարիներին արդյունաբերական արտադրանքի միջին աճը ՍՍՀՄ-ում նախատեսվում էր 70, իսկ ՀՍՍՀ-ում՝ 100 %:

1956 թ. հունվարին կայացած ՀԿԿ XVIII համագումարը քննարկեց և հանրագումարի բերեց V հնգամյակի արդյունքները: Համագումարը նշեց, որ հանրապետությունում առավել արագ է կարգացել գունավոր մետալուրգիան, մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը: Այսպես, օրինակ, 1950 թ. համեմատությամբ, 1955 թ. գունավոր մետալուրգիայի արտադրանքն ավելացել էր 3,3 անգամ, մեքենաշինությանը՝ 2,6, կոմպրեսորների արտադրությունը՝ 4,2 անգամ և այլն:

Կարևոր նշանակություն էր տրվում էներգետիկայի կարգացմանը: 1949 թ. շարք մտավ Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանը, որը երկրում իր տեսակի մեջ առաջինն էր: Լայն թափ ստացավ Գյումուշի հիդրոէլեկտրակայանի կառուցումը, որը գործարկվեց 1953 թ.: Եզակի կառույց էր ժայռի մեջ փորված Արզնու ստորերկրյա էլեկտրակայանը, որը շարք մտավ 1956 թ., իսկ 1959 թ.՝ Աթարբեկյանգէսը: Այդ կառույցների շնորհիվ Հայաստանում 1960 թ. էլեկտրաէներգիայի արտադրությունը, 1945 թ. համեմատությամբ, ավելացավ 6 անգամ: Մինչև 1960 թ. Սովետական Հայաստանում կառուցվեցին 120 մեծ և փոքր էլեկտրակայաններ, որոնք արտադրում էին 500 անգամ ավելի էներգիա, քան 1913 թ.: Եթե 1940 թ. արտադրվում էր 395 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, ապա 1959 թ.՝ 2.711 միլիոն: Դրա շնորհիվ ՀՍՍՀ-ն մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ գերազանցեց այնպիսի կարգացած կապիտալիստական երկրների, ինչպիսիք են Ֆրանսիան, Իտալիան, Հոլանդիան, Ճապոնիան: Հայաստանում 15 անգամ շատ էլեկտրաէներգիա էր արտադրվում, քան Թուրքիայում, 30 անգամ շատ, քան Իրանում: 1957 թ. Գյումուշ—Քաջարան բարձր լարման գծի ավարտումով Զանգեզուրի հանքերն ու արդյունաբերական ձեռնարկությունները լիովին ապահովվեցին էլեկտրաէներգիայով:

Ժողովրդական տնտեսության կարգացումը գի-

Երևան. Լենինի անվան հրապարակը



Երևանը գիշերով

Սասունցի Դավթի արձանը

տական մտքի առաջընթացի լայն հեռանկարներ բացեց: 1956 թ. Երևանում հիմք դրվեց մաթեմատիկական մեքենաշինության ինստիտուտին: Դրան հաջորդեցին Կիրովականում արտադրության ավտոմատացման պրոցեսների ինստիտուտի, Լենինականում «Պրոմպրիբոր» կոնստրուկտորական բյուրոյի և այլ կարևոր գիտահետազոտական հիմնարկների ստեղծումը: Այդ գիտահետազոտական հիմնարկներն է՛լ ավելի նպաստեցին հանրապետության տնտեսական պոտենցիալի հզորացմանը: Զգալի չափով աճեց էլեկտրատեխնիկական, սարքաշինական և այլ արտադրանքների առաքումը մեր երկրի տարբեր հանրապետություններ: Հայաստանի արդյունաբերության արտադրանքն արտահանվում էր նաև 47 արտասահմանյան երկրներ:

Այդ տարիներին արագորեն աճեց հանրապետության բանվոր դասակարգը: Եթե 1913 թ. Հայաստանում կար ընդամենը 6 հազար արդյունաբերական բանվոր, ապա 1960 թ.՝ 150 հազար, որից 40 հազարը շինարարներ էին:

Ժողովրդական տնտեսության արագ աճի հետևանքով առաջացան նոր քաղաքներ. քաղաքնե-

Երևան. ՀԿԿ Կենտկոմի շենքը

Երևան. Վ. Ի. Լենինի հրապարակը և թանգարանների շենքը

րի թիվը 1959 թ. հասավ 14-ի, իսկ քաղաքատիպ ավաններինը՝ 22-ի: Մեծ աճ տվեց Երևանի, Լենինականի, Կիրովականի քաղաքային բնակչությունը: Եթե քաղաքային բնակչությունը 1913 թ. կազմում էր Հայաստանի բնակչության 10,4 %-ը, ապա 1959 թ.՝ 50 %-ը:

ՀՍՍՀ՝ արդյունաբերական ձեռնարկությունները սկսեցին արտադրել նաև մետաղահատ հաստոցներ, գեներատորներ, տրանսֆորմատորներ, կոմպրեսորներ: Հանրապետության ինդուստրիալ զարգացման արագ տեմպերն ամբողջովին փոխեցին նրա դեմքը: Արդեն 1960 թ. արդյունաբերական ձեռնարկությունների թիվը հասնում էր 500-ի: 1913 թ. համեմատությամբ 1960 թ. հանրապետությունում արդյունաբերության համախառն արտադրանքն աճեց 70 անգամ: Արդեն 1960 թ. Հայաստանն արտադրում էր 2,6 անգամ ավելի շատ մետաղահատ հաստոցներ, քան ամբողջ Ռուսաստանը 1913 թվականին:

Պատերազմի տարիներին կգալի չափով տուժել էր նաև գյուղատնտեսությունը: «Հետպատերազմյան

ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ ակադեմիկոս
Վիկտոր Համբարձումյան

Երևան. ԳԱ նախագահության շենքը Մարշալ Բաղրամյանի անվան պողոտայի վրա

Երևան. Ստ. Շահումյանի անվան քաղլուստունը

Երևանի պետական բժշկական ինստիտուտը

Բյուրականի աստղադիտարանը

Երևան. 26 կոմիսարների անվան փողոցը և պետկրկեսի շենքը





Երևան. Եղեռնի հուշարձանը

Երևան. «Դվին» հյուրանոցը

Երևան. 26 կոմիսարների այգում



Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի արձանը Մատենադարանի մուտքի մոտ



Երևան. «Անի» հյուրանոցը

Երևան. մետրոպոլիտենի «Լենինի հրապարակ» կայարանը

ժամանակաշրջանում գյուղատնտեսության զարգացման միջոցառումների մասին» ՀամԿ (բ) Կ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի որոշումները զգալի չափով խթանեցին գյուղատնտեսության զարգացումը: Կարգավորվեց ու ընդարձակվեց ոռոգման ցանցը, կառուցվեցին Ստորին Հրազդանի, Կոտայքի, Արզնի-Շամիրամի, Աշտարակի, Թալինի, Էջմիածնի, Արթիկի ջրանցքները, Կոտայքի ջրհան կայանը, Ախուրյանի և Արփայի ջրամբարները, որոնց շնորհիվ ոռոգելի դարձավ 40 հազար հեկտար հողատարածություն:

Գյուղատնտեսության բնագավառում լուրջ ուշադրություն էր դարձվում մասնագետ կադրերի պատրաստմանը, աշխատանքի մեքենայացմանը: Զգալի չափով աճեց տրակտորների, կոմբայնների և գյուղատնտեսական այլ մեքենաների քանակը: 1950 թ. տրակտորների թիվը հասավ 2055-ի: Հայաստանում հատկապես մեծ աշխատանք կատարվեց գյուղի էլեկտրիֆիկացման բնագավառում: Դրան նյութական միջոցներով ու մասնագետներով մեծ օգնություն էին ցույց տալիս քաղաքի արդյունաբերական շեֆական ձեռնարկությունները: Գյուղի էլեկտրիֆիկացումը ոչ միայն նպաստեց գյուղատնտեսական արտադրության զարգացմանը, այլև կոլտնտեսականների կուլտուրայի բարձրացմանը և կենցաղի վերափոխմանը: Այդ գործում կոմերիտական կազմակերպությունները ևս արդյունավետ աշխատանք ծավալեցին, որի համար Ալավերդու և Մարտունու շրջանների կոմերիտական կազմակերպություններն արժանացան ՀԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրին: Սեղմ ժամկետում կառուցվեցին Արե-



նիի, Ագարակի, Ակների, Բասարգեչարի, Ջերմուկի և այլ վայրերի հիդրոէլեկտրակայանները: Եթե մինչև 1949 թ. էլեկտրիֆիկացված էր բոլոր կոլտնտեսությունների 39,2 %-ը, ապա 1950 թ.՝ 67,4 %-ը:

1947—1951 թթ. ոռոգվող հողերի ծավալն ավելացավ 15 հազար հեկտարով, և յուրացվեցին 8 հազար հեկտար աղակալած հողեր:

Գյուղատնտեսության զարգացման բնագավառում ձեռք բերած մեծ հաջողությունների համար 1947—1950 թթ. հանրապետության ավելի քան 100 առաջավոր կոլտնտեսականներ արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, իսկ հազարավոր աշխատավորներ պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով:

V և VI հնգամյակների տարիներին Հայաստանում կառուցվեցին և շարք մտան ավելի քան 110

Երևան. Լենինի անվան պողոտան

Երևան. մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանը

Երևան. մետրոպոլիտենի «Գործարանային» կայարանը

Երևան. Նորքի 7-րդ կանգվածի ընդհանուր տեսքը

Երևան. «Հաղթանակ» կամուրջը և «Արարատ» գինու կոմբինատը

Արարատի շրջան. խաղողի այգիների մշակումը



Հայկական խաղող

Երևանի հեռուստատեսային աշտարակը

Կիրովական. լուսատեխնիկական գործարանի արտադրատեսակներից



Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը

Երևան. Երիտասարդական պալատը

Հրատարակչությունների և պոլիգրաֆկոմբինատի շենքը Տերյան փողոցում



Երևանի №1 ծածկած շուկայում

Հայկական կոնյակներ





Լենինական. Մարտական և աշխատանքային փառքի հուշարձանը

Լենինական. «Շիրակ» հյուրանոցը

Լենինական. Աստղի հրապարակը գիշերով

Լենինական. հարսանիք գյումրեցու ավանդությամբ

Լենինական. հատված քաղաքի համայնապատկերից

«Մասիս» կոշիկի ֆաբրիկայի արտադրանքի նմուշներ

Հրազդան



Աբովյան քաղաքի մշա-
կույթի պալատը

Արարատի շրջանի մշա-
կույթի պալատը

Կիրովական. ընդհանուր տեսարանը

Կիրովական. Ս. Մ. Կիրովի հուշարձանը





Հոկտեմբերյանի պահածոների գործարանում

Գեղարվեստական ժամացույցների գործարանի հավաքման արտադրամասում

Երևանի էլեկտրաապարատների գործարանի հավաքման արտադրամասում

Աբովյանի գարեջրի գործարանի եփման արտադրամասում

Կիրովական. «Ավտոմատիկա» գործարանի հավաքման արտադրամասը

Վագոնները դուրս են գալիս Զոդի հանքից



Ծնվում է ձեռագործ գորգը



Երևան. մաթեմատիկական հաշվիչ մեքենաների ինստիտուտի փորձնական գործարանում

Հոկտեմբերյանի պահածոների գործարանի վերամշակման արտադրամասում

«Մասիս» կոշիկի միավորման արտադրամասում

Լենինականի «Շիրակ» օդանավակայանը

Իջևան. «Բենտոնիտ» գործարանը



Կիրովականի հանրախանութի շենքը

Երևան. մսի-կաթի ֆիրմային խանութում



Իջևանի գորգագործական կոմբինատում

Կիրովական. լուսատեխնիկական գործարանի հավաքման արտադրամասում

Հոկտեմբերյանի կոնյակի գործարանը

Կիրովական. Մետաքսյա մանրաթելի գործարանում



Արփա գետի ջրերը լցվում են Սևանա լիճը

Հայկական ատոմակայանը



Երևան. Սայաթ Նովայի անվան պողոտան

«Զվարթնոց» օդանավակայանը

Սոցիալիստական աշխատանքի հերոս Սերո Խանզադյան
Սոցիալիստական աշխատանքի հերոս Սուրեն Պետրոսյան
Սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Նիկողոսյան
Սոցիալիստական աշխատանքի հերոս Նազանի Գալստյան



Ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյան

մեծ և փոքր ջրանցքներ, զգալի չափով ավելացավ ոռոգվող հողերի տարածությունը, բերքատվությունը բարձրացավ 2 անգամ: Հատուկ ուշադրություն դարձվեց տեխնիկական արժեքավոր կուլտուրաների մշակությանը: Գյուղատնտեսության մեքենայացումը նոր մակարդակի հասավ: 1940 թ. համեմատությամբ 1957 թ. տրակտորների քանակն ավելացավ 2,7 անգամ, կոմբայններինը՝ 2,5: Կոլտնտեսությունների 90 %-ն էլեկտրիֆիկացված էր:

Գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար Հայկական ՍՍՀ-ն 1958 թ. պարգևատրվեց Լենինի շքանշանով:

Զգալի չափով բարելավվեցին բնակչության նյութական բարեկեցությունը և բժշկասանիտարական սպասարկումը: Եթե 1913 թ. Հայաստանում կար ընդամենը 6 խղճուկ և անբարեկարգ հիվանդանոց և միայն 73 բժիշկ, ապա 1960 թ. բազմաթիվ բարեկարգ և ժամանակակից սարքավորումներով հագեցված հիվանդանոցներում աշխատում էր ավելի քան 4500 բժիշկ: 10 հազար բնակչին հասնող բժիշկների քանակով Հայաստանը 2 անգամ գերազանցում էր ԱՄՆ-ին, 2,3 անգամ՝ Անգլիային, 9 անգամ՝ Թուրքիային, 14 անգամ՝ Իրանին: Հանրապետությունում գործում էին ավելի քան 20 սանատորիա և հանգստյան տուն:

Հայաստանը դարձել էր համատարած գրագիտության, բարձր կուլտուրայի և զարգացած գիտության երկիր: Հրատարակվում էին մոտ 100 թեր-

Երևանի պետհամալսարանի շենքը (կենտրոնական մուտք)

Երևանի պետական պոլիտեխնիկական ինստիտուտը



Կիրովականի, քիմկոմբինատը



Երևանի ժամացույցի գործարանի արտադրամասերից մեկը

«Ալմաստ» գործարանի արտադրամասերից մեկը





Արթիկ քաղաքի համայնապատկերը

Հոկտեմբերյանի շրջան. Նոր հողերի յուրացումը



Տեսարան Կամո քաղաքից

Դիլիջան. ՀԿԿ Դիլիջանի քաղկոմի շենքը

Տեսարան Գորիս քաղաքից

Գորիսի շրջան. Նոր Խնձորեսկը







Ղափան քաղաքի համայ-
նապատկերը
Քաջարան. ընդհանուր տե-
սարան
Մեղրի

թեր ու ամսագրեր. գրքերի տարեկան տպաքանակը հասավ 7 միլիոնի:

Ժողովրդական լուսավորության գործը ևս մեծ առաջընթաց կատարեց: 1960 թ. նրան հատկացված միջոցները 4 անգամ գերազանցում էին 1940 թ. մակարդակը: 1946—1959 թթ. շարք մտավ 130 նորակառույց դպրոցական շենք: Դպրոցների թիվն այդ ժամանակ հասավ 1494-ի, սովորողներինը՝ 337 հազարի: Հանրապետության բուհերը հազարավոր մանկավարժական կադրեր տվեցին: Սոցիալիստական շինարարության համար բանիմաց և ունակ կադրեր պատրաստելու գործում կարևոր դեր խաղաց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ կառավարության 1958 թ. որոշումը՝ «Կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության համակարգի հետագա զարգացման մասին»: 1959 թ. ՀՍՍՀ Գերագույն սովետը հատուկ օրենք ընդունեց կրթությունը կյանքի հետ կապելու գործը հանրապետությունում է՛լ ավելի զարգացնելու մասին:

ՀՍՍՀ-ում 1950 թ. իրագործվեց ընդհանուր պարտադիր 7-ամյա կրթությունը, և քաղաքներում սկսվեց ընդհանուր միջնակարգ կրթության իրագործումը: Զգալի չափով ընդարձակվեց միջնակարգ մասնագիտական հաստատությունների ցանցը: 1960 թ. 10 բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թիվը հասնում էր 20 հազարի: Բուհերն ու տեխնիկումները 1946—1960 թթ. արտադրությանը տվեցին 35,5 հազար մասնագետ: Կարևոր նվաճումներ ձեռք բերեցին Հայաստանի գիտական հաստատությունները:

Ջերմուկի կամուրջը



Եղեգնաձոր. Մալիշկա գյուղի համայնապատկերը



Տեսարան Ապարան քաղաքից

Նուռնուսի կամուրջը

Իջևանի համայնապատկերը

Ապարանի ջրամբարը



Իջևան. Ապատամուտի մշակույթի պալատը

Դիլիջան. «Լեռնային Հայաստան» առողջարանը

1946 թ. հիմնադրված Բյուրականի աստղադիտարանը դարձավ այդ բնագավառում ՍՍՀՄ խոշոր գիտական կենտրոններից մեկը: 1946 և 1950 թթ. ակադեմիկոս Վ. Համբարձումյանն աստղագիտության բնագավառում կատարած նոր հայտնագործությունների համար արժանացավ պետական մրցանակի:Ականավոր հայագետ Ս. Մալխասյանը «Հայերեն բացատրական բառարանի» համար առաջին կարգի մրցանակի արժանացավ: Տաղանդավոր ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյան եղբայրներն Արագածում տիեզերական ճառագայթների ուսումնասիրման լայն աշխատանքներ ծավալեցին և ձեռք բերած կարևոր արդյունքների համար պետական մրցանակի արժանացան:

Ակիպբեկով ավանը





Պարույր Սևակ

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան 1953 թ., իր տասնամյա հոբելյանին, աճել և դարձել էր բազմաճյուղ խոշոր գիտական կենտրոն, որի կազմում կար 1300 գիտական աշխատող, իսկ հանրապետությունում 1959 թ. գիտահետազոտական հիմնարկների թիվը հասնում էր 70-ի, որոնցում մշակվում էին տեսական և գործնական նշանակություն ունեցող շատ պրոբլեմներ:

Բուռն վարգացում ապրեցին Սովետական Հայաստանի գրականությունն ու արվեստը: 1946 թ. Հայաստանի գրողների երկրորդ, իսկ 1954 թ. երրորդ համագումարները կգալի չափով խթանեցին Սովետական Հայաստանի գրական մտքի առաջընթացը. վերագնահատվեցին անցյալի գրական արժեքները, հրատարակվեցին Րաֆֆու, Ե. Չարենցի Ա. Բակունցի և շատ ուրիշ գրողների երկերը:

1956 թ. Մոսկվայում կայացած հայ արվեստի տասնօրյակը հանրագումարի բերեց Սովետական Հայաստանի թատրոնի, կինոյի, գեղանկարչության, կերպարվեստի և այլ բնագավառների նվաճումները: Հանրահռչակ նկարիչ Մ. Սարյանի ու կոմպոզիտոր Ա. Խաչատրյանի և արվեստի շատ ուրիշ գործիչների անունները հայտնի դարձան ամբողջ աշխարհում:



Սիսիան. Որոտան գետը

Թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած հաջողությունները հետևանք էին կուսակցության քաղաքական մասսայական աշխատանքի, սոցիալիստական մրցության տարբեր ձևերի ու եղանակների լայն տարածման: Աշխատանքային նոր բարձունքների հասնելու համար սոցիալիստական մրցություն ծավալվեց նաև Անդրկովկասի հանրապետությունների քաղաքների, արդյունաբերական ձեռնարկությունների և կոլտնտեսությունների միջև: Լենինականի, Կիրովաբադի և Քութայիսի միջև ծավալված սոցիալիստական մրցությունը նոր խթանող ուժ տվեց այդ քաղաքների տնտեսական ու կուլտուրական առաջընթացին, բարեկամական կապերի ամրապնդմանը: Բարեկամության փայլուն օրինակ տվեց Վրացական ՍՍՀ Մախարաձեի և ՀՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի կոլտնտեսականների ավանդական մրցությունը, որը սկզբնավորվել էր դեռ նախապատերազմյան տարիներին:

Կիրովական. «Հայկական Արտեկ» ճամբարում

Ծաղկաձոր. պիոներական ճամբարում

Երևանի մանկական երկաթուղում

Երևան. ՀՍՍՀ առողջապահության մինիստրության մանկական կլինիկական հիվանդանոցում

Երևանի № 12 պոլիկլինիկայի մանկական բաժնում

«Բարեկամության ձեռքեր» հուշարձանը (Իտալիայի Կարարա քաղաքի աշխատավորների նվերը)

Գաղափարական աշխատանքի ուժեղացման գործում վգալի դեր կատարեց նաև 1947 թ. հիմնադրված ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղը, որը լուրջ աշխատանք ծավալեց ՀԿԿ պատմության և Հայաստանի հեղափոխական շարժումների տեսական պրոբլեմների մշակման, ինչպես նաև մարքսիզմ-լենինիզմի դասականների երկերի հայերեն թարգմանության ու պրոպագանդման գործում: Գաղափարական կյանքում կարևոր երևույթ էր նաև ՀԿԿ Կենտկոմի օրգան «Լենինյան ուղիով» տեսական ու քաղաքական ամսագրի հրատարակումը:

Հասարակական-քաղաքական կյանքի ակնառու երևույթներից էին նաև ՍՍՀՄ Գերագույն սովետի (1946 թ. փետրվար) և ՀՍՍՀ Գերագույն սովետի (1947 թ. փետրվար) ընտրությունները, որոնց ժամանակ դրսևորվեց հանրապետության աշխատավորության քաղաքական ակտիվությունը: ՀՍՍՀ Գերագույն սովետի ընտրություններին մասնակցեց ընտրողների 99,99 %-ը, որոնցից կոմունիստների և անկուսակցականների բլոկի օգտին քվեարկեց 99,8 %-ը: Ընտրված 269 դեպուտատներից կոմունիստներ էին 203, կանայք՝ 75 հոգի: Հանրապետության Գերագույն սովետի կազմում ընտրվեցին արտադրության առաջավոր բանվորներ ու կոլտըն-



Ակադեմիկոսներ՝ Մ. Ջրբաշյան և Ս. Մերգելյան

Երևանի № 3 ծննդատունը

Երևանի սրտաբանության ինստիտուտը



Հրազդանի կիրճը

Արարատ. խաղողի այգի-
ներ

տեսականներ, գիտության ու արվեստի աշխատողներ, պետական ու կուսակցական գործիչներ:

Սովետական Հայաստանի մեծ նվաճումների և հայ ժողովրդի վերածննդի մասին հիացմունքի կգացումներ էին արտահայտում շատ այցելուներ և հյուրեր: Անգլիականականավոր գրող Ջ. Օլդրիջը ասել է. «Ես միշտ եղել եմ հայ ժողովրդի անկեղծ բարեկամը, նրա միավորման և անկախության պայքարի կողմնակիցը, և միայն իմ այստեղ գտնվելու կարճ ժամանակում ես հասկացա, թե ինչպես անմահ է ձեր պատմությունը, ինչքան հարուստ է ձեր կուլտուրան և թե ինչպես, բազում դարերի ընթացքում, դուք պայքարել եք նրա պահպանության համար:

Չափազանցություն չի լինի ասել, որ ժամանակակից Սովետական Հայաստանը գտնվում է գեղեցկության ու կուլտուրայի մեծ ճանապարհին, որին ձգտել է հայ ժողովուրդն իր ամբողջ պատմության ընթացքում»: Նման գնահատականները շատ են և վկայում են սովետական իշխանության տարիներին հայ ժողովրդի ապրած սոցիալ-տնտեսական և մշակութային վերելքի ու վերածննդի մասին:

Երևան. դպրոց Չարենցի փողոցի վրա

Կիրովական. «Հայաստան» առողջարանի շենքը

Երևան. հանրապետական կլինիկական հիվանդանոցը

Ակիվբեկովի շրջան. «Պլաստիկ» արտադրական միավորման մասնաճյուղի հավաքման արտադրամասում

Մեղվապահությունը տարածված ճյուղ է Հայաստանում

Արզնի առողջարանի ընդհանուր տեսքը

Ջերմուկ առողջարանը. տեսարան կենտրոնական հատվածից

Արտաշատի քաղաքային այգում



Մամուլի տունը

Բաղրամյանի շրջան.
Նոր հողերի յուրացումը



Գորիս

Հանգստի ժամին

Երևան. ռուս. գրողների գրքերի ցուցահանդեսը



Հաշվիչ մեքենաների մոնտաժում Երևանի №11 տեխնիկական ուսումնարանում

Սևան. հանգստյան տուն



Թալինի շրջկենտրոն. ընդհանուր տեսարան

Գուգարաց լեռներ

Սևան

***

1960-ական թվականներին ՍՄԿԿ նոր ծրագիրը խնդիր էր դնում ստեղծել կոմունիզմի նյութատեխնիկական բազա, սոցիալիստական հասարակական հարաբերությունները վերածեցնել կոմունիստականի, աշխատավորական մասսաներին դաստիարակել կոմունիստական բարձր գիտակցությամբ: Գիտատեխնիկական հեղափոխության հիման վրա երկրի ժողովրդական տնտեսության վերափինումը պետք է նոր առաջընթաց քայլ լիներ սոցիալիստական շինարարության հետագա զարգացման համար:

Բոլոր ազգերն ու ժողովուրդները սոցիալիստական շինարարության կարևորագույն հարցերը շարունակում էին լուծել համատեղ ջանքերով, հասարակական կյանքի զարգացումը տանել ինտերնացիոնալիզմի ուղիով, բարձրացնել հասարակական արտադրության արդյունավետությունն ու որակը: Ազգամիջյան լայն կապերը, շփումներն ու փոխազդեցությունները հարստացնում են ազգային մշակույթը, նպաստում ազգերի մերձեցմանը, ազգայինի ու ինտերնացիոնալի ներդաշնակ զարգացմանը: Այդ բոլորը խարսխվում է ՍՍՀՄ տնտեսական հզոր պոտենցիալի վրա: Սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ ընտանիքում վերելք ապրեց նաև հայ սոցիալիստական ազգը, որի տնտեսական վերընթացը հնարավոր դարձավ եղբայրական ժողովուրդների օգնությամբ: Այս տարիներին հրատապ էր Սևանի պրոբլեմի լուծումը, Հայաստանի դարավոր գեղեցկուհու փրկությունը, քանի որ Սևան—Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայանների կառուցման հետևանքով լճի ջրային պաշարները լրջորեն նվազում էին: ՍՍՀՄ կառավարությունը, կանգ չառնելով խոշոր գումարներ պահանջող ծախսերի առաջ, 1961 թ. օգոստոսի 12-ին հատուկ որոշում ընդունեց 48,6 կիլոմետրանոց թունել կառուցելու և Արփա գետի հոսքը դեպի Սևան ուղղելու մասին: Այդ մեծ կառույցն իրականացվեց սովետական բազմազգ ժողովուրդների ջանքերով, արտակարգ դժվարին պայմաններում: Օրինակ, Վարդենիսի լեռնանցքում թունելի խորությունը գետնի մակերեսից հասնում է 640 մետրի: Բարեկամության այդ յուրահատուկ կառույցը սովետական ժողովուրդների նվերն է հայ ժողովրդին, որի նշանակությունը, հիրավի, անգնահատելի է:

Խոշոր կառույցների թվին են պատկանում Հոկտեմբերյանի ատոմային էլեկտրակայանը, Որոտանի հիդրոէլեկտրակայանը, Սևան—Ջոդ երկաթու-

Երևան. Շախմատի տունը

Խնկո Ապոր անվան մանկական գրադարանը

Մեծամորի թանգարանը

Կիրովականի մարզասրահի շենքը



Կապի մինիստրության շենքը



Հ. Օրբելու դիմանկարը (գործ՝ Մ. Սարյանի)

դին, հրաշագեղ «Զվարթնոց» օդանավակայանը, Երևանի մետրոպոլիտենը և բազմաթիվ այլ կառույցներ: Կառուցվեցին նաև արդյունաբերական շատ նոր ձեռնարկություններ: Կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող կառույց է Աղստև—Հրազդան երկաթուղագիծը:

Սակայն մի շարք կառույցներ նախագծելիս և իրականացնելիս առաջին պլան էր մղվել սոսկ դրանց տնտեսական կարևորության հարցը, աչքաթող անելով հանրապետության բնակլիմայական պայմանների վրա դրանց հետագա բացասական և նույնիսկ վտանգավոր հետևանքները: Ասածը առաջին հերթին վերաբերում է Սևան-Հրազդան կասկադի և Հոկտեմբերյանի ատոմակայանի շինարարությանը:

1960—70-ական թվականներին մեր հանրապետությունում նշանակալի հաջողություններ ձեռք բերվեցին գունավոր մետալուրգիայի, մեքենաշինության, հաստոցաշինության, ռադիոէլեկտրոնիկայի, հաշվիչ մեքենաների արտադրության, ավտոմատացման պրոցեսների սարքերի, շինանյութերի, ինչպես նաև թեթև ու սննդի արդյունաբերության բնագավառում: ՀՍՍՀ-ում արդյունաբերության բուռն վարգացումը նպաստեց արդյունաբերական այնպիսի խոշոր միավորումների ստեղծմանը, ինչպիսիք են «Էլեկտրոնը», «Հայէլեկտրալույսը», «Հայէլեկտրաապարատը», «Հայէլեկտրասարքավորումը», «Լենտեքստիլը», «Մասիսը», գիտաարտադրական «Նաիրի» միավորումը և այլն:

Հայաստանի պատմության պետական թանգարանում

ՍՄԿԿ XXIV (1971), XXV (1976) համագումարները նոր հեռանկարներ բացեցին երկրի ժողովրդական տնտեսության հետագա վարգացման համար: Հայկական ՍՍՀ-ում առանձնապես արագ տեմպերով վարգացան մեքենաշինությունը, էլեկտրոնային, ռադիոտեխնիկական, էլեկտրատեխնիկական, հաստոցաշինական, գործիքաշինական, սարքաշինական արդյունաբերության ճյուղերը: Զգալի չափով աճեց նաև քիմիական ու սննդի արդյունաբերության արտադրանքը: ՀՍՍՀ տնտեսական վարգացմանը խթանեց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության հետագա վարգացման միջոցառումների մասին»: Մատնանշելով տընտեսության վարգացման կարևոր ուղղությունները ու հեռանկարները, սովետական կառավարությունը հսկայական միջոցներ հատկացրեց Սովետական Հայաստանին: Այդ որոշման հիման վրա ՀՍՍՀ կապիտալ ներդրումների գումարը IX հնգամյակում (1971—1975) կազմեց 4.423 միլիոն, իսկ X հնգամյակում (1976—1980)՝ 5 միլիարդ ռուբլի: Այդ հնգամյակների ընթացքում շարք մտան 160 խոշոր արդյունաբերա-



Կիրովական. պոլիմերային սոսինձների ստացման սարքավորումը



«Հայէլեկտրամեքենա» միավորման հավաքման արտադրամասերից մեկը



Կիրովական. Ստեփան Զորյանի տուն-թանգարանը

կան ձեռնարկություն, արտադրամաս, ռոզման համալիր և այլն:

Կարևոր էր նաև ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ կառավարության «Սևանա լճի բնական ռեսուրսների պահպանման և ռացիոնալ օգտագործման միջոցառումների մասին» 1978 թ. ընդունած որոշումը: Այդ որոշման հիման վրա պայմաններ ստեղծվեցին Արփա—Սևան թունելի կառուցումն արագացնելու համար: Արփա—Սևան ջրատարի բացումը վերածվեց հերոսական աշխատանքի մեծ տոնի: Այդ խոշոր շինարարության մասնակիցներից շատերն արժանացան կառավարական բարձր պարգևների:

1981 թ. հունվարին կայացավ ՀԿԿ XXVII համագումարը, իսկ մեկ տարի անց (փետրվարի 23-ից մինչև մարտի 3-ը) ՍՄԿԿ XXVI համագումարը: Կուսակցությունը, հանրագումարի բերելով ձեռք բերած խոշոր հաջողությունները, երկրի սոցիալ-տնտեսական վարգացման և ժողովրդի բարեկեցության բարձրացման նոր ուղենիշեր նախագծեց: Սովետական Հայաստանի սոցիալ-տնտեսական վարգացման բնագավառում XI հնգամյակում (1981—1985) նախատեսվել էին մեծ վերափոխումներ. արագ տեմպերով շարունակել Երևանի մետրոպոլիտենի նոր

Ջրոսայգում

Շոգ օրերին. սառնորակ պաղպաղակ

Կիրովական. Ս. Մ. Կիրովի արձանը

Կիրովականի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաշենքը

Հայաստանի պարի պետական անսամբլը «Սուսերով պարը» կատարելիս

գծերի և Իջևան—Հրազդան երկաթուղու կառուցումը, Քաջարան-Մեղրի, Ագարակ-Դաստակերտ, Ջերմուկ-Ակիվբեկով-Եղեգնաձոր գազամուղերի անցկացումը: Նախապատրաստվում էր մի շարք գործարանների ու ֆաբրիկաների կառուցումը Երևանում, Լենինականում, Կիրովականում, Հրազդանում և այլ քաղաքներում:

ՍՄԿԿ XXVI համագումարը խնդիր էր դրել XI հնգամյակում ՀՍՍՀ արդյունաբերության արտադրանքն ավելացնել 29—32 %-ով, կգալի չափով ավելացնել ռադիոտեխնիկական և էլեկտրոնային, սարքաշինության, հաստոցաշինության արտադրանքը, գործարկել Հրազդանի մեքենաշինական գործարանի կարողությունները, կառուցել ավտոբեռնիչների գործարան, օծանելիքների ֆաբրիկա, ավարտել գունավոր մետալուրգիայի և քիմիական արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցումը, ընդլայնել հանքային ջրերի արտադրության կարողությունները և այլն:

Հետպատերազմյան տարիներին Հայաստանում լայն թափ ստացավ քաղաքաշինությունը: Կառուցվեցին այնպիսի գեղատեսիլ արդյունաբերական քաղաքներ, ինչպիսիք են Աբովյանը, Չարենցավանը, Քաջարանը, առողջարանային կենտրոն Ջերմուկը: Կարճ ժամանակում վերակառուցվեցին և ընդարձակվեցին Ալավերդին, Ղափանը, Արթիկը, Էջմիածինը, Սևանը, Իջևանը, Դիլիջանը և այլն: Այժմ Հայկ. ՍՍՀՄ-ում կա 24 քաղաք և 32 քաղաքատիպ ավան: Շատ գյուղեր հատուկ պլանավորմամբ վերակառուցվեցին և բարեկարգվեցին, գնալով բարձրանում էր գյուղի աշխատավորների կուլտուրական մակարդակը, կենցաղն ու ապրելակերպը դառնում էին քաղաքատիպ:

ՀՍՍՀ գյուղատնտեսության զարգացման համար

Երևանի պարարվեստի ուսումնարանում



Նվագախումբը ղեկավարում է Արամ Խաչատրյանը

Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոն. պատկեր «Ալմաստ» օպերայից



ՍՍՀՄ ժող. արտիստներ Վահրամ Փափազյանը և Հրաչյա Ներսիսյանը

Տեսարան Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» պիեսի ներկայացումից

Տեսարան Մ. Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի ներկայացումից

Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնը

Ելույթ է ունենում ՀՍՍՀ ժող. արտիստ Ս. Քոչարյանը

կարևոր էր ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1977 թ. հոկտեմբերին ընդունած որոշումը «Հայկական ՍՍՀ-ում ոռոգելի հողագործության հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման միջոցառումների մասին»: Այդ որոշմամբ հատկացված միջոցները մեծ չափով նպաստեցին նոր ջրանցքներ ու ջրամբարներ կառուցելուն, որի շնորհիվ ոռոգելի տարածությունները ընդարձակվեցին և հասան 282 հազար հեկտարի: Դրա հետ մեկտեղ ընդլայնվում էր գյուղատնտեսության մեքենայացումը: 1980 թ. տրակտորների քանակը հանրապետությունում հասավ 12400-ի, կոմբայններինը՝ 20000-ի, բեռնատար մեքենաներինը՝ 15000-ի և այլն:

XI հնգամյակում հաջողությամբ իրականացվում էր ընդհանուր միջնակարգ կրթության խնդիրը: Հանրապետությունում դպրոցների թիվը 1980 թ. հասավ 1520-ի, սովորողներինը՝ 607 հազարի, ավելի քան 45 հազար ուսուցչական կադրերով: 1978 թ. ՀՍՍՀ-ում գործում էր 70 հազար սովորողներով 92 ուսումնարան, որոնք X հնգամյակում երկրին տվին 140 հազար որակյալ բանվոր, վարպետ-մասնագետ: Սովորողները ստանում են բազմապիսի մասնագիտություններ, որոնց թիվը հասնում է 160-ի: Հանրապետության 13 բուհերում 1978 թ. սովորում էր մոտ 60 հազար ուսանող: Բուհերն ամեն տարի արտադրությանը տալիս են հազարավոր բարձրորակ մասնագետներ, ժողովրդական տնտեսության ղեկավար կադրեր: ՀՍՍՀ-ում լայն չափով են կարգանում ֆունդամենտալ գիտության բազմաթիվ ճյուղեր:

Գիտության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար 1977 թ. Բյուրականի աստղադիտարանը պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանն արժանացավ Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի կոչման:

Հանրապետությունում, բացի գիտությունների ակադեմիայի ավելի քան 30 գիտահետազոտական հիմնարկներից, գործում է մոտ 90 ճյուղային մասնագիտացված ինստիտուտ: Կարևոր նվաճում էր ակադեմիկոս Ա. Ալիխանյանի ջանքերով 1967 թ. Երևանի ֆիզիկայի ինստիտուտում կառուցված Միության մեջ ամենախոշոր էլեկտրոնային արագացուցիչը, որի համար Ա. Ալիխանյանը և Թ. Ասաթիանին արժանացան Լենինյան մրցանակի:

Ակնառու նվաճումներ են ձեռք բերել Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի աշխատողները: Գիտական արդյունքների բարձր մակարդակի համար այդ ինստիտուտի մի խումբ աշխատողներ արժանացել են պետական մրցանակների: 1980 թ. ՀՍՍՀ գիտաշխատողների թիվը հասավ 18 հազարի, որոնցից 700-ը գիտության դոկտորներ էին, իսկ 5000-ը՝ թեկնածուներ:

Հայ ժողովրդի մշակութային կյանքում ուշագրավ երևույթ էր հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի տոնակատարությունը: Մշակութային իսկական տոն էին Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի, Հ. Թումանյանի ծննդյան 100-ամյակի հանդիսությունները Երևանում, Թբիլիսիում, Բաքվում, Մոսկվայում և այլ քաղաքներում: 1969 թ. Կոմիտասի ծննդյան 100-ամյակի նշումը վերածվեց հայ արվեստի մեծ տոնի: Կարևոր իրադարձություն էին Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի ծննդյան 100-ամյակներին

Լենինական. Ասքանազ Մռավյանի անվան դրամատիկական թատրոնը

Երևան. Կոմիտասի անվան դասական երաժշտության տունը



Հայաստան (նկարիչ՝ Մ. Սարյան)

Կոմպոզիտոր Առնո Բաբաջանյան

ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյան

Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլը

Հայաստանի պարի պետական անսամբլը

«Ռոսիա» կինոթատրոնը Երևանում

Կիրովականի քիմկոմբինատի մշակույթի պալատը



նվիրված հոբելյանական հանդիսությունները: Մեծ շուքով տոնվեցին նաև Ե. Չարենցի 70 և ապա 80-ամյա հոբելյանները:

Սովետական իշխանության տարիներին հայ գրականությունը հզոր վերելք ապրեց շնորհիվ այն մեծ ավանդի, որ ներդրեցին Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Գ. Սարյանը, Ն. Զարյանը, Գ. Մահարին, Հ. Շիրազը, Պ. Սևակը, Հ. Սահյանը, Գ. Էմինը, Ս. Խանզադյանը, Ս. Կապուտիկյանը, Վ. Դավթյանը, Հ. Մաթևոսյանը, Մ. Գալշոյանը և ուրիշներ:

Հետպատերազմյան տարիներին բուռն զարգացում ապրեցին սովետահայ մշակույթն ու արվեստը:

Հայ թատերական արվեստի և երգարվեստի զարգացման մեջ իրենց արժանի լուման ներդրեցին ՍՍՀՄ ժողովրդական արտիստներ Վ. Փափազյանը, Հ. Ներսիսյանը, Ա. Ավետիսյանը, Գ. Ջանիբեկ-

Սպորտային շքերթ Երևանի Լենինի հրապարակում

յանը, Վ. Աճեմյանը, Գ. Գասպարյանը, Տ. Սապանդարյանը, Ն. Հովհաննիսյանը և ուրիշներ:

Հայ ժողովուրդը, հասնելով տնտեսական ու կուլտուրական վարգացման բարձր մակարդակի, հնարավորություն ստացավ ըստ արժանվույն գնահատելու իր պատմական անցյալի իրադարձությունները, իր հերոս վավակների ծառայությունները: 1965 թ. հայ ժողովուրդը մեծ հանդիսավորությամբ և խորին ակնածանքով նշեց 1915 թ. մեծ եղեռնի կոհերի հիշատակը: Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա կառուցվեց հոյակապ հուշարձան-կոթող: 1965 թ. ապրիլի 24-ին «Պրավդան» հայերի եղեռնին նվիրած հոդվածում այն համարեց մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն և նշեց, որ հայ ժողովուրդը վերածընվեց և իր ապատ ու երջանիկ կյանքի տերը դարձավ սովետական կարգերի, կոմունիստական կուսակցության իմաստուն քաղաքականության շնորհիվ: Ամեն տարի ապրիլի 24-ին ամբողջ Հայաստանի աշխատավորները նշում են այդ օրը, հուշարձանին ծաղկեպսակներ դնում, գլուխ խոնարհում և իրենց հարգանքի տուրքը մատուցում թուրքական յաթաղանի կոհերի հիշատակին:

Երախտապարտ հայ ժողովուրդը 1968 թ., ի նշանավորումն Սարդարապատում իր քաջ վավակների տարած հաղթանակի, կառուցեց ճարտարապետական ու պատմական խոշոր արժեք ներկայացնող հուշարձան-համալիր: Համալիրին կից գործող ազգագրական թանգարանը հարուստ նյութեր է պարունակում նաև հայ ժողովրդի ազատագրական պայքարի առանձին դրվագների մասին:

1975 թ., Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 30-ամյակի օրերին, Հյուսիսային Կովկասի Մալգոբեգ քաղաքի մոտ ահեղ մարտերում կոհված հայ մարտիկների շիրիմները տեղափոխվեցին Երևանի «Հաղթանակ» զբոսայգի և ամփոփվեցին անհայտ զինվորի գերեզմանում, որի վրա վառվում է հավերժական կրակը:

Հայ ժողովուրդը 1968 թ. մեծ հանդիսավորությամբ տոնեց իր հինավուրց մայրաքաղաք Էրեբունի-Երևանի 2750-ամյակը, որը վերածվեց հայ մշակույթի և քաղաքաշինության խոշոր տոնի:

1970 թ. մեծ հանդիսավորությամբ տոնվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ՀԿԿ հիմնադրման 50-ամյակը: 1972 թ. դեկտեմբերին ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի կապակցությամբ ՀՍՍՀ-ն պարգևատրվեց Ժողովուրդների բարեկամության շքանշանով այն մեծ ավանդի համար, որ հայ ժողովուրդը ներդրել է «սոցիալիստական ազգերի և ազգությունների բարեկամության ու



Արտաշատի կենտրոնական փողոցը

եղբայրական համագործակցության ամրապնդման» գանձարանը:

1978 թ. տոնվեց Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միանալու 150-ամյակը: Այդ կապակցությամբ ՀՍՍՀ-ն պարգևատրվեց Լենինի երկրորդ շքանշանով:

1980 թ. հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ տոնեց Սովետական Հայաստանի 60-ամյակը: Այդ առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի ու կառավարության ողջույնի հեռագրում նշվում էր, որ մեծ Հոկտեմբերը «հայ ժողովրդին բերեց իսկական սոցիալական և ազգային ազատագրություն, բացեց սոցիալիստական զարգացման լայն ասպարեզ, ցույց տվեց նոր, երջանիկ կյանքի ուղին»: Ընդգծվում էր նաև, որ Սովետական Հայաստանն «արժանի ավանդ է մուծում բազմազգ սովետական պետության հզորացման, մեր մեծ հայրենիքի տնտեսական ու պաշտպանական հզորության ամրապնդման մեջ...»:

Հոկտեմբերյան հեղափոխության ահեղ մարտերին, սովետական պետության ամրապնդմանը, մեր հայրենիքի թշնամիների դեմ մղված մարտերին ցուցաբերած մասնակցության և կոմունիստական շինարարության գործում ձեռք բերած հաջողությունների համար Հայկական ՍՍՀ-ն պարգևատրվեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

1977 թ. հոկտեմբերի 7-ին ընդունվեց ՍՍՀՄ նոր սահմանադրությունը, որի ընդհանուր դրույթներից ելնելով՝ 1978 թ. ապրիլի 14-ին ՀՍՍՀ Գերագույն սովետի արտահերթ նստաշրջանը հաստատեց ՀՍՍՀ սահմանադրությունը՝ հիմնական օրենքը:

Հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները հպարտության զգացումով են համակում նաև սփյուռքահայությանը: Մայր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, միշտ էլ ամենաջերմ հոգատարություն է ցույց տվել դառն ճակատագրի բերումով աշխարհով մեկ ցրված հայերի նկատմամբ: Հետպատերազմյան տասնամյակներին ամենաջերմ ու սերտ կապեր են ստեղծվել Սովետական Հայաստանի և սփյուռքահայության միջև: ՀԿԿ XXII համագումարը 1961 թ. գոհունակությամբ նշեց, որ սփյուռքահայ առաջադեմ կազմակերպությունները, ավելի սերտ կապեր հաստատելով մայր հայրենիքի հետ, մեծ աշխատանք են կատարում Սովետական Հայաստանի հաջողությունները պրոպագանդելու և օտար ափերում ապրող հայերին հայրենի երկրի շուրջը համախմբելու համար: Համագումարը խնդիր դրեց է՛լ ավելի ամրապնդել այդ կապերը: Այդ ուղղությամբ կարևոր աշխատանք են ծավալել սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն և նրա օրգաններ «Սովետական Հայաստան» ամսագիրն ու «Հայրենիքի ձայն» թերթը: Իսկ վերջին տարիներին ՀՍՍՀ ԳԱ կից ստեղծվեց սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժին, որի խնդիրն է ուսումնասիրել սփյուռքահայ գաղթավայրերի կյանքը, մշակույթն ու պատմությունը:

Հայ գիտնականները, արվեստի և գրականության աշխատողները հաճախ են այցելում սփյուռքահայ կենտրոններ և հայ կազմակերպություններին ծանոթացնում մայր ժողովրդի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի նորություններին: Սփյուռքահայ բազմաթիվ պատվիրակություններ և մշակութային ու տուրիստական խմբեր այցելում են Հայաստան և մոտիկից ծանոթանում մայր հայրենիքի

Լենինական. Հայաստանի ազգագրության պետական թանգարանի Լենինականի մասնաճյուղը (նախկին Ջիթողցյանների տունը)





Երևան. «Հրազդան» մարզադաշտը

Երևան. մարզահամերգային համալիրը

Հանրաճանաչ սպորտսմեններ Յուրի Վարդանյանը և Դավիթ Համբարձումյանը

կյանքին: Մեծ տեղ է տրվում սփյուռքահայության համար տրվող ամենօրյա ռադիոհաղորդումներին, որոնք կարևոր դեր են կատարում հայ մշակույթի տարածման և հայապահպանության գործում:

Սփյուռքահայ ականավոր գիտնականներից քարտեզագիր-աշխարհագրագետ Զ. Խանկադյանը (Ֆրանսիա), բիոքիմիկոս Մ. Սևակը (ԱՄՆ), արվեստագետ Ս. Տեր-Ներսիսյանը (Ֆրանսիա), ռադիոֆիզիկոս Չարլզ Հրաչ Ժափակը (ԱՄՆ) իրենց գիտական մեծ վաստակի համար ընտրվել են ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամներ:

Ամեն տարի սփյուռքահայ հարյուրավոր ուսանողներ են ընդունվում Հայաստանի և ՍՍՀՄ բուհերն ու մասնագիտական դպրոցները և ձրի կրթություն ստանալով՝ վերադառնում իրենց համայնքներն ու օգտակար աշխատանք կատարում:

Սկսած 1960-ական թվականներից, ամեն տարի ամառային արձակուրդներին սփյուռքահայ ուսուցիչների խմբեր են հրավիրվում, որոնց համար կազմակերպվում են հատուկ դասընթացներ, ականավոր հայագետների դասախոսություններ: Նրանք միաժամանակ ծանոթանում են հայրենիքի կյանքին:

Լավ ավանդույթ են դարձել նաև հարյուրավոր սփյուռքահայ դպրոցականների այցելությունները Հայաստան, որոնք ամառային արձակուրդների օրերին անվճար հանգստանում են պիոներական ճամբարներում, ապրում հայրենի երկրի երջանիկ կյանքով:

Սովետական Հայաստանը սփյուռքի դպրոցներին ապահովում է նաև դասագրքերով, ուսումնական պիտույքներով, քարտեզներով և այլն:

ՀՍՍՀ ԳԱ-ն հրատարակում է «Սփյուռքահայ գրականության պատմություն» խորագրով ուսումնասիրություններ, իսկ «Սովետական գրող» հրատարակչությունը «Սփյուռքահայ գրողների մատենաշարով» լույս է ընծայում բազմաթիվ գրքեր: Մոսկվայում լույս տեսած «Օտար երկնքի տակ» ժողովածուն և մի շարք այլ հրատարակություններ լայն ընդունելություն գտան: Այդ բոլորը կատարվում է Սովետական Հայաստանի ոգեշնչող ուժի, նրա բարոյական և նյութական օգնության շնորհիվ: Այս ամենին ի տես՝ ամերիկահայ մեծ գրող Վ. Սարոյանը 1979 թ. Սոֆիայում, գրողների միջազգային համաժողովում ասել է. «Սովետական Հայաստանը մի արև է, մեր քարն է, մեր ծովն է, մեր յաստանը մեր արևն է, մեր քարն է, մեր ծովն է, մեր դժբախտ կլինեինք: Մեկ համար մեծ բախտ է, որ

մեկ կորավիգ է ռուս ժողովուրդը: Մենք չենք կարող գոյատևել առանց կորավոր պաշտպանության, իսկ դա Սովետական Միությունն է»:

Լայն կապեր են ստեղծվել սփյուռքի ու հայրենիքի արվեստի գործիչների միջև: Հաճախ են Երևանում բացվում սփյուռքահայ նկարիչների ցուցահանդեսներ, որոնց լավագույն գործերը իրենց հանգրվանն են գտնում Հայաստանի թանգարաններում:

«Մեկ հայրենիք, մեկ ժողովուրդ» նշանաբանով 1980 թ. նոյեմբերի 24—27-ին, Սովետական Հայաստանի 60-ամյակի նախօրյակին, Երևանում տեղի ունեցավ սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների ժողովը: Երևան էին ժամանել բոլոր մայրցամաքների հայ գաղթօջախների պատվիրակները, որոնք անհուն երախտագիտության խոսք ասացին սովետական կառավարությանը՝ հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած մեծ հոգատարության համար: Հայրենիքի և սփյուռքի ներկայացուցիչները քննարկեցին «Վերածնված հայրենիքը և սփյուռքը» հարցը: Այդ խորհրդաժողովը վերածվեց սովետական հայրենիքի շուրջը սփյուռքահայության համախմբման վառ ցույցի: Համաժողովի մասնակիցները նշեցին. «Այսօր սփյուռքահայության համար անխախտ համոզում է դարձել այն գիտակցությունը, թե համայն հայության հայրենիքը Սովետական Հայաստանն է... Սփյուռքահայ հոծ կանգվածներու հոգեբանության ու գիտակցության մեջ կատարված արմատական այս հեղաշրջումը անհրաժեշտ է, որ արձանագրվի մեր վերածնված հայրենիքի հաջողություններու ոսկի մատյանին մեջ...» Սփյուռքահայ ականավոր գործիչների, խաղաղության առաջամարտիկների գործունեությունը խրախուսելու նպատակով ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության որոշմամբ սահմանվեց «Խաղաղության և մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդման օգտին ակտիվ գործունեության համար» սփյուռքահայ համայնքների գործիչներին պարգևատրելու մրցանակ: Հիմնվեցին Մեսրոպ Մաշտոցի, Պետրոս Ադամյանի, Անանիա Շիրակացու, Խաչատուր Աբովյանի, Մարտիրոս Սարյանի և Կոմիտասի անվան մրցանակներ:

***

Հայ և սովետական մյուս ժողովուրդների պատմական փորձը վառ հաստատում է, որ ազգի իսկական ծաղկումը ձեռք է բերվում սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների եղբայրական ընտանիքում փոխադարձ հարստացման ու ներդաշնակ զարգացման շնորհիվ: Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ստեղծումը, նրա տնտեսության և հոգևոր կյանքի բազմակողմանի ծաղկումը սոցիալիզմի, լենինյան ազգային քաղաքականության կենսահաստատ ուժի պերճախոս ապացույցն են, Սովետական Միության կոմունիստական կուսակցության ստեղծարար ու կազմակերպչական հսկայական գործունեության արդյունքը: Հնգակի շքանշանակիր Սովետական Հայաստանի աշխատավորությունը, որի պետական դրոշի վրա շողշողում են Լենինի երեք, «Ժողովուրդների բարեկամության» և «Հոկտեմբերյան հեղափոխության» շքանշանները, ռուս մեծ ժողովրդի, սովետական երկրի բոլոր ժողովուրդների հետ ուս-ուսի կառուցում է իր ապագան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողներին 5
Նախնադարյան և ստրկատիրական հասարակագրեր . . 7
Հայկական ցեղերն ու ցեղային միությունները 10
Հայկական պետության հետագա զարգացումը 13
Հայաստանը պարսկա-հռոմեական խարիբդայի մեջ . : 15
Ֆեոդալիզմ 22
Ֆեոդալական հարաբերությունները Հայաստանում 22
Հայ ազատագրական պայքարը պարսիկների լծի դեմ V դարում . . . 24
Հայ ժողովրդի ազատագրական պայքարը բյուզանդական կայսրության դեմ . 30
Հայ ժողովրդի ազատագրական պայքարը արաբական տիրակալության դեմ . 31
Հայաստանի անկախության վերականգնումը 37
Սոցիալական շարժումները վաղ միջնադարում 39
Հին և վաղ միջնադարյան հայկական մշակույթը 42
Պայքար սելջուկյան տիրակալության դեմ 48
Մոնղոլական լուծը, Լենկթեմուրի արշավանքները 51
Հայաստանը թուրք-պարսկական աքցանների մեջ 52
Սոցիալական շարժումները XVII դարում 55
Ազատագրական պայքարը և Ռուսաստանը 55
Հայկական մշակույթը X—XVIII դարերում 64
Հայ ժողովուրդը «Հյուսիսափայլի» լուսամփոփում 76
Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 90
Կապիտալիզմ 106
Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում. կապիտալիստական հարաբերությունների զարգացումն Արևելյան Հայաստանում 106
Գյուղացիական ելույթները 110
Հայ հասարակական հոսանքները 112
Արևմտյան Հայաստանն արյունոտ սուլթանի ճիրաններում 112
Հայ ազատագրական շարժման վերելքը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո 114
Հայ մշակույթը XIX դարում 121
Հայաստանն իմպերիալիզմի ժամանակաշրջանում 124
Հայկական մշակույթը XX դարի սկզբին 148
. . . . 152
Մեծ Հոկտեմբերը հայ ժողովրդի ազատարար 152
Հայաստանի բուրժուական հանրապետություն 161
Սովետական կարգերի հաղթանակը և ամրապնդումը Հայաստանում . . . 173
Լոռու «Չեզոք գոտու» ազատագրումը 183
Քաղաքացիական կռիվներում տարած հաղթանակը 184
Սոցիալիզմի հիմքերի կառուցման սկիզբը 190
Քաղաքացիական կռիվներում տարած հաղթանակը 184
Սոցիալիզմի հիմքերի կառուցման սկիզբը 190
Ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ուղիով . . . 201
Ժողովրդական տնտեսության վերակառուցումը. սոցիալիզմի հաղթանակը . 204
Նոր սահմանադրությունը. Սովետական Հայաստանը միութենական հանրապետություն 210
Աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացումը. Սովետական Հայաստանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի տեղաշարժերը . . . 213
Հայկ. ՍՍՀ-ն III հնգամյակի տարիներին 216
Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում 217
Հայկ. ՍՍՀ-ի ժողովրդական տնտեսության զարգացումը հետպատերազմյան ժամանակաշրջանում 228

Ծատուր Պավելի Աղայան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԶԱՐԴ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Цатур Павлович Агаян

ИЛЛЮСТРИРОВАННЫЕ ОЧЕРКИ ИСТОРИИ
АРМЯНСКОГО НАРОДА

(На армянском языке)
Ереван «Айастан» 1989

Գեղ. խմբագիր՝ Դ. Ա. Պապոյան
Հրատ. խմբագիր՝ Ի. Ս. Բրուտյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Տեխն. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Մ. Գալստյան

ИБ 6702
Հանձնված է շարվածքի 29. 07. 1988 թ.:
Ստորագրված է տպագրության 13. 03. 1989 թ.: ՎՖ 00020:
Ֆորմատ $84 \times 108^1/_{16}$, թուղթ կավճապատ: Տառատեսակ՝ «Դպրոցական»: Տպագրությունն օֆսեթ, 34,72 պայմ. տպագր. մամ., 138,88 պայմ. ներկ. թերթ, 37,72 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 30.000: Պատվեր՝ 2625: Գինը՝ 8 ռ. 30 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28:
Издательство «Айастан», Ереван-9, ул. Исаакяна, 28.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.